

Ռուբեն Պեպրոսյան

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԳԻՐԸ



ԵՐԵՎԱՆ 2004

Ռ. Յ. Պետրոսյան

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՄԱԶՈՒԹ ԵՎ ԲՈՒԿՈՒՄ ԲԱՍՏՈՒ

Հաստատված է գիտության
և կրթության նախարարության կողմից

ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԳ-37.001 (07)
0.171. 009 73
09 509

ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ԵրՃԵԳ

Պ՝ 505 Պետության Ո՝ 9.

Քաղաքագիտություն դասագիրք բուհերի համար, (լավագիր՝
Արթուր Է Ա. Հարությունյան), Եր., Լոյան Տարած 2004, 462 էջ:

Получено Р. А.

Քաղաքագիտություն, Կառավարման Ինստիտուտի (Ինստ. պրոֆ. Ս. Ա. Արսենյան),
Երևան, Ինստ. Կարմ. 2004, 462 էջ:

Այսին դասագիրքում տեսակա և փաստական կրթների գերատեսչական հիման վրա շարադրված է «Քաղաքագիտություն» բուհական դասընթացի ծրագրի հիմնահարցերը, առանձնակի ուշադրություն դարձնելով քաղաքագիտության հիմնական կատեգորիաների և մեթոդների վերլուծության, քաղաքական մտքի զարգացման հիմնական փուլերի, քաղաքական սուբյեկտների ձևավորման, պետության սփռման կառավարման համակարգերի, քաղաքական իշխանության ձևավորման, ժողովրդավարության հաստատման և այլ քաղաքական խնդիրների առանձնահատկությունների վրա: Դասագրքում հաշվի է առնված նորի ժամանակաշրջանի միջազգային քաղաքական զարգացումների և տեղաշարժերի ընդլայնումը ու դրանքով:

Դասագրքում քննարկման առարկա է դարձնում նաև ՀՀ-ում անցումային մոդի քաղաքական զարգացումների ընդլայնումը, պետության է ենթարկված քաղաքական համակարգի կայացման, իշխանությունների ձևավորման, ժողովրդավարության հաստատման, քաղաքական կրթագիտությունների և կրթակրթական համակարգերի նախընտան, ազգային քաղաքականության հիմնական գնահատման, Արցախի խնդրի լուծման, Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքի առանձնահատկությունները:

Պ՝ 0802000000
3041011-2004 2004

ՀԱՅԿԸ 669 73

ISBN 99930-57-86-1

- ☐ Կոլլան Տարած
- ☐ Ի. Պետրոսյան

Հաստատությունը, զարդ ու քաղմարմնային հարաբերությունները, կապերի գործընթացները, նորմերի սկզբունքների, շահերի, փոխադրությունների մոտեցումները և այլն: Ենթադրյալում ամբողջական համակարգ է: Ենթադրյալում այն բանից թե ինչպիսի ընդլայնումը ու դրանքով ունեն ամբողջական համակարգի կազմակարգումը, դրանց ուղղակի, թե միջնորդակցությամբ ազդում են մարդու կենսագործունեության, վարքի մասնագիտության, քաղաքականության, հոգեբանության և ներհանգիտի վրա: Հետևաբար մարդը իր կամքից անկախ գտնվում է այն քաղաքական հարաբերությունների կենտրոնում և պարտադրված է որոշակի վերաբերմունք դրանքով որակից նկատմամբ:

Արդյունավետի հաստատական քաղաքական համակարգերում տեղի են ունենում բուն արմատական փոփոխություններ, սկսվել է նոր աշխարհակարգի, աշխարհի քաղաքական ու երևի քաղաքական հերթական վերաճումների համաշխարհային գործընթացը: Թե՛ որակներն է մտնում դրանք ուն վարքը, գործունեությունը ուսման արդյունքներում այդ փոփոխությունները և նոր ձևաչափի հարաբերությունների ընդլայնումը, կառավարվում է կրթությունը, թե ինչ չափով է մարդը ձանաչել իր շրջապատում տեղի ունեցող քաղաքական տեղաշարժերը ու զարգացումների ընդլայնումը և ինչպես է կարող դանում կողմնորոշվել հաստատական կյանքի այդ քաղաքականությունները հերթափոխում:

Պրակտիկ մարդը կարողանա ճիշտ կողմնորոշվել, որոշել իր տեղն ու դերը հաստատական մեջ որոշակի ուղղվածություն տալ իր գործունեությանը: Ենթադրյալում է ուղղակի գործընթացների աշխարհ ունենա, որոնք թույլ թույլ կրթական ձանաչելու ու համակարգի իր շրջապատում տեղի ունեցող յուրաքանչյուրների ընդլայնումը ու դրան համապատասխան գործունեություն հասկանալ միա ինչ այդպիսի նպատակ է հետապնդում քաղաքագիտությունը:

Ամբողջ սովորողում ընդունված է այն տեսակետը, որ քաղաքագիտական կրթության շրջանակարգը, սակայն ընդունում մասնագիտությունից, այնուհետ է քաղաքագիտությանը դրա՞նում լինի, առանց որի նա լիարժեք անհատ լինել չի կարող, ինչն էլ քաղաքագիտության դասականության գերա թույլ տեղերի հիմնական դարձնել է պարտադիր առարկա: Բնագիտությունը ընդ ընդ մաների մանրամասն ուսումնասիրելով հաստատական քաղաքական կյանքի տարբեր ոլորտները հիմնախնդիրները կազմուհան ունի ուսանողներին տալ անհատի գիտելիքների համակարգ, որը կունեն կյանքի ճիշտ հաստատական քաղաքական գործընթացների ընդլայնումը, կմասն ու կշահակությունը ճիշտ կողմնորոշվելու դրանքով, ազդելու այդ գործընթացների վրա և ազդելու մասնագիտ լինելու հաստատական քաղաքական կյանքի զարգացումներին:

Որպես առաջադրվող դասագրքի հիմնական նպատակն է մարդու մտավորական և գիտական անակողմանի ձևավորել քաղաքականության

հիմնական խնդիրների վերաբերյալ, որոնք կարող են քաղաքական կյանքում անհատի պրակտիկ գործունեության հիմնական կողմնորոշիչներ լինել:

Քաղաքագիտության դասընթացը յուրացնելով ուսանողը հստակ պատկերացում է կազմում քաղաքագիտության առարկայի և նրա առանձնահատկությունների մասին, ձեռք է բերում հստակ կողմնորոշում քաղաքական մտքի հիմնական ուղղությունների նկատմամբ, պատկերացում է կազմում հասարակության քաղաքական կյանքի, քաղաքական համակարգի, իշխանության և պետության էության մասին, հասկանում է քաղաքականության սուբյեկտների ընտյթն ու գործունեության իմաստը, իր համար ճշտելով քաղաքական պայքարին մասնակցելու հնարավորություններն ու ձևերը, կարողանում է ճանաչել մարդու ու քաղաքացու իրավունքները, կարողանում է կողմնորոշվել քաղաքական գործընթացներում, ունակ է լինում վերլուծել միջազգային քաղաքականության մեջ տեղի ունեցող գործընթացները, աշխարհաքաղաքական տեղաշարժերը և այլն:

Միա այն գիտելիքների համակարգը, որին տիրապետելով մարդը կարող է դառնալ հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական գործընթացների ակտիվ մասնակից սուբյեկտ: Հակառակ դեպքում նա կարող է մնալ իրադարձությունների սոսկ պասիվ հայցող, ինչը նրան կարող է դարձնել այդ գործընթացներին համակերպվող և դրանց հետևից գնացող հլու հպատակ:

ՉԼՈՒՆ ԿՈՍՄԻՍ

Քաղաքագիտություն որպես գիտություն

1. Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը

Քաղաքագիտությունը ունեցել է իր ձևավորման երկարատև պատմությունը: Քաղաքագիտությունը այն եզակի գիտություններից մեկն է, որի օբյեկտը՝ հասարակության քաղաքական կյանքը, և առարկան՝ հասարակության քաղաքական կյանքի տարբեր կողմերի, կապերի, հարաբերությունների և երևույթների դրսևորման կոնկրետ ձևերը, ուսումնասիրվել են պլեյի ցան երկուսուկես հազարամյակ, սակայն որպես ինքնուրույն գիտություն ունի ընդամենը հարյուր տարվա պատմություն:

Մարդկային պատմության մեջ ցանկացած գիտություն ձևավորվել, ինքնուրույն է դարձել ու զարգացել է միայն այն ժամանակ, երբ մի կողմից հասարակության մեջ նրա առաջացման համար անհրաժեշտ էղել անհրաժեշտ նախադրյալներ ու օբյեկտիվ պայմաններ, և մյուս կողմից, երբ հասարակությունը տվյալ գիտության ստեղծած արժեքների նկատմամբ պահանջմունք է ունեցել: Ի դեպ, այս երկու հանգամանքների համատեղ առկայությունը պարտադիր է:

Որոնք են այդ նախադրյալները:

Ցուրացանչյուր գիտություն ուսումնասիրում է իրականության որևէ կոնկրետ քնազավառ կամ քնազավառի որևէ կողմ: Գիտության ձևավորման անհրաժեշտ գործոններից մեկը տվյալ գիտության քնազավառին վերաբերող տեսական և փաստական տվյալների, նյութի կուտակումն է, որը սովորաբար տեղի է ունենում հարակից գիտությունների ներսում: Կուտակած տեսական վերլուծությունների և փաստական նյութի հիման վրա հրապարակվում են մասնագիտական, տվյալ քնազավառի առանձնահատկություններին վերաբերող գիտական ուսումնասիրություններ: Շարժացման հետագա ընթացքը տանում է դեպի այդ քնազավառի ուսումնասիրություններով լրադրող գիտական միավորումների, ընկերությունների ստեղծմանը, որոնց լուր տվյալ քնազավառին վերաբերող ուսումնասիրություններն ու գործունեությունն էլ վերջապես նրանց ջնջումելի և ծանայելի է դարձնում հասարակության կողմից:

Այդպիսի զարգացման ետապներ է անցել նաև քաղաքագիտությունը, իր որոշակի առանձնահատկություններով:

Շատ գիտությունների նման քաղաքագիտությունն էլ ձևավորվել ու զարգացել է փոխտոփայության, հաստկապես սոցիալական փոխտոփայության թջանակներում և դարեր շարունակ նրա օբյեկտի և առարկայի հետ կապված շատ պրոբլեմներ գիտական վերլուծության են ենթարկվել: Ինչն փոխտոփայության մեջ, առաջացնելով նույնիսկ առանձին գիտական ճյուղ, որը ժնջվում է քաղաքական փոխտոփայություն: Փոխտոփայությունից զատ հասարակական կյանքի մի շարք պրոբլեմներ ուսումնասիրվել են նաև այնպիսի գիտությունների և գիտական ուղղությունների կողմից, ինչպիսիք են՝ պե-

տության և իրավունքի տեսությունը, քաղաքական պատմությունը, քաղաքական աշխարհագրությունը, իսկ հետագայում նաև հոգեբանությունը, սոցիոլոգիան և այլն, որոնցից յուրաքանչյուրը ուսումնասիրել է հասարակական կյանքի այս կամ այն թողմին վերաբերող այնպիսի երևույթներ, կապեր ու հարաբերություններ, որոնք անմիջապես տեսվում են հասարակության քաղաքական կյանքի հետ, և որոնք քաղաքագիտության ուսումնասիրության առարկա են դարձել նրա ինքնուրույն գիտություն դառնալուց հետո:

Դեռևս որևէ աշխարհի և միջնադարի մի շարք խոշորագույն մտածողներ՝ Պլատոն, Արիստոտել, Տիցերոն, Ավգուստին, Թոմաս Աքվինացի, իրենց աշխատություններում¹ քննարկման առարկա էին դարձրել պետության, նրա դրսևորման տարբեր ձևերի, գործունեության սկզբունքների ու ֆունկցիաների, իշխանության, նրա էության, իրականացման մեխանիզմների, հասարակության կառավարման, սոցիալական խմբերի և պետության միջև փոխհարաբերությունների սկզբունքներին վերաբերող շատ հարցեր, որոնք քաղաքագիտության առանցքային հարցերն են:

Քաղաքական գիտության ձևավորման մեջ իր ուրույն տեղն ունի վեդա-ծնկի ժամանակաշրջանի իտալացի խոշորագույն մտածող Մաքիավելին, որն առաջին անգամ տվեց քաղաքականության սահմանումը ինչի շնորհիվ էլ նրան համարում են քաղաքական գիտության հիմնադիր:

Այսպիսով, դարերի ընթացքում մտածողների կողմից հասարակության քաղաքական կյանքի տարբեր կողմերի, հարաբերությունների, երևույթների, քաղաքական կառույցների ու կազմավորումների երկարատև ուսումնասիրությունները հարուստ տեսական ու փաստական նյութ էին կուտակել՝ ստեղծելով բոլոր նախադրյալները քաղաքականության մասին ինքնուրույն գիտություն ձևավորվելու համար:

Սակայն հասարակության առաջընթաց զարգացումը նորանոր պահանջներ էր դնում քաղաքական գիտությունների առջև:

Գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները, հասարակական կյանքի կազմակերպման ձևերը, պետության, իշխանության, կառավարման գոյություն ունեցող համակարգերը չէին համապատասխանում հասարակության հետագա առաջընթացի պահանջներին, դրանք դարձել էին հասարակության զարգացումը արգելող կապանքներ և հասարակաբար պահանջմունք էր դարձել դրանց փոխարինումը նոր, ընդունելի, ժամանակին համահունչ հարաբերություններով, կառավարման համակարգերով, իշխանության իրականացման մեխանիզմներով և այլն: Դրա անհրաժեշտությունն ավելի ակնհայտ դարձավ XVIII-XIX դարերում՝ հասարակության կյանքում տեղի ունեցող խոշորամասշտաբ քաղաքական տեղաշարժերի, ժողովրդավարության սկզբունքով ձևավորվող նոր կառավարման համակարգերի առաջացման գործընթացների ժամանակ: Իսկ XIX դարի վերջին և XX

դարի սկզբներին մի շարք զարգացած երկրներում որակական թռիչք կատարվեց քաղաքագիտության ձևավորման գործում:

1871թ. Փառիզում ստեղծվեց քաղաքական գիտությունների ազատ դպրոց, 1880թ. ստեղծվեց Նույնատիպ դպրոց ԱՄՆ-ի Կոլումբիայի համալսարանում, 1895թ. հիմնադրվեց Եկոնոմիկայի և քաղաքական գիտությունների Ենկոնյան դպրոցը:

1903թ. ստեղծվեց քաղաքական գիտությունների Ամերիկյան ընկերությունը, որը հիմք դրեց նմանատիպ ընկերությունների առաջացմանը մյուս երկրներում:

1948թ. ՅՈՒՆԵՍԿՈՒ-ի երաշխավորությամբ քաղաքական գիտությունը որպես առանձին ուսումնական առարկա սկսվեց դասավանդվել աշխարհի շատ երկրների բոլոր բուհերում: 1949թ. ՅՈՒՆԵՍԿՈՒ-ին կից գործում է քաղաքական գիտությունների միջազգային ընկերությունը, իր մեջ ներառելով մասնյակ ազգային ընկերություններ:

Ուշադրություն դարձնելով աշխարհում քաղաքագիտության ձևավորման գործընթացների վրա, պարզ է դառնում այն հանգամանքը, որ քաղաքական փոփոխությունները զարգացել, հիմնավորապես հաստատվել և բուհական պարտադիր դասավանդվող առարկա են դարձել հիմնականում զարգացած երկրներում, կամ, որ ավելի ճիշտ կլինի ասել, ժողովրդավարական փոփոխություններով ձևավորված իշխանություն ունեցող երկրներում: Դա և՛ որպես արևակական է, և՛ քացատելի:

Տրամաբանական է նախ այն պարզ պատճառով, որ քաղաքական միտքը շարող է զարգանալ այն երկրներում, որտեղ նրա զարգացման համար կան պայմաններ, որտեղ այն չի խալածվում և արգելվում, որտեղ նրա նկատմամբ հասարակական պահանջմունք կա և վերջապես այնտեղ, որտեղ պետապատրեն կազմակերպված են նրա զարգացումն ապահովող կառույցներ և ինստիտուտներ:

Գետագայում որոշ երկրներում ժողովրդավարության հաստատումից հետո պարզ դարձավ, որ նրա հետագա զարգացումն ու կատարելագործումն անխզելիորեն կապված է հասարակական կյանքին, հատկապես իշխանության ձևավորման պրոցեսին, մարդկանց ակտիվ մասնակցության հետ, որը, ունչպես հայտնի է, որոշակի քաղաքական ազատություններ և իրավունքներ է ներթափարում: Սակայն մարդիկ իրենց քաղաքական ազատություններից և որավունքներից պետք է կարողանան օգտվել, ինչի համար անհրաժեշտ են որոշակի քաղաքական գիտելիքներ, որոնք նրանք օգնեին ճիշտ կողմնորոշվելու քաղաքական կյանքի բարդ լաբիրինթոսում և ճիշտ որոշումներ կայացնելու: Ահա այս խնդիրների իրականացմանն է ուղղված քաղաքագիտությունը: Այստեղից էլ պարզ է դառնում, որ այն երկրներում, որտեղ ժողովրդավարության, պետության, իշխանության և իշխանական հարաբերությունների հետագա զարգացումը դառնում է հասարակական հարաբերությունների կենտրոնը, քաղաքական գիտությունը և կազմակերպվում են քաղաքական մտքի զարգացման անհրաժեշտ պայմաններ, որի դրսևորման ձևերից մեկն էլ քա-

¹ Ավելի մանրամասն կեննարկվի հաջորդ գլխում

դաջագիտությունը բուհական հասնանորդում պարտադիր դասավանդող արտակա ուսուցանում է:

Իսկ այն երկրներում, որտեղ կա էությունը բուհական տարբեր ձևերով, որտեղ հաշվառվում կամ առգծվում են բարձրագույն ազատությունները, որտեղ մարդկանց սկզբի մասնագիտությունը հասարակության բարձրագույն կյանքին ու միայն ընկալվի չէ՝ այն առգծվում է: քննվում է, որ այդ երկրներում բարձրագույն մարդ գաղափարներն ազատությունները կրեն չեն կարող են պատահական չէ, որ հոնց այդ երկրներում էլ, հնչյուն և հողիդրային միությունում, բարձրագույնությունը չէր դասակարգվում, որ չենք ասում բարձրագույն ընկերությունների և կուսակցությունների մասին, որոնք առգծված են ընդհանրապես: Այդ երկրներում գործում է մի բարձրագույն կարգումը՝ որտեղ առգետ է հասարակությունը, այնքան հեշտ կատարվողի է:

Այստեղից էլ պարզ է, թե ինչու մեղանում բարձրագիտությունը ընկալվող տասը տարվա պատմություն ունի՝ և որը դեռ լրիվ չի կայացել:

2. Բարձրագիտության ընտրողուն, օբյեկտը և արտակա

Հասարակությունը զարդ ու բազմաբնույթ կյանքի, հար սերունդներն ու ձեռնարկների, փոխազդանակորված կողմերի, փոխազդեցությունների, գործընթացների տարաբնույթ դրսևորումների ամբողջական ուսմանաց է: Այդ ամբողջական համապարգում մի շարք կապեր, հարաբերություններ, գործընթացներ և այլն, երբեմն ունենում են միևնույն բովանդակությունը, ուղղվածություն ու նպատակները, որոնք միասնաբար կազմում են հասարակական կյանքի համեմատաբար ինտուիտիվ ընագավառներ՝ նրանց են՝ տնտեսական, սոցիալական, իրավական, հոգևոր, քաղաքական և այլն: Չնայած այդ բնագավառների համեմատաբար ինքնուրույնությանը, դրանց խոստովան միջակայքում են, փոխազդանակորված են մեզը մյուսով՝ նրանց կարող տարբերում են որոնց առջև որված խնդիրների հրազորման յուրահատկությամբ և լուրաբանցումն ունի իր դրսևորման առանձնահատկություններն ու պահմանները:

Տնտեսական ընագավառին բնորոշ է կրթական քաղաքների ստեղծմանն ուղղված արտադրություն կազմակերպումը՝ դրա համար անհրաժեշտ ժողով հարաբերությունների կարգավորմամբ հանդերձ: Սոցիալական ընագավառն ընդգրկում է մարդու նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ, կյուրաքան և հոգևոր պահանջումների բազարարմանն ուղղված հարաբերությունների և գործընթացների որը համապարզը: Հոգևոր ոլորտը ընդգրկում է այն հարաբերությունները ամբողջությունը, որտեղ զրված է մարդկանց հոգևոր պահանջումների թագաբարման համար անհրաժեշտ հոգևոր առգծվածների մտերմանը: Առյև ձևով էլ բունց առանձնահատուկ բովանդակությունն ու խնդիրներն ունեն նաև հասարակական կյանքի մյուս բնագավառները՝ իրավաբան, գիտություն, ազդուրը և այլն:

Մի միջոց ավելի զարդ է հասարակական կյանքի բարձրագույն ընագավառը՝ նախ այն պատճառով, որ այն շատ ավելի համընդգրկում է և իր մեջ ունի, որով հասարակական կյանքի բոլոր ոլորտները առնչաանմիջաան զրգուրումն ունի նրանց որոշանի կողմերի միա՝ նա կապված է բուհական կյանքի առանձնահատկությունից, որը նրան դառնում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներից վեր կանգնած և նրանց կենսագործունեությունն ազատազող անհրաժեշտ գործունեություն ամբողջական համակարգապես թե ինչու:

Բարձրագիտության օբյեկտը պետության և հասարակության մեջ հարձակված մարդկանց, նրանց տարբեր հանրությանի ու նագամակորումների քաղաքական կյանքն է, կամ այլ կերպ ասած՝ հասարակական կյանքի դարձան ընագավառը, իսկ երբեմն էլ այն կրվում է ուղղակի հասարակության քաղաքական կյանք: Նման ընտրողուն ժամանակ նկատու է առնում այն հանգամանքը, որ քաղաքագիտության օբյեկտ ամբողջ կետից է ընկալվող հասարակական կյանքի այն բոլոր կապերի, հատկանիշների և հարաբերությունների ամբողջությունը, որոնք քաղաքական անգամում են ունում ունի որոնք են դրանց:

Քաղաքական անոնից հասագվում է այն ամենը, ինչն անցվում է պետության իշխանության և այնպիսի գործունեության հեղա, ինչը անհրաժեշտ է առնակական կյանքի կազմակերպման, նրանում կարգ ու կանոն հաստատու համար: Կախերն հասարակական կյանքի քաղաքական ընագավառի ուղղաբարուն բարկացուցիչներից մեկը կապերի փոխա՝ շրջությունների և հարաբերությունների պետականորեն կազմակերպում է՝ ազգայուն է՝ կապված, մեծամասնությունը քաղաքականությունը ընկալում է որանս պետության գործերին մարդու անհիշական սևտույ մասնագիտություն: Անոն ժամանակներից պետությունը ընկալվել ու մեկնաբանվել է որանս հատկանիշական կյանքի կազմակերպման հիմնադրան նառնը, ինչն էլ կատարումներն ընագրվել է այն պատկերացումը, որ քաղաքականությունը անտուրա մասուն գիտություն է, կարանի վրտոցման հիմքը որը, է դեռևս միջուկից իր՝ «To Politeia» անշխատությամբ որը բառադիտքն նշանակում է նա ինչ վերաբերում է պետությանը:

Պետությանը վերաբերող պոլիտիկները ուսումնասիրության ժամանակ անծողները փորձել են պարզել, թե որն է պետության փառուցվածքի ուղղակի ձևը՝ բնագաղափարում, ճորդվորավարություն, խմբիշխանություն և մի՞ եմ հեղա այն հեղազոտությունների ընագրում էլ գրանականները սրգել են այն եզրակացության, որ քաղաքական կյանքի կառուրազուն կրքը իշխանության մասին հարցն է Այդ տեսանկյունից քաղաքագիտություն յուրորեն ու անարևան է դառնում նաև քաղաքական իշխանության, ա բուխան ու պատրցվածքը, պետության մեջ իշխանությունները բաժանող սպգրունքները և հրականացման ճնշող հատմեստությունը: Անտուրա է պարզել, թե իշխանության ինչպիսի ձևի ու դրանորան պայմաններ է նեմապոր, որպեսզի մի կրպից հասարակության անհավանի մեծա-

մասնությունը կամսովին ընդունի և պաշտպանի այդ իշխանությունը, մյուս կողմից, ինչ ձևերով և լծակներով է հնարավոր իրականացնել հասարակության հսկողությունը քաղաքական կյանքը մեկնաբանվել էր որպես անհատական շահերի վրա կառուցված մարդկանց փոխհարաբերությունների համակարգ, ինչի հիմքի վրա էլ ձևավորվում են քաղաքական հարաբերությունները: Դետազայում, հատկապես XIX դարում, երբ հասարակական կյանքի ուսումնասիրությունը ձեռք բերեց ավելի հստակ ուղղվածություն և ավելի մանրամասնորեն ուսումնասիրվեցին պետության գործունեության ներքին մեխանիզմները, պարզ դարձավ, որ քաղաքական կապերի, փոխազդեցությունների և հարաբերությունների հիմնական սուբյեկտը ոչ թե առանձին անհատներն են, այլ սոցիալական հանրույթներում միավորված անհատները, սոցիալական խմբեր, խավեր, դասակարգեր, ժողովուրդներ, ազգեր և այլն: Եզված հանրույթներից յուրաքանչյուրն իր սոցիալական շահերն ունի, որով նրանք գիտակցաբար, թե անգիտակցաբար ղեկավարվում են իրենց գործողություններում, ինչը ընկա՞ծ է նրանց կենսագործունեության հիմքում և որոշում է նրանց իրական տեղը հասարակության մեջ: Եվ հենց այդ սոցիալական ինտույթների միջև տեղի ունեցող փոխհարաբերությունների, փոխազդեցությունների, շահերի ներդաշնակության կամ հակադրության, փոխհամայնության հիմքի վրա էլ իրագործվում է իշխանությունների բաժանումը հասարակության մեջ: Պետք է նշել, որ իրենց առջև դրված խնդիրներին, այսինքն իրենց շահերը իշխանության միջոցով պաշտպանելու հնարավորություն են ունենում առավելապես այն սոցիալական հանրույթները, որոնք ավելի լավ են կազմակերպված և ավելի մեծ աջակցություն են ստանում հասարակության անդամների կողմից, ովքեր ընդունակ են իրենց շահերը հասարակության անդամների կողմից, ովքեր ընդունակ են իրենց շահերը համարելու, ներդաշնակելու, փոխհամայնության գալու մյուս սոցիալական հանրույթների հետ, հանուն հասարակության ընդհանուր շահերի, գիտակցաբար գնում են փոխգիշխման, իրենց շահերը ստորադասելով հասարակության ընդհանուր շահերին:

Ե/ իրենց սոցիալական շահերը լավագույնս պաշտպանելու նպատակով սոցիալական հանրույթները ստեղծում են իրենց քաղաքական և հասարակական կազմակերպություններ, կուսակցություններ, արհմիություններ, շարժումներ, միություններ և այլն, որոնք մշակում և քարոզում են տվյալ սոցիալական միավորման շահերը պաշտպանելու գաղափարախոսություն: Այդ գաղափարախոսության կամ գաղափարախոսական համակարգերի հիմնական խնդիրն է ձևավորել այնպիսի հասարակական կարծիք, որը թույլ կտաք նրանք քաղաքական ծրագրերը կյանքի կոչելիս ունենալ հասարակության հնարավորին շատ անդամների աջակցությունը:

Ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է քաղաքագիտությունը ընդդռ՞ջել որպես գիտություն քաղաքականության և քաղաքական իշխանության, հասարակական քաղաքական կյանքի և նրանում ընթացող քաղաքական գործընթացների, տեղաշարժերի ու գարգացումների, նրանում գործող քա-

ղաքական սուբյեկտների գործունեության սկզբունքների և փոխհարաբերությունների մասին, ինչը տեղի է ունենում պետականորեն կազմակերպված հասարակության մեջ: Ասել է, թե այն ամենը, ինչ տեղի է ունենում հասարակության մեջ և առնչվում է հասարակական քաղաքական կյանքին, կարող է դարձնալ քաղաքագիտության ուսումնասիրման առարկա:

Քաղաքագիտությունը գործառնում և զարգանում է հիմնականում երկու մակարդակներով՝ տեսական և գործնական:

Տեսական քաղաքագիտությունը ուսումնասիրում է քաղաքականության էությունը, մարդկանց և հասարակության համար նրա բնույթն ու նշանակությունը, սոցիալական խմբերի, ազգերի և պետությունների, ինչպես նաև անհատների, հասարակության և պետության միջև եղած քաղաքական փոխհարաբերությունները: Տեսական քաղաքագիտության խնդիրն է հետազոտել հասարակության քաղաքական կյանքի, քաղաքական գործընթացների և իրադարձությունների օրինաչափությունները: Այլ կերպ ասած, տեսական քաղաքագիտության հիմնական խնդիրն է հետազոտելու և բացահայտելու քաղաքագիտության օբյեկտի հիմնական առանձնահատկությունները:

Գործնական քաղաքագիտությունը ուսումնասիրում է քաղաքականությանն առնչվող և նրան բնորոշ կոնկրետ խնդիրները, նպաստում է հասարակության քաղաքական կյանքում ամենօրյա գործնական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքների ձևավորելուն, քաղաքական իրադարձություններում հստակ կողմնորոշվելու և այլն: Նրա խնդիրն է նաև մշակել և քաղաքական կյանքի մասնակիցներին առաջարկել խորհուրդներ ու գործունեության սկզբունքներ, որոնք կօգնեն քաղաքականություն իրականացնելու իրավասու սուբյեկտներին, հատկապես պաշտոնի բերումով իշխանության գլուխած քաղաքական կյանքի մասնակիցներին ավելի արդյունավետ գործելու:

Այսպիսով, հենվելով վերը շարադրվածի վրա, կարելի է ավելի համառոտ բնորոշել քաղաքագիտության օբյեկտն ու առարկան:

Քաղաքագիտության օբյեկտը հասարակության քաղաքական կյանքն է՝ որ քարդ ու բազմաբնույթ կապերի ու հարաբերությունների ամբողջությամբ ունեցե՞րծ:

Քաղաքագիտության առարկան նրա օբյեկտի, այսինքն հասարակական քաղաքական կյանքի տարբեր բաղադրիչները, կողմերը, դրսևորումները, հարաբերությունները, փոխազդեցությունները և այլն, որոնք տվյալ պահին դարձել են ուսումնասիրման և ցնևարկման կյու՞թ:

3. “Քաղաքականություն” հասկացությունը, էությունն ու բովանդակությունը

Քաղաքականությունը բարդ ու բազմաբնույթ, բազմաշերտ ու բազմակողմ սոցիալական երևույթ է: Այն ներծծված ու ներթափանցված է հասարակական կյանքի բոլոր ոլորտները, անկլվում է նրա բոլոր կողմերի հետ և առ-

կա է հասարակական կյանքի բոլոր դրսևորումներում: Զաղաքականությունը շրջափում է հասարակության բոլոր անդամների, սոցիալական խմբերի և կազմավորումների, հանրույթների, ազգերի ու հասարակության շահերը: Զաղաքականության համար գոյություն չունեն հասարակական կյանքի փառհաներ, նա ազատորեն թափանցում է հասարակական կյանքի բոլոր բնագավառները, ազդում է նրանց վրա և այդ չափով քաղաքականացնում է հասարակական կյանքն ու նրանում հաստատված հարաբերությունները:

Մարդկային հասարակության պատմության զարգացման ողջ ընթացքում քաղաքականությունը որոշիչ ազդեցություն է ունեցել ժողովուրդների ու ազգերի, երկրների ու պետությունների ճակատագրերի վրա, դառնալով նրանց լինել-չլինելու, գարգանալու ու հարատևելու կամ քայքայվելու ու անհետանալու հիմնական գործոն:

Լինելով բարդ սոցիալական երևույթ, քաղաքականությունը ուսումնասիրվել ու մեկնաբանվել է ամենատարբեր տեսանկյուններից, տարբեր հասարակական գիտությունների կողմից, որոնցից յուրաքանչյուրը բացահայտել ու վեր է հանել նրա այս կամ այն առանձնահատկությունները՝ կախված տվյալ գիտությանը հետաքրքրող հարցերի էությունից, հետազոտողի նախափորություններից, նրա հետազոտման օբյեկտի առանձնահատկություններից, նպատակներից և ուղղվածությունից:

«Քաղաքականություն» արտահայտությունը փոխանված ու թարգմանված է հունարեն *Politika* բառից, որը սկզբնապես նշանակել է քաղաք, պետություն *Ապոլիս*, պետական գործունեություն, հասարակության կառավարում, իշխանության իրականացում, կամ «այն, ինչ վերաբերում է պետությանը»: Ուսումնասիրելով հուն խոշորագույն փիլիսոփաներ Պլատոնի «Պետություն», Արիստոտելի «Պոլիտիկա», հռոմեական մտածող Ցիցերոնի «Պետության մասին», «Օրենքների մասին» աշխատությունները պարզ նկատվում է, որ այդ մտածողները քաղաքականության հիմնական էությունն ու բովանդակությունը տեսնում էին պետության հետ անբաժանելի բոլոր այն գործունեությունները, որոնք կապված են իշխանության, հասարակության կառավարման, պետության և հասարակության, ինչպես նաև մարդկանց ու պետության միջև եղած փոխհարաբերությունների հետ, որտեղ հիմնական շեշտը դրված է իշխանության իրականացման և հասարակության կառավարման մեթոդների վրա: Համեմատելով նրանց մեկնաբանությունները ներկայումս գրականության մեջ եղած քաղաքական գլխումների հետ, ակնհայտ է դառնում, որ այդ քաղում մեկնաբանություններում կա ընդհանուր մի բան, դա իշխանության մասին հարցն է, հետևաբար նաև պետության հարցը, քանզի իշխանությունը պետության իմաստական ատրիբուտն է: Զաղաքականության ինչպիսին լինելը կախված է այն բանից, թե իշխանության իրականացումը ի՞նչ ուղղությամբ է ընթանում, ի՞նչ նպատակներ է հետապնդում և ի՞նչ միջոցներ է օգտագործում: Այն կախված է յուրաքանչյուր հասարակության զարգացման աստիճանից, նրա սոցիալական կառուցվածքից, պատմական զարգացման առանձնահատկություններից, մշակույթից, ավանդույթներից և այլն:

Քաղաքականության բովանդակությունը բնորոշելիս շատ հաճախ հաշվի են առնվում կամ նրա տեսակը - ներքին, արտաքին, պետության զարգացման ուղղությունը և այլն, կամ նրա ուղղվածությունը - տնտեսական, սոցիալական, ազգային, կրթական, կադրային, էկոլոգիական և այլն:

Քաղաքականության բովանդակության վրա մեծապես ազդում են հասարակության մեջ եղած այն առաջատար սոցիալական խմբերի, դասակարգերի և քաղաքական ուժերի գործունեությունը, որոնք իշխանություն ունենալու շնորհիվ առավել նպաստավոր պայմաններում են գտնվում իրենց շահերը պաշտպանելու, իրենց ծրագրերը, նպատակներն ու գաղափարները իրագործելու համար:

Քաղաքականությունը կառավարողներին և իշխանության իրականացման միջոցները որոշող հատուկ համակարգ է և հանդես է գալիս որպես հասարակական հարաբերությունները կարգավորող գործոն:

Ինչպիսին մարդն է, ինչպիսին մարդկանց հանրույթներն են, ինչպիսին հասարակության մեջ իշխող քաղաքական ինստիտուտներն են, բարոյական երբմերն ու ավանդույթներն են, այնպիսին էլ քաղաքականությունն է: Քաղաքականությունը կարող է լինել դեմոկրատական, ամբողջատիրական և ավտորիտար, առաջադեմ և ավանդական, հեղափոխական և վերափոխական, կրապարակային կամ փակ և այլն:

Ի մի բերելով վերը շարադրվածը, կարելի է նշել քաղաքականության մի բանի ընդհանրացումներ.

- Այն, ինչ տեղի է ունենում հասարակության քաղաքական կյանքում, ուղղակի, թե միջնորդավորված, կապված է իշխանության իրականացման հետ:
- Իշխանության ցանկացած ձևի և սկզբունքների իրականացումը ենթադրում է մի այնպիսի կառույցի գոյություն, որն իրավաբար է իշխանությանը լիազորելու որոշակի գործունեություն ծավալելու համար: Այդպիսի կառույց է պետությունը: Հետևաբար քաղաքականությունը պետության գործունեության յուրահատուկ ձև է, որն իրականացվում է պետական տարբեր ինստիտուտների միջոցով, որոնց մեջ կարևորագույնը իշխանությունն է՝ իր տարբեր թևերով ու մարմիններով:
- Հասարակությունը բազմաշերտ սոցիալական խմբերի և խավերի, քաղաքական և հասարակական կազմակերպությունների, տարբեր դասակարգի հանրույթների, ազգային պատկանելիությամբ տարբեր միավորումների բարդ ամբողջություն է: Դրանցից յուրաքանչյուրը իր շահերն ունի, որի պաշտպանության համար նրանք որոշակի գործունեություն են ծավալում: Ասելով, ինչպես ցույց է տվել հասարակության զարգացման պատմությունը, այդ շահերը լավագույնս պաշտպանվում են այն ժամանակ, երբ այն իրականացվում է իշխանության լծակների գործադրման միջոցով: Հետևաբար, քաղաքականությունը իշխանության իրականացման միջոցով սոցիալական խմբերի, կազմակերպությունների, մարդկային հանրույթների, ժողովուրդների, ազգերի և ամբողջ հասա-

րակության շահերի պաշտպանությանն ուղղված գործընթացների համակարգ է:

Քաղաքականությունը հասարակության կառավարմանը, հասարակական կյանքի կազմակերպմանը և հասարակության առաջընթացին միավորված ձեռնարկումների, նախատեսումների, ծրագրերի ու սկզբունքների պետականորեն կազմակերպված գործընթացների և դրանց իրականացման համար անհրաժեշտ պայմանների ամբողջությունն է: Այսպիսու եթե փորձենք կատարած ընդհանրացումներից առանձնացնել ամենա էական ու կարևոր գործոնները, որոնք քաղաքականության բուն էությունն ու բովանդակությունն են կազմում, ապա այն կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

-Քաղաքականությունը գործունեության և գործընթացների յուրահատուկ համակարգ է:

-Այդ գործունեության յուրահատկությունը պայմանավորված է նրանով, որ այն իրականացվում է միայն պետականորեն կազմակերպված իշխանության իրականացման միջոցով:

-Քաղաքականությունը որոշակի սոցիալական շահերի պաշտպանությանն ուղղված իրականացվող գործընթաց է:

-Քաղաքականությունը, որպես իրականացվող գործընթաց, հասարակական կյանքում ունի համակարգող և հավասարակշռող դեր:

-Քաղաքականությունը ունի իր սուբյեկտը, որն օժտված է իշխանությամբ:

-Քաղաքականությունը հասարակության պահանջումների բավարարմանն ուղղված պետականորեն կազմակերպված գործընթացների ամբողջական համակարգ է:

-Քաղաքականությունը իրականացվում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում և շոշափում է հասարակության բոլոր անդամների շահերը:

Գեներելով վերը ասածի վրա, կարելի է ձևակերպել քաղաքականության հետևյալ սահմանումը.

Քաղաքականությունը իշխանությամբ օժտված սուբյեկտի կողմից հասարակության կյանքում իրականացվող պետականորեն կազմակերպված գործողությունների և գործընթացների ամբողջությունն է:

4. Քաղաքագիտության կատեգորիաներն ու մեթոդները

Յուրաքանչյուր գիտության նման քաղաքագիտությունն էլ իր զարգացման ընթացքում մշակել է կատեգորիաների համակարգ, որը ինչպես և ցանկացած գիտության համար, հանդիսանում է որպես հետազոտության գիտական ապարատ:

Կատեգորիաները առավել ընդհանուր հասկացություններ են, որոնք արտացոլում են իրականության, հասարակության, ճանաչողության, օբյեկտների և երևույթների, իրականացվող գործընթացների առավել ընդհանուր ու

էական հատկությունները, կողմերը, հարաբերություններն ու առանձնառատկությունները:

Քաղաքագիտության առավել ընդհանուր կատեգորիաներն են «քաղաքականություն» և «քաղաքական» համընդհանուր հասկացությունները, որոնք ամբողջովին ընդգրկում են նրա հարցադրումների ամբողջ համակարգը և արտացոլում են նրա յուրահատկությունները:

Ինչպես արդեն նկատեցինք նախորդ պարագրաֆում, քաղաքականությունը բարդ, բազմակողմ և բովանդակությամբ չափազանց ծավալուն սոցիալական երևույթ է: Այն ընդգրկում է հասարակական կյանքի բոլոր բնագավառները, ունի ամենատարբեր դրսևորումներ, ուղղվածություն, կոնկրետ խնդիրներ և այլն: Նրա բարդ բովանդակությունն ու էությունն ավելի խորն ուսումնասիրելու, նրա առանձնահատկություններն ավելի հստակ ու ճանաչելի դարձնելու անհրաժեշտությունը առաջացրել է քաղաքականությունից ածանցված մի շարք ուղեկից կատեգորիաներ, որոնցից յուրաքանչյուրն իր բնորոշ գծերն ու առանձնահատկությունները, իրականացվելից խնդիրներն ու նպատակներն ունենալով իանդերձ, բացահայտում է «քաղաքականություն» կատեգորիայի որևէ կողմ, բովանդակության առանձնահատկության կոնկրետ բնագավառ և այլն: Դրանք են. «ներքին քաղաքականություն», «արտաքին քաղաքականություն», «տնտեսական քաղաքականություն», «սոցիալական քաղաքականություն», «համաշխարհային քաղաքականություն», «միջազգային քաղաքականություն», «կադրային քաղաքականություն», «ազգային քաղաքականություն», «ֆինանսական քաղաքականություն», «հարկային քաղաքականություն» և այլն: Դժվար չէ նկատել, որ դրանից յուրաքանչյուրը մատնանշում է քաղաքականության դրսևորման որևէ կոնկրետ բնագավառ և էական կողմ: Ուշադրություն դարձնելու դեպքում կարող ենք նկատել նաև, որ վերը նշված կատեգորիաների մեջ կան բովանդակությամբ առավել ընդհանուր կատեգորիաներ, որոնք ընդգրկում են հասարակական կյանքի առավել շատ բնագավառներ, հարցադրումների ավելի մեծ շրջանակներ, իսկ երբեմն նաև հասարակական կյանքի բոլոր ոլորտները, օրինակ՝ «ազգային քաղաքականություն», «ներքին քաղաքականություն», «համաշխարհային քաղաքականություն» և այլն: Կան նաև ավելի քիչ ընդհանուր կատեգորիաներ, որոնք վերաբերում են հասարակական կյանքի որևէ կոնկրետ բնագավառի և ավելի կոնկրետ բովանդակությամբ խնդիրների, օրինակ՝ «հարկային քաղաքականություն», «ֆինանսական քաղաքականություն», «մշակութային քաղաքականություն» և այլն:

Գետագա շարադրանքի տարբեր գլուխներում նշված կատեգորիաները ավելի մանրամասն վերլուծության կենթարկվեն: Այստեղ նշենք միայն, որ դրանցից յուրաքանչյուրը քաղաքականության անհրաժեշտ քաղադրիչն է, և առանց այդ ուղեկից կատեգորիաների վերլուծության և ճանաչողության, քաղաքականության մասին ամբողջական պատկերացում կազմել հնարավոր չէ:

Նույնը վերաբերում է նաև «քաղաքական» կատեգորիային:

Այն նույնպես բարդ, բազմերանգ ու ծավալուն կատեգորիա է և նույնպես անընկճում է հասարակական կյանքի թույր ոլորտների հետ:

Եթե «քաղաքականություն» կատեգորիան անհրաժեշտ է նշելու համար իրականացվող գործընթացների թվանդանությունն ու բնագավառները ապա «քաղաքական» կատեգորիան անհրաժեշտ է նշելու այդ իրականացվող գործընթացների, երևույթների և հարաբերությունների ինչպիսին լինելը բնույթն ու էությունը: «Քաղաքական» կատեգորիայից ածանցվել են «քաղաքական իշխանություն», «քաղաքական հարաբերություններ», «քաղաքական շահեր», «քաղաքական համակարգ», «քաղաքական կուսակցություն» «քաղաքական ռեժիմ», «քաղաքական գիտակցություն» և այլն:

Բացի այս հիմնարար կատեգորիաներից, քաղաքագիտության մեջ օգտագործվում են նաև այնպիսի հասկացություններ, առանց որոնց հասարակական կյանքի ուսումնասիրությունը անհնարին կլիներ: Այդպիսի հասկացություններն են՝ հասարակություն, պետություն, ժողովուրդ, ազգ, ազատություն, իրավունք, զարգացում, հեղափոխություն, ժողովրդավարություն և շատ ուրիշներ, որոնք օգտագործվում են նաև հարակից գիտությունների կողմից:

Ցանկացած գիտության համար գիտնական ճանաչողության համակարգում իր առջև դրած նպատակներին հասնելու համար մեծ նշանակություն ունի գիտական հետազոտության մեթոդի ճիշտ ընտրությունն ու կիրառումը:

Մեթոդը գիտական ճանաչողության կողմից օգտագործվող հնարների միջոցների և մոտեցումների ամբողջությունն է, որն անհրաժեշտ է այս կապ այն երևույթի համակարգված և նպատակամղված ուսումնասիրության համար: Մեթոդի ընտրությունը պայմանավորված է հետազոտության օբյեկտով, կոնկրետ խնդիրներով, նրանց բովանդակությամբ և ելքամբ:

Քաղաքագիտությունը իր հետազոտությունների սեփական մեթոդները մշակել և օգտագործում է թույր այն մեթոդները, որոնք հասարակության զարգացման օրինաչափությունների ուսումնասիրման ժամանակ մշակվել են օգտագործվել են հասարակական մի շարք գիտությունների, առաջին հերթին քաղաքական փիլիսոփայության, քաղաքական պատմության և քաղաքական սոցիոլոգիայի կողմից:

Քաղաքականության մեջ առավել հաճախ օգտագործվում է համակարգային մեթոդը, կառուցվածքային գործառնական մեթոդը, պատմական և տրամաբանական փոխազդեցության մեթոդը, վերլուծության և համադրության մեթոդները, նմանակետացման և համեմատության մեթոդները և այլն:

Հասարակության զարգացման արդի աստիճանում, հաշվիչ տեքստիկայի կիրառման օգտագործման հնարավորությունները հասարակական քաղաքական կյանքի շատ երևույթների բացատրման գործում այսօր անհրաժեշտ են դարձրել նաև մի շարք այլ ժամանակակից մեթոդների կիրառումը: Դրանցից առավել հաճախակի կիրառվում են հարցման, մոդելավորման, գործնական խաղերի և այլն մեթոդներ:

Համակարգային մեթոդի էությունն այն է, որ հետազոտվող օբյեկտը դիտվում է որպես ամբողջական կազմավորում, և հետազոտման նպատակն է բացահայտել նրա տարրերի փոխազդեցությունները, շեշտը դնելով նրա ամբողջականության վրա: Քաղաքագիտության համար մեթոդի էությունը կախնում է հասարակության քաղաքական կյանքը որպես ամբողջական համակարգ ուսումնասիրելու մեջ: Քաղաքական կյանքը դիտվում է որպես գործունեության ամենատարբեր տեսակների ու դրսևորումների համակարգ:

Քաղաքագիտության մեջ համակարգային մեթոդը հետազոտողին կողմնորոշում է դեպի այն, որ հասարակության քաղաքական կյանքը դիտվի ոչ թե նրա տարրերի սոսկ միասնություն, այլ որպես գործառնող և անընդհատ փոփոխվող համակարգ: Զանգի քաղաքական կյանքը, լինելով բաց համակարգ, միշտ էլ ենթակա է ներսից և դրսից ազդեցությունների և փոփոխությունների:

Հասարակությունը դիտարկելով որպես գործող ամբողջական համակարգ, կառուցվածքային-գործառնական մեթոդը հետազոտության ուղղվածությունը նպատակամղում է հասարակական իրականության, տվյալ դեպքում՝ քաղաքական կյանքի գործառնությանը, դրա կառուցվածքային ամբողջականությանը և հետազոտում է ներհամակարգային գործառնությունը՝ տարրերի փոխազդեցությունների համակարգի՝ քաղաքական կյանքի գործառնության մեջ:

Քաղաքական երևույթների ուսումնասիրման կառուցվածքային-գործառնական մեթոդը թույլ է տալիս տարանջատել, մասնատել բարդ օբյեկտը (առնենք հասարակության քաղաքական համակարգը) նրա բաղադրիչ տարրերի, բացահայտել նրանց միջև եղած կապերն ու փոխազդեցությունները, որոշելու յուրաքանչյուր տարրի, բաղադրիչի դերը ամբողջ համակարգում: «Կառուցվածքային-գործառնական մեթոդի նպատակն է տալ տարատեսակ շոգիալական երևույթների փոփոխությունների քանակական գնահատականը, որոնք տվյալ համակարգը կարող է համակերպվել, պահպանելով իր համակարգային հատկությունը: Այս մեթոդի կիրառումը թույլ է տալիս պատասխանելու այն հարցին, թե ինչ պետք է անի քաղաքական համակարգը և ինչպես է համակարգը դա անում: Այսինքն, ինչ գործառնություն պետք է կատարի համակարգը և ինչ կառուցվածքների օգնությամբ է դա անում, որ ավելի արդյունավետ լինի կատարածը:

Քաղաքագիտության մեջ մեծ նշանակություն ու կիրառում ունեն վերլուծության և համադրության մեթոդները: Իրենց գործունեության ընթացքում մարդիկ ամբողջը ճանաչելու համար հաճախ ստիպված են լինում նախ պատկերացում կազմելու, ճանաչելու ամբողջի մասերը, տարրերը: Այդ պատճառով նրանց ամբողջական առարկան բաժանում են մասերի, նախ առարկայական, ապա մտովի, ուսումնասիրում և ճանաչում են դրանք և նրանց հատկանիշները: Վերլուծությունը հենց օբյեկտի մտովի բաժանումն է իր բաղկացուցիչ մասերի, առանց որոնց ճանաչելու առարկայի ամբողջական ճանաչումը հնարավոր չէ: Մակայն, առարկան մտովի բաժանելով և

Նրա քաղաքացիներին հատկանիշները ճանաչելով, առարկայի մասին ամբողջական պատկերացում կազմել չենք կարող, եթե դրանք մտույթի չհամադրենք, մի ամբողջության մեջ: Այստեղ մեզ օգնության է գալիս համադրության մեթոդը, որն քստ եռանկյան վերլուծության հակադարձ պրոցեսն է, որը բաժանված մասերը մտույթի միավորում է ամբողջության մեջ: Հետևաբար, կարելի է նշել, որ վերլուծությունն ու համադրությունը փոխադարձ միմյանց լրացնող մեթոդներ են, որտեղ վերլուծության միջոցով ճանաչվում է օբյեկտի մասերին հատուկ հատկությունները ու գործառության մեջ նրանց տեղն ու դերը, իսկ համադրության միջոցով ճանաչվում է այն էականը, օրինաչափը և ընդհանուրը, որոնց շնորհիվ մասերը միավորվում են մեկ ամբողջի մեջ:

Քաղաքագիտության մեջ վերլուծության և համադրության մեթոդները թույլ են տալիս ավելի լավ հասկանալու մարդկանց, նրանց տարբեր կազմավորումների քաղաքական գործունեության և վարքի դրսևորումները, քաղաքական գործընթացների և երևույթների բովանդակությունն ու էությունը:

Քաղաքագիտության մեջ լայնորեն օգտագործվում է տրամաբանական և պատմական փոխազդեցության մեթոդը:

Դատմական մեթոդի էությունն այն է, որ եւ վեր է հանում պատմության օբյեկտիվ շարժման ու զարգացման ընթացքը՝ դրանց ժամանակագրական խիստ ինքնուրույնության և դրսևորման կոնկրետ ձևերի մեջ: Մակայն պատմական մեթոդը, որքան էլ ճշգրտորեն արտացոլի պատմության ժամանակագրական կարգը, հնարավորություն չի տալիս հստակ ըմբռնել պատմական անցուդարձերի էությունը, դրանց զարգացման օրինաչափությունները, այդ զարգացման ներքին կապերի բնույթն ու անհրաժեշտությունը: Այդ խնդիրը լուծվում է տրամաբանական մեթոդի կիրառման շնորհիվ, որի նպատակն է բացահայտելու պատմական իրադարձությունների ներքին օրինաչափությունները, դեպքերի և երևույթների տրամաբանական կապը, առավել էականն ու անհրաժեշտը: Հասարակության պատմության վերլուծություն՝ ու ճանաչողությունը լիակատար կարող է լինել միայն այս երկու մեթոդներով համատեղ կիրառման ժամանակ: Տվյալ մեթոդների կիրառման ժամանակ հաճախ անհրաժեշտություն է լինում մեկից մյուսին անցնել: Քաղաքագիտության մեջ այս մեթոդների կիրառումը կարևորվում է նրանով, որ թույլ է տալիս քաղաքական երևույթներն ուսումնասիրել նրանց լինելիության և զարգացման գործընթացների մեջ՝ դրանք կապելով անցյալի հետ:

Քաղաքագիտության կողմից օգտագործվում է նաև նմանականացման և համեմատության մեթոդը: Համեմատությունը պարզում է առարկաների և երևույթների նմանությունն ու տարբերությունը: Համեմատության մեթոդը հենվելով հասարակական երևույթների կրկնելիության, ազգակցականության և նմանության վրա, օգնում է բացահայտել դրանց շարժման և զարգացման օրինաչափությունները: Քաղաքագիտության մեջ այն հնարավորություն է տալիս համարելու միանման քաղաքական երևույթներն ու գործընթացները, նրանցում բացահայտելու ընդհանուրը, յուրահատուկը և եզակին: Այն թույլ է տալիս համեմատելու տարբեր քաղաքական երևույթներ (պետո՝

թյուններ, ազգեր, զարգացման տարբեր աստիճաններ և այլն) և գտնել հասարակության հետագա զարգացման առավել ընդունելի ճանապարհներ:

Նշված մեթոդներից զատ, քաղաքագիտությունը օգտվում է նաև ժամանակակից մի շարք մեթոդներից, հատկապես իրական կյանքի հետ կապված և փորձի վրա հենված մեթոդներից - դիտարկում, հարցում, վիճակագրական նյութերի և փաստաթղթերի հետազոտում, լաբորատոր փորձեր և այլն: Այս առումով, կարևոր են քաղաքական սոցիոլոգիայի կողմից կիրառվող մեթոդները հասարակական կարծիքի ուսումնասիրման տեսանկյունից:

5. Քաղաքագիտության ֆունկցիաները

Բոլոր գիտությունների նման քաղաքագիտությունն էլ առաջացել է որպես հասարակական պահանջմունք և որպես այդպիսին կոչված է քավարարելու որոշակի հասարակական պահանջմունք, իհարկե հասարակական-քաղաքական կարևորագույն խնդիրների իրականացման գիտական տեսանկյունից:

Այդպիսի հասարակական պահանջմունք ի սկզբանե դրված է մարդկային հասարակության ձևավորման հիմքում: Դա նախ և առաջ մարդկանց համատեղ ապրելու անհրաժեշտության գիտակցումն էր: Չարգացման հազարամյակների ընթացքում հասարակական կյանքում անընդհատ տեղի են ունեցել իրփոխություններ: Որքան զարգացել է հասարակությունը, այնքան բարդացել է նրա կյանքը և ինչպես մեկ հանրույթի ներսում, այնպես էլ նրա և մյուս հանրույթների միջև ձևավորվել ու հաստատվել են նոր կապեր ու հարաբերություններ, փոխհարաբերությունների և դրսևորումների նոր ձևեր: Այս մեթոդը իր հերթին առաջացրել է հասարակական կյանքը ժամանակի պահանջին համապատասխան, ավելի ընդունելի սկզբունքներով ու մոտեցումներով, նորմերով ու կանոններով կազմակերպելու անհրաժեշտություն:

Այսօր էլ, ինչպես դարեր շարունակ, մարդկային քաղաքական միտքն ուղղված է հասարակության կյանքի կազմակերպման ձևերի զարգացման ու լատարելագործման ուղիների որոնումներին, որոնք անհրաժեշտ են մարդկային հասարակության հետագա առաջընթացի և մարդկային ցեղի համատեղ գոյակցության համար: Ահա, այդպիսի խնդիրների իրականացման տեսական հիմնավորումների առաջնություն ունի քաղաքագիտությունն այսօր:

Քաղաքագիտությունը կոչված է բացատրել, հիմնավորել և լուծել հասարակության քաղաքական կյանքին առնչվող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք չն պետության, նրա դերի, դրսևորման ձևերի, քաղաքական ոճիմների տիպերի ուսումնասիրությունը, իշխանության, նրա ձևավորման և տարանջատման, իրականացման և դրսևորման սկզբունքների ուսումնասիրություն, հասարակական կյանքի ժողովրդավարացման հիմնական ուղղությունների, ձևերի և մեթոդների մշակումը, հասարակական քաղաքական ուժերի միջև ժողովրդավարական սկզբունքներով փոխհարաբերությունների հաստատում և հասարակության առաջընթացի գործընթացում նրանց համախմբ-

մաս ուղիների մշակումը Զաղաքագիտության համար կարևորագույն խնդիր է ազգամիջյան համագործակցությունների հաղթահարման և ժողովուրդների համատեղ ապրելու լավագույն սկզբունքների մշակումը, քաղաքական այս քաղիկն մասնակցության ժողովրդավարական սկզբունքների մշակումը, քաղաքական գործընթացներին մարդկանց մասնակցության անհրաժեշտության հիմնավորումը, միջազգային, համաշխարհային քաղաքական հարաբերությունների ուսումնասիրությունն ու նոր մոտեցումների մշակումը և այլն:

Ինչպես տեսնում ենք, քաղաքագիտությունը չափազանց ծավալուն հարցադրումների շրջանակ է ընդգրկում և այս բարդ համակարգային խնդիրները լուծելու համար նա պետք է իրականացնի մի քանի հիմնական ֆունկցիաներ: Դրանք են՝ ճանաչողական, աշխարհայացքային, արժեքորման, կարգավորման և գործնական կանխատեսման ֆունկցիաները:

Քաղաքագիտության ճանաչողական ֆունկցիայի նպատակն է ուսումնասիրել հասարակության քաղաքական կյանքի զարգացման ուղիվածությունը, բացահայտել նրա տարբեր ընագավառների և նրանցում տեղի ունեցող քաղաքական գործընթացների օրինաչափություններն ու հեռանկարները, վերլուծել մարդկանց քաղաքական գործունեության տարբեր կողմերն ու նրանց քաղաքական հարաբերությունները: Օգտագործելով տեսական և փորձնական հետազոտությունների արդյունքները, քաղաքագիտությունը ձեռք է բերում նորանոր գիտելիքներ քաղաքական իրականության մասին, պարզում է հասարակության մեջ քաղաքականության դերի մասին պատկերացումները, ինչի շնորհիվ ավելի հասկանալի է դառնում հասարակության քաղաքական զարգացումն ընդհանրապես:

Դրանով հանդերձ, ճանաչողական ֆունկցիայի հիմնական առաքելությունն այն է, որ օգնի մարդուն ճանաչելու հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական երևույթների բնույթն ու առանձնահատկությունները, կարողանա ճիշտ կողմնորոշվել քաղաքական իրադարձություններում, որ մարդը կարողանա գիտակցել քաղաքական կյանքին իր մասնակցության իմաստն ու անհրաժեշտությունը: Այլ կերպ ասած, մարդուն պետք է տա գիտելիքների այն անհրաժեշտ պաշարը, որն օգնի նրան քաղաքական կյանքում գիտակցված գործունեություն ծավալելու: Այսինքն, քաղաքագիտությունը ոչ միայն ինքը պետք է ուսումնասիրի ու ճանաչի հասարակության քաղաքական կյանքը, այլև այն ճանաչելի դարձնի հասարակության անդամներին, ինչով էլ հենց պայմանավորված է քաղաքագիտության դասավանդումը:

Աշխարհայացքային ֆունկցիան նպատակ ունի ստեղծելու հասարակության քաղաքական զարգացման ընդհանրական պատկերը, իմաստավորելու քաղաքականության տեղն ու դերը հասարակության և նրա հիմնական թնագավառների քաղաքական զարգացումներում, ձևավորելու մարդկանց քաղաքական գիտակցությունն ու կուլտուրան: Քաղաքագիտության աշխարհայացքային մոտեցումը մարդուն հնարավորություն է տալիս ճիշտ գնահա-

յություն համամարդկային խմբային և ազգային շահերի հարաբերակցությունը, և որոշելու իր տեղը հասարակության քաղաքական կյանքում, իր շահերի ապահովման ժամանակ կողմնորոշվելու որոշակի սկզբունքներով: Այսպիսով մեր հասարակությունը գտնվում է քաղաքական խոշոր տեղաշարժերի և շրջադարձերի պայմաններում: Եվ այսօր հասարակությունը, առավել քան երբևէ, կարիք ունի մարդկանց քաղաքական գիտակցության և կուլտուրայի բարձրացման, լուրացանցի որ անհատի մեջ դաստիարակելով հասարակության քաղաքական կյանքին ակտիվ մասնակցելու ունակություններ, տեղի ունեցող երևույթների ճիշտ վերլուծության և ըմբռնման կարողություններ, որպեսզի մարդիկ ճիշտ հասկանան հասարակության, պետության կյանքում այդ երևույթների իրական նշանակությունն ու իմաստը, ճշտեն իրենց ակցնկայիքները և պայքարեն իրենց շահերի համար: Իր շրջապատում ճիշտ կողմնորոշվելու և միևնույն սխալը համախափ չլրկնելու համար մարդուն անհրաժեշտ են այնպիսի գիտելիքներ, որոնք օգնեն նրան գիտակցելու, թե քաղաքական կյանքում ինչո՞ւ է պարտավոր հենց սովյալ քայք կատարել և ինչո՞ւ դա անապրման պետք է կատարել, քանզի քաղաքականության մեջ ցանկացած թույլ տրված սխալ ծանր հետևանքներ է ունենում:

Արժեքային (արժեքորման) ֆունկցիայի իրականացման մրջոցով քաղաքագիտությունը փորձում է մշակել քաղաքական կյանքի որոշակի արժեքներ և գաղափարներ, որոնք սուբյեկտի քաղաքական գործունեությունը կուղղեն դեպի այդ արժեքների իրականացմանը, հասնելու այս կամ այն հասարակական գաղափարների մարմնավորմանը:

Հասարակական քաղաքական կյանքում դրոծում են իրենց առջև որոշակի նպատակներ դրած և որոշակի շահեր հետապնդող մարդիկ: Իսկ այնտեղ, որտեղ կան նպատակներ ու շահեր, այնտեղ առկա են արժեքներ և գաղափարներ: Այդ արժեքներն են ազատությունը, անկախությունը, ազգային արժանապատվությունը, սոցիալական արդարությունը և այլն: Դրպես գաղափար կարող է լինել այս կամ այն տիպի տևտեսական համակարգով հասարակության ստեղծելը, առավել արդյունավետ և մարդկանց շահերը պաշտպանող քաղաքական համակարգի ստեղծումը, այս կամ այն տիպի կառավարման համակարգի ձևավորումը և այլն: Այն նաև տալիս է քաղաքական ինստիտուտների, ռեժիմների, կարգերի, քաղաքականության սուբյեկտների, գործիչների և ուժերի քաղաքական վարքագծի գնահատականը:

Քաղաքագիտությունը խնդիր ունի նաև հասարակության քաղաքական կյանքում որոշակի կարգավորիչ ֆունկցիա իրագործելու: Այն կոչված է օգնելու մարդկանց, նրանց հանրույթներին և կազմակերպություններին, որպեսզի ապահովի նրանց ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա, նրանց ակտիվ մասնակից դարձնելու քաղաքական իրադարձություններին, քաղաքական այս կամ այն ուժերին քակցելով, իրական մասնակցություն ունենալու իշխանությունների ձևավորման գործընթացներին և որոշակի հավասարակշռություն ստեղծելու հասարակության քաղաքական կյանքում:

Քաղաքագիտությունն ունի նաև գործնական կանխատեսման ֆունկցիա, որը հենվելով գիտականորեն հիմնավորված գիտելիքների վրա, մշակում է հասարակության քաղաքական կյանքի զարգացման ուղղությունների մասին հիմնավորված կանխատեսումներ, մշակում է քաղաքական գործունեության տարբեր ձևերին և միջոցներին վերաբերող առաջարկներ ու խորհուրդներ, ձևակերպում է քաղաքական գործընթացների զարգացման հնարավորություններ, որոնք մեծ գործնական նշանակություն ունեն քաղաքական գործիչների քաղաքական գործունեության համար, ինչպես նաև մշակում և առաջարկում է հասարակության քաղաքական կյանքի ղեկավարման և կառավարման արդյունավետ ձևեր:

Քաղաքագիտությունն ունի նաև անմիջական գործնական նշանակություն պետության քաղաքականությունը մշակելիս:

Քաղաքական կանխատեսումները կարող են լինել երկարաժամկետ և կարճաժամկետ: Օրինակ՝ այս կամ այն երկրի պատմական որոշակի ժամանակաշրջանի քաղաքական հնարավոր զարգացումների կանխատեսումը՝ Նակայն ավելի հաճախ քաղաքագետները տալիս են ավելի կարճաժամկետ կանխատեսումներ: Ասենք, երկրում կամ տարածաշրջանում քաղաքական իրադարձությունների զարգացման տեղեկեցները, այս կամ այն քաղաքական ուժի հնարավոր քաղաքական հաղթանակը մոտակա քնտրություններում և այլն:

6. Քաղաքագիտության տեղը հասարակական գիտությունների համակարգում

Հասարակության քաղաքական կյանքի տարբեր բնագավառների ուսումնասիրությամբ զբաղվում են նաև այլ գիտություններ, որոնցից յուրաքանչյուրը ուսումնասիրում է քաղաքական կյանքի որևէ կոնկրետ բնագավառին վերաբերող պրոբլեմներ, կամ դրանց ինչ-որ առանձնահատկություններ: Մա նշանակում է, որ քաղաքագիտությունը ձևավորվել և զարգացել է մի շարք գիտությունների հետ սերտ կապակցության մեջ: Այդպիսի գիտություններից են, ավելի ճիշտ կլինի ասել, գիտական ճյուղերից են՝ քաղաքական փոփոխությունը, քաղաքական պատմությունը, քաղաքական սոցիոլոգիան, պետության և իրավունքի տեսությունը, քաղաքական աշխարհագրությունը և այլն: Այն, որ հասարակության քաղաքական կյանքը այդպիսի լայն շրջանակի ուսումնասիրության է արժանացել, ունի իր քաջատրությունը:

Նշված գիտություններից ոչ մեկը իր բնագավառի հետազոտությունների ընթացքում չէր կարող շրջանցել և անտեսել հասարակության քաղաքական կյանքի այն հարցադրումները, որոնք անմիջական առկայություն ունեն հենց իրենց հետազոտության օբյեկտի հետ (հասարակության զարգացման օրինաչափություններ, քաղաքական մտքի զարգացման ետապներ, պետության և իշխանության վերաբերյալ հարցեր, աշխարհա-քաղաքական դիրք և այլն): Հետևաբար այդ գիտությունները ի սկզբանե իրենց գիտական հետազոտու-

թյունագրի շրջանակներում բավական խորը և մանրակրկիտ ուսումնասիրության են ենթարկվել քաղաքական կյանքի մի շարք պրոբլեմներ՝ Ավելին, հենց այդ գիտությունների հետազոտություններն էլ տեսական և փաստական կյուր են հանդիսացել քաղաքագիտության ձևավորման և ինքնուրույն գիտություն դառնալու համար: Ուստի քաղաքագիտության և մյուս հասարակական գիտությունների փոխադարձ կապը և՛ պատմական, և՛ տեսական հիմնավորում ունի: Գարցն այն է, թե՛ այդ գիտությունները ինչպիսի փոխադարձությունների մեջ են գտնվում քաղաքագիտության հետ, նրա առանձնացումից հետո:

Քաղաքական փոփոխությունը քաղաքագիտության ուսումնասիրությունների համար ծառայում է որպես աշխարհայացքային-մեթոդոլոգիական հիմք, քաղաքականությունը որպես ամբողջական սոցիալական երևույթ ուսումնասիրելու, նրա էական հատկանիշները բացահայտելու համար: Քաղաքական փոփոխությունը տալիս է տարբեր քաղաքական կոնցեպցիաների իմաստի նշանակության գնահատականը, բացահայտում է անհատի, ռասարակության, իշխանությունների միջև եղած փոխադարձությունների սկզբունքներն ու օրինաչափությունները: Փոփոխության մեթոդոլոգիան սկզբունքների կիրառումը քաղաքական երևույթների ուսումնասիրություններում, թույլ է տալիս քաղաքական երևույթները դիտարկել այլ ռևույթների փոխադրեցության հետ, բացահայտել նրանց հակասական ձևային ու քննարկել նրանց զարգացումը պատմական ժառանգականության տեսանկյունից: Քաղաքագիտությունը օգտագործում է փոփոխության կողմից մշակած իմացության տեսությունը քաղաքական պրոբլեմների ուսումնասիրման ժամանակ: Օգտագործելով քաղաքական փոփոխությանը բնորոշ արժեքային մոտեցում, քաղաքագիտությունը կարողանում է բացահայտել անհատի և հասարակության կյանքի համաքաղաքական երևույթների նշանակությունը, գնահատել այդ երևույթները արդարության, ազատության և մարդկային արժանապատվության, հարգանքի տեսանկյունից: Քաղաքական փոփոխությունը վերլուծում է քաղաքականության ճանաչողության միջոցներն ու եղանակները, որոշում է քաղաքագիտության հասկացությունների և կատեգորիաների իմաստը, ձևակերպում է ընդհանրացված տեսություններ և բացահայտում է քաղաքական գործընթացների զարգացման օրինաչափությունները:

Իր հերթին փոփոխությունը օգտագործում է քաղաքագիտության կողմից հասարակության և նրանում ընթացող քաղաքական գործընթացների երևույթների ուսումնասիրության տվյալները, դրանք ղեկավարում հասարակության քաղաքական կյանքին վերաբերող ընդհանրացումների հիմքում:

Քաղաքագիտության և քաղաքական պատմության կապը արտահայտվում է նախ և առաջ նրանով, որ պատմությունը տալիս է հասարակության քաղաքական կյանքը հասկանալու բանալին, քաղաքական գաղափարների, տեսությունների, ինստիտուտների և իրադարձությունների ժամանակագրական հերթականության ուսումնասիրությունների միջոցով:

Քաղաքակառուցման ընդհանուր տեսության ձևավորման մեջ մեծ է քաղաքական պատմության դերը շատ նրբանիվ, որ կոնկրետ պատմական կոն- թի հիման վրա քաղաքագիտությունը իրականացնում է պատմական գրա- ստեղծի կենտրոնացումն և ի տարբերություն պատմության, որը հիմնականում պատմական իրադարձությունների ժամանակագրությունն է արձակագրում, վերացարարում է իրադարձությունների ժամանակագրությունը, տեսացնե- ռեն քաղաքացունքում է անցյալի և ներկաի փոփոխ, առանձնացնելով կրկնու- ղը, յուրահատուկն ու օրինաչափը և այդ հիմքի վրա ձևակերպում է հաս- րակական քաղաքական կյանքի ամբողջական պատկերը: Ի տարբերություն պատմության, որի ուսումնասիրությունը վերածառն է հասարակական գյուղի՝ ժողովրդի կյանքի, քաղաքագիտությունը ուսումնասիրում է միակ ուսումնասիրության քաղաքական կյանքը:

Քաղաքագիտությունը սերտ կապի մեջ է պետականագիտության և իրա- վագիտության հետ, հասկանալու նրա պետության և իրավունքի տեսության սահմանադրական իրավունքի, միջազգային իրադարձաբանի իրավունքի ճյուղերի հետ: Այս գիտական ճյուղերը շրջանակներում ուսումնասիրում են պետության և իրավունքի ձագուրն ու դերը, որանց կատարվածքային նկատարները, իրավագիտականության դերը հասարակության քաղաքական կյանքում: Քաղաքագիտությունը իրավագիտությունից տարբերվում է նրա- նով, որ պետահրապակական հարցերի ամբողջ (այն շրջանակ է ուսումնասիրում Քաղաքագիտությունը որանք ուսումնասիրում է ամենից առաջ որանս սո- ցիալական նրևույթ, որանս քաղաքական ինստիտուտներ, հասարակության քաղաքական կազմակերպության ձևեր՝ որոնց գլխավոր նպատակն է որո- շակի հասարակական շահերի որոնանանքը: Այս հարցադրություններով զբաղվող գիտական ճյուղերը ամբողջությամբ երբեմն անվանում են քաղա- քական տեսություն: Քաղաքական տեսության հիմնական ոլորտներն են՝ քաղաքական իշխանությունը, նրա տեսությունն ու առանձնահատկություննե- րը հիմքերը, հնարավորությունները իրականացման ձևերը և այլն: Քաղա- քական տեսության ուսումնասիրության առարկա են նաև քաղաքական հա- մայնությունը, պետական ինստիտուտները, քաղաքական ռեժիմները, քաղաքա- կանության գործելակերպը և այլն: Իր ուսումնասիրություններում քաղաքա- ան տեսությունը հանգում է միատական կոնկրետ ընդհանրացման և կոնկ- ռետ պատմական պրակտիկայի վրա:

Քաղաքագիտությունը մեծապես օգտվում է նաև քաղաքական սոցիոլո- գիայի հետազոտություններից: Սոցիոլոգիան քաղաքագիտությանն է տրա- մադրում հասարակության որանս ամբողջական սոցիալական համակարգի, յուրեւեւությունից հետ կապված բավականին կոնկրետ տվյալներ, որոնք քա- ղաքագիտությունը օգտագործում է քաղաքական երկույթների կենտրո- նային և հասարակական այլ երկույթների հետ դրանց կապերի քայնադար- ան ընթացքում:

Հասարակական քաղաքական կյանքի վերլուծությունների ընթացքում քաղաքագիտությունը միշտ հազվի է առնում սոցիոլոգիայի հետազոտու-

թյան արդյունքները կապված գանգվածների տրամադրության, առանձին շտապները, սոցիալական խմբերի, քաղաքական կուսակցությունների, ազ- ցանի գործունեության և վարչազգծ շարժանքների հետ, որի շարքիվ հա- րազրո է լինում ընդհանուր պատկերացում կազմել հասարակության մեջ յուրի հանցով քաղաքական տեսությունների և զարգացման ուղիությունների լայն: Քաղաքական սոցիոլոգիան հետազոտելով քաղաքական կոնկրետ- րը սոցիալական կոնկրետով, քայնադարում է քաղաքականության կամայա- ուրությունը հասարակության կենսագործունեության տարրեր ընթացակա- նով: Այս ազդեցությունը քաղաքական հասակարգի, քաղաքական ինստի- տուտների և տնտեսական հարաբերությունների, սոցիալական կառուց- յանքների, զարգացման ուղիության և մշակույթի վրա:

Սոցիոլոգիական հետազոտությունների դերը մեծ է հասկանալու իշ- ռականության մարմինների ընտրությունների ընթացքում քաղաքական ուժերի որական հետազոտությունների զննհատման և մասնակցների կարծիքնե- րի ուսումնասիրությունների շնորհիվ հասարակական կարծիքի ձևավորման կործում:

Քաղաքական մոնիտորինգությունները նկատարական (ստրիկտիվ) մե- ռանիզմները, զննարկում ու հարաբերությունները և դրանց վրա մարդու գի- րադրության և ներազդեցականության սրա բանադանության, կամքի, հույզե- րի հանդիմանքների և դրոշողումների ազդեցության ուսումնասիրու- րություններով, հեռեանադարումը մեծապես նպաստում է քաղաքական գործել- անքներում միշտ զննհատման է հաշվի առնել այդ գործունեների դերը: Քաղա- քական հոգեբանությունը քաղաքական վարքը ուսումնասիրում է նրան կոն- վերթով անձնապան անհատական և հոստատեանական-խմբային: Առանցիկ դիվարում քաղաքական կառուցանից դիտարկելով է որանս կոնկրետ մարդու կրուրը այս կամ այն քաղաքական իրականության ընկալման և գիտակց- ման ազդեցությունը: Իս վերաբերում է քաղաքական լրիզնաբան կուսակցու- րություններին շարժումներին իշխանական կատարներ գործունեությանը և այլն:

Այլ ուսումնասիրությունները համեմատել կարևոր են որոշելու համար Քեւոլության քաղաքական կուլտուրան: Իսկանային համար իշխանության մարմինների ընտրություններում անհատների մասնակցության շարժանքնե- րի որոշելու սոցիալական քաղաքականության այս կամ այն առանցնայնու- րունց և այլն: Իս հնարավորություն է տալու զննհատել հասարակության մրախաղությունը և մարդկային գործունե մասին հստակ պատկերացում կազմել, հասկանալու, երբ իրանք վերաբերում է գանգվածային շարժումնե- րին՝ ցույցեր, միտնազներ և այլ բողոքի կամ պաշտաանության գործողու- րություններ:

Քաղաքական գիտությունների համակարգում իրենց դերն ու նշանակու- րունն ունեն նաև այլ քաղաքական գիտություններ՝ "դանցից են" քաղաքա- կան անտրոպոլոգիան, որը մեկնաբանում ու ճշտում է քաղաքականության նպատկ մարդու սոցիոնեսարանական հատկանիշների հետ, ցույց է տալու

այս կամ այն հանրույթի սոցիոմշակութային առանձնահատկությունների ազդեցությունը քաղաքականության վրա: Զաղաքական աշխարհագրությունը, որն ուսումնասիրում է քաղաքական գործընթացների կախվածությունը տարածքային դիրքից, տնտեսական, աշխարհագրական, կլիմայական և այլ քնական երևույթներից:

Անշուշտ քաղաքագիտությունը անչվում է նաև այլ գիտությունների հետ այնքանով, որքանով այդ գիտությունները ուղղակիորեն անչվում կամ կախված են կոնկրետ քաղաքական գործընթացից:

Պետք է նշել, որ նշված բոլոր գիտությունների կողմից քաղաքական կյանքին անչվող ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր է դառնում առավել ու կոնկրետ պատկերացում կազմել հասարակության քաղաքական կյանքի մասին և քաղաքագիտության խնդիրն է այդ բոլոր ուսումնասիրությունները միավորել և ամբողջական ու ընդհանրացված գիտական հիմնավորված մոտեցում մշակել քաղաքականության վերաբերյալ:

Չրականություն

1. Белов Г. А. Политология. М. 1994
2. Брофман, Политология. М. 1992
3. Иргань Ю. В., Зотов В. Д., Зотова Л. В. Политология М. 1999
4. Политология: Краткий политологический словарь М. 1997
5. Политология. Курс лекций /под ред. М. Н. Мирченко/ М. 1997
6. Политология /под ред. Д. С. Климентьева/ М. 1997
7. Политология. Курс лекций /под ред. А. В. Миронова/ М. 1993
8. Политология /под ред. В. И. Давриенко/ М. 1999
9. Политология. Курс лекций /под ред. А. А. Радугина/ М. 1999
10. Политологический словарь /под ред. В. Ф. Халипова/ М. 1995

ՉԼՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Քաղաքական միտքի զարգացման հիմնական էություններ

1. Զաղաքական միտքը հին աշխարհում

Մարդկային քաղաքական միտքը ծնվել ու ձևավորվել է անհիշելի հեռավոր անցյալում և իր զարգացման երկարատև հազարամյակներն են անցել ու հասել մեզ հարուստ ժառանգության տեսքով:

Ինչպես արդեն նշվել է վերը, քաղաքականությունը բարդ սոցիալական երևույթ է և ընդգրկում է հասարակության կյանքի բոլոր ոլորտները այնքանով, որքանով այդ ոլորտները անչվում են պետության, իշխանության հետ և ենթակա են պետության տարբեր ինստիտուտների, իշխանության տարբեր մարմինների կողմից կազմակերպված կառավարման: Զաղաքական միտքը ծնվել է այն ժամանակ, երբ առաջացել է հասարակական կյանքը որոշակի նորմերով ու սկզբունքներով կազմակերպելու անհրաժեշտությունը: Ասել է, թե քաղաքական միտքը ծնվել, ձևավորվել ու զարգացել է մարդկային հասարակության առաջացման և զարգացման հետ համատեղ ու զուգահեռաբար: Հասարակությունն իր սկզբնական պարզագույն ձևերից զարգանալով՝ վերածել է հասարակական հարաբերությունների քարոզի համակարգի: Մասնավոր սեփականության առաջացման հետևանքով փոխվում էր հասարակության սոցիալական կառուցվածքը, առաջանում էին սոցիալական տարբեր խավեր, տարբեր շահերով ու ինտրավորություններով, հասարակությունը բաժանվում էր հարուստների ու աղքատների, ունևորների ու ընչազուրկների, իշխողների և հպատակների, ուժեղների և թուլյների, ինչը իր հերթին ծնում էր անհավասարություն, անարդարություն, թշնամանք ու ատելություն, արհամարհանք և անվստահություն, նախանձ ու չարություն և այլն: Ահա այս ամենը պահանջում էր հասարակական կյանքի կազմակերպման, հասարակության կառավարման նոր ձևեր, ինչի որոնմանն էլ ուղղված է եղել մարդկային միտքը հազարամյակներ առաջ:

Մեզ հասած գրական ժառանգությունը ցույց է տալիս, որ արդեն մ.թ.ա. չորրորդ հազարամյակում եգիպտոսում և Բաբելոնում, Հնդկաստանում և Չինաստանում մարդկային քաղաքակրթության առաջացման հետ միասին, որտեղ առաջացել էին ստրկատիրական պետություններ, ձևավորվում էր քաղաքական միտքը, նպատակ ունենալով համակարգել հասարակության կառավարումը: Այսպես, եգիպտական և Բաբելոնական մ.թ.ա. XXVIII- XXVIII դարերից մեզ հասած արձանագրություններում նշված է այն մասին, որ թագավորական իշխանությունը աստվածային ծագում ունի, իսկ տիրակալներին նկարագրել են որպես աստվածակերպ եակներ, որոնք իրականացնում են աստծո կողմից իրենց տրված իշխանությունը: Նկատի ունենալով հասարակական կյանքում եղած անհավասարությունը, այդ արձանագրություններում տրվում են հիմնավորումներ այն մասին, որ հասարակական անհավասարությունը անհրաժեշտ և նպատակահարմար է, և հասարակ մահկանացուները պետք է անվերապահորեն ենթարկվեն իշխանավորին: Ասվելի

զրա հետ միասին նշվում էր նաև, որ տիրապետողները պետք է լինեին վերաբերվեն ցածր դասի մարդկանց հետ: Քաղաքական թափափուր համարումի ներկայացրելով Մ. Մ. Ս. / Նկարագրվում է, թե ինչպիսին պետք է լինի թագավորը, որպեսզի ճիշտ կառավարի հասարակությունը: Ըստ այդ արձանագրության, թագավորը պետք է լինի խրատ, բայց արտաքին ուսյի իր բոլոր հպատակների հանատ, որը պետք է ուզե ասել, որ ասեղները լեռնացնեն թույլերին, պաշտպանի կարիքավորներին, որպեսզի հասարակության մեջ արտառություն լինի:

Հին Հնդկական քաղաքական միտքն իր արտացոլումն է գտել հնդկական դրականության հնագույն ուղղաթմամսերի վեդաների մեջ: Վեդաները յոթ մասերից բաղկացած կրոնափիլիսոփայական և քաղաքական անտերաջումներ ամբողջություն է: Դրանց մեջ քաղաքական մտքի ուսումնասիրման տեսանկյունից առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ռիգվեդան, որը կրոնական հիմքերի ժողովածու է /Մ. Ս. 1500թ./: Այդ աշխատության մեջ հին Հնդկական հասարակությունը բաժանվում էր վանականների խմբերի, որոնք հետագայում կազմեցին կաստայական համակարգի հիմքը: Դրանք յոթն էին՝

- 1) Բրահմաններ, որի բարձրագույն կրոնական խավն էր ներկայացնում
- 2) Հինդուրական արիստոկրատիայի վանա-քշատրիներ
- 3) Հողագործների, արհեստավորների և առևտրականների վանա-գայշի-ներ
- 4) Ատրիին վանա - շուդրաներ

Այս խավերից յուրաքանչյուրը իր բավուցման ունեւ և որանց քանակությանը սրբազործվում էր կրոնով և փոփոխման ենթարկւում չէր, ինչը ամուսնացրված էր կրանց մասին գրված օրենքով: Ռիգվեդայում արձանագրված օրենքները աստվածային էին հասարկում և մարդիկ պարտավոր էին անվերապահորեն ենթարկվել:

Քաղաքական մտքի առավել ժամանակակից ժողովրդական է համարվում մ. թ. ա. IV-III դարերից մեջ հասած Թրահման կառավարչի «միտախա շատրա»-քաղաքական գիտություն աշխատությունը: Արամում մանրամասն շարադրված է անտության, քաղաքականության և մեքետական հարաբերություններին վերաբերող ռադիկալիզմները ամբողջ հասակաբոց:

Աշխատության մեջ մանրամասն քննարկվում է պետությունը, նրա դերը, անտության դեկավորը: Նրա բարենախախտությունները, կարողություններն ու հատկանիշները: Նշվում է, թե ինչպիսի հատկանիշներով զերծ պետք է լինի տիրակալը և կատարում է շահագանց հետաքրքիր եզրակացություն, այն տիրակալը, որն այդպիսի հատկանիշների տեր չի լինի, նա կապիտալ կամ ոչ հպատակների, կամ թշնամիների ձեռքով:

Կոսեղով պետության արտաքին քաղաքականության մասին, աշխատության մեջ առաջ է քաշվում այն միտքը, որ պետք է պատերազմել ազելի ուժեղ, բայց անտարտ տիրակալի դեմ, քանզի այդպիսի տիրակալին կրա հպատակները ինչ պաշտպանի, այլ կոզնեն նրան տառապել: Իսկ երե պա-

տերազմել ազելի թույլ, քայք պրադ տիրակալով պետության դեմ, ապա կրա հպատակները կառաջնական իրենց թագավորին և հայտնի չէ, թե սատերազմը ինչ ավարտ կունենա:

Աշխատության մեջ հեղինակը կատարում է նաև հետևյալ եզրակացությունը, որ իշխանությունն ու հարստությունը անտաճեշտ է ձեռք բերել, պաշտպանել և մեծացնել բոլոր միջոցներով, ունյվեմ լավ, այնպես էլ վատ, եթե դա միակ էլքն է:

Հագառավաններ հետո այդ մտքը արտապատում էր Կրտյո մարիազելն:

Հին լինական գրական ժառանգության մեջ արժեքավոր տեղեկություններ կան պետության կազմակերպման, հասարակության կառավարման, մարդու և հասարակության միջև հարաբերությունների մասին: Դա հատկապես ցայտուն է արտառայված կոնֆուցիականության քաղաքացիական ուսմունքի մեջ, որի հեղինակն է Կոնֆուցիոսը մ. թ. ա. 551-479թթ: Կոնֆուցիոսը նշանակում է ուսուցիչ կոն: Կոնֆուցիոսը փորձում էր ցույց տալ մարդկանց լավագույն արտիակներսի, պետության մեջ իմաստուն և արտառացի ևարդեր ստեղծելու սկզբունքները: Այն հարցին, թե որն է պետության կառավարման լավագույն սկզբունքը, Կոնֆուցիոսը պնդումսխմում էր, որ պետության մեջ թագավորը պետք է թագավոր լինի, իսկ ծառան՝ ծառան, ուսյլը պետք է հար լինի, որին՝ ողոր Դրստով կա ուզում էր ասել, որ պետության մեջ կառավարումը ռեարավոր է լավագույնս իրադրացնել այն ժամանակ, երբ նրանում յուրացանցիտ դեկավար ևամ հարատել իր տեղում է, իրեն վստահված գործն ու սարտականությունն է կատարում: Երբ կառավարում են, առում էր կոնֆուցիոսը, մտացիո իանգառի մասին, հանձնարարությունը կատարելիս՝ ազնիվ եղիր:

Կոնֆուցիոսի քաղաքական ուսմունքի հիսքում ընկած է քաղաքործության, մարդկայնության սկզբունքը: Արդարացի հաստատկություն կատարելու համար պետածեշտ է, քսե կոնֆուցիոսի, պաշտպանել որոշակի կանուներ և նորներ, որոնք վեռաբերում են քյոլրին և առաջին հերթին՝ կառավարողներին:

Ինչպես տեսնում ենք, պետության, իշխանության, հասարակության կառավարմանը վերաբերող մտքեր եղել են դեռևս այն ժամանակներից, երբ ծագել է պետությունը: Երբ հասարակությունը կառավարման կարիք է ունեցել:

Սակայն քաղաքանան մտքը իր զարգացման գագաթնակետին հասավ իրն Գրմանյան և Գոմեանյան փիլիսոփայության մեջ: Քաղաքական մտքի պատմության մեջ իրենց առածնառատուպ տեղն ունեն ունյս փրիլիսոփաներ Դյառտոն /427-347 մ. թ. ա. / և Նոա աշակերտը՝ Կրիստոսեղ /384-322 մ. թ. ա. /: Դյառտոնը իր «Պետություն», «Օրենքներ» աշխատություններում մանրամասն քննարկելու է եղաբերում պետության ծագման, որսորման ձեռի, նրա դերի և հիմնաստիղիները հեռ կազված հարցերը: Ըստ Դյառտոն, պետությունը առաջացել է ծարրվանց մախնայնումների, որունցի հարսմունք:

վի քառսը և հասարակության կյանքը որոշակի սկզբունքներով կարգավորվի, քանզի միայն այդ ձևով էր հնարավոր մարդկանց գոյության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել: Ըստ Պլատոնի, քնական ճանապարհով ծագում են պետության արատավոր ձևեր: Պլատոնը պետության այդպիսի արատավոր ձևերից էր համարում տիմոկրատիան, օլիգարխիան, դեմոկրատիան և բռնապետությունը:

Պետության ծագման մյուս անհրաժեշտ պայմանը, ըստ Պլատոնի, մարդկանց միջև սոցիալական արդարություն հաստատելն էր: Արդարությունը Պլատոնը մեկնաբանում է որպես բոլոր մարդկանց համար կատարած բարեգործություն, երբ յուրաքանչյուրն իր տեղում կատարում է պետության և հասարակության համար առավել հնարավորինք, երբ բոլորը գնահատվում են ըստ արժանիւյն: Դրան հասնելու լավագույն ճանապարհը Պլատոնը համարում էր մարդկանց արդարության ըմբռնման ոգով դաստիարակելը, հետևել, որ արդարություն տիրի ինչպես մարդկանց միջև, այնպես էլ մարդկանց և պետության միջև: Անհրաժեշտ է պայքարել անարդարության դեմ, գտնում էր Պլատոնը, որովհետև անարդարության հետևանքով կարող է տեղի ունենալ անարդար կերպով իշխանության զավթում և օգտագործում չար նպատակներով:

Պլատոնը փորձում էր ստեղծել իդեալական պետության մոդելը, որը հենվում էր արդարության վրա: Ըստ Պլատոնի, այդպիսի պետություն ստեղծելու համար անհրաժեշտ է երեք հիմնական խավերի փոխհամագործակցություն: Դրանք են՝ իմաստուններն ու փիլիսոփաները, որոնք պետք է կառավարեն պետության գործերը, գիևփորակաությունը, որը պետք է պաշտպանի պետությունը ներքին և արտաքին թշնամիներից, հողագործներն ու արհեստավորները, որոնք սովալ պետության քաղաքացիների պահանջ-մուկները բավարարելու համար արժեքներ են ստեղծում: Դրանցից յուրաքանչյուրն իր յավիով նպաստում է պետության բարգավաճմանը: Աշխատանքի բաժանման մասին Պլատոնի գաղափարները, որոնք ընկած են պետության առաջացման հիմքում, քաղաքական մտքի լավագույն նվաճումներից է: Իդեալական պետության մեջ, ըստ Պլատոնի, չպետք է լինի ոչ մի հակասություն, ամեն ինչ պետք է կառուցված լինի խելամիտ, իսկ դրան հնարավոր է համենլ միայն մտածողության, տրամաբանության միջոցով: Այդպիսի պետության մեջ ոչինչ չպետք է փոխվի, քանզի ամեն ինչ կատարյալ է և ամեն մի փոփոխություն պետության կործանման պատճառ կարող է դառնալ: Ապրելով ստրկատիրության պայմաններում, քնական է, որ Պլատոնի իդեալական պետության մոդելը պետք է համապատասխաներ ստրկատիրական պետության սկզբունքներին: Ըստ երկույթին, Պլատոնը այդպիսի պետություն էր համարում արիստոկրատական պետությունը, սակայն որը հենված էր արդարության սկզբունքի վրա:

Պետության մասին Պլատոնի ուսմունքը նպատակ ուներ մարդկանց ներշնչել և համբազնել այնպիսի պետության ստեղծման անհրաժեշտությունը, որը այս կամ այն չափով կհամապատասխաներ իդեալական պետության

գաղափարին, որը մարդկանց մեծամասնության շահերը պաշտպաներ, ապահովելով նրանց համար արժանապատիվ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ: Այդպիսի պետություն ստեղծելու համար Պլատոնը ստեղծում է նաև օրենքների և իրավունքի մասին ուսմունք:

«Օրենքներ» աշխատության մեջ Պլատոնը ելնում էր նրանից, որ ընդունված օրենքները պետք է օգնեն մարդկանց միջև ներդաշնակ հարաբերություններ և արդարություն հաստատելու: Ըստ նրա, օրենքները պետք է մարդասիրական բնույթ ունենան և ապահովեն մարդկանց բազմակողմանի զարգացման հնարավորությունը: Պլատոնը գտնում էր, որ պետության ուժը օրենքների մեջ է և պետության մեջ բոլորն անխտիր պետք է ենթարկվեն օրենքին: Ըստ նրա, այն պետությունները, որտեղ օրենքները ուժ չունեն, կործանվելու են:

Քաղաքական մտքի արժեքավոր ժառանգություն է թողել հույն խոշորագույն փիլիսոփա Արիստոտելը (384-322 մ.թ.ա.): Ի տարբերություն Պլատոնի, Արիստոտելը իր «Պոլիտիկա» աշխատության մեջ փորձում է վերլուծել պետական կառուցվածքի իրական ձևերը, որիք ընդունելով գոյություն ունեցող քաղաք-պետությունների փաստական կոլոթը: Արիստոտելը գտնում էր, որ պետության էությունը մարդկանց միջև քաղաքական հարաբերություններն են: Ըստ Արիստոտելի, մարդը բնագործն հակված է ապրել միայն հասարակության մեջ, հարողդակցվել այլ մարդկանց հետ, ուստի նա քաղաքական էակ է: Ըստ Արիստոտելի, հասարակության զարգացումը սկսվել է քնտակիքից, որից հետագայում ձևավորվել են հանրույթներ, իսկ դրանցից էլ առաջացել է պետությունը: Նա պետության ֆունկցիան և նշանակությունը տեսնում էր մարդկային էության բարձրագույն բնական նպատակի՝ հաղորդակցման մեջ: Պետությունը հասարակական կապերի բարձրագույն ձև է, որից բխում է, որ մարդը պետական էակ է: Քաղաքական գիտության խնդիրն է քաղաքական գործիչներին սովորեցնել պետական կառավարման արվեստը, ցույց տալ, թե որ պետական կարգն է սովալ հասարակության զարգացման մակարդակին համապատասխանում: Արիստոտելը պետության բոլոր ձևերը բաժանում էր երկու խմբի՝ ճիշտ և ոչ ճիշտ: Ճշմարիտ են այն պետությունները, որտեղ պետության իսկական նպատակը հասարակության բարեկեցությունն է: Ճիշտ չեն նրանք, որտեղ տիրապետողների նպատակը իրենց շահն է, այլ ոչ թե ժողովրդի շահերը: Պետական կառույցը իրենից ներկայացնում է այնպիսի կարգ, որի դեպքում կառավարման իրավունքը պատկանում է օրենքով հաստատված իշխանությանը: Արիստոտելը որպես ճշմարիտ պետության տիպ էր համարում միապետությունը՝ արիստոկրատիան, կամ ինչպես ինքն էր անվանում՝ լավագույնների իշխանությունը և հանրապետությունը: Յուրաքանչյուր ճշմարիտ պետությանը նա հանդարտում էր ոչ ճշմարիտ պետության տիպ: Դրանք են՝ բռնապետությունը, որտեղ մեկի շահերն ու կամքն է իշխում, օլիգարխիան, որտեղ իշխում են հարուստները՝ սեփական շահերից ելնելով, և դեմոկրատիան, որտեղ իշխում են միայն աղքատները՝ իրենց շահերից ելնելով:

Լինելով ստրկատիրության կողմնակից, Արիստոտելը հասարակության մեջ սոցիալական անհավասարությունը նորմալ երևույթ էր համարում, և հասարակությունը բաժանում էր երկու մասերի՝ ազատներ կամ քաղաքացիներ և ստրուկներ: Քաղաքացիները կարող են զբաղվել պետության գինկորակա, դատական և օրենսդրական գործերով, իսկ գյուղատնտեսությամբ և արհեստագործությամբ պետք է զբաղվեն ստրուկները: Քաղաքացիները կարող են ունենալ սեփականություն, սակայն նրանից պետք է օգտվեն բոլորը, որովհետև անհավասարությունը դժգոհությունների և հեղաշրջումների պատճառ է դառնում: Ստրուկները սեփականություն չունեն: Այդպիսի պետության մեջ իշխանությունը պետք է իրականացվի բոլորի նկատմամբ: Մինևույն ժամանակ նա ուշադրություն էր դարձնում այն հանգամանքի վրա, որ մի խումբ մարդկանց իշխանությունը մյուսների վրա շատ քանակ կախված է սեփականության հարաբերություններով, ինչն էլ շատ մարդկանց ստիպում է հարստության ձգտել: Սակայն այդ հանդարդությունները, ըստ Արիստոտելի, չեն խանգարում, որ իշխողների և հպատակների միջև նորմալ հարաբերություններ հաստատվեն: Եւ օրինակ է բերում ընտանիքը, որտեղ տղայնպես կա դեկավար և նրան ենթարկվողներ, որից ընտանիքն ավելի ամուր է լինում:

Արիստոտելի քաղաքական հայացքներում կարևոր նշանակություն ունեն սոցիալական տարբեր խավերի և սոցիալական կառուցվածքների ձևավորման գործում աշխատանքի բաժանման դերի մասին եզրակացությունները: Արիստոտելի քաղաքական իդեալն այնպիսի պետությունն էր, որում միայն օրենքն է ուժ, իսկ քիչ թե շատ ընդունելի՝ տարբեր պետական կարգերի խառնուրդն է, որը հենված է հարուստների և աղքատների շահերի միավորման վրա:

Արիստոտելը ապացուցում էր, որ պետության ոչ մի ձև չպետք է սահմանափակի անհատի զարգացումն ու գործունեության հնարավորությունը: Ըստ նրա, առավել խելացի և արժանապատիվ անհատներին պետք է ներգրավել պետության կառավարման մեջ: Այդպիսի ճանապարհով կարելի է հասնել երջանիկ պետության ստեղծման:

Քաղաքական մտքի զարգացման գործում իր նշանակալից ներդրումն ունի հին հունական մեծագույն մտածող, պետական և քաղաքական գործիչ Մարկ Ցիցերոնը /106-43 մ.թ.ա./, որը շարադրված է նրա «Պետության մասին» և «Օրենքների մասին» աշխատություններում: Ցիցերոնը հատուկ ուշադրություն է դարձնում իրավական հավասարության և պետության պոռոչեմենտի ռաուսմաաիրության վրա: Եւ նույնպես գտնում էր, որ պետությունը ժողովրդի սեփականությունն է՝ ընդհանուր շահերով միավորված և ծագում է մարդկանց համատեղ ապրելու պահանջմունքից, ինչը մարդու բնույթով է պայմանավորված, քանզի նա հասարակական կենդանի է:

Ըստ Ցիցերոնի, պետության հիմնական առաքելությունը հասարակության մեջ մարդկանց և տարբեր սոցիալական խավերի միջև հարաբերությունների ներդաշնակումն է: Այդ պայմաններում է հնարավոր ավելի լրիվ

քավարարել հասարակության անդամների տարբեր պահանջմունքներ, ինչը ինքնին մեծ բարիք է:

Ցիցերոնը իրեն հայտնի ոչ մի պետության առավելություն չի տալիս, գտնելով, որ դրանցից յուրաքանչյուրն ունի ինչպես իր առավելությունները, այնպես էլ իր արատները:

Եւ քիչ թե շատ ընդունելի երեք պետության տիպեր է առանձնացնում՝ թագավորական կամ միապետական իշխանություն, լավատեսների կամ արիստոկրատների իշխանություն, ժողովրդական իշխանություն: Լավագույնը, ըստ Ցիցերոնի, դրանց խառնուրդն է, եթե դրանք ապահովեն իրենց քաղաքացիների իրավական հավասարությունը: Ցիցերոնը քաղաքացուն դիտում է որպես իրավական հանրույթի սուբյեկտ: Եւ առաջին անգամ խոսում է ժողովուրդների իրավունքների մասին, որը միջազգային պայմանագրերի և պարտականությունների կատարման սկզբունքի հիմքում է ընկած:

Ցիցերոնը ցնարկում է արդարացի օրենքների ստեղծման հնարավորությունները, նշելով որ արդարությունը պետք է հանդես գա որպես ցանկացած օրենսդրական գործունեության սոցիալ-քարոզական հիմք: Եւ քաղաքացիական իրավունքները և արդարացի օրենքների սոցիալական նշանակությունը: Արդարացի օրենքներից պետք է բխեցնել կյանքի կանոնները:

Ցիցերոնը պնդում էր, որ օրենքները ստեղծում են պետական գործիչները՝ հանուն քաղաքացիների բարօրության, պետության ամբողջականության, մարդկանց հանգիստ ու երջանիկ կյանքի:

2. Քաղաքական միտքը միջնադարյան Եվրոպայում

Միջնադար է անվանվում հին աշխարհի և նոր ժամանակաշրջանի միջև ընկած ժամանակահատվածը, որը սնել է մոտավորապես հազար տարի՝ V-XV դարեր: Այն հաճախ կապում են նաև Գոթմեական կայսրության փլուզման հետ: Այդ հազարամյակը առանձնանում է Եվրոպայում քրիստոնեության տարածման, հաստատման և հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա նրա տիրապետության հաստատմամբ: Ամբողջ փիլիսոփայական և քաղաքական միտքը ծառայության էր անցել եկեղեցուն, հիմնական նպատակ ունենալով ապահովել նրա գերակայությունը և իշխանությունը հասարակության վրա: Տասնյակ մտածողներ իրենց ուսումնասիրությունների նպատակն էին դարձրել կրոնի և եկեղեցու դերի, քաղաքական կյանքում նրանց առաջնության հիմնավորումը, քրիստոնեության ռամունքի առավելությունները: Այդպիսի մտածողներից էին Կլիմենտ Ալեքսանդրացի /II-IIII դ./, Օրիգենես Ալեքսանդրացի /185-254/, Օգուստինոսը /354-430/, Ֆոհան Ակուտը՝ IX դար, Ռոցելին Կոմպենեացի /մոտ 1050թ./, Պիեր Ադելարն /1079-1142/, Ալբերտ Բոլտետացի, Դուես Ակուտը և այլք:

Միջնադարյան քաղաքական մտքի գլխավոր սկզբունքը թեոկրատիզմն է, որը ենթադրում էր Աստվածային զարգափառների և եկեղեցու իշխանության

հաստատումը անհատի և պետության վրա: Այդ էր պատճառը, որ միջնադարյան եվրոպայի մտածողների քաղաքական հայացքները ընդունել էին կրոնական ձև ու բովանդակություն, համապատասխանեցնելով աստվածային հայտնության ոգուն: Հասարակության կյանքի, այդ թվում և քաղաքական իշխանության, պետության, մարդու ազատության կրոնական մեկնությունների հիմնական աղբյուրը Աստվածաշունչն է:

Վաղ միջնադարի կրոնական և քաղաքական մտքի կարկառուն ներկայացուցիչ է Օգուստինոս Ավինյոնի /354-430/, որին նաև Օգուստինոս Երանելի էին կոչում: Նա իր «Աստվածային թագավորության մասին» աշխատության մեջ զարգացնում է աստվածային կանխորոշման մասին ուսմունքը, ըստ որի աստված իր նախահավերժ որոշմամբ մարդկանց ոմանց ընտրել է ապագա կյանքում փրկության և երանության համար, մյուսներին՝ դժոխքում հավիտենական տանջանքների դատապարտելու համար, այսինքն՝ մարդկային պատմության զարգացման ընթացքը աստծո կողմից կանխորոշված է: Խոսելով պատմության և պատմական պրոցեսի ուղղվածության իմաստի մասին, Օգուստինոսը այն քննարկում է քաղաքական հարցադրումների տեսանկյունից, շոշափելով պատմական պրոցեսներում պետության դերի, նրա և եկեղեցու փոխհարաբերության, մարդու ազատության հարցերը և այլն: Աշխատության մեջ խոսելով երկու՝ մարդկային և աստվածային թագավորությունների մասին և դրանց հակադրելով իրար, Օգուստինոսը, մարդկային թագավորությունը համարում էր աստծո կողմից անիծված, անմաքուրների թագավորություն, որը դատապարտված է կործանման: Աստվածայինը քարության աղբյուր է: Իսկ երկրայինը՝ չարության և տեղի է ունենում չարի և բարու անընդհատ պայքար: Դրանով էլ, ըստ Օգուստինոսի, տարբերվում է կյանքի սկզբունքները տարբեր թագավորություններում: Երկրային կյանքում մարդն ինքն իրեն այն աստիճանի է սիրում, որ մոռանում է աստծուն, իսկ երկնային կամ աստվածային թագավորությունում մարդը սիրում է աստծուն այն աստիճանի, որ մոռանում է իրեն: Այստեղից էլ Օգուստինոսը կատարում է մի շարք եզրակացություններ՝ կապված մարդկանց գործունեության շարժանիքների, նրանց միջև փոխհարաբերությունների ու նաև իշխողների և հպատակների փոխհարաբերությունների հետ: Ըստ նրա, երկրային թագավորությունում անընդհատ տեղի է ունենում իշխանության համար արշավանք ինչպես իշխողների, այնպես էլ հպատակների կողմից: Իսկ երկնային թագավորությունում բոլորը սիրով ծառայում են իրար և բոլորը միասին՝ աստծուն: Օգուստինոսը մարդու ազատության հարցը քննարկելիս ելնում էր այն սկզբունքից, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ, ու նրանց համար հավերժ բնական ձգտումը դեպի աստվածն է և հենց դրանում էլ դրսևորվում է նրանց ազատությունը: Մակայն այդ ձգտման ճանապարհին մարդը երկրային թագավորություններում հանդիպում է բազում արգելքների և, որպեսզի դրանք հաղթահարի, անհրաժեշտ է ուժեղ կամք, այդ թվում՝ քաղաքական կամք, քանի որ խոսքը վերաբերում է պետության կողմից հաստատված արգելքներին: Նա ընդգծում էր, որ մարդուն ուժեղ կամքը անհրաժեշտ է, որ-

պեսզի նա պայքարի չարի դեմ և բարիք արարի: Բանի որ երկնային և երկրային թագավորությունները, որպես չարի և բարու կրողներ, կողք-կողք են գտնվում, իսկ երբեմն երկնային թագավորությունում ապրում են երկրային թագավորության անդամներ և իսկառակը: Հիմնավորելով իշխանության բաժանումը եկեղեցական և աշխարհիկ պետությունների, Օգուստինոսը միշտ շեշտում էր եկեղեցական իշխանության առաջնությունը, քանզի աշխարհիկ պետությունը ժամանակավորապես գոյություն ունի մարդկանց վարքը կարգավորելու համար: Եվ հենց նրա ժամանակավոր քնույթն էլ հուշում է, որ նա անցողիկ է և պետք է ենթարկվի հավերժական աստվածային իշխանությանը:

Ընդհանրացնելով իր վերլուծությունները, Օգուստինոսը եզրակացնում է, որ Աստվածային իշխանության երկրային ներկայացուցիչն է Քրիստոնեական եկեղեցին, իսկ պատմության իմաստը համաշխարհային մասշտաբով քրիստոնեության հաղթանակն է:

Միջնադարյան քաղաքական մտքի խոշորագույն ներկայացուցիչ է Թոմաս Աքվինացին /1225-1274/: Այդ ժամանակ Գոմի եկեղեցին հասել էր իր ամենաբարձր հզորությանը:

Թոմաս Աքվինացու քաղաքական հայացքները շարադրված են նրա «Իշխողների կառավարման մասին» աշխատությունում: Նա գտնում էր, որ պետությունը սկիզբ է առնում Աստծուց, որը դեկլարարում է հասարակությանը: Նրա ուսումնասիրություններում մեծ տեղ է զբաղում իշխանության, պետության կառուցվածքի և կառավարման ձևերի հարցերը: Աքվինացին փորձում էր իմաստավորել պետության այնպիսի տիպեր, ինչպիսիք են միապետությունը, արիստոկրատիան, օլիգարխիան, դեմոկրատիան և բնապետությունը: Չնայած նա առավելություն էր տալիս միապետությանը, սակայն նշված պետություններից ոչ մեկը, ըստ նրա, կատարյալ չէ, որովհետև դրանցից ոչ մեկը չի կարող մարդկանց բարեկեցիկ կյանքի պայմաններ ստեղծել: Դրա ոետ միասին նա գտնում էր, որ առավել լավագույն պետության ձև կարող է լինել միապետության, արիստոկրատիայի և դեմոկրատիայի ընդունելի տարրերի միավորումը-համակցությունը:

Աքվինացին մեծում էր հասարակական հավասարությունը և պնդում էր, որ հասարակությունը խավերի բաժանելը Աստծո կողմից է սահմանվել: Իշխանության բոլոր տեսակները երկրի վրա Աստծուց են գալիս, ասում էր նա: Պետական համակցությունը բարձրագույն համակցության, այսինքն Աստծո պետության պատրաստվելու միջոց է: Ուստի պետք է պետությունը ենթարկվի եկեղեցուն:

Աքվինացին ուշադրություն է դարձնում այն բանի վրա, որ անհրաժեշտ է տարբերակել իշխանության եուլությունը, ձևը և օգտագործումը: Աստծո կողմից հաստատված իշխանությունը մարդկանց բարիք է բերում, ուստի նրան պետք է անվեհապահորեն ենթարկվել: Պետական իշխանության գլխավոր խնդիրը ընդհանուրի բարեկեցությունն է: Սակայն իշխանությունը կարող են օգտագործել նաև չար նպատակով և խախտել Աստծո օրենքները: Այս դեպ-

քում, ըստ Աքվենացու, հապտակներն իրավունք ունեն հակադրվելու և չեն-թարկվելու: Հիմնավորելով եկեղեցական իշխանության առավելությունը աշխարհիկ իշխանության վրա, նա ապացուցում էր, որ եկեղեցու միջամտու-թյունը պետության գործերին, նույնիսկ միապետին տապալելու դեպքում, կարող է արդարացված լինել, եթե տիրակալը իշխանության է եկել խաբեու-թյամբ կամ արքունական հեղափոխության միջոցով և կառավարում է ա-նարդարացիորեն: Այս դեպքում նույնիսկ ժողովուրդը կարող է ապստամբու-թյուն բարձրացնել և տապալել միապետին: Նա մանրամասն նկարագրում է այն իրարդրությունները, երբ ժողովրդի բարձրացրած ապստամբությունը ար-դարացված է: Անշուշտ, թուր դեպքերում Աքվենացին չէր մոտանում պաշտ-պանել եկեղեցու շահերը և ամեն դեպքում փորձում է ապացուցել եկեղեցուն աշխարհիկ իշխանության ենթարկվելու անհրաժեշտությունը:

Մարդկային համակեցությունն, ըստ Աքվենացու ուսմունքի, նախատես-ված է այն բանի համար, որ աջակցի անհատներին կաթոլիկական ուսմուն-քի ոգով հասնելու իրենց բարոյականության նպատակներին: Միապետի իշ-խանությունը պետք է ենթարկվի բարձրագույն, հոգևոր իշխանությանը, որի գլխում երկնքում Ջրիստոսն է, երկրի վրա՝ Հոռմի պապը:

Ըստ Աքվենացու, մարդկանց կյանքն ու գործունեությունը վերջին հաշվով կարգավորվում է աշխարհի կառավարման աստվածային սկզբունքներով, ո-րոնք ձևավորում են հավերժական իրավունք, որից բխում են իրավունքի մնացած թուր ձևերը, այդ թվում և այն իրավական սկզբունքներն ու նորմե-րը, որոնցով մարդիկ ղեկավարվում են ամենօրյա կյանքում:

Լինելով միապետության կողմնակից, Աքվենացին տարբերակում էր միա-պետության երկու տիպ՝ բացարձակ միապետություն և քաղաքական միա-պետություն: Ջաղաքական միապետությանը նա առավելություն էր տալիս, քանի որ նրանում միապետները ղեկավարվում են օրենքներով և գործում են նրա շրջանակներում:

Իր ուսմունքում Աքվենացին մեծ տեղ է հատկացնում ժողովրդի իշխանու-թյան իրավասությանը: Երբ թագավորը իր պարտականությունը չի կատա-րում, գրում է Աքվենացին, նրան պետք է տապալել և դա ապստամբություն չէ, քանի որ միապետը ինքն է ապստամբել իր հպատակների դեմ: Սակայն լավագույն տարբերակը նրա իշխանության սահմանափակումն է, թույլ չտրվի իշխանության բարձրահում: Ուստի ճիշտ կլինի, որ ամբողջ ժողովուր-դը մասնակցի կառավարման պրոցեսին, գրում է Աքվենացին: Ցանկացած քաղաքական իշխանություն իրականացվում է ժողովրդի հետ համաձայնու-թյան գալով և թուր օրենքները պետք է ընդունվեն ժողովրդի կամ նրա ներ-կայացուցիչների կողմից: Մենք չենք կարող ազատ լինել, ասում է Աքվենա-ցին, քանի դեռ կախում ունենք չար մարդու կամքից:

Թուսա Աքվենացու ուսմունքը մեծ ազդեցություն ունեցավ իր ժամանա-կաշրջանում և հետագայում դարձավ Հոռմի կաթոլիկ եկեղեցու գաղափա-րախոսությունը:

Հետագայում իտալական հումանիստ մտածողները միջնադարն անվանեցին եվրոպական պատմության մութ գիշեր, սակայն որի երկնականարում քոչ-կլտում էին բացում փայլող աստղեր

3. Ջաղաքական միտքը Վերածննդի դարաշրջանում

Վերածննդի դարաշրջանը /XIV-XVIդդ./ ֆեոդալիզմի ընդերքում նոր բուր-ժուական հարաբերությունների ձևավորման և մարդասիրական հայացքնե-րի հաղթարշավի դարաշրջանն է եվրոպայում: Վերանայելով և ներշնչվելով անտիկ արժեքներով ու գաղափարներով, Վերածննդի դարաշրջանում վերա-ձևվեց հավատը մարդկային բանականության, մարդկային անհատի արժա-նապատմության և անհատականության նկատմամբ: Սկսվեց պայքարը Հոռ-մի կաթոլիկ եկեղեցու դեմ, նրա ճնշումներից և ազդեցությունից ազատվելու համար:

Ինչպես հազարամյակներ շարունակ, Վերածննդի դարաշրջանի մի շարք մտածողներ նույնպես իրենց խնդիրն էին համարել հասարակության կառա-վարման, պետության, նրա դրսևորման ձևերի, իշխանության, նրա իրակա-նացման սկզբունքների վերաբերյալ ուսումնասիրությունները և որոնումնե-րը այնպիսի իշխանության ձևերի, որոնք կհամապատասխանեին հասարա-կության զարգացման տվյալ մակարդակին և կապահովեին նրա առաջըն-թացը: Դա էր պատճառը, որ այդ ժամանակաշրջանում բավականին ակտի-վացավ մարդկային գործունեությունը կյանքի թուր ոլորտներում: Եվ շատ զհիտությունների կողքին իր զարգացումն ունեցավ նաև քաղաքական միտ-քը:

Դա պայմանավորված էր նաև եվրոպայի երկրներում մասնատված ֆեո-դալական պետությունների փոխարեն կենտրոնացված ուժեղ պետություն ձևավորելու անհրաժեշտությամբ: Ամբողջ եվրոպայում հասունացել էր այն-պիսի պետության ձևի ընտրության անհրաժեշտությունը, որը կարողանար ապահովել երկրի քաղաքացիների մեծամասնության արժանապատիվ կյանքն ու մարդկային ազատությունը: Ամանատիպ պրոբլեմների ուսումնա-սիրությունը դարձել էր այդ ժամանակի մտածողներից շատերի հետազոտու-թյունների հիմնական առարկան: Այդ շրջանի խոշորագույն մտածողներից է Խոսելացի Լեկոլո Մացիավելին /1469-1527թթ./: Իր «Դատադրություններ Տի-տոս Լուվիոսի առաջին տասնորակի վերաբերյալ» և «Միապետ» աշխատու-թյունների մեջ նա բավականին նոր գաղափարներ է առաջ քաշում, որոնք կարևոր նշանակություն ունենին շատ քաղաքական պրոբլեմներ լուծելու հա-մար և որոնք կուտակվել և լուծվելու կարիք ունեին այդ ժամանակաշրջա-նում:

Նրա աշխատություններում ցնտարկվում են պետության տության, քնույ-թի, պետական կառուցվածքի ձևի, պետական իշխանության իրականացման միջոցների և այլ քաղաքական պրոբլեմներին վերաբերող հարցեր, որոնք նա ուսումնասիրում է որպես մեկ ամբողջական համակարգ: Ըստ երևույթին դա

այդ դարաշրջանում առաջին հստակ, համակարգված և համեմատաբար խոր ուսումնասիրությունն է, ինչի պատճառով էլ Մաքիավելին կոչում են նոր ժամանակաշրջանի քաղաքական գիտության հիմնադիր:

Ըստ Մաքիավելու, քաղաքականությունը տարբեր սոցիալական ուժերի փոխհարաբերություն է՝ կապված հասարակության մեջ իշխանության իրականացման խնդրի հետ: Այսինքն, քաղաքականությունը մեկնաբանվում է որպես մարդկանց միջև հասարակական հարաբերություն: Ըստ նրա, քաղաքականության հիմնական հարցը իշխանության հարցն է: Գաղափարն է, որ խոսքը վերաբերում է պետական իշխանությանը:

Մաքիավելին քաղաքական մտքի պատմության մեջ առաջինն էր, որ պետությունը մեկնաբանում է որպես ինչ-որ մարմին, որի օգնությամբ հասարակության մեջ իշխող ուժերը իրագործում են հասարակության կյանքի շատ խնդիրներ՝ կիրառելով հասարակական կյանքի կազմակերպման որոշակի սկզբունքներ՝ հասարակական կյանքում որոշակի կարգ ու կանոն հաստատելու համար: Մաքիավելին պետությունը դիտում էր որպես հասարակության քաղաքական վիճակ, որն իրենից ներկայացնում էր իշխողների և ենթակաների հարաբերություն, համապատասխան կառուցվածքի, կազմակերպված քաղաքական իշխանության՝ հիմնարկների և օրենքների առկայությամբ: Եւ քաղաքականությունը (նկատի ունի քաղաքական տեսությունը) համարում էր փորձված գիտություն, որը բացատրում է անցյալը, կառավարում է ներկան և ընդունակ է կանխատեսել ապագան:

Մաքիավելին պետության հանրապետական ձևը գերադասելի էր համարում միապետականից, քանի որ այն ավելի է համապատասխանում մարդու բնույթին: Գանրապետությունում, ըստ նրա, հեշտ է իրականացնել ազատությունն ու հավասարությունը: Գանրապետությունում ժողովրդի մեծամասնության կառավարումը միավորվում է փոքրամասնություն կազմող գիտակների և պետության ընտրված մեկ ղեկավարի կառավարման հետ: Ժողովրդի մեծամասնությունը մասնակցում է կառավարմանը նրանով, որ հսկում է կառավարման պրոցեսի վրա և թույլ չի տալիս իշխանությունը ի շարս օգտագործել: Գիտակների մասնակցությունը կառավարմանը թույլ է տալիս նրանց հարուստ գիտելիքները օգտագործել, միևնույն ժամանակ հսկել պետության ընտրված ղեկավարի վրա: Իսկ իշխանության անհատական կրողը կարող է անհրաժեշտության դեպքում արագ որոշումներ ընդունել: Սակայն հանրապետության կառավարման ձևը միշտ և ամենուր հնարավոր չէ ստեղծել, քանի որ կառավարումը համարվում է քաղաքացիների ընդհանուր գործը, իսկ դրա համար անհրաժեշտ է ժողովրդի զարգացման որոշակի մակարդակ, ունակություններ և այլն: Ուստի հետախնայ ժողովուրդների համար Մաքիավելին դրանց միացած ժողովուրդներ էր անվանում, որոնց մտ քաղաքացիական գիտակցությունը դեռ չի զարգացել, իշխանության լավագույն ձևը միապետությունն է: Այս պարագայում միայն կենտրոնացված ուժեղ պետական իշխանության պայմաններում է հնարավոր լավագույն կառավարել հասարակությունը:

Մաքիավելին առաջին անգամ ցնեարկում է նաև ֆեոդալիզմի հանրապետության գաղափարը, այն դիտելով միասնական հզոր պետության ստեղծման հնարավոր ձևերից մեկը: Ըստ երևույթին, եւ փորձում էր գտնել տարբեր մանր պետությունների մասնատված Իտալիայի համար միասնական պետության ստեղծման ուղին: Այս դեպքում, ըստ նրա, իշխանության կրողը կարող է լինել ուժեղ միապետը, որի իշխանությունը հանուն ընդհանուրի շահերի կարող է լինել և՛ բռնապետական, ուղղված տարբեր կենտրոնախույս ուժերի կամ արտաքին թշնամու դեմ, որոնք կփորձեն թուլացնել պետության հզորությունը: Մաքիավելին նշում էր նաև կառավարման խաղը ձևերի դրական կողմը, որի մեջ ներառված կլինեն միապետության, արիստոկրատիայի և դեմոկրատիայի լավագույն գծերը՝ ապահովելով ուժեղ իշխանության իրականացումը՝ ընդհանուրի շահերից ելնելով: Եւ գտնում էր, որ միայն ժողովրդի կողմից ընտրված բարեփոխիչ միապետն է ընդունակ միավորելու երկիրը, ստեղծելու ազգային պետություն և անկախվելու պապական եկեղեցու ազդեցությունից:

Գանուն պետության ամրապնդման, բոլոր միջոցներն արդարացված են, ասում է Մաքիավելին, առաջարկելով «եպատակը արդարացնում է միջոցները» հայտնի սկզբունքը: Ըստ նրա, քաղաքական վարքագծի հիմքում ընկած է շահն ու ուժը, քաղաքականության մեջ պետք է հենվել ուժի և ոչ թե բարոյականության վրա, որից կարելի է և հրաժարվել, եթե շահը դա է պահանջում:

Բոլոր պետություններում և բոլոր ժողովուրդների մոտ եղել են և մնում են միևնույն ձգտումներն ու կրքերը: մարդիկ իշխանասեր են, շահամոլ են, անկայուն են, անշնորհալի են, վախկոտ են, ծույլ և երեսպաշտ են, նախանձ ու կամպեծամիտ են, և բոլորն իրար նկատմամբ լցված են ատելությամբ: Ծանաչելով այս հատկանիշները, միապետը ավելի լավ կարող է կառավարել երկիրը՝ չվախենալով մեղադրանքներից և ցնեադատությունից: Եւ միապետներին խորհուրդ էր տալիս հանուն պետության շահերի ամեն ինչ խոստանալ, իսկ եթե անհրաժեշտ է՝ հրաժարվել խոստումից, միայն թե եպատակը իրականացվի: Եւ փորձում էր տալ իդեալական միապետի կերպարը, նշելով, թե ինչ հիմնական հատկանիշներ պետք է ունենա նա և ինչպես պետք է դրանք օգտագործել:

Ինչպես տեսնում ենք, քաղաքականության մեջ Մաքիավելին անտեսում էր բարոյականությունը, և չնայած նա շատ ղեկավարում արդարացի հիմնավորումներ էր բերում, սակայն նրա տեսակետները չէին ընդունում շատերը: Եվ ժամանակի ընթացքում ստախոսությունը, երեսպաշտությունը, հավատափոխությունը քաղաքականության մեջ կոչվեցին Մաքիավելիզմ:

Վերածննդի դարաշրջանի խոշորագույն մտածող էր ֆրանսիացի ժան Բոդենը (1530-1596): Նրա հիմնական աշխատությունն է «Կեց գիրք հանրապետության մասին» ուսումնասիրությունը, որում նա շարադրում է պետության ծագման, նրա ֆունկցիաների, կառավարման ձևերի մասին հայացքները:

Բողենի հիմնական ծառայություններից մեկը ինքնիշխանության տեսության մշակումն էր: Նա պաշտպանում էր միապետի բացարձակ գերիշխանությունը, նշելով, որ միապետի իշխանությունը աստվածային ծագում բունի: Սակայն դրա հետ միասին, նա գերադասելի էր համարում ժամանակագրաբար անցկող բացարձակ միապետությունը: Ըստ Բողենի, պետությունը ինքնուրույն իշխանությունը իրականացնում է հասարակության արդարացի կառավարման համար: Բողենի մեկնաբանությամբ պետական իշխանության գերիշխանությունը նշանակում էր քառորդազույն, չսահմանափակված, անբաժանելի իշխանություն, որը կախում չունի ոչ պապից, ոչ միապետից և ոչ էլ ներդասակարգային պայքարից: Այսինքն, ըստ նրա, քաղաքական իշխանությունը պետք է բացարձակապես անկախ լինի այլ ցանկացած կառույցից:

Բողենի հայացքների վրա մեծ ազդեցություն էին թողել Ճրանահայում տեղի ունեցող քաղաքական գզվուտոցները, որոնք մասնատում և թուլացնում էին երկիրը: Դրա համար էլ նա կողմնակից էր բացարձակ միապետության, որը համարում էր ազգային իզոլ պետության երաշխիք:

Բողենը ինքնիշխանությունը համարում էր հանրապետության բացարձակ և հավերժական իշխանություն, հանրապետությունը քննորոշելով որպես պետության ձև: Խոսելով պետական ինքնիշխանության մասին, Բողենը նշում է պետության իրավունքների և իրավասությունների հիմնական տարրերը: Դրանք են՝ օրենսդրական իրավունք, պատերազմ հայտարարելու և խաղաղություն կնքելու իրավունք, բարձր պաշտոնյաների նշանակման իրավունք, բարձրագույն դատական ատյանի իրավունք, ներում շնորհելու իրավունք, դրամ տպելու իրավունք, հարկեր գանձելու իրավունք և այլն: Բողենը գտնում էր, որ միապետը իրավունքի և օրենքի աղբյուրն է, որ միապետի իշխանությունը տարածվում է ամբողջ հասարակության վրա, այն բացարձակ և անընդհատ է, և տևում է նրա ողջ կյանքի ընթացքում: Միապետի բացարձակ գերիշխանությունը Բողենը հիմնավորում էր մարդու ընտելությամբ, որը իբր թե պահանջում է հասարակության մեջ հենց միապետական կառավարման ձև:

4. Զարգացական միտքը XVII-XIX դարերում

17-18 դարերը, որ պատմության մեջ անվանում են նոր և նորագույն ժամանակաշրջան, հայտնի են եվրոպական երկրներում խոշորամասշտաբ քաղաքական տեղաշարժերով ու զարգացումներով: 17-18դդ. Արևմտյան Եվրոպայի շատ պետություններում բռնկվեցին բուրժուական հեղափոխություններ ֆեոդալական կարգերը տապալելու և նոր կարգեր, կամ ինչպես ընդունված է ասել, նոր քաղաքակրթություն հաստատելու համար: Անտիճանաբար հաստատվում էր կապիտալիստական հասարակական հարաբերությունների համակարգը, որի հիմնական արժեքն էր ազատ ստեղծագործող անհատը: Սակայն, սկզբնական շրջանում մարդու ազատությունը ընկալվում էր ոչ թե որպես արժեք, այլ որպես տնտեսական զարգացման միջոց

Միայն կապիտալիզմի հետագա զարգացման ընթացքում հասարակության զարգացման շնորհիվ մարդը սկսում է դիտվել որպես արժեք, այլ ոչ թե միջոց: Նոր և նորագույն ժամանակաշրջանում տարբեր երկրների շատ խոշորագույն մտածողներ վերծնում էին ոչ միայն իմաստավորել քաղաքական կյանքում առաջացած բազում պրոբլեմները, այլև ցույց տալու հասարակության հետագա առաջընթացի առավել ընդունելի ուղիները, մշակելով պետության, իշխանության, հասարակության և մարդուն ամենվրդ տեսական և մեթոդոլոգիական կոնցեպցիաներ: Այդպիսի մտածողներից էին Գլանդացի Գուգո Գրոցին, անգլիացիներ Թոմաս Գոբսը և Ջոն Լոկը, հոլանդացի Ապիտզան /1632-1677/, ֆրանսիացիներ Շարլ Մոնտեսքյուն, Մ. Վոլտերը /1694-1778/, Ժ.Մ.Ռուսոն և շատ ուրիշներ: Ուսումնասիրելով պետության, նրա ձևերի և ֆունկցիաների, իշխանության, նրա ձևավորման սկզբունքներին և իրականացման միջոցներին ամենվրդ հարցեր, նրանք իրենց աշխատություններում քննարկման առարկա էին դարձրել բնական իրավունքի և հասարակական դաշինքի տեսությունները, դրանք դիտարկելով որպես պետության առաջացման և գոյության հիմնական սկզբունքներ: Այդպիսի տեսության հիմնադիրն էր հոլանդացի Գուգո Գրոցին /1583-1645/: Իր «Ազատ ծով» և «Կատերազմի և խաղաղության իրավունքի մասին» աշխատություններում նա հիմնավորում է մի շարք քաղաքական ինստիտուտների, մասնավորապես քաղաքացիական իշխանության և պետության նշանակությունը, ցույց տալով նաև միջազգային իրավունքի սկզբունքներն ու կոմերցը, որի համար էլ նրան անվանում են նշված տեսությունների հիմնադիր: Ըստ Գրոցեյի, մարդկանց բնական իրավունքը ծագել է իրար հետ հաղորդակցվելու պահանջմունքից և համապատասխանում է մարդու բնական էությանը: Այդ իրավունքը այնքան խորն է նստած մարդկանց մեջ, որ ոչ ոք, նույնիսկ աստված, փոխել չի կարող: Մարդու բնական իրավունքի պաշտպանությունը ձեռնտու է բոլոր մարդկանց, որովհետև դա նրանց արժանապատիվ գոյության, ուրիշներից պաշտպանվելու հիմնական միջոցն է: Գետնաբար, բնական իրավունքը արդարության արտահայտումն է, եզրակացնում է Գրոցին:

Ելնելով դրանից, նա կատարում է մի շարք կոնկրետ եզրակացություններ, առանձնացնելով մարդկանց միջև ունեցվածքի, քաղաքական, իրավական, քառոյական և մի շարք այլ հարաբերությունների կարգավորման երեք հիմնական իրավունքի ձևեր. մասնակի իրավունքներ, պետական իրավունքներ և միջազգային իրավունքներ: Իրավունքի այս ձևերը բնական իրավունքից տարբերվում են նրանով, որ դրանք մարդիկ են գիտակցորեն մշակում իրենց կամքը արտահայտելու համար: Դրանք ոչ թե ի սկզբանե դրված են մարդու մեջ, այլ ստեղծված են մարդկանց կամքով իրենց իսկ շահերը պաշտպանելու համար: Խոսքը ամենից առաջ վերաբերում էր քաղաքացիական իշխանության կամքին, ինչը Գրոցիի մոտ նշանակում է պետական իշխանություն, որն արտահայտում է ամբողջ հասարակության կամ նրա իշող մեծամասնության շահերը:

Գրոցին մի շարք դատողություններ է անում նաև պետության ծագման պայմանագրային բնույթի մասին, որոնք հետագայում զարգացրեցին Թոմաս Հոբսը, Ջոն Լոկը և այլք: Նա պետությունը դիտում էր որպես ազատ մարդկանց իրար հետ պայմանավորվածության հետևանքով առաջացած միավորում: Ըստ նրա, այդ դաշինքից էլ թխում են պետական իրավունքի բոլոր սկզբունքներն ու նորմերը, որոնցով կարգավորվում է պետության գործունեությունը՝ իր ֆունկցիաները իրագործելիս: Գրոցին պետության հիմնական ֆունկցիաներից էր համարում օրենքների իրապարակումը, պատերազմի և խաղաղության մասին հարցերը, արդարադատության իրականացումը, հարկահավաքումը, այլ պետությունների հետ պայմանագրեր կնքելը կամ չեղյալ հայտարարելը և այլն: Նա նշում էր, որ պետությունը գերազույն իշխանության կրողն է:

Գրոցին համոզված էր, որ պետական էր և առաջարկում էր կառավարիչների և միապետների իշխանության սահմանափակումներ: Պնդում էր, որ նրանք էլ պետք է օրենքները պահպանեն ճիշտ այնպես, ինչպես հասարակ քաղաքացիները, նույնիսկ օրինակ ծառայել նրանց: Դրանում է բարձրագույն արդարադատության եությունը, ինչի հիման վրա էլ պետք է կառուցվեն պետության մեջ բոլոր հարաբերությունները: Գրոցիի մոտ իրավունքն այն է, ինչը արդարացի է: Ըստ նրա, ոչ բոլոր պատերազմներն են անարդարացի և քննական իրավունքի խախտում: Օրինակ՝ ինքնապաշտպանության կամ բռնությունից ազատվելու համար մղվող պայքարը լրիվ արդարացի պատերազմ է և համապատասխանում է քննական իրավունքի եությանը:

Քննական իրավունքի և հասարակական դաշինքի տեսությունները հետագայում իրենց զարգացումը գտան անգլիացի խոշորագույն փիլիսոփա Թոմաս Հոբսը (1588-1679)՝ աշխատություններում: «Քաղաքացու մասին ուսմունքի փիլիսոփայական հիմքը», «Լեվիաֆան», «Մարդու մասին» աշխատություններում Հոբսը մանրամասն շարադրում է հասարակության քննական վիճակի մասին իր պատկերացումները, նշում է նրանից թխող մարդու քննական եությունը, քննական իրավունքի և որպես մարդկանց միջև կնքված հասարակական համաձայնության հետևանք, պետության առաջացման մասին: Հոբսը տարանջատում է մարդկային հասարակության երկու վիճակ՝ քննական և քաղաքացիական: Եթե մարդկային հարաբերություններից հանենք այն ամենը, ինչը մտցրել է նրանց մեջ պետությունը, կտանանք հասարակության քննական վիճակ, նշում էր Հոբսը: Ըստ նրա, քննական վիճակում մարդիկ գործում են՝ ղեկավարվելով միայն ինքնապաշտպանության քննական օրենքով: Այդ վիճակում յուրաքանչյուրն իրավունք ունի անելու ամեն ինչ, զավթելու, վեցցնելու և այլն: Այդպիսի իրավունքը համընկնում է ուժի հետ, որի հետևանքով առաջանում է մի քննական վիճակ, որտեղ բոլորը պատերազմում են բոլորի դեմ: Բայց պատերազմը հակասում է ինքնապահպանման ձգտմանը: Ուստի անհրաժեշտ է փնտրել հաշտություն, որի համար ամեն մեկը պետք է հրաժարվի ամեն ինչի նկատմամբ ունեցած քննական իրավունքից և դրանով իսկ իր իրավունքի մի մասը փոխանցի ուրիշներին:

Այդ փոխանցումը իրագործվում է դաշինքի միջոցով, որի կնքումն արդեն նշանակում է հասարակության ոչ թե քննական, այլ քաղաքացիական վիճակի առաջացում: Այդպես է, ըստ Հոբսի, առաջանում պետությունը՝ Պետական իշխանության առավել կատարյալ ձևը, ըստ Հոբսի, կատարյալ միապետությունն է, որի իշխանությունն անսահմանափակ է: Մակայն Հոբսը ստիպված է ընդունելու, որ որոշ դեպքերում, երբ հպատակը դադարում է նախկին իշխանության հովանավորությունից օգտվել, նա ազատ է իր քննական իրավունքը պաշտպանելու համար, նույնիսկ ապստամբել և փոխել իշխանությունը: Ըստ Հոբսի, պետությունը իրենից ներկայացնում է մեկ դեմքի մեջ բոլորի միավորում: Այդ դեմքը կարող է լինել միապետը, արիստոկրատական կամ դեմոկրատական հանրապետության ներկայացուցչական մարմինը: Հոբսը պետության երեք ձևեր էր ընդունում. միապետություն, որի գերագույն իշխանությունը պատկանում է մեկ մարդու, արիստոկրատական, որտեղ բարձրագույն իշխանությունը պատկանում է մարդկանց հայտնի քանակի ժողովին, և դեմոկրատական, որտեղ բարձրագույն իշխանությունը պատկանում է բացառապես բոլոր քաղաքացիների ժողովին:

Պետական իշխանությանը պետք է ենթարկվեն բացառապես և անվերապահորեն բոլորը՝ իր հերթին, իշխանությունը իր ուժը օգտագործելով, պետք է գոյության նորմալ պայմաններ ստեղծի իր երկրի քաղաքացիների համար, ապահովի նրանց անվտանգությունը: Հոբսը մանրամասնորեն քննադատում է պետության գործառնության տարբեր կողմերը, նրա առաջացումը հասարակական դաշինքի հիման վրա, նրանում քաղաքացիների ազատության և պետության կամքին նրանց կամավոր ենթարկվելու համընկնումը, պետության օրենսդրական գործունեությունը, քաղաքացիական օրենքների և շնական իրավունքների փոխհարաբերությունը և այլն: Հոբսը պետության կործանման հիմնական պատճառը համարում էր ապստամբությունը:

Հոբսի հայացքները իրենց զարգացումը գտան նրա հայրենակից Ջոն Լոկը (1632-1704)՝ աշխատություններում: Լոկին համարում են բուրժուական լրերբալիզմի գաղափարների հիմնադիր, որը անհատի ազատությունը դիտում էր որպես քաղաքացիական հասարակության և պետության գործունեության զլխավոր սկզբունք:

Լոկը XVII դարում մեզոկայում հաղթանակած բուրժուական հեղափոխության կողմնակից էր և ընդունում էր դրա հետևանքով երկրում ստեղծված բուրժուական սահմանադրական միապետական համակարգը և իր քաղաքական հայացքներում հաճախ պետության այդպիսի ձևը նշում է որպես ընդունելի օրինակ: Լոկը զարգացրեց իր նախորդների կողմից առաջ քաշված պետության, պետական իշխանության և իրավունքի մասին ուսմունքը: Խոստելով քննական իրավունքի մասին, Լոկը գտնում էր, որ բացի ազատությունից, քննական վիճակում մարդուն պատկանում է նաև աշխատանքի միջոցով ձեռք բերված սեփականությունը:

Պետությունը ծագում է այնտեղ, նշում է նա, որտեղ ազատ մարդիկ հրաժարվում են ինքնապաշտպանության քննական իրավունքից, բռնացողներին

պատժելու իրավունքից և այդ իրավունքը տրամադրում են ամբողջության մեջ վերջում ուսասրակությանը: Ըստ Լոկի, բնական կոնսիլից քաղաքացիականին անցնելու պատճառը բնական վիճակի մեջ իրավունքների անուսակիությունն է: Լոկը իր քաղաքական հայացքները շարադրել է հիմնականում «Պետական կառավարման մասին» աշխատության մեջ: Ի տարբերություն Հոբսի, Լոկը գտնում էր, որ մարդիկ իրենց բնական վիճակում լինելով հավասար, իրար չեն օգտագործել իրենց ևեղ շահերի համար: Ուստի բնական հավասարության և ազատության հետևանքը չի կարող «բոլորի պատերազմը բոլորի դեմ լինել», ինչպես Հոբսն էր ընդունում, այլ համագործակցությունը, որի հիմքում ընկած է յուրաքանչյուր մարդու կողմից մյուսների բնական իրավունքի ընդունումը: Այդպիսի պարագայում որևէ մեկը մյուսին նկատմամբ որևէ ազատություն ունենալ չի կարող: Բնական վիճակում ցանկացած իշխանություն և ցանկացած իրավունք փոխադարձ է, ոչ ոք ավելի իրավունք չունի ուրիշներից: Եվ, ցանկ որ բոլորը հավասար և ազատ են, ապա նրանքից ոչ մեկը չի կարող մյուսներին վնաս պատճառել:

Լոկը բնական իրավունք էր համարում կյանքի, ազատության և սեփականության իրավունքը, որոնք մարդուց անտարելի են:

Պետության կազմավորման հիմնական նպատակը, ըստ Լոկի, ազատության ու սեփականության պահպանումն է: Այդ պատճառով պետությունը չի կարող լինել կամայական: Նրա խնդիրն է հրապարակել օրենքներ, պատժել իրավունքը խախտողներին և քաղաքացիներին պաշտպանել արտաքին ոտնձգումներից: Լոկը առաջ է քաշում իշխանությունների բաժանման գաղափարը, նշելով հիմնական սկզբունքները: Լա գտնում էր, որ պետական իշխանությունը պետք է բաժանվի օրենսդիր իշխանության, որը պետք է օրենքներ ստեղծի, գործադիր իշխանության, որը պետք է մշտապես գործող մարմինների միջոցով օրենքները կյանքի կոչի, և միաբնական /ֆեդերատիվ/ իշխանության, որը պետք է զբաղվի երկրի արտաքին հարաբերություններով և պետության պաշտպանությամբ: Ի դեպ, Լոկը նշում է, որ այդ իշխանությունները պետք է իրարից անկախ լինեն: Լոկը պետության առաջացումը կապում էր այն բանի հետ, որ մարդիկ իրենց բնական իրավունքները պաշտպանելու համար միավորվում են՝ ստեղծելով քաղաքական կամ քաղաքացիական հասարակություն, որն էլ հենց պետությունն է: Լոկը պնդում էր, որ պետությունը ստեղծվել է հենց նրա համար, որ պաշտպանի մարդու բնական իրավունքը: Ուստի բացարձակ իշխանություն մտղղվանց վրա չպետք է լինի, որովհետև այդպիսի պետության մեջ մարդու բնական իրավունքները պաշտպանվել չեն կարող:

Լոկը բազմիցս նշել է հասարակության քաղաքական կյանքում և պետության մեջ օրենքի գերակայության գաղափարը, որը հետագայում ձևավորվեց որպես իրավական պետության գաղափար: Լոկը քաղաքական իշխանության և նրա բարձրագույն իրավասության արբյուրը համարում էր ազգը, ժողովուրդը, որն իրավունք ունի փոխելու կառավարությունը, եթե այն չի ապահովում օրենքների իրականացումը և քաղաքացիների սահմանադրա-

կան իրավունքը: Հասարակության մեջ բոլորը պետք է ենթարկվեն օրենքի, քանզի այնտեղ, որտեղ չկա օրենք, չի կարող և լինել ազատություն: Լոկը եզրակացնում է, որ պետությունը ենթարկվում է հասարակությանը, որը իր հերթին ենթարկվում է անհատին, հիմք դնելով լիբերալիզմի գաղափարախոսությանը: Զանի որ պետությունն ու հասարակությունը տարբեր քաներ են, ապա պետական իշխանության անկումը չի նշանակում հասարակության վերջ: Հասարակությունը կարող է ստեղծել նոր պետական իշխանություն, որը կհամապատասխանի նոր զարգացման պահանջներին:

Քաղաքական մտքի զարգացման մեջ իր առանձնահատուկ տեղն ունի XV/III դարի Ֆրանսիայի խոշորագույն մտածող Շարլ Մոնտեսքյուն (1689-1755), որի «Օրենքների ոգին» աշխատությունը նրան դրեց ոչ միայն Ֆրանսիայի, այլև ամբողջ աշխարհի քաղաքական իրավաբանական խոշորագույն մտածողների շարքում: Այդ աշխատության մեջ նա ստեղծում է իրավական պետության ծագման իրական պատկերը, բացահայտում է պետական կառավարման ձևերի հիմնական սկզբունքները:

Ազատությունն ու հավասարությունը Մոնտեսքյուն համարում էր որպես մարդկային էության արմատական հատկանիշ և իրավունքի արբյուր: Լա գտնում էր, որ հասարակական շահերը կարող են բավարարել միայն մասնավոր շահերի ճիշտ ըմբռնման և պաշտպանության ճանապարհով: Լա ազատությունը հասկանում էր որպես անկախություն և գտնում էր, որ հասարակական կյանքում բախվում են տարբեր ազատություններ, ուստի ազատությունը այն ամենը անելու իրավունքն է, ինչը արգելված չէ օրենքով: Նրա քաղաքական հայացքներում կարևոր տեղ է զբաղում իշխանությունների բաժանման տեսությունը: «Երկուծեղով բրիտանական քաղաքական համակարգը, որտեղ առաջին անգամ գործնականորեն կիրառվել էր իշխանության բաժանումը, նա տեսականորեն իմաստավորում է տեղի ունեցածը: Նրա կարծիքով, քաղաքական իշխանությունը միշտ ի չարս է օգտագործվում, ինչը թիում է մարդու բնույթից: Որպեսզի այդ լարաշահումը նվազեցվի և, եթե հնարավոր է, նաև բացառվի, անհրաժեշտ է ապահովել իշխանությունների բաժանում օրենսդրական, գործադիր և դատական, որոնք իրարից անկախ իշխանության ձևեր են և պետք է փոխադարձաբար զսպեն իրար: Ըստ Մոնտեսքյուի, այդ սկզբունքը պետք է արձանագրվի պետության սահմանադրության մեջ և իրագործվի հասարակության կյանքի կառավարման մեջ:

Մոնտեսքյուն բարձր էր գնահատում դեմոկրատական սկզբունքները, որտեղ իշխանությունը պատկանում է ամբողջ ժողովրդին: Լա գտնում էր, որ ժողովրդական պետության հիմնական շարժիչ ուժը հանրապետության նկատմամբ յուրաքանչյուր անձի սերն ու նվիրվածությունն է: Միայն այնտեղ, գրում է Մոնտեսքյուն, որտեղ քաղաքացիներն ազատ ու անկախ են, որտեղ իշխում են հանրապետական սկզբունքներ, հասարակությունը կարող է զարգանալ, խակտանալ դեպքում նա դատապարտված է կործանման: Օրենքի գերակայության գաղափարը Մոնտեսքյուն չափազանց հստակ է ձևակեր-

պում, որը և ընկած է իրավաբան պետության ուսմունքի հիմքում, եթե օրենքները ժողովրդական պետության մեջ դադարում են գործել, ապա այդ չարիքի պատճառը կարող է լինել միայն հենց հանրապետության փլուզումը: Նա գտնում էր, որ պետությունը պետք է դաստիարակի իր քաղաքացիներին: Խատկապես երիտասարդ սերնդին, օրենքները հասկանալու և դրանք կյանքում կիրառելու համար:

Լինելով ամեն տեսակի բռնությունների հակառակորդ, նա հատկապես խիստ քննադատության է ենթարկում մտածողության հանդեպ բռնությունը՝ այն դիտելով որպես ազատության սկառավանջ հալածանք: Ազատություն չի կարող լինել, եշում է Մոնտեսքյուն, եթե օրենսդրական և գործադիր իշխանությունը միավորված է մեկ անձի կամ հիմնարկի մեջ: Ազատություն չի կարող լինել նաև, եթե դատական իշխանությունը չի բաժանված օրենսդիր և գործադիր իշխանություններից: Շատ նրա, եթե դատական իշխանությունը միավորված է օրենսդիր իշխանության հետ, ապա քաղաքացիների կյանքն ու ազատությունը ընկնում են կամայական իշխանության տակ, որովհետև դատավորը այդ պարագայում հանդես է գալու որպես օրենսդիր: Իսկ եթե դատական իշխանությունը միավորված է գործադիր իշխանության հետ, ապա դատավորը դառնում է շահագործող:

Նրա ուսմունքը մեծ ազդեցություն ունեցավ ոչ միայն իր ժամանակի շատ մտածողների վրա, այլև կենսունակ ու արժեքավոր է նաև մեր օրերում:

18-րդ դարի քաղաքական մտքի խոշորագույն ներկայացուցիչ է Ֆրանսիական լուսավորիչ ժան ժակ Ռուսոն (1712-1778): Նա յուրովի մեկնաբանեց բնական իրավունքի և հասարակական դաշինքի տեսությունը, թուրովի հիմնավորեց մաթիլեսնց միջև սոցիալական անհավասարության պատճառները, խիստ քննադատության ենթարկելով գոյություն ունեցող կարգերը: Նրա քաղաքական հայացքները շարադրված են հիմնականում «Բնական վիճակի մասին», «Անհավասարության պատճառների մասին», «Հասարակական դաշինք» աշխատություններում: Ռուսոն գտնում էր, որ մարդը իր բնույթով բնավ էլ չար չի, ինչպես Հոբսն էր նշում, որ մարդկային հոգու խորքում գրված է կարեկցանքը, որը սեփաժողովուն է և մարդկայնություն է ծնում:

Շատ Ռուսոյի, սոցիալական անհավասարությունը ծագել է սեփականության առաջացման հետ միասին: Ժամանակակից հասարակության մեջ քաղաքական հավասարությունների հիմնադիրը նա է եղել, ով առաջինը ցանկապատելով մի կտոր հող, ասել է: «Նա իմն է», իսկ մյուսները միամտորեն հավատացել են դրան: Որքան ոլորտայնություններից, պատերազմներից ու ավերածություններից գերծ կմեար մարդկությունը, եթե այդ միամիտների մեջ լինեք զոռե մեկը, որ գոչեք, թե նա տուտ է ասում, որ երկրային պտուղները բոլորինն են, իսկ հողը՝ ոչ մեկինը: Դրա արդյունքը եղավ այն, նշում է Ռուսոն. որ տգեղը սկսեց իշխել խելոցի վրա, մի խումբ սկսեց լողալ հարստության մեջ, իսկ հասարակության ճնշող մեծամասնությունը սկսեց տառապել չարքաշության:

Ռուսոյի ուսմունքը հասարակության դաշինքի մասին մի քայլ առաջընթաց էր քաղաքական տեսության մեջ: Նա հերքում էր հասարակական դաշինքի այն ըմբռնումը, համաձայն որի ժողովուրդը իր իրավունքները կամովի է տալիս կառավարությանը, որը հետագայում ժողովրդի անունից իրականացնում է իշխանությունը ժողովրդի վրա, պետության քոլոր քաղաքացիների վրա:

Ռուսոն սկիզբ դրեց սոցիալական քաղաքական տեսության, որի ելակետը համարվում է ոչ թե առանձին մարդը, այլ խումբը, խավը, դասակարգը, ազգը և այլն. և անհատը դիտվում էր որպես հասարակության արդյունք: Հասարակական դաշինքի հիմքի վրա միավորվելով, մարդիկ հանդես են գալիս որպես քաղաքական մեկ անբողջություն, ինչը կրակն չի գրկում ազատությունից և չի խանգարում իրենց անհատական շահերը պաշտպանել, եթե չեն ոտնահարում ուրիշների իրավունքները: Բայց այդ պահից սկսած, առաջանում է ընդհանուր շահեր, ինչը միևնույն ժամանակ նշանակում է յուրաքանչյուրի շահերի պաշտպանություն: Այդ ընդհանուր շահերն էլ հենց, ըստ Ռուսոյի, պետությունն է, որը իրենից ամբողջ ժողովուրդն է ներկայացնում, ինչի շնորհիվ էլ օժտված է լրիվ իշխանությամբ և, դրանով հանդերձ, հանդես է գալիս որպես գերագույն իրավասու: Այս դատություններից Ռուսոն հանգում է ժողովրդական սուվերենության գաղափարին, որը ժողովրդավարության ամբողջությունը արտահայտող հիմնավորումն էր:

Ռուսոն մանրամասն վերլուծում է պետության գործունեության մեխանիզմները և քաղաքացիների փոխհարաբեռությունները՝ հաստատված հասարակական դաշինքով: Նա քննարկման առարկա է դարձնում հողի տիրապետության, պետության օրենքների և օրենսդրական գործունեության, կառավարության, օրենսդրական և գործադիր իշխանությունների փոխհարաբեռության, պետական կառավարման ձևերի և այլ շատ կարևոր հարցեր: Նա զգուշացնում էր իշխանության զավթման հնարավորության մասին:

Ռուսոն այդ հարցերը դիտարկում էր հասարակության գործերի պետական կառավարման կատարելագործման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ընդարձակման տեսանկյունից: Խոսքը վերաբերում է գոյություն ունեցող տնտեսական անհավասարությունը քաղաքական հավասարությամբ փոխհատուցելուն և ժողովրդական իշխանության առջև քոլորի հավասարության մասին: Ռուսոն այդպիսի հավասարությունը մեկնաբանում էր որպես հասարակական դաշինքի հիմքի վրա մարդկանց կյանքի կազմակերպման սկզբունք:

Ռուսոյի փիլիսոփայական և քաղաքական հայացքները մեծ ազդեցություն ունեցան այդ ժամանակի քաղաքական մտքի վրա, տարածվելով ամբողջ աշխարհում: Հետագայում մարդու ազատությունների և իրավունքների, սոցիալական հավասարության պրոբլեմների մեկնաբանությունները դարձան մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի հիմնադրույթներ:

18-րդ դարի քաղաքական միտքը զարգանում էր նաև ԱՄՆ-ում, որը գտնվում էր իր ձևավորման շրջանում: Նրա հիմնադիրներին շատերը քաղաքական մտքի գիտնական էին, որոնց մեջ աչքի էին ընկնում հատկապես Թ.Ջեֆերսոնը, Թ.Փեյնը և Ա.Ջամեյտոնը:

18-րդ դարի քաղաքական մտքի զարգացման մեջ իրենց մեծ լուծման ունեն նաև Գերմանիայի խոշորագույն փիլիսոփաներ Էմանուել Կանտը (1727-1804), որը զարգացրեց լիբերալիզմի կոնցեպցիան և Ջեզեյը (1770-1831), որը զարգացրեց պետության և իրավունքի տեսությունը:

Քաղաքական միտքը 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբներին

Ինչպես տեսանք վերը, 18-րդ դարում քաղաքական միտքը հսկայական թոփոք կատարեց, հիմք դնելով մի շարք կարևոր քաղաքական տեսությունների: Դրանցից են.

1) ժողովրդի գերագույն իշխանության /ժողովրդական սուվերենության/ տեսությունը, որի հիմքում ընկած էր հասարակական դաշինքի առաջացման տեսությունը, համաձայն որի պետական իշխանության աղբյուրը և կրողը ժողովուրդն է:

2) Իրավական պետության տեսությունը, որի հիմքում ընկած են՝

- o անհատի քնական իրավունքի մասին ուսմունքը,
- o անհատի իրավունքի երաշխիքի անհրաժեշտությունը,
- o պետության և նրա մարմինների կապը պետությունից վեր կանգնած օրենքների և իրավունքների հետ:

3) Իշխանությունների բաժանման սկզբունքը՝

- o Լայպատեսում էր երեք իշխանություն-օրենսդիր, գործադիր և դատական, որոնք պետք է իրենց իշխանությունը իրականացնեն պետմական տարբեր առանձնահատուկ մարմինների միջոցով,
- o պետական գործունեությունը բոլոր բնագավառներում իրագործվում է միայն օրենքի շրջանակներում,
- o օրենքները ընդունվում են միայն ներկայացուցչական մարմնի կողմից, գործադիր իշխանությունը չի կարող օրենքներ փոխել, դատականն՝ անկախ է:

Անչա հենց այս քաղաքական գաղափարներն էլ իրենց հետագա հիմնավորումներն ու զարգացումը գտան 18-րդ դարից հետո ընկած ժամանակաշրջանի բազում խոշորագույն մտածողների աշխատություններում: Նրանցից յուրաքանչյուրը իր ժամանակաշրջանի կողմից առաջ քաշած Նոր խնդիրների և հարաբերությունների ուսումնասիրությամբ փորձում էր հասարակության քաղաքական կյանքի և պետության գործունեության կատարելագործման իր մոտեցումներն ու հիմնավորումները տալ:

Կանգ առնենք նրանցից մի ցանկիս հայացքների քննարկման վրա: Այդպիսի մտածողներից էր անգլիացի փիլիսոփա, իրավաբան և տնտեսագետ Երեմյա Բենտամը (1748-1832): Նա սկիզբ դրեց քաղաքական ուտիլիտարիզ-

մի տեսությանը: Այդ տեսության հիմքում ընկած էր «օգուտ» հասկացությունը, որի տակ Բենտամը հասկանում էր այն կամ այն առարկայի այնպիսի հատկանիշներ, որոնք մարդուն բերում են օգուտ, շահ, բավարարվածություն, քարից ու երջանկություն կամ լրիվ հակառակը: Դրանց մեջ Բենտամը առանձնացնում էր բավականությունն ու տանջանքը: Բնությունը մարդուն ստիպել է ենթարկվել բավականության և տառապանքի իշխանությանը: Բենտամը գտնում էր, որ մարդու համար միակգամայն քնական է խուսափել տանջանքներից և ձգտել բավականություն ստանալուն, այսինքն գործել այնպես, որ օգուտ լինի իրեն: Որից եզրակացնում էր, որ մարդկանց միջև հարաբերությունների ելակետը օգուտի սկզբունքն է, մնացածները, ըստ Նրա, կեղծ են: Հենվելով օգուտի սկզբունքի վրա, Բենտամը փորձում է ստեղծել իրավունքների համալսարգ, որը համապատասխան էր իրենի իրական վիճակին: Խոսելով մարդկանց իրական շահերի մասին, Բենտամը դրանց հիմքում միշտ տեսնում էր օգուտը՝ իր տարբեր դրսևորումներով:

Բենտամի մոտ օգուտը բոլոր երևույթների գնահատման չափանիշն էր: Օգուտը այն ամենն է, ինչը քնորոշ է բոլոր այն արարքներին, որոնք բավականություն են բերում մարդուն: Հասարակության մեջ մարդկանց շահերի ամբողջությունը գործող իրավունքի հիմքն է, նշում է Բենտամը: Նա դրանով հերքում էր քնական իրավունքի տեսությունը, գործող իրավունքը և օրենսդրությունը մեկնաբանելով որպես մարդկանց շահերից ածանցվող գործոններ:

Բենտամը վերլուծում է անհատի շահերի և սոցիալական խմբերի շահերի համընկնումը և դրանց համընկնումը ամբողջ հասարակության շահերի հետ: Բենտամը մասնատիրական հարաբերությունների կոչմանակից էր, և գտնում էր, որ հասարակության ունեցվածքի հավասարություն լինել չի կարող, հավասարությունը կարող է լինել միայն հարաբերականորեն:

Բենտամը քննարկման առարկա է դարձնում հասարակության մեջ անհատի անվտանգության խաթըը, այն համարելով ամեն տեսակի քաղաքակրթության և համակեցության հիմք: Նա նշում էր, որ մարդու անվտանգությունը պետք է պաշտպանվի պետական օրենքների օգտագործմամբ, ինչպես նա էր ասում, պետության ակտիվ գործունեությամբ: Բենտամը բազմակողմանի ուսումնասիրության է ենթարկում անհատի անվտանգության պաշտպանության գործում սահմանադրական իրավունքի դերը:

Մեծ է Բենտամի ճառայությունը օրենսդրական իշխանության գործունեության մի շարք սկզբունքների մշակման գործում: «Օրենսդրական ժողովի տակտիկան» աշխատությունը ամբողջապես նվիրված է այդ պրոբլեմների քննարկմանը:

Բենտամը գտնում էր, որ պատվամենտը, որպես ժողովրդական իշխանության մարմին, իր կառուցվածքով, պատգամավորների կազմով և քննարկումների ու օրենսդրական ակտերի ընդունմամբ պետք է հնարավորիս պարզ լինի: Իսկ որ ամենագլխավորն է, պատվամենտը պետք է ժողովրդի հետ առաջելագույն չափով եզրեր ունենա և արտահայտի նրա շահերը: Բեն-

տաճը կշում էր պառլամենտի վրա ժողովրդի հեղափոխական իրականացման անհրաժեշտության մասին, պառլամենտի աշխատանքների լայն հրապարակայնության մասին: Հրապարակայնությունը ծրագրավորում է օրենսդրական ձեռնարկումների նկատմամբ ժողովրդի վերահսկողուն ու համաձայնությունը, հետքավորություն է տալու քննարկներին գիտակցաբար զորեղ, ժողովրդի քույլ է տալիս օգտվելու ամբողջ հասարակության գիտելիքներով: Բնույթով լին ընդունում պառլամենտի քառակույց տարբեր կապակիների, ցունելով, որ դա թափ վնասից ոչինչ չի տալիս: Եւ հիմնավորում էր պատգամավորների աշխատանքի անսամալտությունը զործարար իշխանության կազմում, օրոմնասից էր արտերական ընտրություններին, ինչը որով կարող թարմ ուժեր ընդգրկել: Կրողամենտի աշխատանքներում, որպեսզի պատգամավորները չվերածն լինովսիկների և քյուրուստաների: Եւ հանդես էր գալիս համընդհանուր ընտրության հրավերից օգտին: Բնույթով մակրամենտի քննարկման առարկա է դարձնում պառլամենտի նախագահի գործունեության սկզբունքները և պառլամենտի գործունեության մի շարք անանձնատարություններ: Ինչպես առող է ընթանան քննարկումները, օրենսդրական նախագծերի որոշ ընթերցմամբ քննարկելու մասին, լրացումների մասին, քվեարկության կարգի մասին, պառլամենտի հանձնարարների մասին, քչորումի մասին և այլն: Եւ քննարկական պառլամենտարիանի գաղգացման հաղիքանեղը էր, մեծ ներդրում ունենալով նաև որ ժամանակի թաղաքական և իրավական մտքի զարգացման մեջ:

Բնույթական տեսության մեջ իր մեծ ներդրումն ունի Ֆրանսիական գրականական Ալեքսանդր Թոկվիլը (1805-1859): Եւ հայտնի է որպես լիբերալ դեմոկրատիայի խոշորագույն տեսաբան, որը հայացքները շարադրված են իրականացում «Դեմոկրատիան Ամերիկայում» աշխատության մեջ:

Թոկվիլը առաջիններից մեկն էր, որ անխառնուսց անտող աշխարհում դեմոկրատիայի ռաստատման անխուսափելիությունը: Դեմոկրատիայի տակ Եւ հասկանում էր հասարակության ընթացքը լիբերալ համասարություն: որն իր մանապարհին վերացնում է տղոր տեսակի արտոնությունները և հաստատում է համարակալման կյանքի քոլոր ոլորտներում հանրաստեղական իշխանություն ժողովրդի գերիշխանության տակ:

Որպես լիբերալ, Եւ անենից շատ զանաաում էր ազատությունը, օրենքը, կանոնների նկատմամբ հարգանքը լայն ոչ դեմոկրատիան: Եւ դեմոկրատիան ընդունում էր կարծես աղիպված, տողը տալով իրականությանը: Եւր մասին ասում էին, որ Թոկվիլը դեմոկրատիայի հեր ամուսնացել է ոչ թե սիրելով, այլ անհրժանեշտությունից ելնելով, քան հաշվարկով:

Որոշ ժամանակ գրեկելով ԱՄՆ-ում և ուսումնասիրելով արևտղ տղի ունեղող քաղաքական զարգացումները, Թոկվիլը որացնուցում է բոսում Ամերիկայում դեմոկրատիայի ռաստատման ընթացքի և դրանորման ձաղրի մասին, քոլորին այլ անելով հոուսել կաթրկալի օրնակին: Եւ գում է որ այլևս խուսը չի կսող վերաաղել արիստոկրատիար և քուրոնագիայի

մղել աարալին: Իլմա տղեր է ունենում պայքար դեմոկրատիայի տարբեր դրակորումների մղել: (17.32)

Գովարանելով ամերիկյան դեմոկրատիան, Եւ արունձնատարուն դեմ ուսուկացնում ԱՄՆ-ի մարմանադրությանը, կշելով, որ Ամերիկայում իշխանության աղբյուրը մահաանադրություն է, քանզի Եւ օրենսդրություն կրա Թոկվիլը մեծ կշառում է ճիշտ այնպես, ինչպես հասարակ թաղաքացու կրա Թոկվիլը մեծ կշառում էր համարում ամերիկյան սահմանադրության մեջ արձանագրված պետության միութենական նախակների մարմինների մղել: Կրախարաքություններով կարգավորման միջոցները Այն նախում էր կրանում, որ տարբեր նախաներ, կազմելով միություն, պահաանում էին կընաուսապարումը: Եւտանգները ոչ միայն համաձայն են, որ միութենական նախակությունը որենց համար օրենքներ ընդունի, այլ և որ այդ օրենքները ինց միութենական նախակությունը իրականացնի: Եւ ուշադրություն է դարձնում այն ջանի կրա, որ միութենական կառավարությունը ոչ թե նախաներն է նարավարում, այլ կրանց թաղաքացիներին, որոնց ուղղված է կրա ընդունած օրենքները և նախակալին իշխանությունները այն փոխել չեն կարող: Թոկվիլը դա համարում էր միութենական իշխանության ում ու նախակների կրա նրա կյուն աղիցությունը: Թոկվիլի լիբերալ դեմոկրատական հայացքները մեծ աղիցություն ունեցան և աաշխատակեցին կրամոյան Եվրոպայի և ամերիկյան տեսարանների կողմից:

Կրախի մտածողներից էր Ջոն Ստյուարտ Միլը (1806-1873), որի քաղաքական հայացքները շարադրված են իմնականում «Ազատության մասին» աշխատության մեջ: Ինչպես ինքն է կշում, կրան հետաաքրում էր ազատության ոչ թե փիլիսոփայական իմաստը, այլ մարդու ազատության քաղաքացրական և հասարակաման իմաստը: Կրնելով լիբերալիզմի չեղմ պաշտպան, Միլը կշում էր, որ անհատի ազատությանը վտանգ է սպառնում ինչպես քանակալները կողմից, այնպես էլ հասարակական կյանքում իշխող հասարակական կարծիքից:

Ինչպես տեսնում ենք, Միլի մոտ անհատի ազատությունը, իրականը, շաից մեր է դառնում ռասարակամանից: Եւ գտնում էր, որ անհրաժեշտ է անման դնել, որից այն կողմ հասարակության տղոնիցը վկարողաա աղող անհատ աննախություն կրա: Բոլոր հասարակություններում էլ, գում է Եւ, կան մի շարք սեղբունքներ, որոնք կարող դեմ են հաղում վաղի կանոններով ձաակորման, օրենքների ընդունման և հասարակաման կարծիցի ձաակորման գործում: Աուաղն հեղին դա իշխող դասակարգի շաիեր են: Այլտղ: Կրաղ մեն պահպաղը իշխում է մյուններով կրա, հասարակության մեջ մեծամանությունը այն քնաան համարելով, ընդունում են իշխող դասակարգի շաիերով պայմանադրման սեղբունքներ:

Անչան իր նախավարման ձևից, աննացում է այն հասարակությունը, որ տղ անհատը լունի մտածելու և խոսող ազատություն, քաննացած ձևով աղբյուր ազատություն, նազմակերպություն տղոնելու ազատություն: Ազատ է այն հասարակությունը, որոնց կշում անհատաման ազատություն:

ներն ապահոված են. Լույսիսկ ամբողջ մարդկային ցեղը իրավունք չունի փակելու մենի բերանը, եթե նա այլ կերպ է մտածում, գրում է Միլլը, որը անշուշտ ծայրահեղ լիցենզավիզմի դրսևորումն էր. Լինելով լիցենզավիզմի քատագով, Միլլը կոչ էր անում պետությանը, որ նա չխառնվի քաղաքացիական հասարակության գործերին:

Միլլը վախով էր նալում հասարակության մեջ տեղի ունեցող զարգացումների վրա, որը ըստ նրա, հասարակության թուր անդամների համար միևնույն զարգացման ինքնավորությունը ապահովելով, տալու էր դեպի մարդու անհատականության վերացման: Այդ տեսանկյունից նրան դուր չէր գալիս համատարած կրթությունը, հաղորդակցման միջոցների կատարելագործումը, առևտրի և արդյունաբերության ծաղկումը, որոնք բոլորին կարող էին միևնույն զարգացման մակարդակի բերել և անհատականությունը վերացնել: Միլլը դեմ էր Լույսիսկ ազգային ընդհանուր մտածողության, հոգեբանության և գաղափարախոսության ձևավորմանը: Ազգայնացումը, գրում էր նա, քաղաքական ինքնասպանության ամենակարճ ճանապարհն է: Եվ եզրակացնում էր, որ պետության արժեքը անհատի արժեքով է որոշվում:

Մանր լինելով իր ժամանակաշրջանի սոցիալիստ-ուտոպիաների աշխատություններին, նա գրում է, կապիտալիզմի և կոմունիզմի վեճը կարող է լուծվել մեկ պատկերացմամբ, թե երկու սիստեմներից որում է անհաղթ ավելի ազատ: Նրա կարծիքով սոցիալիզմը կապարտվի, եթե երաժարվի ազատաձգանությունից: Այս բոլորից հետո Միլլը եզրակացնում է, ասելով որ չի կարելի ինչուս պետության հզորության սահմանափակել անհատի ազատությունը:

19-րդ դարի սկզբներից Եվրոպայում մեծ զարգացում էր ապրում սոցիալիստական գաղափարախոսությունը: Այդպիսի գաղափարների խոշորագույն ներկայացուցիչներից էին Շարլ ֆյուրեն, Ռոբերտ Օուենը, Ան Լիմոնը, Կ Մարքսը և այլն: Շարլը ֆյուրեն (1772-1837) մաթոկային պատմությունը դիտում էր որպես սոցիալիստական անկարգությունից և աններդաշնակությունից դեպի սոցիալիստական ներդաշնակություն, դեպի արդարացի հասարակական կարգի անցնելու ճանապարհ:

19-րդ դարի սկզբներին կապիտալիզմի հաստատումը և արդյունաբերության զարգացումը Եվրոպական երկրներում իր հետ բերել էր բազում նոր սոցիալական երևույթներ՝ ճգնաժամեր, հակասությունների սրում օանվորների և քուրճուազիայի միջև, որոնք լուծում էին պահանջում Եվ ֆյուրեն դրա լուծման ինքնավորությունը կապում էր սոցիալիզմի հաստատման հետ: Գնվելով իր ժամանակում հասարակության մեջ տեղի ունեցող զարգացումների և կոնկրետ իրադարձությունների վրա, և մանրամասն քննարկելով դրանք, ֆյուրեն փորձում էր հիմնավորել կապիտալիզմի բերած արիւմիդները: Նա կապիտալիզմը համարում էր հասարակական դժոխք, որովհետև ինչպես ինքն էր նշում, դա երջանկություն չթերեց Լույսիսկ մասնավոր սեփականատերերին: Այս կարգերը, գրում է նա, ավելի շատ ձեռնատու էր մակաբույծներին, որոնք ոչինչ չեն ստեղծում, քայք օգտվում են ստեղ-

ծածից առաջացած շահույթի առյուծի բաժնից: Կապիտալիզմը, ըստ ֆյուրենի, հասարակության երկու երրորդին դարձրել է մակարույծ: Նա մակարույծներին չորս խմբի է բաժանում, տնային Պլանայք, երեխաներ, ծառաներ, հասարակական /գինվորական, բյուրոկրատիա, առևտարականների մշտղ մեծամասնությունը, արտադրողների կեցը, երկրորդական /անգործներ, իրավաբաններ, տնտեսագետներ և այլն/, միջին դասի ներկայացուցիչներեց /բորսային իսողացողներ, սպեկուլյանտներ և այլն/, այսինքն՝ թուր նրանց, ովքեր արժեքներ չեն ստեղծում:

Ապագա հասարակությունում /սոցիալիզմի պայմաններում/, որը լինելու է արտադրության և պահանջարկի քնազավառում մարդկանց ազատ և կամավոր միավորում, անհատականությունն ու կոլեկտիվիզմը ներդաշնակություն կզուգակցվեն: Ֆյուրեն իր գաղափարները փորձում էր կյանքում մարմնավորել փորձի օրինակով և համոզելու միջոցով: Իր այդ հայացքները նա շարադրել է «Տրակտատ սոցիալիզմի մասին» և «Նոր տնտեսական և հասարակական աշխարհ» աշխատություններում:

Ռոբերտ Օուենը /1771-1858/ փորձեց սոցիալիզմի գաղափարները գործնականորեն իրագործել: Լինելով մանածագործական գործարանի սեփականատեր, նա արտադրությունը լավագույն կազմակերպելու միջոցով հասավ մեծ հաջողությունների, ապահովելով բանվորների համար աշխատանքային լավագույն պայմաններ և բարձր աշխատավարձ: Այս օրինակի վրա նա փորձեց ցույց տալ, որ Լույսիսկ կապիտալիզմի պայմաններում աշխատանքի լավ կազմակերպման դեպքում հնարավոր է հասարակության մեջ ապահովել սոցիալական արդարություն:

Նոր հասարակության նպատակը, ըստ Օուենի, ամենից առաջ զխավոր արժեքի՝ մարդու բարեկեցությունն է: Ռստի մարդուն դեպի լավը փոխելու հիմնական պայմանը նրա ապրելու պայմանների բարելավումն է: Նա իր գործարանում աշխատածամերը կրճատեց 15 ժամից մինչև 10,5 ժամ, բարեկարգեց բանվորական ավանը, բանվորների համար բացեց եժան խանութ, կաճուցեց մանկապարտեզ, դպրոց բանվորների երեխաների համար: Եվ արդյունքում ոչ միայն բարելավվեց մարդկանց միջև հարաբերություններն ու բարոցերը, այլև բախազանց բարձրացավ աշխատանքի արտադրողականությունն ու շահույթը: Աշխատանքի կազմակերպման արդարացի մոտեցումը և նրա առաջադրած արդյունքը տարանձեց ամբողջ Անգլիայով մեկ ու մեծ համաբավ բերեց նրան:

Օուենը առաջարկում էր ստեղծել աշխատանքային համայնքներ, որոնք պետք է ունենային ինքնակառավարման հնարավորություն իրենց կոմիտեների միջոցով: Այդպիսի համակարգին անցնելու միջոցը կառավարության ռեֆորմներն են, որը ըստ Օուենի, պետք է շահագրգռված լինեն կատարելու հենց իշխանությունները: Ներկայիս Եվրոպայի և Ամերիկայի կառավարությունները դեմ չեն հասարակական պայմանների բարելավմանը, ուղղակի նրանց դեմ չգիտեն, թե դա ինչպես պետք է արվի, առում էր Օուենը: Երբ նրանք կհասկանան, թե դա ինչպես պետք է արվի, այն ժամանակ նրանք

ակտիվ ձևով կմասնակցեն հասարակական կյանքի բարեփոխմանը: Այսպիսի ազնիվ, բայց անիրականանալի պատկերացումներն էին Ֆյոդոբին և Օուենին դարձրել ուտոպիստներ: Այդ էր թերևս պատճառը, որ Օուենը դեմ էր հեղափոխության ճանապարհով իշխանության փոփոխմանը:

Ի տարբերություն ուտոպիստ-սոցիալիստների, սոցիալիստական գաղափարները ավելի իրական վերլուծություն և հիմնավորում գտան Կարլ Մարքսի /1818-1883/ և Ֆրիդրիխ Էնգելսի /1820-1895/ աշխատություններում: Երանջ պրոլետարական հեղափոխության ուսմունքի ստեղծողներն էին, և կարծում էին, որ պրոլետարիատի և բուրժուազիայի անընդհատ աճող հակասությունը անվայման քերելու է բախման, և պրոլետարիատը, տապալելով բուրժուազիան, իշխանությունը իր ձեռքն է վերցնելու: Պետական իշխանության նվաճումը Մարքսի համար սկզբունքային նշանակություն ուներ: Բանն այն է, որ Մարքսն ու Էնգելսը այն տեսակետին էին, որ սոցիալիզմի նպատակն է ոչ միայն անդասակարգ հասարակություն ստեղծել, այլև ստեղծել հասարակություն՝ առանց պետության: Այդ նպատակին հասնելու համար նախ քանվոր դասակարգը պետք է նվաճի քաղաքական իշխանությունը և վերափոխի պետությունը՝ «նա հնարավորություն կտար սոցիալիզմին հասնելու իր հիմնական նպատակին» պետության մահացմանը: Մարքսի այդ տեսակետը չէին կիսում շատ սոցիալիստական ուղղություններ և մտածողներ, ինչպես չէին կիսում նաև սոցիալիստական հեղափոխության անխուսափելիությունը և միայն այդ ճանապարհով սոցիալիզմի հաստատման հնարավորությունը: Հետագայում սոցիալ-դեմոկրատիայի, ժողովրդավարական սոցիալիզմի և այլ սոցիալիստական կողմնորոշման տեսությունների շեշտը դնում էին հասարակության աստիճանական վերափոխումների ճանապարհով և իշխանության լծակներին տիրապետելու միջոցով սոցիալիստական հարաբերությունների հաստատման հնարավորության վրա, ինչն էլ այսօր առկա է Եվրոպայի շատ երկրներում:

Մակայն Մարքսի քաղաքական հայացքներում հակասության առկայությունը իր տեսական հիմքն ուներ: Մարքսը պետությունը բնորոշում էր որպես բռնության գործիք մեկ դասակարգի ձեռքին, մյուսին ճնշելու կամ նրա վրա իշխելու համար: Հետևաբար, պետությունը, ըստ Մարքսի, անիրաժեշտ է միայն այնքան ժամանակ, քանի դեռ առկա է ինչ որ դասակարգի կամ քաղաքական ուժի ճնշելու համար: Ուստի, եթե հասարակության մեջ հաստատվի սոցիալական ներդաշնակություն, որը ենթադրում է դասակարգերի վերացում, ապա պետության գոյության կարիք էլ չի լինի:

Մյուս կողմից, պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, որը Մարքսի կողմից մտցվել էր որպես հասարակության մեջ ներդաշնակության և սոցիալական արդարության հասնելու անիրաժեշտ միջոց, հետագայում իր անմարդկային դրսևորումներն ունեցավ՝ ծնելով Ֆաշիզմ, Ստալինիզմ, Մաոիզմ և այլն:

Ի տարբերություն իր նախորդների, Մարքսը կապիտալիզմը չէր դիտում որպես միայն մարդկային դժբախտությունների, հասարակական կյանքում

տեղի ունեցող սուր հակասությունների պատճառ: Մարքսի մոտ կապիտալիզմը դիտվում էր նաև որպես սոցիալիզմին նախորդող անիրաժեշտ տնտեսական ֆորմացիա, և կապիտալիզմի զարգացումը օբյեկտիվ ապրման էր համարում սոցիալիզմի հաղթանակի համար: Ավելին, Մարքսը գտնում էր, որ կապիտալիզմի զարգացումը, տեղի ունենալով բանվորների և բուրժուազիայի միջև հակասությունների անընդհատ սրման պայմաններում, ինչն է պրոլետարիատին մղելու բռնությամբ իշխանությունը զավթելուն: Լա Նու-նիսկ նշում էր, որ առանց կապիտալիստական արտադրական հարաբերությունների զարգացման, սոցիալիզմի հաղթանակը հնարավոր չէ: Մակայն հետագայում նրա հետևորդները անտեսեցին այդ դրույթը /Լենին/, պնդելով, որ սոցիալիզմը կարող է հաստատվել նաև կապիտալիզմը չըջանցելով, որը իրագործվելով՝ մոսաստանում և մի շարք այլ երկրներում, չարդարացրեց իրեն:

19-րդ դարի առաջին կեսի քաղաքական մտքի զարգացման գործում իր նշանակալից դերն է ունեցել Օգյուստ Կոնտը /1798-1857/: Լա հասարակության զարգացման պոզիտիվիստական տեսության հիմնադիրն էր: Կոնտը իր ուսմունքը ակնառն էր քաղաքական փիլիսոփայություն, որտեղ քաղաքական հասկացությունը նույնացվում էր հասարակության հասկացության հետ: Լա մի շարք հասարակական երևույթների վերլուծության ճանապարհով բացահայտեց նրանք քաղաքական իմաստը: Կոնտը իր վերլուծություններում հենվում էր հետևյալ դրույթների վրա.

- 1) հասարակությունը ամբողջական սոցիալական համակարգ է,
- 2) տվյալ համակարգը օրինաչափորեն իր ցածր մակարդակից զարգանում է դեպի բարձր մակարդակի, պարզից դեպի քաղաք աստիճանի,
- 3) այդ զարգացման հիմքում ընկած է մարդկանց գիտակցությունը և նրանց ճանաչողական գործունեությունը,
- 4) մարդկանց քաղաքական գործունեությունը որոշվում է նրանց քաղաքական գիտակցությամբ և ուղղված է հասարակության ամրապնդմանը,
- 5) մարդկանց քաղաքական գիտակցությունից կախված ձևավորվում է պետական կարգ, քաղաքացիական իրավունքների և քաղաքացիների ազատության խնդիրները լուծելու համար:

Կոնտը որակաևորեց իր վերաբերվում բուրժուական հասարակության զարգացմանը, գտնելով, որ այն լայն հնարավորություն է ստեղծում գիտության և արտադրության զարգացման համար, դրանով իսկ նպաստելով հասարակության բարեկեցությանն ու առաջընթացին: Պետության հիմնական խնդիրը նոր հասարակական կարգի պաշտպանությունն ու զարգացման ապահովումն է, որը լավագույն ձևով կարող է իրականացնել բուրժուական հանրապետությունը, եզրակացնում է Կոնտը, վերլուծելով հասարակության աստիճանական զարգացումն ու քաղաքական երևույթների բնական օրենքները:

Այդպիսի օրենքներից մեկը Կոնտը համարում էր մարդկանց ստեղծագործական գործունեության ազատությունների ընդարձակումը, այն համարելով

Քաղաքական միտքը 20-րդ դարում զարգանում էր երեք հիմնական ուղղություններով՝ ակադեմիական ուղղություն, սոցիալ-փիլիսոփայական տեսությունները և գաղափարական տեսությունները:

Ակադեմիական ուղղությունը, որն աղաքացավ ԱՄՆ-ում 20-րդ դարի սկզբներին, փորձում էր գերել մեզաքաղաքականության կարևոր հարցերի նկատմամբ գաղափարական պայքարից և ուշադրությունը կենտրոնացրել էր քաղաքական վարքագծի օրինաչափությունների, քաղաքական ինստիտուտների գործառույթյան, քաղաքական համակարգերի մոդելների ստեղծման, ճգնաժամերի ընդհանուր տեսության ստեղծման և այլ հարցերի ուսումնասիրությունների վրա:

Սոցիալ-փիլիսոփայական տեսությունները հիմնականում ուսումնասիրում են ինդուստրիալ, հետիստորիալ, ինֆորմացիոն հասարակության հետ կապված առանձնահատկությունները: Այդ տեսություններում առաջարկվում էր տարբեր հայեցողական մոդելներ, փորձելով որպես հարմարեցնել հասարակության զարգացման արդի մակարդակին: Դրանցում առկա են բազում ծախս արմատական և ինդուստրիալ հասարակության տարբեր ուղղվածություն ունեցող տեսություններ:

Քաղաքական մտքի գաղափարական ուղղությունները լազատական, պահպանողական, սոցիալիստական, արմատական և այլն՝ ձգտում էին ոչ միայն միջոց լինել քաղաքական իրադարձությունների կիզակետում, այլ ժամանակին մշակել հասարակության վերափոխումների տալիսիական և ստրատեգիան, այն առաջարկելով իշխանություն ունեցող կամ իշխանության ձգտող քաղաքական ուժերին:

20-րդ դարի քաղաքական մտքի զարգացման գործում մեծ համբավ է ձեռք բերել գերմանացի խոշորագույն սոցիոլոգ, փիլիսոփա և պատմաբան Մաքս Վեբերը (1864-1920), որի քաղաքական ուսմունքը հիմք դրեց մի շարք քաղաքական տեսությունների առաջացման և զարգացմանը:

Մեքսիկացի իշխանության տեսությունը, որի մեջ քննարկվում է նաև իշխանության (եզիստիստության) հարցը, արդի կազմավորում ունեցող հասարակության մեջ ռացիոնալ բյուրոկրատների իշխանության տեսությունը և այլն:

Մեքսիկացի քաղաքական հայացքները շարադրված են հիմնականում «Տնտեսություն և հասարակություն», «Բողոքական բարոյականությունը և կապիտալիզմի ոգին» աշխատություններում:

Կապիտալիզմի Վեբերյան վերլուծությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, սամանավանդ հետիստորիային հանրապետությունների համար, որոնք երբեմն նույնիսկ իրենց կամից անկախ, անկախություն ձեռք բերեցին և կանգնեցին Լավելի ճիշտ որոնք կանգնեցրին՝ շուկայական հարաբերությունների, այսինքն կապիտալիզմի զարգացման ուղու վրա:

Վեբերը բացատրում էր, որ կապիտալիզմի գոյությունը և նույնիսկ նրա իշխանությունը դեռևս չի նշանակում, որ առկա է կապիտալիստական հասարակություն: Կապիտալը միշտ էլ եղել է սկսած հին աշխարհից՝ հազարամյակներ առաջ, բայց կապիտալիստական հասարակությունն առաջացել է միայն նոր ժամանակաշրջանի էկոնոմիկական քաղաքակրթության պայմաններում: Էրաբոժեք կապիտալիստական հասարակությունը հիմնված է օգտակարության և շահութաբերության վրա, ինչը բնորոշում է իրական թուրօտալի կերպարը:

Ըստ Վեբերի, ներկայիս արևմտյան կապիտալիզմի յուրահատկությունը, որը հենված է արդյունաբերության վրա, նրանում է, որ այն ռացիոնալ կազմակերպված հասարակություն է: Տնտեսությունում, դրամական շրջանառության մեջ, քաղաքականության մեջ, գիտության մեջ և հասարակական կյանքի այլ ոլորտներում, իշխում է ռացիոնալիզմը՝ թանակալությունը՝ և հասարակությունն էլ կառավարվում է ռացիոնալ իրավունքներով - այսպիսին է Վեբերի պատկերացումը իրական կապիտալիզմի:

Վեբերը տիրապետությունը դիտում էր որպես իշխանության մենաշնորհ, որն իր կամքը պարտադիր օրենքների օգնությամբ սույն պարտադրելու միջոց է: Տիրապետությունը օրինականացված բնույթ ունի, որն ունի երեք տեսակի դրսևորում՝ ավանդական, խարիզմատիկ (հեղինակային) և լեգալ (օրինական): Ավանդական տիրապետությունը հենված է սովորույթների վրա, որի օրինականացման համար անհրաժեշտ է, որ մարդիկ հավատան իշխանության օրինականությանը: Խարիզմատիկ տիրապետությունը հենվում է անհատի վրա, որին մարդիկ հավատում են: Օրինական իշխանությունը հենվում է իրավունքի վրա և նրա օրինականության հիմքը ռացիոնալիզմն է:

20-րդ դարի քաղաքական մտքի արգասիքներից է քաղաքական էլիտայի տեսությունը, որը ներկայացնում են իտալացիներ Գ.Մուսկան /1858-1941/, Վ.Պարետոն /1848-1923/ և գերմանացի Ռ.Միլիսելը /1876-1936/:

Այս տեսության մեջ զարգացվում է քաղաքական իշխանության թեման, որը իր բնույթով Մաքսվեբերի հայացքներին է հարում, քանի որ նման հայացքներ առաջին անգամ համոզվում ենք հենց Լիկվոր Մաքսվեբերի աշխատություններում:

Գ.Մուսկան քաղաքագիտության հիմնադիրներից մեկն էր, որն իր քաղաքական հայացքները շարադրել է «Կառավարման և պարզամենտական կառավարման տեսությունը», «Քաղաքական գիտության հիմունքները», «Քաղաքական տեսությունների պատմություն» աշխատություններում:

Էլիտայի տեսությունը հենվում էր այն բացատրության վրա, որ յուրաքանչյուր հասարակության մեջ մարդիկ բաժանվում են արտոնյալների և զանցվածների, ըստ Մուսկայի, բոլոր հասարակություններում էլ գոյություն ունեն մարդկանց երկու դասակարգ՝ իշխող դասակարգ և կառավարվող դասակարգ: Առաջինները միշտ էլ փոքրաքանակ են և իրականացնում են քաղաքականության բոլոր ֆունկցիաները, սեփականացնում են իշխանու-

թյունը և վայելում են այն քոյոթ արտոնությունները, ինչը տալիս է իշխանությունը: Միևեզեր մյուսը կազմում է հասարակության ճշգրտ մեծամասնությունը որը հենավարձում և ուսելում է անաղիստեր կողմը:

Գ Մոսկայից աննախ, ելիտայի (հետևությունը գաղափար) է «Պարտերու իր - ճիտայի վերջը և անկուճը՝ աշխատության մեջ: Ընտ Պատերով, ելիտան արժեքային իմաստից զրկված արտահայտություն է, այն է՝ ինչ գրադեցնում է անմարբանոր սանդղաններ, չինի դա իշխանություն, ուսարտություն, գիտելից, հեղինակություն և այլն:

Նա ելիտան բաժանում էր կառավարողների և վրասավարողների: Կառավարողներին անվանում էր աշյուններ, որոնք, ըստ նրա, դատան են, զծրական, հոնկում են ուժի իշխանության վրա՝ իսկ վրասավարողներին անվանում էր աղյետներ, որոնք իրենց ղրոբերը պահելու համար իմնակալում օգտագործում են քանակությունների, գրքունների և համոզմունքների մեթոդները:

Պարտեան մարդկության անտնությունը դիտում էր որպես էլիտայի մշտական փոխման արտոնություն, որի ընթացքում անընդհատ տեղի է ունենում որևէ ելիտան նորը փոխարինում:

Եւրոպական սոցիոլոգիայի հիմնադիրներից է համարվում գերմանացի ստանդո Ուոբերտ Միխելսը (1876-1936), որի հայացքները հիմնականում շարադրվել են «Եւրոպական կուսակցությունների սոցիոլոգիան ժողովրդավարության պայմաններում» աշխատության մեջ: Կոսեով թաղաքական կազմակերպություններում ժաման, նա այն կարծիքն է հայտնում, որ մարդկային հասարակական կյանքը անհնար է առանց ուղիոր կազմակերպությունների անկայության: Ինչպես պետական կազմակերպություններում, այնպես էլ կուսակցություններում արտախություններում և այլ կազմակերպություններում՝ իշխանությունը կենտրոնացվում է նրանց ձեռքում, ովքեր ընդունակ են կոտակալել: Ասկայն, ըստ նրա, դրանք պետք է դուռս գալ շարադրին անկամների հեղուկությունից, քանզի նայնիս կուսակցության նո՛ շարադրին քստովաններ ընդունակ չեն կառավարելու և առարկորով են առաջնորդներ, որոնք ծնվելով շարադրին անկամներից, անտիմաստաբ ուտանում են նրանից և վերածվում կուսակցական ելիտայի: Միխելսը գտնում էր, որ առաջնորդների իշխանությունը լավից է ուսելի քանզի երբ ընդունվում են իշխանություն ուսելի օրեքներ, ապա քոսակում են ոչ ուտաջնորդները այլ օրեքները:

20-րդ դարի առաջին կեսին մացիավելականություն տեմությունը նոր գաղափարում արդեց Խոսկայում, Ձերմանիսում, Ֆրանսիսում, Մայայն մեծ համալս ձեռք բերեց 30-ական թվականներին ԱՄՆ-ում, Խարկապես Զարվարի համալսարանի զորմասանների հետազոտությունները շնորհիվ:

Չարլզ Մերիանը (1874-1953) Չիկագոյի թաղաքական հետազոտությունների դարրիցի հիմնադիրն էր և համարվում էր արդի թաղաքական գրտությունների հիմնադիրներից մեկը, նա թաղաքական մեթոդ մեջ ընդունվում է որպես թաղաքական արժեքնաչանների հետազոտություններում Ձեռնիկորիզ-

վի՝ Կառաքալանության մասեցման առաջին կիտառով: Ըստ նրա, մինչ այդ թաղաքականությունը ուտոմպանովել է՝ իսկզի աննեղ օրեքե՝ թորր գրտուննեթ, թաղի վարող գործերից, ուր թաղաքան մեծ աղդեցություն ուր թաղաքական արդիները և անտական արդի գործունեության վրան Մերիանը գտնում էր, որ մեկ կանելան երբ թաղաքականության հետազոտությունների մեթոդների փոփոխությունների շեմին, որը ելադրում է նրան ամրորը հասարակական գիտությունների հետազոտությունների սկզբունքների կրոնոլոգիան:

Թաղաքական գիտությունների գաղափարն ճանապարհին կշում էր Մեյհամը, պետք է հաղթանաիվ զի շարք դժվարություններ, Դրանցից են թաղաքական ճոնոլոգների մասին տվյալների պապաթը, որիցանի շաիերից ելնելով թաղաքական անաղեցությունը, թաղաքական ճոնոլոգների գիտաարան ուտալ յովանելի ճարակալությունը և այլն:

Ուշադրել դիտարնելու դեպքում կարելի է տեսնել, որ արդի թաղաքականության մեջ կենտրոնական խնդիրը թաղաքակրթությունից հեղինկոտարիալ հասարակության անցելու պայմաններում իշխանության և հասարակական կյանքի հեղինկաարացման հարցերն են: Կիդ հիմնախոսքերի վերլուծությանն են կիրպած ՎՄՆ թաղաքական մեթոդ հայտնի ներկայացուցիչներ՝ Ռ. Ա. Դայր (1915), Օ. Ռոֆֆերը (1928), Խոսկայի Երոտուտ Բորդոն (1905), Ֆրանսիացի Արչեյ Կոուլեն և այլք: Դեառապա իր հետազոտությունները իրականացնում էր փորձնական դիտարկումների և դրանց կարուն արտուկեցելի վերլուծության հիմքի վրա: Իր «Եւրոպական վաղաքադր վերլուծություն» (1940) աշխատության մեջ թեևարկան արարակ է դառնում հարցերը՝ այն շրջանակներ, որոնք առնելում են մարդկանց միջև, արդականության և կրոնի մեջ, գիտության և թաղաքականության միջև, երբեք արդիանարեհուկություններին, թաղաքական ճոնոլոգների ճանաչական մեթոդներին և այլն:

Որոնքու Դաք գրեթե 50 տարի գրադրած է էլիտայի և թաեերի, լիքնուլ դեմկրատապան տեմությունների վերլուծությամբ և գաղափարայն նրա «Դեմոկրատական տեմությունների ներածություն», «Դի Է Խոտակարում» և այլ աշխատություններում, հենկարդ ԱՄՆ-ի արդի թաղաքական գաղափարների վրա, մտնում է գաղափարել իշխանության, արտալսություն և հեղինկության մասին արդի դարադրականի ոգուն ուտապատասարան հարաջեներ՝ նա թաղաքական համապաթթ իտում էր որպես մարդկային հարաթբությունների քանակաթթ կալուն համակարգ, որն էր մեջ որպես գիտաիոր գործուն ներառում է իշխանություն, ճեկալարություն և հեղինկություն:

Նե՛ իտալացիություն է ներկայացնում Օլիվիա Ռոֆֆերի իշխանության ընտրչումը: Երա մառթ ըշխանություններ գրտիկիկեր, հասարակություն և ուժե ԶԻ-րի դարի շեմին» գրքում նայվում է որ հեղինկոտարիալ ուտարակության պայմաններում մարդկությունը թեևարկում է իտալը իշխանությունների գաղադրան, երբ աշխարհում գոյություն անեցուլ քոյոթ իշխանությունները թալուկում են և ձկունը Էլ վերունտրեն նոր վերաուտության

ձևեր, իշխանության նախորդան գլխավոր գործոնը դառնում է գիտելիքը, գիտությունը, այլ ոչ թե ուժն ու հարստությունը:

Կեղտոծելով աշխարհում գոյություն ունեցող խառը իշխանության ձևերը, Թոմֆինը առանձնացնում է երեք առավել նշանակալից կառուցվածքային տեղաշարժեր.

ա/ խորհրդային միաձույլ բյուրոկրատիայի փլուզումը և անկախ պետությունների առաջացումը,

բ/ զարգացող երկրներում խոշոր խմբավորումների առաջացումը որոնք նա տարբերում էր ըստ նրանց զարգացման մակարդակի, անվանելով առաջին, երկրորդ և երրորդ ալիքի զարգացման երկրներ,

գ/ նոր զարգացած երկրների ձևավորումը, ինչի շնորհիվ ԱՄՆ-ին որպես ուժեղ մրցակիցներ հանդես եկան Ճապոնիան և Եվրոպայի մի շարք երկրներ: Աշխարհի հետագա քաղաքական զարգացման հիմնական բախանիշները, ըստ նրա, լինելու են զարգացման տեսակերը: Նա երկրները բաժանում էր բարձր տեսակերով և ցածր տեսակերով զարգացողների: Եվ նա գտնում էր, որ իշխողի դերում են լինելու բարձր տեսակերով զարգացող երկրները, անշուշտ, առաջին հերթին նկատի ունենալով ԱՄՆ:

Ժամանակակից քաղաքագիտության մեջ մտածողների գգալի մասը իրենց ուսումնասիրությունները նվիրել են միջազգային քաղաքականության և միջազգային հարաբերությունների պրոզեմներին, ճգնաժամերի լուծման ուղիների որոնմանը, քաղաքական լիդերության հարցերին և այլն, որոնք արդի դարաշրջանի քաղաքական զարգացումների հիմքն են կազմում: Արդյունքում քաղաքական միտքը 20-րդ դարի ընթացքում զարգացման մեծ թռիչք ունեցավ, առաջացելով քաղաքական տեսությունների մի շարք ուղղություններ, որոնց հեղինակների ցանկը կարելի է նշել տասնյակներով:

Այսպես, քաղաքական հոգեբանության զարգացման մեջ մեծ հեղինակություն ձեռք բերեց Գարրոլդ Լասաուելը, որը մշակելով իշխանության բիենվիդիոստական կոնցեպցիան, մեծ հետևորդներ և կողմնակիցներ ունեցավ:

Ավտորիտարիզմի և ամբողջատիրության տեսությունների ուսումնասիրությամբ էին զբաղվում Կ.Արենդտը (1902-1975), Կ.Ֆրիդրիխը, Չ.Բեքինսկին, Է.Շապիրոն, Ռ.Արնեյ /1905-1983/ և այլն:

Ճգնաժամի ընդհանուր տեսության զարգացման գործում մեծ էին անգլիացիներ Կ.Բոուդլիգի, Ա.Բապպայորտի, Դ.Էնսերի, Ա.Գիդդենսի դերը: Ճգնաժամերի հետազոտման գործում նշանակալից է Եվրոպական դպրոցի գիտնականներ Մ.Դյուպերլոնի, Գ.Դոյսի, Ռ.Դարենդորֆի և Գ.Գալտմանի ծառայությունները:

Միջազգային հարաբերությունների հետազոտման բնագավառում աչքի է ընկել ամերիկյան մտածող Դանս Մորգենթաուն (1904-1982), որի ընդդեմամբ, ցանկացած քաղաքականություն ձգտում է կամ հզորության պահպանման, կամ հզորության մեծացման, կամ հզորության ցուցադրման, որի հիմնական նպատակը ազդեցության համար պայքարն է:

Ոչ արևմտյան երկրների քաղաքական զարգացումների ուսումնասիրությանը աչքի են ընկել ԱՄՆ գիտնականներ Զ.Ալմոնդը, Դ.Կաուլմենը, Դ.Էպստեյնը, Ա.Դանտինգոն, Բ.Մորը և ուրիշներ:

Քաղաքական իշխանության էլիտար և պլուրալիստական տեսության մեջ աչքի են ընկել Ռ.Միլլեր (1916-1962), որպես նոր լիբերալների գաղափարախոս: Քաղաքագիտության մեջ համակարգային ուսումնասիրության մեջ իրենց մեծ ներդրումն ունեն Թ.Պարտնարը, Դ.Դալտոնը, Զ.Ալմոնդը և այլք:

Գրականություն

1. Аристотель. Политика.-М. 1911
2. Арон. Р. Демократия и тоталитаризм. М. 1993
3. Арташастра или Наука политики. М. 1993
4. Бентам И. Введение в основание нравственности и законодательства. Избр. произ. - Т 1. СПб 1857
5. Бердаев Н. А. Царство духа и царство кесаря. М. 1994
6. Боргош Ю. Ома Аквинский. М. 1975
7. Вебер М. Избранные произведения. М. 1990
8. Гегель Г. Философия права. М. 1990
9. Гоббс Т. Левинафон или о сущности и форме власти. СПб. 1858
10. Даль Р. Введение в теорию демократии. М. 1992
11. Лока Дж. О государственном правлении. В двух томах. М. 1960
12. Макиавелли Н. Государь. М. 1990
13. Монтескья Ш. Л. О духе законов. М. 1955
14. Платон. Государство. Политик. Законы. соч. В. 3т. М. 1972
15. Руссо Ж.Ж. Общественный договор. М. 1906
16. Спенсер Г. Развитие политических учреждений. СПб. 1882
17. Токиль А. О демократии в Америке. М. 1992
18. Тоффлер О. Третья волна. М. 1992
19. Цицерон М. Т. Диалоги о государстве, о законах. М. 1966
20. Шелдон Г. Политическая философия Томаса Джефферсона. М. 1996
21. Философский энциклопедический словарь. М. 1983
22. Փիլիսոփայության աստվածային համայնու ալիտարի. Եր. 1972

ՉԼՈՒՆ ԵՐՐՈՐԴ

Քաղաքականության հիմնական սուբյեկտները

1. «Քաղաքականության սուբյեկտ» հասկացությունը

Քաղաքագիտության պորբլեմների ուսումնասիրման մեջ կարևորագույն խնդիրներից է քաղաքականության սուբյեկտի հարցը:

Քաղաքականությունը ինքնին գոյություն ունենալ չի կարող, որովհետև այն գործընթաց է, և ինչպես ամեն մի գործընթաց, քաղաքականությունը նույնպես պետք է ունենա իր իրականացնողը: Հետևաբար այն կարող է լինել միայն այն ժամանակ, երբ ունենում է իր իրականացնողը, այսինքն սուբյեկտը:

Քաղաքականությունը քննորոշելիս մենք արդեն նշել ենք, որ գիտական գրականության մեջ առկա են բազմաթիվ սահմանումներ և քննորոշումներ: Բնական է, որ քաղաքականության ցանկացած քննորոշում իր հետ բերում է նրան համապատասխանող այնպիսի սուբյեկտի տեսակի քննորոշում, որը հանդիսանում է այդ կերպ քննորոշված քաղաքականության կրողն ու իրականացնողը: Հենց այդ պատճառով էլ տարբեր մտածողների աշխատություններում և քաղաքագիտության պորբլեմներին նվիրված գիտական և ուսումնական գրականության մեջ հանդիպում ենք քաղաքականության սուբյեկտի նույնչափ բազմազան քննորոշումների, տես զգալիորոշված գրականության ցանկը:

Սակայն քաղաքականության սուբյեկտի այդքան բազմազան քննորոշումների մեջ կա մի ընդհանուր բան, ինչը նկատելի է վերջ նշված գրականության հեղինակների մոտ: Չա այն է, որ քաղաքական հարաբերությունների, զարգացումների, տեղաշարժերի և իրադարձությունների ցանկացած մասնակից դիտվում է որպես քաղաքականության սուբյեկտ: Իսկ դա արդյունք է այն թանկ, որ քաղաքական ընդհանուր ցանկացած երևույթ, հարաբերության և գործունեության ձև քննորոշվում է որպես քաղաքականության սուբյեկտ են համարվում մարդիկ, անհատներ, սոցիալական խմբեր, հասարակական կազմակերպություններ և միություններ, կուսակցություններ, դասակարգեր, ժողովուրդներ, ազգեր և վերջապես ամբողջ հասարակությունը: Այսինքն, հասարակության քաղաքական կյանքի յուր այն մասնակիցները, որոնց գործունեությունը, ինչ որ ձևով անցվում է քաղաքական հարաբերությունների հետ կամ ունի քաղաքական բնույթ: Այսպիսի մոտեցման դեպքում այն, ինչ քաղաքական է, ընկալվում է որպես քաղաքականություն, այսինքն «քաղաքականություն» և «քաղաքական» հասկացությունները նույնացվում է, ինչի պատճառով աղավաղվում և աղճատվում է «քաղաքականություն» հասկացության ընթերցումը, այն զրկվում է կոնկրետ բովանդակությունից, դառնալով վերացական հասկացություն:

Քաղաքականությունը քննորոշելիս մենք արդեն նշել ենք, որ այն իշխանությամբ օժտված սուբյեկտի կողմից որոշակի խնդիրների իրագործման

ուղղված պետականորեն կազմակերպված գործողությունների և գործընթացների ամբողջություն է: Այստեղից հետևում է, որ

ա/ քաղաքականության սուբյեկտի հիմնական քննորոշիչը նրա իշխանությամբ օժտված լինելն է, այսինքն հասարակության կյանքի որևէ բնագավառում ինչ որ խնդիրներ իրագործելու համար իրավասու լինելը,

բ/ քաղաքականության սուբյեկտի գործունեությունը ենթադրում է պետականորեն կազմակերպված բնույթ, որովհետև նախ, մի կողմից նրա գործունեությունը պայմանավորված է այն օրենքների համակարգով, որոնք ընդունվում են պետության կողմից՝ ստեղծելով համապատասխան օրենսդրական դաշտ քաղաքականության սուբյեկտի գործունեության համար, և մյուս կողմից, այն, ինչ փորձում է իրականացնել քաղաքականության սուբյեկտը, այլ բան չէ, քան հանձնարարականների, որոշումների և օրենքների կյանքում մարմնավորելու գործընթաց,

գ/ քաղաքականության սուբյեկտը իրավասու է իրագործելու միայն այն հանձնարարականները, որոշումները և օրենքները, որոնց կատարելու համար նա լիազորված է իշխանությամբ, անկախ այն բանից, թե հասարակական կյանքի որ բնագավառում և ինչ մակարդակներում է ընթանում նրա գործունեությունը՝ նախագահական ինստիտուտ, ազգային ժողով, կառավարություն, հարկային տեսչություն, տեղական ինքնակառավարման մարմիններ և այլն:

Վերջ քաղաքականության հիմնական հարցը իշխանության հարցն է, ապա նրա հիմնական խնդիրը իշխանության իրականացումն է: Իսկ իշխանությունը կարող է իրականացնել նա, ով լիազորված է այն իրականացնելու, այսինքն՝ ով օժտված է իշխանությամբ: Այստեղից դժվար չէ եզրակացնել որ քաղաքականությունը իշխանության իրականացման հիմնական ձևերից մեկն է, իսկ քաղաքականության սուբյեկտը՝ այդ իշխանության հիմնական իրականացնողը:

Մարդ կամ նրա տարբեր հանրույթները կուսակցություններ, կազմակերպություններ, միություններ և այլն՝ հասարակական քաղաքական կյանքում մասնակցում են տարբեր քաղաքական գործընթացների՝ միտինգներ, ցույցեր, հավաքներ, ընտրություններ և այլն: Բոլոր դեպքերում այդպիսի գործընթացներին մասնակցելը քաղաքական գործունեության ձև է, քաղաքական քայլ է, ինչի պատճառով այդպիսի գործընթացների մասնակիցներին կարելի է դիտել որպես քաղաքական սուբյեկտներ, բայց ոչ քաղաքականության սուբյեկտներ: Եվ ահա թե ինչու:

Քաղաքականության սուբյեկտի գործունեությունը ուղղված է հասարակության տարբեր բնագավառներում պետության կողմից նախատեսված որոշակի խնդիրների իրագործմանը, ինչի համար անհրաժեշտ է լինում, որ նա օժտված լինի իշխանությամբ, որպեսզի իրավասու լինի համապատասխան գործունեություն ծավալելու: Աինչպես քաղաքական սուբյեկտների գործունեությունը հիմնականում ուղղված է իշխանության իրականացնողների՝ քաղաքականության սուբյեկտների նկատմամբ վերաբերմունքի մշակմանը,

նրանց գործունեության գնահատմանը, քննադատմանը, թերությունների և սխալների բացահայտմանը, նպատակ ունենալով այդ ճանապարհով ազդելու իշխանությունների գործունեության վրա և հասարակության մեջ իշխանությունների նկատմամբ որոշակի կարծիք, վերաբերմունք ու մտնեցում ձևավորելու միջոցով իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար աջակիցներ և համախոհներ ձեռք բերել:

Եվ այդ քաղաքական գործընթացների մասնակիցներից ոչ մեկը իշխանությամբ օժտված չէ, իշխանության իրականացնող չէ, և այդ գործընթացներին մասնակցում է կամուփ, սեփական նախասիրություններից, գաղափարներից ու հակումներից ելնելով և դրանցով կողմնորոշվելով: Եթե քաղաքականության սուբյեկտը որպես իշխանության իրականացնող իր գործունեության համար թրեքի առջև պատասխանատվություն է կրում, որովհետև նա իր վրա պարտավորություն է վերցրել իրականացնել իրեն տրված հանձնարարականները, որոշումները և այլն, որոնց իրականացման համար նա ոչ միայն իրավասու է, այլև պատասխանատու, ապա քաղաքական գործընթացների մասնակիցը կամ ինչպես արդեն անվանել ենք՝ քաղաքական սուբյեկտը, որևէ կերպ պարտավորված չէ ամպայման կատարել տվյալ քայլը և որևէ մեկի առջև պատասխանատու չէ իր այդ բնույթի գործունեության համար:

Հետևաբար, եթե քաղաքականության սուբյեկտի բնորոշիչը իշխանությամբ օժտված լինելն է, ապա քաղաքական սուբյեկտի բնորոշիչը կամավոր նախաձեռնությունն է:

Այսպիսով, եթե քաղաքականության սուբյեկտի համար որպես օբյեկտ է հանդիսանում հասարակությունը ամբողջությամբ վերցրած, որովհետև նրա գործունեությունը ուղղված է հասարակական կյանքի տարբեր բնագավառներում կոնկրետ գործընթացների իրականացմանը, ապա քաղաքական սուբյեկտի համար որպես օբյեկտ է հանդիսանում իշխանություն իրականացնողը, այսինքն քաղաքականության սուբյեկտի գործունեությունը: Մարդը, սոցիալական խումբը, կուսակցությունը և այլն տարբեր տեսակի բնույթի գործընթացների են մասնակցում, ասենք ցույցերի, տարբեր քաղաքական միջոցառումների, ընտրություններին մասնակցությունը, քայքայ դրանով նրանց չեն դառնում քաղաքականության սուբյեկտ, որովհետև բոլոր դեպքերում նրանց այդպիսի գործընթացներին մասնակցության նպատակը իշխանություն իրականացնողների գործունեության նկատմամբ որոշակի վերաբերմունքի դրսևորումն է, կամ որ նույնն է, թե քաղաքականության սուբյեկտների գործունեության նկատմամբ որոշակի վերաբերմունքի դրսևորումը:

Օրինակ՝ ընտրությունները կարևորագույն քաղաքական գործընթաց է, որի մասնակիցները տվյալ պարագայում տվյալ գործընթացի կոնկրետ իրականացնողներն են, այսինքն քաղաքական սուբյեկտներն են: Ընտրությունների, ինչպես հայտնի է, հիմնական խնդիրը իշխանությունների ձևավորումն է, ասել է, թե իշխանություն իրականացնող սուբյեկտների՝ նույնն է թե՛

քաղաքականության սուբյեկտի ձևավորումը: Հետևաբար ընտրությունը, լինելով կարևորագույն քաղաքական գործընթաց, այնուհանդերձ չի կարելի այն դիտել որպես քաղաքականություն, և այդ գործընթացին նույնիսկ ամենաակտիվ մասնակից սուբյեկտը չի կարող դիտվել որպես քաղաքականության սուբյեկտ: Հակառակ դեպքում, անհեթեթ չէր լինի արդյո՞ք, եթե պնդեց, թե քաղաքականության սուբյեկտին ձևավորում է քաղաքականության սուբյեկտը, իհարկե, եթե խոսքը չի վերաբերվում բացարձակ միապետության ժառանգական սկզբունքներով իշխանության փոխանցմանը:

• Հետագա շարադրանքում, որտեղ քննարկման առարկա կդառնան հատկապես այնպիսի հարցեր, որոնք ուղղակիորեն առնչվում են քաղաքական գործընթացների մասնակիցներին՝ անհատ, լիդեր, կուսակցություն և այլն, ավելի մանրամասն վերլուծության կենթարկվեն քաղաքական գործընթացների մասնակիցներին վերաբերող առանձնահատկությունները:

✓ Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք վերը շարադրվածը, կարելի է առանձնացնել քաղաքականության սուբյեկտի հետևյալ բնորոշ գծերը.

- քաղաքականության սուբյեկտը օժտված է իշխանությամբ,
- քաղաքականության սուբյեկտը իշխանություն իրականացնող է,
- քաղաքականության սուբյեկտը իրականացնում է նախապես որոշված հանձնարարական,
- քաղաքականության սուբյեկտը իրավասու է իրականացնելու միայն այն խնդիրները, որոնց նա լիազորված է իրազործել:

Քաղաքականության սուբյեկտին իշխանությամբ օժտել կարող է միայն պետությունը, հետևաբար.

- քաղաքականության սուբյեկտի գործունեությունը պետականորեն կազմակերպված գործունեություն է,
- քաղաքականության սուբյեկտի ինչպիսին լինելը կախված է իրագործվող խնդիրների քվանդակությունից, բնույթից, էությունից, ծավալից և այլն,
- քաղաքականության սուբյեկտը ոչ թե քաղաքական գործընթացների մասնակից է, այլ կոնկրետ գործընթացների կազմակերպիչ և իրականացնող: ✓

Հենվելով նշված ընդհանրացումների վրա, կարելի է ձևակերպել քաղաքականության սուբյեկտի հետևյալ բնորոշումը: Քաղաքականության սուբյեկտը հասարակության կյանքում պետականորեն և սեփական ազատ նախաձեռնությամբ կազմակերպված գործընթացներ իրագործելու իրավասու, իշխանությամբ օժտված և իշխանություն իրականացնող պետական և ոչ պետական հաստատություններն են, լին կարող է ունենալ տարբեր կառուցվածքային մակարդակներ - պետություն, իշխանության մարմիններ, պետական և իշխանական կառուցվածքներ և ենթակառուցվածքներ, իրավաբանական և տնտեսական սուբյեկտներ և այլն: Կարճ ասած, բոլոր այն հաստատությունները, որոնց պետության կողմից լիազորված են հասարակության կյանքում որևէ կոնկրետ խնդիր իրագործելու համար:

2. Բաղաքականության սուբյեկտի հիմնական տեսակները

Բաղաքականության սուբյեկտի ինչպիսին լինելը մեծապես կախված է այն բանից, թե ինչպիսի նպատակներ է դրված քաղաքականության սուբյեկտի առջև, ինչ բնույթի ու ծավալի խնդիրներ պետք է նա իրականացնի և ինչ ձեռնարկումներ ու գործընթացներ պետք է նա իրականացնի այդ խնդիրները իրականացնելու և իր առջև դրված նպատակներին հասնելու համար:

Որքան ծավալուն և համընդգրկուն են նպատակները, որքան բարդ ու ճյուղավորված են լուծվելիք խնդիրները, այնքան ավելի լայն լիազորություններով և մեծ իշխանությամբ է օժտված լինում քաղաքականության սուբյեկտը, այնքան մեծ են նրա իրավասության շրջանակները և այդքան էլ հավաքական, ընդհանրական բնույթ ունի քաղաքականության սուբյեկտը: Եվ ընդհակառակը, որքան կոնկրետ են լուծվելիք խնդիրները, որքան հստակ են նպատակները, այդքան կոնկրետ բնույթ ունի քաղաքականության սուբյեկտը:

Այստեղից հետևում է, որ քաղաքականության սուբյեկտներին մեծ կարող ենք տարբերակել նրանց առջև դրված խնդիրների բնույթով և այդ խնդիրների իրագործման համար իշխանության օժտվածությամբ: Բարդ ու բազմաբնույթ խնդիրները սովորաբար բաղկացած են լինում առանձին կոնկրետ խնդիրներից, որոնցից յուրաքանչյուրի իրականացումը անհրաժեշտ պայման է հիմնական խնդիրը իրականացնելու համար: Համընդգրկուն նպատակները և դրանց հասնելու համար բարդ ու բազմաբնույթ խնդիրները իրականացնելու համար անհրաժեշտ է, որ քաղաքականության սուբյեկտը օժտված լինի մեծ իշխանությամբ: Ինչպես ընդհանուր բնույթ ունեցող խնդիրներն են բաղկացած առանձին կոնկրետ խնդիրներից, այնպես էլ քաղաքականության հավաքական սուբյեկտներն են բաղկացած առանձին, ավելի կոնկրետ իշխանություն իրականացնող քաղաքականության սուբյեկտներից: Եվ ինչպես առանց կոնկրետ խնդիրների իրագործմամբ հնարավոր չէ ընդհանուր նպատակին հասնել և հիմնական խնդիրը իրականացնել, այնպես էլ առանց առանձին խնդիրներ իրագործող քաղաքականության սուբյեկտի գործունեության հնարավոր չէ քաղաքականության հավաքական սուբյեկտի գործունեությունը: Որովհետև ավելի ընդհանրական, հավաքական կերպար ունեցող քաղաքականության սուբյեկտներն իրենց գործունեությունը կարող են իրականացնել միայն քաղաքականության կոնկրետ սուբյեկտների միջոցով: Ավելին, հավաքական սուբյեկտները, բաղկացած լինելով կոնկրետ սուբյեկտներից, առանց այդ կոնկրետ քաղաքականության սուբյեկտների գոյություն ունենալ, ձևավորվել և գործառնել չեն կարող: Ուստի, անկախ իրենց ծավալային ընդգրկումից, լիազորությունների շրջանակներից, իշխանության չափից և այլն, քաղաքականության առավել ընդհանուր սուբյեկտները գոյություն ունեն միայն իրենց բաղադրիչների՝ կոնկրետ սուբյեկտների միջոցով: Զաղաքականության այդպիսի առավել ընդհանուր և հիմնական սուբյեկտ է նախ և առաջ պետությունը:

Պետության առանձնահատկությունների, ֆունկցիաների, տեսակների, իշխանության ձևավորման սկզբունքների և այլ մանրամասն վերլուծություն կարվի հաջորդ գլուխներում, որտեղ առանձնակի քննարկման առարկա են դառնալու հենց պետության և իշխանության հետ կապված պրոբլեմները: Այստեղ խոսքը վերաբերվում է պետությանը, որպես քաղաքականության հիմնական սուբյեկտի: Պետությունը առավել հզոր և կազմակերպված քաղաքականության սուբյեկտ է, որն իր ձեռքում է կենտրոնացնում ինչպես հասարակության ներքին կյանքի, այնպես էլ միջազգային կյանքի վրա ազդելու հիմնական միջոցները: Պետության միջոցով են ժողովուրդներն ու ազգերը իրենց շահերը կազմակերպված ձևով ներկայացնում միջազգային ապարեզում: Ոչ մի զարգացած հասարակություն չի կարող գոյատևել պետությունից դուրս, որը անհրաժեշտ է կազմակերպելու տվյալ հասարակության և՛ ներքին, և՛ միջազգային կյանքը: Պետությունը միջնորդում և հսկում է հասարակության մեջ եղած բոլոր կառույցների գործունեությունը համապատասխան օրենքների համակարգով, ինչն էլ նրան դարձնում է իշխանություն բաժանելու միակ իրավասու և հետևաբար՝ քաղաքականության հիմնական սուբյեկտը:

Պետությունը բազմադեմ, բազմաֆունկցիոնալ կառույց է և նրա եռթյունը ինչ-որ մեկ նկարագրով, բնորոշմամբ կամ սահմանմամբ արտահայտել հնարավոր չէ: Ամեն անգամ, երբ մենք փորձում ենք բնորոշել պետությունը, ստիպված ենք լինում նշել այն գործոնները, գործառույթները, բաղադրիչները, ինստիտուտները և այլն, որոնց ամբողջությունից է գոյանում պետությունը: Այսինքն, պետությունը դիտում ենք մի կառուցվածքային համակարգ, որում մի կողմից յուրաքանչյուր բաղադրիչ ամբողջական համակարգի գոյության անհրաժեշտ պայմանն է, մյուս կողմից դրանցից յուրաքանչյուրն ունի իր համեմատական ինքնուրույն կառուցվածքը և կոնկրետ ֆունկցիաները, առանց որոնց իրականացման ամբողջական չի կարող լինել համակարգի գործառույթը և ինքը՝ համակարգը:

Երբ մենք առանձնացնում ենք պետության հիմնական ֆունկցիաները՝ քաղաքական, իրավական, կազմակերպչական, տնտեսական, սոցիալական, կրթական, մշակութային, արտաքին և այլն, մենք դրանով հանդերձ արգեն մատնանշում ենք այն կոնկրետ սուբյեկտներին, որոնք նշված ֆունկցիաների հիմնական իրականացողներն են և որոնց մեկ ամբողջականության մեջ միավորելու հետևանքով էլ ձևավորվում է պետությունը որպես այդ բոլոր ֆունկցիաների իրականացումը երաշխավորող հավաքական սուբյեկտը: Որպեսզի իր հիմնական ֆունկցիաները քաղաքականության այդ սուբյեկտների միջոցով կարողանա իրականացնել, պետությունը այդ սուբյեկտներին օժտում է իշխանությամբ, որպեսզի նրանց իրավասու դարձնի հասարակության կյանքում կոնկրետ խնդիրներ և գործընթացներ իրականացնելու համար: Այստեղից հետևում է, որ ինչպես պետությունը, որպես քաղաքականության հավաքական սուբյեկտ, առանց իր բաղադրիչները հանդիսացող քաղաքականության կոնկրետ սուբյեկտների գոյություն ունենալ չի կարող,

որովհետև առանց այդ սուբյեկտների կամ իր հիմնական ֆունկցիաները իրականացնել: չի կարող, այնպես էլ առանց պետության՝ քաղաքականության իրենական սուբյեկտի, քաղաքականության մյուս սուբյեկտները նույնպես գոյություն ունենալ չեն կարող, որովհետև միայն պետությունն է իրավասու այդ քաղաքականության սուբյեկտներին օժտելու իշխանությամբ, քանզի առանց իշխանություն ունենալու քաղաքականության սուբյեկտ լինել չի կարող, որովհետև այդպիսի սուբյեկտը իրավասու չէ քաղաքականություն՝ ասել է թե իշխանություն, իրականացնել: Այս փոխադարձ կապով էլ ինքն պայմանավորված է պետության և իշխանության տարբեր կառույցների, ինստիտուտների և հաստատությունների միջև եղած փոխհարաբերությունները, որը արտացոլվում է նաև պետություն-հասարակություն փոխհարաբերությունների համակարգում:

Պետությունը, լինելով քաղաքականության հավաքական և հիմնական սուբյեկտ, լինելով հասարակության քաղաքական համակարգի հիմնական ինստիտուտը, օժտված լինելով իշխանության մենաշնորհով, լինելով հասարակության կառավարումը իրականացնող միակ իրավասուս իր առջև դրված խնդիրները իրագործելու և իր հիմնական նպատակներին հասնելու համար իր ունեցած իշխանությունը մասամբ փոխանցում է այն մարմիններին, որոնց հանձնարարում է իր այս կամ այն ֆունկցիայի իրականացումը, միևնույն ժամանակ ստեղծելով օրենսդրական այնպիսի համակարգ, որի միջոցով համակարգում է հսկողություն է ստեղծում իշխանության իրականացման գործընթացների վրա: Պետության կողմից իշխանությամբ օժտված սուբյեկտներին մենք անվանում ենք իշխանության մարմիններ, իշխանության ինստիտուտներ, կառույցներ, թևեր կամ ուղղակի իշխանություն: Պետությունից՝ հետո առավել ընդհանուր և հիմնական քաղաքականության սուբյեկտներ են օրենսդիր իշխանությունը, գործադիր իշխանությունը և դատական իշխանությունը: Ժողովրդավարության հաստատման և զարգացման որոշակի աստիճանում ձևավորվում է նաև մամուլի կամ ինչպես ընդհանրված է անվանել, լորրորդ իշխանությունը: Դրանցից յուրաքանչյուրը պետության կողմից լիազորված է հասարակության կյանքում որոշակի խնդիրներ իրականացնել, ինչի համար պետությունը նրանց օժտում է համապատասխան իշխանությամբ: Դրանով էլ նրանք դառնում են քաղաքականության հիմնական սուբյեկտներ, քանզի օժտված լինելով իշխանությամբ և այդ իշխանության գործադրմամբ, իրականացնում են պետության հիմնական ֆունկցիաները: Այս քաղաքականության սուբյեկտների առջև դրված են բազում ու բազմաբովանդակ խնդիրներ, որի հետևանքով դրանք նույնպես համեմատաբար ծավաքական բնույթ են ունենում և կազմավորված են ապելի կոնկրետ ֆունկցիաներ ունեցող քաղաքականության սուբյեկտներից: Օրինակ, գործադիր իշխանությունը, կամ ինչպես ընդունված է անվանել՝ կառավարությունը, հասարակության կյանքում բազում խնդիրներ է իրականացնում, որոնցից յուրաքանչյուրը իր առանձնահատկությունը, բովանդակությունը, բնույթն ու նշանակությունն ունի: Կառավարությունը իր առջև դր-

ված այդ խնդիրները իրականացնելու նպատակով այդ խնդիրներն ընդգրկելով համապատասխան իրավասու նախարարություններ, վարչություններ, կառույցներ և հաստատություններ է ձևավորում, լիազորելով նրանց հասարակության կյանքի որևէ կոնկրետ բնագավառում այդ ոլորտին բնորոշ խնդիրները իրականացնելու համար: Եվ այնքանով, որքանով այդ մարմինները օժտված են իշխանությամբ, այդքանով նրանք դառնում են քաղաքականության հիմնական սուբյեկտներ: Առաջին հայացքից դրանք կարող են ընկալվել որպես ոչ լիարժեք, կամ ենթասուբյեկտներ, նկատի ունենալով, որ նրանք քաղաքականության առավել ընդհանուր սուբյեկտների քաղաքորիչներն են: Սակայն դա այդպես չէ: Քաղաքականության հավաքական սուբյեկտի քաղաքորիչը փնտրելով կամ նրա մասը կազմելով, նրանք լին դադարում քաղաքականության հիմնական սուբյեկտներ լինելուց, որովհետև նրանք օժտված են իրական իշխանությամբ և այդ իշխանությունը իրականացնելու ճանապարհով որոշակի խնդիրներ իրականացնող իրավասու սուբյեկտներ են: Նույնն է իշխանության մյուս թևերի պարագայում: Ուշագրության փոխարկելու դեպքում պարզվում է, որ այդ սուբյեկտներն էլ իրենց հերթին կարող են համեմատաբար ընդհանուր բնույթ ունենալ, այսինքն մի շարք սուբյեկտներից բաղկացած փնտն և նրանց լուծելից խնդիրներն էլ պայմանավորված լինեն այլ կոնկրետ խնդիրների իրականացումով: Այս պարագայում էլ քաղաքականության վերը նշված սուբյեկտները ճանապարհաթյուններ, վարչություններ և այլն՝ իրենց իշխանության որոշ մասը փոխանցում են ապելի կոնկրետ բնույթ ունեցող խնդիրներ իրականացնող սուբյեկտներին, օժտելով նրանց իշխանությամբ և իրավասու դարձնելով հասարակության կյանքի այս կամ այն բնագավառում կոնկրետ խնդիրներ իրականացնելու համար: Եվ, շնայած այս սուբյեկտները ավելի սահմանափակ իշխանությամբ են օժտված և ավելի կոնկրետ խնդիրներ են իրագործում, այնուհանդերձ նրանք մնում են որպես քաղաքականության հիմնական սուբյեկտներ, քանզի օժտված են իրական իշխանությամբ և իրավասու են իրականացնել այն

Այսպիսով, պետությունից, որպես քաղաքականության հավաքական և հիմնական սուբյեկտից, իշխանության աստիճանական փոփոխման միջոցով վերոց վար ձևավորվում են քաղաքականության հիմնական սուբյեկտներ, այսինքն պետության քաղաքականության հիմնական իրականացնողները: Այն կարելի է դիտել որպես քաղաքականության սուբյեկտների ձևավորման հիմնական սկզբունք:

Այսպիսով, քաղաքականության հիմնական սուբյեկտներն են պետությունը և նրա կողմից իշխանությամբ օժտված բոլոր այն մարմինները, կառույցները, հաստատությունները և այլն, որոնք իրավասու են իշխանության իրականացման ճանապարհով հասարակության կյանքի տարբեր ոլորտներում որոշակի խնդիրներ իրականացնել:

Այլ կերպ ասած, հասարակության քաղաքական համակարգում քաղաքականության սուբյեկտի կառուցվածակ են ձեռք բերում բոլոր այն կառույցները, մարմինները, հաստատությունները, ինստիտուտները և այլն, որոնք

օժտված են իշխանությամբ և իրավասու են հասարակության կանցի որևէ բնագավառում իրականացնելու պետության նախատեսած քաղաքականությունը:

Քրաձևակության մեջ նրանք հանդիպում ենք հարակից սուբյեկտ օժանդակ սուբյեկտ, ենթասուբյեկտ անտառադատությունների մաս ենթույթին, նման արտահայտությունների հեղինակները նկատի ունեն այնպիսի սուբյեկտների կամ ուժերի խտնտեսական, իրավաբանական, առևտրային, սոցիալական խմբեր, կուսակցություններ և այլն, որոնք իրենց գործունեությամբ աջակցում, նպաստում են քաղաքականության սուբյեկտներին իրականացնելու նրանց առջև դրված խնդիրները: Քաղաքականության սուբյեկտը հարակից կամ օժանդակ լինել է կարող: Այն կամ քաղաքականության սուբյեկտ է կամ այդպիսին չէ, որովհետև այն պայմանավորված է ոչ թե սովյալ գործընթացին մասնակից լինելով, այլ այն իշխանությամբ օժտված լինելով, ինչը նրան դարձնում է սովյալ գործընթացների օրինական իրականացնողը:

Հարկ ենք համարում նշել, որ վերը շարադրված մոտեցումները վերաբերում են ժողովրդավարական սկզբունքներով կառավարվող հասարակությանը: Զանգի իսականաչ է, որ բռնապետության պայմաններում իշխանությունների քաժանման այդպիսի սկզբունքներ կիրառելի չեն: Միայն ժողովրդավարական քաղաքական համակարգում է հնարավոր օրենսդրոթն իրականացնել իշխանությունների քաժանման նման սկզբունք, և ինչն այդ սկզբունքի հիման վրա ձևավորել քաղաքականության սուբյեկտներ: Ուստի քաղաքականության սուբյեկտների ձևավորման այսպիսի սկզբունքը կարելի է դիտել նաև որպես հասարակության կյանքում ժողովրդավարության սկզբունքների հաստատման կարևորագույն գործընթացներից մեկը:

Ընդհանրացնելով վերը շարադրածը, կարելի է առանձնացնել քաղաքականության հիմնական սուբյեկտների մի քանի հատկանշական գծեր:

Հասարակության մեջ քաղաքականության սուբյեկտի ձևավորումը իրականացվում է վերից վար իշխանության փոխանցման սկզբունքով, որի դեպքում դեպի ներքև իշխանության յուրաքանչյուր օղակում ձևավորվում են քաղաքականության կոնկրետ սուբյեկտներ, որոնք օժտվում են ինքնուրույն գործելու իրավունքով:

Քաղաքականության յուրաքանչյուր սուբյեկտ իր գործունեության արդյունքի համար պետք է պատասխանատու լինի միայն այն մարմնի առջև, որը նրան արտոնել է իշխանություն իրականացնել և իրավասու է դառնրել նրան կոնկրետ գործընթացներ իրագործել:

Վերից վար իշխանության փոխանցման սկզբունքը կարող է իրական արդյունք տալ միայն այն ժամանակ, երբ ալելի լայն լիազորություններով և իշխանությամբ օժտված քաղաքականության սուբյեկտի կողմից իշխանությունը պվելի կոնկրետ սուբյեկտների փոխանցելիս, իշխանություն փոխանցող քաղաքականության սուբյեկտ գրկվի իշխանության սյոլ մասը գործադրելու իրավունքից: Հակառակ դեպքում, տեղի չի ունենա իշխանության

իրական քաժանման սկզբունքի հիման վրա իշխանության իրականացման գործընթացը:

Իշխանությունը փոխանցել նշանակում է փոխանցել այն լիազորությունները, իրավունքները, իշխանություն իրականացնելու իրավասությունը, որոնք սովյալ քնագավառներում գործընթացների իրականացման անհրաժեշտ անորոշությունն են իշխանություն ստացած քաղաքականության սուբյեկտի օրինական գործունեության համար: Եթե իշխանություն փոխանցող մարմինը իր այդ լիազորություններից չի իրաժարվում, ապա պարզ է, որ նա ոչ մի իշխանության էլ չի փոխանցել: Իսկ դրա արդյունքում ձևավորվում է ոչ թե ինքնուրույն քաղաքականության սուբյեկտ, այլ ընդամենը ստորադաս ու կամակատար մի մարմին, կառույց կամ հաստատություն, որը շատ քնդող է բռնապետական քաղաքական համակարգին և նրա իշխանության իրականացման սկզբունքների:

Ժողովրդավարության պայմաններում քաղաքականության սուբյեկտների ձևավորման հիմնական յուրահատկությունը իշխանության վերից վար քաժանման սկզբունքն է, որի պայմաններում է միայն ննարավոր ինչպես իշխանության անկախ թների ձևավորումը, այնպես էլ քաղաքականության անկախ սուբյեկտների ձևավորումը:

Պետք է նկատել նաև, որ իշխանություն ստացող սուբյեկտը իրավասու պետք է լինի իր իշխանության մի մասը փոխանցելու այլ սուբյեկտների և իսկելու իշխանության իրականացման գործընթացի վրա, առանց գրկելու քաղաքականության սուբյեկտին ինքնուրույն գործունեության իրավունքից: Իշխանություն ստանձնած սուբյեկտը նույն բախով էլ պատասխանատվություն է ստանձնում այդ իշխանության իրականացման համար:

3. Միջազգային քաղաքականության սուբյեկտները: Նրանց հիմնական տեսակները և ձևավորման սկզբունքները

Ինչպես արդեն նշեցինք նախորդ շարադրանքում, քաղաքականության սուբյեկտների ձևավորման գործում մեծ նշանակություն ունի այն, թե ինչպիսի ժնույթ, բովանդակություն և նշանակություն ունեն այն խնդիրները, որոնք պետք է իրականացնի քաղաքականության սուբյեկտը:

Հասարակության առաջընթացի պրոցեսում հաժախ առաջանում են խնդիրներ, որոնց իրականացումը պահանջում է մի շարք պետությունների քանքերի միավորում: Դա պայմանավորված է նրանով, որ, նախ այդ խնդիրները մեկ առանձին վեոցած պետությունը իրականացնել չի կարող: Երկրորդ, դրանք սովորաբար այնպիսի խնդիրներ են, որ շոչալիում են մի քանի երկրների, կամ նույնիսկ համամարդկային շախեր, ինչն էլ պետություններին միավորում է այդ խնդիրները համատեղ ջանքերով լուծելու համար: Երրորդ, որ քիչ կարևոր չէ, այսօր ստեղծվել է այնպիսի աշխարհակարգ և աշխարհում հաստատվել է այնպիսի միջազգային քաղաքական հարաբերություններ ի համակարգ, որ որևէ պետություն առանձնացած ու մեկուսի գոլատեղ

յի կարող: Չորրորդ, աշխարհն այսօր կանգնած է այնպիսի վտանգի առջև, որն անելովում է մարդկության լինել-չլինելու հարցի հետ հպատեղազմ, շրջակա միջավայր, բնական ռեսուրսներ, մարդկության գեոաճ, աղքատություն և այլն, և այս պարագայում բոլոր պետությունները, անկախ նրանց զարգացման ու հզորության աստիճանից, թույլ և ուժեղ լինելուց, հավասարապես պատասխանատվություն են կրում այդ վտանգը կանխելու համար, քանզի համամարդկային աղետի դեպքում թվարկված հատկանիշները որևէ դեր խաղալ չեն կարող:

Եզված համամարդկային խնդիրների իրականացումն ու նույնատիպ շահերի պաշտպանությունն էլ հենց դարձել է այսօր բոլոր պետությունների մտահոգության առարկան, ինչն էլ ընկած է միջազգային հարաբերությունների ձևավորման հիմքում, որի նպատակն է որոշակի սկզբունքների ու նորմերի ընդունման և կիրառման հիման վրա կոնկրետ քայլերի, ձեռնարկումների, ու գործընթացների իրականացման ճանապարհով հասնել համամարդկային աղետների, վտանգների և մարդկության համընդհանուր շահերին հակասող այլ բացասական դրսևորումների վերացմանը:

Այդ նպատակին հասնելու համար պետությունների և ոչ պետական կազմակերպությունների անմիջական մասնակցությամբ ձևավորվում են միջազգային հարաբերությունների սուբյեկտներ՝ քաղաքական, ռազմա-քաղաքական, տնտեսական և այլ բնույթի կազմակերպություններ, որոնք, կախված իրենց առջև դրված խնդիրների և ընդհանուր շահերի պաշտպանության բնույթից, կարող են լինել ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային նշանակությամբ խնդիրներ իրականացնող սուբյեկտներ:

Այսօր աշխարհում գործող և մեզ հայտնի այդպիսի միջազգային սուբյեկտներից են Միավորված Ազգերի կազմակերպությունը /ՄԱԿ/, Հարավ-կրեյական Ասիայի Պետությունների Ասոցիացիան /ՀԱԱՊԱ/, Եվրոպական Միությունը /ԵՄ/, Արաբական Երկրների Լիգան /ԱԵԼ/, Ամերիկյան Պետությունների կազմակերպությունը /ԱՊՊԿ/, Աֆրիկյան Միության կազմակերպությունը /ԱՄԿ/, Հյուսիսատլանտյան Պայմանագրի կազմակերպությունը /ՀՊԿ կամ ինչպես հայտնի է՝ ՆԱՏՈ/, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության ժողովը /ԵԱՀԺ/, Անկախ Պետությունների Համագործակցությունը /ԱՊՀ/ և այլն:

Պրանց շարքին կարելի է դասել նաև միջազգային հեղինակություն ձեռք բերած և միջազգային /համաշխարհային/ քաղաքականության վրա ծանրակշիռ ազդեցություն ունեցող միջազգային հարաբերությունների այնպիսի սուբյեկտներ, ինչպիսիք են Համաշխարհային Առողջապահական կազմակերպությունը /ԶԱԿ/, Համաշխարհային Արիմիությունների Ֆեդերացիան /ԲԱՖ/, Աշխատանքի միջազգային կազմակերպությունը /ԱՄԿ/, միջազգային Կալլուտային ֆոնդը /ԿԿՖ/, Կարմիր կաշը /ԿԿ/ և այլն:

Միջազգային հարաբերությունների համակարգում գործող սուբյեկտների այսպիսի ցանկը ցույց է տալիս, որ լուծվելիք համամարդկային խնդիրները կարող են ունենալ ինչպես համաշխարհային բնույթ, որի պարագայում ձևա-

վորվում է համաշխարհային բնույթի քաղաքականության սուբյեկտներ /ՄԱԿ, ՆԱՏՈ, ԵԱՀԺ և այլն/, այնպես էլ տարածաշրջանային բնույթ /ՀԱԱՊԱ, ԱԵԼ, ԱՊԿ, ԱՊՀ և այլն/, որի դեպքում ձևավորվում են համապատասխան բնույթի սուբյեկտներ: Պրան գրգռահեռ, միջազգային հարաբերությունների համակարգում ակտիվ գործունեություն են ծավալում նաև ոչ ֆորմալ, ոչ պետական, հասարակական կազմակերպություններ ու միություններ, անհատներ ու քաղաքական գործիչներ, լոբբիստական շարժումներ, որոնք որոշակի նպատակներ հետաանդելով և դրանց հասնելու համար ակտիվ գործունեություն ծավալելով, մեծ ազդեցություն ու հենք են թողնում միջազգային հարաբերությունների համակարգի վրա ընդհանրապես, և միջազգային /համաշխարհային/ քաղաքականության վրա՝ մասնավորապես:

Այսպիսի մոտեցման դեպքում նկատելի է, որ միջազգային հարաբերությունների համակարգը ավելի լայն ընդգրկում ունի, քան միջազգային քաղաքականությունը, չնայած այն բանին, որ միջազգային քաղաքականությունը միջազգային հարաբերությունների համակարգի բուն էությունն է կազմում: Ուստի ճիշտ չէր լինի այս երկու երևույթների նույնացումը: Ճիշտ չէ նաև միջազգային հարաբերությունների համակարգը դիտել որպես միջազգային քաղաքականության բաղադրիչ:

Միջազգային հարաբերություններ ասելով սովորաբար հասկացվում է համաշխարհային հանրակցության բոլոր հիմնական սուբյեկտների միջև եղած քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, դրամա-ֆինանսական, սոցիալական, դիվանագիտական, իրավական, ռազմական, մարդասիրական և հաղորդակցման կապերի և հարաբերությունների ամբողջական համակարգը:

Միջազգային /համաշխարհային/ քաղաքականությունը միջազգային իրավունքի սուբյեկտների նպատակապալաց քաղաքական գործունեություն է՝ ուղղված նրանց ընդհանուր շահերի՝ պատերազմի և խաղաղության հարցերի, մարդկության գոյատևման, համընդհանուր անվտանգության պաշտպանության և զինաթափման, գլոբալ տարածաշրջանային և ազգային կոնֆլիկտների կարգավորման, շրջակա միջավայրի պաշտպանության, հետամնացության, աղքատության, սովի ու հիվանդությունների հաղթահարման և այլ համամարդկային խնդիրների իրականացմանը: Այլ կերպ ասած, միջազգային քաղաքականությունը միջազգային հարաբերություններում քաղաքականության սուբյեկտների ամբողջական և նպատակամղված քաղաքական գործունեությունն է:

Միջազգային քաղաքականության հիմնական առաջնությունները պայմանավորված են այն ընդհանուր խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, որոնք կանգնած են մարդկության և ազգային շահեր պաշտպանող քաղաքականության սուբյեկտների առջև:

Միջազգային հարաբերությունների համակարգի գործառույթների այն մասը, որն իրականացվում է որոշակի սկզբունքների և նորմերի հիման վրա, տարբեր պետությունների ներկայացուցիչներից ձևավորված իրավասու քա-

Հասարակության քաղաքական կյանքը

1. «Հասարակության քաղաքական կյանք» հասկացությունը

«Քաղաքական կյանք» հասկացության վերլուծությունը թույլ է տալիս քաղաքականությունը՝ որպես բարդ սոցիալական երևույթ, առանձնացնել հասարակական կյանքի այլ բնագավառներից և առավել հստակ պատկերացում ունենալ նրա քաղաքական բնույթի և էության մասին: Քաղաքական կյանքի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ հասարակությունը չափազանց բարդ, բազմաշերտ և բազմաչափ համակարգ է և այդի է ընկնում իր տարրերի, քաղաքիչների չափազանց մեծ բազմազանությամբ: Իսկ քանի որ մեր ժամանակներում տեղի են ունենում հասարակական-քաղաքական գործընթացների արագընթաց զարգացումներ ու փոփոխություններ, ավելի ու ավելի է բարդանում հասարակական հարաբերությունների բնույթը և հասարակական կյանքը, ապա անհրաժեշտ է դառնում բազմակողմանի ուսումնասիրության ենթարկել քաղաքական կյանքին առնչվող բոլոր գործոնները, ուշադրություն դարձնելով հատկապես մարդկանց քաղաքական գիտակցության և վարքի վրա, որոնք քաղաքական գարգացումներում երբեմն վճռորոշ դեր են խաղում:

Հասարակության քաղաքական կյանքը առտացվում է հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական գործընթացների ամբողջ համակարգում, որում գործում են ամենատարբեր քաղաքական կառույցներ և ինստիտուտներ: Այն ներթափանցված է բոլոր այն տարատեսակ սոցիալական գործընթացների, կառուցվածքների և ենթահամակարգերի մեջ, որոնց շրջանակներում իրականացվում են ընդունված քաղաքական որոշումները: Քաղաքական կյանքի հիմնական քաղաքիչներն են՝ իշխանական հարաբերությունները, քաղաքական կառույցները և հաստատությունները, քաղաքական գաղափարներն ու տեսակետները: Այլ կերպ ասած, քաղաքական կյանքն իր մեջ ներառում է բոլոր այն գործողություններն ու կառուցվածքները, որոնք այսպես, թե այնպես ներառված են քաղաքական որոշումների ընդունման և իրականացման գործընթացներում, այսինքն՝ քաղաքական իշխանության իրականացման ողջ համակարգում:

Հասարակության քաղաքական կյանքի բովանդակության և բնույթի մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է վերլուծել և իմաստավորել նրա կառուցվածքային համակարգում որոշիչ նշանակություն ունեցող մի քանի հիմնարար հասկացություններ: Այդպիսի հիմնարար հասկացություններից է, նախ և առաջ, հասարակության քաղաքական համակարգը, որն իր մեջ ներառում է բազում տարրեր քաղաքիչներ, կառուցվածքներ ու կազմավորումներ, առանց որոնց ուսումնասիրման քաղաքական կյանքի մասին հստակ պատկերացում կազմել հնարավոր չէ: Քաղաքական համակարգի քաղաքիչներից ու կառուցվածքներից մի քանիսը հանդես են գալիս որպես ինքնուրույն բարդ համակարգեր, օրինակ՝ պետությունը,

ղաքական մարմնի կողմից, մեք անվանում ենք միջազգային քաղաքականություն, իսկ այդ գործընթացների կոնկրետ իրականացնողներին՝ միջազգային քաղաքականության սուբյեկտներ:

Ինչպես արդեն նշել ենք, քաղաքականության սուբյեկտի կարևորագույն առանձնահատկություններից մեկը նրա իշխանությամբ օժտված լինելն է, այսինքն քաղաքական իշխանություն իրականացնելու իրավասու լինելը: Նույն առանձնահատկությունն ունեն նաև միջազգային քաղաքականության սուբյեկտները: Իսկ ինչպես հայտնի է, քաղաքականության սուբյեկտին իշխանությամբ օժտելու միակ իրավասուն պետությունն է: Ուստի միջազգային քաղաքականության սուբյեկտները կարող են ձևավորվել միայն պետությունների կամավոր միավորման սկզբունքի հիման վրա, որի դեպքում լուրջաբանյուր պետություն որոշակի իրավունքներով ու չհազորություններով է օժտում միջազգային այն կազմաշրջանները, որի անդամն է ինքը, և որի միջոցով ձգտում է իրականացնել ինչպես իր ազգային շահերը պաշտպանող ինդիվիդներ, այնպես էլ մյուս պետությունների հետ համատեղ իրականացնելու տարածաշրջանային և համաաշխարհային բնույթի խնդիրներ, որոնց լուծմամբ նա շահագրգռված է:

Այսպիսով, միջազգային քաղաքականության սուբյեկտներն են պետությունների միացյալ քանքերով ձևավորված միջազգային քաղաքական կազմակերպությունները, որոնք լիազորված են և իրավասու են միջազգային հարաբերությունների համակարգում իրականացնելու կոնկրետ քաղաքական գործընթացներ: Դժվար չէ նկատել, որ միջազգային հարաբերությունների համակարգում նրա ոչ բոլոր սուբյեկտներն են օժտված նման չհազորություններով և իրավասությամբ հանհատներ, միություններ, կուսակցություններ, լոբբիստական շարժումներ և այլն՝ ինչն էլ մեզ իրավունք չի տալիս նրանց միջազգային քաղաքականության սուբյեկտներ համարել:

Գրականություն

1. Գեուրոսյան Ա.Գ. Քաղաքագիտություն, եր. 2002
2. Мрзан Ю. В., Зотев В. Л., Зотев Л. В. Политология.
3. Мельников О. I. Сущность политики, социальное-политический журнал. 1993 №5-6
4. Пашаров А.С. Политология, М. 1999
5. Политология, Курс лекций, Под ред. А. А. Рязанова, М. 1999
6. Смит Дж. Конфликты. Пути их преодоления, Киев 1997

կուսակցությունը, քաղաքական ինստիտուտը, քաղաքական գործընթացը և այլն որոնց «պելի մանրամասն վերլուծությունը կտրվի հաշորդ գլուխներում»

Քաղաքական կյանքի կարևորագույն տարրերից են քաղաքական ինստիտուտները, որոնց իրենց մեջ ընդգրկում են քաղաքական քննադատի քաղաքական հարաբերություններ և կառուցվածքներ, Քաղաքական ինստիտուտ ասելով հասկանում ենք մարդկային հարաբերությունների այն յուրահատուկ դրսևորումները, որոնք արտացոլվում են կոնկրետ, ամուր և կայուն քաղաքական կապերի մեջ: Նրանց մի մասը որոշակի նյութական կազմակերպությանը է օժտված, օրինակ՝ հասարակական-քաղաքական միավորումները, քաղաքական կուսակցությունները և այլն: Մյուսներն ունեն ոչ նյութական բնույթ, օրինակ՝ իրավական նորմերն ու պատկերացումները, սեփականության դրսևորման ձևերը, իշխանությանը, լեգիտիմությունը և այլն:

Քաղաքական կյանքի կարևորագույն տարրերից է քաղաքական կառուցվածքը, որը նախ և առաջ արտահայտում է քաղաքական սուբյեկտների գործունեության, քաղաքական ինստիտուտների փոխադարձ կապերի ամբողջությունը: Կառուցվածքը բնորոշում է համակարգի տարրերի հարաբերականորեն անփոփոխ, կայուն կապերը, որոնք պահպանում են նույնիսկ այն դեպքում, երբ փոխվում են մարդիկ կամ սերունդներ: Այդպիսի կառուցվածքներ են կառավարությունը, պառլամենտը, կուսակցությունները և այլն:

Քաղաքական կյանքի կարևորագույն բաղադրիչներից է քաղաքական գործընթացը: Քաղաքական գործընթացներ ասելով նկատի է առնվում քաղաքական համակարգի կամ նրա տարրերի փոխկապակցված փոխհարաբերությունների ամբողջությունը և դրանց զարգացումը: Քաղաքական գործընթացները զարգանում ու փոփոխվում են բազում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ազդեցության տակ: Կոնկրետ մարդկանց միջամտությունը այդ պրոցեսներին կարող է արագացնել կամ դանդաղեցնել դրանց զարգացումները, դրանց դարձնել կառավարելի կամ ոչ կառավարելի, ստեղծագործական կամ ավերիչ: Այդ գործընթացների բնույթը և կախվածությունը սուբյեկտիվ գործոններից յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարող է տարբեր լինել, ինչը կարելի է պարզել միայն մանրակրկիտ վերլուծության դեպքում:

Հասարակության քաղաքական կյանքի յուրահատկությունը առավել հասկանալի է դարձնում «ներկայացուցչություն» հասկացության վերլուծությունը: Ժամանակակից քաղաքական համակարգը կազմված է օրենսդիր, դատական, գործադիր համակարգերից, կենտրոնական և տեղական կառավարման համակարգերից, որոնք հենվում են ընտրությունների միջոցով ներկայացուցչական մարմինների ձևավորման սկզբունքների վրա: Պետք է նկատի ունենալ, որ ներկայացուցչական սկզբունքների իրականացումը կարող է տեղի ունենալ միայն ժողովրդավարության սկզբունքներով ձևավորված քաղաքական համակարգերում:

Քաղաքական կյանքում մեծ նշանակություն ունի պետությունը, որը հասարակության քաղաքական համակարգի միջուկն է համարվում, և իրենից

ներկայացնում է իշխանության տարբեր մարմինների միջև եղած փոխազդեցությունների ամբողջությունը: Հասարակության կյանքում տեղի ունեցող քաղաքական գործընթացները ուղղակի թե միջնորդավորված առնչվում են պետության կամ նրա քաղաքիչները կազմող իշխանության մարմինների հետ, ազդելով դրանց վրա, միևնույն ժամանակ գտնվում են նրանց ազդեցության տակ:

Հասարակության քաղաքական կյանքի կարևորագույն գործոններից են քաղաքական կուսակցությունները: Կուսակցությունը կազմակերպված քաղաքական ուժ է, որը մարդկանց միավորում է որոշակի ժողովարների շուրջ և ձգտում է իշխանության կամ իշխանության վրա ազդելու ճանապարհով իր քաղաքական ծրագրերը իրականացնել: Կուսակցության և կուսակցական համակարգերի բնույթը որոշվում է բազմաթիվ գործոններով՝ ավանդույթներ, երկրի պատմությունը, ազգային առանձնահատկությունը, երկրի տնտեսությունը, սոցիալական կառուցվածքը, կրոնը, քարոյանքան նորմերը և այլն:

Քաղաքական կյանքը բնորոշող և նրա բոլոր կողմերի հետ խիստ փոփոխական կապակցված կարևորագույն գործոններից է քաղաքական իշխանությունը: Քաղաքական կենսագործունեության բոլոր դրսևորումները, որոնց մասին խոսվեց վերը, այսպես թե այնպես կապված են քաղաքական իշխանության հետ, և նրա տարատեսակ դրսևորման ձևերն են: Արդի աշխարհում զնալով հարթահարկում է ոչ բռնի մեթոդներով քաղաքական իշխանության իրականացումը: Սակայն, այնուհանդերձ պետական իշխանության անբաժանելի հատկանիշը եղել և մնում է պարտադրանքի մեթոդի կիրառումը, առաջին հերթին սահմանադրական, քաղաքական, քրեական, քաղաքացիական և այլ օրենսդրական համակարգերի միջոցով:

Մենք համառոտակի թվարկեցինք հասարակության քաղաքական կյանքի հիմնական կոմպոնենտները, առանց կանգ առնելու նրանց մանրամասն վերլուծության վրա, որովհետև դրանցից յուրաքանչյուրը հետազայում ենք անհրաժեշտ են նրանց հատկացված առանձին բաժիններում:

Այսպիսով հասարակության քաղաքական կյանքն իր մեջ ներառում է երևույթների լափազանք լայն շրջանակ, առաջին հերթին բազում քաղաքական ինստիտուտներ և դրանց գործառույթները, մարդկանց, սոցիալական խմբերի տարբեր տեսակի փոխհարաբերություններ՝ կապված իշխանության հարցի հետ: Քաղաքական կյանքում փաստորեն շոշափվում է և իրականացվում է հասարակության յուրաքանչյուր անդամի շահեր, անկախ այն բանից, թե նրանք ինչպիսի կազմակերպության կամ կառույցի անդամ են:

2. Քաղաքական կյանքին սոցիալական խմբերի և անհատների մասնակցության ձևերն ու առանձնահատկությունները

Հասարակության քաղաքական կյանքում տեղի ունեցող զարգացումների և փոփոխությունների վրա քաղաքական կյանքում հիմնական քաղաքական կառույց-

անոր մեծ ազդեցությունն են ստացում նախքան ստացվածական խնեերը, ազատյալ ժամկետներով դատաւարները, կրօնական և մասնագիտական խմբերը և առանձին անհատները: Արա հետ միասին կազմելու հջանակութուն ունի նաև ան սոցիալական պայմաններ ուսումնասիրությունը, որոնքում ընթանում են քաղաքական սուրյեկտների գոտուներությունը: Քաղաքական կյանքի շարժազանությունը արտահայտվում է նաև նրանով, որ ան ընկն ու միայն ուսմակարգային ազգային հիմքային կուսակցական, այլ նաև անտնտանյան շարժանիչներ: Այդ է թերևս պատճառը, որ քաղաքական հետապոտնությունները մեջ գնալով այլեւի մեծ տեղ է հատկացնում անհատապետապրուն օրինադարձությունների ուսումնասիրությանը:

Մասնամակարդ հասարակության մեջ հաստատվում է շուրջ քաղաքացիների, կրանց քաղաքական իրապունքների և ազատությունների հավասարություն: անհիմնաբար ամազոնում է անհատի որպես ինչպիսի օրինակի նկատմամբ պետության որպայատություններն սահմանափակում: Անհատը անտիմանարար կերպով է անտիմ քաղաքական սուրյեկտի, քաղաքական կյանքի գործուն մասնակցի: Այդ սուրյեկտությունները ուսշի անելով, քաղաքագիտության ուսմար պարնորագույն խնդր է դառնում քաղաքական գործընթացներին մարդկանց ապորդ մասնակցություն շարժաորքների ուսումնասիրությունը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անանին մարդկանց անտիմ քաղաքական գործունեության սղոր հիմնական ապոյաններնց են:

ա/ անհատի սոցիալական պառակիմանը, քաղաքական գործընթացներին մասնակցելու համար նրա կուրական ինտուամորությունները և ազատ մասնակց առկայությունը:

բ/ անհատի քաղաքական գրտակցության և քաղաքական կուրտորայի մակարակը, ըոր թույլ է տալիս նրան քաղաքական կյանքի մասին իրանյան սղորկեության ունենալ:

գ/ անհատի որոշակի քաղաքական գործողման և քաղաքական վարքագծի առայտությունը, քնտրական գործունեությունը որսնորելու կարողությունը ու ընդունակությունը, ինչպես նաև համագառտայան կամաին համակարգները:

Վարդկանց քաղաքական ապորդություն մակարդակը, անպոյն նրա անտնտանյան հատկանիչներնց, քարծրանում է այն մասնակց, երբ հաստատությունայան քաղաքական կյանքում հաստատվում են նպատուամոր պայմաններ:

Ի օրնասրական դաշակի ստեղծումը, որը ոչ միայն չի աղպելում քաղաքացիների ապորդության գրտաորմանը, այլև խրախուսում է այն որը հիմնականում պարմունազորում է քաղաքական, տնտեսական, կուսմական գործունակի իմամաարդր ապպությունը: Այսինքն այնպիսի հարսերություններն իմամակարդր առայությունը, որոնց մարդուն թույլ են տալիս ընտրել և ընտրվել, իննե գորաձատե և սնհանկատե, ուննալ համոզմունքներ, գրդուամարելու ազատարտաակայելու իրապունց և այլն:

ն/ մարդկանց կենսամակարդալու մաստոպվածության անհրաձեշտ ապորմանը, ինչպես նրտանակ, այնպես էլ ողքեր առումով, և քաղաքական գործունեությանը զատելելու համար գրե կվագագրուն ազատ մասնակց:

Կաթված վերը կշպած գործունեների անարության անտիմանց, հասարակության մեջ ձևակորում է որան համագառտայան քաղաքական գրտակցության և վարքագծի գրսկուման անտիմանե, որոնց ազդում են քաղաքական կյանքի վրա նրան հազորդելով որոշակի ընելլը և ողքվածություն:

Վարդկանց քաղաքական վարքագծի գրսկորման հիմնական տեսակները ձևակորում են նրանց անտնտանյան հատկանիչները և սոցիալ-քաղաքական պայմանների ազդեցության տակ, ինչի պատճառով էլ մենք հաստատություն մեջ հանդրում ենք տարոծու տեսակի անհատներ տիմեթի: Դրանց հիմնականում կարելի է բաձանել երեք հիմնական տիմեթի:

1. անհատի ապեղի սիմ, որը քաղաքական կյանքին իրական շարագորդի մասնակցություն է ունենում: Դասարակության մեջ որքան շատ է նման սրպի անհատները քանակը, այնքան հաստատության զարգացում և առայընթացի հնառավորությունները մեծ են:

2. անհատի ոչ ապորդ, կամ դիտորդ կցվածոց սնտաունների սիմ, որոնց հասարակության քաղաքական գործընթացներին մասնակցում են ոնակցդնը, այն էլ՝ քաղաքական հիմնական իրապարմությունների մասնակց:

3. անհատի ապաքաղաքական սիմ, երբ մարդը անտաղլեր է քաղաքական գործընթացներին նկատմամբ, չի մասնակցում որանց: Մարդարար անհատների աղպլիս սիմը գերակայում են ոչ մորակրդավարման, ամրորպատիական և ընակալեություն սիմը քաղաքական ռեծիմներում, որոնք ոչ միայն չի իրանտավում քաղաքական կյանքին մարդկանց մասնակցությունը, այլև աղպելում է երեմն էլ՝ դաձան մեթորներով:

Մակալն քաղաքական կյանքին մարդիկ մասնակցում են ոչ միայն որպես անհատներ, այլև, որպես այս կամ այն սոցիալական խմոր, քաղաքական կուսակցության անդամ, որոնց մեակորում է տնտեսական, քաղաքական, ազգային, մասնագիտական և այլ ընդհանուր շահեր: Անտի քաղաքական կյանքը որակնակցում է ոչ միայն անհատական, այլև անելի քարծր մակարակով, որոնք իրականացվում են սոցիալական խմորերի, դասակարգելի, կուսակցությունների, մասնագիտական և կրոնական հանտոյքների շարունակնց այն ուձերն են քաղաքականությանը հաղորդում ազգային, դասակարգային կամ կրոնական ընելլը: Միակորպելով, մարդին անելի աղպլուկավա քաղաքական գործունեություն են ծակում և անելի մեծ քաղաքական ինդիորներ են կարողանում լուծել, քանի որ այդ ներպ տննց անելը արդյունակելու են սզդում իշխանության և պետության վրա: Իրենց նառտանեթին հասնելու համար այդ հանրությունը օքտագործում են մի շարք մեթորելու և միոցներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները:

- ընտրական գործընթացների ընթացքում քաղաքական ուձերը իրենց բարորդներ միոցով ազդում են պետական իշխանության մասոյնները ձևակորման վրա: Դեմոկրատական երկրներում ընտ-

րությունները բացառիկ նշանակություն ունեն հասարակության քաղաքական կյանքի համար, որի պատճառով տարբեր սոցիալական ուժերի միջև պայքարը բնականաբար սուր բնույթ է կրում.

- կարևորագույն միջոց է մամուլը, որը տարբեր միջոցների օգտագործմամբ կարողանում է հասարակական կարծիք ձևավորել, ինչը քաղաքական պայքարում հարթամակի հիմնական գրավականներն է:
- տարբեր լոբբիստական խմբերի միջոցով իշխանության մարմինների վրա ճնշումը, ինչը երբեմն իրականացվում է ոչ միայն թուլատրելի մեթոդներով, ասենք՝ խորհրդարանում սուր քննադատություններ կազմակերպելու միջոցով, այլև ոչ թուլատրելի միջոցներով, ինչպես օրինակ, ահաբեկումը, շանտաժը, քաղաքական ապստամբությունը և այլն.
- տարբեր տեսակի զանգվածային միջոցառումների իրականացման ճանապարհով, սկսած միտինգներից, ցույցերից, միևնույն զինված ապստամբությունը:

Քաղաքական ուժերի գործունեությունը սովորաբար անձնավորվում է կոնկրետ շին թե՛ շատ ազդեցիկ լիցերների կերպարանքով, որոնք առաջ են քաշվում այս կամ այն քաղաքական ուժի կողմից և դառնում են նրա քաղաքական գործունեության բնույթը մեծ ազդեցություն է թողնում հասարակության քաղաքական կյանքի վրա, որը կարող է ընթանալ ինչպես զարգացման և առաջընթացի ճանապարհով, այնպես էլ քայքայման ու կործանման տանել հասարակությունը: Դա տեղի է ունենում հատկապես այն ժամանակ, երբ քաղաքական գործիչները նախընտրական պայքարի ժամանակ քաղում խոստումներ են տալիս իրենց ընտրողներին, և նրանց աջակցությամբ իշխանության գալով՝ հրաժարվում են իրենց խոստումները կատարել, և իշխանությունը սկսում են օգտագործել իրենց անհատական կամ խմբի նեղ շահերի պաշտպանության համար: Դրա հետևանքով իրականացնում են այնպիսի քաղաքականություն, որը քայքայում է հասարակության տնտեսական և սոցիալական ոլորտները, ծաղկում է կամայականությունն ու կաշառակերությունը, ծնվում է հալածանք ու անհանդուրժողականություն այլ քաղաքական ուժերի նկատմամբ, հասարակության մեջ ուժեղանում է կառավարման բռնի մեթոդների կիրառումը:

3. *Գետնության և հասարակության փոխհարաբերությունների հիմնական ձևերը*

Հասարակության քաղաքական կյանքի բազմաթիվ արատների հարթահարման կարևորագույն պայմանը կապված է պետության և հասարակության փոխհարաբերությունների հարցի կարգավորման հետ: Հասարակության վրա ազդելու հզոր միջոցների տեր լինելով, պետությունը կարող է լու-

ծել ոչ միայն առաջընթացի խմբիներ և հասարակությունը առաջ մղել զարգացման ճանապարհով, այլև իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը քայքայում ու կործանում է հասարակությունը: Այդպիսի օրինակներ սկսած հին աշխարհից մինչև մեր օրերը բազմաթիվ են և պատմությունը դրա վկան է:

Մեր ժամանակներում քաղաքագիտության հիմնական խնդիրներից մեկը պարզել և գտնելն է այն պատասխանը, թե պետության և քաղաքացիական հասարակության ինչպիսի փոխհարաբերությունների համակարգի ձևավորման շնորհիվ է հնարավոր ապահովել հասարակության քաղաքական կյանքի այնպիսի կազմակերպում, որը ապահովի հասարակության զարգացումն ու առաջընթացը, զերծ պահելով նրան հետընթացից, քայքայումից, հակասությունների և ճգնաժամերի սուր դրսևորումներից և այլն: Այլ կերպ ասած՝ գտնել պետության և հասարակության փոխհարաբերությունների ձևավորման այն սկզբունքը, որը թույլ կտա հասարակության ներդաշնակ զարգացում:

Հասարակության զարգացմանը զուգընթաց որքանով փոխվել են հասարակության տնտեսական, սոցիալական, իրավական, քաղաքական համակարգերը, այնքանով փոխվել և զարգացել են նաև պետության և նրա քաղաքացիների միջև եղած փոխհարաբերությունների բնույթն ու բովանդակությունը:

Խոսելով իդեալական պետության մասին, Պլատոնը նկատի ուներ այնպիսի պետություն, որտեղ պետության բարոյությունը վեր էր կանգնած անհատների բարոյությունից, որտեղ քաղաքացիները անշահախնդիր ծառայում էին հասարակությանը և նույնիսկ պատրաստ էին իրենց կյանքը տալու նրա համար:

Ինչպես տեսնում ենք, այստեղ պետության և քաղաքացիների փոխհարաբերության հարց չկա, դրանք նույնացված են: Դա հին աշխարհի գնորդ գիծն էր:

Գրեթե ոչինչ չփոխվեց միջնադարում: Այստեղ էլ պետության և քաղաքացիների առանձնացում չկա, որովհետև նախ չկար քաղաքացիական հասարակություն: Դետաքար պետություն-քաղաքացիական հասարակություն փոխհարաբերությունները ծագում են այն ժամանակ, երբ սկսվում է ձևավորվել քաղաքացիական հասարակությունը, որը ըստ երևույթին, նախ և առաջ պայմանավորված է մասնավոր սեփականատիրական հարաբերությունների հաստատման, պետության կողմից մասնավոր սեփականատիրոջ իրավունքների ճանաչման հետ: Սակայն մասնավոր սեփականատիրական իրավունքը, ինչպես և ուրիշ իրավունքներ, բերում են ոչ միայն դրական, այլև քացասական արդյունքներ: Դրանք տարանջատում են մարդկանց, հակադրում իրար, օտարում մեկը մյուսից, դրանով իսկ թուլացնելով պետությունը և հասարակության ամբողջությունը: Դա է թերևս պատճառը, որ մասնավոր սեփականատիրական հարաբերությունների հաստատման անցած ամբողջ ժամանակաշրջանում փորձ է արվում անընդհատ կատարելագործելու հա-

սարակական հարաբերությունների բնույթը, պետության և հասարակության փոխհարաբերությունների սկզբունքները, հասնել այդ բացասական դրսևորումների վերացմանը, հասարակության մեջ պետության և քաղաքացիների միջև փոխհարաբերությունների ներդաշնակմանը: Այսօր ընդունված է, որ պետության և քաղաքացիական հասարակության միջև փոխհարաբերությունները հասարակության քաղաքական կյանքի բնորոշման հիմնական չափանիշն է: Ինչպես պետությունը, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպություններն իրենց գործառույթների սահմաններն ունեն, որոնք միջև գոյություն ունի որոշակի դրական հարաբերությունների մակարդակ, ինչը սակայն, պայմանավորված է կոնկրետ երկրի զարգացման պատմական պայմաններով:

Գոյություն ունեցող ժամանակակից հասարակական համակարգերը կարելի է բաժանել երկու հիմնական տեսակների, որոնք միջև գոյություն ունեն միջանկյալ անցումային տարբեր ձևեր:

Առաջին տեսակը ոչ դեմոկրատական, հիմնականում ամբողջատիրական հասարակական հարաբերությունների համակարգն է, որին բնորոշ է քաղաքացիական հասարակության վրա գոյություն ունեցող քաղաքական համակարգի լրիվ գերիշխանությունը: Այս դեպքում պետությունը իշխում է հասարակության տնտեսական, քաղաքական, տեղական, անձնական, ընտանեկան հարաբերությունների ողջ համակարգի վրա և բավականին խիստ մեթոդներով է կարգավորում դրանք: Այդպիսի համակարգերի բնորոշ գիծը միատիպ մտածելակերպն է: Եվ որպես կանոն այստեղ մեծ զարգացում է ապրում սովետային տնտեսությունը, աճում են սովետային կառուցվածքները, կազմակերպված հանցագործությունները և այլն: Արդյունքը լինում է այն, որ այդ համակարգը անընդունակ է դառնում ապահովել հասարակության ներդաշնակ զարգացումը, տնտեսության աճը, ծնում է ճգնաժամային երևույթներ, հասարակությանը ղեկով քայքայման վիճակի մեջ:

Երկրորդ տեսակը ժողովրդավարական համակարգն է, որի դեպքում քաղաքական իշխանության ազդեցության սահմանները սահմանափակված են, իսկ քաղաքացիական հասարակության դերը հասարակական քաղաքական կյանքում նշանակալից է: Այս համակարգում տնտեսությունը հենվում է սեփականության բազմազան ձևերի վրա: Քաղաքական կյանքում առկա է բազմակուսակցական համակարգ, բազմակարծություն և զարգացման ազատություն: Հասարակական կյանքի բոլոր բնագավառներում տիրում է ազատ մրցակցություն, որը հասարակության զարգացման հիմնական գրավականներից մեկն է: Այս պարագայում պետության հիմնական խնդիրն է դառնում այդ հարաբերությունների կարգավորման երաշխավորումը: Իհարկե, այս սոցիալ-քաղաքական համակարգն էլ դեռևս զերծ չէ թերություններից և կատարելագործման երկար ճանապարհի ունի անցնելու: Այս համակարգում դեռևս հատկապես ենք ուժի իշխանության առկայությանը, գործազրկությանը, աղքատությանը և այլն, և փորձ է արվում դրանք հար-

թահարել սրցիալական պաշտպանության համակարգի ստեղծման և կիրառման ճանապարհով:

Ինչպես տեսնում ենք, նշված համակարգերի երկու տեսակներն էլ ունեն ինչպես իրենց դրական, այնպես էլ բացասական կողմերը: Դա գուցե և բնական է, քանզի ինչպես մարդաբան, այնպես էլ հասարակության սոցիալիզացիայի գործընթացը դեռ երկար ճանապարհի ունի անցնելու: Ինչևն կատարության հասնելը: Սակայն բացասական դրսևորումների առանձնահատկությունների քաջահայտումը թույլ է տալիս մշակելու քաղաքական կյանքի ձևավորման այնպիսի տարրերակ, որը առավելագույնս կհամապատասխանի տվյալ երկրի տնտեսական և կուլտուրական պայմաններին:

Քաղաքացիների և իշխանության ինստիտուտների փոխհարաբերությունների վրա կարող է ազդեցություն ունենալ իշխանության մարմիններում կատարած փոփոխությունները, առանց իշխանական համակարգը փոխելու: Օրինակ՝ կառավարության, ազգային ժողովի կազմի փոփոխությունը, որը կարող է քաղաքական գործընթացների ուղղությունն ու բնույթը փոխել, ինչպես դրական, այնպես էլ բացասական իմաստով:

Այսօր աշխարհում նկատվում է ժողովրդավարացման գործընթացների ծավալման և հաստատման տենդենց, որը նպաստում է զանգվածների քաղաքական ակտիվության աճին, ընդարձակվում են քաղաքացիների քաղաքական իրավունքները, մեծանում է կառավարման գործընթացներին մասնակիցների քանակը: Եվ որքան զարգանում և կատարելագործվում է ժողովրդավարությունը, այնքան ավելի թափանցիկ ու առաջադիմական է դառնում պետության և քաղաքացիների փոխհարաբերությունների բնույթը: Քաղաքացիական հասարակության մեջ գնալով ավելի է սահմանափակվում անհատի գործերին պետության միջամտությունը, թուլանում է պետության կարևորագույն հատկանիշներից մեկի՝ պարտադրականության ուժը, մեծանում է քաղաքացիների կողմից իշխանության մարմինների վրա ազդելու հնարավորությունը, հասարակության կյանքի կառավարմանը մասնակցելու միջոցով:

4. Քաղաքական կյանքի կազմակերպման հիմնական սկզբունքներն ու նորմերը

Քաղաքական կյանքի կազմակերպման վրա մեծ ազդեցություն ունի տվյալ պահին հասարակության մեջ հաստատված հասարակական հարաբերությունների ողջ համակարգը: Ձանգի քաղաքական կյանքի կազմակերպման ընթացքում հնարավոր է իրականացնել միայն այնպիսի նորմեր ու սկզբունքներ, որոնք համապատասխանում են իշխող հասարակական հարաբերությունների բնույթին: Բոնապետական քաղաքական ռեժիմների պայմաններում, անկախ նրանց դրսևորման ձևերից՝ միապետություն, օլիգարխիա, թե ամբողջատիրություն, հասարակության քաղաքական կյանքի կազմակերպումը հենվում է մեկ հիմնական սկզբունքի վրա: Դա իշխանության վերին ժապկերից սկսած մինչև ստորին ժապկերում ողջ հասարակու-

թյանը իշխանավորների կամքի պարտադրումն է, որը բարձրացված է պետության քաղաքականության, ասել է թե օրենքի աստիճանի: Այս պարագայում հասարակության քաղաքական կյանքի կազմակերպումը արտոնյալ խաչի, տվյալ դեպքում իշխանավորների, բացարձակ մենաշնորհն է, և երկրի բնակչությունը ոչ միայն մասնակից չէ քաղաքական կյանքի կազմակերպմանը, այլև կազմակերպված ձևով դրանից մեկուսացված է: Բնապետության պայմաններում քաղաքական կյանքի կազմակերպումը իրականացվում է միազին վերից վար պարտադրանքի կիրառման սկզբունքով: Եվ իրականացվում է հիերարխիային բնորոշ կառավարման սկզբունքը, որտեղ իշխանության ամեն մի օղակ իրենից ներքև կանգնածի նկատմամբ անսահմանափակ իշխանություն ունի, որն է դեպ, ամրագրված է օրենքով: Դա տևում է այնքան ժամանակ, քանի դեռ հասարակության մեջ չի հասունացել տիրող քաղաքական համակարգը փոխելու անհրաժեշտությունը և քանի դեռ այն չի դարձել բնակչության մեծամասնության գրտակցված պահանջ-մուկ:

Պատմական զարգացման այս ճանապարհով է անցել և անցնում հասարակությունը, և դեռ երկար անցնելից ճանապարհի ունի, մինչ քաղաքական կյանքի կազմակերպման ժողովրդավարական սկզբունքների և նորմերի իրականացման կատարյալ աստիճանը:

Հասարակության քաղաքական կյանքը անընդհատ զարգանում և կատարելագործվում է Հստակ ուղևագծվում է հասարակության մեջ ժողովրդավարական սկզբունքների հաստատման հեռանկարները: Համաշխարհային քաղաքական գործընթացներին ուշադիր հետևելով պարզ երևում է, որ երկրների ճնշող մեծամասնությունը քոնել են ժողովրդավարացման ուղին: Այս ամբողջը հասարակության քաղաքական կյանքի կազմակերպման նոր մոտեցումներ է պահանջում, նրա սուբյեկտների միջև փոխհարաբերությունների նոր սկզբունքներ են առաջացնում:

Ժողովրդավարության սկզբունքներով կազմակերպված հասարակության մեջ քաղաքական կյանքին բնակչության մասնակցությունը գնալով ավելի ակտիվ ու նշանակալից է դառնում: Քաղաքական գործողության ձևերը դառնում են զանգվածային, դրսևորվելով նախընտրական պայքարի, միտինգների, ցույցերի, քաղաքացիական անհնազանդության, գործադուլների և այլ միջոցներով:

Քաղաքական գործողությունները կարելի է տարբերակել նրանց կազմակերպվածության աստիճանով: Դրանք կարող են լինել և բարձր աստիճանի կազմակերպված, և թույլ կազմակերպված, և տարբերային: Երկարատև պատմական պրոցեսի ընթացքում մշակվել են քաղաքական կյանքի կազմակերպման որոշակի նորմեր, սկզբունքներ և ձևեր, որոնք քաղաքական կյանքին հաղորդում են որոշակի կայունություն և հետագա առաջընթացի հնարավորություն: Այդ նորմերից և սկզբունքներից կարևորներն են անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, քաղաքական իրավունքները, որը յուրաքանչյուր քաղաքացու տալիս է ընտրելու և ընտրվելու

իրավունք, քաղաքական համոզմունքներ ունենալու, քաղաքական միավորման անդամ լինելու ազատություն:

Տնտեսության բնագավառում մարդուն իրավունք է տրվում լինել սեփականատեր, ձեռներեց, ունենա ազատ և ապահով աշխատանքի իրավունք:

Սոցիալական ոլորտում հաստատվում է արժանապատիվ կենսամակարդակի, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, հանգստի ու այլնի իրավունք: Հոգևոր ոլորտում ընդունվում է մարդու ազատ մտածողության, համոզմունքների, խղճի, խոսքի, դավանանքի, ստեղծագործության, մտալի սեփականության պաշտպանության իրավունքը: Իհարկե, նման իրավունքների և ազատությունների արձանագրությունը օրենսդրական համակարգում դեռևս չի նշանակում, թե այդ նորմերն ու սկզբունքները ինքնաբերաբար կարող են գործել և հեշտությամբ իրականացվել հասարակական կյանքում:

Կարելի է նշել, որ հասարակության քաղաքական կյանքի կազմակերպման աստիճանը ուղղակիորեն կախված է վերը նշված նորմերը և սկզբունքները հասարակության մեջ իրականացնելու աստիճանից: Ասել է թե, այդ սկզբունքների իրականացման աստիճանը կարող է մեզ իրական պատկերացում տալ հասարակության ժողովրդավարացման աստիճանի մասին:

Այսօր բավականին հստակ ուղղագծվում է քաղաքական կյանքի կատարելագործման հիմնական ուղղությունները, նրա հեռանկարները:

Քաղաքական համակարգի միջուկ հանդիսացող պետության կատարելագործման հիմնական ուղղությունը ժողովրդավարական իրավական պետությունն է, որի տակ հասկացվում է պետական կառուցվածքի բարձրագույն ձև: Դա պետության այնպիսի ձև է, որն ապահովում է իր քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրականացումը, որի իշխանության մարմինները, հատկապես դատարանն ու ոստիկանությունը հստակ պաշտպանում են եղած օրենքները: Դա պետական իշխանությունն է, որն ուղղակիորեն չի խանգարում և չի միջամտում քաղաքացիական հասարակության կյանքին, քաղաքացիների և նրանց կազմակերպությունների գործերին:

Իրավապես պետությունը կարող է զարգանալ միայն քազմակարծության, քազմակուսակցական համակարգի առկայության պայմաններում, որի ընթացքում տարբեր սոցիալական խավերի շահերը առավել լրիվ է պաշտպանվում: Առանց քազմակարծության ժամանակակից ժողովրդավարական սկզբունքների զարգացում լինել չի կարող: Անշուշտ դա նույնպես ինքնաբերաբար տեղի չի ունենում: Դա կախված է իշխանության պառլամենտական գործառնությունների մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտության հետ, քաղաքական ուժերի և շարժումների համաձայնեցված գործունեության հետ, որի ընթացքում ձևավորվում են պառլամենտական տիպի կուսակցությունները, որոնց գործունեության բնույթից է կախված քաղաքական կյանքի կազմակերպումը ժողովրդավարական սկզբունքների և նորմերի հիման վրա:

Ժողովրդավարական սկզբունքներով և նորմերով քաղաքական կյանքի կազմակերպումը արմատապես վերափոխում է հասարակության ողջ քաղաքական համակարգը՝ հիստ կապված լինելով հասարակության քաղաքական համակարգի հետ, նրան գուզահեռ գաղափարում և կատարելագործվում է նաև քաղաքացիական հասարակությունը՝ Այն ավելի ու ավելի է դառնում ինքնակառավարվող և ինքնազարգացող համակարգ, դառնալով պետության հակակշիռ, որում գործում են անկախ տնտեսական, ազգային, կրոնական և այլ կազմակերպություններ՝ քաղաքացիական հասարակության գործառնության անհրաժեշտ պայմանը անհատի սոցիալական, մտավոր, հոգեբանական զարգացման բարձր մակարդակն է, նրա լրիվ ինքնաբերականությունը և ներքին ազատությունը, քաղաքական կյանքին ակտիվ մասնակցության գիտակցումը:

5. քաղաքական կյանքի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետության այսօրվա քաղաքական կյանքը ձևավորվել է 20-րդ դարի 80-ական թվականների վերջերին տեղի ունեցած խոշորամասշտաբ քաղաքական իրադարձությունների ազդեցության տակ, որոնք տեղի էին ունենում ինչպես ԽՍՀՄ ողջ տարածքում, այնպես էլ բուն Հայաստանում: Ուստի Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքի մասին առավել լրիվ պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է քննարկել մի քանի կարևոր գործոններ և գործընթացներ, որոնց ազդեցությունը առավել նշանակալից են եղել հասարակական հարաբերությունների նոր համակարգի ձևավորման գործում: Դրանցից կարելի է առանձնացնել.

ա) 1998թ. սկզբներից սկսված ազգային զարթոնքը, որը հայ ժողովրդին միավորել էր Արցախից Հայաստանին վերամիավորելու առանձնատիրության հարցի շուրջ: Այն արտաբնական, կարծես թե գուտ ազգային քնույթ ունեցող, քանզի հայ ժողովուրդը ձգտում էր վերականգնել իր ուղևահարված իրավունքները: Ասկայն իր ներքին էությանը այդ համագգային շարժումը իր սուր ծայրով ուղղված էր ԽՍՀՄ կոմունիստական վարչակարգի վարած ազգային քաղաքականության դեմ, եվ, քանի որ տարբեր պահանջներով ազգային շարժումներ տեղի էին ունենում ԽՍՀՄ գրեթե բոլոր հանրապետություններում, ապա կարելի է պնդել, որ այդ շարժումները, գուցե իրենց կամքից անկախ, ներառվել են սառը պատերազմի մեջ և վերածվել էին ԽՍՀՄ փլուզման կարևոր գործոնի: Այս հանգամանքը չափազանց լայն տարածքում սկիզբ էր առել քաղաքական մեծ քարսի ժամանակաշրջանը, ինչը իր խոր հետքը թողեց Հայաստանի քաղաքական կյանքի ձևավորման վրա: Բ) Երկրաշարժը իր ավերածություններով և հազարավոր զոհերով ոչ միայն սոցիալական ծանր կացություն առաջացրեց հանրապետության գրեթե մեկ

երրորդ մասում, այլև բարոյական ու հոգեբանական ծանր հարված հասցրեց ամբողջ հայ ժողովրդին, երկրում խորացնելով արդեն սկսված քառը:

գ) 1988թ. սեպտեմբերյան դեպքերից հետո Արցախում ու Հայաստանը, վիստորեն, գտնվում էին չխայտաբարված պատերազմի վիճակում, որը 1990 թվականի սկզբից դարձավ քաղաքային: Անգործության մատնված ԽՍՀՄ քաղաքական համակարգը և նրա ուժային կառույցները իրենց որոշակի շահեր հետապնդող գործունեությամբ (զենքի վաճառք, սերտաձուլ հանցավոր աշխարհին, կաշառվածություն և այլն), այլևս անկարող էր վերահսկել տեղի ունեցող գործընթացների վրա, ինչը ավելի էր խորացնում քառը և քաղաքական անկայունությունը: Դրանց հետևանքով Հայաստանը վերածվել էր շրջափակված և մեկուսացված կղզյակի: Գլուխ էր բարձացրել և արագընթաց զարգանում էր ապօրինությունը, անօրինականությունը, հանցագործությունը, անպատեղիությունը: Իրականությունը դարձել էր ոճրածին: Հասարակության մեջ իջնում էր ուժը, բուսությունը, իջնանավորի կամքը, շահը, կաշառքն ու իրականավորությունը: Եվ դրանք նույնպես իրենց քաղաքական ազդեցությունը թողեցին հասարակության քաղաքական կյանքի վրա:

դ) Եվ վերջապես, ԽՍՀՄ փլուզումը, որով ավարտվում էր 40-ամյա սառը պատերազմ, այս երևույթը ցանկանում ենք ավելի մանրամասն քննարկել՝ ելնելով հետևյալ իրողություններից: Առաջ, այն պարզ պատճառով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո անկախացած Հայաստանի քաղաքական կյանքի ձևավորման վրա այն ունեցավ իր վճռորոշ ազդեցությունը, քանզի հասարակական հարաբերությունները ձևավորվում էին հենց այդ ժամանակում տեղի ունեցող քաղաքական զարգացումների ազդեցության տակ: Երկրորդ, ԽՍՀՄ-ում այդ ժամանակ տեղի ունեցող գրեթե բոլոր քաղաքական զարգացումներն ու գործընթացները, ուղղված լինելով կոմունիստական վարչակարգի դեմ, դրանով իսկ մասն էին կազմում սառը պատերազմի:

2-րդ Համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում, Ասիայի մի շարք երկրներում (Արևելյան Գերմանիա, Լեհաստան, Հունգարիա, Չեխոսլովակիա, Ռումինիա, Հարավսլավիա, Չինաստան, Գյուսիսային Կորեա, Վիետնամ և այլն) ԽՍՀՄ անսիջական միջամտությամբ և հսկողությամբ հաստատվեցին սոցիալիստական կարգեր: Աոցիալիզմը դարձավ Համաշխարհային համակարգ: Մի կողմից, պատերազմում տարած հաղթանակը, մյուս կողմից, սոցիալիզմի հաղթարշավը, ոգևորել էր ստալինյան «զվարդիայի» գաղափարախոսներին, որոնք թմրկահարելով ԽՍՀՄ անպարտելիությունը, տեսական ընդհանրացումն էին անում առ այն, որ առաջին համաշխարհային պատերազմը ծնեց հորիորդային միություն, երկրորդ համաշխարհային պատերազմը ծնեց սոցիալիզմի համաշխարհային համակարգ, հետևաբար, երրորդ համաշխարհային պատերազմը վերջ կտա կապիտալիզմին և սոցիալիզմը կհաստատվի ամբողջ աշխարհում: Դժվար չէ նկատել, որ այդպիսի մեկնաբանությունը, վատտորեն, մարտահրավեր էր նետված կապիտալիզմի աշխարհին, ինչին նրանք չարձագանքել չէին կարող: Այսպես, Նախկին դաշնակիցները (ԽՍՀՄ, Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ), որոնք համատեղ պայքարում

եին ֆաշիզմի դեմ, վերածվեցին ռյուսերիմ թշնամիների, ԱՄՆ-Անգլիա-Ֆրանսիա, Ռետագայում նաև այլ երկրներ, համախմբեցին իրենց ուժերը համաշխարհային կոմունիստական վտանգի դեմ պայքարելու համար, հիմնական նպատակ դարձնելով ԽՍՀՄ կործանումը, դրա համար մշակելով հատուկ դոկտրինա, ինչը սկսվեց իրականացվել 50-ական թվականների սկզբներից և ձեռք բերեց սառը պատերազմ անվանումը:

Այդ դոկտրինայի հիմնական եռությունը հետևյալում էր. ԽՍՀՄ-ի դեմ զենքով պայքարելը, պատերազմելը անիմաստ է: Նրա դեմ պետք է պայքարել հասարակական կյանքի բոլոր ոլորտներում սուր և անզիջում մրցակցությամբ և ռասնել նրան, որ ԽՍՀՄ-ը ներսից քայքայվի: Այդ մրցակցությունը որսևորվում էր գաղափարական սուր առճակատումների, ռազմական մրցակազմի, տնտեսական, քաղաքական ու սոցիալական մրցության ձևով:

ԱՄՆ, որ գլխավորում էր այդ պայքարը, ի տարբերություն ԽՍՀՄ-ի, գտնվում էր չափազանց շահագետ վիճակում: Նրա տարածքում պատերազմական գործողություններ չէին եղել, չունեի ավերված քաղաքներ ու տնտեսություն, ինչպես ԽՍՀՄ-ն էր, պատերազմից դուրս էր եկել չափազանց հարուստացած, ռաստի այդ մրցակցության մեջ վստահ էր իր հաղթանակի մեջ:

ԽՍՀՄ-ը պատերազմից հետո ժառանգել էր հազարավոր ավերված քաղաքներ, ավերված տնտեսություն, տվել էր միլիոնավոր զոհեր և միակ աշխատող կենսունակ ճյուղը ռազմական արդյունաբերությունն էր: Եթե դրան էլ գումարեց այն, որ իրենց իշխանության բոլոր տարիների ընթացքում կոմունիստական վարչակարգը ամեն ինչ արել էր երկրի ներսում ժողովրդի զգալի մասի մոտ անվստահություն, դժգոհություն, արհամարհանք ու ցատում առաջացնելու համար (թունադատություններ, քաղաքական հալածանք, մտավորականության ջարդ, գերի ընկածների ացտորում և այլն), ապա պարզ կդառնա, թե որքան ճիշտ էին հաշվարկել արևմտյան տեսաբանները, առաջ քաշելով սառը պատերազմի դոկտրինան:

Սառը պատերազմը պետք է ավարտվեր ամպայման համակարգերից մեկի կործանումով և այդ մեկը եղավ ԽՍՀՄ-ը, քանզի նա իր գոյության ողջ ընթացքում բոլոր նախապայմանները ստեղծել էր իր կործանումը ապահովելու համար: Իսկ երբ նախապայմանները հատուկացան և վերածվեցին իրական պայմանների, ԽՍՀՄ կործանումը դարձավ անխուսափելի: Այդ պայքարում ԽՍՀՄ-ը պարտվեց գրեթե բոլոր ճակատներում:

Կոմունիստական վարչակարգի կրած ամենամեծը պարտությունը գաղափարական թնազավառում էր, ինչն էլ կանխորոշեց նրա կործանումը: Դա է վկայում ԽՍՀՄ-ի տարածքում 80-ական թվականների վերջերին ակտիվ քաղաքական պայքարի դուրս ելած հակակոմունիստական և հանախորհրդային կազմակերպված ուժերի առկայությունը:

Տարիների ընթացքում ԽՍՀՄ հանրապետությունների մեծ մասում ձևավորվել էին հակակոմունիստական մարտական ջոկատներ, որոնցից յուրաքանչյուրը իր պայքարի տեղամասում դարձել էր արևմուտքի գաղափարա-

քաղաքական հարվածային ուժ ԽՍՀՄ տոտալիտար համակարգը կործանելու և երկրում ժողովրդավարական արժեքներ հաստատելու գործում:

Սիա մի այդպիսի քաղաքական ուժ էլ իշխանության եկավ Հայաստանում, անշուշտ վայելելով արևմտյան հզոր տերությունների ակտիվ աջակցությունը: Ի դեպ, արևմտյան տերությունները, հատկապես ԱՄՆ, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո շարունակեցին տնտեսական քաղաքական գաղափարական և քարոզական աջակցություն ցույց տալ անկախություն ձեռք բերած նախկին խորհրդային բոլոր հանրապետություններին, նրանցում շուկայական տնտեսության ժողովրդավարական հասարակություն կառուցելու գործում: Չէ որ արևմուտքի հիմնական նպատակը, ԽՍՀՄ կործանումից զատ, նաև այն վերականգնվելու քաջատուժն էր: Եվ շատ զարմանալի կլինեի, եթե ԽՍՀՄ-ի հետ պատերազմի (թեկուզ և սառը) վիճակում գտնվող արևմուտքը, առավել ևս ԱՄՆ, չօգտագործեին այդ հնարավորությունը, չօգտվեին այդ ուժերի ծառայությունից և չաջակցեին այդ ուժերին ԽՍՀՄ կործանելու և կոմունիստական վտանգից ազատվելու գործում, գուցեև մի քիչ ավելի վստահելով այդ ուժերին, քան անհրաժեշտ էր: Մրանք են այն հիմնական քաղաքական գործունեները, որոնց ազդեցության տակ ձևավորվեց Հայաստանի քաղաքական կյանքը, սկսած 1990 թ-ից:

Գրականություն

1. Գարությունյան Է. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ. էր. 2000թ.
2. Белов Г. А. Политология. Курс лекции. М. 1998
3. Ирхин Ю. В., Зотов В. Д., Зотова А. В. Политология. М. 1999
4. Панарин А. С. Политология. Учебник. М. 1999
5. Политология. Учебник. М. 1999
6. Политология. Курс лекции. под ред. А. А. Радугина. М. 1999
7. Современная сравнительная политология. Хрестоматия. М. 1997

Հասարակության քաղաքական համակարգը

1. «Քաղաքական համակարգ» հասկացության բնորոշումը

Ժամանակակից քաղաքագիտության կարևորագույն պրոբլեմներից մեկը հասարակության քաղաքական համակարգի ուսումնասիրությունն է: Այդ երևույթի ռետագոտությունը թույլ է տալիս հասարակության քաղաքական կյանքը դիտարկել որպես իրեն բնորոշ օրենքներ ու զարգացման առանձնահատկություններ ունեցող ամբողջական համակարգ, այն առանձնացնել հասարակության կյանքի մնացած քննարկումներից, միևնույն ժամանակ դրանց դիտելով սերտ փոխհարաբերությունների մեջ: Նրան բնորոշ օրենքների և առանձնահատկությունների ճանաչումը հնարավորություն է տալիս ավելի խորը ու լրիվ պատկերացում կազմել քաղաքականության մասին: Այն անհրաժեշտ տեսական հիմք է ստեղծում հասարակության կառավարման կատարելագործման և հետագա զարգացման ուղիների կանխատեսման համար:

Քաղաքական համակարգը կազմավորվում է բազում ենթահամակարգերից, կառույցներից ու գործընթացներից, և փոխհարաբերության մեջ է գտնվում այլ ենթահամակարգերի հետ, որոնցից կարևորներն են տնտեսական, սոցիալական, գաղափարական, մշակութային, իրավական ենթահամակարգերը: Քաղաքական համակարգերի սահմանները որոշվում են այն շրջանակներով, որոնցում տվյալ համակարգի որոշումները պարտադիր իրականացվում են:

Հասարակության քաղաքական համակարգը իրենից ներկայացնում է բարդ կազմավորում, որի միջոցով հասարակությունը մեզ է ներկայաձևում որպես քաղաքական իշխանությամբ կենտրոնացված կառավարումով միասնական օրգանիզմ, որում քաղաքական սուբյեկտները իշխանության իրականացման միջոցով իրագործում են իրենց առջև դրած խնդիրները: Քաղաքական համակարգը քաղաքականության սուբյեկտների փոխհարաբերությունների կոնկրետ պատմական ձև է, որի ընթացքում սուբյեկտների միջև ձևավորվում են տվյալ պատմական ժամանակաշրջանին բնորոշ քաղաքական հարաբերությունները և որոշում քաղաքական սուբյեկտների պետականորեն կարգավորվող գործունեության սահմանները:

Քաղաքական համակարգի նկատմամբ կիրառելով համակարգված մոտեցում, հնարավոր է լինում վերլուծության ենթարկել և ճշտել իրականության կրա քաղաքականության ազդեցության տարբեր միջոցները: Այն հնարավորություն է տալիս քաղաքականությունը ներկայացնել որպես սուբյեկտների վարքագծի և գործունեության համակարգ, ինչը պայմանավորված է իշխանության գործունակ, որի ուսումնասիրությունը հասարակության քաղաքական կյանքի ըմբռնման մեջ որոշիչ դեր է խաղում:

Ժամանակակից քաղաքական գրականության մեջ առկա են քաղաքական համակարգի երկու տասնյակից ավելի բնորոշումներ, որոնցից յուրա-

քանցյալը ելնում է որոշակի չափանիշներից: Նշենք, որ «քաղաքական համակարգ» հասկացությունը, որպես քաղաքագիտության կարևոր պրոբլեմ, քաղաքական տեսության մեջ խորությամբ ուսումնասիրելը սկսվել է XX դ. հիսունական թվականների սկզբներից ամերիկյան քաղաքագետներ Դ.Իստոնի և Զ.Ալմոնդի կողմից: Ըստ Դ.Իստոնի, քաղաքական համակարգը ինքնակարգավորվող և զարգացող օրգանիզմ է, որը կողմնորոշվում է արտաքինից եկող ազդակներով: Ըստ նրա, քաղաքական համակարգը ունի մուտք, որի շնորհիվ արտաքին ազդակները պահանջի կամ առաջարկի ձևով թափանցում են համակարգ և ազդելով նրա վրա, նրան համապատասխան գործունեության են մղում: Համակարգը ունի նաև ելք, որի շնորհիվ նա քաղաքական որոշումների և գործողությունների իրականացման միջոցով իրագործում է իր գործունեությունը:

Քաղաքական համակարգը բաց համակարգ է, ինչի պատճառով նա ենթարկվում է շրջակա տի միջավայրից իրասարակության այլ ենթահամակարգերից/ եկող բազում ազդեցությունների: Այդ ազդեցությունները իրենց բնույթով տարբեր են լինում, որոնցից յուրաքանչյուրը իր բնույթին համարժեք հակազդեցություն է առաջացնում: Երբ արտաքինից եկող ազդակները թույլ են, այդպես քաղաքական համակարգը բավարար տեղեկացված չի լինում համապատասխան գործունեություն ծավալելու համար: Եթե ազդեցությունը ուժեղ է, համակարգը ընդունում է համապատասխան որոշում: Այն կարող է միակողմանի լինել և միակողմանի որոշում ընդունել, ինչը կարող է հասարակության ապակայունացման գործուն լինել: Ազդեցությունը կարող է նաև չափազանց ուժեղ լինել, որը կարող է ապակողմնորոշել և ստիպել համակարգին սխալ որոշումներ ընդունել:

Զ.Ալմոնդը քաղաքական համակարգը բնորոշում է որպես, ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական փոխազդեցությունների և վարքագծերի բազմազանություն: Ըստ Ալմոնդի, ցանկացած քաղաքական համակարգ ունի իր սեփական կառուցվածքը և բազմազործառույթային է /բազմաֆունկցիոնալ է/: Այսինքն, համակարգի կարևորագույն առանձնահատկությունը բազմազործառույթային բնույթն է:

Բոլոր քաղաքական համակարգերն էլ իրականացնում են միևնույն ֆունկցիաները, ինչը պայմանավորված է պետության գործառնության շրջանակների իրավական հիմքերի ամրագրմամբ: Սակայն շատ ֆունկցիաներ տարբեր համակարգերում տարբեր ձևերով և դրսևորման միջոցներով մնում են անբաժանելի: Օրինակ, շատ երկրներում ընթացիկ քաղաքականությանը պաղամենտի միջամտությունը, նառավարության և նախագահի օրինատեղծ գործունեությունը և այլն: Ալմոնդը քաղաքական համակարգի վրա ազդող գործունեությունը նշանակալի դեր էր հատկացնում հոգեբանական, անհատական բնույթի ազդակներին, դրանք համարելով ներսից եկող ազդակներ:

Հասարակության քաղաքական համակարգը քաղաքական ինստիտուտների, հարաբերությունների, գործընթացների, հասարակական քաղաքական

թյանը, կամ մերժում են նրա կողմից: Այս տեսանկյունից ՉԼՄ-ները քաղաքական համակարգերի տարրերի համար ձեռք են բերում նրանց փոխհարաբերությունների կարգավորման նշանակություն:

Հասարակության քաղաքական համակարգի գաղափարն այնպիսին է, որ նրա տարրերը անխուսափելիորեն գտնվում են փոխադարձ կապի մեջ, իրարով փոխադարձանակված են: Այսպես, պետությունը, անշուշտ, իրականացնում է հասարակության կառավարման բոլոր կարևորագույն ֆունկցիաները: Սակայն այդ ֆունկցիաներից շատերը, չնայած այլ միջոցներով, իրականացնում են նաև այլ քաղաքական ինստիտուտներ: Օրինակ՝ սոցիալական, կրթամշակութային, սպորտային և այլ ֆունկցիաներ պետության հետ, զուգահեռաբար իրականացնում են այլ սոցիալական միավորումներ, ՉԼՄ-ներ, կազմակերպություններ և այլն, կամ քաղաքական կուսակցությունները իշխանության գալով՝ ռասարակության կառավարման պրոցեսում իրենց ծրագրերը իրականացնում են ինչպես իշխանության լծակների միջոցով, այնպես էլ իրենց կուսակցական ներկայացուցիչների միջոցով:

Քաղաքական համակարգի տարրերը կամ քաղաքական ինստիտուտների միջև փոխհարաբերությունները անփոփոխ մնալ չեն կարող: Քաղաքական համակարգի ներսում տեղաշարժերն ու զարգացումները փոխում են նրա տարրերի հնարավորություններն ու հարաբերությունները: Պրոչ տարրերը ուժեղանում են, մյուսները՝ թուլանում: Քաղաքական համակարգի ինստիտուտների միջև հարաբերակցության այդ փոփոխությունները կախված են մի շարք ինչպես առարկայական /օբյեկտիվ/, այնպես էլ ենթակայական /սուբյեկտիվ/ գործոններից: Եսկած թե հասարակության զարգացման սովյալ պահին քաղաքական ինստիտուտներից որն է իր գործունեությամբ առավել համապատասխանում հասարակության շահերին և ինչ չափով է կարողանում ազդել հասարակության քաղաքական համակարգում տեղի ունեցող գործընթացների վրա: Քաղաքական ինստիտուտների միջև հարաբերակցությունների փոփոխությունները, սովորաբար տեղի են ունենում իշխանափոխության ժամանակ, երբ իշխանության է գալիս նոր քաղաքական կուսակցություն, կամ քաղաքական ուժերի միավորում, եթե դրա շնորհիվ հասարակության կառավարման և նրա կենսագործունեության մեջ սկսվում են օգտագործվել նոր մոտեցումներ ու սկզբունքներ: Եթե այդ փոփոխությունների ընթացքում քաղաքական ինստիտուտների միջև հարաբերակցությունները չեն բարձրանում հակադրությունների և հակասության աստիճանի, ապա իշխանության եկած նոր քաղաքական ուժի համար նպատակադր պայմաններ է ստեղծվում չավազույն օգտագործելու իրեն տրված հնարավորությունը և ապահովելու հասարակության քաղաքական համակարգի ամբողջությունն ու ներդաշնակությունը և դրականորեն ազդելու հասարակության առաջընթացի վրա: Նշենք, որ քաղաքական համակարգի տարրերի միջև փոխհարաբերությունների բնույթը, նրանց միասնականության ապահովության աստիճանը, նրանց գործառնությունների ներդաշնակությունը, շատ քանակ կախված է քաղաքական իշխանության իրականացման ձևից, բնույթից, ուղղվա-

ծությունից և նպատակներից:

Քաղաքական համակարգի յուրաքանչյուր քաղաքիչ ունի իր հարաբերական ինքնարոպությունը, իրեն բնորոշ ֆունկցիաներն ու գործունեության շրջանակները: Սակայն նա կարող է գործառնել միայն համակարգի ներսում և նրա միջոցով: Քաղաքական համակարգից դուրս այդ տարրերը գոյություն ունենալ, առավել եւ գործառնել չեն կարող: Քաղաքական համակարգի և նրա տարրերի փոխհարաբերությունը մասի և ամբողջի փոխհարաբերություն է, որտեղ առանց մեկի, մյուսը չի կարող: Քաղաքական համակարգը այս պարագայում հանդես է գալիս որպես սոցիալական համահմարման միջոց, ինչի որ ունենալով թույլ լսալու, որ նրա տարրերի սոցիալական տարբերությունները քայքայիչ, տարալուծող ազդեցություն թողնեն հասարակության օրգանիզմի վրա: Քաղաքական համակարգը պետք է կարողանա ապահովել քաղաքական կյանցի տարբեր բաղադրիչների կայուն փոխկախվածությունը, առանց որի առաջանում է հասարակության հետընթացի, նրա ամբողջականության քայքայման և անկման վիճակ: Կայուն քաղաքական համակարգի պայմաններում նրա բոլոր ինստիտուտները համահմարմված ու միասնական են հակազդում այն բոլոր արտաքին ազդեցությունների վրա, որոնք միտում ունեն ապակայունացնելու և քայքայելու հասարակության ամբողջությունը: Այս դեպքում բոլոր տարրերը համահմարմում են իրենց ուժերը, հնարավորություններն ու կարողությունները իրագործելու այնպիսի քաղաքական խնդիրներ, որոնք շնորհիվ հնարավոր է լինում կանխել հասարակության քայքայմանն ուղղված դրսևորումները: Այլ պարագայում, այսինքն՝ անկայուն քաղաքական համակարգի դեպքում, որը սովորաբար արդյունք է նրա տարբեր ինստիտուտների միջև ծագած խորը հակասությունների, հակազդեցությունը միանշանակ, համատեղ լինել չի կարող: Ավելին, նրա որոշ քաղաքիչների ոչ կայունացնող գործունեության շնորհիվ հասարակության հետընթացը, հակասությունների խորացումը, քայքայումը դառնում է անխուսափելի: Այստեղ, անշուշտ, մեծ նշանակություն ունի, թե քաղաքական համակարգի տարրերը իրենց գործունեության ընթացքում ինչ բնույթի շահերով են կողմնորոշվում: Եթե քաղաքական համակարգի սուբյեկտների գործունեությունը հենվում է ազգային, պետական, հասարակական շահերի առաջնության վրա, հասարակության կայունացման տեսնեցները գերիշխում են և նրա ամբողջականությունը երաշխավորված է: Իսկ եթե տարբեր քաղաքական ինստիտուտներ հենվում են նեղ խմբային շահերի վրա, ապա հասարակության քաղաքական համակարգի անկայունությունը, նրա ֆունկցիաների կիսատ-պոատությունը դառնում է անխուսափելի:

3. Քաղաքական համակարգի կառուցվածքն ու ֆունկցիաները

Հասարակության քաղաքական համակարգի կառուցվածքի և ֆունկցիաների, նրա քաղաքիչների ուսումնասիրությունը անհրաժեշտ է նրա, որպես համակարգի, ընդհանուր առանձնահատկությունների և բնորոշ գծերի բացա-

հայրենա սամար Այդ դեպքում համակարգը դիտվում է որպես իրար հետ փոխադեղնության մեջ գտնվող տարրերի ամբողջություն: Յուրաքանչյուր համակարգ մի շարք հատկանիշներ ունի՝ նրա բաղադրած Ը տարրերից, այդ տարրերը բխող հետ սեբա փոխակապակցված են, այդ փոխակապակցվածությունը նրանց համախմբում է մեկ միասնության մեջ՝ ստեղծելով մեկ սրբանական ամբողջություն, որին բնորոշ է ինչպես արտաքին ազդակներն այնպես էլ ներքին ազդակներին հակադրվելու՝ որպես միասնական համակարգ: Հասարակության քաղաքական համակարգը ամբողջական, քայլի և լույս համակարգ է:

Հասարակության քաղաքական համակարգը սազմված է մի շարք ստորկանքային տարրերից, կամ ինչպես ընդունված է գրականության մեջ ասել՝ ենթատունկառոցերից, որոնցից հիմնականներն են՝ քաղաքական ինստիտուտները (պետական իշխանության մարմիններ, կազմակերպություններ, հասարակություններ՝ սոցիալադեպի-կարգավորիչ ընդլս ունեցող ենթահամակարգեր՝ իրավական և քառոյական նորմեր, քաղաքական արժանողյաներ և սկզբունքներ, գործառնական միունկցողայ/ բնույթ ունեցող ենթահամակարգեր՝ քաղաքական գործունեության մկնոր և ուղղվածությունները, տարբեր քաղաքական գործնկացներ, իշխանության իրանսնողման միջոցներ ու մեթոդները՝ ռադիոլակցման բնույթ ունեցող ենթահամակարգեր՝ միակողմ կապեր, փոխհարաբերություններ՝ ճներ, տրինակ կուսակցություններ և պետության մրջև, քաղաքական և տնտեսական ենթահամակարգերի միջև), գաղափարական շուայցքներ, տեսայլետներ, ծրագրեր և այլն:

Պրակտության մեջ հաճախ հանդիարում ենք կյան քաղաքական կառուցվածքի յորո որմնական ենթահամակարգերի առանձնացման՝ որպես են՝

- 1) քաղաքական կազմակերպություն,
- 2) քաղաքական հարաբերություններ,
- 3) քաղաքական և իրավական նորմեր,
- 4) քաղաքական գիտակցություն և քաղաքական կրպոտրա:

Հասարակության քաղաքական համակարգի հիմնական տարրերը կողանց գործառնության մեխանիզմները արտացոլված են պետության մատակարարության և տնտեսության մեջ, որոնք կազգավորում են պետական իշխանության մարմինների մապորման և գործունեության սկզբունքները, պետական, կուսակցական, տնտեսական և համարանական կազմակերպությունների նախուկներն ու արտաբանությունները:

Հասարակության քաղաքական կյանքի առաջին սկզբի և շարժունակ են քառահամակարգը կուս քաղաքական կազմակերպությունն է՝ քաղաքական գործունեության ցանկացած տեսակ իրականացվում է կազմակերպված ձևով, որոնք նկատարվում են սրբանական նախադեղ և կառգավորում են մոլլայ հասարակության մեջ ընդունված որոշակի կանոններով և նորմերով: Հենց շարժիմ քաղաքական կազմակերպության է մանրագու լինում գաղափարական կամ քառոյական արժեքները վերածել նուստականու՝ Այդ տն-

անկուկից քաղաքական կազմակերպությունը կարելի է դիտել որպես այդ բոլր քաղաքական համակարգի կուսական որմնի մապորոլը, նյա կառապարումն որականացնող քառույց:

Հասարակության քաղաքական կազմակերպությունը որոշակի ֆունկցիաներ իրականացնող, կունկետ կազմակերպություններ և հասարակությունները արտոլլություն է՝ որոնք մոնկապակցված գործունեության ստրյունքում հասարակության մեջ իրականացվում է քաղաքական իշխանությունը՝ կրանում ներառված են պետությունը, կուսակցությունները, կանգվածային հասարակական կազմակերպություններն ու շարժումները, ցանկացածային կրանգամիցներն ու ներդեղին՝ որանքից պետությունն ու կուսակցություններն իրենց նախամե քաղաքական կազմակերպություններ են այսինքն նրանց ուղղակի և անմիջակամորեն քաղաքական իշխանության իրականացնողներ են, կամ կապարում են այդպսին լինելու համար, որն էլ նրանց հիմնական գործունեությունն է՝ Մյուս քաղաքական կազմակերպությունները կառված են քաղաքական իշխանության որականացման հետ, նախել դա միջնորդապորկված մասնացություն է և կազմում է նրանց գործունեության ոլ հիմնական մասը՝ կարմիտություններ, երիտասարդական քաղաքական կազմակերպություններ և այլն/ ոլ քաղաքական կազմակերպությունները համարում են մասնացում քաղաքական իշխանության իրականացմանը՝ կա մալիտ տառաբնույթ միություններ, շարժումներ և այլն/ որանք քաղաքական կյանքի մեջ ներառվում են սովորաբար նախնետրական կապարո շրջանում, երբ այն կամ այն քաղաքական ումին անհրաժեղի է լինում որանց ցանկացած արտոլլելու իրենց թեկնածու ների հաղթանակը:

Եթե փորձելու լինենք քաղաքական համակարգի հիմնական շաղաղրիկները առանձնացնել ըստ նրանց ապել ոլված հիմնական ինդիկներն, ապա կարելի է նշել քաղաքական համակարգի հետևյալ կառուցվածքային տարրերը՝

- ա/ քաղաքական ինստիտուտներ, որոնք մապորում են իշխանության կառապարող կառուցներ
- բ/ գոյություն ունեցող քաղաքական հասարակի շրջանակներ ու քաղաքական հարաբերությունները կառգավորող քաղաքական նորմեր,
- գ/ քաղաքական հարաբերություններ, որոնք թեմակից ներկայացնում են քաղաքական համակարգի տարրերի միկև ուղղուայց և հորիզոնական կապերն կառուցվածքային հիմքը
- դ/ քաղաքական գիտակցությունը, որը միջնորդապորկում է քաղաքական համակարգի մաացած բոլոր տարրերի՝ արտադրության և վերարտադրության գործնկացը
- ե/ քաղաքական կոլտորա՝ ոլը կայմանապորում է համակարգի գարգացման և պահանքների արժեքային կազմակերպիչները
- զ/ քաղաքական հաղորդակցման միջոցները, որոնք ապահովում են հանապատանխան տեղեկատվության տառաածուց
- է/ քաղաքական մասնացությունը, որը որստորկում է քաղաքականներն կոլ-

մից քաղաքական համակարգին համապատասխան աջակցություն կամ ընդդիմություն ցույց տալու ձևով:

Այսպիսով, հասարակության քաղաքական համակարգը իրար հետ սերտ փոխկապակցված և փոխապայմանավորված, կոնկրետ տարրերից կազմավորված ամբողջություն է, որոնցից յուրաքանչյուրը քաղաքական կյանքի որոշակի բնագավառի կոնկրետ խնդիր իրականացնելով, ամբողջացնում է համակարգի գործառնությունը:

Քաղաքական համակարգի հիմնական ֆունկցիաները դրսևորվում են նրա ներքին իրավիճակի և արտաքին միջավայրի հակազդեցության ու փոփոխության ձևով, արձագանքելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ազդեցություններին: Համակարգի յուրաքանչյուր ենթահամակարգ իրեն բնորոշ ֆունկցիաներն ունի, որոնք իրականացվում են միայն տվյալ ենթահամակարգին հասու և բնորոշ միջոցներով ու մեթոդներով: Մակայն ակնհայտ է, որ քաղաքական համակարգը իր ֆունկցիաները ամբողջապես կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ ենթահամակարգերից յուրաքանչյուրը իրականացնում է իր ֆունկցիան: Դա նախ և առաջ պայմանավորված է ենթահամակարգերի փոխկապակցվածությամբ, այսինքն՝ յուրաքանչյուր ենթահամակարգի ֆունկցիաների իրագործումը մի կողմից նպաստում է մյուս ենթահամակարգերի ֆունկցիաների կատարմանը, մյուս կողմից ազդվում է այլ ենթահամակարգերի գործառնություններից և պայմանավորված է նրանցով: Այս փոխկապակցվածությունն է հասարակական քաղաքական համակարգը դարձնում մեկ ամբողջական օրգանիզմ:

Հասարակության քաղաքական համակարգի հիմնական ֆունկցիաներից են՝ ա/ որոշել հասարակության նպատակներն ու խնդիրները, ընդունել դրանց համապատասխան քաղաքական որոշումներ, մշակել դրանց իրագործման հնարավոր ծրագրեր և իշխանության լծակների միջոցով իրականացնել այդ ծրագրերը:

բ/ հասարակությանը համախմբելու ընդհանուր սոցիալ-քաղաքական նպատակները և արժեքների շուրջ: Այս ֆունկցիան հնարավոր է իրականացնել այն ժամանակ, երբ քաղաքական համակարգի զարգացման աստիճանը նրան ընդունակ է դարձնում հասարակության մեջ ծագած տարածայնություններն ու հակասությունները հարթել, թուլացնել սոցիալական լարվածությունը, համագործակցության եզրեր գտնել հակամարտող կողմերի միջև, թույլ չտալ հասարակության ճգնաժամի խորացումն ու քայքայումը: Այդ ֆունկցիայի իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է սոցիալական արժեքների բաշխման վրա հսկողության ֆունկցիայի կատարումից:

գ/ ապահովել տվյալ հասարակական հարաբերությունների բնույթին համապատասխանորդ հասարակական արժեքների բաշխում: Այս ֆունկցիայի իրականացումը կարևոր է նրանով, որ հենց այս բնագավառում են բախվում տարբեր սոցիալական խմբերի շահերը և որոշվում հասարակության ամբողջականության ապահովման հնարավորությունը: Այս բնագավառի վրա ազ-

դեցությունը կորցնելու, կամ այս բնագավառում իր ֆունկցիաները կատարելու դեպքում հասարակության մեջ ճգնաժամային երևույթները, հետընթացը դառնում է անհուսալի, քաղաքական համակարգի կենսագործունեությունը վտանգվում է:

դ/ հասարակության քաղաքական զարգացումները ուղղորդել հասարակության միասնությանն ու շահերի ապահովմանը:

ե/ հսկել օրենքների և ընդունված նորմերի իրականացման վրա, կանխել քաղաքական նորմեր խախտող գործողությունները:

Այս հիմնական ֆունկցիաների իրականացման շնորհիվ հնարավոր է լինում ապահովել հասարակության քաղաքական համակարգը որպես ամբողջական, բարդ և բաց համակարգ, այն դարձնելով ինքնակազմակերպվող և ինքնակառավարվող համակարգ:

Իր հիմնական ֆունկցիաները իրականացնելու շնորհիվ քաղաքական համակարգը ընդունակ է լինում հասարակությունից և շրջապատի իրականությունից վերցնելու անհրաժեշտ բնական և մարդկային ռեսուրսները հասարակության կյանքը կառավարելու համար: Դա առաջին հերթին վերաբերում է մարդկանց, որպես ընտրողների, պետական ծառայողներին, կուսակցություններին և քաղաքական ակտիվ խավին քաղաքականության իրականացման իրական մասնակցությանը:

Քաղաքական համակարգի կենսագործունեությունը իրական արդյունք է տալիս այնքանով որքանով հասարակությունը նրան հատկացնում է անհրաժեշտ ռեսուրսներ:

Քաղաքական համակարգը ընդունակ է կառավարելու, կարգավորելու և համակարգելու անհատների, խմբերի և քաղաքական ինստիտուտների գործունեությունը, ազդելու հասարակության վրա: Դա իրագործվում է ոչ միայն ուղղակի պարտադրանքի միջոցով, այլև ազդեցության ոչ անմիջական լծակների միջոցով, ասելով՝ ավանդույթների, հասարակական կարծիքի և նման գործունեների միջոցով:

Քաղաքական համակարգը ընդունակ է վերաբաժանելու ազգային արտադրության արդյունքները և համակարգի միջոցով ապահովելու անհատների և սոցիալական խմբերի սոցիալական բարեկեցությունը: Համակարգի կարևորագույն խնդիրներից է նպաստել հասարակության զարգացմանը վերաբերող ծրագրերի իրականացմանը:

Քաղաքական համակարգի խնդիրն է նաև արագորեն արձագանքելու շրջապատի, առաջին հերթին անհատների և սոցիալական խմբերի պահանջներին և կարճատևորելու դրանք:

Այսպիսով, քաղաքական համակարգի ֆունկցիաները բազմազան են, ինչը պայմանավորված է քաղաքական կյանքի բարդությամբ ու բազմաշերտությամբ:

4. Զարգացման վարչակարգերի (օժիմների) տիպերը

Հասարակության քաղաքական համակարգի բնույթը, գոյնամտության եղանակներն ու միջոցները անվի լրիվ բացահայտելու համար անհրաժեշտ է լինում վերլուծության ենթարկել քաղաքական իշխանության իրականացման եղանակները, միջոցները ու մեթոդները ամբողջությամբ կլի խնդիր իրականացման համար քաղաքական գրականության մեջ օգտագործելով է «քաղաքական օժիմ» կատեգորիան:

«Քաղաքական օժիմ»-ը բառը, քաղմակդասել, հասարակության քաղաքական կյանքի կենսագործունեության մի շարք կարևորագույն ոլորտներ ընդգրկող կատեգորիա է, ինչն էլ պատճառ է դառնել այդ բառը սոցիալական նունաթե ընդդռելիս իրից ընդունել կանենատարբեր չափանիշներ, հետևաբար, տալ նաև տարրեր ընդդռումներ:

Անկան քաղաքական օժիմները տարաստակների գիտական վերլուծությունը օրից է տայր, որ կան այնպիսի գործուն լափանիշներ, որոնց ընդհանուր են բոլոր քաղաքական օժիմների համար, և որոնց վերլուծության ընդդռվ է միայն նկարագրի լինում ունակ պատկերացում կազմել այն կամ այն քաղաքական օժիմի ընդդռի մասին: Դիանք են՝

ա) այն սոցիալ-քաղաքական խնդիրի առկայությունը որոնց շահերն է աշխտասանում տվյալ քաղաքական օժիմը,

բ) կատարողների կողմից ընդդռած քաղաքական իշխանության իրականացման մեթոդները,

գ) իշխանությունների ձևավորման սկզբունքները

դ) պետության կառավարման համակարգում քաղաքացիներ մասնակցության ընդդռն ու քաղաքական ընդդռնության գործունեության պայմանները,

ե) օրինակակության տարածման սկզբունքներն ու անհատի իրականացման պաշտասանությունը

Չնայած էշվան օրոր գործունեց առկա են բոլոր քաղաքական վարչակարգերում, այնուհանդերձ, հաճախ քաղաքական օժիմները ընդդռելիս հենագոտողները լենում են այդ գործունեներից որևէ մեկի առաջնությունից, ինչի հետևանքով է գրավանության մեջ առկա է քաղաքական վարչակարգերի տարբեր դասակարգումներն ու ընդդռումներ էշնց օրականության մեջ եղան մի քանի ընդդռումներ:

ա) քաղաքական վարչակարգը քաղաքական իշխանության իրականացման եղանակների և մեթոդների ամուրջությունն է, որ ունկան է իշխանության հասարակության և անհատի փոխարարբերությունների եղանակներն ու միջոցները վրա,

բ) քաղաքական վարչակարգը պետության շնորթագիյն է, որը քացահայտում է պետական իշխանության իրականացման միջոցների մեթոդների ամրոջությունը

գ) քաղաքական վարչակարգը որոշակի տիպի պետության քաղաքական նարարբերությունների, իշխանության կողմից օգտագործվող մեթոդների ու

մեթոդների ամրոջությունն է: որը ձևավորվում է պետական իշխանության և հասարակության միջև հասարակված քաղաքարբերությունների, իշխող զարգացարարության ձևերի, սոցիալական տարբեր հանդույսների փոխարարբերությունների, հասարակության քաղաքական կոլտուրայի և գիտակցության մասնարդակի հիմք վրա:

Հաճախ քաղաքական վարչակարգերը տարբերվում են՝ երեկու պետության և քաղաքացիական հասարակության փոխադրեցության առանձնահատկություններից, սոցիալական այդ ոլորտների ու քաղաքացիների անձնական կյանքի պետության միջամտության աստիճանից:

Երեկուլ ադդի աշխտարում տորի ունեցող քաղաքական զարգացումների ընդդռից, քաղաքական վարչակարգերը կարելի է բաժանել երկու հիմնական տիպերի՝ ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական: Դրանցից յուրաքանչյուրը, կանկան հասարակության զարգացման աստիճանից, կանկան հասարակած հարաբերությունների ընդդռից, ավանդույսներից ու սովորույսներից, իրենց տարբեր դրակարումներն ունեն: Ընդ ժողովրդավարական քաղաքական վարչակարգը դրակարում է իրականանում ավտորիտարիզմի (միապետության) և տոտալիտարիզմի (աշխտացարիության) օժիմների տիպերում: Անկան դրանցից յուրաքանչյուրն էլ իր հորթրե տարբեր հասարակություններում արող են առանձնահատուկ դրակարումներ ունենալ: Ընդդռ կարելի է տեսլ նաև ժողովրդավարական քաղաքական մարդակարան մասին, քանի ժողովրդակարական արթեները վարգացման տարբեր մակարդակներում գտնվող հասարակություններով միանշանաա հաստատվել լեն կարող: Ըստի, ժողովրդավարական քաղաքական վարչակարգերն էլ կարող են ամենատարբեր դրակարումներ ունենալ:

Երե պետության քաղաքացիները անդդռույին գտնվում են տեղեկական քաղաքական, սոցիալական և ողգնոր-մշակութային իշխանությունը իր ձեռքում նենտրոնացում առաջադրության ենթակայություն տակ, առկա մենք գործ ունենք ոչ ժողովրդավարական քաղաքական օժիմի հետ: Իսկ երբ հասարակությունը վերահսկում է իշխանության վրա նրա բոլոր դրակարումներում, մենք գործ ունենք ժողովրդավարական քաղաքական վարչակարգի հետ:

Էշնց հիմնական այն առանձնահատկությունները, որոնց ընդդռն են այդ քաղաքական վարչակարգերը յուրաքանչյուրին:

Ավտորիտար քաղաքական վարչակարգի ընդդռն գոբրն են:

1. Անտալին և ներքին քաղաքականության վրա պետության դեպակիյն և նրա շրջակայում մենաշնորի հաստատում, գործադիր իշխանության որակատույնները վեր են կանգնած օրենսդիր իշխանությունից:

2. Իշխանությունները չեն ուկվում ժողովրդի կողմից: Քաղաքացիները կամ ըտարված են իշխանությունից, կամ անտարբեր են նրա նկատմամբ:

3. Քաղաքացիների քաղաքական ողակույսներն ու ազատությունները նշանակալիորեն անհանառակվում են: Ծրենը պաշտասանում են միայն պետության կամ նրա անունից հանդես եկող քաղաքական ութի (անհատ

խումբ) շահերը:

4. Պետությունը արգելում կամ դժվար է հանրութեամբ քաղաքական ընդդիմությանը՝ սահմանափակելով նրա գործունեությունը, երբեմն էլ դարձնելով անհնարին:

5. Չանգվածային լրատվության քոյոր միջոցների վրա, որոնք որևէ կերպ կփորձեն քննադատել իշխողների վարած քաղաքականությունը, տարածվում է գրաքննություն: Ազատ է միայն այն մամուլը, որը գովերգում է իշխանությանը:

6. Ոստիկանությունը, բանակը, հատուկ ծառայությունները իրականացնում են ոչ միայն հասարակության ներքին կարգուկանոն պահպանելու ֆունկցիան, այլև պետության մարմինների պատժիչ ֆունկցիա: Նրանց հիմնական խնդիրն է դառնում իշխանություններին պաշտպանել և կատարել նրանց կամքը:

7. Հասարակության մեջ հաստատված է պաշտոնական գաղափարախոսություն, թույլատրվում է այլ կարծիքներ, սակայն որոնք չեն հակադրվում իշխող ուժերին: Եվեղեցին ձևականորեն անջատված է պետությունից, սակայն ֆաստորեն գտնվում է պետության հսկողության տակ և հիմնականում պաշտպանում է իշխող ուժին:

8. Հասարակության մեջ իշխանության կայուն պաշտպանություն ոչ միայն բռնության միջոցներով, այլև տարբեր ուժերի կողմից, որոնք կիսում են պաշտոնական գաղափարախոսությունը: Հասարակության մեծամասնությունը հայրենասիրական կողմնորոշում ունի և պաշտպանում է իշխանությանը: Փոքրամասնությունը պայքարում է բռնապետության դեմ՝ ձգտելով ժողովրդավարության:

9. Տնտեսության մեծ մասը հսկվում է կարգավորվում է պետության կողմից, այն էլ բավականին դաժան ձևերով: Մի շարք միապետական քաղաքական ուժերում մասնավոր ձեռներեցությունը և շուկայական հարաբերությունները կարող են գոյություն ունենալ և նույնիսկ արդյունավետ գործել:

10. Ավտորաբար ծաղկում է ապրում կոռուպցիան, հովանավորությունը, նամանավանդ պաշտոնների քաժանման ժամանակ: Բարոյական նորմերը սովորաբար կրում են պահպանողական բնույթ:

11. Բնակչության քաղաքական ակտիվության աստիճանը ցածր է, չնչին մասն է մասնակցում քաղաքական գործընթացներին, երեք դրանք դեպքից-դեպք տեղի են ունենում: Այս քաղաքական ուժերի լոգոսն է՝ «այն ամենը, ինչը չի թույլատրվում՝ արգելված է»:

Քաղաքական համակարգի ամբողջատիրական տեսակին բնորոշ է հասարակության ամբողջ կենսագործունեության խիստ կանոնակարգում՝ ընդհուպ՝ մինչև յուրաքանչյուր մարդու ապրելակերպը, վարքագիծն ու մտածողությունը:

Ամբողջատիրական քաղաքական համակարգի բնորոշ գծերն են.

1. Իշխանության գերկենտրոնացում: Հասարակության համընդհանուր քաղաքականացում և գաղափարականացում: Իշխանության բոլոր մարմին-

ները վերահսկվում են մեկ կենտրոնից, որը հիմնականում լինում է մեկ կուսակցություն:

2. Քաղաքացիների ազատություններն ու իրավունքները արձանագրված են սահմանադրության մեջ, սակայն դրանք ձևական են և իրականում չեն գործում: Տոտալիտարիզմը լոգոսն է՝ «արգելված է այն ամենը, ինչը հրամայված չէ»:

3. Քաղաքական ազատ գործող ընդդիմությունը բացակայում է: Ընդդիմադիր հայացքները հիմնականում դրսևորվում են այլախոսության տեսքով, որը հետապնդվում է:

4. Երկրում ընդունվում է միայն իշխող կուսակցության իրավունքները: Ցանկացած այլընտրանքային քաղաքական կազմակերպությունների ստեղծումը արգելվում է:

5. Չանգվածային լրատվամիջոցները գտնվում են խիստ գրաքննության տակ, արգելվում է իշխանությունների քննադատությունը:

6. Ոստիկանությունը, բանակը, հատուկ ծառայությունները իրենց հիմնական ֆունկցիաներին զուգահեռ կատարում են նաև պետական մարմինների պատժիչ ֆունկցիաները, պետության ձեռքին հասցիստում են գանգվածային հալածանքների գործիք:

7. Հասարակության մեջ գործում է միայն պաշտոնական գաղափարախոսությունը խիստ հալածանքի են ենթարկվում մնացած գաղափարական հոսանքները:

8. Իշխանությունը հիմնականում բռնության վրա է հենվում: Դրան զուգահեռ իշխող կուսակցությունը ամեն ինչ անում է պետական գաղափարախոսության հաստատման համար, որի շնորհիվ իշխանությունը պաշտպանվում է բնակչության մեծամասնության կողմից:

9. Տնտեսությունը ամբողջովին պետականացված է և կառավարվում է վարչատիրամայական մեթոդներով: Տնտեսության կառավարումը իրականացվում է համապետական պլանավորման ձևով:

10. Չնայած հասարակական կյանքի վրա պետության խիստ հսկողությանը, հասարակության մեջ զարգացած է կաշառակերությունն ու կոռուպցիան: Հասարակության մեջ գործում է երկակի բարոյականություն՝ «ասում ենք մի բան, անում ենք այլ բան»:

11. Ազգային փոքրամասնությունների իրավունքները ձևականորեն հայտարարված են, իրականում էականորեն սահմանափակված են:

Գրականության մեջ լայն տարածում է գտել այն տեսակետը, որ ավտորիտարիզմը ամբողջատիրության և ժողովրդավարական վարչակարգի միջև ընկած միջանկյալ փուլ է: Երբեմն ավտորիտարիզմը համարում են ամբողջատիրության ավելի մեղմ տարատեսակ: Նման տեսակետներին պետք է մոտենալ որոշակի վերապահումներով, Այստի ունենալով երկու հանգամանք: Նախ, դեպի ժողովրդավարական քաղաքական համակարգի անցում կատարվում է ոչ միայն, և ոչ անպայման ամբողջատիրական քաղաքական համակարգից՝ երկրորդ, չնայած ավտորիտարիզմը իր բնույթով ավելի առաջա-

դիմական է ամբողջատիրությունից, այնուհանդերձ, հասարակության պատմությունը ցույց տվեց, որ հենց ավտորիտարիզմից է անցում կատարվել դեպի ամբողջատիրություն: Ուստի տարածում գտած այս տեսակետը կարելի է ընդունել միայն այն դեպքում, երբ ասածը վերաբերվում է ամբողջատիրական քաղաքական համակարգից ժողովրդավարության անցումին, քանզի այն սահմանափակ ազատությունները (տնտեսական, քաղաքական, գաղափարական և այլն), որ առկա են ավտորիտարիզմի պայմաններում, կարող են անցումային փուլում դառնալ ժողովրդավարության հաստատման նախադրյալներ:

Արդի աշխարհում քաղաքական զարգացումները ընթանում են դեպի ժողովրդավարության սկզբունքների հաստատում: Այդ ուղին են բռնել աշխարհի երկրների մեծամասնությունը:

Ժողովրդավարության բնորոշ գծերն են.

1. Իշխանությունները բաժանված են անկախ թևերի՝ օրենսդրական, գործադիր և դատական: Հատկացված են նրանց ֆունկցիաները:

2. Քաղաքացիներն օժտված են մեծ իրավունքներով և ազատություններով: Գլխավոր սկզբունքն է՝ «ինչը արգելված չէ օրենքով՝ թույլատրելի է»:

3. Ազատ գործում է ընդդիմությունը և օգտվում է քաղաքական քուրդ իրավունքներից և ազատություններից, անկախ նրանից իշխանության թակեռի տեր են, թե ոչ: Դեմոկրատական հասարակության մեջ ընդդիմությունը քաղաքական գործընթացների անբաժանելի մասն է կազմում:

4. Գործում է բազմակուսակցական համակարգ, որի ընթացքում մի կուսակցություն կարող է ընտրությունների միջոցով օրինականորեն փոխել իշխանության վրա գտնվող կուսակցությանը:

5. Բաժանված և հատուկ ծառայությունները պետության և հասարակության նեղքին և արտաքին անվտանգության պաշտպանության հիմնական ուժերն են: Նրանց գործունեությունը կարգավորվում է օրենքով: Հասարակության նեղքին կարգուկանոնը իրականացնում է ոստիկանությունը: Ուժային կառույցները չեն մասնակցում հասարակության քաղաքական իրադարձություններին:

6. Չանգվածային լրատվամիջոցները ազատ են զրաքննությունից, իրավունք ունեն ընտրատեյալ իշխանություններին, երբ նրանք խախտում են ժողովրդավարական սկզբունքները, կամ վատ են կատարում իրենց սոցիալական պարտականությունները:

7. Հասարակության մեջ բացակայում է ինչ-որ մեկ պաշտոնական գաղափարախոսություն: Բազմակարծության պայմաններում շատ գաղափարական հոսանքներ հակադրված են մեկը մյուսին, պահպանվում է ընդհանուր ազգային աշխարհայացքային արժեքները: Եկեղեցին բաժանված է պետությունից, և պետությունը չի խառնվում եկեղեցու գործերին:

8. Քաղաքացիները բաց ու ազատ կարող են արտահայտել իրենց կարծիքները, մտքերը և դիրքորոշումները իշխանության մարմինների գործունեության նկատմամբ:

9. Առկա է սեփականության տարբեր ձևեր: Կախված երկրների զարգացման մակարդակներից, քաղաքական կողմնորոշումից, հաստատված քաղաքական հարաբերությունների՝ (լիբերալիստական, լիբերալ-դեմոկրատական, սոցիալ-դեմոկրատական) բնույթից, կարող են գերիշխող լինել պետական, մասնավոր կամ կորպորատիվ սեփականության ձևերը: Մասնավոր սեփականության իրավունքները պաշտպանվում, կաթսավորվում, իսկ անիրաժեշտության դեպքում վերահսկվում և սահմանափակվում են միայն պետության կողմից:

Այս համակարգում տնտեսությունը կարող է լինել և՛ զարգացած և՛ թույլ զարգացած, ինչը պայմանավորված է տվյալ երկրի զարգացման աստիճանից:

10. Ժողովրդավարական հասարակության մեջ կարող են տեղի ունենալ շատ բացասական երևույթներ, սակայն դրանց կարգավորումը իրականացվում է միշտ օրենքի պահանջներից ելնելով և անհատի իրավունքների պաշտպանության սկզբունքների կիրառմամբ: Ժողովրդավարության պայմաններում չեն բացառվում հանցագործությունների աճ:

11. Ժողովրդավարության պայմաններում ինքրավոր է ունիտար /միակազմ/ և ֆեդերատիվ /կոնֆեդերատիվ/ պետության ձևեր: Ունիտար պետության ժամանակ տեղական իշխանությունները ավելի մեծ լիազորություններով են օժտված լինում:

12. Ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանված են:

Անիրաժեշտ ենք համարում նշել, որ նշված սկզբունքները, բնորոշ գծերն ու առանձնահատկությունները կարող են մասամբ խախտվել, խեղաթյուրվել, չիրականանալ, ինչը պայմանավորված է տվյալ հասարակության մեջ ժողովրդավարական սկզբունքների հաստատման աստիճանով: Այդ իսկ պատճառով պետք է հաշվի առնել, որ ժողովրդավարությունը, կախված տվյալ հասարակության զարգացման աստիճանից, ազգային առանձնահատկություններից, արվեստություններից, մշակութային արժեքներից և այլն, իր դրսևորման և զարգացման տարբեր մակարդակներն ունի: Որքան ժողովրդավարությունը զարգացման բարձր մակարդակի է հասնում, այնքան վերը նշված առանձնահատկություններն առավել լրիվ են դրսևորվում և այնքան նրանում բացասական երևույթները պակասում են:

5. Չանգվածային հաղորդակցության և լրատվության միջոցների դերը քաղաքական համակարգում

Քաղաքականությունը և՛ որպես իրականացվող գործընթաց, և՛ որպես նրա իրականացող սուբյեկտների գործունեության և փոխհարաբերությունների դրսևորման ձև, չի կարող տեղի ունենալ առանց նրա կողմերի միջև փոխադարձ կապերի, փոխհարաբերությունների և փոխազդեցության: Այսինքն, առանց մեկը մյուսի հետ հաղորդակցվելու, կապի մեջ մտնելու, իրար վրա ազդելու, քաղաքական սուբյեկտների գործունեությունը անհնարին կլի-

ներ: Այս տեսանկյունից, քաղաքական կապի և հաղորդակցման միջոցների դերը քաղաքական համակարգում նշանակալից է: Այն քաղաքականության համար յուրատեսակ սոցիալ-դատական դաշտի դեր է կատարում, ինչի համար էլ նրան բնորոշում են որպես հասարակության քաղաքական կյանքի ներգային համակարգ:

Քաղաքական կապի և հաղորդակցման զանգվածային միջոցները քաղաքական լուրերի մշակման, հաղորդակցման և փոխանակման գործընթաց է, որի շնորհիվ կառուցվում է քաղաքական գործունեությունը, նրան հաղորդելով նոր որակ և իմաստ: Քաղաքական տրամաբանության փոխանցումը գործընթաց է, որի միջոցով քաղաքական համակարգի քաղաքականները քաղաքականապես տեղեկացվելով, կարողանում են կարգավորել իրենց գործունեությունը ըստ տեղի ունեցող իրադարձությունների:

Քաղաքական հաղորդակցումը ընդգրկում է ամբողջ հասարակական կյանքը, այն ամենը, ինչն ազդում է քաղաքականության վրա: Ուստի ցանկացած հասարակության քաղաքական կյանքը անհնարին է արհեստ քաղաքական հաղորդակցման միջոցների օգտագործման:

Գոյություն ունի հաղորդակցության երեք հիմնական միջոցներ՝ ոչ ձևական կապերի միջոցով, հասարակական-քաղաքական կազմակերպությունների միջոցով, զանգվածային լրատվության միջոցներ: Կան նաև այլ միջոցներ, օրինակ՝ հանրաքվեն, ընտրությունները և այլն:

Քաղաքական հաղորդակցության գործընթացների էական կողմը քաղաքական լրատվության փոխանցումը, տեղադրումն ու շրջանառությունն է, որի շնորհիվ տեղեկություններ են ստացվում քաղաքականության մասին, դրանք փոխանակվում են տեղեկատվության աղբյուրի և օգտագործողի միջև, ինչի շնորհիվ էլ հասարակության մեջ իրար հետ փոխազդեցության մեջ են մտնում անհատները, սոցիալական խմբերը, քաղաքական կուսակցությունները և այլն: Քաղաքական լրատվությունն իրենից ներկայացնում է գիտելիքների, վկայությունների, հաղորդումների, փաստերի և քաղաքական իրադարձությունների ամբողջական տեղեկատվական համակարգ: Նրա միջոցով փոխանցվում է քաղաքական փորձը, գիտելիքները, համակարգվում են մարդկանց ջանքերը, որանց ուղղելով հիմնական նպատակի իրականացմանը: Քաղաքական հաղորդակցությունը քաղաքական հարաբերությունների յուրահատուկ ձև է, որի միջոցով քաղաքական սուբյեկտները կարգավորում են իրենց գործունեությունը: Նրա միջոցով մատուցվում է քաղաքական հարցադրումների երեք հիմնական տեսակներ:

- ա/ հրամանների, կարգադրությունների, համոզումներների, գաղափարների փոխանցում,
- բ/ տեղեկություններ, որոնց կարող են լինել և՛ հավաստի, և՛ մտաջանծին,
- գ/ փաստեր և վկայություններ:

Իրենց կարևորությամբ քաղաքական հաղորդակցության և կապի միջոցները քաղաքական համակարգի կառուցվածքում հանդիսանում են որպես նրա ենթահամակարգ, որը կապ է հաստատում քաղաքական համակարգի

սուբյեկտների միջև: Երա նշանակությունը մեծ է նրանով, որ մարդկանց, սոցիալական խմբերին և այլ սուբյեկտների օգնում է ճիշտ կողմնորոշվելու և գնահատելու տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, ինչը, ինչպես հայտնի է, առանց համապատասխան տեղեկություններ ունենալու անհնարին է: Պատահական չէ, որ ժողովրդավարության պայմաններում այն առավել լրիվ է իրականացնում իր ֆունկցիաները, քանզի ժողովրդավարության պայմաններում զանգվածային լրատվամիջոցները բավականին անկախ են, իսկ քաղաքական տեղեկատվությունը մատչելի է հասարակության ցոյոր շերտերին: Զանգվածային հաղորդակցման և կապի միջոցների համակարգում նշանակալից դեր են խաղում միջանձնային հարաբերությունները, որոնց վրա մեծ ազդեցություն են թողնում հեռուստատեսությունը, ռադիոն, կինոն, քարոզչությունը և այլն: Ցանկացած կարևորագույն հաղորդում մարդիկ նախ ցննարկում են նեղ շրջանակներում՝ ընտանիք, ընկերներ, աշխատակցային կոլեկտիվ և այլն, և նոր ստանում իրենց իրական գնահատանքները: Ընդհանրապես մարդիկ հակված են թերահավատությանը վերաբերվել պաշտոնական հաղորդագրություններին և այս պարագայում նրանք կողմնորոշվում են ոչ ձևական սուբյեկտների /ընդդիմություն/ տված գնահատականներով:

Քաղաքական տեղեկատվությունը, որպեսզի արժեք ունենա, լսելու է լինի անանուն և անհասցե: Նպատակահարմար է այն ուղղել կոնկրետ հասցեատիրոջ՝ անհատների, սոցիալական խմբերի, կազմակերպությունների և այլն: Այն տեղեկությունները, որ տրվում է հասարակությանը, պետք է համապատասխանի քաղաքական համակարգում ընթացող գործընթացների քննարկին:

Քաղաքական հաղորդակցման քննարկը, նրա զարգացման մակարդակը մեծապես որոշվում է հասարակության ընդհանուր և քաղաքական կուլտուրայի զարգացման աստիճանով: Եթե քաղաքական համակարգը նպաստավոր պայմաններ է ստեղծել ճշգրիտ, լրիվ և ավարտուն տեղեկության փոխանցման համար, այդ դեպքում նրա ազդեցությունը հասարակության քաղաքական կյանքի վրա նշանակալից է և նրա ֆունկցիաները իրականացվում են լիովին:

Քաղաքական կապի և հաղորդակցման միջոցների հիմնական ֆունկցիաներն են.

1. Գաղափարա-քաղաքական արժեքների, քաղաքական գիտելիքների և տեղեկությունների տարածում:
2. Քաղաքական հարաբերությունների համակարգում և կարգավորում:
3. Իրազորվող քաղաքականության նկատմամբ հասարակական կարծիքի ձևավորում:
4. Անհատների մեջ քաղաքական կուլտուրայի տարածում և զարգացում:
5. Քաղաքական-կուլտուրական արժեքների փոխանակում:
6. Զանգվածներին քաղաքականությանը մասնակցելու նախապատրաստում:

Այս ֆունկցիաների իրականացման կարևոր երաշխիքներից է դեմոկրատական քաղաքական արժեքների ամրապնդումը, զանգվածային լրատվամիջոցների ազատությունն ու անկախությունը իշխանական կառույցներից, կայուն սոցիալական գործընթացները, հասարակության գիտակցական և կրթական մակարդակը:

Դժվար չէ նկատել, որ քաղաքական կապի և հաղորդակցման միջոցների օգտագործման մեջ մեծ է զանգվածային լրատվության միջոցների (ՉԼՄ) դերը:

Զանգվածային լրատվության միջոցները (ՉԼՄ) բարդ ինստիտուտ է, որը քաղկացած է բազում տարրերից և մարմիններից, ինդիք ունենալով հասարակությանը տեղեկացնելու ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրանից դուրս տեղի ունեցող երևույթների և իրադարձությունների մասին: Նրանց քաղաքական նշանակությունը պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ քաղաքական տեղեկություններ տարածելու գործընթացում բավականին ինքնուրույն են, ինչի շնորհիվ կարողանում են հասարակական կարծիք ձևավորել, ազդել քաղաքական գործընթացների վրա, նպաստում են հասարակության լայն խավերի քաղաքական գիտակցության ձևավորմանը:

Ժամանակակից ՉԼՄ-ների վրա մեծ ազդեցություն են թողնում հասարակության մեջ առկա տարբեր քաղաքական գործոններ: Նայած թե ով է հիմնադիրը, ինչ նպատակներ ու ինդիքներ է ուզում իրականացնել, ում է ուղղված առեփնջը և այլն:

Հասարակության քաղաքական համակարգում ՉԼՄ-ների դիրքի առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ դրանք պետական հաստատությունների, զանգվածային հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների օրգաններ են: Իսկ եթե գործառնում են որպես անկախ մամուլ, ապա այս պարագայում անպայմանորեն արտահայտում են հասարակական ինչ որ խապի, խմբի շահեր ու տեսակետներ, վերաբերմունք ու գնահատական:

Անկախ այն բանից, թե ՉԼՄ-ները քաղաքական համակարգի որ ինստիտուտի կամ ենթահամակարգի տեսակետներն ու շահերն են արտահայտում, ում օրգանն են, պետական են, թե կուսակցական, զանգվածային կազմակերպություն են, թե անկախ, բոլոր դեպքերում նրանց գործունեության քննարկն այնպես է, որ նրանք ուղղակի, թե միջնորդավորված մասնակից են դառնում իշխանության ձևավորման և կառավարման գործընթացներին, իրենց հրապարակումներով ակտիվ ազդելով նախընտրական գործընթացների, պետական մարմինների ընդունած որոշումները, դրանց իրականացման կամ չիրականացման պատճառների վերլուծության և մեկնաբանման, մոտեցումների և առաջարկությունների մատուցման և այլ ձևերով: Այդ է թերևս պատճառը, որ ՉԼՄ-ները համարվում են չորրորդ իշխանություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններից հետո: Սակայն պետք է նկատել, որ մամուլը իր այդ դերը կարող է կատարել միայն ժողովրդավարության պայմաններում, քանզի մյուս քաղաքական համակարգերի

պայմաններում նա չի օգտվում այն ազատություններից ու իրավունքներից, որոնք նրան դարձնում են քաղաքական կյանքի ակտիվ մասնակից, հետևաբար և քաղաքական համակարգի կարևորագույն ենթահամակարգ:

ՉԼՄ-ները իշխանության ֆունկցիա են իրականացնում միայն այն ժամանակ, երբ կարողանում են ապահովել լայն զանգվածների, քաղաքական կազմակերպությունների հսկողությունը իշխանության մարմինների գործունեության վրա, հասարակության մեջ համապատասխան կարծիք և վերաբերմունք մշակելով պետական հաստատությունների գործունեության նկատմամբ: Իսկ դա ինքարժույթ է միայն ժողովրդավարության պայմաններում: Եիչ չեն այն փաստերը, երբ մամուլում եղած հրապարակումները հանգեցրել են իշխանության, կառավարության կամ քարծր պաշտոնատար անձանց հրաժարականի (ԱՄՆ-Կիցուն, ԲԳԼ Տեղ-Պետրոսյան): Անշուշտ ժողովրդավարության պայմաններում էլ ՉԼՄ-ները հակադիր և իրարամերձ տեսակետներ են արտահայտում: Իշխանաւետ մամուլը ձգտում է, քողարկելով իշխանությունների բացթողումները, ներկայացնել իշխանության գործունեության միայն դրական կողմերը, փորձելով հասարակության մեջ վստահություն առաջացնել կառավարության գործունեության նկատմամբ: Շնորհիմադիր, անկախ, ոչ պետական մամուլն ընդհակառակը, շատ հաճախ աչքաթող անելով իշխանությունների դրական ձեռքբերումները, հիմնական շեշտը դնում է նրա բացթողումների, թերությունների մեկնաբանման ու քննադատման վրա: Սակայն այս հակադրությունը պետական, իշխանաւետ և ընդդիմադիր ՉԼՄ-ների միջև իր քնույթով առաջադիմական ու դրական է և հասարակության, նրա քաղաքական համակարգի զարգացման հիմնական երաշխիքն է: Որովհետև որքան էլ իշխանաւետ ՉԼՄ-ները փորձեն նրանց գործունեության միայն դրական կողմերը ներկայացնել, այնուհանդերձ ոչ իշխանաւետ ՉԼՄ-ներին հաջողվում է նրա թերությունները մատուցել, քննադատել, դրանք մատուցել հասարակության լայն շրջանակներին և իշխանությունների գործունեությունը պահել ժողովրդի հսկողության տակ: Ուստի, երբ առում ենք ՉԼՄ-ները չորրորդ իշխանություն են, նկատի է առնվում նրա գործառույթների այն շրջանակը, որի շնորհիվ ինքարժույթ է լինում ժողովրդին ներկայացնել իշխանության բոլոր մարմինների գործունեությունը, դրա արդյունքները, թեր ու քննադատելի կողմերը և հասարակության մեջ համապատասխան կարծիք, վերաբերմունք ու գնահատական մշակելով, դրանք հրապարակումների միջոցով փոխանցել իշխանություններին: Եթե իշխանությունները հաշվի են առնում ներքևից եկող կարծիքները, ազդակներն ու ճնշումները և դրան համապատասխան փոխում են իրենց գործունեության քնույթը, ապա դա կարելի է դիտել որպես ՉԼՄ-ների կառավարման պրոցեսին մասնակցելու ձև, ինչը իշխանության հատկանիշ է: Իշխանությունների նման գործունեության դեպքում, սովորաբար, նրանց առավել մեծ վստահություն են ձեռք բերում զանգվածների մեջ և առաջիկա ընտրություններում կարող են հավակնել իշխանության վրա մնալուն: Իսկ, երբ իշխանությունները անտեսում են ներքևից եկող ազդակների դերը, այսինքն

հաշվի չեն նստում ՉԼՄ-ներում նրանց տրված գնահատականի հետ, շարունակում են նույն ուղով կառավարել հասարակությունը, ապա կորցնում են վստահությունը զանգվածների մոտ և առաջիկա ընտրություններում հաղթելու հնարավորությունից զրկվում են Այս տեսանկյունից, ՉԼՄ-ները դառնում են իշխանության ձևավորման ակտիվ մասնակից, որը նույնպես իշխանության հատկանիշ է:

Ահա այն հիմնական առանձնահատկությունները, որոնցով օժտված լինելու և դրանք իրականացնելու դեպքում ՉԼՄ-ները դառնում են իրոք չորրորդ իշխանություն, ինչն էլ զանգվածային լրատվության միջոցներին դարձնում է հասարակության քաղաքական համակարգի կարևորագույն ենթահամակարգը և նրա զարգացման կարևորագույն գրավակակ:

6. Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի առանձնահատկությունները

Ուշադրությամբ նայելով Հայաստանի ներկայիս քաղաքական կյանքին, նրանում տեղի ունեցող զարգացումներին, կարելի է արձանագրել երկու հիմնական իրողություն: Առաջին, քոյր այն անհրաժեշտ քաղաքիչները /ինստիտուտներ, հաստատություններ, կազմակերպություններ և այլն/, որոնցից ձևավորվում և ամբողջանում է հասարակության քաղաքական համակարգը, հանրապետությունում կարծես թե առկա են, այսինքն քաղաքական համակարգի ձևավորման անհրաժեշտ տարրերը, թեկուզ և ձևավորոնք, քայքայ կան:

Սակայն քաղաքական համակարգը միայն նրա տարրերի սոսկ սեփականական գումար չէ: Քաղաքական համակարգը կայանում է այն ժամանակ, երբ այդ տարրերի միջև առկա է փախադարձ կապ, երբ դրանք փոխազդում են մեկը մյուսի վրա, փոխհարաբերության մեջ են գտնվում և փոխալայմանավորված են իրարով, որպես մեկ ամբողջական օրգանիզմի անհրաժեշտ քաղաքիչներ: Երկրորդ իրողությունը այն է, որ Հայաստանի քաղաքական համակարգի տարրերի միջև բացակայում կամ չափազանց թույլ են այն անհրաժեշտ փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները, առանց որոնց քաղաքական համակարգը կայանալ չի կարող: Հետևաբար, կարելի է ասել, որ քաղաքական համակարգը Հայաստանում դեռ կայացած չէ և գտնվում է ձևավորման փուլում: Եվ դա բնական է: Նախ այն պատճառով, որ Հայաստանը գտնվում է խորը տրանսֆորմացիոն գործառույթների՝ ասել է թե՛ անցումային փուլում: Եվ երկրորդ՝ Հայաստանում դեռևս կայացած չէ և ձևավորման պրոցեսում են գտնվում ոչ միայն պետությունը, որպես քաղաքական համակարգի հիմնական միջուկ, այլև քոյր այն ենթամակարգերը, որոնցից ձևավորվում է ամբողջական քաղաքական համակարգը: Ինքնին հասկանալի է, որ ձևավորման, կայացման փուլում գտնվող ենթահամակարգերի միջև փոխադարձ կապերն ու փոխազդեցությունները, փոխհարաբերություններն ու փոխալայմանավորվածությունը նույնպես կայացած չէ և չեն

կարող կատարել իրենց հիմնական ֆունկցիաները:

Նշվել է արդեն, որ հասարակության քաղաքական համակարգի բնույթը պայմանավորված է տիրող քաղաքական ռեժիմի բնույթով: Հայաստանի Հանրապետությունը գտնվում է անցումային մի այնպիսի փուլում, որտեղ առկա են և՛ ամբողջատիրական, և՛ ավտորիտար, և՛ ժողովրդավարական քաղաքական ռեժիմի տարրեր: Այս պարագայում, չնայած Հայաստանի Հանրապետությունը բռնել է ժողովրդավարացման ուղին, այնուհանդերձ, չի կարելի միանշանակ բնորոշել, թե ինչ քաղաքական ռեժիմ է հաստատված Հայաստանում:

1990 թվականի իշխանավորության արդյունքում՝ պաշտոնապես հայտարարվեց ամբողջատիրության վերացում, պաշտոնապես հայտարարվեց ժողովրդավարություն, սակայն արդյունքում, ինչպես և սպասվում էր, հաստատվեց մի քաղաքական իրավիճակ, որտեղ կարելի է հանդիպել վերը նշված քոյր քաղաքական ռեժիմներին քնորոշ գծեր: Դարձ դարձավ, որ քաղաքական համակարգերը չեն հաստատվում հայտարարությամբ, ավելին, հնարավոր է երբեմն այնպիսի հարաբերությունների հաստատում, որոնց մասին խոսք անգամ չի եղել:

1990 թվականից սկսած Հայաստանում իշխանության եկած քաղաքական ուժը որդեգրեց հասարակության կյանքի կառավարման մի սկզբունք, որը ավելի շատ հիշեցնում էր ավտորիտարիզմի քաղաքական ռեժիմին քնորոշ սկզբունքներ, անշուշտ, որոշակի առանձնահատկություններով հանդերձ: Համենայն դեպս, պետական մարմինների գործունեության ոճը միանգամայն համապատասխանում է ավտորիտարիզմի սկզբունքներին, ինչը, ինչպես արդեն նշվել է վերը, ամբողջատիրությունից ժողովրդավարության անցման դեպքում անխուսափելի է:

Դրա հետ միասին, հասարակության մեջ առկա էր ինչպես ամբողջատիրության ռեժիմին քնորոշ տարրեր, այնպես էլ ժողովրդավարությանը քնորոշ գծեր, ինչն էլ Հայաստանի քաղաքական համակարգին հաղողում է որոշակի առանձնահատկություններ: Նշենք դրանցից մի քանիսը՝

1. Ամբողջատիրական և ավտորիտար քաղաքական ռեժիմները, հատկապես քաղաքական իշխանության իրականացման սկզբունքների առումով, բավականին շատ ընդհանուր գծեր ունեն: Դրա հետ միասին, դիտարկումները ցույց են տալիս, որ այս երկու համակարգերի միջև եղած էական տարբերություններն անգամ /ամբողջատիրության պարագայում սեփականության նկատմամբ պետության մենաշնորհ, միակուսակցական համակարգ, պաշտոնական զաղափարախոսություն, իշխանության գերկենտրոնացում և այլն, ավտորիտարիզմի ժամանակ մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների առկայություն, կուսակցությունների, այլախոհության, ոչ պաշտոնական լրատվամիջոցների առկայություն և այլն/, խոչընդոտ չեն հանդիսանում երկու քաղաքական համակարգերում կիրառելու իշխանության իրականացման միևնույն սկզբունքները:

Հայաստանում ամբողջատիրությունից ժողովրդավարության անցման

հենց սկզբից իրականացվեց այնպիսի քաղաքականություն, որը կարծես կայատև ուներ հաստատելու ոչ թե հայտարարված ժողովրդավարությունը, այլ ավտորիտարիզմ, ինչն էլ տեղի ունեցավ, իհարկե գերծ չմնալով նաև ամբողջատիրությանը բնորոշ կառավարման սկզբունքներից: Դրա պատճառները, ինչպես առարկայական, այնպես էլ ենթակայական, բազմաթիվ են:

2. Տասնյակ տարիներ ապրելով ամբողջատիրության պայմաններում, ժողովուրդը սերնդե-սերունդ դաստիարակվել է նրա սկզբունքների, գաղափարախոսության, տնտեսական հարաբերությունների ազդեցությամբ: Այդպիսի մտածողությամբ և հոգեբանությամբ ապրող հասարակությունը չէր կարող կտրուկ անցում կատարել լրիվ այլ սկզբունքներով գործառնող քաղաքական համակարգ: Անել է, թե հասարակությունը ոչ հոգեբանորեն, ոչ գաղափարապես, ոչ տնտեսական ու սոցիալական առումով պատրաստ չէր ո՛չ մասնավոր սեփականատիրական ու շուկայական հարաբերությունների, և ո՛չ էլ ժողովրդավարության պայմաններում ապրելու: Դրա համար անհրաժեշտ ժամանակ և հստակ մշակված քաղաքական ծրագրերի իրագործում է պահանջվում, ինչը անցումային հասարակության հիմնական խնդիրն է:

3. Դեդափոխությունների արդյունքում սովորաբար իշխանության են գալիս կամ ազգային հայրենասեր ուժեր, որոնք առաջնորդվելով ազգային-պետական շահերով, իշխանության լծակներն օգտագործում են պետության կայացման համար, եթե դրա կարիքը կա, ընտրելով տվյալ ժողովրդի զարգացման մակարդակին, նրա ավանդույթներին, առանձնահատկություններին համապատասխանող և ընդունելի քաղաքական համակարգի ձևավորման ուղին: Կամ որոշակի շահեր հետապնդող արտաքին հզոր քաղաքական ուժերի աջակցությամբ իշխանության է բերվում մի խումբ, որի հիմնական խնդիրն է ոչ թե պետականության, այլ սեփական իշխանության կայացումը և նրա միջոցով սեփական շահերի պաշտպանությունը: Դրա հետ միասին, անշուշտ, իրագործելով իրենց հովանավորների թելադրած քաղաքականությունը: Հայաստանի պարագայում տեղի ունեցավ երկրորդ տարբերակը և մենք ունեցանք դրանով իշխանություններ: Պատմությունը ապացուցել է արդեն Ասորայի, Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի շատ երկրներում, որ այն երկրներում, որտեղ իշխանության են բերվում դրանով արած ուժեր, այնտեղ հասարակության հետընթացը, քայքայումը, անօրինակականությունները, հովանավորությունը, զանգվածային քարոյազրկումն ու արտագաղթը և էլի բազում քաղաքական դրսևորումներ դառնում են անխուսափելի: Այդպես եղավ և Հայաստանում:

4. Ամբողջատիրությունից ժողովրդավարության անցման ժամանակ ամենակարևորագույն գործընթացը սեփականաշնորհումն է: Դրանից է կախված, թե պետականության կայացման հնարավորությունը, և թե հայտարարված ժողովրդավարության հաստատման հնարավորությունները: Այն, ինչ տեղի ունեցավ Հայաստանում, ոչ մի առնչություն չունի ոչ օրինական սեփականաշնորհման, և ոչ էլ ժողովրդավարության սկզբունքների հաստատման հետ: Սեփականաշնորհման անվան տակ տեղի ունեցավ պետական քաղա-

քականության աստիճանի բարձրացված ազգային հարստության քացարծակ թալան:

Պետության օրենսդիր և գործադիր իշխանությունների հիմնական խնդիրը դարձել էր թալանը ապահովող օրենքների ընդունումը, իրավապահ մարմինները ապահովում էին թալանի անվտանգությունը, մեկուսացնելով, կանխելով ու հալածելով բոլոր այն դրսևորումները, որոնք փորձում էին խղճնդոտել թալանի գործընթացին: Ստեղծվել էր այնպիսի մեխանիզմ, որ սեփականաշնորհելու իրավունք ունեին միայն վերից-վար իշխանավորներն ու նրանց մերձավորները, կամ փողատեր համակողմները: Պետական ունեցվածքը չնչին գներով հանվել էր վաճառքի, իսկ գներու իրավունքը պատկանում էր միայն իշխանախմբին կամ նրանց կաշառողներին: Այս բոլորը կատարվում էր քննությամբ, դիրքի և պաշտոնի չարաշահումներով, քացահայտ, ք տես բոլորի: Այս պարագայում իշխանության իրականացման սկզբունքները լրիվ համընկնում էին ավտորիտարիզմի քաղաքական ռեժիմի սկզբունքներին, ամբողջատիրությանը բնորոշ որոշ տարրերի առկայությամբ, որը իշխանության գործունեությունը դարձնում էր ավելի կոպիտ ու գոեհիկ քննության ձև:

Այսպիսին էր Հայաստանի քաղաքական համակարգի բնույթը մինչև 1998 թվականը, ինչն էլ մեզ թույլ է տալիս այն բնութագրել որպես ժողովրդավարության քողի տակ գործող ամբողջատիրական քաղաքական ռեժիմի վատթարագույն գծերով համեմված գոեհիկ ավտորիտարիզմ, որին մեխանիկորեն կցվել էր նաև սանձարձակ լիբերալիզմի որոշ տարրեր:

5. Եվված ժամանակաշրջանում իշխանությունների գործելաճը, որը հենված էր օրենքների շրջանցման, անպատժելիության, հովանավորության, պետական հաստատությունները սեփական շահերի նպատակահարմարությամբ օգտագործելու սկզբունքի վրա, անհետևանք մնալ չէր կարող: Չքացահայտված սպանությունները, հանցագործությունները, ապօրինությունները ծնում էին նորանոր հանցագործություններ: Իրավապահ մարմինները զբաղված էին ավելի շատ հանցագործությունների քողաթվմամբ, քան թե քացահայտմամբ: Եվ դա բնական էր, բանգի իրավապահ մարմինները նախ կատարում էին իշխանախմբի կամքը, երկրորդ՝ հագեցված էին հանցավոր աշխարհի տարրերով: Անօրինակականությունները թե՛ իշխանությունների, թե՛ պետական այլ մարմինների, և թե՛ հատկապես իրավապահ մարմինների կողմից կատարվում էին անթաքույց, քացահայտ, կարծես հատուկ ծրագիր կար հասարակության մեջ ամրագրելու այն կարծիքը, որ իշխանությունները անպատժելի են: Եվ դա նույնպես անհետևանք չմնաց:

Հասարակության կողմից անօրինակականությունները, իսկ երբեմն էլ նաև հանցագործությունը ձեռք էր բերում ապրուստի միակ միջոցի նշանակություն: Հանցավորության վիրուսը տարածվում էր հասարակության բոլոր շերտերը: Իրականությունը դարձել էր ոճրածին:

6 Հայաստանում այսօր արդեն 120-ից ավելի կուսակցություններ կան: Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս փոքրիկ հանրապետությունում այս-

շափ կուսակցությունների առկայության պայմաններում հասարակական քաղաքական դաշտը պետք է որ լինի զբաղված լինե՝ Այսինքն, հասարակության բոլոր շերտերի շահերը, կարծես թե, ներկայացված են՝ Սահայն դիտարկումներից ջուրը են տալիս, որ դա ընկալ էլ արդյունք է ժողովրդի ճշդ մեծամասնությունը որևէ կուսակցության չի վստահում՝ հիանալ արդև կուսակցություններից շատերը բզուկ, մի քանի հողիանց կուսակցություններ են՝ Բայց ճանաչված, ծակալեչի կուսակցություններն էլ մեծ վստահության չեն արժանանում: Հայաստանի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ չափազանց քաղաքականացված է հասարակությունը և նույնքան անաքաղաքականացված է սնակությունը, այսինքն մեակության ճշդ մեծամասնությունը անաարքոր է քաղաքական իրանդարձությունների կամենալը: Արտերից կարելի է եզրակացնել, որ

ա/ Հայաստանում կուսակցությունների, որոնք քաղաքական համակարգի կարևորագույն ինստիտուտ, դեռ առկացած չեն

բ/ ժողովրդի ազատագրագրությունն ու քաղաքական անտարրերությունը կրան չեն դարձնում քնտրությունների միջոցով իշխանություններ ձևավորող հրական գործունեությունը, պետք է արձանագրել, որ ժողովրդավարական քաղաքական համակարգի կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ քնտրությունների ինստիտուտը նույնպես կայացած չէ

1998թ. փետրվարյան իշխանափոխությունից հետո նոր իշխանությունները գործունեության սկզբունքներն ու քաղաքականության մեջ որոշակի ուղղություններում կատարած դրական փոփոխություններից (Ղարաբաղի հարցի լուծում, Հայոց զեղասպանության միջազգային ճանաչում, կուսակցությունների, մամուլի միջոցների, անտառների նկատմամբ հայաստանի դադարեցում և այլն), որոշակի հույսեր են ներշնչում, որ Հայաստանը հաստատակամորեն ընթանում է դեպի շուկայական հարաբերությունների հիմքով ժողովրդավարական քաղաքակալ ուսանալիցի հաստատում: Անշուշտ, արդյունքները շատ անելի շրջափելի պիկեին, եթե տեղը լուծենար 1999թ. հուլիսի 27-ի ռճագրությունը, ընչը որոշակի սպղեցություն ունեցալ հասարակական նյաքի ապակայունացման ու զարգացման տնկների թուլացման առումով

Անտիանտերձ, անցած հննգ տարիների ընթացքում նկատելի տեղաշարժեր են կատարվել հասարակության տնտեսական քաղաքական սոցիալական ու հոգևոր-մշակութային ոլորտներում, որոնց միսնուս ժանանակ կարելի է դնել որպես անցումային փուլի այս-ժամանակատիանում անտություն կարկնացման ու քաղաքական համակարգը ձևավորմանն ուղղված փուլիների իրականացման անհրաժեշտ կարևորագույնը (մատրաման տես գրքի գլուխ 8, էջ)

Գրականություն

1. Արամյան Է., Իսրիկ Ե. Գրականության ընթացիկ ու ժամանակակից կարևորագույն ոլորտներում կատարված ուսումնասիրությունները 1992-94
2. Արամյան Է. Ժողովրդականությունը, Մ. 1993
3. Արամյան Է. Ա. Փոփոխումները կուսակցության համակարգում 1995-98
4. Իսրիկ Ե. Կ. Եզրույն կուսակցության կազմում, Մ. 1991
5. Իսրիկ Ե. Կ., Արամյան Է. Ա., Փոփոխումները կուսակցության համակարգում 1999
6. Կուսակցության իր. Իսրիկ Ե. Կ. Կուսակցության կազմում և կարևորագույն ոլորտներում, Մ. 1994
7. Կուսակցության իր. Իսրիկ Ե. Կ. 1999
8. Կուսակցության իր. Իսրիկ Ե. Կ. 1998
9. Կուսակցության իր. Իսրիկ Ե. Կ. 1999
10. Կուսակցության իր. Իսրիկ Ե. Կ. 1999

ՉԼՈՒՎ ԿԵՑԵՐՈՐԴ
Պետությունը և հասարակությունը
2. Պետության ծագումն ու բնույթը

Պետությունը սոցիալական երևույթների յուրահատուկ տեսակ է, որն ունեցել է ու կարգազան քրեական սխալական ճանաչակազրկմանը և որպես այդպիսին, այն նաև պատմական երևույթ է Պետությունը իր սեփական սոցիալապատմական երևույթ ծագել ու զարգացել է հասարակական մյուս երևույթների, հատկապես հասարակության ծագումն ու զարգացմանը կուզվեալը:

Այն պետությունը, թե՛ նախապարզ հասարակության ժամանակ պետությունը չէր եղել, պետությունը է ընդունել վերապահումն: Այն ձևով ու բովանդակությամբ, ֆունկցիաներով ու կառուցվածքով պետությունը, որ ամբողջված է սեր պատկերացումներով, իրոք որ նախադրույթ է լինել չէր կարող: Անկասկած, պետությունը, որպես սոցիալական բարդ երևույթ, պատրաստի ու միանգամից չի առաջացել, այլ անցել է իր ձևավորման երկարատև հազարամյակների և այն սկսել է հենց նախնադարից, զո՛ք դրա ժամանակ հասնում ենք մարդկային հասարակություն: Մոզայական շատ երևույթներ են, պետության ձևավորումն էլ է սկսվել նրա այս կամ այն տարի: Ֆունկցիայի կողմը կամ ինտելեկտի առաջնությունը, հաստատմամբ՝ զարգացմամբ ու կառուցվածքով: Իսկ որ նախնադարում պետությանը բնորոշ տարրեր ու ֆունկցիաներ եղել են, անսխալ է ձեռք համատեղ ռուսի շրջակայքից պաշտպանվելու կազմակերպումը, առաջնորդին ենթարկվելու, ուղղակի կորստեր հոսանք (քա համատեղ տարրեր երևույթը տրոհել պետության տարրերի և ֆունկցիաների առկայություն են ենթադրում, լինալով դրանց պարզունակ ուղղակի, թույլ ու անկասկած դրամորոշմանը:

Հասարակության զարգացմանը զուգընթաց, որպեսզի որ բազմազան է հասարակական զանազան կազմակերպումներ, այնպեսզի նրանում ուղղակի լինալով, տարրեր ու ֆունկցիաներ են առաջացել և հազարամյակների ընթացքում աստիճանաբար ձևավորվել է հասարակության կազմակերպման ու կառավարման այնպիսի ամբողջական համակարգ, որին այսօր պետություն են կոչում: Հետևաբար, պետությունը սկսել է ձևավորվել հասարակության ձևավորմանը զուգընթաց: Որքան զարգացել է մարդկային հասարակությունը, այնքան պետությանը բնորոշ տարրեր ու ֆունկցիաներ են ծագել ու հաստատվել, որքան բարեացել է հասարակական կյանքը այնպես մեծացել է նրա կազմակերպական ֆունկցիայի անհրաժեշտությունը: և որքան միասնական ու ամբողջական է դառնել հասարակությունը, այնքան նրա տարրերն ու ֆունկցիաները միավորվել ու ամբողջացել են մեկ համակարգի մեջ: ամբողջով պետության ամբողջական պատկերը:

Չիտական գրականության մեջ պետության ծագման մասին տարբեր երևցնազրկանքներ կան: Եղանակները և պատկերացումները տե՛ս մեզին նախապատկերություն չտալով, հակված ենք սարթել, որ դրանից յուրաքանչյուրում արձա-

կազմված նախադրյալները, գործունեությունը որոնք պետության առաջացման հոսք են ցնդում, կարող են ընդունել լինել այնպեսզի, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը իրոք կարող է այս կամ այն կոնկրետ պետության առաջացման համար դիմապահում լինել: Այսպես թե սովալ մարդկային հանրույթը պատմական որ ժամանակաշրջանում, հասարակության զարգացման հնչախոս աստիճանում, աշխարհագրապետական հնչախոս ռեզիմում և բնակչությանական ինչպիսի պայմաններում է գտնվել: Այսինքն պետության ծագման մասին եղանակները կոնցեպցիաներից տե՛ս մեզը չի կարող հակվել: Վերջնական եզրակացության, առաջին կարող է ընդունելի լինել, եթե ընթաց վերաբերում է պետության ծագման առանձին դեպքերի, որպես կոնկրետ ժողովրդի հասարակության զարգացման որպես աստիճանի:

Հետևաբար, ծնչալ չէր լինի բոլոր պետությունների առաջացման համար միևնույն նախադրյալներն ու դիմացին ընդունել: Նախ այն պատճառով, որ բոլոր պետություններից միաժամանակ չեն առաջացել և մոտ մեծ զորքն էլ ծագում ու ձևավորվում են նոր պետություններ: Մարդկային հասարակության զարգացման տարբեր աստիճաններում, աշխարհագրապետական դիրքի տարբեր պայմաններում պետությունների առաջացման համար տարբեր պայմաններ, նախադրյալներ ու գործոններ են եղել: Մի շարք նախադրյալներ ու գործոններ, որոնք հազարավոր տարիներ առաջ կարող էին և եղել են պետությունների առաջացման հիմնական պատճառներ, հասարակության զարգացման հետագա աստիճանում կարող էին և եսկան դեր չխաղալ որպես պետության առաջացման նախադրյալներ: Օրինակ՝ աշխարհակցի ժամանակ, մասնավոր սեփականության ծագումը, հասարակագործի ծագումը, արտաքին անդիմացական գործոնը, դաշինքի տեսությունը և այլն:

Երկրորդ, պետությունների առաջացման և զարգացման պրոցեսում մեծ է աշխարհագրապետական դիրքի և բնակչությանական պայմանների գործոնի դերը: Հայասնի է որ երևույթների ժողովուրդները միևնույն աշխարհագրապետական դիրքում ու սեփականական պայմանները չեն ունեցել: Հետևաբար չեն կարող ռե՛սենալ նաև միևնույն զարգացման մակարդակները, համարվորություններն ու պայմանները, իրենց կյանքի կազմակերպման միևնույն ձևերն ու սկզբունքները:

Իրենց աշխարհագրապետական դիրքն ու բնակչությանական պայմանները նպաստելով են եղել և մարդկի իրենց գոյության անհրաժեշտ միջոցները բնությունից վե՛րցող են պատաստի, այնտեղ, ինչպես ասում են, պետության առաջացումը կարող էր և պատել: Նման պայմաններում գտնվող հասարակության մեջ պետությունները առաջացել են շատ ավելի ուշ: Երկրի մեջ ժամանակաշրջանում մարդկայի ջոկաչվեքում ուղղակիաբարվում են կհասկացալի թե՛ր, որոնք պետության մասին ոչ մի զարգալիտ լուսնեկ վելին, արտեղ բնությունից պատրաստի վե՛րցելու հանգամանքը խոչընդոտել է մարդկանց աշխատանքային գործունեության զարգացմանը, ինչը այլ հանաճամանքներում կարող էր պետության առաջացման հիմնական նախադրյալներից լինել:

Անկայն եղել են տարածքները որտեղ մարդիկ իրենց գոյության անհրաժեշտ միջոցները ստիպված են եղել իրենց ստեղծել: Անշուշտ, նկատի ունենք մարդկային հասարակության զարգացման այն աստիճանը, երբ մարդիկ ընդունակ են եղել ստեղծելու, զարգացնելու հողագործությունը, անցնելու տարբեր մշակութային քայլեր: Դրա համար շատ դժվար անհրաժեշտ է եղել մարդկանց համատեղ աշխատանքի կազմակերպում: Հողից բերք ստանալու նպատակով պահանջվել է հարյուրավոր կիլոմետր երկարությանը ջրանցքների կառուցում, ինչը մեծաթիվ մարդկանց ջանքերի համատեղում էր ենթադրում, որն առանց ինչ-որ ձևով կազմակերպման հարավոր չէր: Չրինակ՝ եղիպատում, որտեղ մարդկանց գլխավոր զբաղմունքը հողագործությունն էր, կառուցում էին հարյուրավոր կիլոմետր երկարությամբ ջրանցքներ, անտառաներ, ոռոգման հանգույցներ: մշակելի էին դարձնում ոսկայանյան տարածության տափաստաններ, ենթաէլի հովտում յուրացնում էին ծախիճները և այլն: Իսկ այս օրոքը մարդկային գոյությանի հանրայինների ուժերով հնարավոր չէր թրագործել: և պահանջվում էր մեծաթիվ մարդկանց համատեղ աշխատանքի կազմակերպում: Դրա համար պահանջվում էր հզոր իշխանություն, որը կարողանար թողնի անհրաժեշտության դեպքում ստրուկոսով ու կազմակերպել այդ աշխատանքները թրակասցաներու համար, ինչն էլ, ըստ երևույթի, հանձնեցել է Եղիպատանան ստրկատիրական պետության արաջացմանը:

Այս դեպքում, մյ կողմից լայն թափով զարգանում է հողագործությունը պրոստուանքը և մարդկանց մասնագիտանալու ընդունակությունները, մյուս կողմից ձևավորվում ու զարգանում են պետությանը ընդողջ այնպիսի մարդեր ու ֆունկցիաներ, ինչպիսիք են կազմակերպումը, պատվարումը, անտառադանքը, անտառությունը և այլն: Այս պարագայում արդեն պետության անաբարումը լի կարող հարկադել ջանգի այդպիսի աշխատանքադարախան (տարածքում) և ընակլիմայական պայմաններում ապրող մարդկային հանրությունների ռամար նրանց գոյության հետագա հնարավորությունը ստվանակողրգած էր պետության արաջացմանը:

Երրորդ, պետությունների առաջացման կարևորագույն նախադրույններից է նաև արուացին գործոնը, հատկապես այս կամ այն ցեղերի, ժողովուրդների կիզից մյուսներին նվաճելու հասգամանքը:

Մասնությունը մեզ ծանուցել է թագմաթիվ տասներ, որոնք վերաբում են մյ շարք ժողովուրդների և պետությունների անհետացման (մեծերիկյան մարդամազի տեյաթնակներ, մեծոպող արաճելի տարածքի ժողովուրդներ ու պետություններ, Ատուրտան, Հոմի կայսրություն, Բլուգաեդիա և այլն) և նոր պետությունների ձևուրից, կեծերիկյան մարդամազի պետություններ: Մուծալյան կայսրություն և այլն առաջացման մասին Մլշաթիլի դիտարկելու դեպքում ասողք է դանում, որ ինչպես պետությունների անհետացման հիմնական պատճառը, այնպես էլ նոր պետությունների առաջացման դիտարկան նախադրույնները, կարող էր և նվաճողական գործոնը լինել: Այլ ժողովուրդների և պետությունների նվաճման ճանապարհով պետությունների

նվազուման գործընթացը առավել զայտուն դրանուրից է թագմաշունը, բարձարում և ջրվոր ցեղերի նստակյաց կյանքի անցնելու պրոցեսում: Թագմաշունը, ջրվոր ցեղերը երբեմն հազարավոր կիլոմետրեր էին անցնում մոնոլիթի, բուրյեյի ավերելով, թայմանելով ու ոչնչացնելով ոյոցեց ճանապարհին պատռուած անեն յույն և իրենց համար հարևար տարածքներ: Նկատելով հիմնել են իրենց պետությունները, կայսրել պետք է նշել, որ նվաճողներից զաճել ու յուսացրել են ոչ միայն տարածքներ, այլև այդ տարածքներում ապրող ժողովուրդների մշակույթը, ինչը նրանց արան թարգմանարարելու հնարավորություն է տվել:

Ստուացին կտանգի գործոնը պետությունների առաջացման նախադրույն է եղել նաև հակառակ կողմի՝ նվաճվող ժողովուրդների և ցեղերի համար: Այսինքն պետությունները կարող էին առաջանալ ոչ միայն նվաճելու, այլև ընկաճելու հետևանքով: Ծառ փոքրաթիվ, հարակից տարածքներում ապրող, երբեմն լեզվամտածողության ընդհանրություն ունեցող ցեղեր ու տոհմեր ստուացին իզոր ուժերից պաշտպանվելու նպատակով կամավիմ շեղվորդել են դաշխք են կնքել, ստեղծելով ընդհանուր պաշտանանական կառույցներ, նորմեր, սկզբունքներ, օրենքներ և վերջապես պետություն, որպես երկրորդ ամբողջականությունը և ժողովրդի անկտանգությունը պաշտպանող հիմնական կառույց:

Ժողովրդ վեղին հարյուրավանում ազգային ազատագրության ասպարի մերեցը արողը աշխատում հանգեցրեց զարդաթափրության փրուգման ու վերսրման: Արդյունքում տասնյակ նոր պետություններ առաջացան: Գնաարակության զարգացման արդր աստուանում մի կողմը զարդաթագված ժողովուրդները այսպես թե այնպես հարդույնացվում էին քաղաքայր թույթյան նկանուրեւիլի հետ, իենց նրանց նվաճողների միջոցով, մյուս կողմից զարդաթափր պետությունները այդ տարածքներում հաստատում էին որոշակի պետական հանակարգեր: Այս երկու հանգամանքները զարդաթագված ժողովուրդներին հնարավորություն տվեցին ազատագրվելուց և անկախություն ձեռք բերելուց հետո ստեղծել սեփական պետություն, ընդորինալ կելով այս կամ այն պետության կառուցվածքը, շրջանցելով այն տայն ճանապարհը, որով հազարամյակներ անցել են այլ ժողովուրդներ միայն պետության վերջնական նվաճորումը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը շատորթածը կարելի է զգրակացնել, ա պետությունները առաջացել են հազարամյակների ընթացքում, մարդկային հասարակության առաջացման և զարգացմանը գուղընթացքի՝ պետությունների առաջացման երկախանու ժամանակաշրջանում: սկզբնական շրջանում առաջացել ու հաստատվել են պետությանը բարող այն տարածքն ու ֆունկցիաները, որոնք հասարակության զարգացման տվնալ անորճանում մարդկային հանրույթի գոյության և կյանքի կայունակերպման անհրաժեշտ պայմաններն են եղել, ինքնին ռապանալիլ է, որ ռասարակության զարգացման նախող անտիճաններում, պետության ննակորման սկզբնական փուլերում շատ ֆունկցիաների կիրառման անհրաժեշտություն

լի եղել՝ Երիեակ՝ իշխանության բաժանման սկզբունքը, քաղաքագրական այլ ինստիտուցիաները հետ փոխհարաբեռնությունը, ընտրությունների անցկացումը և այլն՝ հետագայում հասարակության զարգացման ու նրա կյանքի շարժումները գնդված ծագել ու ձևավորվել են նոր տարրեր ու ֆունկցիաներ, որոնք սիստեման հետևանքով աստիճանաբար ձևավորվել է այն ամբողջական համակարգը, որին պետություն ենք կոչում:

զ/ Քանի որ պետությունները չեն առաջացել միաբանման և միանույն պայմաններում, ապա բնական կլիմեր կարծել, որ նրանց առաջացման որմնական նախադրյալները, կախված հասարակության զարգացման աստիճանից, ազխարժեքադաշտական դիրքից և ժնակլիմայական պայմաններից, տարբեր են եղել, նայած թե տվյալ պատեր որ գործոնների ու ֆունկցիաների անկրածեշտությունն է առաջնային եղել հասարակության զգույության համար:

Պետությունն առաջացել է որպես հասարակության կյանքի կազմակերպման, նրա գոյության և հետագա զարգացման անկրածեշտություն, ինչը ապամասնավորված է եղել մարդկանց համատեղ սարկելու պահանջմունքից:

Պետությունը ընտրոշեիա մեզք թաշգի ենք անուում հասարակության մեջ չրա ունեցած՝ ռոնց, հիմնական ֆունկցիաները, գործառնության ընկյոթ, իշխանության իրականացման ձևերը, սկզբունքներն ու նպատակները, սոցիալական այլ երևույթների հետ ունեցած օտիւտարաբերությունների ընկուծք և այլն: Ռա է թերեւ պատճառը, որ մի կողմից տարբեր ստեղծանմաներ ենք հանդիպում, մյուս կողմից, եղած սահմանումներից ոչ մեկում հնարաձուր չի լինում ընդգրկել պետությանը ընտրոշ թոյոր գծելն ու հանկանիչները, առանձնահատկություններն ու ֆունկցիաները, սկզբունքներն ու գործառնության եղանակները և այլն: Ուստի ընկալիս ընտրոշում էլ տրվի պետությանը, առանց լրացուցիչ մեկնաբանությունների հնարավոր չէ ամբողջական առուկերացում կազմել սոցիալական այդ բարդ երևույթի մասին:

Այսպիսով՝ պետությունը որոշակի տարածքում օրենքների կիրրսումամբ հասարակության կառայարումը իրականացնող, իշխանությանը օժտված հաստատությունների և կազմակերպությունների ամբողջական համակարգ է:

Պետության ընտրոշ գծերն են.

ա/ որոշակի սահմաններով տարածք, որի վրա տարածվում է տվյալ պետության իշխանությունն ու օրենքները:

բ/ շնակության անգաղությունը, որոնց համար ասարտադրո են պետության ընդունած օրենքները: Բնակչությունը նառո է լինել ինչպես միասնազգ, այնպես էլ քաղմազգ:

գ/ հաստատությունների և կազմակերպությունների յուրահատուկ համակարգի անկախությունը, որոնց իրականացում են պետական իշխանության ֆունկցիաները:

դ/ օրենքների, թրագրւքների, նորմերի հաճնկարգի անկախությունը, որոնց կարտադրո են հասարակության թոյոր անդամներն և անհնկնուստի համար:

ե/ հատուկ սպառտորնակի մակարառի /բանազ/, անտուսնության և կառո ռ կանոնի պատկանության ծառայություններ, հարկային տեսչություն և այլն անկախություն:

զ/ պետությունը քաղաքական իշխանությանը օժտված և ուղ հաստատությունների իշխանությանը օժտելու միակ իրավաւոր սուրբեկո է:

է/ սպառտությունն ունի օրենքներ, որոշումներ ընդունելու և դրանց կիրրսության վրա ունելու մեծաշեղի:

ը/ պետությունը արգելելու, ստոմանահակելու, պնտարդելու և հակելու օրոնուկան մեծաշեղի ունի:

թ/ պետությունը հասարակության կառայարման որմնական քնտրտուն է, կամ ինչպես ընդունված է ստել, քաղաքական իշխանության հիմնազան կազմակերպությունն է:

Պետության ժամանակակից տեսությունների հիմքում ընկած է իրավական գործոնը, որովհետև պետության հիմքում դրվում է ժողովուրդների իրավունքները և իշխանությունը կառավում է մարդու իրավունքների պաշտպանության գործոնի հետ՝ Քանի որ մարդու և ժողովուրդների իրավունքները ընդունված և արձանագրված են միջազգային իրավունքի սկզբունքներում և նորմերում, որի իրականացումը ընդո պետությունների համար պատտադիր է, ապա պետությանը միջազգային իրավունքի տեսանկյունից դիտվում է որպես քաղաքական իշխանուստուն իրականացնող կազմակերպության շրավական ձև:

2 Պետության դերն ու հիմնական ֆունկցիաները

Ինչպես պետությունը, այնպես է նրա դերն ու ֆունկցիաները աստուութայն մեջ անփոփոխ չեն մնացել և դասարանական զարգացմանը գաղձնուրաց ձևափոխելու ու կերպարանափոխվել են՝ ձեռք բերելով նոր դեր ու իշխանություն և նոր որոնորումներ ու առանձնահատկություններ:

Երբ հանգամանքը հաշվի անելով, շատ գիտնականներ կործակել են պարզել, թե ինչ հետակար է սպաւկում պետությանը, ինչպիսին է լինելու նրա ներտագա զարգացման ընտաքը, ինչ դեր է ունենալու ասագայում պետությունը հասարակության կյանքում: Համըտիանուտ սոցիալական հավասարության գաղափարախոսները, առաջին հերթին մայրախառնները ելնում են նրանից, որ ապագա հասարակությունը լինելու է անոասակարգ, առանց ռաւնաւոր սերականության հասարակություն, որոնեղ չի լինելու կոցիալական շնտրոնի մրքե թիչ թե շատ ուղիչ հակասություններ: Այդպիսի գաղաքման հետևանքով անտությունը, որպես հասարակությանը պաշտպանող և կարգավորող ընտրտուտ, շնակառն ճանաւարիով աստիճանաւոր մարանում է, քանի որ նրա որմնազան ֆունկցիաները սուկս պետոց չեն լինելու:

ուղղիցան հասարակությունը լինելու է միաժամրո, ակոսասկանոց, ստանց մասնավոր սեփականության գոյության, լինելու է իրենազակա հասարակություն՝ կոմունիզմ Այս տեսության կողմնակիցները էլնում են ռասայականորոշմից, քանի որ պետությունը առաջացել է մասնավոր սեփականության առաջացման և դասակարգերի ձևավորման հետևանքով, ապա քննաան է, որ նրանց անհետացման հետ զուգընթաց պետք է անհետանա նաև պետությունը Այստեղ կարելի է անել երկու վերապահում, նաև, թե որքանով է հնարավոր հասարակության զարգացման հատկապես այդպիսի ընթացքը, առավել նա որ հասարակության զարգացման արդի աստիճանում այդպիսի գաղափարների որակաճացման որևէ իրանան ճիճը չկա

Նույնորոգ, պետության ֆունկցիաները չեն սպառվում միայն հասարակական շեղաներով միջև հարաբերությունների կարգավորումով և մասնավոր սեփականության պաշտպանությամբ Պետությունը դրանից զատ բազում այլ ֆունկցիաներ ունի, և նույնիսկ եղյած ֆունկցիաների վերադրումը /որը լինել չի կարող չի ելանակր պետության վերացում

Կեր նաև պետության մասին լիերակիզմի գաղափարախոսությունը որպես անուղև է, որ պետության դերը հասարակության կյանքում պետք է նվազեցվի, պետք է սահմանադրակցի նրա հստակության որավուցը: Ընկերով ունենոր թազի գաղափարախոսություն, լիերակիզմը ձգտում է ապահովել անհատի անաստանագիան ազատությունը, որը ինչպես հայտնի է, մապելի կարող է լինել հարուստներին ու ուսելներին, քայց ոչ հասարակ տողովորին: Թե ինչ հետաաններ է թողնում այդ գաղափարախոսությունը, ինչպիսի հասարակական շարիք է ծնում սանձարձակ լիերակիզմի դրսևորումները այնուհու, որտեղ այն պետական քաղաքականության աստիճանի է բարձրացված, աստիճանացում կազմելու համար բավական է ուշադիր զիտարկել աուպիտի պետությունները որևէ մեկի սոցիալ-քաղաքական կյանքը, քրինակ՝ ԱՆՆ Այդպիսի նուկրներում ունեցագործության աճը կազմաներկյած հանցագործությունը, բարակուկությունը, պոսիկությունը, զանգվածային քաղաքացրկումը դատում են սնխուսապելի Այստեղ ամեն ինչ ապանք է աո ու ծանխ առարկա: Ղրա համար էլ ուժեղները, փողաուերերը, հանցավոր աշխարհը ձգտում են մեկուսացնել պետությանը, ռոսյեզի ազատ գործելու իրավիանք ունենան: Այդպիսի սցենարով կարողցնց նաև Հայաստանի պետականությունը

Իրականում հասարակության զարգացումը ավելի ու ավելի է քաղաքարում հասարակազան կյանքը և նրա կրթական ու ողգնոր կյանքի քարուցմանը զուգընթաց անցելուստ աճում է նաև պետության դերը: Գնալով նրաուոր խնդիրներ են օտաանում հասարակության առջև, որոնց անհատաճելի լուծում են պահանջում, ինչը առանց պետական կառուցվածքների իրականացնել հնարավոր չէ: Օրինակ՝ շրջակա միջավայրի հետ կապված, առասպշուրյան աճը հետ կապված խնդիրները և այլ շատ խնդիրներ, որոնց լուծումը պետական կազմաներակյած մոտեցում է պահանջում: Այնպես որ, պետության դերն ու նշանակությունը գնալով ավելի աճելու միտում ունի, բանի

որ նաև հազարամիակնոր շարունակ եղել է հասարակության կառավարման, նրա գոյության անհրաժեշտ ծրայիցը և որպես այդպիսին, որ դերն ու նշանակությունը չի սրոցներու առաքինա հազարամիակում

Հասարակության զարգացումը ընթացել է այն ուղղությամբ, որ նրա կյանքում անցելուստ կոմիտխություններ են աճել ունեցել, հազել ու ձևավորել են նրանոր խնդիրներ, հարաբերություններ ու մոտեցումներ, որոնց մարտնառ են դարձել, ինչպես պետության, այնպես էլ նրա ֆունկցիաների փոփոխության համար Մտկայն մի շարք ֆունկցիաներ մնացել են անխմեխ, և ուրողչ են ցանկաբաժ պետության: Օրինակ՝ հասարակության պաշտպանությունը առապելի մասնելից, հասարակության կառավարումը, պարսկադանքը և այլն: Ընդունված է պետության ֆունկցիաները բաժանել երկու խմբի՝ ներքին և արտաքին: Լորքին ֆունկցիաները վերաբերում են քաղաքական, իրավական, կազմաներոցյաան տնտեսական, սոցիալական, կրթական, կրպուր դաստիարակական բնույթի խնդիրների որակաճացմանը:

Քաղաքական ֆունկցիան կապված է քաղաքական իշխանության իրականացման հետ, որը թույլ է տալիս ապահովել հասարակության քաղաքական կառուցությունը, քաղաքական կուսակցությունների և հասարակական ինստրուանտները հետ հարաբերություններ, ինչպես նաև ազգային հարաբերությունները կարգավորումը և հասարակության զարգացման եզգանակների և խնդիրների որադրման ծրագրերի մշակումը: Պետության քաղաքական ֆունկցիայի կարևորագույն մասն է կազմում քաղաքական ռիտուսության ձևավորումը, որը իրագործվելով ցնտրությունների միջոցով, հասարակության քաղաքական գործընթացների մեջ առացնային դեր ունի:

Իրավական ֆունկցիան ամրողապես պետության մեճաշնորին է, որն իրականացվում է օրինաատեղ գործունեության միջոցով: Նա խնդրն է օրենքների ընդունումը, իրականան նորերի հանտարումը օրենքների և իրավական նորմերի միջոցով հասարակական հարաբերությունների կարգավորումը, մարդու իրավունքների պաշտպանությունը, քաղաքացրների վաղբագի կարգավորումը և այլն:

Պետության կարևորագույն ֆունկցիաներից է քազմաներացման ինվոնների իրագործումը: Հասարակության կյանքի կազմակերպման անհրաժեշտությունը ծագել է հասարակության առաջացման և ձևավորման սնգրանական շրջանից սկսած, և որպես այդպիսին կազմակերպչական ֆունկցիան պետության առաքանման հիմնական նարաողայիններից մեկն է եղել:

Հասարակության զարգացման արդի առիտիանում չափազանց քաղաքել է հասարակական հարաբերությունների բնույթը, փոխանել է մարդկանց պահանջմունքների համակարգը, առապայել են փոխհարաբերությունների նոր մաքրունցներ մառուկանց, սոցիալական բմբորի, հասարակության և պետության միջև՝ Այս ամբողջը էլ ավելի է մեծացնել պետության կազմաներակյական ֆունկցիայի դերը, ինչը նրան առիտում է իշխանությունը իրականացնելիս հնարավորինս լավագույն ծաղ ձգտագործել կազմակերպա-

նան (ծանրորը ձեռնարած և մշակած քաղաքատեսնությունը իրականացնելու խառնուրդ կազմակերպչական ֆունկցիայի իրականացման միջոցով պետությունը ձգտում է կատարել իր որոշումները, ձևավորել ու զգուշացրել գաղափարներն կառավարի քանակ, հստակություն իրականացնել որոշումների կատարման վրա ապահովել, իրականացնել և համակարգել քաղաքական համակարգի տարրեր սուբյեկտների գործունեությունը, իրական դարձնել մյուս ֆունկցիաների իրականացման հնարավորությունները և այլն:

Տնտեսական ֆունկցիան պետության գլխավոր խնդիրներից մեկն է ևրդի պայմաններում հասարակության տնտեսական կյանքին պետության մասնակցությունը տարբեր սեկտորներում և տարրեր քաղաքական համակարգերում տարբեր դաստիարակում ունի Լիստոպոլսկի պայմաններում տնտեսական կյանքին պետության մասնակցությունը չափազանց սահմանափակ է և այն դրսևորվում է հիմնականում հարկային քաղաքականության մշակման և որակապես ձևով, տնտեսական սակագիտների կիրառման և ինչ ուր չափով տնտեսության զարգացման խրախուսման ձևով:

Սոցիալական և սոցիալիստական) քաղաքական համակարգերում, պետություններում պետության դերն ու մասնակցությունը հասարակության տնտեսական կյանքին շատ ավելի մեծ ու կշանակալից է: Այստեղ պետությունը, բացի վերը կշանակ մասնակցության ձևերից, տնտեսական մույտի խնդիրների իրականացման ավելի լայն շրջանակ է ընդգրկում: Այստեղ տնտեսական ֆունկցիան դրսևորվում է արտադրության կազմակերպման տնտեսության ծրագրերի զարգացման ու խրախուսման, սեղողումների, սոսակալուրտ, էսթրագոնկայի հարցերի լուծման, երկարաժամկետ պլանավորման և ծրագրավորման իրականացման ձևերով:

"Պետության սոցիալական ֆունկցիան ուղղված է մարդկանց սպասարկմանը բավարարմանը, առաջնահին համարելով աշխատանքի, բնակարանի առողջության պաշտպանության խնդիրների իրագործումը: Սոցիալական ֆունկցիայի մեջ է մտնում նաև ծերունիների, հաշմանդամների, լաշխատողների, երիտասարդների սոցիալական պաշտպանությունը, կրանց կյանքի առողջության, գույքի ապահովագրումը և այլն: Տարրեր երկներում մարդկանց սոցիալական պահանջներների քաղաքական տարաբանությամբ և հարուստ փորձ է կուտակվել: Յրինակ՝ հասարակական մշտման ֆունկցիան օգտագործումը ձրի կրթության, նախադպրոցական դաստիարակության, բժշկական օգնության, հանգստի ծրագրերի իրագործման համար: Մեծ Բրիտանիայում քանկորուցող համար առանձին տների կառուցման շինարարական ծրագրեր են իրականացնում, Բուալոնյում և Իսպանիայում իրականացվում է երիտասարդությանը աշխատանքի տեղավորելու և պաշտպանելու լայն ծրագրեր: Մի շարք երկրներում գործում են ձրի մշտաբաններ ու գիշերելու տներ, որոնց օգտվում են քաղաքական աղքատ ու սննդիան իսպանացիներ, որոնց օգտվում են քաղաքական աղքատ ու սննդիան իսպանացիներ, որոնց օգտվում են քաղաքական աղքատ ու սննդիան իսպանացիներ:

Պետության կրթական ֆունկցիան կրթությունը հասարակության զարգացման իմասական երաշխիքն է: ապագայի հիմքը: Արդի պայմաններում այս ճշմարտությունը ուղղվել անհերժելի շատ երկրներ կանգնած են կրթության

բնագավառի արմատական վերակառուցման անհրաժեշտության առկա կրթության ֆունկցիան ընդգրկում է կրթության ոլորտում իրականացվող քաղաքականության ուղի համակարգը՝ սկսած նախադպրոցական կրթական համակարգերի արմատական վերակառուցման մինչև բուհական համակարգերը: "Պետությունը առաջին հերթին հոգ է տանում կրթության բնագավառի ղեկավարության ուղղությամբ, որպեսզի կառուցված հասարակության շղորդ անդամները համար ուսումնասիրության հազմատար պայմաններ ստեղծել, ապահովել որակյալ դասավանդման պրոցես, սեղողող փորձված, գրումն մանկավարժները և գիտնականները, այդ խնդրի լուծման գործում երիտասարդությանը նախապատասխանել ակտիվ կյանքի ձևով ներկրներում՝ այդ խնդրի իրագործման հիմնական երաշխիքը: համարվում է ձրի միջնակարգ կրթության շրջանի ընդունումը: "Ուս իրականացման շնորհիվ ամբողջ հասարակության կրթական մակարդակը բարձրակարգ միջնակարգ կրթության մակարդակի կարող է հասարակության ռեսուրս առաջընթացի հիմնական երաշխիքը լինել: առաջել է, որ գիտության և տեխնիկայի զարգացման արդի մակարդակը դա է ապահովում:

Պետության կուլտուր-դաստիարակչական ֆունկցիան ուղղված է մարդկանց իրավունք ապահովմանը ընդունման համար պայմանների և պրոցեսների ստեղծմանը, կապառակ ունենալով ձևազորել հոգեպես հարուստ և զարգացած քաղաքացիները: Պետությանը զուգահեռ այդ ֆունկցիան իրականացնում են նաև բազում հասարակական, մշակութային, սպորտային և այլ ոչ պետական կառույցներ՝ եկեղեցիներ, անկախ ուսում-հետազոտմանային ծրագրերը, մատուցել և այլն: Այսպես ամեն դեպքում կուլտուր-դաստիարակչական ֆունկցիայի իրականացման գործում մեծ է պետության դերը, ինչպես այդ խնդիրները իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորում հատկացնելով, այնպես էլ կազմակերպչական ծրագրեր կազմելու և իրականացնելու առումով: Տանկացած ժողովրդի զարգացման հիմքում ընկած են այն արժեքները, որոնց նա ստեղծել է: Դարևոր ընթացքում կամ փոխառել, այլ ժողովուրդներից և դարձրել իրենց: Որքան հարուստ մշակութային արժեքների տեր է հասարակությունը, այնքան մեծ է կրա զարգացման և առաջընթացի հնարավորությունները: Ուստի պետության կուլտուր-դաստիարակչական ֆունկցիայի երաշխիքը հանգում է մի կողմից մշակութային արժեքների պահպանությանն ու բազմապատկմանը, մյուս կողմից այդ արժեքները սեռուկներին հասցնելն ու մատչելի դարձնելը, և լուսնայ միջոցով մաստղ սիրնդի հոգևոր դաստիարակության իրականացումը:

Պետության արտաքին ֆունկցիան ընդգրկում է այնպիսի խնդիրները իրականացում, ինչպիսիք են երկրի սահմանների, տարածքի պաշտպանությունը արտաքին թշնամիներից, անհրաժեշտության դեպքում պատերազմական գործողությունների իրականացումը, միջպետական հարաբերությունների հաստատումը և կապերի ամրապնդումը այդ երկրների հետ, արտաքին ամուսրո իրականացումը, շուկաների ձեռքբերումը, այլ պետությունների հետ համաձայնությունների ընդհանուր շահեր ենթադրող խնդիրների իրականացումը:

տարբեր միությունների, կազմակերպությունների, բլոկների անդամակցությունը և այլն:

Պետությունը իր արտաքին քաղաքականությունը իրականացնում է դիվանագիտական կառույցների միջոցով, որոնք հաստատվում են բոլոր այն պետություններում, որոնց հետ պետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել: Երբեմն արտաքին քաղաքականությունը անվանում են պետության ներքին քաղաքականության շարունակություն: Այս դեպքում նկատի է առնվում այն հանգամանքը, որ արտաքին հարաբերությունների հաստատման հիմնական նպատակը, վերջին հաշվով, հանգում է պետության ներքին խնդիրների իրականացմանը նպաստելուն, որն իր դրսևորման ամենաբազմազան ձևերն ունի, սկսած ռեսուրսների, շուկաների, ներդրումների օգտագործումից մինչև համաշխարհային զլոբալ խնդիրների համատեղ իրականացումը:

3. Պետության կառուցվածքն ու կառավարման ձևերը

Պետությունները պատմական ավանդույթների քերականով, կայացման առանձնահատկություններով, հասարակության զարգացման տարբեր աստիճանների պատճառով ձևավորել են տարբեր կառուցվածքներ և ստեղծել կառավարման տարբեր համակարգեր:

Պետության կառուցվածք ասելով հասկացվում է որոշակի սահմանափակ տարածքի ներսում պետության կազմակերպության ձևը, ներառելով վերից վար իշխանության բոլոր մարմինները:

Պետական կառուցվածքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատասխանելու այն հարցին, թե ինչպիսի մասերից է բաղկացած երկրի տարածքը և ինչպիսին է դրանց իրավական կարգավիճակը: Այն նաև պարզաբանում է պետության կառուցվածքային տարրերի փոխհարաբերությունների ու փոխադարձ կապերի բնույթն ու բովանդակությունը: Մեր ժամանակներում հանդիպում ենք պետական կառուցվածքի հետևյալ տեսակներին:

1) Ունիտար միասնական/ պետություն, որի տակ հասկացվում է կենտրոնացված միասնական քաղաքական կազմակերպությամբ պետություն, որը սովորաբար քաժանված է լինում միատեսակ իրավական կարգավիճակ ունեցող վարչատարածքային միավորների: Այդ վարչատարածքային միավորները օժտված չեն քաղաքական ինքնուրույնությամբ, սակայն տնտեսական, սոցիալական և կուլտուրական քննազնայնություն ունեն որոշակի ինքնուրույնություն, եթե պետության քաղաքական կառուցվածքում գործում է տեղական ինքնակառավարման համակարգ: Այդպիսի պետություններին բնորոշ է միասնական ներկայացուցչական /պառլամենտ, ազգային ժողով և այլն/, գործադիր և դատական իշխանության մարմինների առկայությունը: Այդ պետություններից են՝ Ֆրանսիան, Իտալիան, Յայաստանը, Դանիան, Շվեդիան, Լեհաստանը, Պորտուգալիան և այլն:

Ունիտար պետության ամբողջ տարածքում առանց սահմանափակության գործում է մեկ սահմանադրություն, առկա է միասնական քաղաքացիություն, իրավական միասնական համակարգ, միասնական դատական համակարգ և այլն: Մի շարք ունիտար պետություններում որոշակի տարածքներ օժտված են վարչական ինքնավարությամբ: Դրանցից են Շուտլանդիան, Գյուսիսային Իռլանդիան, իսկ Իտալիայում գործում է մարզային ինքնավարությունը:

Ունիտար պետություններում սովորաբար առկա է ազգային միատարրություն, կամ տվյալ պատմական տարածքում ապրող ազգի բացարձակ մեծամասնություն: Անածո չի նշանակում, որ այդ պետություններում այլ ազգեր չեն ապրում:

Ապրում են, և երբեմն էլ բավականին մեծ քանակությամբ: Սակայն ազգերը այդ պետություններում չունեն ազգային ինքնավարություն, և չեն կարող հավակնել ազգային ինքնորոշման իրավունքի իրականացման: Օրինակ՝ եզդիները՝ Յայաստանում, հայերը, ալժիրցիները՝ Ֆրանսիայում և այլն:

2) Ֆեդերատիվ /դաշնային/ պետությունը մեկ ընդհանուր տարածքում, որոշակի իրավական և քաղաքական ինքնուրույնությամբ օժտված պետական կազմավորումների միություն է, որոնք կարող են լինել ինչպես հանրապետություններ, այնպես էլ տարածքներ, տահանգներ, մարզեր և այլն: Դաշնային պետության անդամները ունեն սեփական վարչական տարածքները, իշխանության մարմինները և դատական համակարգը: Դաշնային պետությանը բնորոշ է իշխանության երկու մակարդակ՝ կենտրոնական /ֆեդերալ/ և հանրապետական, երկակի իրավական համակարգ, երկպալատանի պառլամենտ, որոնցից մեկը ներկայացնում է դաշնության անդամներից յուրաքանչյուրի շահերը, իսկ մյուսը՝ ամբողջական պետության համագգային շահերը: Օրինակ՝ դաշնային խորհուրդը և պետական դոման՝ Ռուսաստանում, սենատը և կոնգրեսը՝ ԱՄՆ-ում և այլն: Դաշնային պետությունը առաջանում է ինչպես վարչատարածքային սկզբունքով, ինչպես ԱՄՆ, ԳՖՅ, ինչ որ չափով նաև Ռուսաստանը, այնպես էլ ազգային, եթնիկական սկզբունքով /Ռուսաստան, Գարավելավիան, Բնդկաստան, Կրաստան և այլն/: Պատմությունը ցույց տվեց, որ վարչական տարածքների սկզբունքի հիման վրա առաջացած դաշնային պետությունները ավելի կայուն և կազմակերպված են, քան ազգային սկզբունքի հիմքի վրա ձևավորված պետությունները: Ազգամիջյան հակասությունները, ծուլվելու, վերանալու վտանգը և այդ հիմքի վրա անընդհատ կենտրոնական իշխանությանը հակադրվելը, իսկ երբեմն էլ ուղղակի անկայություն ձեռք բերելու ծագումը, միշտ էլ երկրում անկայունություն ստեղծելու պատճառներ կարող են լինել ինչև այսօր առկա է Ռուսաստանում, Կրաստանում և այլուր: Անկայունության ծագելու պատճառ կարող է լինել նաև կենտրոնական իշխանության թուլացումը:

Մի շարք դաշնային պետություններում տարածքային ամբողջականության պահպանության սկզբունքը առաջնային համարելով, սահմանադրորեն արգելված է դաշնության անդամ հանդիսացող պետական միավորներին

դուրս գալու միութենական պետության կազմից, այսինքն չեն կարող օգտվել ազգերի ինքնորոշման իրավունքի միջազգային սկզբունքից: Որոշ դաշնային պետություններում գործում է երկբարաբազիության օրենքը:

Դաշնային պետության անդամները կարող են ունենալ իրենց սահմանադրությունը, օրենքների համակարգը, սակայն դրանք պետք է համապատասխանեն պետության սահմանադրությանն ու օրենքներին: Դաշնային պետության անդամները միջազգային հարաբերություններում չեն կարող հանդես գալ որպես միջազգային իրավունքի ինքնուրույն քաղաքական սուբյեկտներ: Չնայած վարչատարածքային բաժանումներին, դաշնային պետությունը դիտվում է որպես միասնական տնտեսական, սոցիալական, իրավական և քաղաքական տարածք, որտեղ առկա է միասնական շուկա, դրամ, միասնական պաշտպանության համակարգ, արտաքին քաղաքականություն, պետական սոցիալ-տնտեսական բնույթի միասնական խնդիրներ ու ծրագրեր:

3) Կոնֆեդերացիան - անկախ պետությունների իրավական միավորում է, որի հիմնական նպատակն է միասնական ջանքերով լուծել քաղաքական, տնտեսական, պաշտպանական բնույթի խնդիրներ: Այդպիսի միության երկրներից յուրաքանչյուրը միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ են և կարող են ինքնուրույն հարաբերություններ հաստատել այլ երկրների կամ միջազգային կազմակերպությունների հետ, եթե դրանք արգելող համատեղ որոշումներ չեն ընդունվել կոնֆեդերացիայի անդամ պետությունների կողմից:

Համաձայնեցված քաղաքականություն վարելու համար անկախ պետությունները ստեղծում են միասնական կառավարման մարմիններ, որոնք իրավասու են մշակելու անդամ երկրների շահերը պաշտպանող արտաքին քաղաքականություն, պաշտպանության, տնտեսական բնույթի ծրագրեր և ընդունել դրանք իրականացման համապատասխան որոշումներ: Սակայն այդ որոշումները ուժի մեջ են մտնում միայն այն բանից հետո, երբ դրանք հաստատվում են կոնֆեդերացիայի մեջ մտնող անդամ պետությունների կողմից: Այսօր այդպիսի պետությունների օրինակներ չափազանց քիչ են, և ինչպես ցույց տվեց պատմությունը, դրանք բախաբան անկայուն և ժամանակավոր բնույթ ունեն: Օրինակ՝ Արաբական Միացյալ Հանրապետությունը, որի մեջ մտնում էին Աիրիան և Եգիպտոսը, տևեց ընդամենը երեք տարի 1958-1961թթ., Սենեգամբիան /Սենեգալը և Գամբիան/ 1982-89թթ. և այլն, կամ դրանք վերաճում են ֆեդերացիայի, ինչպես դա տեղի ունեցավ Եվրեյարիայի և ԱՄՆ-ի հետ: Այսօր այդպիսի միություն կազմվելու շեմին է գտնվում Ռուսաստան-Բելառուս միությունը: Եթե իրականացվեն այն հողվածները, որոնք արձանագրված են նրանց միջև կնքված պայմանագրում, ապա այն կարող է դառնալ կոնֆեդերատիվ պետություն: Ենթեք նաև, որ Հայաստանում քիչ չեն այն ուժերը, որոնք պայքարում են այդ միությանն անդամակցելու համար: Կոնֆեդերատիվ պետական կառուցվածք է հիշեցնում

ԱՊՀ երկրների միությունը, եթե նրանց միջև ձեռք բերված համաձայնությունները կյանքում իրականացվեն:

Վերջին տասնամյակներում խաղաղ գոյակցության խնդիրները դառնել են համաշխարհային հանրույթի կարևորագույն նպատակներից մեկը: Այդ նպատակին հասնելու համար պետությունները ստեղծում են նոր միություններ, որոնք ձգտում են համատեղ իրականացնել ոչ միայն ռազմական, պաշտպանական, այլև քաղաքական և տնտեսական բնույթի խնդիրներ: Այդպիսի նոր միություններից են՝ Եվրոպայի խորհուրդը, Եվրոպական պառլամենտական անսամբլեան, որոնք փորձում են ստեղծել առանց մաքսատների սահմաններ, մշակել համատեղ ծրագրեր, միասնական դրամ /վալյուտա/, ինչը տվյալ պետությունների համար լայն հեռանկարներ է բացում զարգացման և համագործակցության, առկա տարածաբնությունների և փաստական անհավասարությունների վերացման առումով:

Կառավարման ձևերը: Կառավարման ձևերի տակ հասկացվում է բարձրագույն պետական իշխանության կազմակերպման եղանակները և քննչության հետ նրա փոխհարաբերությունների համակարգը: Այն ընտրվում է նաև իշխանության ձևական աղբյուրը, այսինքն իշխանության ձևավորման և իրականացման սկզբունքները:

Արդի ժամանակաշրջանում առավել հայտնի և տարածված կառավարման համակարգերից են՝

1. Միապետության /մոնարխիա/ կառավարման ձև, որի դեպքում պետության մեջ բարձրագույն իշխանությունը կենտրոնացված է պետության ղեկավարի՝ միապետի ձեռքում: Այսինքն, իշխանության տարբեր մարմինների ֆունկցիաները՝ օրենսդրական, գործադիր, իսկ երբեմն նաև դատական, կենտրոնացված են մեկ անձի ձեռքում: Այս պարագայում իշխանությունը փոխանցվում է ժառանգականության սկզբունքով և ենթակա չեն այլ կերպով ձևավորվելուն: Սակայն Միապետությունը իր տարբեր դրսևորումներն ունի, որոնք իրենց ընտրոշ առանձնահատկություններն ունեն:

Այսօր աշխարհում գոյություն ունեցող միապետության ձևերից են բացարձակ միապետությունը և սահմանադրական միապետությունը: Վերը ասվածը հիմնականում վերաբերում է բացարձակ միապետությանը: Արդի պայմաններում քաղաքակիրթ հասարակության մեջ բացարձակ միապետություն գրեթե չի մնացել: Այն հիմնականում առկա է հետամնաց երկրներում /Մաուրյան Արաբիա, Կատար, Օման, Միացյալ Արաբական Էմիրություններ/: Այստեղ միապետի իշխանությունը սահմանափակված չէ սահմանադրությամբ, միանձնորեն իրականացնում է օրենսդրական գործունեություն, ղեկավարում է կառավարությունը, իսկում է արդարադատությունը, տեղական ինքնակառավարումը և այլն: Այդպիսի միապետությունները որպես ժառանգություն են մնացել նախորդ պատմական փուլերից, որտեղ դրանք հասարակության կառավարման միակ և հիմնական ձևն են եղել, ունենալով անշուշտ իրենց տարբեր դրսևորումները: Սակայն պետք է նշել, որ համաշխարհային ժողովրդավարության գործընթացների ազդեցության տակ այդ երկր-

ներում աստիճանաբար սահմանափակվում են միապետի իշխանությունը և ներմուծվելով սահմանադրական նորմեր:

Միապետության մյուս ձևը սահմանադրական միապետությունն է, որտեղ միապետի իշխանությունը սահմանափակված է սահմանադրությամբ: Այստեղ օրենսդրությունը իրականացվում է ընտրված ներկայացուցչական մարմնի՝ պառլամենտի միջոցով: Պետության ղեկավարի և պառլամենտի հսկողությամբ ձևավորվում է պատասխանատու կառավարություն, ձևավորվում է անկախ արդարադատություն և տեղական ինքնակառավարման մարմիններ: Այդպիսի միապետություններից են Մեծ Բրիտանիան, Ըվեդիան, Իսպանիան, Դանիան, Նորվեգիան և այլն: Այս պետություններում միապետը օժտված չէ իրական քաղաքական իշխանությամբ և մի տեսակ ձևական բնույթ է կրում: Իրականում այդ միապետությունների կառավարման բնույթը շատ նման է հանրապետության կառավարման ձևին: Անկախ միապետությունը այսօր միայն անցյալից ստացված ժառանգությունն չէ, և ոչ էլ միայն ավանդույթներին տուրջ տալու հանգամանք: Միապետությունը այսօր, հաճախ քավականին արդյունավետ, դարձել է ազգի համախմբման կարևոր գրավականներից մեկը: Պետը է նշել, որ այսպիսի միապետությունը կառավարման քավականին արդյունավետ և կայուն ձևերից մեկն է:

2. Այսօր առավել տարածված պետական կառավարման ձև է հանրապետությունը: Հանրապետությունում իշխանության ձևական աղբյուրը ժողովրդի մեծամասնության կամքն է:

Պետության ղեկավարը ընտրվում է ժողովրդի կողմից, կամ ժողովրդի ընտրած ներկայացուցչական մարմնի կողմից:

Պետության մեջ բարձրագույն իշխանությունը պատկանում է ընտրովի մարմիններին՝ պառլամենտին, Նախագահին, որոնք իրավասու են հսկողություն սահմանելու կառավարության վրա, իրականացնելու անկախ արդարադատություն, տեղական ինքնակառավարում և այլն:

Հանրապետության կառավարման համակարգը իր տարբեր դրսևորումներն ունի: Դրանցից են՝

ա՝ Նախագահական հանրապետություն, որտեղ Նախագահը համարվում է նաև կառավարության ղեկավարը, որը իրականացնում է Նախարարների ընտրությունը, ձևավորում է կառավարությունը և հսկողություն է սահմանում նրանց գործունեության վրա: Այդպիսի պետության դասական օրինակ է ԱՄՆ: Այստեղ Նախագահը իրավունք ունի արգելանք հղելու պառլամենտի քննույնաժողովների վրա: Նախագահը ընտրվում է սահմանադրության մեջ արձանագրված որոշակի ժամկետով և մինչև Նախատեսված ժամանակի չլրանալը չի կարող փոխվել, վերընտրվել, եթե արտակարգ իրավիճակներ չեն եղել:

Օրենսդրական և գործադիր իշխանությունները ձևավորվում են կրկնակի ընտրական համակարգի միջոցով, այսինքն, և՛ Նախագահը, և՛ պառլամենտը հավասարապես ընտրված են ժողովրդի կողմից, և իրենց լիազորություններով հստակ բաժանված են: Այդ բաժանումը ապահովում է արտապառլա-

մենտական մեթոդներով Նախագահի և կառավարության ընտրությունը, ինչը պայմանավորված է պառլամենտի առջև կառավարության ուղղակի պատասխանատվության բացակայությամբ, քանզի այս դեպքում պառլամենտը առջև պատասխան է տալիս միայն Նախագահին: Մինչուրեք ժամանակ պառլամենտը օժտված է նշանակալից լիազորությամբ, հսկելու ինչպես կառավարության, այնպես էլ Նախագահի գործունեության վրա, ցնդիուպ մինչև նրանց անվտանգություն հայտնելը:

բ՝ Հանրապետության կառավարման մյուս ձևը պառլամենտական համակարգն է, որը Նախագահական համակարգից տարբերվում է նախ և առաջ ընտրական մեկ համակարգի առկայությամբ: Այսինքն միակ ընտրված իշխանության մարմինը օրենսդիր իշխանությունն է՝ պառլամենտը, որը ներկայացնում է ժողովրդի մեծամասնության շահերը: Ընտրությունների ընթացքում հաղթանակած կուսակցություններից /եթե տվյալ երկրում միայն համամասնական կարգով են կատարվում ընտրությունները/, կամ ընտրված պատգամավորներից /եթե մեծամասնական ընտրությունների համակարգ է/, իսկ երբեմն էլ և կուսակցություններից, և անհատ պատգամավորներից ձևավորվում է բարձրագույն օրենսդրական իշխանություն: Կառավարությունը ձևավորվում է պառլամենտի կողմից, հիմնականում խորհրդարանում մեծամասնություն կազմող կուսակցության ղեկավարությամբ, և պատասխանատու է խորհրդարանի առջև: Գործադիր իշխանությունը կենտրոնացվում է վարչապետի ձեռքում:

Չուտ պառլամենտական հանրապետության ձևը տարածված չէ: Այն գործում է Իտալիայում, Գերմանիայում, Հնդկաստանում, Ֆինլանդիայում և մի քանի այլ երկրներում:

Պառլամենտական հանրապետություններից մեծամասնությունում կա նաև Նախագահի պաշտոն, որը ընտրվում է կամ պառլամենտի կողմից, կամ հատուկ ընտրողների ժողովի, կամ ուղղակի ընտրությունների միջոցով: Ի տարբերություն Նախագահական համակարգի, այստեղ Նախագահի լիազորության շրջանակները շատ սահմանափակ են, հիմնականում ունի ներկայացուցչական ֆունկցիա: Հասարակության զարգացման արդի փուլում առկա է նաև խառը, այսինքն՝ Նախագահական և պառլամենտական համատեղ գործող, կառավարման համակարգ, որը հիմնականում երկու դրսևորում ունի:

Առաջինը դա այնպիսի կառավարման ձև է /ինչպես օրինակ Ֆրանսիական հանրապետությունը, որոշակի իմաստով նաև Հայաստանի հանրապետությունը/, որի դեպքում Նախագահը բավականին կարևոր դեր է ստանձնում կառավարման համակարգում, քան պառլամենտական համակարգում ունի Նախագահը:

Այդպիսի համակարգերում պետության Նախագահը ընտրվում է ուղղակի ընտրություններով, նա էապես ազդում է կառավարության ձևավորման և կարևորագույն պաշտոնների նշանակման վրա: Անկախ կառավարությունը կախում ունի ոչ միայն Նախագահից, այլև պատասխանատու է պառլամենտի առջև, և կարող է փոխվել պառլամենտի կողմից: Այս պարագայում մեծ

նշանակություն ունի այն հանգամանքը, թե նախագահը ունի արդյոք խորհրդարանում մեծամասնություն կազմող կուսակցության կամ կուսակցություններից ձևավորված բյուրի աջակցությունը: Օրինակ՝ Ֆրանսիայում նախագահը միայն այն ժամանակ է իր դիրքերը ամուր պահում, երբ պատվամեծում մեծամասնության աջակցությունն է վայելում: Իսկ երբ նա ներկայանում է փոքրամասնություն կազմող կուսակցության անունից, ապա իշխանության փաստական կրողը դառնում է վարչապետը:

Խառը կառավարման մյուս դրսևորման օրինակ է Եվեյցարիայի կառավարման համալիրը: Այստեղ սահմանադրուի են որոշված են նախագահական և պառլամենտական միասնական կառավարման ձևերի հիմնական գծերը, իստակ ընդգծելով կրանցից յուրաքանչյուրի իրավասության շրջանակները: Չնայած պառլամենտն է ձևավորում կառավարությունը, սակայն չի կարող կրանից հրաժարական պահանջել: Միևնույն ժամանակ կառավարությունն էլ է զրկված պառլամենտի նկատմամբ որոշումներ կայացնել: Այստեղ կառավարությունն ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք:

Չնայած այդ համակարգերի միջև եղած տարբերություններին, ինչը հիմնականում պայմանավորված է պառլամենտի և կառավարության միջև եղած փոխհարաբերությունների բնույթով, պառլամենտները բոլոր դեպքերում ունեն հետևյալ ֆունկցիաները՝

- օրենսդրական, նաև բյուջեի ընդունում,
- կառավարության վրա հսկողության իրականացում,
- հասարակական շահերի հաշվառում օրենքների և որոշումների ընդունման ժամանակ:

Հանրապետության կառավարման և մեկ, և մյուս ձևերի միջև առկա են և առավելություններ և թերություններ: Օրինակ՝ պառլամենտական իսերապետությունում պարզամավորները, որոնք ընտրվում են կուսակցական ցուցակներով, արտահայտում են ընակչության առանձին խավերի շահերը: Առաջատար կուսակցական խմբակցությունը կամ պառլամենտական կուլիցիան ձևավորում է կառավարության կազմը, որն իր առջև հաշվետու է: Կառավարության կազմում ընդգրկված նախարարներն այս դեպքում արտահայտում են ընակչության մեծամասնության կամը: Սակայն միևնույն ժամանակ առկա է այն թերությունը, որ այս դեպքում չափազանց արագ են փոխվում կառավարությունները, օրինակ՝ Իտալիայում:

Նախագահական իսերապետությունում նախագահը սովորաբար ինքն է ղեկավարում երկրի կառավարությունը իր գործունեության ողջ շրջանում, որոշում քաղաքականության հիմնական ուղղությունները: Եվ եթե պառլամենտը համաձայն չէ նախագահի հետ, ապա նա որևէ կերպ չի կարող ազդել կրա գործունեության վրա, սա էլ այս կառավարման ձևի հիմնական թերությունն է:

Հասարակական կյանցի զարգացման արդի պայմաններում տեղի են ունենում այնպիսի տեղաշարժեր, որոնք պատճառ են դառնում պետության

ընկաթի կտրուկ փոփոխման, ինչն էլ հաճախ թույլ է տալիս պետությունները բաժանել կայուն և անկայուն, ռազմական կամ ոստիկանական հաստակիչներով, էլեկտրիկ հասարակական քաղաքական համակարգում հաստատված հարաբերություններից: Անկայուն են համարվում այն պետությունները, որտեղ չափազանց արագ են փոխվում նախագահը, պառլամենտը, կառավարությունը, սահմանադրությունը, անընդհատ տեղի ունեցող հեղաշրջումներ և այլն:

Երբ իշխանությունը ուժային կառույցների ձեռքում է, այս դեպքում մենք գործ ունենք ռազմական կամ ոստիկանական պետության հետ:

4. Իրավական պետության էությունն ու կայացման առանձնահատկությունները

Հասարակության զարգացման ընթացքում մարդկային միտքը ստեղծել է այնպիսի գաղափարական արժեքներ, որոնք ձևավորվել, իրկվել ու ամբողջացել են հազարամյակների ընթացքում, որոնք սակայն դեռևս չեն մարմնավորվել կյանքում, չեն հաստատվել ու դարձել իրականություն և այդպիսին դառնալու համար երկար ճանապարհ ունեն անցնելու:

Քաղաքական մտցի այդպիսի արժեքավոր նվաճումներից են իրավական, սոցիալական պետության և քաղաքացիական հասարակություն ստեղծելու գաղափարը, որը կարմիր թելի պես անցնում է քաղաքական մտցի զարգացման նախորդ փուլերով և այսօր էլ միտված է ապագային՝ ձգտելով իրականություն դառնալ:

Մարդկային գիտական միտքը միշտ էլ ուղղված է եղել հասարակական կյանցի կազմակերպման, իշխանության իրականացման սկզբունքների, օրենքների համակարգի հաստատման, իշխանության և հասարակության, պետության և քաղաքացիների փոխհարաբերությունների այնպիսի ձևերի ստեղծմանը, որը ինարավորություն կտար հավասարություն, արդարություն, ներդաշնակություն հաստատել հասարակության մեջ, ստեղծել հասարակության բոլոր անդամների զարգացման, ընդունակությունների և կարողությունների դրսևորման, ազատությունների և իրավունքների իրականացման համար հավասար պայմաններ, առանց որոնց ներդաշնակ, առանց հակասությունների ու ճգնաժամերի հասարակության գոյությունը, զարգացումն ու առաջընթացն անհնարին է:

Դեռևս իին աշխարհում /Չինաստան, Հնդկաստան, Բաբելոն, Եգիպտոս/ պետության կայունության ու իզորության հիմնական երաշխիքը համարվում էր օրենքի իշխանությունը, որին հավասարապես պետք է ենթարկվեին ինչպես իշխանավորները, այնպես էլ իպատակները:

Անտիկ փիլիսոփաներ Պլատոնի, Արիստոտելի և Տիցերոնի աշխատություններում արդեն հստակ ուրվագծվում է իրավական պետության գաղափարը, պետության և իրավունցի փոխհարաբերությունները, խոսվում էր

հասարակության ազատ անդամների իրաժեքների, նրանց իշխանությանը մասնակցելու միջոցների մասին:

Ֆեոդալում հասկանալու 17-18-րդ դարերը սկսած, իրավական պետության գաղափարը հո լիկիտիմիական հիմնավորումն է ստանում՝ Տ. Լոկի, Դ. Կանտի, Ֆ. Բեյկոնի, Շ. Մոնտեսքյուի և շատ ուրիշ խոշոր մտածողների աշխատանքներով:

Իրավական պետության տեսության հովանորին է համարվում անգլիացի շոշոտագույն փիլիսոփա Տ. Լոկը, որն իր «Երկու ստակատար կառավարման մասին» (1689թ. / աշխատության մեջ շարադրում է իրավական պետության հիմնական սկզբունքները՝ Ֆ. Բեյկոնը կշում էր, որ ուսարական մեջ իշխումն է կամ օրենքը կամ քոնությունը: Բայց քոնությունը երեքսն օրենքի տեսք է ընդունում, իսկ քոնեն էլ օրենքը ուղղակի քոնություն է, և հակված չի պահպանելու իրավական հավանաբարությունը Ֆեոդալար, կշում է Բեյկոնը զոյություն ունի անարտություն ետեք աղբյուր քոնությունը՝ որպես աղբյուրին, օրենքի անունով քոյությունը շարադրությունը և հենց իրենց, դաժան օրենքները՝ Իլյպես տեսում ենք, Բեյկոնը արդեն տարակալառում է օրենքը իրավունքից և կատարում հետադարձ եղակադրությունը՝ որոշ օրենքները պետք է դառնան մի տեսակ օրենքների օրենքները»¹:

Իրավական պետության գաղափարի ձիշտ ունենումը հաստոքեն կապված է օրենքի և իրավունքի փոխհարաբերության ճիշտ մեխանիզմներով: Առաջին ևս, որ շատ հաճախ իրավական պետության հիմնական հատկանիշն է համարվում օրենքի գերակայությունը՝ անսփից չի հեղուկում, որ օրենքը իրավական պետության մեջ երկրորդական դեր է խաղում: Ընդուկառակը, հասարակության մեջ իրավունքի գերակայությունը ունարավոր չէ ապահովել առանց օրենքների համակարգի ստեղծման և որանց պատարողի կիրառման: Ասկայն, ինչպես տեսանք, հասարակության մեջ կոնեն կարող են գերակայել, իշխել այնպիսի օրենքներ, որոնք ոչ միայն չեն առչտոպանում մարդկանց իրավունքները այն իրավահարաբերությունների օրենքական հիմք են հանդիսանում: Ֆեոդալար, իրոքը վերաքոնում է՝ ապի այն քանին, որ իրավունքը վնի է կանգնած օրենքից և երկրորդ, օրենքների այնպիսի համակարգում, և այն իրականացնող մարմինների ստեղծմանը, որն արդյված միտ քանակադրաների իրավունքների պաշտամությանը, այսինքն՝ օրենքը պետք է իրական միջոց դառնա մարդկանին իրավունքների իրականացման ունար:

Ինչ կնց իրականում իրավունք անելու, Այս իարցի պատմականը քանկանին լայք է տրված 1789թ. օգոստոսի 26-ին Ֆրանսիայի ազգային ժողովի կողմից ընդունած «Մարտի և քաղաքացու իրավունքների դեկլարացրայում» որում ասվում է, որ, «Ապրիլն ծնվում և ապրում են ազատ ու իրադիտավաար»², որ «իրավունքը ազատության, սեռանստության, անկտանցության և

քաղաքործանք ռակադրվելու, երթյունն է՝ «Իրավունքը հավանցյուն է որպես ազատություն, ոսկ ազատությունը այն աննց անելու հասարակորունն է, ինչ չի առեկնում օրենքով: Դեկլարացրայում օրենքի տան հասկանվում է ժողովողի կամի արտահայտությունը, կշելով, որ քաղաքացիներն իրավունք ունեն և՛ անձնապես, և՛ իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցել օրենքների ստեղծմանը»³:

Դաշտի օրենքների և իրավունքների փոխհարաբերության ռաղցը ուղղակորեն կապված է այն հանգամանքի հետ, թե օրենքը ում կողմից է ընտրվում, ում կամքն է արտահայտում և ում շարերն ու իրավունքներն է պաշտպանում Այս տեսանկյունից, իրավունքը կարելի է դիտել որպես նաատակ, իսկ օրենքը աղ նաատակին համարելու հիմնական միջոց: Հասարակության քաղաքացիների իրավունքները կարող են ապաշտպանվել ճիշտ այնպիսով, որքանով ընդունված օրենքների համակարգը և որանց իրական գործադրումը նպատում և իրական է դարձնում (աղբյուր) իրավունքների պաշտպանությունը:

Ֆեոդալար իրավական պետության առանձնահատկությունը ոչ թե օրենքի, այլ իրավունքի գերակայությունն է Այսինքն՝ իրավական պետության երթյունը իշխանության վրա իրավունքի գերակայությունն է, ինչպես նրաջան այն գործունենության սահմանափակումը, որն ուղղված է մարդկանց իրավունքների սահմանափակմանը՝ իշխանությունը, քաղաքացիները և ուսարակության բոլոր սուբյեկտները անպայմանորեն պետք է ենթարկվեն գործող իրականացնողներին:

Ապատի ունենալով վերը ասածը, կարելի է իրականան անտությունը ընտրել: Մյայն իշխանության վրա իրավունքի գերակայության իրականացում իրավական պետության հիմնական հատկանիշներն են:

1. Դեռնակակ, իշխանությունը իրականացվում է իրավունքի գերակայության հիմքի վրա:
2. Իշխանությունների քանակումը՝ օրենսդիր, գործադիր և դատական իրական ընտյթ ունի:
3. Ապրում և քաղաքացիների իրավունքները և ազատությունները իրական ապաշտպանվածությունը:
4. Թույլատրվում է այն աննց, ինչն առեկված չէ օրենքով:
5. Դեռություն և աննեարի կիրաարումն աատարականություն:
5. Զրքոնցարի իրականացման վրա ոսկրության աորյունակնո ձաղի անտություն, աղ թվում իրավապահ մարմինների համակարգի գործունեության իրականացում միայն օրենքի շրջանակում:
7. Ըրեքտելի առել, քոլորի հավասարություն:
8. Դեռությունն ինչն իրեն աննանաարակում է օրենքով, առաջին ինքին սահմանադրությամբ: Մոց շրջանցելու իրավունք լունի ոչ ոք, աղ թվում և պատեքունը:

¹ Կատտ փ. 4(3) Ա, 1971 Վ. 1. 484-485
² Արվյ մեղը՝ էջ 456
³ ԻԹ

⁴ Արվյ մեղը՝ էջ 456-457

9. Ընդի նդաչխանողված է մարդու պաշտպանությունը իշխանության ներքին կամայականություններից:

10. Ձաղաբացիական հասարակության ազդեցություն, քաղաքացիների կայուն իրավական գիտակցություն, օրենքի կկատմամբ հարգանքը քոլորի կողմից: Հետևաբար անդամաշտություն կա ապացուցելու, որ այսօր աշխարհում վկա թեկուզ մեկ պետություն, ուր լինի թավարարի այս պահանջներին: Առաջի իրավական անտության մասին կարելի է խոսել որպես մի բարձրագույն գաղափարով, որին մարդկությունը պետք է ձևերի հասնել: Աման այն իրողությունը, որ մարդը մի կողմից զեռի, որ երեքը չի կարող ամեն ինչ իմանալ, հասնել բացառական ճշմարտությանը, ապկայն մյուս կողմից, կգտում է դրան: Հասարակության ժողովրդագրության գործընթացը տառում է գառ իրավապան պետության, և կարելի է ասել, որ այս երկրներում, որտեղ ժողովրդագրությունը հաստատվել ու կատարելագործվում է, այդ պետությունները ապելի մոտ են գտնվում իրավական պետության գաղափարի մատմապորմանը: Այս տեսանկյունից կարելի է ասել, որ իրավական պետությունը ժողովրդագրության բարձրագույն ձևն է:

Որոնք են իրավապան պետության ձևավորման ուղիները, այլ կերպ ասած, հասարակության կյանքի հնչյախը փոփոխությունների և ինչպիսի բնդիներին իրականացման միջոցով է ռևարավոր հասնել իրավական պետության հաստատմանը: Որոնք են այն անդամաշտ քաղաքը, որոնք իրականացումը հասարակությանը կրտեղ դեպի իրավական պետության կալաբժանը: Ելելը, որ գարգացման տարբեր աստիճաններում գաղափոր յուրաքանչյուր պետության համար իրականացվելիք բնդիներն որոնք ծավալով, ընդունով ու ընկանդակությամբ կարող են տարբեր լինել: Անկայն քոլորի համար ընդհանուր և պարտադիր իրավականացվելիք քայլերն են՝

1. Մոլություն ունեղող օրենսդրության կատարելագործում, որը պետք է ճերմառա այն ուղղությամբ, որ օրենքը դառնա հասարակության կյանքի քոլոր կողմերի կատավարման մճանակն միջոց: Դրա համար անհրաժեշտ է օրենքների մեջ այնպիսի փոփոխություններ կատարել, որոնք ուղղված լինեն ընդամերի պաշտպանությանը:

2. Գոյություն ունեղող օրենսդրության խտանագույն կատարում և դրա պարտաբանության արդյունավետ լծանների ստեղծում: Անհրաժեշտ է հասնել այն քանին, ուր հասարակության մեջ ոչ ոք կկարողանա խտանալի պարտաբանատվությունից, որ քոլորը օրենքի անգն ռազպար լինեն, որ օրենքը ռաբառ ոչ միայն մարդու իրավունքներով պաշտպանության միջոցը, այն հասարակության այլ սուբյեկտների հետ մարդու փոխհարաբերությունների հոմանական կաղգավորի: Դեռությունը պետք է միշտ բարձրագույն իրավապան մարմինների գործունեության արդյունավետությունը, բարձրացնելով կրանց ռեդիակությունը, ապահովելու, ասել ոսկելու օրանց միայն օրենքին ելքարվելու և միայն օրենքի շրջանակներում գործելու իրարալորությունը: Իրավապան պետության ստեղծման գործում մեծ նշանակություն ունի դատաւորների անկախությանը և նրանց անփոխարելիությանը վերաբերող

օրենքների ընդունումը, ինչը, ջատ եռուպին, այդ շտորի լուծմանն է ուղղված:

3. Դեռն է հասարակությանը ռաբանը պնդախի վիճակի, որի դճաբում մարդու հալառ օրենքի պահպանուը, նրան ընթարակելը ալելի ձեռառու լինի օրենքի խախտումից: Դրա համար անհրաժեշտ է ձևավորել քաղաքացիների, պաշտոնական անձանց և անթող հասարակության կարևն իրավական գիտակցություն: Բապական չէ ստեղծել լավ օրենքներ, հառակ ձեակերանի մարդու իրավունքներն ու պարտականությունները: Անհրաժեշտ է, որ հասարակության մեջ ստեղծվեն այնպիսի հարաբերություններ, կատուցներ, գործունեության և կարող այնպիսի կողմեր ու սկզբունքներ, որոնք թույլ տան մարդուն հասկանալու, զհտակցելու այդ օրենքների իրականացման անհրաժեշտությունը: այն ցնկալի որպես իր գործունեության պաշտպան ու նրախնամիտ, այլ ոչ թե կայանա ու խախտի այն: Ախորդկ պետք է օրենքի կկատմանը պարտակցուը ունենան, նրա կատարումը պետք է մարդկանց սովորաբար անաճանելի մալս լինի: Հետևաբար մարդկանց իրավագիտակցության բարձրացման հարցը պետք է դառնա պետության կարևորագույն քաղաքականություն:

4. Իրավապան մարմինները պետք է դառնան իրավունքի, կարգ ու կրտեղ հաստատման անտիզ գործող մեխանիզմ: Դրի համար նախ ռեք իրավապան մարմինները պետք է աղղարության արմանակախության օրենակ լինեն:

5. Կանակարման ապապեներոնացում, կենտոնառնու հշխոնառան կալուցկերի Ֆոնկցիաների սահմանաշխակում և տեղական ինքնակառավարման մարմինների լիարդրությունների ընդառնակում:

Իրավական պետության մեջ քաղաքական համակարգի քոլոր սուբյեկտների հետ պետությունը իր հարաբերությունները կատուցում է օրենքի հիման վրա և որպես քաղաքական համակարգի առավել կարևն և իշխանությանը ծծումաճ սուբյեկտ, նրանից է կանված այդ փոխհարաբերությունների ճիշտ ուղղությանը զարգացումը: Որը սակայն չի ծշանակում, թե պետությունը պետք է հասնել կոպանցությունների, շարժումների և այլ նազմանեռարությունների գործրին: Դեռությունը պետք է ապահովի կոպակցությունների և այլ կազմակերպությունների գործունեության իրավապան դալուը: Այլ քաղաքական սուբյեկտների հետ պետության հարաբերությունը պետք է կատուցի գործկցելուը հիմքը վրա, լործելով նրանց հետ համառել լուծելու հասարակության անգն ձառաբաժ խնդիրները:

Իրավական պետությանը պետք է համապատասխանել իրավական հասարակություն, որտեղ պետությունը ծառայում է իր քաղաքացիներին: Անկայն ինչպես իայտեի է յլլա իրավաբար առանց պարտականությունների: Դրա համար էլ իրավապան պետության մեջ քաղաքացիներն ու պետությունը փոխադառն պարտականություններ ունեն: Ինչպես պետություն է պարտավոր ապապանելու իր քաղաքացիների իրավունքներն ու օրենական շտեղղ, ապահովել նրանց սոցիալական պաշտպանվածությունը, պատուն ու

առողջությունը, այնպես էլ քաղաքացիներն են պարտավոր պաշտպանել պետության օրենքները, նույնիսկ այն ժամանակ, երբ դրանց հետ համաձայն չեն:

Իսկ այդպիսի իրավագիտակցություն հասարակության մեջ, պետության ջանքերով, պետք է սկսել ձևավորել դեռևս մասնուկ հասակից հատուկ և նպատակասլաց քաղաքականություն վարելու շնորհիվ:

5. Սոցիալական պետության և քաղաքացիական հասարակության առանձնահատկությունները

Սի շարք երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրություններում արձանագրված է, որ պետությունը իրավական, սոցիալական է: Մա նշանակում է արդյո՞ք, որ այդ պետությունը տվյալ պահին ապրեն իրավական և սոցիալական պետություն է: Իհարկե ոչ: Նախորդ բաժնում ապրեն նշվել է, որ իրավական պետությունը առայժմ մնում է որպես հասարակության ցանկալի բարձրագույն նպատակներից մեկը: Նույնը վերաբերվում է նաև սոցիալական պետությանը: Բանն այն է, որ շատ հաճախ Սահմանադրության մեջ արձանագրվում են այն հիմնադրույթները, որին ձգտում է հասնել պետությունը նույն սահմանադրության մեջ արձանագրված հիմնական օրենքների և հոդվածների իրականացման միջոցով: Ուստի Սահմանադրության մեջ ընդունված հոչակագրերը պետք է ընկալել որպես պետության առջև դրված բարձրագույն նպատակ, իսկ նրանում արձանագրված հոդվածների հիմքում սովորաբար դրված են լինում այնպիսի սկզբունքներ, որոնց իրականացումը պետք է երաշխավորի այդպիսի հասարակության ձևավորումը:

Սահմանադրության մեջ սոցիալական պետության մասին արված հայտարարությունը պետք է դիտել նաև որպես պետության կողմից իր քաղաքացիների նկատմամբ պարտավորությունների ընդունում, որոնց կատարումը նրա համար դառնում է առաջնային խնդիր:

Հասարակության առջև կանգնած սոցիալական խնդիրների իրականացումն ու քաղաքացիների որոշակի սոցիալական պահանջմունքների բավարարմանն ուղղված պետական մակարդակով իրագործվող քաղաքականությունը սկիզբ է առել 19-րդ դարի վերջերից, հիմնականում զարգացած բուրժուական երկրներում:

1892թ. Ֆ.Էնգելսը հատուկ լրացում կատարելով իր 1844թ. գրած «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում» գրքում նշում էր, որ անցած հիսուն տարիների ընթացքում Անգլիայի բանվոր դասակարգի դրությունը շնորհիվ նրանց տնտեսական պայքարի քավականին լավացել է, նկատելի կրճատվել է աշխատանքային օրը, քարձրացել է աշխատավարձը, բարելավվել են քնակարանային պայմանները և այլն: Անգլիական բուրժուազիայի մեջ, նշում է Էնգելսը-ձևվել են մարդիկ, որոնց ընդունում են, որ հասարա-

կությունը իր քաղաքացիների նկատմամբ պետք է պարտավորություններ ունենա:

Լիբերալիզմի գաղափարախոսները երկար ժամանակ փորձում էին անտեսել, չըջանցել, պետության համար երկրորդական համարել հասարակության սոցիալական խնդիրները և հիմնավորել, որ պետության հիմնական խնդիրը պետք է լինի անհատի շահերի, իրավունքների և ազատությունների գերակայության ապահովումը: Պատմական փորձը ցույց տվեց, որ այդպիսի մոտեցումը կորված է իրական կյանքից և անիրական է: Քանզի մինչև հասարակության մեջ չի ստատամվի սոցիալական պրոգրոսության, քանի դեռ պետությունը չի կարողացել մարդկային նորմալ լիպայմաններ ստեղծել հասարակության բոլոր անդամների համար, չի կարողացել ապահովել մարդկանց առաջնային սոցիալական իրավունքները, այնքան ժամանակ հասարակության կյանքում հակասությունները, ճգնաժամերը, սոցիալական տարբեր խավերի միջև լարվածությունն ու բախումները, մարդկային իրավունքների և ազատությունների ոտնահարումը անխուսափելի է լինելու: Ավելին, հասարակության շահերից անհատի շահերի, իրավունքների և ազատությունների գերադասումը միշտ էլ սոցիալական անարդարությունների հիմնական պատճառն է լինելու, որովհետև, դա չնչին փոքրամասնություն կազմող հզորների, հարուստների իրավունքների և ազատությունների գերակայությունն է հասարակության ճնշող մեծամասնության նկատմամբ, ինչն էլ հասարակության ներքին հակասությունների սրման և լարվածությունների առաջացման հիմնական պատճառը կարող է լինել:

Հավանաբար հենց այս ճշմարտության գիտակցումն է ստիպել արդր ժամանակաշրջանի գերմանացի, ամերիկացի, ֆրանսիացի, շվեդացի և այլ գաղաքացած երկրների հայտնի գիտնականներին և խոշոր սեփականատերերին ոչ միայն ընդունելու, որ պետությունը պետք է իր չունեղ քաղաքացիների նկատմամբ որոշակի պարտավորություններ ստանձնի, այլև մշակել այնպիսի հարկային համակարգեր, որի շնորհիվ հնարավոր է լինում պետության կողմից վերաքաշխել հարուստներից գանձած հարկերի մի մասը օգուտ լուններների, ինչը, ըստ էության, պետության սոցիալական քաղաքականության բաղկացուցիչ մասն է կազմում: Նկատի ունենալով այդ իրողությունը, գերմանացի հայտնի քաղաքագետ Ռ.Վարենդորֆը նշում է, որ պետության կարևորագույն ֆունկցիաներից մեկը պետք է լինի քոլոր քաղաքացիների նվազագույն եկամուտի ապահովումը:

Իրավական և սոցիալական պետություն անելով հասկանում ենք հասարակության զարգացման այնպիսի աստիճան, որտեղ ամբողջապես իրականացվում է մարդու իրավական, սոցիալական և քաղաքական իրավունքներն ու ազատությունները: Այս տեսակետից կարելի է պնդել, որ իրավաևան և սոցիալական պետություն առանձին-առանձին, մեկն առանց մյուսի լինել չեն կարող, դրանք կարող են հաստատվել և իրականանալ միաժամանակ: Որովհետև ղժվար է պատկերացնել մի հասարակություն, որտեղ ապահովված լինեն մարդու իրավական և քաղաքական իրավունքները, առանց սո-

ցիալական իրավունքների ապահովման և ընդհակադրակը: Չի կարող լինել իրավական պետություն, եթե անհատը չի օգտվում այնպիսի առաջնահերթ ու անհրաժեշտ սոցիալական իրավունքներից, ինչպիսիք են աշխատանք ունենալու, կրթություն, մասնագիտություն ստանալու հնարավորություն, իր ընդունակություններն ու կարողությունները ազատ դրսևորելու իրավունք, եվ ընդհակառակը, սոցիալական պետություն լինել չի կարող առանց այնպիսի օրենքների իրականացման, որոնք կոչված են ապահովելու իրավական, քաղաքական իրավունքներն ու ազատությունները, նրա սեփականության իրավունքն ու ազատ ձեռնբեռնությունը: Ուստի իրավական պետություն ասելով արդեն նկատի է առնվում մարդկանց այն բոլոր իրավունքների առկայությունը, ինչը անհրաժեշտաբար պետք է առկա լինի նաև սոցիալական պետության մեջ: Եվ նույնը կարելի է ասել սոցիալական պետության մասին, որի դեպքում նույնպես առկա են այն բոլոր իրավունքները, որոնք անհրաժեշտաբար պետք է լինեն իրավական պետության պայմաններում:

Իրավական, սոցիալական պետությունը հասարակության զարգացման և ժողովրդավարացման այն աստիճանն է, որտեղ քաղաքացիների իրավական, սոցիալական և քաղաքական իրավունքները ներդաշնակորեն համատեղված և արտացոլված են երկրի հիմնական օրենքներում, որոնք իրականացումը դառնում է պետության առաջնային նպատակներից մեկը:

Այսպիսով սոցիալական պետությունը, ինչպես և իրավական պետությունը, կարող է կայանալ միայն ժողովրդավարության պայմաններում, այսինքն այն դեմոկրատական պետություն է: Սոցիալական պետության համար առաջնայինը ակտիվ սոցիալական քաղաքականության իրականացումն է, որի հիմնական խնդիրն է մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների լրիվ բավարարումը, նրանց կայուն կենսամակարդակի ապահովումը և անընդհատ բարձրացումը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանումը, ժամանակակից առողջապահական, կրթական և սոցիալական ապահովության համակարգերի ստեղծումը, կարիքավորներին, անաշխատունակներին օգնելու, նրանց նվազագույն կենսամակարդակի ապահովումը, որոնք իրականացումը հնարավորություն է տալիս պետությանը կանխելու և հարթելու հասարակության կյանքի առկա կամ ենթադրելի սոցիալական ճգնաժամները:

Նշենք, որ այսօր եվրոպական շատ երկրներում իշխանության են եկել սոցիալիստները, որոնք համար հասարակության մեջ սոցիալական խնդիրների իրականացումը և սոցիալական արդարության հաստատումը և զաղափարական և ծրագրային նշանակություն ունեցող գործընթաց է, ինչն էլ այդ պետություններում սոցիալական քաղաքականությունը առաջնային ու վճռական է դարձնում: Եվ այդ երկրներից մի քանիսում, հատկապես Եվրոհայում, պետություն կողմից իրագործվող սոցիալական քաղաքականությունը իր պտուղներն է տալիս: Այդ երկրի բնակչության կենսամակարդակը, սոցիալական իրավունքների պաշտպանությունը, նյութական և հոգեվոր պահանջմունքների բավարարման մակարդակը բավականին բարձր է:

Քաղաքացիական հասարակություն: «Իրավական և սոցիալական պետության» հասկացությունների կողքին շատ հաճախ հանդիպում ենք «քաղաքացիական հասարակություն» հասկացությանը:

«Քաղաքացիական հասարակություն» հասկացությունը գործածության մեջ է մտել 17-րդ դարի մտածողներ Թ. Գրեյի և Զ. Լոկի կողմից և իր հետագա զարգացումն է ստացել 18-րդ դարի մտածողներ Ժ. Ժ. Ռուսոյի, Ը. Մոնտեսքյուի, Ֆիխտեի, հետագայում Գեգելի և նրան հաջորդող շատ մտածողների աշխատություններում:

Ժ. Ժ. Ռուսոն առաջարկում էր գտնել համակեցության այնպիսի ձև, որը բոլորի համատեղ ուժերով պաշտպանի անհատին և յուրաքանչյուրի ունեցվածքը: Այդ ժամանակի մտածողների կարծիքով քաղաքացիական հասարակությունը ընդհանուրի շահերից էլնելով պետության հետ մտնում է յուրատեսակ հարաբերությունների մեջ: Ըստ Ֆիխտեի այդ հարաբերության էությունը պետության և անհատի միջև մի տեսակ դաշինքի առկայությունն է, համաձայն որի, անհատը համաձայնվում է որոշակիորեն սահմանափակել իր ազատությունները, պարտավորվելով ենթարկվել պետության կողմից ընդունված օրենքներին և հաստատված կարգ ու կանոնին, իսկ պետությունը, իր հերթին, պարտավորվում է ապահովել անհատի և նրա սեփականության անկախությունը:

Քաղաքացիական հասարակության մասին լավելի մանրակրկիտ վերլուծության ենք հանդիպում Գեգելի «Իրավունքի Փիլիսոփայություն» աշխատության մեջ, որում քաղաքացիական հասարակության ծագումը նա կապում է հասարակության զարգացման որոշակի աստիճանի հետ, նշելով, որ միայն արդի ժամանակներում էր հնարավոր նրա առաջացումը: Գեգելը, որպես քաղաքացիական հասարակության գլխավոր սկզբունքներ, որոնց վրա քաղաքացիական հասարակությունը կարող է հենվել և գործառնել, համարում էր անհատի ազատությունը, մասնավոր սեփականության իրավունքը, հրապարակայնությունը, համընդհանուր տեղեկությունը, հասարակական կարծիքի ազատ ձևավորումը, արդարացի և խստագույնս իրականացվող օրենքները: Ըստ նրա, պետությունն ու քաղաքացիական հասարակությունը անխզելի միասնություն են, ինչպես միևնույն մեղալի երկու երեսները, որտեղ պետությունը մեղալի դիմային մասն է, այսինքն, ընդունում էր պետության գերակայությունը:

Ժամանակակից գիտական գրականության մեջ քաղաքացիական հասարակության, նրա ծագման, դոստորման ձևերի, հիմնական սկզբունքների և առանձնահատկությունների վերաբերյալ բավականին շատ կարծիքներ կան: Որոշ գիտնականներ կարծիք են հայտնում, որ քաղաքացիական հասարակությունը որպես պետությունից անկախ կազմավորում, իրական է միայն լիբերալ կապիտալիզմի վաղ շրջանում: Որպես հիմնավորում նշում են այն իրողությունը, որ գրանից հետո պետությունը գնալով ավելի ու ավելի է միջամտում տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների իրականացմանը:

Այդպես է նաև այն տեսակետը, որ քաղաքացիական հասարակությունը հասարակության ոչ պետական մասն է, ինչի տակ հասկացվում է ընտանիքը, դպրոցը, կամավոր միություններն ու կազմակերպությունները, որոնց հոգևոր արտահայտիչն է հասարակական կարծիքը: Այս տեսակետի մեջ միտում կա քաղաքացիական հասարակությունը հակադրել պետությանը, որը գուցե և կապիտալիզմի զարգացման վաղ շրջանում տեղի է ունեցել:

Իրականում պետության և քաղաքացիական հասարակության հարաբերություններում գլխավորն այն է, որ քաղաքացիական հասարակությունը կոչված է հսկելու պետության, իշխանության մարմինների գործունեության վրա, իսկ պետությունը կոչված է ծառայելու հասարակությանը: Այսպիսի փոխհարաբերությունը հնարավորություն է տալիս որպեսզի քաղաքացիական հասարակությունը չափավորի ոչ միայն իշխանությունների հավակնությունները քաղաքացիների և նրանց իրավունքների և ազատությունների նկատմամբ, այլև մարդու ընթացությունը, անհանդուրժողականությունը իշխանությունների նկատմամբ:

Առավել ընդունելի տեսակետ է այն, որ քաղաքացիական հասարակության առաջացումը կապվում է հասարակության զարգացման այն աստիճանի հետ, երբ ձևավորվում է որոշակի իրավունքներ ունեցող, իրեն որպես անհատ գիտակցող և իր աշխրթների համար պատասխանատու ընդունակություն ունեցող ինքնուրույն քաղաքացին: Այն է, թե քաղաքացիական հասարակության առաջացման կարևորագույն և հիմնական նախադրյալը մարդկանց քաղաքացիական գիտակցության ձևավորումն է, այդպիսի հասարակության մեջ ապրելու համար անհրաժեշտ զարգացման մակարդակ ունեցող անհատի ձևավորումը:

Հասկանալի է, որ տարբեր երկրներում այդպիսի քաղաքացիների ձևավորման համար տարբեր պայմաններ ու հնարավորություններ են լինում, ինչն էլ պայմանավորում է տարբեր պետություններում քաղաքացիական հասարակության ձևավորման և՛ ժամանակային, և՛ դրսևորման ձևերի տարբերությունները:

Չնայած տեսակետների այդպիսի բազմազանությանը, այնուհանդերձ քոլորի կողմից ընդունվում է այն, որ քաղաքացիական հասարակության գլխավոր գործող անձը մարդն է որպես անհատ, որն ունի որոշակի պահանջ-մոլեքների, շահերի և արժեքների համակարգ, որոնց իրականացումն էլ մարդուն դարձնում է հասարակության զարգացման գլխավոր մասնակից, քաղաքացիական հասարակության անդամ: Ուստի քաղաքացիական հասարակության գլխավոր արժեքը մարդն է որպես անհատ, այլ ոչ թե մարդկանց անդամ ամբողջը:

Քաղաքացիական հասարակությունը քաղաքացիների սոցիալական, մշակութային և հոգևոր ոլորտի կենսագործունեության ապահովման, դրանց վերարտադրության և սերունդից սերունդ փոխանցման համակարգ է: Այն նաև պետությունից անկախ հասարակական ինստիտուտների և հարաբերությունների համակարգ է, որոնք կոչված են ապահովելու առանձին

անհատների և նրանց միավորումների ինքնաիրականացման համար նոր-մալ պայմաններ, իրականացնելու նրանց շահերն ու պահանջմունքները:

Քաղաքացիական հասարակությունը մեծապես նպաստում է պետության մեջ քաղաքական գործընթացների ներդաշնակ զարգացմանը, ինչը հատկապես կարևոր է այն պետությունների համար, որտեղ հաճախակի են փոխվում կառավարությունները: Ծվ լինելով հասարակության ոչ պետական մասը, այնուհանդերձ քաղաքացիական հասարակությունը և՛ պետության, և՛ ամբողջ հասարակության համար ծառայում է որպես կայունացնող գործոն:

Իր հերթին ժամանակակից պետությունը միառկե ոչ բոլոր դեպքերում ուղղակիորեն շահագրգռված է քաղաքացիական հասարակության հնարավորությունների համակենտրոնացմամբ և դրանց օգտագործելու հասարակության առջև կանգնած խնդիրները լուծելու համար: Ավելին, մի շարք դեպքերում պետությունը ինքն է գիտակցաբար իր որոշ ֆունկցիաներից հրաժարվում օգուտ Ֆաղաքացիական հասարակության կամավոր կազմակերպությունների և միությունների, որոնց միջոցով կարողանում է կենտրոնացնել նշանակալից կյութական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ, դրանով իսկ թեթևացնելով պետության կառույցների ծանրաբեռնվածությունը և՛ ավելի արագ լուծել իր առջև դրված խնդիրները:

Ինչպես քաղաքացիական հասարակության, այնպես էլ իրավական պետության գոյության հիմնական պայմանը անհատն է իր ինքնաիրականացման իրավունքով: Քաղաքացիական հասարակությունը ապահովում է մարդու իրավունքը, իսկ իրավական պետությունը քաղաքացու իրավունքը: Երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է անհատի իրավունքի մասին, մի դեպքում նրա իրավունքների մասին որպես առանձին մարդու, կյանքի, ազատության և այլն, մյուս դեպքում խոսքը վերաբերում է անհատի քաղաքական իրավունքների մասին: Այդ է պատճառը, որ քաղաքացիական հասարակության մեջ ենթադրվում է որոշակի սահմանազատում մարդու իրավունքների և քաղաքացու իրավունքների միջև: Եթե ելնենք այն ճշմարտությունից, որ անհատի այս երկու իրավունքներն առանձին-առանձին լինել չեն կարող, միշտ ենթադրում են իրար, որ նրանցից յուրաքանչյուրը կարող է իրական լինել ճիշտ այն չափով, ինչ չափով առկա է մյուս կողմը, ապա կարելի է պնդել, որ քաղաքացիական հասարակությունն ու իրավական պետությունն էլ են գտնվում նույն փոխհարաբերության մեջ:

Քաղաքացիական հասարակությունը կարող է կայանալ միայն այն բանով, որքանով պետությունը ինքն է կամովին հրաժարվում իր այն ֆունկցիաներից, ինչը նրան դարձնում է որպես բռնության, պարտադրանքի գործիք, և ընդունում է անհատի և մարդկային տարբեր հանրույթների ազատությունների և իրավունքների ճերակալությունը: Քաղաքացիական հասարակության մեջ պետությունը ինքն է սահմանափակում քաղաքացիների կյանքին միջամտելու, նրանց վրա հսկելու իր իրավունքը և ընդունակ է լինում իրավաբանորեն կարգավորել իր հարաբերությունները ամբողջ

ընակչության հետ և իշխանության թուր լծակները ծառայեցնել այդ խնդիրների իրականացմանը:

Քաղաքացիական հասարակությունը ժողովրդավարության զարգացման այն աստիճանն է, որտեղ բնակչության զաղափարական, քաղաքական և իրավական գիտակցությունը թույլ է տալիս նրանց հանդես գալու որպես ինքնուրույն, սեփական կյանքն առանց պետության միջամտության կազմակերպելու, գործառնելու և կարգավորելու ընդունակ սուբյեկտներ: Ռա հասարակության զարգացման այն աստիճանն է, որի դեպքում հնարավոր է լինում պետության հիմնական ֆունկցիաների մեծ մասը փոխանցել ինքնակառավարման կառույցների և հաստատությունների և նրանց միջոցով իրականացնել ինչպես հասարակական կյանքի թուր կողմերի կազմակերպումն ու կառավարումը, այնպես էլ իրական դարձնել քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Այս տեսանկյունից, կարելի է ասել, որ ինչպես իրավական, սոցիալական պետության, այնպես էլ քաղաքացիական հասարակության վերջնական հաղթանակի ու հաստատման համար մարդկությունը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու:

Գրականություն

1. Բեգել -Փիլիսոփայության ներածություն: Ռուսուից իրավունքի պարտքի և կրոնի մասին՝ Եր. 1964
2. Авторитаризм и тоталитаризм в политической мысли. М. 1995
3. Авторитаризм и мировой политический кризис. Т. 3 М. 1993
4. Арно А., Ковин Д. Гражданское общество и переходный период от авторитаризма к демократии. М. 1994
5. Арно А. Концепция гражданского общества: происхождение, эволюция, обоснование и перспективы дальнейшего исследования. Полное. 1993-3
6. Бекки Ф. сир. В 3т. М. 1997
7. Боннар А. Гражданское общество: проблемы интерпретации. Политология и теория современ. Вып. 3. М. 1991
8. Галганев К. Гражданское общество и правовое государство. Мировая экономика и междунациональные отношения. 1991 №2
9. Илвин М.В., Кандица Б.И. Две стороны одной медали. Гражданское общество и государство. Полное 1992 №1-2
10. Ируин С.В., Зотин В.Д., Зотин И.В. Политология. М. 1999
11. Локк Дж. Два трактата о государственном правлении. Соч. В. 3т. М. 1988
12. Нелсон. Государство. Политик. Закон сир. В 3т. М. 1972
13. Политология. Курс лекций. Под ред. А.А. Радугина М. 1999
14. Парсонс А.С. Политология. Учебник М. 1999
15. Словарь-справочник по социологии и политологии М. 1996

ԳԼՈՒԽ ՅՈՑԵՐՈՐԴ

Իշխանություն և իշխանական հարաբերություններ

1. Իշխանության ըմբռնումը, էությունն ու բովանդակությունը

✓ Իշխանության հարցի ուսումնասիրությունը քաղաքացիության հիմնարար և կարևորագույն խնդիրներից մեկն է: Իշխանության և իշխանական հարաբերությունների պրոբլեմները ուսումնասիրվում են մի շարք գիտությունների կողմից, որոնցից յուրաքանչյուրը իշխանության հարցը ուսումնասիրում և մեկնաբանում է ելնելով նրա դրսևորման այն ձևից, բնույթից ու առանձնահատկությունից, ինչը տվյալ գիտության համար կարևոր կշանակություն ունի և անորոշեցու է տվյալ գիտությանը հետաքրքրող որոշ հարցեր պվելի լավ լուսաբանելու համար: ✓

Այսպես Փիլիսոփայությունը խոսում է բնության և հասարակության վրա օբյեկտիվ օրենքների իշխանության անկայության մասին: Սոցիոլոգիային հիմնականում հետաքրքրում է իշխանության սոցիալական էությունը, նրա դրապատճաններն ու շարժառիթները, ընտանիքում, սոցիալական խմբերում նրա դրսևորման ձևերը, հասարակության և պետության փոխհարաբերություններում իշխանության դերը, կշանակությունն ու առանձնահատկությունները: Իրավաբանները ուսումնասիրում են իշխանության այն առանձնահատկությունները, որոնք կապված են օրենքների համակարգի, դրանց իրականացման ձևերի ու մեխանիզմների, օրենքի իշխանության հաստատման եղանակների ու հնարավորությունների հետ: Պատմաբանները ուշադրություն են դարձնում հասարակության զարգացման ընթացքում իշխանության դրսևորման տարբեր ձևերի, դրանց բնույթի ու առանձնահատկությունների փոփոխությունների տրամաբանական զարգացումների վրա: ✓

Քաղաքագիտությունը իշխանությունն ուսումնասիրում է որպես քաղաքական կազմակերպության ձև, ուշադրություն դարձնելով իշխանության գործառույթների առանձնահատկությունների վրա ընդհանրապես, և քաղաքական իշխանության իրականացման առանձնահատկությունների վրա մասնավորապես՝ ընկերվման ենթարկելով իշխանության քաղաքական կողմը, այն դիտարկելով որպես պետության գործունեության հիմնական ձև և նպատակների իրականացման հիմնական միջոց: ✓

Այն, որ գիտական գրականության մեջ իշխանությանը տրվում է ամենատարբեր ընդդրույթներ և մեկնաբանություններ տրամաբանական է, քանզի իշխանությունը իր բնույթով, մի կողմից բարդ ու բազմաբնույթ դրսևորումներ ունեցող սոցիալական երևույթ է և գտնվում է անընդհատ զարգացման և ձևավորման գործընթացում, մյուս կողմից իշխանության յուրահատուկ հատկանիշներից մեկը նրա համընդհանուր բնույթն է, որը թույլ է տալիս նրան թափանցելու հասարակական կյանքի թուր ոլորտները և առնչվելու, ինչպես առանձին անհատների, այնպես էլ սոցիալական խմբերի - հասարակական կառույցների գործունեությանը: Այդ պատճառով էլ տարբեր ժամա-

նակներում խոշոր մտածողներ քննարկելով իշխանության հարցը տվել են տարբեր մեկնաբանություններ, ամեն անգամ վեր հանելով իշխանության այս կամ այն կարևոր առանձնահատկությունը:

Պլատոնը փորձում էր պարզել իշխանության ծագման աղբյուրը, նրա իրականացման առավել ընդունելի ձևերը, պետության կառուցվածքում նրա իրական դերը: Արիստոտելը գտնում էր, որ իշխանությունը մարդու բնույթի մեջ է, նկատի ունենալով այն հանգամանքը, որ մարդը կարող է ապրել միայն հասարակության մեջ, որտեղ առանց իշխելու և ենթարկվելու հասարակության կյանքի գոյությունը հնարավոր չէլ Յոսեփը գտնում էր, որ բոլոր մարդիկ էլ ծնված օրվանից մինչև մահ անընդհատ ձգտում են հնարավորինս մեծ իշխանություն ունենալ, որովհետև դրանով է պայմանավորված մարդու հետագա բարենեցությունը: Ըստ Նիցշեի մարդու կյանքի իմաստը իշխանության ձգտումն է:

Արդի քաղաքական գրականության մեջ եղած թագմաթիվ բնորոշումներից առավել ընդունելի է համարվում Ա. Վեբերի իշխանությանը տված բնորոշումը, ըստ որի իշխանությունը այն բանի հնարավորությունն է, երբ մեկը հասարակական հարաբերությունների ներսում ի վիճակի է իրականացնել իր կամքը չնայած դիմադրության և անկախ այն բանից, թե ինչի վրա է հենված այդպիսի հնարավորությունը: Ըստ նրա իշխանությունը մարդուն նրա կամքից անկախ գործելու կամ չգործելու պարտադրանք է: Զադաքազիտանյան թառարանում (Սոսնյկա 1992), իշխանությունը բնորոշում է որպես սուբյեկտի յուրահատուկ կամային վերաբերմունք նույն հարաբերության մեջ գտնվող մեկ այլ սուբյեկտի նկատմամբ, որի շնորհիվ առաջին սուբյեկտը երկրորդին մղում է այնպիսի գործողության, որը պարտադիր կատարում է առաջին սուբյեկտի կամքը:

Իշխանությունը դիտվում է նաև որպես տիրապետության և ազդեցության յուրահատուկ հարաբերություն, որպես ինչ որ մեկի վրա ազդելու միջոց, որպես պարտադրանք և այլն: Մի շարք հեղինակների մոտ իշխանությունը մեկնաբանվում է որպես սոցիալական այնպիսի հարաբերություն, որը հնարավորություն է տալիս մեկ սուբյեկտի որոշումներ ընդունել, որոնց կատարումը մեկ այլ սուբյեկտի համար պարտադիր է: Իշխանությունը այլ հեղինակների մոտ դիտարկվում է որպես հասարակական փոխհարաբերության կարևորագույն ձևերից, որպես երկու սուբյեկտների միջև յուրահատուկ հարաբերության ձև, որոնցից մեկը ենթարկվում է մյուսին, ինչի շնորհիվ իշխանության սուբյեկտը իրականացնում է իր կամքն ու շահերը:

Ընդհանրացնելով եղած տեսակետները նկատելի է դառնում, որ բոլոր հեղինակների մոտ ընդհանուր է.

• Իշխանությունը երկու կողմերի՝ սուբյեկտի և օբյեկտի, փոխհարաբերություն է:

• Իշխանությունը անհրաժեշտաբար ենթադրում է օբյեկտի ենթակայություն: Ինչպես առանց օբյեկտի առկայության իշխանություն չի կարող,

կարող, այնպես էլ առանց օբյեկտի ենթարկվելու իշխանության իրականացում չի կարող, եթե, նույնիսկ օբյեկտն առկա է:

• Իշխանությունը սոցիալական երևույթ է և ի սկզբանե ընկած է մարդկային համակեցության հիմքում: Այն է, թե իշխանությունը մարդկային համակեցությունը ապահովող հիմնական գրավականն է:

• Իշխանությունը ենթադրում է պարտադրանք, առանց որի սուբյեկտը չի կարող օբյեկտին մղել իր ցանկությունների կատարմանը: Ի դեպ, պարտադրանքը կարող է իր ամենատարբեր դրսևորումներն ունենալ, սկսած ամենաբիրտ ուժի գործադրումից, մինչև օբյեկտի կողմից պարտադրանքի կամավոր ընդունումը և շահագրգռված իրականացումը:

• Իշխանության բոլոր դրսևորումներում առկա են տիրապետության, հսկելու, ազդելու, ստիպելու, պարտադրելու տարրեր, ինչն էլ իշխանության սուբյեկտին և օբյեկտին դարձնում է հակադիր կողմեր: Եվ, բանի որ իշխանությունը կողմերից մեկի քաջամայության դեպքում լինել չի կարող, ապա կարելի է ասել, որ իշխանությունը սոցիալական երկու հակադիր կողմերի՝ սուբյեկտի և օբյեկտի միասնությունն ապահովող փոխհարաբերություն է:

• Իշխանության իրականացման համար անհրաժեշտ են միջոցներ, որոնք իշխանության սուբյեկտի և օբյեկտի հետ միասին դառնում են իշխանության հիմնական տարրերը:

Իշխանության սուբյեկտ կարող է լինել անհատը, պետական մարմինը, կազմակերպությունը, սոցիալական խումբը և այլն: Իշխանություն իրականացնելու համար իշխանության սուբյեկտը պետք է օժտված լինի մի շարք այնպիսի կարևոր հատկանիշներով, ինչպիսիք են որոշում կայացնելու ընդունակությունը, հեղինակությունը, օժտված լինի համապատասխան կամքով, կազմակերպչական ծիրքով, ստեղծված իրադրության մեջ կողմնորոշվելու և այլոց կողմնորոշելու կարողությամբ, ունենա գիտելիքների անհրաժեշտ պաշար հասկանալու համար ենթակասների հոգեկան վիճակն ու տրամադրությունները և այլն: Ըստ հաճախ իշխանությունը անձնավորվում է և նույնացվում է իշխանության սուբյեկտի հետ: Խոսելով իշխանության ընդունած որոշումների, նրա գործողությունների, կամայականության և այլնի մասին, մենք ըստ էության նկատի ենք ունենում իշխանության սուբյեկտին, սակայն նրա գործունեությանը վերագրում ենք իշխանությանը ընդհանրապես և իշխանությունը նույնացնում ենք իշխանության սուբյեկտի հետ:

Իշխանության օբյեկտ ասելով հասկանում ենք այն ամենը ինչին ուղղված է իշխանության սուբյեկտի գործունեությունը: Այն կարող է լինել անհատը, մարդկանց սոցիալական խմբերը, երկրի քնակությունը և հասարակությունը ամբողջությամբ վերցրած: Սուբյեկտի և օբյեկտի հարաբերությունները կարող են դրսևորվել ինչպես նրանց միջև դաժան պայքարի, նույնիսկ մինչև իրար ոչնչացնելու ձևով, այնպես էլ օբյեկտի կողմից ենթակայությունը կամավոր, սիրով և շահագրգիռ ընդունելու ձևով: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով, ասենք հասարակության զարգաց-

ման աստիճանը, նրանում հաստատված ավանդույթներն ու սովորույթները, քաղաքական ուժի մը և այլն: Պետք է նշել, որ ենթարկվելը նույնքան բնորոշ է մարդկային հասարակությանը և նույնքան անհրաժեշտ է հասարակության գոյության համար, որքան իշխումը և կառավարումը: Իսկ թե որքանով է իշխանության օրյեկտը պատրաստ ենթարկվելու իշխանության սուբյեկտին կախված է մի շարք գործոններից, որոնց մեջ առավել նշանակալից են իշխանության օրյեկտի որակը, նրան ներկայացվող պահանջների քննարկը, իշխանության սուբյեկտի ունեցած ազդեցության միջոցները, սուբյեկտի հեղինակությունը և այլն:

/Իշխանության օրյեկտի որակը առաջին հերթին որոշվում է բնակչության քաղաքական կուլտուրայի մակարդակով:/ Առավել մեծ ենթակայություն, սովորաբար, ապահովվում է այն ժամանակ, երբ հասարակության մեջ մարդկանց ճշդ մեծամասնությունը ավանդույթի բերումով սովորել է ենթարկվել ուժեղ տիրակալին, ուժեղ ձեռքի իշխանությանը, Այն սովորաբար հատուկ է միապետության և ամբողջատիրական քաղաքական ուժի մեծիկների: Այդ ուժի մեծիկների պայմաններում իշխանության սուբյեկտի և օրյեկտի միջև հաստատված հարաբերությունը առավելապես ուժի և պարտադրանքի գործոնի վրա է հենված:

«Ինչու» է մարդը ենթարկվում ուրիշի կամքին, ի՞նչ շարժառիթներ են ստիպում օրյեկտին ենթարկվելու իշխանության սուբյեկտին: Այս հարցերի պատասխանները գտնելուն ուղղված ռաուսմասիությունները ցույց են տալիս, որ մեկ մարդու մյուսին ենթարկվելու հիմքում ընկած է անհավասարությունը, որը կարող է լինել ինչպես բնական, այնպես էլ սոցիալական/ Օրինակ՝ մարդը կարող է ենթարկվել մեկ ուրիշին, որովհետև այդ մեկը կամ ուժեղ է, կամ խելոք է, կամ կյանքի մեծ փորձ ու հմտություն ունի և այլն, ինչը բնական անհավասարություն է ստեղծում կողմերի միջև: Իշխանության սուբյեկտը կարող է ղեկավար լինել և պաշտոնի բերումով կարգադրություններ անելու, հրամաններ արձակելու իրավունք ունենալ, որոնց կատարումը պարտադիր է իշխանության օրյեկտի համար, ինչը սոցիալական անհավասարության դրսևորումն է:

ՄԱՐԴՈՒ ԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ԿԱՐՆՈՐԱԳՈՒՅՆ ՂՐԴԱԿԱՌՃԱՆՆԵՐԻՑ Է ՎԱՅԻՆ ԿԱՄՈՒ ԽԱՆՂԵԱ: /Իշխանության օրյեկտի և սուբյեկտի միջև հաստատված հարաբերությունների բնույթն այնպիսին է, որ սուբյեկտի կողմից ընդունած որոշումների, հրահանգների, հրամանների կատարումը օրյեկտի համար պարտադիր բնույթ է կրում, որոնց չկատարման համար հետևում է պատիժ, եվ կարևոր չէ, թե պատիժը ինչ բնույթ ունի՝ մահապատիժ է, թե ընդամենը աշխատանքից հեռացում: Եսկանն այն է, որ պատիժի նկատմամբ վայել մարդուն ստիպում է կատարելու իրեն տրված հանձնարարականը, նրա վրա դրված պարտականությունները: Կարելի է նշել, որ առայժմ պատիժը իշխանության սուբյեկտի և օրյեկտի հարաբերությունները կարգավորող հիմնական գործոններից է: Եվ այնուհանդերձ պատիժի հանդեպ վայել, որպես ենթարկվելու ներքին իզոթ շարժառիթ, իշխանության համար կայուն հիմք չի

կարող լինել, որովհետև այս դեպքում իշխանության սուբյեկտի և օրյեկտի միջև հակասությունների սրումը, բախումը, ճգնաժամը և կատաղի պայքարը դառնում են անխուսափելի: Անել է թե, բոնապարտության դրսևորման բոլոր ձևերում իշխանությունը իրականացվում է սուբյեկտի կողմից առավելապես ուժի կիրառման, պարտադրանքի գործադրման շնորհիվ և իշխանության էությունը հանգում է տիրապետողի և ենթարկվողի հարաբերության:

Հասարակության ժողովրդավարացման գործընթացներին զուգընթաց, այն չափով, որքանով որ հասարակության մեջ հաստատվում են ժողովրդավարական սկզբունքներ, այդքանով փոխվում է իշխանության սուբյեկտի և օրյեկտի միջև հաստատված հարաբերությունների բնույթը: Այս պարագայում իշխանությունը դիտարկվում է որպես սուբյեկտների միջև այնպիսի հարաբերություն, որն հիմնված է համագումարների, հեղինակության, փոխադարձ շահերի վրա, ինչը հնարավորություն է տալիս հակասությունների, ճգնաժամի առաջացման պայմաններում համաձայնության գալ և համատեղ լուծել դրանց: Այս դեպքում իշխանությունը ավելի շատ ձեռք է բերում հասարակական կյանքի, առաջին հերթին իշխանության սուբյեկտի և օրյեկտի հարաբերությունների կարգավորողի նշանակություն: Եվ դա բնական է, եսխ այն պատճառով, որ ժողովրդավարության պայմաններում իշխանության սուբյեկտի ձևավորման գործում մեծ է օրյեկտի դերը, կարելի է ասել, որ իշխանության սուբյեկտին ձևավորում է հենց իշխանության օրյեկտը, ինչը արդեն իսկ նրանց միջև որոշակի փոխըմբռնման երաշխիք է: Եվ երկրորդ, այս դեպքում առկա է շահերի որոշակի համընկնում, այսինքն նրանց փոխհարաբերությունները հենվում են փոխադարձ շահերի վրա, ինչը իշխանությանը ավելի կայացած է դարձնում, ցանցի իշխանության օրյեկտը, ենթակալները, անձնապես շահագրգռված են կամավոր կատարելու իրենց տրված հանձնարարականները, ցանցի, դա նաև նրանց շահերի իրական պաշտպանության գրավականն է: Այստեղ, փաստորեն իշխանության սուբյեկտը և օրյեկտը համընկնում են, ներդաշնակված են և, երբեմն, նույնիսկ նույնական են, և իշխանության հարաբերությունների օրյեկտը իշխանության սուբյեկտի ձեռնարկված գործը ընկալում է որպես իր սեփական գործ և բացարձակապես վստահում է կառավարողներին, աջակցելով իրագործելու նրանց ձեռնարկները:

✓ Բավականին մեծ դեր ունի իշխանության օրյեկտի կողմից ենթարկվելու անհրաժեշտության գիտակցումը, որը հենված է հեղինակության նկատմամբ վստահության, հավատի, հարգանքի վրա, ինչը պայմանավորված է իշխանության սուբյեկտի այնպիսի հատկանիշներով ինչպիսիք են մտավոր կարողությունը, կենսափորձը, մարդկանց հետ լեզու գտնելու, նրանց համոզելու ընդունակությունը, որոնք էլ մարդուն հակում են դեպի ենթարկվելը: /

ՇՆՌԻՆԱՆՔԱԳՆԵԼՈՎ ՎԵՐԸ շարադրածը կարելի է տալ իշխանության հետևյալ բնորոշումը: /Իշխանությունը երկու հակադիր կողմերի՝ իշխանության սուբյեկտի և օրյեկտի միջև հաստատված հասարակական փոխհարաբերության այնպիսի ձև է, որի ընթացքում իշխանության սուբյեկտը համա-

պատասխան ազդեցության միջոցներ կիրառվում չեն որովհետև հնարավորություն է ստանում իշխանության օբյեկտին պարտադրելու որոշակի գործունեություն իրականացնելով կատարել որ կամեց

2. Իշխանության իրականացման հնարավորությունները և հիմնական միջոցները

Այն ամենը, ինչի շնորհիվ իշխանության սուբյեկտը կարողանում է ազդել իշխանության օբյեկտի վրա կարելի է անվանել իշխանության իրականացման հնարավորություններ: Իսկ այն ամենը, որոնց շնորհիվ իշխանության հնարավորությունների իրականացումը կյուբականացվում է դաժանում է իրական աղբյուրը, անվանում ենք իշխանության իրականացման միջոցներ: Գնտնաչար, իշխանության հնարավորություններ (մետոդներ) անվիվ հասկանում ենք այն բոլոր միջոցները, որոնց օգտագործումը թույլ է տալիս իշխանության սուբյեկտին իր ազդեցությունը ապահովելու իշխանության օբյեկտի վրա և նրան պարտադրելու իր նպատակների կատարումը: Իշխանության ինչպես հնարավորությունները, այնպես էլ միջոցները, կարող են ըստնայլ անձնաատարեր ընդլայն ու ընդվանակալուելը, որստորման ձևերի ու ընդգրկումները:

Իշխանության միջոցների բազմազանությունը գոյտական գրավանության մեջ առաջացրել են նրա տարբեր դասակարգումներ: Արդյալով դասակարգումները մեկի համաձայն իշխանության միջոցները բաժանվում են ըստ օգտակարության, ըստ կարտատարների և ըստ կողմնորոշիչ (տրամադրի) հատկանիշների:

Իշխանության միջոցների օգտակարության տակ նկատի է առնվում այն ամենը ինչը կապված է մարդու կյուբական պահանջների բավարարման և սոցիալական այլ բարիքներից օգտվելու հանգամանից հետ: որոնց միջոցով հնարավոր է ազդել մարդու վրա և ստիպել նրան կատարելու որոշակի գործունեություն: Գաղտնադրանքի ընդլայն ունեցող միջոցների տակ հասկացվում է քրոական և վարդական ընդլայն ունեցող բոլոր այն միջոցատոմաները ու լծակները, որոնց միջոցով իշխանության սուբյեկտը իր կանցն է կարտատարում օբյեկտին: Կողմնորոշիչ միջոցները տակ նկատի է առնվում մարդու ներաշխարհի, արժեքային կողմնորոշման և վարքի վրա ազդող բոլոր միջոցները:

Մեկ այլ տարբերակմամբ իշխանության միջոցները դասակարգվում են իրեն ընդլայնվող մարդկային գործունեության կարտատարային ոլորտները, որոնցից հիմնականում նվգվում են տնտեսական, սոցիալական, հոմային և այլն ոլորտները:

Իշխանության տնտեսական միջոցների տակ նկատվում են շուրտ այն կյուբական արժեքները, որոնց անհրաժեշտ են հասարակական արտատարության և սնանման համար (որակ) սննդամթերը, ընագարան և այլն),

այնրեցն այն ամենը, ինչն անհրաժեշտ է մարդու կյուբական և սոցիալական պահանջմունքների բավարարման համար:

Իշխանության սոցիալական միջոցներ ասելով նկատի է առնվում մարդու սոցիալական կարգավիճակի, հասարակության մեջ նրա տեղի և դերի հետ կապված ազդեցության միջոցները (աշխատանքի ազատությունը, պանտոն, կրթություն, առաջնապայքում պաշտոնում և այլն):

Իշխանության կուլտուրական միջոցները կապված են գիտելիքների և տեղեկատվության, ինչպես նաև որանց ստանալու հնարավորությունների և միջոցներու հետ: Այդ միջոցների օգտագործման հիմնական ընագամաններն են կրթության և գիտության օջանները, զանգվածային տրանսմիջոցները և այլն:

Իշխանության ուժային միջոցները դրանց Ֆիզիկական աարտատարնց իրականացնող (հարմիններն են, զենքը և դրանց համար հատուկ սպարտակված մարդուկ (թանակը, բանուր, դատիկանությունը, զենքի տարբեր տեսակները և այլն): Իշխանության կարենրագույն և առանձնահատուկ միջոց է համարվում մարդը: Մարդը բազմագործառայա, համընդհանուր ընդլայն ունեցող իշխանության միջոց է, որն ընդունակ է առեղծել իշխանության այլ միջոցներ:

Իշխանության միջոցների օգտագործումը շարժման մեջ է դնում անբող իշխանային համակարգը և հրական է դարձնում իշխանության շուրճընթացները, որոնց հրագործվում են մի քանր (ուղեղով կամ ուղեղային հորթականությանը սիրգակետություն կամ իշխում, ղեկավարում, կատարարում և հանում):

Ինտանը (տիտաանարանը) իշխանության անհրեղի մասն է: Նրա հասարակական կազմակերպման ձևը: Իշխող կարող է լինել ինչ որ մեկը կամ իսկի կանցը: կրանց կողմից ընդլայնված այլնեցը կամ այլնեցների համակարգը, կողմերը, սկզբունքները: Իշխող կարող է լինել նաև տեսակետը, հասարակական կարծիքը, գաղափարախոսությունը, ուժը, հարտությունը և այլն: կլմեակորելով կարելի է առանձնացնել իշխելու: Երեք իմնական դրստություններ տնտեսական, քաղաքական և գաղափարախոսական:

Տնտեսական տիտապետությունը իրականացվում է որպես արտատարության միջոցների, ինչը աշխատանքային գործընթացների և աշխատանքի արգուների բաշխման վրա հսկողություն:

Քաղաքական տիտապետությունը հսկողություն է անտական իշխանության օգտագործման վրա, ինչը շարտ համայն ծառայում է իշխողների տնտեսական շահերին:

Գաղափարախոսության իշխանությունը ենթադրում է ուղեղների զաղափարանան համաձայնի մեխանիքի, որի ոլմանան ընդլայն է արդարացնելու գոյություն ունեցող տնտեսական և քաղաքական կարգերը:

Ղեկավարումը իշխանության սուբյեկտի՝ անհատի, կուսակցության, սոցիալական կամ իշխանական խմբի քաղաքական նպատակների իրականացման ընդլայնակություն է, որին նրանց վրձում են հաննել տարտատեսայ

մեթոդների ու միջոցների օգտագործման շնորհիվ ազդելու այն քնազավառների, օբյեկտների, խմբերի և առանձին անհատների վրա, որոնք տվյալ դեպքում դարձել են իշխանության իրականացման հիմնական ազդեցության ոլորտները: Դեկավարումը իրականացվում է վերից-վար իշխանության իրականացման ճանապարհով, որի դեպքում վերևից եկող որոշումները, հրահանգները, հանձնարարականները ներքևների համար պարտադիր են: Դեկավարման հիմքում ընկած է վարչական համակարգը, խիստ կարգապահությունը, հրահանգների և հանձնարարականների անպայման կատարումը: Դեկավարման որևէ օղակում թույլ տված բացթողումները խաթարում են ամբողջ իշխանական համակարգի աշխատանքը, իսկ երբեմն, սուբիսկանցործության մատուցում այն: Դեկավարման հիմնական խնդիրն այն է, որ կարողանա իրականացնել ամբողջ համակարգի գործառնությունը և ապահովի կազմակերպիչ նպատակների իրականացումը: Դեկավարման և կազմակերպման շնորհիվ հնարավոր է լինում իրագործել հասարակության առջև ծառայած քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ բնույթի ծրագրեր ու խնդիրներ:

Կառավարումը իշխանության լիազորությունների օգտագործման հիմնական ձևերից մեկն է, որի խնդիրն է մշակել և իրականացնել հասարակական կյանքի կենսագործունեությունն ապահովող, հասարակության առաջընթացի և զարգացման համար անհրաժեշտ ծրագրեր, դրա համար օգտագործելով իշխանության բոլոր հնարավորություններն ու միջոցները: Իր առջև դրված նպատակների հասնելու համար կառավարությունը հասարակության ամբողջ համակարգում կազմակերպում և նպատակամղում է ինչպես իշխանության սուբյեկտի, այնպես էլ իշխանության օբյեկտի գործունեությունը: Կառավարման կարևորագույն խնդիրներից է իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև ներդաշնակ փոխհարաբերությունների հաստատումը, ինչը շատ հաճախ նրա առջև դրված խնդիրների իրագործման հիմնական երաշխիքն է դառնում: Ապահովելով լավագույն փոխհարաբերություն աշխատանքային խմբերի, կուսակցությունների, քնակչության տարբեր խավերի, տարբեր տարածքների միջև կառավարությունը ավելի մեծ հնարավորություն է ունենում հասարակության զարգացման, քնակչության կենսամակարդակի բարձրացման հետ կապված խնդիրները առավել լրիվ իրականացնելու համար:

Յևկոդությունը իշխանության մարմինների և հաստատությունների կարևոր գործառնություններից է, որոնք լիազորված են մշտապես հետևելու թե ինչպես են իրականացվում օրենքները, հրահանգները, որոշումներն ու հանձնարարությունները, ձգտում են բացահայտել իշխանության սուբյեկտների բացթողումներն ու չարաշահումները, հսկում են իշխանության օբյեկտի կողմից նրանց պարտականությունների կատարման գործընթացների վրա և այլն:

Իշխանության իրականացման գործընթացը կարգավորվում է իշխանության առանձնահատուկ կառուցվածքների միջոցով: Իշխանության

հիմնական կառույցներն են դառնում պետական մարմինները, իրավաբանական հաստատությունները, քաղաքական համակարգը ամբողջությամբ վերցրած: Այդ համակարգի շրջանակներում մշակվում և ընդունվում են համակարգի ներքին կցակցին առնչվող ծրագրեր և որոշումներ, մշակվում են արտաքին քաղաքականության հիմնական խնդիրները: Համակարգի յուրաքանչյուր սուբյեկտ իրեն հասանելի և քննող միջոցներով մասնակցում է քաղաքական իշխանության իրականացմանը և իր առանձնահատուկ դերն ու նշանակությունն ունի հասարակական ընդհանուր խնդիրների իրագործման համակարգում:

Նշենք, որ հասարակության զարգացման յուրաքանչյուր աստիճան, քաղաքական ուժի մի դրսևորման յուրաքանչյուր ձև իրեն քննող իշխանության միջոցներն ունի և միայն այդ միջոցների շնորհիվ է ի վիճակի իրականացնել իշխանությունը: Եթե պնդում ենք, որ իշխանությունը սուբյեկտի և օբյեկտի միջև փոխհարաբերությունն է, իսկ իշխանության միջոցները ծառայում են այդ փոխհարաբերությունները կայացնելուն և կարգավորելուն, ապա քնական է, որ իշխանության միջոցների ընտրությունը ուղղակիորեն կախված է սուբյեկտի և օբյեկտի միջև հաստատված փոխհարաբերությունների թուլալից: Եթե իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև հաստատվում են տիրակալի և ստրուկի, տիրոջ և ծառայի, հրամայողի և ենթարկվողի և նման հարաբերություն, այդ դեպքում կիրառվում են հիմնականում իշխանության պարտադրանքի միջոցները (ստրիկանություն, քանտ, բիրտ ուժի գործադրում, պատիժ և այլն): Իսկ երբ իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև հաստատվում են փոխադարձ վստահության, փոխշահավետ համագործակցության վրա հենված հարաբերություններ, այդ դեպքում իշխանության միջոցների ընտրության հիմքում ընկած է լինում փոխըմբռնումը, գիտակցումը, կամավորության սկզբունքը, համոզմունքը և այլն:

3. Քաղաքական իշխանության ծագումն ու առանձնահատկությունները

Այն, ինչ ասվեց վերը շարադրված ենթավերնագրերում, վերաբերվում էր իշխանությանը ընդհանրապես, և ինչպես նկատեցիք, քաղաքական իշխանության էությանը և առանձնահատկություններին վերաբերող հարցեր չքննարկվեցին:

Իշխանությունը, իշխանական հարաբերությունները, այսինքն մեկի կողմից մյուսների վրա ազդելը, նրանց որոշակի գործողության մղելը, մեկի ենթարկվելը, կախվածությունը, կապտակվելը մյուսին, հասարակական արժեքների բաժանելու մեկի իրավունքը և այլն ծնունդ են առել մարդկային հասարակության առաջացման և ձևավորման հետ զուգահեռաբար, որպես մարդկանց համատեղ ապրելու, որպես մարդկային համակենցությունն ապահովող անհրաժեշտ սոցիալական հարաբերություն: Եվ, որպես այդպիսին, իշխանությունը սոցիալական այլ երևույթների նման անցել է զարգացման

երկարատև հազարամյակների ճանապարհ և իր զարգացման ու կատարելագործման որոշակի աստիճանում ծնունդ է տվել քաղաքական իշխանության առաջացմանը: Ասել է, թե քաղաքական իշխանությունը ծագել ու ձևավորվել է հասարակության զարգացման միայն որոշակի աստիճանից սկսած, երբ հասարակության կյանքի բարդացման հետևանքով նախկինում գոյություն ունեցող իշխանական հարաբերությունները՝ իշխանության սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունները այլևս չեն կարողացել ապահովել մարդկանց հետագա համակեցությունը և անհրաժեշտ է դարձել որակապես փոխել օբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությունների բնույթը:

Այս տեսանկյունից ելնելով կարելի է ասել, որ քաղաքական իշխանությունը ծագել ու ձևավորվել է պետության ծագման և ձևավորման հետ զուգընթաց: Ինչքանով որ հասարակական կյանքի կազմակերպման ձևերն էին կանոնակարգվում և ձեռք բերում պետությանը ընդողջ հատկանիշներ, ճիշտ այդքանով էլ իշխանության բնույթն էր փոխվում և իշխանությունը աստիճանաբար քաղաքականացվում էր: Իսկ այդ անցումը տեղի է ունեցել աստիճանաբար և չափազանց երկարատև ժամանակահատվածում:

Իշխանության դրսևորման առաջել վաղ ձևը նվաճողական բնույթ է ունեցել և հիմնականում ուղղված էր հարևան տոհմերի, ցեղերի դեմ նրանց ունեցվածքը, տարածքները զավթելու և հարստանալու նպատակով, ինչը այդ ժամանակ ընդունված և խրախուսելի գործունեության ձև էր համարվում, առավել ևս, որ ձեռք բերված ավարը դառնում էր ամբողջ տոհմի սեփականությունը: Այդ փուլում իշխանությունը իրականացվում էր համատեղ, ամբողջ տոհմով, և հիմնականում զգուսգործվում էր սոցիալական պարտադրանքի միջոցները, այսինքն՝ մասնակցությունը պարտադիր էր ավարից բաժին ունենալու համար: Հասարակական ընդունված նորմերը պարտադիր էին տոհմի բոլոր անդամների, այդ թվում և տոհմի առաջնորդի համար: Հասարակական նորմերի մեջ էին միավորված հիմնական հասարակական արժեքները, տոհմի անդամների միջև տիրում էր հավասարություն, չկային արտոնություններ և առավելություններ ունեցող անհատներ, իշխանության և՛ սուբյեկտը, և՛ օբյեկտը ամբողջ համայնքն էր: Դրա համար էլ տոհմի առաջնորդի կողմից ձեռնարկված բոլոր միջոցառումները դառնում էին ամբողջ համայնքի սեփական գործը, քանզի դա նրանց գոյատևության հիմնական ձևն էր: Հասարակական նորմերը իրենցից ներկայացնում էին կրոնի, բարոյականության և իրավունքի ամբողջական համակարգ:

Հասարակության զարգացման հետագա փուլում տեղի է ունենում տոհմի ունեցվածքի բաշխման սկզբունքի փոփոխություն, որն իր հետ բերում է սոցիալական անհավասարություն: Համայնքի ունեցվածքը՝ հող, անասուններ և այլն, բաշխելու իրավունք են ստանում տոհմի առաջնորդները, որոնք էլ արդեն դառնում են իշխանության հիմնական սուբյեկտ՝ ձեռք բերելով վարչական և կազմակերպչական ֆունկցիաներ: Ճիշտ է, նրանք դեռևս համայնքի ունեցվածքի սեփականատեր չեն համարվում և իրենց դիրքն էլ ժառանգաբար փոխանցելու իրավունք չունեն, բայց և այնպես, այդ ունեցվածքը

բաշխելու, սոցիալական, տնտեսական ինդիվիդներ իրականացնելու լիազորությամբ են օժտված: Կարելի է ասել, որ դա քաղաքական իշխանության տարրերի առանձին դրսևորումներն էին, որովհետև մենք այստեղ արդեն հանդիպում ենք պետության ֆունկցիաներ իրականացնող որոշակի կառույցների առկայությանը: Դա հասարակական կյանքի կազմակերպման նոր աստիճան էր:

Հասարակության հետագա զարգացումը, նրա կյանքի անընդհատ բարդացումը անհրաժեշտություն է դարձնում այնպիսի կառույցների ստեղծման, առանց որոնց հասարակական կյանքի կազմակերպումն անհնար կլիներ: Սիւս, այդպիսի կառույցների ձևավորմամբ էլ առաջացավ պետության նախատիպը, որը մեզ հայտնի ամենավաղ քաղաքական կազմակերպության ձևերից մեկն է:

Ճիշտ է այս դեպքում նույնպես, մասնավոր սեփականություն որպես այդպիսին դեռևս գոյություն չունի, սակայն առաջնորդն արդեն տոհմի սովորական անդամ չէ, կամ ինչպես ընդունված է ասել, սոցիումի ծառան չէ, այլ նրա միանձնյա ղեկավարն ու օրինական տերը: Իշխանության կրողը սրբացվում է, դառնում է ամբողջ տոհմի համար միանշանակ ընդունելի և որպես հեղինակություն, և՛ որպես ղեկավար, և՛ որպես դատավոր: Եվ ոչ մի նշանակություն չունի թե՛ նա ինչ անհատական հատկանիշների, ընդունակությունների տեր է, գլխավորը նրա զբաղեցրած դիրքն է, ինչն էլ նրան դարձնում է քաջարժակ տիրակալ և այս դեպքում արդեն նրա պաշտոնը, որպես իշխանության սուբյեկտի, ժառանգաբար փոխանցվում է իր հաջորդներին: Ըստ երևույթին այստեղ սրբացվում, աստվածային է համարվում ոչ միայն տիրակալը, այլև րոն իշխանությունը, այն համարվելով աստծո կողմից ընտրյալների խումբը մենաշնորհ:

Առաջին անգամ ձևավորվում է իշխանության կենտրոնացված վարչական ապարատ և քանի որ տեղի էր ունենում նաև տոհմերի, ցեղերի միավորում, ապա սկսվում են ձևավորվել նաև տարածքային կառավարման կառույցներ և կառավարիչներ, որոնք սովորաբար ընտրվում են առաջնորդի հարազատներից: Կարգական ապարատի հիմնական ինդիվիդներն տնտեսական, սոցիալական և ռազմական ֆունկցիաների իրականացումը: Սա իշխանության քաղաքականացման նոր աստիճան էր և բավականին հստակ ուրվագծում է քաղաքական իշխանության իրականացման իրական դրսևորումները, ձևերն ու միջոցները:

Այս գործընթացի շարունակությունը հանգեցնում է վաղ պետության առաջացման, որի առանձնահատկություններից մեկն այն էր, որ այստեղ առկա էին մեծաքանակ հաատակներ, տարբեր էթնիկական խմբեր, հսկայածավալ տարածքներ և այլն: Այս պարագայում կտրուկ մեծանում է վարչական ապարատի դերը, բարդանում է նրա կառուցվածքը, կենտրոնական վարչական ապարատից զատ ձևավորվում են տարածքային և տեղական կառավարման մարմիններ: Կառավարման ներքում առաջանում են որոշակի ֆունկցիոնալ բաժանումներ՝ զինվորականություն, պետական պաշտոնյա-

ներ, հոգևորականների դաս, արհեստավորական ծառայություններ և այլն: Աստիճանաբար ձևավորվում է քյուլուկլատական ապարատը և իշխանական հերարխիան՝ վերից-վար կառավարման սկզբունքը:

Վոաջին անգամ հատակ, ըստ գրաված պաշտոնների և ունեցած դիրքի որոշվում է վարչական ապարատի յուրաքանչյուր աստիճանի իրավասության շրջանակները: Որոշումների ընդունումը, անկախ գրաված դիրքից, կատարվում են օրենքի համապատասխան, ինչը կարգավորում է պաշտոնյաների գործունեությունը: Այստեղ արդեն մենք գործ ունենց կայացած պետության հետ և նրա օրենսդրորեն կարգավորված գործունեությունը ոչ այլ ըստ է. քան քաղաքական իշխանության իրականացում:

Չափորդ փուլում հասարակության զարգացումը հանգեցնում է միապետության առաջացման, որի դեպքում իշխանությունը անհատականացվում է, անձնավորվում է: Այս դեպքում արդեն իշխանության սուբյեկտը բացարձակ միապետն է, մնացյալը վերից-վար նրա համար իշխանության օբյեկտ են հանդիսանում, չնայած նրան, որ դեպի ներքև իջնող իշխանական սանդղակում յուրաքանչյուրը իրենից ներքև կանգնածի համար համարվում է իշխանության սուբյեկտ: Միապետի և նրանից ներքև գտնվող իշխանավորների գործունեությունը կանոնակարգված է օրենսդրորեն, ընչն էլ լինելով քաղաքական իշխանության իրականացման հիմնական առանձնահատկություններից մեկը. մեզ թույլ է տալիս պնդելու, որ տվյալ դեպքում իշխանության սուբյեկտի գործունեությունը քաղաքական իշխանության դրսևորման ձև է: Այստեղից նարելի է եզրակացնել, որ երբ իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև փոխհարաբերությունները կանոնակարգված են օրենսդրորեն, երբ սուբյեկտը պետության կողմից օժտված է որոշում ընդունելու, իրագործելու և այդ իրագործման վրա հսկելու լիազորությամբ, իսկ մյուս սուբյեկտը պարտավոր է այդ որոշումներին, հրամաններին ու հանձնարարություններին ենթարկվել ու կատարել, ապա մենք գործ ունենք քաղաքական իշխանության դրսևորման հետ:

Մյուսփուլով, քաղաքական իշխանությունը որևէ մեկի, խմբի կամ դասի իրական հեղափոխությունն է իշխանական հարաբերությունների բաշխման և իրեն ձեռնադրող իրավական նորմերի ընդունման ճանապարհով իրականացնելու իր կամքը: Քաղաքական իշխանությունը պետական ապարատից զատ իրականացվում է նաև քաղաքական կուսակցությունների, տարբեր հասարակական կազմակերպությունների՝ արհմիությունների, հասարակական ֆոնդերի, հիմնադրամների և այլնի կողմից:

Քաղաքական իշխանությունը ունի մի շարք յուրահատկություններ, որոնցից կարևորներն են.

ա) քաղաքական իշխանությունը միշտ օրինական է (լիգիտիմ) և իրավասու է տվյալ պետության շրջանակներում ուժ գործադրելու և պարտադրանք կիրառելու:

բ) հավասարակշռական տարրերի և երևույթների դեմ օրինական բռնություն կիրառելու իրավունք ունի.

գ) առկա է դրոշումներ, օրենքներ, նորմեր ընդունելու միասնական կենտրոնը:

դ) տարբեր սոցիալական և քաղաքական խմբերի միջև ծագած հակասությունների ճշմարտության դեպքում կատարում է միջնորդ դատավորի (արբիտրաժի) դեր,

ե) գոյություն ունեցող սեփականատիրական հարաբերությունների շրջանակներում ապահովում է հասարակության ամբողջականությունն ու կայունությունը,

զ) զանգվածային լրատվամիջոցները նպատակամղված օգտագործում է հասարակական կարծիքի ձևավորման համար,

է) ընդունված որոշումները պարտադիր են քուլորի համար,

ը) իրապարանային բնույթ ունի, որը նրան թույլ է տալիս, հենվելով օրենքի վրա, դիմելու բոլոր քաղաքացիներին ամբողջ հասարակության անունից,

թ) իշխանության միջոցների բազմազանությունը

Այս առանձնահատկությունները առավել լրիվ են դրսևորվում ժողովրդավարության պայմաններում:

Ինչպես արդեն նշվել է, հասարակության քաղաքական կյանքը որոշակի սոցիալական խմբերի և անհատների գործունեություն է կապված իշխանության հետ: Ուստի քաղաքական իշխանության սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունների թնույթը շատ հաճախ կախված է այն բանից, թե ինչքանով են նրանք ներառված այդ գործունեության մեջ և ինչքանով են շահագոգրված քաղաքական իշխանության իրականացմամբ:

Քաղաքական իշխանության հարաբերությունների վերարտադրությունը նպաստում է այդ տիպի հարաբերությունները կարգավորող մի շարք նորմերի և կանոնների ընդունմանը: Վոաջին հերթին, դրանք այն նորմերն են, որոնք որոշում են պետության ղեկավարի, քաղաքական էլիտայի, պետական հաստատությունների կարգավիճակը: Չասարակության մեջ հստակ ընդգծվում է պետական մարմինների, պաշտոնատար անձանց իրավասության շրջանակները և որոշումներ ընդունելու իրավունքը: Այդ նորմերը արձանագրվում են օրենսդրական ակտերի, առաջին հերթին պետության սահմանադրության մեջ:

Երկրորդ, դրանք այն նորմերն են, որոնք որոշում են քաղաքական էլիտայի ձևավորման կարգը: Այս նորմերը փոփոխվում են նայած թե հասարակության զարգացման տվյալ աստիճանում իշխանության ձևավորման ինչպիսի սկզբունք է ընդունված՝ նշանակում է միապետը, թե ընտրում է ժողովուրդը:

Երրորդ, այն նորմերն են, որոնք որոշում են կառավարողների և կառավարվողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց փոխադարձ պատասխանատվությունը:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը շարադրանքը, կարելի է եզրակացնել, որ քաղաքական իշխանությունը բոլոր դեպքերում հասարակության կյանքի կանոնակարգված կազմակերպումն իրականացնող գործընթաց է:

4. Բաղաքական իշխանության տեսակները: Իշխանության լեգիտիմությունը

Քաղաքական իշխանության բաժանումը ըստ տեսակների շատ հաճախ կատարվում է ըստ իշխանության օգտագործած միջոցների հիմք վրա: Այդպիսի դասակարգման ժամանակ խոսվում է տնտեսական, սոցիալական, քաղաքական, գաղափարական, հոգևոր իշխանության մասին: Տնտեսական իշխանությունն ասելով նկատի է առնվում տնտեսական միջոցների վրա հսկողությունը, տարբեր տեսակի կյուրթական արժեքների սեփականությունը և այլն:

Սոցիալական իշխանությունը կապված է հասարակության կառուցվածքում կարգավիճակների, պաշտոնների, արտոնությունների բաշխման հետ:

Քաղաքական իշխանությունը օրենսդրորեն կանոնակարգված գործընթաց է, որն իրականացվում է ընդհանուրի շահերի անուկից, հասարակության կյանքը կազմակերպելու համար: Քաղաքական իշխանությունը գտնվելով տնտեսական իշխանության ազդեցության տակ, միևնույն ժամանակ թափափո՞նքի ինքնուրույն է և ընդունակ է տնտեսական իշխանության նկատմամբ առաջնություն ձեռք բերել և նրան ծառայեցնել իր նպատակներին:

Գաղափարական իշխանության խնդիրն է գանգվածների գիտակցության վրա ազդելով ապահովել ժողովրդի, ազգի կամ դասակարգի շահերի համապատասխան կառավարման իրականացում: Ռոսան նա փորձում է հասնել մարդկանց համոզելու և ներշնչելու մեթոդներով, հիմնավորվելով իրականացվող իշխանության դրական կամ բացասական լինելը:

Հոգևոր-տեղեկատվական իշխանությունը մարդկանց վրա իշխանություն է որականացնում գիտական գիտելիքների, լրատվության օգնությամբ:

Քաղաքական իշխանությունը կարող է դասակարգվել նաև ըստ իշխանության մարմինների գործառույթների՝ օրենսդրական, գործադիր, դատական: Պատկարավոր է նաև ըստ ազդեցության միջոցների, որի դեպքում սուբյեկտը իշխանություն է իրականացնում օբյեկտի նկատմամբ, ասենք, դեմոկրատական, միապետական և այլն: >

Լշենք, որ ինչ հիմքի վրա էլ կատարվի իշխանության դասակարգումը, նրա դրսևորման բոլոր ձևերը գտնվում են փոխադարձ բարդ փոխադարձությունների մեջ, և հասարակության զարգացման ընթացքում, կապված հասարակության կյանքում տեղի ունեցող քաղաքական զարգացումների և շրջադարձի հետ, դրանցից որևէ մեկը կարող է առաջնայնություն ձեռք բերել: Օրինակ ընտրությունների ընթացքում հոգևոր-տեղեկատվական իշխանությունը, մի տնտեսական համակարգից մյուսի անցման ժամանակ գաղափարախոսության իշխանությունը և այլն:

Քաղաքական իշխանության յուրահատուկ ձևը պետական իշխանությունն է: Պա սոցիալապես կազմակերպված իշխանություն է, օժտված ամբողջ բնակչության համար պարտադիր օրենքների իրապարակման մեխանիզմով:

Օրենքների և հանձնարարությունների կատարումը իրականացվում է հատուկ պարտադրանքի ապարատի միջոցով: Այստեղ պետական իշխանությունը ընկալվում է որպես պարտադրանքի իշխանություն, ինչն էլ առաջացրել է այն պատկերացումը, որ պետությունը բոլոր դեպքերում պարտադրանք իրականացնող կառույց է, կամ նրա հիմնական ֆունկցիան պարտադրանքն է: Հավանաբար այդպիսի պատկերացումն է պատճառներից մեկը, որ հատկապես լիբերալիզմի կողմնակիցների մոտ, փորձ է արվում հնարավորինս մեկուսացնել պետությունը հասարակական կյանքի գործընթացներից, իսկ երբեմն էլ, այն ուղղակիորեն դիտվում է որպես չարիք, որպես ազատության սահմանափակող:

Այն, որ պետական իշխանությունը իրականացվում է համապատասխան ընդունված նորմերի և օրենքների, նրան դարձնում է օրինական (լեգիտիմ), անկախ այն բանից, թե նա ինչպիսի դրսևորում ունի:

Քաղաքակիրթ հասարակության մեջ իշխանությունը պետք է օժտված լինի լեգիտիմությամբ: Լեգիտիմ իշխանությունը բնորոշվում է որպես օրինական և արդարացի իշխանություն: Իշխանության լեգիտիմությունը կապված է բնակչության ճշշող մեծամասնության կողմից այն բանին հավատալու հետ, որ գոյություն ունեցող կարգերը սովալ երկրի համար ամենալավն է:

Մաքս Վեբերը առանձնացնում է օրինական (լեգիտիմ) իշխանության երեք հիմնական ձևեր, տիրապետություն, կամ ինչպես նա է անվանում ավանդական, բանական-լեգիտիմ կամ ավելի պարզ ասած դեմոկրատական իշխանություն և խարիզմատիկ՝ հեղինակության վրա հենված իշխանություն:

Ավանդական օրինական իշխանությունը ծագել է իշխանությանը ենթարկվելու սովորույթի, դարերով գոյություն ունեցող կարգերին անվերապահորեն ենթարկվելու ավանդույթի շնորհիվ: Ավանդական տիրապետությունը բնորոշ է միապետությանը, որը դարերով վերադարձրել է ինքը իրեն, դատապարտել շատ սերունդների գոյության հիմնական եղանակը: Ավանդական լեգիտիմությունը հենվում է իշխանավորներին անվերապահորեն ենթարկվելու սովորույթի վրա, որը սովորաբար, դարերով ձևավորվել է ընտանիքում, համայնքում, որտեղ գոյություն է ունեցել ավագի նկատմամբ հարգանքի, հավատի և անվերապահորեն նրան ենթարկվելու սովորույթը:

Ավանդույթի իշխանությունը (իայրիշխանությունը) այնպիսին է, որ երբ առաջնորդը ինքն է խախտում գոյություն ունեցող սովորույթները, նա մարդկանց, ընտանիքի, համայնքի անդամների այցում կարող է կորցնել իր իշխանության օրինականությունը: Այդ իմաստով իշխանախմբի (ելիտայի) իշխանությունը խստորեն սահմանափակված են այն նոյն ավանդույթներով, որոնց օրինական են դարձնում նրա իշխանությունը: Ավանդական լեգիտիմ իշխանությունը աչքի է ընկնում կայունությամբ, ինչի համար էլ, Վեբերը գտնում էր, որ ժողովրդավարության կայունության համար օգտակար կլիներ պաշտպանել ժառանգական միապետին, որը կամրացներ պետության

հեղինակությունը, ինչն էլ պահպանվում է եվրոպական մի շարք երկրներում՝ Անգլիա, Դանիա, Իսպանիա և այլն

- Այսպիսով, օրինական իշխանության ավանդական ձևը հենված է հիմնականում այն բանի նկատմամբ հավատի վրա, որ գոյություն ունեցող իշխանությունը և նրա հաստատությունները համապատասխանում են ավելի-դուրեւերին, որոնք ժառանգաբար փոխանցվում են սերունդից-սերունդ և նախորդներից իշխանության ժառանգումը իշխանության սուբյեկտի կողմից դառնում էր տվյալ իշխանության հիմնական օրինական հիմքը: Աս ընդհանուր կողմից ընդունված նորմ լինելուց զատ նաև մարդկանց մոտ հավատի և ենթարկվելու օրինական հիմքի և պահանջմունքի ձևավորման անհրաժեշտ նախադրյալներ էր ստեղծում:

2/ Ուսցիտեալ (թանկան) օրինական (լեգիտիմ) իշխանություն: Լեգիտիմ իշխանության այս ձևը հենվում է այն ենթադրության վրա, որ գոյություն ունեցող քաղաքական համակարգը, իշխանության ատրիբուտները և կառավարման ձևը օրինական են հենց նրա համար, որ համապատասխանում են ընդհանուր կողմից ընդունված իրավական նորմերին: Վասնզ, ընտրությունների ընթացքում ձևավորված իշխանության օրինականությունը, նրա հիմքում ընկած է քաղաքացիների կողմից կառավարման և ենթակայության հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավական նորմերի կամավոր ընդունումը:

Այս տիպի լեգիտիմ իշխանության առավել զարգացած ձևը Սահմանադրական պետությունն է, որտեղ նշված են իշխանության իրավասության շրջանակներն ու գործառնության կանոնները: Այդ նորմերը հասարակության զարգացման հետ զուգընթաց կարող են փոխվել, եթե դրա անհրաժեշտությունը գագացվում է, ինչը կատարվում է համապատասխան օրենսդրական գործընթացների իրականացման ճանապարհով (հանրաքվեներ, ազգային ժողովում ընդունված օրենսդրական փոփոխություններ և այլն): Այդ տիպի լեգիտիմ իշխանության համակարգում քաղաքական էլիտայի իշխանությունը օրինականացվում է օրենքի իշխանությամբ, հաճախ օգտագործվում է նաև օրենքի դիկտատուրա արտահայտությունը: Յուրաքանչյուր պեզամ, երբ իշխանախմբին անհրաժեշտ է լինում հիմնավորել իշխանության իրականացման գործընթացներում իր իրավասու լինելը կամ արդարանալը, նա դիմում է տվյալ պահին գործող Սահմանադրությանը:

Նշենք, որ լեգիտիմ իշխանության այս ձևը ընտրոչ է միայն ժողովրդավարությանը, և նրա դրսևորման ձևերն ու մակարդակները տարբեր երկրներում կապված են այն բանի հետ, թե տվյալ դեպքում ինչ չափով է հաստատված ժողովրդավարության սկզբունքներով իշխանության իրականացումը:

3/ Կապիտալիստիկ (հեղինակության) լեգիտիմություն: Լեգիտիմ իշխանության այս ձևը մյուսներից տարբերվում է նրանով, որ հենվում է առաջնորդի առանձնահատուկ անհատական հատկանիշների նկատմամբ զանգվածների կուր հավատի վրա, ինչի շնորհիվ նա ընկալվում է որպես ինչ որ առանձնահատուկ հանճարեղ, անփոխարինելի և աստվածային հատ-

կանիշներով օժտված անձնավորություն: Այդ պատճառով էլ, ~~այս~~ հաճախ ~~աստվածացվում է~~, ստեղծվում է նրա անհատի պաշտամունքը: Կարիզմատիկ իշխանությունը բավականին անկայուն է նախորդ լեգիտիմ իշխանությունների հետ համեմատած և հիմնականում պայմանավորված է իշխանության սուբյեկտի անհատական հատկանիշներով: Իշխանության այս ձևը շատ հաճախ հաստատվում է հեղափոխական փոփոխությունների ժամանակ, երբ անցումը մեկ կառավարման համակարգից դեպի մյուսը ուղեկցվում է մի շարք բարդություններով, երբ նոր իշխանությունը դեռևս չի ընդունվում, ճանաչված չի ընկալության կողմից: Այս դեպքում գիտակցաբար առաջ է քաշվում և մշակվում է առաջնորդի անհատական իրական կամ մտացածին հատկանիշների քարոզը, փորձելով նրա հեղինակության բարձրացման ճանապարհով բյակկության համար ծանաչելի և ընդունելի դարձնել նոր իշխանությունը (Կարիզմատիկ իշխանությունը ընտրոչ է հիմնականում թույլ զարգացած երկրներին և հետամնաց ժողովրդներին: Այդպիսի իշխանության օրինակներ կարող են լինել ԽՍՀՄ (ստալինյան շրջան), Կուբա (Ֆիդել Կաստրո), Չինաստան (Մաոցզեդոն) և այլն):

Զարկ ենք համարում նշել նաև, որ իշխանության տեսակները կապված են կոնկրետ քաղաքական իշխանության հետ: Իրականում գոյություն ունեցող քաղաքական համակարգերը իրենցից ներկայացնում են վերը նշված որ- լոր քաղաքական իշխանության ձևերի հատկանիշները պարունակող, դրանց համակցությունը ներկայացնող ամբողջական համակարգեր: Որտեղ չի կարելի տեսական վերլուծությամբ առանձնացված լեգիտիմ իշխանության ձևերն իրենց մաքուր ձևով փնտրել, կամ նույնացնել իրականության մեջ եղած իշխանության ձևերի հետ, որտեղ նրանց կարող են հանդես գալ մասնակիորեն՝ իշխանության մյուս ձևերի հետ համատեղ: Տվյալ դեպքում տեսականորեն առանձնացումը և դրանց վերլուծությունը անհրաժեշտ է քաղաքական համակարգերի զարգացման տեսլեցները ու նրանց կատարելագործման համար՝ անհրաժեշտ գործոնները առանձնացնելու և հարկ եղած դեպքում դրանց կյանքում մարմնավորելու համար:

Գիտական գրականության մեջ նշվում են իշխանության օրինականության մի քանի աղբյուրներ: Դրանց մեջ կարևորներն են

1. Քաղաքացիների մասնակցությունը կառավարման գործընթացներին, որն իրական պայմաններ է ստեղծում իշխանության կողմից իրականացվող քաղաքականությանը մարդկանց զանգվածային մասնակցության համար: Այն թույլ է տալիս քաղաքացիներին իրենց ինչոր չափով իշխանության սուբյեկտ զգալու և իրականացվող քաղաքականության համար իրենց պատասխանատվության չափը գիտակցելու:

2. Տեխնոկրատական լիգիտիմություն, որը կապված է տնտեսական, ռազմական, կրթական և այլն գործունեության հետ:

Այս դեպքում իշխանության օրինականությունն ուղղակիորեն կախված է նշված ոլորտներում ծավալված գործունեության հաջողություններից և ան-

հաջողություններից: Հաջողության դեպքում իշխանության հեղինակությունը, նրա օրինականությունը բնակչության մեծամասնության կողմից դառնում է ընդունելի: Անհաջողության դեպքում, երբ իշխանությունը անադրյունավետ է գործում, չի կատարում իր առջև դրված խնդիրները, չի բավարարում քաղաքացիների հիմնական պահանջմունքները և այլն, իշխանության օրինականության հարցը բնակչության մեծամասնության համար դառնում է կազմածելի, հետևաբար և քննադատության ու անվստահության առարկա:

3. Պատաստրակի միջոցով լեգիտիմություն: Այս դեպքում իշխանության թուր լծակներն ուղղված են մարդկանց իշխանության սուբյեկտի կամքի պարտադրմանը, իհարկե, ամեն մի կոնկրետ դեպքում դրանք դրսևորման տարբեր ձևեր են ունենում:

Այս հիմնականում դրսևորվում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակման ձևով: Որքան ուժեղ է պարտադրանքը, այնքան ցածր է իշխանության օրինականության մակարդակը: Քաղաքական տարբեր համակարգերում պարտադրանքը եղել է իշխանության օրինականությունն ապահովող միակ միջոցը:

Որպեսզի իշխանությունը համարվի օրինական, այն պետք է համապատասխանի ընդհանուր կողմից ընդունված բարոյական և իրավական նորմերին: Հաճախ իշխանության օրինականության հարցը կասկածի տակ է դրվում Ռենց այն պատճառով, որ իրենց՝ իշխանության կողմնակիցներն են խախտում ընդունված բարոյական և իրական նորմերը, ասենք, պաշտոնական դիրքի չարաշահում, կաշառակերություն, հովանավորչություն և այլն:

5. *Իշխանությունների բաժանման սկզբունքները*

Իշխանությունների բաժանումը իրավաքաղաքական ուսմունքների և սահմանադրական սկզբունքների հիման վրա ժողովրդավարական պետության իշխանության կազմակերպման ձև է:

Իշխանությունների բաժանման գաղափարը ծագել է վաղուց - ծագել է այն բանի վտանգի գիտակցումից, թե ինչ չարիք է հասարակության համար իշխանության կենտրոնացումը մեկի ձեռքին: Դեռևս հին աշխարհի հոմերոսյան էպոսների մտածող Տիցիդոսը նշում էր, թե ինչ վտանգ է ներկայացնում «երբ մարդկանց մի փոքր խումբ կամ մեկ բռնակալ տիրում է ողջ իշխանությանը»: Լա խոթիուրո էր տալիս «թույլ չտալ, որպեսզի ամենահուժեղները իրենց ենթարկեն պետական մարմինները, անիրաժեշտ է, որ պետական մարմինների կազմը չլինեն միասնական, այլ բաժանված լինեն, որպեսզի մի իշխանության ճյուղ կարողանա հսկել մյուսի վրա»: *Ալեքսան. Առաջ. Մ1996 21-23*:

Սակայն իշխանությունների բաժանման տեսությունը իր առավել լրիվ վերլուծությունն ու հիմնավորումն ստացավ Տ. Լոկի և Շ. Մոնտեսքյոի աշխատություններում:

Այս երկու մտածողները ապրելով և գործելով Եվրոպայում ժողովրդավարության սկզբնական փուլում նկատել են, որ իշխանության իրականացման գոյություն ունեցող սկզբունքների պայմաններում, երբ բռնակալ կառավարողների կամքն էր պարտադրում ամբողջ հասարակությանը, երբ իշխանությունը կենտրոնացված էր մեկի կամ մի արտոնյալ խմբի ձեռքում, ազատություն, արդարություն և ժողովրդավարություն լինել չի կարող: Ըստ Մոնտեսքյոի, որպեսզի հնարավոր լինի կանխել իշխանության չարաշահումը, անհրաժեշտ է, որ մի իշխանության ճյուղ զսպի մյուսին, լինի նրա հակակշիռը, կարողանա հսկել նրա վրա: Եթե օրենսդիր և գործադիր իշխանությունները միավորված են մեկ մարմնի մեջ, ոչ միայն քաղաքացիական ազատություններ լինել չեն կարող, այլև անխուսափելի է դառնում բռնությունը: Ազատություն և արդարություն լինել չի կարող նաև այն դեպքում, երբ դատական իշխանությունը տարանջատված և անկախ չի օրենսդիր և գործադիր իշխանություններից: Եվ ամեն տեսակ ազատություն դառնում է անհնարին, երբ իշխանության նշված երեք ճյուղերը կենտրոնացված են մեկի կամ մի խմբի ձեռքում:

Ավտորիտար և ամբողջատիրական քաղաքական համակարգերում իշխանությունը կենտրոնացված է մեկի կամ խմբի ձեռքում: Այս պարագայում իշխանության հիմնական խնդիրն է բոլոր հնարավոր միջոցներով պահպանել իշխանությունը: Այդ իսկ պատճառով էլ ընդունված բոլոր օրենքները, որոշումներն ու նորմերը հարմարեցվում են իշխանության կողմնակից, իշխանության սուբյեկտների շահերին, նպատակ ունենալով հնարավորինս ամրապնդել նրանց իշխանության հիմքերը: Ինքնին հասկանալի է, որ այս դեպքում իշխանության որևէ ճյուղի քիչ թե շատ ինքնուրույնություն կվնասեր նշված քաղաքական համակարգերի գոյությանը, կրուկացներ նրա հիմքերը, կհարվածեր նրա սկզբունքներին: Դետաքար, այս համակարգերում իշխանության հիմնական խնդիրը իշխանության սուբյեկտին լեգիտիմ իշխանությամբ օժտելն ու այդ իշխանությունը հասարակությանը պարտադրելն է: Այսինքն, իշխանությունը տիրապետողների ձեռքում դառնում է հիմնական միջոց իրենց կամքը հասարակությանը պարտադրելու և իրենց իշխանության գոյությունը պահպանելու համար: Անել է, թե իշխանության իրականացման հիմնական նպատակը տիրապետողների իշխանության ապահովումն է:

Իշխանությունների բաժանման սկզբունքի կիրառումը հնարավոր է դառնում միայն հասարակության զարգացման որոշակի աստիճանից սկսած, երբ հասարակության հետագա զարգացումն ու կատարելագործումը անհրաժեշտաբար պահանջում է իշխանական հարաբերությունների, նրա գործունեության սկզբունքների արմատական փոփոխություններ: Այսինքն, երբ իշխանության գոյություն ունեցող գործառույթները այլևս խանգարում են հասարակության առաջընթացին և առաջանում է իշխանության իրականացման սկզբունքների փոփոխության անհրաժեշտություն:

Իշխանությունների բաժանումը տարբեր ճյուղերի դառնում է հասարակության զարգացման, ժողովրդավարության հաստատման, մարդկային իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնական երաշխիքներից մեկը: Եվ դա այն պարզ պատճառով, որ առանց այդպիսի բաժանման իշխանությունը միշտ էլ կմնա որպես մեկ արտոկլավ համի ձեռքում կենտրոնացված պարտադրանքի միջոց և չի ծառայի ավերող հասարակությանը: Այլ կերպ ասած իշխանությունների բաժանումը իրականություն է դառնում սկսած այն պահից, երբ այն վերածվում է հասարակական պահանջունքի:

Իշխանությունների բաժանման սկզբունքի իրագործումը կոչված է հավասարակշռելու իշխանությունների տարբեր ճյուղերի լիազորություններն ու գործառնությունները, ստեղծելու զսպող և հակակշիռող համակարգ, կանխելու հաճար իշխանության որևէ թևի բացարձակ իշխանության մեծաշնորհ ունենալու ձգտումներն ու հնարավորությունը: Հետևաբար, իշխանությունների բաժանման սկզբունքի իրականացումը կարող է հնարավոր լինել միայն այն ժամանակ, երբ արմատապես փոխվում են իշխանություն իրականացնող մարմինների առջև դրված խնդիրներն ու նպատակները, նրա ձևավորման ու գործունեության սկզբունքները: Այդպիսի հնարավորություն է ստեղծվում հասարակության ժողովրդավարացումը:

Ժողովրդավարության հաստատման ընթացքում ծնվել են բազում համամարդկային արժեքներ, որոնց մասին կխոսվի հաջորդ բաժնում: Այստեղ ասենք միայն, որ այդպիսի կարևորագույն արժեքներից մեկն էլ իշխանությունների բաժանման սկզբունքն է, որը կարելի է համարել ժողովրդավարության հաստատման կարևորագույն երաշխիքներից մեկը:

Ուշագիտի դիտարկելու դեպքում, նկատելի է դառնում ժողովրդավարության հաստատման և իշխանությունների բաժանման սկզբունքի իրականացման փոխադարձ կապն ու փոխաբանակապակցությունը: Ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը հասարակության մեջ իրական ապրմանն էր ստեղծում իշխանությունների բաժանման համար, իսկ իշխանությունների բաժանումը տարբեր անկախ ճյուղերի դառնում է ժողովրդավարության սկզբունքների իրականացման և նրա հետագա զարգացման ելակետը: Ախաված լինել լինի, եթե ասենք, որ ժողովրդավարության հաստատումն ու իշխանության բաժանման սկզբունքի իրականացումը միաժամանակյա գործընթաց է: Հետևաբար, կարելի է ասել, որ ինչքանով ժողովրդավարության սկզբունքներն են հաստատվում հասարակական կյանքում, ճիշտ այդ չափով էլ իշխանությունների բաժանման սկզբունքի իրականացումն է դառնում հնարավոր, և հակառակը, ինչքանով իշխանությունների բաժանման սկզբունքն է իրականացվում, միայն այդքանով են հաստատվում ժողովրդավարական հարաբերությունները: Ասել է թե, դրանք փոխկապակցված, իրար ենթադրող սոցիալական երևույթներ են, և մեկը առանց մյուսի կայանալու ու զարգանալու չի կարող:

Իշխանությունների բաժանման մասին շատ հաճախ խոսվում է իրավական պետության մասին տեսական մեթոդությունների համակարգում: Կարծում ենք ճիշտ չէ իշխանության բաժանման սկզբունքի իրականացումը կապել միայն իրավական պետության գաղափարի, առաջելու ևս նրա արդեն կայացած վիճակի հետ: Նախ այն պատճառով, որ իշխանությունների բաժանման սկզբունքի իրականացումը վարդույց սկսված և արդեն կյանքում իրեն որոշակիորեն հաստատած իրողություն է, ինչը չի կարելի ասել իրավական պետության մասին, որն առայժմ գոյություն ունի որպես գաղափար, որպես նպատակ: Եվ երկրորդ, իրավական պետության կայացումը ուղղակի արդյունքն է լինելու իշխանությունների բաժանման սկզբունքի կատարյալ աստիճանի իրականացման, քանզի իրավական պետությունը ժողովրդավարության զարգացման բարձրագույն աստիճանն է, որը ինչպես նշվեց, անմիջականորեն կապված է իշխանությունների բաժանման սկզբունքի իրականացման և հետագա կատարելագործման հետ:

Գիտական գրականության մեջ ընդհանուր կողմից ընդունված է այն տեսակետը, որ պետության նորմալ գործառնության համար իշխանությունները պետք է բաժանված լինեն իրարից անկախ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների: Այսպիսի բաժանումը ընդունված է անվանել իշխանությունների իրիզոնական բաժանում:

Ժողովրդավարության հետագա զարգացումը ցույց տվեց, որ հասարակության իրական ղեմնորստացման համար քիչ կարևոր չէ նաև իշխանության ուղղահայաց բաժանումը, առանց որի հնարավոր չէ իրականացնել մարդու իրավունքների և ազատությունների հետ կապված հարցերի մի ամբողջ համակարգ: Այդպիսի բաժանման հիմքում ընկած է վերից-վար իշխանության տարբեր մակարդակների գործունեության ինքնության ապահովումը: Այս դեպքում խոսքը վերաբերում է համագային կամ կենտրոնական իշխանության, տարածքային և տեղական կառավարման մարմինների փոխհարաբերություններին: Այդպիսի բաժանումը բացատրվում է նրանով, որ հաճախ միայն տեղական իշխանություններն են ի գորու ապահովել կարևոր իրավաքաղաքական գործընթացների արդյունավետ իրականացումը, ինչի համար էլ անհրաժեշտ է, որ տեղական իշխանությունները օժտված լինեն որոշակի ինքնուրույնությամբ, լիազորված լինեն տեղական նշանակությամբ որոշումներ կայացնելու և դրանք իրականացնելու իրավունքով:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, իշխանությունների թե՛ իրիզոնական և թե՛ ուղղահայաց բաժանումը կոչված է հասարակության կյանքի կազմակերպման նոր ձևերի և սկզբունքների կիրառման ճանապարհով ապահովել հասարակության հետագա զարգացումն ու առաջընթացը, իսկ առաջին հերթին ապահովել ժողովրդավարության զարգացումն ու կատարելագործումը:

Իշխանությունների բաժանման իրականացումը ենթադրում է հասարակության քաղաքական համակարգի բնույթի և բովանդակության, նրա կառուցվածքային տարրերի փոխհարաբերությունների արմատական փոփո-

խնդրանքներ: Դրանք ինչպես նաորոգվածքային, այնպես էլ ֆունկցիոնալ ընտրված փոփոխություններ են: Երբ նշում ենք, որ հասարակության հետագա զարգացումը, մարդկային իրավունքներն ու ազատությունները, ժողովրդավարության սկզբունքների իրականացումը հնարավոր է ապահովել միայն իշխանության ճյուղերի տարանջատման, նրանց անկախության ապահովման միջոցով, մենք նկատի ունենք ոչ թե իշխանության նոր մարմիններ ստեղծման անհրաժեշտությունը, այլ օրոյություն ունեցող իշխանության մարմինների ձևավորման սկզբունքների, նրանց ֆունկցիաների և գործունեության մեխանիզմների փոփոխման անհրաժեշտությունը: Որովհետև իշխանության այդ նույն ճյուղերը եղել են և նախատես: Մակայն դրանք՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները, կենտրոնացված լինելով մեկը, կամ մի բանի տեղում, նախ անպարզում էին հենց այդ մեկը կամ խմբի կողմից, և նրանքու: կատարում էին հենց նրանց կամքը: Աստի իշխանությունների ջանքման հիմնական խնդիրը իշխանության ձևավորման այնպիսի սկզբունքի իրականացումն է, որի շնորհիվ հնարավոր է դառնում իշխանություն ունենալու մենաշնորհից զրկել մեկին կամ արտոնազ իրացնել և իշխանության հիմնական իրավասու դառննել: ամբողջ ժողովուրդին, ռազմաակ պարագայում իշխանությունը լի կարող ճառայել հասարակության շահերին:

Այսպիսով, առաջանում է իշխանության ձևավորման լրիվ այլ սկզբունքների կիրառման անհրաժեշտություն: Արմատապես փոխվում են իշխանությունների ձևավորման օրենսդրական դրոյքերը, սահմանադրորեն որոշվում են իշխանությունների թրագատության և լիազորությունների, իրավունքների և սրարտակատությունների շրջանակները, սահմանվում է նրանց փոխարարբեռությունների սկզբունքները, իսկ այս բոլորը այլ քան չէ, քան հասարակության քաղաքական համակարգի արմատական վերափոխում:

Իշխանությունը կարող է անկասկ լինել և հասարակությանը ճառայել այն մասնակց, երբ այն ձևավորվում է ժողովրդի կողմից, նրա ակտիվ մասնակցությամբ, և պարտադրված չէ ենթարկվել գերագույն իշխանավորի կամքին, ինչը հնարավոր է դառնում միայն ռամաժողովրդական ընտրությունների ուսկրացման միջոցով: Իսկ դա նշանակում է որ ռասարակության քաղաքական համայնարգում առաջանում է մի շարք կարևոր քաղաքական և իրավական նաորոյքների ստեղծման անհրաժեշտություն:

Դա նախ և առաջ համաժողովրդական հանրագրի կամ սեռայապացույցական մարմինների միջոցով պետության հիմնական օրենքի՝ սահմանադրության ընդունման է, որում հստակ սահմանվում և ձևակերպվում են երկրի պետական տարրը, իշխանության տարրեր ճյուղերի ձևավորման սկզբունքները, նրանց իրավասության և պատասխանատվության շրջանակները, մարդու իրավունքների և քաղաքական ազատությունների որմիակաս սնգրունքները, պետության, նրա ռաստատությունների և ռասարակական ու քաղաքական կազմակերպությունների տոխարարաբեռությունների սկզբունքները և անկ մյաներու հասան իշխանությունների ջանախուր անկասկ մար-

միներ թարծրացում է օրենքի ապոհմանի և դառնում է հասարակության քաղաքական կրակի կազմակերպման պարտադր սկզբունք՝

Երկրորդ, որը ժողովրդավարության երթուն է, ընտրությունների ինստիտուտի ձևավորումն է, որի միջոցով, նախ տեղի է ունենում իշխանության ձևավորման սկզբունքի արմատական փոփոխություն և իշխանության ձևավորման միակ իրավասուն դառնում է ժողովուրդը՝ երկրորդ, ժողովուրդը առաջին անգամ հնարավորություն է տառնում ազատորեն զգույնելու իր քաղաքական իրավունքներից և մասնակց դառնալու քաղաքական կառուրարուն զործնքնազկերի: Եվ, երրորդ, որ ամենակարևորն է, ժողովուրդը դառնում է իշխանության աղբյուր, այսինքն պետական իշխանության մարմիններին օրինական իշխանությամբ օժտելու միակ իրավասու սուրբկարը՝ Ինքնին հասկանալի է, որ նման սկզբունքով ձևավորված իշխանությունն արդեն նեթապա ու պատասխանատու է միայն ժողովրդի առկն և պարտավոր է կատարել միայն նրա կամքը: Մա քաղաքական համակարգի ամենահիմնական տոտոխությունն է, որից էլ սկիզբ է առնում ժողովրդավարությունը:

Ընտրությունների աղբյուրնում ձևավորվում է իշխանության թարծրական մարմինը՝ օրենսդիր իշխանությունը: Երբենսդիր իշխանությունը իշխանության թարծրացումը մարմին է ռամարում ոչ թե նրա համար, որ նա իշխանության միա ճյուղերի նկատմամբ արտոնություններ կամ ժողակապություն ունի, այլ նրա համար, որ, նախ այն անմիջապես ձևավորվում է ժողովրդի կողմից, այսինքն՝ ամբողջ ժողովրդի ներկայացուցիչն է, և երկրորդ, որ միայն նա է իրավասու օրենքներ ընդունելու, որոնք կարտադիր են ամբողջ ռասարակության, պետական ռաստատությունների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, իշխանության միա ճյուղերի, այդ թվում և ռենց իր համար: Երբ Ձ Լուսնը պնդում էր որ անհրաժեշտության դեպքում օրենսդիր իշխանությունը պետք է գերագույն իշխանություն լինի և մնացած իշխանության ճյուղերը պետք է ըլսեն նրանից և ենթարկվեն նրան, ըստ երևույթին նա նկատի ուներ ոչ թե սույա, իշխանության մարմնի գերակատությունը իշխանության միա ճյուղերի նկատմամբ, այլ օրենքի գերակատությունը, որին պետք է ենթարկվեն բոլորը: Դակառան դեպքում անհամաձայն կրեն ինչնեց նեց նույն Լուկն կողմից առաջ քաշած իշխանության անկախ ճյուղերի ստեղծման անհրաժեշտության դաղաբարը:

Այսպիսով, նախ արմատապես փոխվում է օրենսդիր իշխանության ձևավորման սկզբունքը, իշխանության ձևավորման իրավասուն դառնում է ժողովուրդը՝ երկրորդ, փոխվում են օրենսդիր իշխանության հիմնական ինստիտուտն ու ֆունկցիաները, երբե միև այդ օրենսդիր իշխանությունը պարտադրված էր ենթարկվելու գերագույն իշխանավորի կամքին և իր ընդունած օրենքները ռարմարեցնել, նրա ցանկություններին, ապա այսմ ընտրվելով ժողովրդի կողմից, լինելով նրա լիազորված ներկայացուցիչը, պատասխանատու է միայն նրա առկն և իր ցեղունած օրենքները ընդենում է ժողովրդի շահերից, ռաշքի անկելով նրա կամքը: Գերակատար, երբ նախկինում

մրապետի կամքն էր բարձրացվում օրենքի աստիճանի, ապա այս դեպքում օրենքի աստիճանի է բարձրացվում ժողովրդի կամքը:

Օրենսդիր իշխանության հիմնական խնդիրն է ստեղծել ժողովրդի շահերն արտահայտող այնպիսի օրենքների համակարգ, որոնք իրականացումը, լինելով պարտադիր բոլորի համար, ապահովեր մարդկային իրավունքները և ազատությունների պաշտպանությունը, կանոնակարգեր պետական տարբեր հաստատությունների ու կառույցների, սոցիալական տարբեր խմբերի և խավերի փոխհարաբեղությունները, նպաստավոր պայմաններ ստեղծելով տնտեսական, սոցիալական, քաղաքական, իրավական, բարոյա-հոգեբանական, մշակութային և այլն հարաբեղությունների զարգացման համար: Այլ կերպ ասած, օրենսդրական իշխանության խնդիրն է դառնում այնպիսի օրենքների համակարգի ստեղծումը, որի իրականացումը հասարակության կյանքի լավագույն կազմակերպման, ժողովրդավարության զարգացման ու կատարելագործման և ընդհանրապես հասարակության հետագա զարգացման ու առաջընթացի անհրաժեշտ գրավականը լիներ: Օրենսդիր իշխանության կարևորագույն ֆունկցիաներից է նաև իր ընդունած օրենքների իրականացման գործընթացների վրա հսկողության իրագործելը:

Իշխանությունների երկրորդ կարևոր ճյուղը գործադիր իշխանությունն է: Գործադիր իշխանության հիմնական ֆունկցիան օրենսդիր իշխանության ընդունած և հաստատված օրենքների և որոշումների անվերապահորեն կատարելն է: Գործադիր իշխանությունը իր այդ հիմնական ֆունկցիան իրականացնում է տնտեսական, սոցիալական, պաշտպանական, մշակութային, արտաքին քաղաքականության բնույթի գործընթացների իրագործման միջոցով: Հասարակության առջև կանգնած խնդիրները ավելի արդյունավետ լուծելու անհրաժեշտությունից էլնելով գործադիր իշխանությունը իրավասու է հանդես գալ օրենսդրական նախաձեռնություններով, որոնք օրենսդիր իշխանության կողմից հաստատվելուց հետո կյունպես ենթակա են պարտադիր կատարման:

Գործադիր իշխանությունը տարբեր քաղաքական և կառավարման համակարգերում կարող են ձևավորման տարբեր սկզբունքներ ունենալ, որոնք, անշուշտ, արձանագրված են սահմանադրության մեջ: Օրինակ՝ նախագահական կառավարման համակարգում նախագահը, լինելով գործադիր իշխանության ղեկավարը, ինքն է ձևավորում կառավարությունը: Պառլամենտական կառավարման համակարգում գործադիր իշխանությունը սովորաբար ձևավորվում է պառլամենտում կուսակցությունների ունեցած ջլվեների քանակի համապատասխան: Առավել շատ ջլվեներ ստացած կուսակցությանը կամ կուսակցությունների միավորումը (ջյուկը) հնարավորություն է ստանում կազմել կառավարություն, որի մեջ մտնում են պառլամենտական բոլոր կուսակցություններն ու խմբակցությունները: Գործադիր իշխանության ձևավորման ժամանակ մեծ նշանակություն ունի հասարակության մեջ ժողովրդավարության հաստատման աստիճանը, տվյալ ժողովրդի զար-

գացման աստիճանը, ավանդույթները, բարոյահոգեբանական մթնոլորտը և բազում այլ գործոններ:

Պատական իշխանության հիմնական ֆունկցիաներն են հասարակության մեջ օրինականության ապահովումը, օրենքների իրականացման վրա հսկողության ապահովումը, ընդունած օրենքների, որոշումների օրենսդրական նորմերի, ինչպես նաև միջազգային պայմանագրերի սահմանադրությանը համապատասխանության հարցը: Պատական իշխանությունները նույնպես տարբեր երկրներում տարբեր սկզբունքներով են ձևավորվում: Լինում են տարբեր մակարդակների դատարաններ: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեն ատաքին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ, սահմանադրական, տնտեսական, զինվորական դատարաններ: Պատական իշխանության անկախությունը երաշխավորվում է սահմանադրությամբ: Պատական իշխանության անկախության դասական օրինակ է համարվում ԱՄՆ-ի դատական համակարգը, որը այդ երկրի պետական կառուցվածքում կարևորագույն ինստիտուտ է համարվում: ԱՄՆ-ում գերագույն դատարանի որոշումները վերանայման ենթակա չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ սահմանադրության մեջ կատարվում են համապատասխան փոփոխություններ: Գերագույն դատարանի անդամները նշանակվում են պետության նախագահի կողմից ցմահ ժամկետով և ենթակա են պաշտոնանկման, երբ ապացուցվում են նրանց կատարած ծանրագույն հանցագործությունները:

Հարկ ենք համարում նշել, որ իշխանության անկախ ճյուղերի քաժանումը դեռևս հեռու է կատարյալ լինելուց: Ժողովրդավարության կատարելագործումը ընթանում է իշխանության մարմինների ձևավորման ակզբունքների, նրանց գործառույթների բնույթի բարեփոխումների ճանապարհով, որը դեռևս չավարտված գործընթաց է: Ինչպես արդեն նշվել է վերը, իրավական, սոցիալական պետության, քաղաքացիական հասարակության առկայությամբ, որ որանց դեռևս հեռու են կատարյալ լինելուց, այնպես էլ իշխանությունների քաժանման սկզբունքի իրականացումը, լինելով ժողովրդավարության արդյունք, վերափոխվելու, կատարելագործվելու այնքան ճանապարհ ունի անցնելու, քանի դեռ զարգանալու և կատարելագործվելու կարիք ունի ժողովրդավարությունը:

6. Իշխանության հարցը Հայաստանի Հանրապետությունում

1990 թվականի մայիսյան գերագույն խորհրդի ընտրություններով Հայաստանում ձևավորվեցին նոր իշխանություններ: Տեղի ունեցած ձևակառույթն կարելի է համարել ժողովրդավարության սկզբունքներով առաջացած իշխանություն, քանզի ժողովրդի ճնշող մեծամասնությունը մասնակցեց այդ ընտրություններին և ազատորեն իր ձայնը տվեց նրանց, ում հավատում և վստահում էր: Ասում ենք ձևակառույթ, որովհետև շատ շուտով պարզվեց, որ այն ինչ տեղի էր ունենում այդ ժամանակ Հայաստանում քաղաքական-

պես կապ չունենալով ժողովրդավարության հաստատման համար մարդկանց գիտակցված գործունեության հետ: Տվյալ դեպքում հայ ժողովուրդը ուղի չէր կանգնել անկախություն ձեռք բերելու կամ ժողովրդավարություն հաստատելու համար: Ավելին, միտինգներում հնչած այդպիսի զաղափարներին ժողովուրդը վերաբերում էր անտարբերությամբ, իսկ երբեմն էլ արհամարանքով: Ժողովրդին համախմբել ու միավորել էր ազգային պահանջատիրության գաղափարը, այս դեպքում Արցախը Հայաստանին վերամիավորելու հարցը, ուրիշ բարոզներով էլ իշխանության ձգտող ուժը կարողացավ խաբել ու մոլորեցնել ժողովրդին, ստանալ նրա քվեն, գալ իշխանության, ունենալով միանգամայն այլ նպատակներ և իրագործելով միանգամայն այլ ծրագրեր:

Հետևաբար մեզ իրավունք ենք վերապահում ասելու, որ տեղի ունեցածը ընդամենը իշխանության գավթում էր, այն էլ խաբված ժողովրդի ակտիվ աջակցությամբ, որը 1-2 տարի հետո պետք է զիտակցեր իր սխալը և հիասթափված հայիությանցների տարափ տեղար իրեն մոլորեցնող քախտահանողի ավագակախմանի հասցեին: Իսկ ինչու՞ այդպես եղավ:

Հնչել էին սառը պատերազմի վերջին ակորդները: Խորհրդային միության ամբողջ տարածքում արևմուտքը շարժման մեջ էր դրել տարիների ընթացքում հավաքագրված իր գործակալների քանակը, որոնք դարձել էին հակախորհրդային շարժումների, ցույցերի, միտինգների, ազգային խնդիրների համար պայքարի կազմակերպիչներ, միակ խնդիրը ունենալով՝ կործանել Խորհրդային միությունը, ինչը արդեն դարձել էր անխուսափելի: Հայաստանը, լինելով խորհրդային միության մի պատահիկ, բացառություն չէր կազմում, ավելին, այստեղ արևմտյան գործակալների և՛ քանակական, և՛ որակական կազմը բավականին մեծ էր:

Արևմտյան քաղաքականության փորձառու գործիչների համար որևէ դժվարություն չէր ներկայացնում քաղաքականությունից անտեղյակ ժողովրդին ներքաշելու նրան անծանոթ քաղաքական խաղերի մեջ: Չափազանց լավ ուսումնասիրած լինելով մեր ազգային առանձնահատկությունները, քաջատեղյակ լինելով մեր թույլ կողմերին և ունենալով այնպիսի հուսալի գործընկեր ու օգնական, ինչպիսին ՊԱԿ-ն էր, որը ԽՍՀՄ պաշտպանության հզոր գործիցից վերածվել էր նրա կործանման կազմակերպիչի, սառը պատերազմի գնեթակները տեղերում հավաքագրված իրենց գործակալների միջոցով զեշտությամբ կարողացան բրբռեցել ժողովրդի ազգային զգացմունքները, ուղի հանել նրան և այդ բոլորին հաղորդել օբյեկտիվության տեսք: Արևմուտքի համար ոչ մի նշանակություն չուներ, թե այս կամ այն ժողովուրդը ինչի համար է ուղի կանգնել կամ ինչ է ուզում: Նրա համար այդ պահին գլխավորը այդ ամբողջ շարժումը խորհրդային իշխանությունների դեմ ուղղվելն ու ԽՍՀՄ-ը փլուզվելն էր, ունենալով այդ փլուզումից առաջացած յուրաքանչյուր թեկորի համար հետագայում իրագործվելից առանձին ծրագրեր: Իսկ ժողովրդի պատմական անարդարությունից, ազգային վիրավորված ինքնասիրությունից գեղարված զգացմունքները թույլ չտվեցին նրան

նկատելու ու հասկանալու այդ նենգ խաղերի իրական իմաստը: Ցավոք սրտի ժողովուրդը ակախալուր չեղավ նրանց, ովքեր փորձեցին նրան ճշմարտությունն ասել: Բորբոքված զգացմունքները իշխում էին քանակականության վրա, ինչից էլ օգտվելով իշխանատենչ խումբը իր հովանավորների ակտիվ աջակցությամբ կարողացավ մոլորեցնել ժողովրդին, ներկայանալ նրան որպես նվիրյալներ, առժանապա նրա վստահությանը և մատուցվել նրան որպես ազգային հեղուներ: Ահա հենց այս հեղուներից էլ հիմնականում ձևավորվեցին աննախացած Հայաստանի առաջին իշխանությունները:

Եթե խոսքը վերաբերեր միայն այն բանին, որ իշխանության էին եկել հակախորհրդային ուժեր, ապա այդ մասով երկրին և ազգին ոչ մի վտանգ չէր սպառնում առավել ևս, եթե այդ ուժերը հակախորհրդային լինելով ճանդեր, հանդես գային որպես ազգային շահերի պաշտպաններ, քանզի մենք չէ, որ պետք է կանխեինք ԽՍՀՄ-ի փլուզումը, մենք չէ, որ պետք է որոշեինք, ուզում ենք անկախություն, թե ոչ, դա կանխորոշված էր, որպես ԽՍՀՄ-ի վերջնական անխուսափելի հետևանք:

Խոսքը վերաբերում է նրան, որ իշխանության եր բերվել մի ուժ, որի հիմնական խնդիրն էր մոնղա վերջ հասցնելու արևմտյան ծրագրերի իրականացումը նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Ահա, հենց այդ ծրագրերի իրականացումն էր, որ նորանկախ Հայաստանի իշխանություններին օտարեցին ժողովրդից, հակադրեցին նրան, դարձնելով նրանց ազգի համար մեծագույն չարիք: Բարի ամենալայն իմաստով Հայաստանի իշխանությունները դարձել էին արևմտյան հզոր ուժերի խամաճիկը և նրանց ձեռքին գործից մեր ազգային արժեքները, տնտեսությունը, քարոյահագեցեանությունը ոչնչացնելու համար:

Վերջ ասվածի նպատակը ընավ էլ մեկ անգամ ևս այդ տարիների Հայաստանի իշխանությունների ցնաղատությունը չէ: 1990-1998թթ. ՀՀ իշխանությունների սուպագային, հակաժողովրդական և հանցավոր գործունեության մասին չափազանց շատ է գրվել մամուլում և ասվածը լրիվ բավարար է այն ազգային չարիք համարելու համար: Ասածի նպատակը Հայաստանի իշխանական հարաբերությունների քննադատելու, նրանց գործունեության սկզբունքների մասին առավել լրիվ պատկերացում կազմելն է: Բանն այն է, որ նոր առաջացած իշխանությունների գործունեության հետևանքով, հատկապես մեկ տնտեսական համակարգից մյուսին անցման ժամանակ, հեղափոխություններից հետո և այլև, հասարակության մեջ սկսվում են վերից-վար ձևավորվել իշխանության իրականացման, կառավարման, հասարակական կյանքի կազմակերպման այնպիսի սկզբունքներ, որոնք դառնում են հասարակության հետագա կենսագործության հիմնական գործոնները: Իսկ երբ դրանք արմատավորվում և դառնում են իշխանության իրականացման հիմնական սկզբունքներ, այլևս, եթե նուրիսկ այն չի ընդունվում հասարակության կողմից, դրանցից ձեռքազատվելը դառնում է չափազանց դժվար, առավել ևս, եթե հաջորդող իշխանությունները ժառանգում են

իրենց նախորդների գործունեության սկզբունքները, մտեցումներն ու մտածելակերպը՝

Ուստի, այսօր այնպիսի հարցերի պատասխաններ, թե ինչու՞ ժողովուրդը չի վստահում իշխանություններին, ինչու՞ այսպիսի զանգվածային բախերի է հասել արտագաղթը, ինչու՞ է հասարակության մեջ իշխում զանգվածային բարոյագրկումը, ինչու՞ է կազմակերպված հանցագործությունը, անաստծելիությունը դարձել օրինաչափություն, ինչու՞ է հնարավոր դառնում ազատորեն մտնել իշխանության բարձրագույն մարմնի դահլիճ և գեղակահարել պետության ղեկավարներին և էլի շատ ու շատ հակահասարակական երևույթներ, այնքա՞ն է փոխորել նախորդ իշխանությունների ձևավորման և գործունեության հետևանքով հասարակության մեջ արմատավորված իշխանության իրականացման սկզբունքների կիրառման մեջ: Նշենք դրանցից մի քանիսը:

1990 թվականի գերագույն խորհրդի և 1991 թվականի նախագահական ընտրություններում, թեկուզ ձևականորեն, այնուհանդերձ իշխանությունները ձևավորվում էին ժողովրդի ակտիվ մասնակցությամբ և Նրա կամքի ազատ դրսևորմամբ: Սակայն իշխանության եկած ուժերը շատ լավ հասկանում էին, որ այն ծրագրերը, որոնք նախապատրաստվում էին իրենց իրագործել և գործունեության այն սկզբունքների կիրառումը, որով Նրանք փորձելու էին իրականացնել իրենց նպատակները, չէր ընդունվելու ժողովրդի մեծամասնության կողմից և զրկվելով Նրա վստահությունից, կորցնելու էին իշխանությունը: Դա կանխելու համար իշխանախումբը նախապես սկսեց նախապատրաստվել հաջորդ ընտրություններում առանց ժողովրդի աջակցության մեալ իշխանության վրա: Դա վերաբերում է և՛ ընտրական օրենքի իրենց ձեռնադրու տարբերակի ընդունմանը, և՛ իրենց կամակատարներից տարբեր մակարդակների ընտրական հանձնաժողովների ստեղծմանը, և՛ ուժային կառույցները այդ նպատակով օգտագործելուն, և՛ ընտրակաշառքների ձևերի ներդրմանը և այլն: Այսպես սկսվեց ընտրության գործընթացի և արդյունքների կեղծման սկզբունքի կիրառմամբ իշխանության ձևավորման գործընթացը, որի գագաթնակետը դարձան 1995թ. Ազգային ժողովի ու Սահմանադրության և 1996թ. նախագահական ընտրությունները Փաստորեն, 1995թ. տեղի ունեցավ իշխանության բռնազավթում, այն էլ ռազմական ուժի գործադրմամբ: Եվ, չնայած 1998թ. փետրվարյան իշխանափոխության (իշխանությունը բռնազավթած նախագահը հրաժարական էր տվել) և 1999թ. Ազգային ժողովի ընտրություններում ինչ որ դրական տեղաշարժեր նկատվեցին (չկային արգելված քաղաքական կուսակցություններ, բացահայտ ճնշումներ ու բռնություններ և այլն), այնուհանդերձ սկզբունքորեն զրեթե ոչինչ չփոխվեց: Նույն անկատար ընտրական օրենքներն էին, կեղծելու մեջ վարպետացած նույն ընտրական հանձնաժողովները, ընտրակաշառքի ավելի կատարելագործված ձևեր, ուժային կառույցների ազդեցության առկայությունը և այլն: Ե՛իչտ է, 1999թ. Ազգային ժողովի ընտրությունների հետևանքով ձևավորված իշխանությունը որոշ

ույսեր էր ներշնչում և պրծանացել էր քավականին մեծ զանգվածի վստահությանը, սակայն այդ հույսերն ու վստահությունը գեղակահարվեցին Ազգային ժողովի դահլիճում և իշխանությունը Նորից զնաց իրեն արդեն հարազատ դարձած սեփական շահերի գերակայությունն ապահովող ճանապարհով: Ասել է թե, արմատավորվել էր խմբային, կլանային շահերի գերակայությունը ապահովող իշխանության ձևավորման այնպիսի սկզբունք, որից հետո չէր ձեռքբազատվել և որի դառը պտուղները հասարակությունը դեռ երկար է վայելելու:

Ինքնին հասկանալի էր, որ իշխանությունների ձևավորման այդպիսի սկզբունքը առաջացնելու էր համապատասխան կադրային քաղաքականության իրագործման անհրաժեշտություն: Կառավարման ամբողջ համակարգում վերից-վար կադրերը նշանակվում էին կամ անձնական նվիրվածության սկզբունքով, կամ որ ավելի վատ էր, պաշտոնները ուղղակի վաճառվում էին, ինչը ապահովում էր իշխանության վերին օղակների կամքի պարտադրումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Իրավապահ մարմիններում տնօրինություն էր անում հանցավոր աշխարհը: Այն դարձել էր օրենքի անուկից անօրինականության բարստատալու լավագույն միջոց: Եթե առաջին ավելացնենք նաև այն, որ պետական հաստատությունները գործում էին, ոչ թե օրենքի աաշտպանության, այլ «շեֆի» կամքի կատարման սկզբունքներով, որ իշխողների ճնշող մեծամասնության մոտ բացակայում էր պետական մտածելակերպը, որ իշխանությունը վերածվել էր ընդամենը հարստատալու և կատարած հանցանքի համար պատասխան չտալու լավագույն միջոցի, որ իշխանությունները ուղղակի օգոտտ ակցնկալելով դարձել էին ավելի շատ դրսի ուժերի, քան սեփական ժողովրդի շահերի արտահայտիչ, որ ժողովրդի անտարբերությունը իշխանության գործունեության նկատմամբ հասել էր իր ծայրակետին և էլի նման այլ դրսևորումներ, ապա պարզ կդառնա, որ Դայաստանում չի կայացել պետությունը, չեն կայացել քաղաքական համակարգի շատ կառույցներ, չի հաստատվել օրենքի իշխանություն, բայց սկզբունքորեն կայացել է խմբի իշխանությունը:

Ահա այդպիսին էր ԳԳ իշխանության ընույթը մինչև 2003թ.:

Ընդհանրացնելով վերը շարադրածը, կարելի է նշել ԳԳ իշխանական հարաբերությունների մի շարք առանձնահատկություններ.

ա) ժողովրդավարական արժեքներն ու սկզբունքները դեռ չեն հաստատվել հասարակության մեջ և գտնվում են ձևավորման արոցեսում

բ) քաղաքական համակարգի շատ կառույցներ դեռևս կայացած չեն, ձևական ընույթ է կրում նաև կուսակցական համակարգի կայացումը

գ) պետությունը, իշխանությունները օտարված են ժողովրդից

դ) չափազանց ցածր է հասարակության քաղաքական գիտակցության աստիճանը

ե) իշխանության ընույթը համապատասխանում է չկայացած քաղաքական համակարգի ընույթին, հայտարարված է ժողովրդավարություն, հաստատված է ավտորիտարիզմ, օգտագործվում է ամբողջատիրության իշխա-

նության և կառավարման ձևավորման սկզբունքներ, անիշխանությունը քողարկվում է լիբերալիզմի գաղափարների շղարշով, թալանը արդարացվում է շուկայական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությամբ:

զ) իշխանության հորիզոնական բաժանումը ձևական քնույթ ունի, ուղղահայաց բաժանումը հիշեցնում է ավտորիտարիզմի - ամբողջատիրության խառնուրդ:

է) անպատճեղիությունը դարձել է իշխանության մտածելակերպը, դիրքի լարաշահումը՝ գործելակերպ, հարստանալը՝ հիմնական նպատակ:

Այլ կերպ ասած Հայաստանի Հանրապետության իշխանություններին քնորոշ եր այն բացասական դրսևորումները, ինչը սովորաբար քնորոշ է լինում անցման շրջանի իշխանություններին:

Գրականություն

1. Аристотель. Политика. М. 1984
2. Белов Г.А. Политология. Курс лекций. М.1996
3. Бодд Т. Власть «Политические исследования» 1993 №5
4. Вебер М. Избранные сочинения. М. 1990
5. Ильин И. Аксиомы власти. «Новое время». 1990 №1
6. Ирхин Ю.В., Зотов В.Д., Зотова Л.В. Политология. М. 1999
7. Краснов Б.И. Теория власти и властных отклонений. «Специально политический журнал». 1993. №3-6
8. Локк Дж. Соч. в 3т. М. 1998. Т.3
9. Макиавели Н. Государь. М. 1990.
10. Монтескье Ш. Избранные произведения. М. 1955.
11. Норрети М. Демократия для немногих. М. 1990.
12. Платон Соч в 3т. М. 1971
13. Политология Курс лекций Под ред А.А. Радутиня. М. 1999
14. Политология учебник. М. 1999
15. Поннер К. Открытое общество и его враги. М. Т.2
16. Цинерон. Диалоги. М. 1966
17. Эткин Л.М. Разделение властей. Опыт современного государства. М. 1995.

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Քաղաքական գաղափարման ընտրելի անցումային հասարակությունում

1. Անցումային հասարակության քնորոշումը

Ռևուսմասիերելով մարդկային հասարակության պատմության զարգացման ընթացքը նկատելի է դառնում, որ հասարակությունը իր ձևավորման ամենավաղ շրջանից սկսած, շնորհիվ նրա տնտեսական, սոցիալական, իրավա-քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքում տեղի ունեցող փոփոխությունների, անընդհատ զարգացել ու կատարելագործվել է, զարգացման ցածր աստիճանից անցում կատարելով ավելի բարձր աստիճանի:

Այսպիսի մոտեցմամբ ցանկացած հասարակություն կարելի է անցումային համարել այնքանով, որքանով հասարակական կյանքի տարրեր բնագավառներում կատարվող ներհամակարգային փոփոխությունները, նույնիսկ, եթե դրանք տեղի են ունենում մասամբ, դանդաղ, երբեմն չափազանց երկարատև ժամանակի ընթացքում, վերջին հաշվով դառնում են հասարակության ցածր աստիճանից ավելի բարձր աստիճանի անցնելու օբյեկտիվ գործառնություններ:

Արդի գիտական գրականության մեջ չկա անցումային հասարակությունների մասին քիչ թե շատ ամբողջական սոցիալ-փիլիսոփայական տեսություն:

Սակայն գիտական գրականության մեջ եղած վերլուծություններն ու մեկնաբանությունները, իրենց տարրեր մոտեցումներով ու քնորոշումներով հանդերձ, հնարավորություն են տալիս որոշակի ընդհանուր պատկերացում կազմելու անցումային հասարակության մասին:

Հասարակության զարգացման ընթացքում և հենց այդ զարգացումների ու փոփոխությունների շնորհիվ, նրանում ձևվում, ձևավորվում են նոր տարրեր, հատկանիշներ, փոփոխարարությունների ու կապերի նոր սկզբունքներ: Զանի դեռ հասարակական կյանքում տեղի ունեցող ներհամակարգային աստիճանական փոփոխությունները տեղավորվում են գործող համակարգի շրջանակներում, չեն առձակատվում հաստատված ու գործող հասարակական հարաբերություններին և չեն ձգտում արմատապես փոխել դրանք, այդքան ժամանակ սոցիալական համակարգը պահպանում է իր ներքին հավասարակշռությունը և շարունակում է իր գործառույթները, երբեմն որոշակի փոփոխություններ մտցնելով տարրերի գործառույթներում:

Հասարակության հեռագա զարգացման որոշակի աստիճանում փոփոխությունները կուտակվելով, ինչ որ պահի հատում են սոցիալական համակարգի հավասարակշռության սահմանները և հասարակությունը կանգնում է արմատական, համակարգային փոփոխության անհրաժեշտության առջև: Ներկայումս հասարակության կյանքում առկա խոշորամասշտաբ իրավա-քաղաքական և սոցիալ-տնտեսական տեղաշարժերն ու զարգացումները, որոնք ենթադրում են հասարակության կյանքի բոլոր ոլորտների, ենթահամակարգերի, ինստիտուտների ու կառույցների վերջին հաշվով քաղաքա-

կան, տնտեսական, սոցիալական համակարգերի արմատական փոփոխություններ, մեզ թույլ են տալիս ժամանակաշրջանը բնորոշել որպես անցումային փուլ:

Այն է, թե, քանի դեռ հասարակության մեջ տեղի են ունենում ներհամակարգային, էկոլոցիոն փոփոխություններ, որոնք կարող են և փոխել սոցիալական համակարգի որոշակի տարրերի գործառնության բնույթն ու սկզբունքները, սակայն այդ փոփոխությունները չեն վտանգում սոցիալական համակարգի հավասարակշռությանն ու կայունությանը և սոցիալական համակարգը գործառնում է որպես կայուն, ամբողջական համակարգ, այն չի կարելի դիտել որպես անցումային հասարակության:

Նման մոտեցմամբ կարելի է տարբերակել հասարակության զարգացման երկու հիմնական տեսլեսներ.

ա) էկոլոցիոն, աստիճանական ներհամակարգային փոփոխություններ, ինչը տեղի է ունենում մշտապես, որպես բնապատմական պրոցես և բնորոշ է հասարակության զարգացման բոլոր աստիճաններին:

բ) արմատական, համակարգային փոփոխություններ, որոնք տեղի են ունենում հասարակության զարգացման միայն որոշակի աստիճանում և ունեն ջարդաբարձրության մի որոշակի փուլ բնութագրելու նշանակություն:

Որքան էլ կայուն լինի համակարգը, միևնույն է հասարակության զարգացման ընթացքում միշտ էլ անհրաժեշտություն է ծագում համակարգի որոշ տարրերի բարեփոխումների, թարմացման, նորի ներդրման: Այդպիսի ներհամակարգային փոփոխությունները ընդունված է անվանել ռեֆորմներ, որոնց իրականացումը կարելի է դիտել որպես հասարակության կողմից առաջադրված սոցիալական պատվեր հասարակական այն կամ այն պահանջմունք բավարարելու և հասարակության բնական զարգացումը ապահովելու համար: Ուստի ռեֆորմները հիմնականում վերաբերում են ներհամակարգային փոփոխություններին և ենթադրում են սոցիալական համակարգի որոշակի տարրերի մասնակի բարեփոխումներ, նպատակ ունենալով հասարակության առանձին կառույցների կատարելագործման, փոփոխման կամ բարեփոխման ճանապարհով ապահովել սոցիալական համակարգի ամբողջականությունը, հավասարակշռությունն ու կայուն զարգացումը:

Սակայն զարգացման մի որոշակի աստիճանում հասարակության սոցիալական համակարգը հայտնվում է այնպիսի վիճակում, երբ նրա տարրերի, կառույցների մասնակի բարեփոխումները այլևս չեն բավարարում հասարակության սոցիալական պահանջմունքները, չեն ապահովում սոցիալական համակարգի ամբողջականությունը, հավասարակշռությունն ու կայունությունը: Այդ զարգացումների հետևանքով հասարակության մեջ հասունանում է սոցիալական համակարգը արմատապես փոխելու անհրաժեշտությունը: Հասարակության մեջ սկսվում է նախորդ համակարգային տարրերը նոր տարրերով փոխարինելու գործառնությունների իրականացումը և հասարակությունը թեև կոխում է անցումային փուլ:

Այդպիսով հասարակության անցումային փուլ ասելով, հասկանում ենք

որոշակի ժամանակահատվածում հասարակության մեջ իրականացվող այն գործընթացների ամբողջությունը, որի ընթացքում տեղի են ունենում Գաղափարա-քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյա-հոգեբանական, հոգևոր-մշակութային ու կառուցվածքային այնպիսի արմատական փոփոխություններ, որոնք շնորհիվ սոցիալական համակարգը կորցնում է իր նախորդ որակական որոշակիությունը, իր կենսունակությունն ու ամբողջականությունը, սկիզբ դնելով սոցիալական նոր համակարգի տարրերի ձևավորման, որի ավարտից հետո ձևավորված նոր համակարգը ձեռք է բերում ինքնուրույն գոյության ու վերարտադրության, զարգացման ու գործառնության նոր իրմունքներ: Այլ կերպ ասած անցումային փուլը սկսվում է նոր համակարգային տարրերի ձևավորումից և ավարտվում է սոցիալական նոր համակարգի հաստատմամբ:

Անցումային փուլի տևողությունը պայմանավորված է մի շարք առարկայական (օբյեկտիվ) և ենթակայական (սուբյեկտիվ) գործոններով:

Ջանի որ խոսքը վերաբերում է քաղաքական և պետական համակարգի, հասարակության տնտեսական հիմքի, ֆինանսա-բանկային հարաբերությունների, բարոյա-հոգեբանական սկզբունքների և դրանց համապատասխանող սահմանադրական նորմերի ձևակերպման ու իրավական համակարգի արմատական փոփոխություններին, ապա հասկանալի է, որ այդ արմատական փոփոխությունների իրականացման ժամանակ որոշիչ ազդեցություն են ունենում այնպիսի գործոններ, ինչպիսիք են հասարակության զարգացման աստիճանը, հասարակության ռեսուրսները, քաղաքական ուժերի առկայությունն ու գործունեության սկզբունքները, քաղաքացիների գիտակցության մակարդակը, հասարակության մեջ հաստատված ավանդույթներն ու սովորույթները և էլի թագում այլ գործոններ:

Այդ պատճառով էլ անցումային փուլի տևողությունը տարբեր հասարակություններում կարող է տարբեր լինել, իսկ երբեմն էլ ձգձգվելով կարող է մնալ անավարտ, սկիզբ դնելով նոր անցումային փուլի, ինչպես եղավ հորիդային միությունում ու Եվրոպայի մի շարք սոցիալիստական երկրներում, որտեղ այդպես էլ չկայացավ կոմունիստական սկզբունքներով սոցիալական համակարգը:

Որքան զարգացման ցածր աստիճանում է գտնվում հասարակությունը, այնքան փոքր են նրա այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են անցումային փուլի խնդիրները իրականացնելու համար և, բնականաբար, այդ խնդիրների հարկանացումը ավելի երկար ժամանակ է պահանջում: Եվ միանգամայն իրավացի է պրոֆ. Է Զարուբյուկյանը, նշելով անցումային հասարակության համակարգային նոր հիմունքները սահմանադրական նորմեր են և ավելի արագ են ընդունվում, քան այդ հիմունքների կենսագործումը* (1.4) և հորհուրդ է տալիս անցումային հասարակությանը դիտարկել երկու տեսանկյունից՝ իրավական և գործնական: Ձանգի նախատեսվելիք արմատական փոփոխությունների հիմքերը շատ արագ կարող են օրենսդրական ձևակերպում ստանալ, ինչի համար հասարակությունից մեծ ռեսուրսներ չի պահան-

ջում. Ասկայն դրանց իրագործումը կարող է ձգձգվել, եթե հասարակությունը չունի համապատասխան ռեսուրսներ, ասել է թե պատրաստ չէ դրանց գործնական իրագործման:

Անցումային փուլի հիմնախնդիրների իրականացումը մեծապես կախված է նաև այն հասցամակերից, թե՞ հասարակությունը իր քնական զարգացման շնորհիվ է օբյեկտիվորեն կանգնել արմատական փոփոխությունների անհրաժեշտության առջև (եվրոպայում Ֆեոդալիզմից բուրժուական հարաբերություններին անցումը), թե՞ սոցիալական նոր համակարգին անցումը նրան այս կամ այն կերպ պարտադրվել է (Ռուսաստանի 1917թ. հեղափոխությունը, ԽՍՀՄ փլուզումից հետո նոր անկախ պետությունների ամբողջատիրությունից ժողովրդավարության անցումը):

Ռուսումապիտանությունները ցույց են տալիս, որ, երբ հասարակությունը իր քնական զարգացման շնորհիվ է կանգնել համակարգային փոփոխությունների անհրաժեշտության առջև, ապա այս դեպքում հասարակության ընդերքում արդեն հասունացել են սոցիալական համակարգի արմատական փոփոխությունների գործունեական հիմունքները և այս պարագայում այդ փոփոխությունները դառնում են հասարակության ճնշող մեծամասնության համար գիտակցված պահանջումը: Հասարակությունը ներքևապես պատրաստ է այդ փոփոխություններին և գիտի ի՞նչ է ուզում փոխել ինչու՞՝ ուզում փոխել և ինչպե՞ս փոխել: Անցումային փուլ մտած նման հասարակությունում համակարգային փոփոխությունները կարող են իրագործվել շատ ավելի արագ ու արդյունավետ, չնչին կորուստներով և համեմատաբար կարճ ժամանակահատվածում: Եվ ցանի որ, այս պարագայում անցումային փուլի հիմնախնդիրների իրականացման գործունեական հիմունքներ առկա են, ապա այս դեպքում անցումային փուլի առաջնահերթ խնդիրն է դառնում սահմանադրական նորմերի ձևակերպումն ու համապատասխան իրավական դաշտի ստեղծումը:

Եվ, որ շատ կարևոր է, այս դեպքում հասարակության ճնշող մեծամասնությունը շահագրգիռ, գիտակից և ակտիվ մասնակցում է իրագործվող փոփոխություններին դրանց դիտելով որպես իր սոցիալական պահանջմունքների բավարարման (ավագույն միջոց):

Սիանգամայն այլ իրավիճակում է հայտնվում այն հասարակությունը, որին համակարգային փոփոխությունները պարտադրում են, կամ ինքը պարտադրված, ստիպված է կանգնել համակարգային փոփոխությունների անհրաժեշտության առջև որը դեռևս չի հասունացել և ընդունակ չէ արմատական փոփոխությունների, ներքևապես պատրաստ չէ նոր սոցիալական համակարգի անցնելուն, ներդրվող նոր արժեքների, հարաբերությունների, գործառնության սկզբունքների նկատմամբ չի ձևավորվել հասարակական պահանջումը: Այս դեպքում հասարակությունը հայտնվում է իրեն համար անսովոր, անհայտ հարաբերությունների տիրույթում, ելք է փնտրում դուրս գալու ստեղծված ջրասից, այդ դեգերումների ճանապարհին թույլ տալով բազում սխալներ՝ կրելով մեծ կորուստներ:

Անձանոթ լինելով իրեն առաջարկվող նոր արժեքներին, հարաբերություններին, նորմերին ու սկզբունքներին, բնական է, որ հասարակությունը այդ նոր արժեքների նկատմամբ պահանջումն ունենալ չի կարող, նույնիսկ, եթե առաջարկվող նորը իր քնակթով չափազանց առաջադիմական լինի: Ուստի մինչև դրանց քնակթին ծանոթանալը, գործնական կյանքում դրանց հետ առնչվելն ու օգտակարության մեջ հավաստիանալը, հասարակությունը կանկամանքով, թե՞րահավատությամբ է վերաբերվում դրանց, անտարբերություն է դրսևորում կատարվող փոփոխությունների նկատմամբ, հետևաբար և, ակտիվորեն չի մասնակցում, կամ ձևական մասնակցություն է ունենում հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին, քաղաքական զարգացումներին և իրադարձություններին: Այդպիսի մոտեցման և վերաբերմունքի արդյունքում նոր առաջարկվող արժեքների, սկզբունքների ու նորմերի խեղաթյուրման, աղավաղման, կիսատ-պղտատության, ձևականության հնարավորությունը մեծանում է, երբեմն դառնալով անխուսափելի: Դրա հետևանքով հասարակության մեջ ծնվում են բազում հակահասարակական երևույթներ, անօրինականություններ, հասարակական տարաբնույթ հիվանդություններ (հովանավորություն, կաշառակերության աննախադեպ աճ, կլանային շահերով կողմնորոշված իշխանություն, զանգվածային ընտրակեղծիքներ և այլն), որոնցից հասարակությունը երկար ժամանակ չի կարողանում ձերբազատվել:

Ասկայն անցումային փուլ մտած այդպիսի հասարակությունում համակարգային փոփոխությունների արդյունավետությունը կարող է ուղղակիորեն կախված լինել նաև այն քաղաքական ուժերից, որոնց իշխանության գալով իրենց վրա են վերցնում անցումային փուլի հիմնախնդիրների իրականացումը: Ասել է, թե, այս դեպքում առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում սուբեկտիվ գործոնը:

Եթե իշխանության են գալիս այնպիսի ուժեր, որոնց հասարակության ներքում ձևավորվելով որպես նրա հիմնական մասի շահերի արտահայտիչ, մտահոգված են նրա զարգացմամբ, ունեն ազգային-պետական հիմնախնդիրներ լուծելու շուրջ հասարակության մեծամասնությանը համախմբելու կազմակերպչական ընդունակություն, ապա այս դեպքում հասարակությունը կարող է խուսափել սուր ճգնաժամներից, քայքայումից ու հետընթացից և ապահովել իր հետագա կայուն զարգացումը:

Իշխանության եկած այդպիսի քաղաքական ուժերը մշակելով անցումային փուլի հիմնախնդիրների իրականացման համար անհրաժեշտ ազգային ծրագիր, հասարակության հիմնական ուժերն ու հնարավորությունները համախմբելով և նպատակամղելով այդ ծրագրի իրականացմանը, ավելի դյուրին են հաղթահարում անցումային փուլի դժվարությունները, նվազագույնի հասցնելով սոցիալական կորուստներն ու հակահասարակական դրսևորումները: Դեռևս է նկատել, որ այս դեպքում բացառված չեն բռնություններն ու պարտադրանքը, եթե հասարակությանը նոր արժեքների, հա-

րաբերությունների, սկզբունքների, նորմերի և օրենքների պարտադրումը կարելի է բռնություն համարել:

Քանն այն է, որ հասարակության մեջ ամեն մի նորի ներդրում միշտ էլ դիմադրության է հանդիպում: Ծավալա-բովանդակային առումով որքան նշանակալից են նոր ներդրվող արժեքները և որքան հասարակությունը անծանոթ է նոր արժեքներին, այնքան մեծ կարող է լինել նաև դիմադրությունը, հետևաբար, այդքան էլ մեծանում է պարտադրանքի գործոնի դերը: Այստեղ խոսքը վերաբերում է հասարակության մեջ օրինակականության հաստատմանը միտված օրենքի շրջանակներում իրագործվող պարտադրանքին, այլ ոչ թե իշխանությունների դրսևորված կամայականություններին:

Այլ է վիճակը անցումային փուլ մտած այն հասարակությունում, որտեղ իշխանության են գալիս կլանային, խմբային շահեր հետապնդող ապագային ուժեր, կամ հզորների կողմից իշխանության են բերվում դրածո ուժեր, պարտադրելով այդ ուժերին իրենց նպատակներն ու ծրագրերը: Այս դեպքում հասարակության մեջ կատարվող փոփոխությունները չեն բխում և չեն արտահայտում հասարակության ճնշող մեծամասնության շահերը, դրանք հարմարեցված են իշխանախմբերի շահերին ու ցանկություններին և հասարակությանն է պարտադրվում կլանային շահերով իշխանությունների կամայականությունները:

Այս պարագայում, արդեն, անցումային փուլը կարող է քավականին երկար ձգձգվել, քանզի իշխանությունը վերցրած ուժերը շահագրգռված չեն այն արմատական փոփոխությունների իրականացմամբ, որոնք ենթադրում են ազգային կամ հասարակության մեծամասնության շահերի պաշտպանություն և իրականացնում են միայն իրենց շահերին ու նպատակներին համապատասխանող փոփոխություններ, ինչի հետևանքով հասարակության հետընթացն ու քայքայումը, իշխանության և ընդդիմության միջև հակասությունների սրումն ու առճակատումը, անօրինականությունների և հանցագործությունների աճը, իսկ վերջին հաշվով հասարակական կյանքի ապակայունությունը, դառնում է անխուսափելի: Այդ ընթացքում հակահասարակական երևույթներն ու դրսևորումները այնքան են խորանում և ամրագրվում մարդկանց գիտակցության ու վարքի մեջ, որ կարող են դառնալ նրանց գոյության և ապրելակերպի անխզելի մասը, ինչից ձեռքազատվելու համար հասարակությունից կարող է մի քանի սերունդների ակտիվ ջանքեր պահանջվել:

2. Անցումային հասարակության հիմնախնդիրները

Նպատակ ունենալով արմատապես վերափոխել ամբողջ հասարակական կյանքը, անցումային փուլ մտած հասարակությունը կանգնում է մի շարք քարոզ ու դժվարին խնդիրների իրականացման անհրաժեշտության առջև: Դրանք առնվում են պետական կարգի և կառավարման համակարգի, քաղաքական համակարգի, հասարակության տնտեսական հիմքի, սեփականատիրական հարաբերությունների, ֆինանսա-բանկային համակարգերի

արմատական վերափոխումներին և դրանց համապատասխան սահմանադրական նորմերի ձևակերպումներին և իրավական դաշտի ստեղծմանը:

Որպեսզի հասարակությունը, իսկ ավելի ճիշտ հասարակության կազմավերված էլիտար փոքրամասնությունը, կարողանա իրականացնել հասարակական կյանքի արմատական վերափոխումների խնդիրը, նա պետք է ճշտի նրա իրականացման գաղափարա-քաղաքական, տեխնիկական ու արժեքային միջոցները, ճիշտ գնահատի հասարակության հնարավորություններն ու ռեսուրսները: Ուստի անհրաժեշտություն է դառնում մեկ անգամ ևս վերազնախառել նախորդ համակարգի սոցիալ-տնտեսական, գաղափարա-քաղաքական վիճակը, ճշտել հասարակության առաջընթացին խուլընդոտող հիմնական գործոնները, հստակեցնել արմատական փոփոխությունների տրամաբանական հերթականությունը և այդ հիմքի վրա տեսականորեն հիմնավորել համակարգային փոփոխությունների իրատեսական լինելն ու անհրաժեշտությունը: Անցումային փուլում համակարգային արմատական փոփոխությունները պետք է համապատասխանեն այս կամ այն հասարակության, ժողովրդի ազգի, երկրի առանձնահատկություններին, կոնկրետ պատմական պայմաններին, զարգացման աստիճանին, ազգային շահերին և այլն: Միայն այս դեպքում է հնարավոր ակնհայել իրական արդյունք խուսափել սուր ճգնաժամերից և ապահովել հասարակության հարաբերականորեն կայուն զարգացումը:

Այնպիսի մտտեցումը հնարավորություն կտա ավելի արդյունավետ օգտագործել հասարակության ներքին հնարավորություններն ու ռեսուրսները, արմատական փոփոխությունների խնդրին ծառայեցնել նախորդ համակարգի կենսունակ տարրերը, առաջնորդվելով ոչ թե ամեն ինչ քանդել ու նորը կառուցելու, այլ ինչը կենսունակ է պահել և փոխել միայն այն, ինչը չի համապատասխանում զարգացմանը, սկզբունքով՝ նախորդ սոցիալական համակարգում կարող են լինել այնպիսի կառույցներ, ինստիտուտներ, հարաբերություններ կամ դրանց ենթահամակարգային տարրեր, որոնց ոչ միայն չի կարելի ոչնչացնել, այլև պետք է, քոլոր հնարավոր պայմանները ստեղծել դրանց հետագա զարգացման համար:

Որքան հասարակությունը ամբողջական ու հստակ է պատկերացնում իր անելիքները և որքան համոզված է իր գործունեության ճշմարտացիության մեջ, այնքան անցումային փուլի խնդիրների իրականացումը արդյունավետ է լինում: Հարկ ենք համարում նշել, որ անցումային փուլի բոլոր խնդիրներն էլ իրենց նշանակությամբ կարևոր են և այդ տեսանկյունից երկրորդական խնդիրներ չկան, քանզի դրանք իրար հետ շաղկապված, փոխկապակցված, իրար ենթադրող ու փոխազդեցության մեջ մտած ամբողջական շղթայի անհրաժեշտ օղակներ են:

Սակայն անցումային փուլի շատ խնդիրների իրականացման հնարավորությունը ուղղակիորեն կախված է լինում այնպիսի գործընթացների իրականացումից, որոնց արդյունքում ձևավորված համակարգաստեղծ կառույցներն ու համակարգերը, անցումային փուլի շատ խնդիրների իրականացման

անհրաժեշտ նախադրյալներն են: Հենց այդպիսի խնդիրներն էլ մենք անվա-
նում ենք անցումային փուլի հիմնախնդիրներ
Վրանք են.

1. Հասարակության քաղաքական համակարգի ձևավորումը.
2. Պետական կարգի և կառավարման համակարգի փոփոխությունը, կամ
նորի ստեղծումը.
3. Աստիճանադրական նորմերի ձևակերպումն ու օրենսդրական համակարգի
ստեղծումը.
4. Հասարակության տնտեսական հիմքի փոփոխությունը.
5. Հասարակության սոցիալ-մշակութային կյանքի վերափոխումը.

Եշենք նաև, որ այս հիմնարար խնդիրներն էլ են իրար հետ սերտորեն
փոխկապակցված և հաստեղ լուծում են պահանջում:

Անցումային փուլում իրականացվող արմատական փոփոխությունները
նախ և առաջ քաղաքական ծրագրերի և որոշումների արդյունք են: Արդի չը-
ջանի անցումային փուլի առանձնահատկությունն այն է, որ նրա առավել
բնորոշ գիծը ոչ այնքան սոցիալ-տնտեսական խնդիրներն են, որքան իրակա-
նացվող գործընթացներին որոշակի ուղղվածություն տալու համար քաղա-
քական պայքարը: Դա նշանակում է, որ անցումային հասարակությունում
ցանկացած խնդրի լուծում՝ տնտեսականն առավել ևս, քաղաքականացված
է, ենթարկված են քաղաքական ուժերի կամքին, որոշումներին ու մոտեցում-
ներին: Այդ իսկ պատճառով անցումային հասարակությունում առաջնահերթ
խնդիր է դառնում հասարակության քաղաքական համակարգի ձևավորումը,
քանզի հենց նրան է պատկանում քաղաքական որոշումներ ընդունելու և
դրանք իրականացնելու գործառույթները: Հետևաբար, անցումային փուլի
խնդիրների իրականացման հնարավորությունը ուղղակիորեն կախված է
քաղաքական համակարգի ձևավորման ու կայացման աստիճանից:

Քաղաքական համակարգի վերլուծությունը տրված է դասագրքի առան-
ձին բաժնում, ուստի և կանգ չենք առնում նրա մանրամասն մեկնաբանու-
թյան վրա: Անկայն մեկ անգամ ևս ցանկանում ենք նշել, որ քաղաքական
համակարգը լինելով պետական, քաղաքական ինստիտուտների, հարաբե-
րությունների, հասարակական քաղաքական կազմակերպությունների, սո-
ցիալական տարբեր միավորումների ու կառույցների կանոնակարգված
ամբողջություն վճռորոշ դեր է խաղում անցումային փուլի խնդիրների իրա-
կանացման գործում, զանազակ անցումային փուլի խնդիրները լուծման և՛
իրավասուն, և՛ պատասխանատուն:

Անսածից չի հետևում, որ անցումային փուլում պետք է քաղաքական հա-
մակարգը լրիվ ձևավորվի ու հաստատվի նոր միայն լուծվեն մտացած
խնդիրները: Խոսքը վերաբերում է նրան, որ անցումային հասարակությու-
նում պետական ու քաղաքական ինստիտուտները, կառույցներն ու հաստա-
տությունները, հարաբերություններն ու սահմանադրական նորմերը, լինելով
քաղաքական համակարգի անհրաժեշտ բաղադրիչներ, կարող են ձևավոր-
վել ու կայանալ միայն այնքանով, որքանով որ ձևավորված ու կայացած է

քաղաքական համակարգը: Անկայն մյուս կողմից էլ, որքանով որ հենց նշ-
ված կառույցներն ու հարաբերություններն են քաղաքական համակարգը՝
ամբողջացնող անհրաժեշտ բաղադրիչներ, ուստի կարելի է պնդել, որ քաղա-
քական համակարգի կայացման աստիճանն էլ իր հերթին ուղղակիորեն
կախված է այդ տարրերի ձևավորման աստիճանից:

Ուստի, սխալված չենք լինի ասելով, որ հասարակության անցումային
փուլը սկսվում է հասարակության քաղաքական համակարգի տարրերի,
առաջին հերթին պետության, որպես նրա հիմնական միջուկի, ձևավորումից
և ավարտվում է հասարակական կյանքում նրա, որպես ամբողջական հա-
մակարգի կայացմամբ ու հաստատմամբ:

Հասարակության քաղաքական համակարգի տարրերի ձևավորումը
պետք է ուղեկցվի համապատասխան սահմանադրական նորմերի ձևակեր-
պումով, քանզի համակարգային տարրերը կարող են ձևավորվել ու
կայանալ միայն այնքանով, որքանով ձևակերպվել ու կայացել են նրանց
օրենսդրական, սահմանադրական հիմքերը: Իսկ թե որքանով են սահմա-
նադրական նորմերի ձևակերպումները դառնում իրականացվելից արմատա-
կան փոփոխությունների երաշխիք, կախված է քաղաքական համակարգի
միջուկը հանդիսացել պետության կայացման աստիճանից: Լինելով քաղա-
քական համակարգի առանձնահատուկ բաղադրիչ, պետությունը, մինևույն
ժամանակ, օրենքներ ընդունելու և հասարակական կյանքում դրանք գոր-
ծադրելու միակ իրավասուն է: Այդ պատճառով էլ հասարակական կյանքում
արմատական վերափոխումների արդյունավետությունը ուղղակիորեն կախ-
ված է լինում պետության կողմից համապատասխան օրենքների ընդու-
նումից, հասարակական կյանքում դրանց իրագործումից և դրանց կատար-
ման վրա իրական վերահսկողությունից:

Հասարակական կյանքում իրականացվող վերափոխումները հիմնակա-
նում օրենքով նախատեսված և պետականորեն կազմակերպված գործըն-
թացներ են: Պարզ է, որ դրանց իրականացման հնարավորությունը մեծա-
պես կախված է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների կա-
յացման աստիճանից ու գործունեությունից, որոնք պետության կողմից լիա-
զորված են իրականացնելու հասարակական կյանքի արմատական վերա-
փոխումները: Եշենք, որ հասարակական կյանքի արմատական վերափո-
խումները մենք դիտում ենք որպես պետության կողմից ընդունված օրենքնե-
րը, նորմերը և որոշումները հասարակական կյանքում մարմնավորելու գործ-
ընթաց:

Հետևաբար, կարելի է ասել, որ պետության կայացման աստիճանը պայ-
մանավորված է նրա հիմնական բաղադրիչների՝ օրենսդիր, գործադիր և դա-
տական իշխանությունների ձևավորման ու կայացման աստիճանից: Որքա-
նով օրենսդիր իշխանությանը հասարակական կյանքի վերափոխմանն ու
առաջընթացին նպաստող օրենքներ է ընդունում, ինչքանով այդ օրենքները
գործադիր իշխանությունների կողմից իրականացվում են կյանքում և որքա-
նով դատական իշխանությունները իրական վերահսկողություն են իրա-

կառավարող ընտանյան օրենքներն պարտման կրա, ուղղակի էլ միայն իրականացնում հասարակական կյանքը արմատական վերափոխումները և հենց այդ շահով էլ կպոռոպրունն է իրականացնում որ որսնական գործառնությունը:

Չարացման տարբեր աստիճաններով և տարբեր հնարավորություններով անցումային փուլ մուտք հասարակություններում կարող են տարբեր լինել և՛ իրապանացվելիք խնդիրները, և՛ դրանք լուծման հնարավորությունները: Միակամայն տարբեր ապմաններում և տարբեր խնդիրներ իրասանացման առջև են կանգնում այն հասարակությունները, որտեղ մեծ անցումային փուլ մտնելուց առաջ ունեցել է կայացած պետականություն, քաղաքական համակարգ, սեփական տնտեսական, ֆինանսաքանկային համակարգեր, իսկ մյուսը անկախություն ձեռք բերելով կանգնած է պետականության կայացման, քաղաքական և տնտեսական համակարգերի ձևավորման անխառնշուռության փաստի առջև:

Մտացին դեպքում հասարակությունը գնտի ինչ է ուզում փոխել, քանզո ձգտում է փոխել այն, ինչը իրեն աղոթն չի բավարարում, գոխում է կանգնվ, ինչը իր համար ընդունելի է: Զայն որ հասարակությունը որ քնական զարգացման շնորհիվ է կանգնել արմատական փոխոխությունների անիրաձեշտության առջև, ազա նրա ներսում աստիճանաբար ճշտվում ու ձևավորվում են նաև արմատական փոփոխությունների իրականացման մեթոանդմները: Այն է, թե հասարակության, իսկ անելի ճիշտ արմատական վերափոխումներ իրականացնող սպեկտրների կողմից լուծված է նաև ինչպես փոխելու հարցը:

Ենթորդ դեպքում խնդիրը մերաձերում է ոչ միայն, և ոչ անքան վերափոխելուն կամ քարեփոխմանը: Վատեղ խնդիրը նորի, նախապես հասարակության մեջ շղած արժեքների առողծումն է, որը շատ ավելի քարդ ու դովար և մեծ ջանքեր ու նպատակամղվածության աստիճանով խնդիր է:

Բիարպե, պետափոխված, քարեփոխված արժեքներն էլ են նոր արժեքներ: Առաջին հասարակությունը ծանոթ լինելով այդ արժեքների նախատիպին, ձգտում է մոխել դրանց այն կողմերն ու ուսույանիչները, որոնք պետական լեն լեն համապատասխանում հասարակության զարգացման քնապքին, կորացնելով, նոր իմաստ ու քույակդակություն հաղորդելով նախորդ արժեքային համակարգին:

Երկրորդ դեպքում անցումային հասարակությունը պարտադրյաձ է նոր, իրեն անտանող արժեքներ ստեղծել և իրանծում է իրեն իրենա անհույս ու խորթ հարաձերությունների տիրություն, ձնչն էլ անցումային փուլ մուտք հասարակության համար լուսուցիլ: դժկարություններ է հարուցում: Այս պատճառով համակարգային փոփոխությունելի պարող են ընթանակ սոցիալական տարրեր անհատկապի ձևավորման ձանապարհով, պահի աղոցնություն մակ իրապային որոշումներ ընտրելով, ինչի հետևանքում ձևավորված նոր արժեքներ շատ հաձախ լինում են ձերի, կիսատպուստ,

հասարակության ոչ քոչրի շերտերին բավարարող, իսկ նրենն էլ հասարակության զարգացմանն ու անացքնացին ուղղակի հասանցուզված:

Անցումային հասարակության առացնաների խնդիրներից է նաև հասարակության տնտեսական հիմքի ձևավորման հարցը: Առաջին ես, երբ խոսքը վերաձերում է ամբողջատիրությունից օտոլվողամարտական, կենտրոնացված պլանային տնտեսությունից-չույակային հարաձերություններն անցումուն:

Ամբողջատիրության կայմաններում ապրած, մասնապես սիվականատեր լինելու իրավունցից զրկված և շուկայական հարաձերություններին անծանոթ մարդը հայտնվում է իրեն խորթ հարաձերությունների ուղատում և քնականարար ոչ միչև է ձիշտ կողմորոշվում ու գործատում: Երբ մտածողությունն ու հոռեանությունը, արժեքային ու զարգապատական կողմորոշուլը ձերաբալատված ընելելու ամբողջատիրական հարաձերությունների աղոցնությունից ըստնան լեն միակամից ուրմարվելու նոր պայմաններին կողմնելում, մասնակող սսիվականությունը ընկալվում է որպես անծանական սեմանակություն, ունեցվածք, որի հետ մարդը նարող է վարել ըստ իր ցանկության, իսկ շուկայական հարաձերությունները սույնացվում են անտիրային հարաձերություններին՝ բազալի հետ:

Հասարակության տնտեսական հիմքի ձևավորման կարևորագույն խնդիրներից է սեվականության, ազապետականացման և սեվականացնորման իրականացումը և դրան համապատասխան ասիմանադրական կողմերի օրենկորական համակարգի և որովային դաշտի ստեղծումը: Իրան կազմակերպված, ձիշտ հաշվարկված, օրենց ու սողարանքի է իրանա նացնում սեվականացնորման քաղաքապանությունը, այնքան հայարանության տնտեսական հիմքի ձևավորման հնարավորությունները մեծ են, գոյուստները՝ փոքր, իսկ պողունափետրակուկը աննատ: Հակառակ դեպքում հասարակության հեղոնթանը տնտեսության փոշիացումն ու քաղաքայնք դառնում են անուսաբարելի, ինչը տերի ունեցավ կՄԲԼ-ի նախկին հանրապետություններում, նրանք անկանխություն ձեռք բերելուց թեստ:

Անցումային փուլին ներքնաաետ անպատրաստ հասարակությունները սովորաաոր վերելում են այլ ժոտների պետական կազմի ու կատակարման համակարգի, քաղաքական համայնտոի, ստոմանադրական կրոքերի, տնտեսական հիմքի պատրաստի մողելները և ձգտում են դրանք տեղայնացնել: Այս դեպքում նեցավին անանծանաատությունները, ավանդույններն ու սովորույթները, հասարակության զարգացման մեկարդակն ու հնարավորությունները, հասարակության գիտացության աստիճանը և այլն, լույս տարրեր ընելով, ըսողոխապվող երկրից, հնարավորություն չեն ապրու այդ մողելները նույնությամբ կրաաել: հասարակության մեջ և դրանց աղապարունը, ձանոնորումը, փաստապատությունը դառնում է անխուսալիելի, ինչը իր քաղմանաան ոտանանքներն է թողնում անցումային փուլի խնդիրների իրականացման վրա:

Համակարգային փոփոխություններ իրականացնող անցումային հասարակությունում, սոցիալաբար, հասարակության այն խավերը ակտիվ ընդամասցում ու աջակցում այդ խելյունների իրականացման գործընթացներին: Այս պարագայում մեծ նշանակություն է ձեռք բերում հասարակության կողմակերպման փոքրամասնության որսն հասարակական կյանքի նորացման անհրաժեշտության հիմնավորողի և իրականացնողի, լքադարական ուսն, նուսանցություններ և այլն) գործունեության սնգրիկները, նրա անաբարևած գաղափարներն ու ծրագրերը, հասարակությանը այդ ծրագրերի շուրջ համախմբելու ընդունակությունը, հասարակությանը նոր ներդրող արժեքների ինասուն ու րոյանդակությունը մատչելի դասնները, և որսնց իրականացման անհրաժեշտության հիմնավորումը:

Անցումային հասարակության կարևորագույն խնդիրներից է նաև հասարակության ղեգանակակ համեղաշխուգթյան և համախմբվածության ստարտովումը:

Անցումային փուլի խելիքները իրար քաղաքանասնացված են, իսկ որոշ դեգաբերում նաև խիստ կուսասցրակասնացված են և լքա համակարգային փոփոխությունների ազգային-անեղական միասնական ծրագիր: Բանի որ մարդկանց սոցիալական շահերին անելիլոր արմաստպան փոփոխությունները անխուսաճնեխ են դառնում ներհամակարգային հասարակությունները ու կոնֆլիկտները, ապա խելիք է դառնում եղազատույնի հասցնել սոցիալական կոուսասների գրնց, նրա նաաբացրած սոցիալ-սնեղասական, քաույա-կոնքեթասական և իրազ-քաղազնական քաջասական հեղունակները և իրասանել սուղ ճգնաժամերից: Հասարակ դեգաբում, ինչ որ վուլից սկսած արմատական փոփոխությունների ձգձգումը, նիսատ-արատ իրականացումը, անարդունակեղությունը հիասքանիցնում է հասարակությանը, սկսում է քազվարարել նրա մեծ սաաի սահմանքսումներն ու քաղաքացնել նրանց սպասելիքները: Համակարգային փոփոխությունները հասարակության կողմից այլևս չեն ընկալվում նրա կյանքը քաբելազմանս ուղղված գործընթացներ: Այս դեգաբում իշխասսուղությունների նկատմամբ գանցվածային անվասահնությունը, քաղաքական ուժերի՝ ոսուղապես ընդդիմության և իշխանության, մոնել ոսասությունների սղումը, քախուսն ու աննանաղումը դառնում է անխուսափելի նազակուսանում է հասարակության քաղաքային կյանքը, ինչը խղբնողոսում է հասարակության հունահմաբար ճաբությունն ու ազգային-անեղական ծրագրերի իրականացման շուրջ հասարակությանը համախմբելու հնարավորությանը:

3. Ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման ասաննահասակությունները անցումային հասարակությունում

Ժողովրդավարության ուղին րոնած անցումային հասարակության հանկապես, եթե խոսքը վեղարբերում է անեղաափրությունից-ժողովրդակա-

րության անցումին, նարնդատուն խոդրաբերց է ժողովրդավարության ընտոտունների ձևավորման հարցը:

Ժողովրդավարական ինստիտուտները այն անհրաժեշտ հասարակություններն ու կաուուցներն են, որոնց Վիցոլով հազարակական կրանցում ձևավորում, իրականացվում և հաստատվում են ժողովրդավարական նորվյերն ու սնգրուկները:

Անցումային հասարակություններում ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացումը պայմանավորված է նշված ինստիտուտներից և հաստատություններից ձևավորված անբուղական համակաբար կայացման աստիճանով: Հանահաար ընաման կլիներ կարծել, որ ժողովրդավարական նոտներն ու սնգրուկներու, իսկ վերերն ուաչով նաև ժողովրդավարական քաղաքական համակարգի ձևավորումն ու սոցիալական հասակարում նրա հաստատումը մեծապես պայմանավորված է ժողովրդավարական ինստիտուտներն ու կաուուցներից յուսաքանկուրի կայացման աստիճանով:

Ժողովրդավարական հիմնական ինստիտուտները են.

1. Անարությունների ինստիտուտը,
2. Կուսակցություններն ու կուսակցական համակարգերը,
3. Զանգվածային լրատվամիջոցները,
4. Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կաուուցները,
5. Հասարակական միություններն ու պազմակերպությունները,
6. Ընդհանրասոցալարման մարմինները:

Հասկանալի է որ նշված ինստիտուտների ու կաուուցների կայացումը աստիճանավորված է ծրանց գոուության և գործանության ինիեբեր սասանելող սառնանաղրական նորմերի ձևակերպմամբ: Մանայն ոտնց այդ նույն սահմանադրական նոտների ձևակերպումն ու հաստատական կյանքում դրանց իրականացումը, իրենց ոերթին, կաբված են այդ նույն ինստիտուտների կայացման աստիճանից: Սեղ է, թե ոչ միայն սահմանադրությամբ է որոշվում ժողովրդավարական ինստիտուտների գոուության որակնցն ու իրականության շղթանակները: այն այդ ինստիտուտների գործառնթներից է լքախլած, թե ինչպիսի սահմանադրություն կարող է ոսնեղալ հասարակությունը:

Ժողովրդավարության կարևորագույն ասաննահասակությունները և մարդը ձեռից մելլը բուրդ քաղաքացիներու օրերի առնլ քաղաքական կախասարությունն է: Այդ հավասարությունը ասպանիելու համար ժողովրդավարությունը առաջ է ընել «մեկ մարդ - մեկ ձայն» սնգրուկը: Այդ սնգրուկի իրականացումը հնարավոր է միայն այն ձևանակ, եթե հասարակության ժողովրդական ընանիկների հանկող իրական աստիճաններ ու հնարավորություններ են ստեղծվում յուսաքանկուրի նամբը սնգրու գրանորման ինեղ նաև կազու: Այն անհատին սամ քաղաքական ուժին, որոնց վաստահան նաղորում են հասարակական գանելի կուսալարման իրավունքը, կրաչարում է մի այնպիսի քաղաքական հասարակության ստեղծման անհրաժեշ-

տություն, որի հիմնական նպատակն է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում և բոլոր մակարդակներում կազմակերպել և ապահովել «մեկ մարդ-մեկ ձայն» սկզբունքի իրականացումը Այդպիսի հաստատություն է ընտրությունների ինստիտուտը, որը օրենսդրոն պետք է կարգավորի, երաշխավորի և ապահովի բոլոր քաղաքացիների համար հավասար պայմաններ իրենց քաղաքական իրավունքներից օգտվելու և այդ ձևով հասարակության կառավարմանը նրանց մասնակից դառնալու հնարավորությունը:

Ընտրությունների ընթացքում ժողովրդի կամքի ազատ դրսևորման ապահովումը դիտվում է որպես ժողովրդավարական կառավարման ձևի պահպանման անհրաժեշտ պայման: Ուստի կարելի է ասել, որ ժողովրդավարությունը սկիզբ է առնում հենց ընտրությունների ինստիտուտի ձևավորումից, քանզի միայն այդ ճանապարհով է հնարավոր ժողովրդին մասնակից դարձնել իշխանությունների ձևավորման և հասարակության կառավարման գործընթացներին, հասարակության մեջ հաստատել ժողովրդի իշխանությունը և ժողովրդին դիտել որպես իշխանության աղբյուր: Այդ տեսանկյունի ընտրությունների ինստիտուտի ձևավորումն ու կայացումը, նրա իրակա գործառույթները կարելի է դիտել որպես անցումային փուլում ժողովրդավարության կայացման և հաստատման չափանիշներից մեկը: Իսկ, քանի որ ժողովրդավարության և ընտրությունների ինստիտուտի կայացումը փոխկապակցված ու փոխապայմանավորված են, ապա պետք է ընդունել նաև այն, որ ընտրությունների ինստիտուտը, հետևաբար և ազատ ու արդար ընտրությունները, իրենց հերթին կարող են կայանալ միայն այնքանով, որքանով հասարակական կյանքում հաստատվում են ժողովրդավարության սկզբունքներն ու նորմերը: Ընտրությունների ինստիտուտը մի շարք հաստատությունների, կառույցների հարաբերությունների, նորմերի ու սկզբունքների փոխկապակցված բարդ համակարգ է, ինչից ելնելով էլ նրան հաճախ անվանում են ընտրական համակարգ:

Ընտրական համակարգի կարևորագույն քաղադրիչը ընտրությունների մասին օրենքն է, որը կանոնակարգում է նրանում ներառված հաստատությունների գործառնության սկզբունքները, արձանագրում է քաղաքացիների ընտրելու և ընտրվելու իրավունքները, սահմանում է ընտրական գործընթացների վրա հսկողություն իրականացնելու ձևերն ու շրջանակները, արձանագրում է քաղաքական ուժերի ընտրության մասնակցելու նորմերն ու սկզբունքները, որոշվում է նախընտրական շրջանում քաղաքական ուժերին պետական աջակցության ձևերն ու բաժից և այլն: Անկայն այս բոլոր անցումային փուլում մի շարք օրելետիվ և սուբյեկտիվ պատճառներով հարթ և անընկալող արդյունքներով իրականանալ չեն կարող:

Ինչպես արդեն նշվել է վերը, անցումային փուլի առանձնահատկություններից մեկն այն է, որ սահմանադրական նորմերը կարող են շատ արագ ձևակերպվել ու ընդունվել, սակայն գործնական կյանքում իրականացնելիս

դրանք քախվում են բազում խոչընդոտների, չեն իրականացվում կամ թերի են կատարվում:

Ընդօրինակելով զարգացած երկրների փորձը, հնարավոր է ընդունել ընտրությունների մասին կատարյալ օրենքներ, արձանագրել դրանց իրականացման լավագույն մեխանիզմներ, մշակել ընտրական գործընթացների վրա հսկողության լավագույն տարբերակներ և այլն:

Բայց անցումային հասարակությունում դեռևս կենսունակ նախկին ավանդույթներին ու սովորույթները, հարաբերություններն ու նորմերը, բնակչության քաղաքական գիտակցության աստիճանը, քաղաքական ուժերի միջև դեռևս չկարգավորված փոխհարաբերությունները, իշխանության եկած ուժերի գործունեության սկզբունքները և էլի բազում գործոններ նախող են խոչընդոտել և անհնարին դարձնել դրանց գործնական իրականացումը: Դա, արդյունք է այն քանի, որ անցումային հասարակությունը դեռևս պատրաստ չէ, չի հասունացել ժողովրդավարական արժեքների, սկզբունքների ու նորմերի ընդունման և դրանց համապատասխան հարաբերությունների հաստատման համար:

Ամբողջատիրությունից ժողովրդավարության անցման փուլում հասարակությունը հայտնվում է իրեն համար անսովոր վիճակում: Ամբողջատիրության պայմաններում ազատ ընտրություններ, որպես այդպիսիք, լինել չեն կարող: Խորհրդային միության միակուսակցական համակարգի պայմաններում Կոմունիստական կուսակցությունն էր որոշում, թե ով, երբ և որտեղ պետք է ընտրվի: Ընտրարյուկետներում նշվում էր միայն մեկ թեկնածուի անուն, որը պետք է անպայման ընտրվեր: Այսինքն առաջադրված թեկնածուն նախապես արդեն ընտրված էր, իսկ ժողովուրդը իր ձևական մասնակցությամբ ընդամենը վավերացնում էր ընտրությունը, դրանով իսկ իրավունք ընձեռնելով Կոմունիստական կուսակցությանը խոսելու իր անունից: Իրականում ժողովուրդը գրկված էր ընտրելու չառաջադրելու, ընտրվելու, կամ ըն ազատ դրսևորելու և այլն իրավունքից, քանզի ընտրել, նշանակում է առաջադրված երկու և ավելի թեկնածուներից ինչ որ հատկանիշներից, արժանիքներից կամ սկզբունքներից (զաղափար, ծրագիր, հեղինակություն և այլն), ելնելով նախապատվությունը տալ որևէ մեկին, այլ ոչ թե սույն մասնակցել ընտրության գործընթացին:

Այս պարագայում առաջնակարգ նշանակություն է ստանում ընտրազանգվածի ձևավորման հարցը, ինչը սերտորեն կապված է ժողովրդավարական այնպիսի ինստիտուտների կայացման հետ, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունները ու կուսակցական համակարգերը, աննախ զանգվածային լրատվամիջոցները, հասարակական կազմակերպությունները և այլն: Այն, որ անցումային փուլում, հատկապես սկզբնական շրջանում, առաջանում են բազում մեծ ու փոքր կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, տարատեսակ իրարաներո՞ գաղափարներով և անհանդուրժող սկզբունքներով լրատվամիջոցներ, որոնք հիմնականում այս կամ այն քաղաքական ուժի կամ խմբի պատվեր են կատարում, արդյունք է ապագա-

դաժապականացված հասարակության, որի դեպքում հստակ քաղաքական նողմնորոշում ունեցող, գաղափարների և ծրագրերի շուրջ համախմբված մարդկային հանրույթ լինել է կարող:

Այս բոլորը, հասկանալի պատճառներով, չեն նպաստում ընտրազանգվածի ձևավորմանը, ինչն էլ ուղակիորեն ազդում է ժողովրդավարական նորմերի և սկզբունքների ձևավորման ու հաստատման վրա, թեքի ու անկատար դարձնելով դրանք:

Մյուս կողմից, հասարակությունը կարող է և հասունացած ու պատրաստ լինել ժողովրդավարության հաստատմանը, սակայն այս դեպքում էլ, համապատասխան օրենքների բացակայությունը, իրավական դաշտի անկատարությունը և այլն գործոններ կարող են խոչընդոտել հասարակական կյանքում ժողովրդավարական սկզբունքների ներդրմանն ու հաստատմանը: Անցումային փուլում ստեղծված այդպիսի իրավիճակը, շատ հաճախ, իշխանության բարձրագույն մարմինների գործունեության ուսուանքն է, երբ իշխանությունը բյուրոկրատիայի կամ այլ շահադիտական նպատակներ հետապնդելով իշխանության եկած քաղաքական ուժերը գիտակցորեն չեն ընդունում կամ չեն իրականացնում այնպիսի օրենքներ ու որոշումներ, որոնց կիրառմամբ քաղաքացիները կարողանային իրական մասնակցություն ունենալ իշխանությունների ձևավորման և նրանց գործունեության վրա հսկողություն իրականացնելու գործընթացներին: Իսկ այս բոլորի հետևանքով մեծանում է ընտրակեղծիքների, անօրինակահարությունների, հասարակությանը խմբային շահերի պարտադրանքի հնարավորությունները, առաջացնելով՝ քաղաքական ասպակայունություն, սրելով պայքարը ընդդիմության և իշխանության միջև:

Ինչպես նշվեց վերը, ընտրազանգվածի ձևավորման գործում մեծ են կուսակցությունների և զանգվածային լրատվամիջոցների դերը: Կուսակցությունների և զանգվածային լրատվամիջոցների մասին ավելի մանրամասն խոսվում է դասագրքի համապատասխան բաժիններում: Այստեղ նշենք, որ անցումային փուլում կայանում են միայն այն կուսակցությունները, որոնք ակտիվ քաղաքական գործունեությամբ կարողանում են իրենց գաղափարախոսության հիմքի վրա մշակած ծրագրերը հասանելի, մատչելի, համոզիչ ու ընդունելի դարձնել հասարակության որոշակի մասի համար: Կարողանում են համախմբել նրանց այդ ծրագրերի իրագործման շուրջը, ստեղծելով մի կողմից, իրենց սոցիալական բազան, մյուս կողմից՝ ձևավորելով իրենց սեփական ընտրազանգվածը: Այս ճանապարհով անցումային հասարակությունում աստիճանաբար ձևավորվում և կայանում են թե՛ ընտրական գործընթացներին ակտիվ մասնակցող սոցիալական խմբեր ու խավեր, ինչը նույնն է, թե ընտրազանգվածը, և թե՛ իրենց՝ թաղաքական կուսակցությունները: Նշենք, որ անցումային հասարակությունում ընտրազանգվածի ձևավորումն ու կուսակցությունների կայացումը փոխկապակցված, փոխալայմանավորված, իրար ենթադրող գործընթացներ են: Ընտրազանգվածը ձևավորվում է այնքանով, որքանով քաղաքական ուժերը կարողանում են

նրանց համախմբել իրենց գաղափարների ու ծրագրերի շուրջ: և նրանց դարձնել առաջարկվող ծրագրերից մեկին նախապատվություն տվող, դրանցից մեկը ընտրող իրական ուժ: Իսկ կուսակցություններն էլ կայանում են ճիշտ այնքանով, որքանով հասարակության մեջ մարդկանց որոշակի քանակ, խումբ, խավ կամ շերտ ընդունելով տվյալ կուսակցության գաղափարախոսությունն ու ծրագրային դրույթները, դառնում է այդ կուսակցության անդամ կամ համակիր և ակտիվորեն աջակցում ու մասնակից է դառնում կուսակցության ծրագրերի իրականացման գործընթացներին:

Ընտրազանգվածը ձևավորվում է այն ժամանակ, երբ հասարակությանն են առաջարկում քաղաքացիների կենսական շահերը պաշտպանող, նրանց կյանքի պայմանները բարելավող, հասարակության հետագա զարգացումն ու առաջընթացն տեսականորեն հիմնավորող գաղափարներ, տեսակետներ, ծրագրեր և հասարակության տարբեր խավեր կանգնում են դրանցից մեկին կամ մյուսին նախապատվություն տալու և ընտրելու անհրաժեշտության առջև: Այսինքն, ընտրազանգվածը ձևավորվում է ինչ որ բան ընտրելու անհրաժեշտությունից ելնելով, երբ քաղաքացին հայտնվում է իր գոյությանն ու կյանքին անմիջապես առնչվող ծրագրերից որևէ մեկին նախապատվություն տալու և այն կյանքի կոչելու փաստի առջև: Եվ հասարակության այն մասն է միայն դառնում ընտրազանգված, որը գիտակցել է առաջարկված ծրագրերի ընտրության և դրանք կյանքում մարմավորելու անհրաժեշտությունը: Իսկ, քանի որ այդ գաղափարներն ու ծրագրերը և դրանց իրականացման մեխանիզմները հասարակությանն են առաջարկում տարբեր քաղաքական կուսակցություններ, ապա պետք է ենթադրել, որ անցումային փուլում կայանում են այն կուսակցությունները, որոնց առաջարկած գաղափարներն ու ծրագրերը ընդունելի են դառնում հասարակության համար: Եվ, քանզի էլ պատահական չէ, որ անցումային փուլն ավարտելուց հետո տասնյակ կուսակցություններ անհետանում են քաղաքական ասպարեզից, չկարողանալով ստեղծել իրենց սոցիալական բազան և ընտրազանգվածը:

Անցումային փուլի հիմնախնդիրների լուծման գործում նշանակալից դեր են խաղում ինչպես կուսակցական, այնպես էլ անկախ զանգվածային լրատվամիջոցներ: Նշենք, որ անցումային փուլում անկախ լրատվամիջոցների մասին պետք է խոսել մեծ վերապահումներով, քանզի այս դեպքում դրանց դիմեականում, ինչ որ խմբի կամ անհատի պատվեր են կատարում:

Անցումային փուլում ընտրազանգվածների ձևավորման գործում կարևորագույն դեր են խաղում նաև զանգվածային լրատվամիջոցները: Այստեղ հատկապես նշանակալից են կուսակցական լրատվամիջոցների դերը, որոնց միջոցով կուսակցություններն իրենց գաղափարներն ու ծրագրերը, մտեցումներն ու տեսակետներն են մատուցում հասարակությունը, ձգտելով մի կողմից արժանանալ նրա մի մասի աջակցությունը, ինչը նաև սեփական ընտրազանգվածի ձևավորման գործընթաց է: Մյուս կողմից նպաստում է քննադատական քաղաքական գիտակցության մակարդակի բարձրացմանը:

կան նրանցի կազմաանոտումն ու կառավարանց, իրազեկան անտուանն և շնորհաբարանան հաստատութեան ձեւաբանն անորաձեւն կախարարութեան անտեղանը: Ինչեց իսկ մասնակցութեան քարտեզներն ջանքն և լրատվանքն իրանան կաշտայանութեանց հաստատական կրակում անցիական անորորութեան հաստատումը և այլն:

4. Հայաստանի Հանրապետությունը անցումային փուլում

Հայաստանում անընդհատական, միախառնական, գերակաորինակ-ված քաղաքական համակարգից ժողովրդավարության անցումը սարդունք էր նախ և առաջ բարեանեայն սառը պատերազմում խՆԳՄ կրած պարտութեան, որը անխուսափելի դարձրեց կոմունիստական կայսրության սյուզեր-նը: ԽՆԳՄ փլուզումը նրանից անջատված հանրապետություններին դրել էր իրենց ռեալագա զոյության ձևը ընտրելու անհրաժեշտության առջև:

Առաջ պատերազմում հաղթանակած կողմը՝ Արևմուտքը ՎՍՄԻ գլխավորությամբ, ժեանանքար, չէր կարող անտարբեր մնալ այն հանրապետությունների հետագա ծախստագրի հանդեպ, քանզի կոմունիստական փարձակորդը կործանելուց քատ, նա ստիպված էր մտածել նաև խՆԳՄ վերակենդանը բարձրելու մասին:

ԽՆԳՄ փլուզումը անցիակ-տնտեսական, գաղափարա-քաղաքական և քաղաք-հոգեբանական ծախսագոյն վիճակ էր առաջարել գրեթե բոլոր հանրապետություններում և նրանցից ոչ մեկը առանց դրան իրական օգնության ու աջակցության այդ վիճակից դուրս գալ չէր կարող՝

Ճշմարտությունը պահանջում է ասել, որ Արևմտյան զարգացած պետությունները (զգացան սովետակառնիկ աջակցությունն ու օգնությունը ցույց տալ նման իրավիճակում հայտնված այն հանրապետություններին ու ազգային միավորումներին, որոնք պատրաստ էին, կամ համաձայն էին անցնելու ժողովրդավարության, ու շուտապես հարաբերությունների և լուծելու նրանց ապը ծառայած իրավաքաղաքական, անցիակ-տնտեսական ծախսագոյն խնդիրները, իսկ վերաբերում էր և հանրապետությունների անկախության ճանաչմանը և շուկայական հարաբերությունների ու ժողովրդավարական իրախտատնեղ ձևավորման համար անհրաժեշտ միջոցներով օգնելուն, և անտատույց կոլեկտիան ու ֆինանսական օգնությանը և լսելն տոկոսադրույթներով վարկավարմանը և այլն: Այդ հանց էր, թե ծառայած երկրները օգնությունը իսկ ձեռով և կատակներով են օգտագործում իշխանությունները և յուրյանով են դրանց ծառայեցվում անցումային փուլի իմնախնդիրներին լուծմանը:

ԽՆԳՄ կախիկն շարունակում ժողովրդավարության և շուկայական հարաբերությունների հաստատումը հայախորհրդային ռեժերի կողմից դիտվում էր դրանք ԽՆԳՄ վերադարձվումը բարձրելու և այդ հանրապետություններում իրենց ազդեցությունն ու արժեքային համակարգը հաստատելու իմնազան օրակցի: Դառու, Արևմուտքի համար ոչ մի նշանակություն չունե-

լու այդ նորանկառն պետությունները ինքնանոջ էրն պատրաստ հասարական կան կանցում նոր հարաբերություններ հաստատելու համար: Կը խնդիրները լատարվտականացում ու անրակառնչորիում, զների ազատականեցում, ժողովրդավարության իրախտատնեղ ձևավորում, միջազգային կազմակերպությունների անդամացում և այլն, նույն կուսակցի անտն աջակցությամբ, իսկ ինչ որ տեղ էլ ստրկակի պարսադրակնքով, պետք է լուծվեն անցումային փուլում:

Անանց անընդունարան վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը:

Հայաստանը անցումային փուլ մտավ նոր սոցիալական համակարգի անցնելուն անպատրաստ: Այսինքն՝ Հայաստանում մինչև այդ տեղի չէին ունեցել քաղաքական այնպիսի շարժումներ ու զարգացումներ, որոնք ենթադրեին նոր բարեանական հանրակարգի անցնելու անհրաժեշտությունը: Այն ինչ տեղի էր ունենում Հայաստանում սկսած 1989-ի սկզբներից, որովմամբ ազգային զարթոնք էր, հասնազգային շարժումն ուղղված տիրող վարչակարգի դեմ, սակայն ոչ թե այդ վարչակարգը տապալելու, այց ինչեց այդ վարչակարգի միջոցով որ ազգային պատասխանորդայալ իրազեկանցից պաշտպանելու ավայ դեպքում, Արցախը Հայաստանի վերամիավորելու համար: Դա համազգային բուրք էր և պայքարը սուղված էր սիրող վարչակարգի ազգային քաղաքականության դեմ, կապտակ լուծմանով տապալելու վարչակարգը:

Անանց վերաբերվում է ժողովրդի ճեշող մեծամասնության քաղաքական կողմնորոշմանը, որը ամենաակտիվ աջակցությունն ու մասնակցությունն էր ցույց տալու Արցախը Հայաստանին վերամիավորելու խնդրի լուծմանը, սակայն նույնքան անտարբեր էր անկախ պետականություն անտեղծելու կամ նոր քաղաքական համակարգի անցնելու գաղափարին:

Իրադեպ նախն քաղաքական զործիներ, մտածողներ և կույնիակ քաղաքական կազմակերպված ուժեր (ԱԽՄ, Հայ Դատ, ՀԱԿԿ), որոնք առաջ էին քաշում անկախության քաղաքարը, սակայն դրանց չէին պաշտպանվում ընակչության ճեշող մեծամասնության կողմից, չէին արժանանում նոր աջակցությունը: Ասկայն ինչպես ցույց տվեց հասարակության զարգացման ռեալագա ընթացքը, անկախ նրանից, ժողովրդը ցանաատում էր, թե ոչ, սա պատասադրված էր ընտնելու իր անկախությունը, որովիճուն պայքարելով մարչանաղի վարած ազգային քաղաքականության դեմ, որանով հան նա արդեւ անտիվ մասնակցություն ունեցում խնդիրային կայսրության փուլական գործում: Իսկ կայսրության փլուզումը ինքնաբերաբար հաստեցում էր անկախ պետականության հաստատման անհրաժեշտությանը: Եվ ստապել էր այնպես, որ մի կողմից հայ ժողովրդը (ԽՆԳՄ մյուս ժողովուրդները կույն-վում) չէր պայքարում անկախություն ձեռք բերելու համար, մյուս կողմից նա պայքարը ուղղում էր ինչեղով վարչակարգի ազգային քաղաքականության դեմ և մասն կազմելով ԽՆԳՄ փլուզմանը, դարձել էր անկախ պետականություն անտեղծելու իմնական օրակալականները մեկը:

Աստծից հետևում է, որ հայ ժողովուրդը նախապատրաստված չէր անկախ պետականության պայմաններում ապրելուն, ուստի Հայաստանի համար անցումային փուլի հիմնական խնդիրներից էին դառնում ինչպես պետականության կայացումը, այնպես էլ ժողովրդին անկախ պետության պայմաններում ապրել սովորեցնելը:

Իրավական (դե յուրե) տեսակյունից Հայաստանը անցումային փուլ է մտել 1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Հանրապետության գերագույն խորհրդի ընդունած Ինքնակազմի հիման վրա 1991 թվականի սեպտեմբերի 21-ին կայացած անկախության ընդունման հանրաքվեից հետո, որով հայ ժողովուրդը կամքի ազատ դրսևորմամբ իր պատմական տարածքներից մի մասի վրա Ինքնակազմ իր ազատ ու անկախ ապրելու անկախ պետականություն ստեղծելու ցանկությունը, սկիզբ դնելով հին սոցիալական համակարգի ապա միացնել մոնոսոցիալական և նոր համակարգի ձևավորման գործընթացին: Տրամաբանական կլիներ ընդունել, որ անցումային փուլը Հայաստանում սկսվել է 1988թ. սկզբներից, նկատի ունենալով երկրում տեղի ունեցող այն իրադարձությունները ու քաղաքական զարգացումները, որոնք անխուսափելի դարձրին հասարակության սոցիալական համակարգի արմատական վերափոխումը:

Գիտական գրականության մեջ կա այն տեսակետը, որ անցումային փուլի գործունեական հիմունքները (դե ֆակտո) սկսվել էին ձևավորվել դեռևս 1980-ական թվականներից:

1980-ական թվականների կեսերից Գորբաչովյան քաղաքականության (արագացում, վերակառուցում, դեմոկրատիայի կատարելագործում և այլն) շնորհիվ ԽՍՀՄ-ում տեղի ունեցող քաղաքական զարգացումները միտված էին հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալական և ազգային հարաբերությունների ոլորտների բարեփոխմանը: Փորձ էր արվում հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգերում իրականացնել փոփոխություններ, որոնք թույլ տային կենսունակ դարձնելու արդեն իրեն սպառած և բոլոր չափանիշներով դեպի քայքայում ու կործանում զնացող ամբողջատիրական քաղաքական վարչակարգը: Այսինքն, նպատակ էր դրվել ներհամակարգային փոփոխությունների իրագործման միջոցով կատարելագործել համակարգային որոշ տարրեր, քաղաքական համակարգը թողնելով անփոփոխ, ինչը, ընտանաբար, տեղի ունենալ չէր կարող:

Արդեն նշվել է, որ քաղաքական համակարգը հասարակական հարաբերությունների, կառույցների հաստատությունների և ինստիտուտների փոխկապակցված, փոխապայմանավորված ամբողջություն է: Ուստի պետք է ընդունել, որ համակարգային տարրերից որևէ մեկի փոփոխությունը դրան համապատասխան փոփոխություն է ներթափանցում ողջ համակարգում: Անհնար է կատարելագործել և հասարակության կյանքում հաստատել ժողովրդավարական սկզբունքներ առանց հին ընտրական համակարգը արմատապես փոխելու, առանց այլախոհության ազատության, քաղաքականության հա-

մակարգի ձևավորման: Գնարավոր չէ հասարակության տնտեսական համակարգում մասնավոր սեփականության, շուկայական հարաբերությունների, թեկուզ և սահմանափակ շրջանակներում, հաստատում՝ անփոփոխ թողնելով գերնենտրոնացված ամբողջատիրական պլանային տնտեսության համակարգը: Չէր կարող իրականացվել ազգերի իրավունքների ընդլայնմանը միտված քաղաքականությունը առանց իրաժարվելու ազգերի ճակատագիրը մեկ կենտրոնից տեղիներում սկզբունքից, առանց նրանց ինքնորոշման իրավունքի սկզբունքից օգտվելու իրական պայմանների ստեղծման և այլն: Ասել է թե ամբողջատիրական քաղաքական վարչակարգը կործանումից փրկելուն միտված Գորբաչովյան քաղաքականությունը ի սկզբանե դատապարտված էր չիրականանալու:

Անկախ հենց այդ ներհամակարգային փոփոխությունների անարդյունավետությունն էլ համոզիչ կերպով ցույց տվեց, որ մասնակի փոփոխություններով հասարակությունը կործանումից փրկել հնարավոր չէ, ընդգծեց սոցիալական համակարգի արմատական փոփոխության անհրաժեշտությունը, հասարակությանը հուշեց մեթոդնու, ոչնչացնելու հին համակարգը և նոր սոցիալ-քաղաքական համակարգ ձևավորելու անհրաժեշտությունը, դրանով իսկ վերածվելով անցումային փուլի գործունեական հիմունքների, հասարակությանը մղելով դեպի անցումային փուլ:

Անցած 15 տարիների անցումային փուլը Հայաստանում ըստ իշխանությունների գործունեության սկզբունքների ու մոտեցումների, ըստ իրականացվող սոցիալ-տնտեսական և կադրային քաղաքականության կարելի է պայմանականորեն բաժանել երեք շրջանների:

1. 1988-1998թթ.-սկզբնական փուլ-մինչև 1991թ. Կոմունիստների անգործունեության մատնված, իսկ 1991թ.-ից ԶԳԻ կյանային իշխանության ժամանակաշրջան,
2. 1998-2003թթ.-այլ կուսակցությունների մասնակցությամբ Հանրապետական կուսակցության, իսկ 1999թ. մայիսից միասնության դաշինքի իշխանության ժամանակաշրջան,
3. 2003 թվականից-երեք քաղաքական կուսակցություններից՝ Հանրապետական, Օրինաց երկիր և ԶՅԴ, ձևավորված կուսիցիոն կառավարության ժամանակաշրջան:

Ամենածանր շրջանը Հայաստանի Հանրապետության համար անցումային փուլի սկզբնական շրջանն էր և ահա թե ինչու՞:

Նախ նշենք, որ անցումային փուլում Հայաստանը պետք է լուծեր այն նույն խնդիրները, որոնք անհրաժեշտ էին ամբողջատիրությունից ժողովրդավարության անցնելու համար, այսինքն արմատական փոփոխություններ պետք է իրականացվեր հասարակության սոցիալական համակարգի բոլոր օղակներում, ձևավորվելու այն բոլոր կառույցներն ու ինստիտուտները, հարաբերություններն ու սկզբունքները, որոնք անհրաժեշտ էին ժողովրդավարական քաղաքական համակարգի, մասնավոր սեփականության հիմքով տնտեսության և դրա գոյության երաշխիքը հանդիսացող շուկայական հա-

դաբերությունների հաստատման համար. Այս բոլորին զուսմարվում էր նաև այն, որ Հայաստանը այդ խնդիրները պետք է իրականացներ լայնազանց բարդ ու ծանրագույն սոցիալ-քաղաքական իրադարձությունների պայմաններում:

Հայաստանը անցումային փուլ մտավ սոցիալ-տնտեսական, պատերազմական իրավիճակի, գաղափարա-քաղաքական հակասությունների չափազանց ծանր բեռն ուսած. ինչի հետևանքով ծանրագույն սոցիալական վիճակ առաջանալուց զատ, հասարակական կյանքի բոլոր ոլորտների քայքայումն ու հետընթացը, ապակայունացումն ու կամայականությունների ծավալումը դարձան անխուսափելի. ինչը անցումային հասարակության առջև լրացուցիչ դժվարություններ էր հարուցում: Այդ դժվարությունները ինչպես առարկայական (օբյեկտիվ), այնպես էլ ենթակայական (սուբյեկտիվ) բնույթի էին:

Երկրի հսկայական տարածքի վրա 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժի ավերածությունները տասնյակ հազարավոր զոհերով և հարյուր հազարավոր անտթևան մնացած մարդկանցով, տնտեսական շրջափակումների հետևանքով անգործության մատնված արտադրությունն ու զանգվածային գործազրկությունը, պատերազմական իրավիճակի հարուցած դժվարությունները, հանրապետությունում մոտ երեք հարյուր հազարի համարող փախստականների առկայությունը սկզբնական շրջանում լրացուցիչ լարվածություն, քարոզություն էին առաջացնում անցումային խնդիրների իրականացման համար:

Սակայն նշված առարկայական դժվարությունները զնալով բազմապատկվում, խորանում և էլ ավելի ակուծելի էին դառնում հենց իշխանությունների վարած քաղաքականության պատճառով, այլ կերպ ասած սուբյեկտիվ գործոնի պատճառով:

1990 թվականի մայիսի գերագույն խորհրդի ընտրությունների արդյունքով իշխանության էր եկել պետության կառավարման փորձ չունեցող անձեռնահաս (ոչ կոմպիտենտ), ոչ արհեստավարժ մարդկանց մի խումբ, որոնց միակորել էր իշխանությունը նվաճելու և դրա միջոցով հարստանալու ներքին համաձայնությունը, չմոռանալով ընդունել կոսմոպոլիտի կեցվածք և ներկայանալ որպես լիբերալիզմի գաղափարախոսներ: Նկատենք, որ այդպիսի ընդունակություններով և արժեքներով մարդկանց խումբը իշխանության կազմում էր գալ միայն, ինչպես ազդեցիկ, հզոր, իրենց աշխարհաքաղաքական շահերը հետապնդող արտաքին ուժերի: Այնպես էլ իրենց նեղ շահերը հետապնդող նախորդ վարչակարգի նոմենկլատուրայի մեծամասնության ակտիվ աջակցության ու հովանավորության շնորհիվ:

Արտաքին ուժերի հիմնական նպատակը դրանով իշխանությունների միջոցով տարածաշրջանում իրենց ազդեցությունը հաստատելն ու իրենց տնտեսական ու քաղաքական շահերի ապահովումն էր:

Կոմունիստական և վարչական նոմենկլատուրան իր ունեցած քաղաքական իշխանության արտոնությունների շնորհիվ ստվերային և անօրինական ճանապարհով հսկայական հարստություն էր կուտակել, բայց գոյություն

ունեցող իշխանության գաղափարական կապանքները թույլ չէին տալիս այդ հարստությունը դնել ազատ շրջանառության մեջ, զբաղվել ազատ տնտեսական գործունեությամբ և ձեռք բերել նաև տնտեսական իշխանություն: Այն մտեցումներով ու գաղափարախոսությամբ, որ ՀՀԸ-ն էր ձգտում իշխանության (տնտեսության ազատականացում, շուկայական հարաբերությունների հաստատում, սեփականաշնորհում և այլն), լրիվ ձեռնադր էր կրմունքստական նոմենկլատուրային, քանզի դա նրանց սովորաբար, անօրինական ճանապարհով կուտակած հարստության օրինականացման ամենակարճ ճանապարհն էր: Միայն թե ինչու էր նախկին նոմենկլատուրան չափազորգոված իշխանությունը հանձնելու նոր քաղաքական ուժին, արտաքինապես հակադրվելով, իսկ ներքուստ աջակցելով ու հովանավորելով նրան:

Անցյալի փորձը մեզ արդեն համոզել է, որ հայ ժողովրդի գաղափարական և քաղաքական կողմնորոշումները մեծ տեղությունները միշտ էլ օգտագործել են այս տարածաշրջանում իրենց հեռահար ծրագրերը իրագործելու համար: Միջազգային քաղաքական զարգացումների և աշխարհի քաղաքական ու եթնիկական քարտեզի ձևավորման արդի փուլում Հայաստանը մասնակցություն չունենալով համաշխարհային կառավարմանն ու նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացներին, այնուհանդերձ գտնվում է այդ գործընթացները իրականացնողների ազդեցության ոլորտում և հայտնվել է աշխարհաքաղաքական շահերի կիզակետում, ինչն էլ անխուսափելի է դարձնում գերտեղությունների կողմից Հայաստանի նկատմամբ պարտադրանքի կիրառումը:

Այս պարագայում բաժնազանց կարևորվում է պետության ներքին և արտաքին անվտանգության պաշտպանության խնդիրը: Պետությունը իր արտաքին անվտանգության խնդիրները կարող է լուծել այն ժամանակ, երբ արտեղծել է ներքին անվտանգության հուսալի նախադրյալներ, որոնցից ամենաանվանն ու անհրաժեշտը ազգի կազմակերպվածության աստիճանն է, ազգի քաղաքական կազմակերպման այնպիսի ձևը, որն աչքի է ընկնում իր ներքին կարգապահությամբ, օրինականությամբ, համախմբվածությամբ ու հայրենասիրությամբ: Միայն այս դեպքում է հնարավոր դիմազրավել այնպիսի արտաքին ազդեցությունների ու պարտադրանքների, որոնց չեն թխում նրան ոտնահարում են ազգային շահերն ու իրավունքները: Որքան ներքևանս կազմավորված է ազգը և որքան նրա քաղաքացիները զբաղվում են միայն իրենց զոլատնման խնդիրներով, այնքան նա հսկված է առանց դիմադրության համակերպվելու արտաքին ազդեցություններին, կորցնելով իր ազգային ինքնությունն ու արտաքին անվտանգության պաշտպանության ինարավորությունը: Հայաստանում իշխանության եկած քաղաքական ուժը՝ ՀՀԸ-ին, գործունեությամբ ոչ միայն չէր փորձում իրականացնել այդ կարևորագույն խնդիրը, այլև քանակապես նկատալիանդված կազմավորում էր ազգի միասնությունը, ջլատում նրա ուժերը, հալածանքի ենթարկելով ազգային շահերով մտահոգված քաղաքական ուժերին, կուսակցություններին անհատների ու քաղաքական գործիչների: ՀՀԸ-ի այդպիսի քաղաքակա-

կուրսում, հետևանքով հասարակական կյանքը կազմալուծվեց, ավելի վատ-
թարացավ ժողովրդի սոցիալական վիճակը, երկրում գլուխ քարծրացրեց
զանգվածային բարոյագրվման, հանցագործությունների, հոսանքառության
ու աքտագաղթի ալիքը:

Իշխանությունների վարած այդպիսի արտաքին և ներքին քաղաքական-
ությունը այնպիսի տպավորություն էր թողնում, որ նրանց վարժեցրել կամ
հրահանգել էին միայն քանդել, ոչնչացնել ու փոշիացնել այն ամենը, ինչը
կարելի էր դարձնել անցումային փուլի խնդիրների լուծման, հասարակու-
թյան կայունացման ու զարգացման հիմք: Իշխանությունների նեանաստիպ
գործունեության հետևանքով հասարակությունը թաղվեց համառոտաբան
անորոշությունների, քառսր, անօրինականությունների ու կամայականու-
թյուններ զարշահող ճանհուն:

Ղարաբաղյան հարցի նկատմամբ իշխանությունների որդեգրած պարտ-
վողական և ապագգային կեցվածքը առաջացրեց ոչ միայն ժողովրդի զայ-
րույթը, այլև 1987թ. կեսերից խորը հակասություն ծնեց հենց իշխանության
ներսում, երկփեղկվելով այն և առաջացնելով երկու հակադիր բնույթ: Ժո-
ղովրդից օտարված, իսկ 1996թ. նախագահական ընտրություններում զանգ-
վածային ու կոպիտ ընտրակեղծիքների հետևանքով նաև միջազգային հան-
րույթից մեկուսացված իշխանությունը մտավ քաղաքական ճգնաժամի փուլ,
ինչն էլ անխուսափելի դարձրեց իշխանափոխությունը 1998թ. փետրվարի
սկզբներին ԲՀԸ իշխանախումբը հրաժարական տվեց: Ավելի ճիշտ կլիներ
ասել, որ հրաժարական տվեցին ԲՀԸ ապագգային թևը կազմող առաջին
դեմքերը, իշխանությունը զիջելով իրեց իսկ ներսում ձևավորված ազգային
մտածելակերպով քաղաքական շորձիչներ խմբին: Ուստի տեղի ունեցավ
ոչ թե իշխանության, այլ իշխանախմբի փոփոխություն էր:

1998թվ. մարտի 16-ին և 30-ին երկու փուլով տեղի ունեցան արտափոխ-
նախագահական ընտրություններ: Երկրի նախագահ ընտրվեց Ռ. Ռոբարթյանը
մինչև այդ ԲՀ վարչապետ), որին պաշտպանում և աջակցում էին ինչպես իշ-
խանությանը մաս կազմող որոշ ուժեր (Յանթապետական կուսակցություն,
Երկրապահների կամավոր միության և այլն), այնպես էլ ԲՀԸ-ի կողմից հա-
լածված ու նրան ընդդիմադիր կուսակցություններ (ԲՀԳ, ԳՈԿԱ և այլն):
1999թվ. մայիսին կայացած ընտրություններում նոր ձևավորված «Միասնու-
թյուն» դաշինքը (ԲՀԿ, ԱԺԿ, ԵԿՄ) ազգային ժողովում մեծամասնություն
կազմելով ձևավորեց նոր կառավարություն՝ Վ. Սարգսյանի գլխավորու-
թյամբ, որին մաս էին կազմում նաև նախագահին ընտրություններում ակ-
տիվ աջակցած քաղաքական ուժերի ներկայացուցիչներ: Այսպես սկսվեց
անցումային փուլի երկրորդ շրջանը Յայտառանի Յանթապետությունում:

Այդի առաջ ունենալով նախորդների թույլ տված սխալները և դաս քաղե-
լով դրանցից նոր իշխանությունները արմատական փոփոխություններ
մտցրին ներքին և արտաքին քաղաքականության որոշ ուղղություններում,
շեշտը դնելով հատկապես այն խնդիրների իրականացման վրա, որոնց ան-
տեսումն էլ, հիմնականում, դարձել էր նախորդ իշխանությունների հրաժա-

րականի պատճառը: Վերջապես իշխանությունը դեմով շուտ էր եկել դեպի
հասարակության առջև ծառայած սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքա-
յան և հոգևոր մշակութային խնդիրների լուծումը:

Ուշադրության կենտրոնում հայտնվեց նախորդների կողմից մոռացված
ներաշարժի գոտին, ակտիվ գործունեություն ծավալեց նրա վերականգման
նպատակով և կարճ ժամանակահատվածում արձանագրվեցին ակնառու
նյութություններ քաղաքականաշինության, աղոթքապահական օբյեկտների և
կարոցաշինության քննազավաթներում, ձեռնարկվում են քայլեր արդյունաբե-
րական օբյեկտների վերաբացման և Լոռիի ստեղծման ուղղությամբ, ինչի
նորից կատեղծվեց նոր աշխատատեղեր: Յանթապետությունում գործարկ-
ված մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների և լայն թափ
ունեցած շինարարության շնորհիվ ստեղծվել են տասնյակ հազարավոր աշ-
խատատեղեր, ինչը նոր իշխանությունների, հատկապես երկրի նախագահի
նախընտրական ծրագրերի և խոստումները կատարում էր նշանակում:

Օրենսդրական գործունեության շնորհիվ իշխանությունները նպաստա-
լու ապամանեք ստեղծեցին ներդրումների, համատեղ-ձեռնարկությունների
ստեղծման համար, ձևավորելով դրան համապատասխան իրավական
մարտ:

Նոր մտեցումը դրսևորվեց կարգային քաղաքականության մեջ: Ի տարբե-
րություն իրենց նախորդների, որոնք կարգերը ընտրում էին ըստ իրենց անձ-
նական կապերի ու վստահության, նոր իշխանությունները կարգերի ընտրու-
թյան ժամանակ կողմնորոշվում էին մասնագիտական ընդունակություննե-
ր արհեստավարժության սկզբունքից:

Վերականգնվեցին հալածված ու արգելված կուսակցությունների ու
կոմպամիցրացների իրավունքները, բանտերից ազատվեցին անհիմն մե-
ղադրված մարդիկ, ինչը նպաստեց հանրապետությունում ժողովրդավարա-
կան սկզբունքների ձևավորմանն ու հաստատմանը:

Արմատապես փոխվեց արտաքին քաղաքականության ուղղվածությունը:
Պրակտիկ քաղաքականության մակարդակի բարձրացվեց իայոց ցեղաս-
պետության միջազգային ճանաչման հարցը: Վերականգնվեցին Յայաստան
հարցը խզված կապերը և սփյուռքը սկսեց ակտիվորեն ներառվել հայրե-
րի վերաշինման գործընթացների մեջ: Յայաստանը անդամակցում է մի
քանի ծանրաճիւղի միջազգային կազմակերպությունների, այդ թվում Եվրո-
պականության հաստատմանը:

Ի տարբերություն նախորդ իշխանությունների որդեգրած կեցվածքի, նոր
իշխանությունները Ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցում ունեն
ենց հատակ դիրքորոշումը (Ղարաբաղը երբեք մաս չի կազմել աղբրեջա-
րան պետության), և միջազգային կառույցներում խնդրի կարգավորման
ուղղված բանակցություններում կամ քննարկումներում միշտ կողմնորոշվում
ենք ազգային շահերով:

Դրական տեղաշարժերի թվարկումը կարելի է չափունակել, սակայն ասածը նպատակ չունի ստեղծելու այն տպավորությունը, թե իշխանությունները անթերի են, որ նրանց գործունեությունը բավարարում է հասարակությանը, որ լուծվել են հասարակությանը հուզող բոլոր հարցերը և այլն: Ասածի նպատակն է ցույց տալ նախորդ և նոր իշխանությունների գործունեության սկզբունքների, ազգային պետական մի շարք խնդիրների վերաբերյալ նրանց պատկերացումների ու մոտեցումների որակական տարբերությունները:

Այսօր էլ հասարակությունում անկա են բազում չլուծված խնդիրներ, ինչը առաջացնում է ժողովրդի արդարացի դժգոհությունը: Հանրապետությունում դեռևս անկա է սոցիալական ծանր իրավիճակ, վեչին են քյուլչետային աշխատողների աշխատավարձերը, կենսաթոշակները, գոյություն ունի գործազուրկների և փախստականների չլուծված խնդիրներ: Իշխանության ոչ բոլոր մարմիններն են հստակորեն իրականացնում իրենց գործառույթները, իշխանական կառույցներում բազմաթիվ են իրենց կեղ, կլանային շահերը հետապնդող, պետական մտածելակերպից գուրկ անհատներ, որոնք հասարակության մեջ անօրինակությունների դրսևորման հիմնական հեղինակներն են: Չմոռանանք, որ նոր իշխանական համակարգում շատերը նախորդ իշխանության մեջ նշանակալից դերակատարություն ունեցող, նրանց սկզբունքներն ու գաղափարախոսությունը դավանող անհատներ են և կարող են գործել նախորդներից որդեգրած գործունեության սկզբունքներով, Այս բոլորի պատճառով ժողովրդի ճնշող մեծամասնությունը չի վստահում իշխանություններին և հասարակության մեջ իրականացվող փոփոխությունները չի ընկալում, որպես իր բարեկեցությանն ուղղված գործընթացներ:

Այնուհանդերձ 1998-2003թթ. ժամանակաշրջանում իշխանությունների գործունեության ու վարած քաղաքականության շնորհիվ նկատվող եղավ կասեցնել հասարակության քայքայումն ու հետընթացը, իրականացնել այնպիսի փոփոխություններ, որոնք անցումային փուլի խնդիրների լուծման անհրաժեշտ նախադրյալներ են և սկիզբ դնել հասարակության վերընթաց զարգացման:

Ռուստի, ելնելով 1998-2003թթ. անցումային փուլի խնդիրների իրականացմանն ուղղված նոր իշխանությունների վարած քաղաքականության արդյունքներից, կարելի է այն բնորոշել որպես հասարակության կայունացման և զարգացման նախադրյալների ստեղծման ժամանակաշրջան:

2003թվ. մետրվարի 19-ին և մարտի 5-ին երկու փուլերով տեղի ունեցած նախագահական ընտրություններում Ռ. Զոչարյանը վերընտրվեց երկրի նախագահ: Նրան ակտիվորեն պաշտպանում էին երկրում մեծ դերակատարություն ունեցող ճանաչված քաղաքական կուսակցություններ (ՀՀԿ, Օրինաց երկիր, ՀԶԴ, ՀՌԱԿ և այլն), որոնք նախորդ ընտրություններում նույնպես պաշտպանել էին Ռ. Զոչարյանի թեկնածությունը և նախընտրական ծրագրերը:

2003 թ. մայիսի 25-ին կայացավ Ազգային ժողովի ընտրություններ. որի արդյունքով Ազգային ժողովում իրենց ներկայությունը կարողացան ապահովել Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), «Արդարություն» դաշինքը, Օրինաց երկիր կուսակցությունը (ՕԵԿ), Հայ Բեղափոխական Դաշնակցությունը (ՀԶԴ), Ազգային միասնություն կուսակցությունը (ԱԱԿ) և Միավորված Ազգային կուսակցությունը (ՄԱԿ):

Երկու ընտրություններն էլ անցան չափազանց սուր պայքարի դրսևորմամբ, որի արդյունքների վերաբերյալ դժգոհություններն ու բողոքարկումները բավականին սուր ձևեր ընդունեցին, քանզի իրոք տեղի էին ունեցել ընտրախախտումներ, որոնց քննարկումները երկար ժամանակ դարձել էին դատարանների պարզաբանման առարկա:

Ազգային ժողովի մանդատներ ստացած երեց կուսակցություններ (ՀՀԿ, Օրինաց երկիր, ՀԶԴ), միավորվեցին ընդհանուր ծրագրի շուրջ և կազմեցին կոալիցիոն կառավարություն, համատեղ ստանձնելով իշխանության պատասխանատվությունը: Սա նորույթ էր Հայաստանի համար և կարող է նպաստավոր դեր խաղալ անցումային խնդիրների լուծման, հատկապես ժողովրդավարության հաստատման գործընթացներում, ինչից ելնելով էլ, մենք առանձնացնում ենք անցումային փուլի ներկայիս շրջանը, այն անվանելով անցումային հասարակության զարգացման փուլ: Եվ, անհ թե ինչու՞:

Նախորդ կառավարության կազմում նույնպես կային այլ կուսակցությունների, ներկայացուցիչներ, սակայն այս դեպքում իշխանությանը մասնակից կուսակցությունը պատասխանատվություն չէր կրում կառավարության գործունեության համար, քանզի նա իրականացնում էր կառավարությունը ձևավորված իշխող կուսակցության ծրագիրը, նույնիսկ, եթե համաձայն չի սրա ծրագրային դրույթներին:

Իշխանությանը մաս կազմող կուսակցությունը լավագույն դեպքում կարող է պատասխանատվություն կրել իրեն վստահված ընազավառում կառավարության ծրագրի իրականացման գործընթացների, բայց ոչ արդյունքների համար:

Կոալիցիոն կառավարության ժամանակ, նրանում ներառված կուսակցությունները, նախ ընդունում են բոլորի հավանությանն արժանացած ծրագիր և համաձայնվում են համատեղ իրականացնել ծրագրում ընդունված բոլոր նախատեսումները: Այս դեպքում, արդեն կոալիցիոն կազմած բոլոր կուսակցությունները հավասարապես պատասխանատվություն են կրում ընդունած ծրագրի իրականացման համար: Ասել է, թե կոալիցիայի անդամները հավասարապես ստանձում են իշխանության պատասխանատվությունը և անկախ կրակից, թե նրանց կառավարության կազմում քանի նախարարական պորտֆելներ ունեն և ինչ քնազավառներ են ղեկավարում, նրանք դառնում են ամբողջ կառավարության գործունեության համար պատասխանատու: Այս պարագայում, քանի որ կուսակցությունները պատասխանատվություն էլ կրում նաև այն ընազավառներում իրագործվող գործընթացների համար, որի ղեկավարումը իրենց չի պատկանում, ապա, ընականաբար ծնվում է այդ

քննադատների վրա հսկողություն սահմանելու և՛ իրավունք, և պարտականություն, Չակառակ դեպքում, անհավանական և անտրամաբանական կլիներ պատասխանատվություն կրել մեկի գործունեության համար, առանց այդ գործունեության վրա հսկելու իրավունքի: Այս դեպքում, կոալիցիոն կառավարության գործունեությունը շատ ավելի թափանցիկ է դառնում հասարակության համար, նախ և առաջ հենց կուսակցությունների միջոցով: Կառավարություն կազմած կուսակցությունների համար ստեղծվում է մի կառավարություն կազմած կուսակցությունների իրենց հնարավորություններն ու արժանիքները, կոնկրետ գործերով ապացուցելու, որ իրենց կարող ու ընդունակ են հասարակական կյանքի կառավարումը իրականացնելու և արժանանալու հասարակության վստահությանը: Ինքնին հասկանալի է, որ նման սկզբունքներով գործառնելուց կարող է շահել ողջ հասարակությունը: Կարելի է ասել, որ հենց այդ սկզբունքի իրականացմամբ է հնարավոր որոշել կոալիցիոն կառավարության կայացման աստիճանը:

Չրականություն

1. Արրահանյան Լ. Յ. Ազգային ինքնությունը որպես պրոցես: Ինքնություն. Եր. 1985
2. Փլեորդյան Յ.Ա. Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ. Եր. 1997.
3. Հարությունյան Եղ. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ: Եր 2000
4. Հովսեփյան Ա. Հասարակական հարաբերությունների վերարտադրության սոցիալ-փիլիսոփայական պրոբլեմները: Եր. 1986.
5. Հովսեփյան Ա.Ս. Հովհաննիսյան Ա. Զաղաքականության պատմական դասերը
6. Данилов А.Н. Переходное общество. Проблемы системной трансформации. Минск. 1998.
7. Наумова Н.Ф. Жизненная стратегия человека в переходном обществе. Социологические исследования. 1995 N4
8. Руховишников В.О. Социология переходного периода. Социологические исследования. 1994 N4
9. Понаряин А.И. Политология. М. 1999
10. Прокожин А. И. Перестройка: Переходные процессы и механизм. М.1990
11. Соенко Ю. И. Состояние общества. К вопросу о его изменении. Социологические исследования. 1999 N10

ՉԼՈՒՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Ճողովրդավարությունը և հասարակության առաքելությունը

1. Ճողովրդավարության զարգացման պատմական էտապները

«Ճողովրդավարություն» (դեմոկրատիա) արտահայտությունը վերցված է հունարեն *demos*-Ճողվուրդ և *crates*-իշխանություն բառերի համակցությունից, ինչի համար էլ այն, բառացի թարգմանությունից ելնելով, ընդգծվում է որպես Ճողվրդի իշխանություն:

Ճողվրդավարությունը ծնունդ է առել Աթենական քաղաք-պետությունում մ.թ.ա.V դարում և համարվում է պետական կառուցվածքի հնագույն ձևերից մեկը: Արիստոտելի "Αθηναϊκα πολιτεια" աշխատությունից տեղեկանում ենք, որ Ճողվրդավարությունը արդյունք էր հին աշխարհի երկու հիմնական խավերի՝ Ճողվրդի և արիստոկրատիայի գրեթե յոթ դար տևած անգիջում պայքարի, որի ընթացքում Ճողվրդը կարողացավ արիստոկրատիայի հետ հավասար քաղաքական կյանքի մասնակցելու և օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալու իրավունք ձեռք բերել: Ստեղծվեց պետական կառուցվածքի և իշխանության կազմակերպման այնպիսի ձև, որի դեպքում հասարակությունը կառավարում էին ոչ թե մեկը, կամ խումբը, այլ բոլոր քաղաքացիները: Աթենական պետության մեջ կենտրոնական քաղաքական ինստիտուտը քաղաքացիների Ճողուն էր, որին մասնակցում էին 5-6 հազար ազատ քաղաքացիներ, միայն տղամարդիկ: Իշխանությունը պատկանում էր լիիրավ քաղաքացիների Ճողվին, քաղաքական որոշումները ընդունվում էին հրապարակային քննարկումների ընթացքում քաղաքացիների ձայների պարզ մեծամասնությամբ: Ճողվը իրավասու էր օրենքներ ընդունել, տնօրինել պետական գանձարանը, որոշելու պատերազմի և խաղաղության հարցերը: Կառավարման համակարգում պաշտոնները ըաշխվում էին վիճակահանության սկզբունքով, քանզի բոլոր քաղաքացիները, որոնք մասնակցում էին Ճողվին, կարող էին պաշտոններ զբաղեցնել: Մակայն հարկ է նշել, որ Աթենական պետության մեջ 400 հազար քնակիչներին միայն 40 հազարն էր համարվում լիիրավ քաղաքացի և միայն կրանք իրավունք ունենալ մասնակցելու քաղաքական կյանքին և Ճողվին: Կանայք, եկվորները - ստրուկները այդ իրավունքներից չէին օգտվում: Այդպիսին էր Ճողվրդավարությունը իր սկզբնական շրջանում:

Չեռագայում, հենց նույն աթենական պետությունում Ճողվրդավարությունը վերածեց ամբոխավարության, որի առանձնահատուկ գիծը օրենքներն չենթարկվել էր, ինչը ծնունդ տվեց անարիստիզմին և վարկաբեկեց Ճողվրդավարությունը: Աթենական Ճողվրդավարությունը տևեց մոտ 200 տարի, դառնալով այդ ժամանակաշրջանի հասարակության քաղաքական համակարգի կառավարման լավագույն մեխանիզմ: Չեռոպական հարաբերությունների, միապետության հաստատումով Ճողվրդավարությունը երկար ժամանակով անցավ պատմության գիրկը: 17-18 դարերի հեղափոխությունների, հատկապես Ֆրանսիական 1789թ. մեծ հեղափոխությունից հե-

տո, որը առաջ քաշելով ազատության, հավասարության և եղբայրության կարգախոսը, սննդը դրվեց ժողովրդավարության սկզբունքների վերանուսդի: Սակայն, հենց նույն եվրոպայում ժողովրդավարության սկզբունքները տարբեր երկրներում իրենց ձևավորման առանձնահատկություններն էին դրսևորում: Եթե ֆրանսիական հեղափոխությունը ժողովրդավարության սկզբունքների հայտարարությամբ սկզբնավորեց և լայն հնարավորություն ընձեռնեց ժողովրդի ներկայացուցչական իշխանության հաստատման համար առանց անհատի ազատության եռաշխավորության, ապա Անգլիայում 1688թ. հեղափոխությունից հետո հաստատված սահմանադրական միապետության պաշտաններում հաստատվեցին անհատի ազատությունների (լիբերալիզմի) սկզբունքները, սակայն առանց ժողովրդավարության, ինչը պատճառ դարձավ եվրոպայում երկար ժամանակ ժողովրդավարության և լիբերալիզմի առանձին-առանձին գոյության:

Եվրոպայում տիրող այդպիսի քաղաքական զարգացումները դրական նշանակություն ունեցան նոր ձևավորված ԱՄՆ-ի համար, որտեղ փորձ արվեց ժողովրդավարության և լիբերալիզմի միավորմամբ ստեղծել պետական կառուցվածքի նոր ձև: 1775-1783թթ. անկախության համար մղած պատերազմի ընթացքում զաղութները իրենց Անգլիայից անկախ հռչակեցին: Օրենսդրական ժողովը հանդես եկավ պառլամենտական իշխանության գերակայության օգտին: 1776թ. Ֆիլադելֆիայում այդ ժամանակի բոլոր 13 նահանգների ներկայացուցիչների կողմից ընդունվեց անկախության հռչակագիր, որի հիմնական գաղափարը լիբերալիզմի սկզբունքների հաստատումն ու այդ իրավունքները ապահովող սահմանադրական պետության ստեղծումն էր:

Սակայն, դրան զուգահեռ հենց սկզբից էլ հեղափոխության ընթացքում ժողովրդական զանգվածները պահանջում էին պետական իշխանության մարմիններում իրենց լայն ներակայացուցչություն: Այդ պահանջները իրական հիմք ունեին, քանի որ ժողովուրդը ակտիվորեն մասնակցում էր քաղաքային ժողովներին և իր ազդեցությունն էր թողնում քաղաքային իշխանությունների ձևավորման վրա, իսկ հետագայում նաև տեղական բոլոր մակարդակների իշխանության մարմինների ձևավորման վրա: 1787թ. ընդունած ԱՄՆ Սահմանադրությունը դարձավ ազատական (լիբերալ) գաղափարների և ժողովրդավարական սկզբունքների համաձայնեցման եռաշխավորը:

Ամերիկյան պետության հիմնադիրները մշակեցին և իրականացրին նորմերի մի համակարգ, որը համատեղում էր ժողովրդի իշխանության սկզբունքները յուրաքանչյուր մարդու ազատությունների և իրավունքների պաշտպանության լիբերալիզմի սկզբունքների հետ: Դրան հասնելու համար, նրանք կարևոր էին համարում խուսափել այն բանից, որ կառավարության ձևավորումը բացարձակապես կախված չլինի ընտրողների մեծամասնության կամից: Այսինքն անհրաժեշտ էր, որ փոքրամասնությունն էլ ակտիվ մասնակցություն ունենար իշխանության մարմինների ձևավորման գործընթացին, և ցանկացած անհատ իր իրավունքներից օգտվելու հնարավորություն ունենար: Այդպիսի մոտեցումը և այդ սկզբունքների իրագործումը լայն սկզբունքների իրագործումը իրապարհական էր հասարակության բոլոր քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները լայն սկզբունքների իրագործումը: Սակայն, ինչպես ցույց տվեց հասարակության զարգացման հետագա ընթացքը, որքան այդ սկզբունքները տեսականորեն ընդունելի էր, այդքան էլ գործնականորեն դժվար կիրառելի դարձավ: Համենայն դեպս մինչ օրս, դեռ ոչ մի պետության մեջ չի հաջողվել ստեղծել մեծամասնության և փոքրամասնության շահերի այնպիսի ներդաշնանում, որ մեզմեր դարերով եկած հակասությունը: ԱՄՆ հիմնադիրներից Ա. Համիլտոնը իրավացի էր կշռելով, որ «մարդիկ սիրում են իշխանություն: Տվեք ամբողջ իշխանությունը մեծամասնությանը և նրանք կհնչեն փոքրամասնությանը, տվեք ամբողջ իշխանությունը փոքրամասնությանը և նրանք կհնչեն մեծամասնությանը»: Ուստի, ըստ նրա իշխանությունը պետք է բաժանվի նրանց միջև, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը կարողանա պաշտպանվել մյուսից: Ենթեք, որ այդպիսի սկզբունքների ընդունման հետևանքով ԱՄՆ համարվում է լիբերալ-ժողովրդավարական հասարակության օրինակ:

Ուսումնասիրելով ամերիկյան հասարակության քաղաքական կյանքը Ա. Ռոկվիլը իր "Демократия в Америке" գրքում առանձնացնում է երեք հիմնական պատճառներ, որոնք հնարավոր դարձրին ԱՄՆ ժողովրդավարական հասարակությունը միաժամանակ դառնալու ազատական (լիբերալ) հասարակություն: Դրանք են.

1. Ամերիկյան հասարակությունը հայտնվել էր շահավետ աշխարհագրական դիրքում, քացալայում էր հարևան պետությունների հարձակման վտանգը, ուներ հսկայական տարածք, որը զբաղեցրել էին եվրոպայից գաղթածները, իրենց հետ բերելով քաղաքակրթության վերջին նվաճումները, որը հնարավորություն տվեց արագ զարգացնել արդյունաբերությունն ու առևտուրը:
 2. Ամերիկյան ազատության ճանապարհը կառուցվեց լավ օրենքների ստեղծման միջոցով: Ձեռքբերումը նշում էր, որ եթե եվրոպայում ժողովրդավարության հաստատման համար չափազանց շատ արյուն թափվեց, ապա Ամերիկայում չափազանց շատ բանաբ է թափվել:
 3. Ամերիկյան ժողովրդավարությանը ընդորոշ ազատականության եախան պատճառներից էին ամերիկյան ժողովրդի սովորությունները, բարքերը և հավատը, որոնք նրանց դարձնում էին միաժամանակ և՛ հավատացյալ, և՛ ազատամիտ:
- Եվրոպայում ժողովրդավարության զարգացումը կապված էր համընդհանուր ընտրական իրավունքի պահանջի հետ, որի ջատագովը և պայքարի առաջնամարտիկ էր դարձել արևմտաեվրոպական բանվոր դասակարգը, հանդես գալով որպես կազմակերպված քաղաքական ուժ: 20-րդ դարի սկզբների եվրոպայի բանվոր դասակարգը հասավ իր նպատակին, ձեռք բերելով համընդհանուր ընտրելու իրավունք: Այս պարագայում էականորեն փոխվում է ժողովրդավարության եռությունը, այն միայն պետական կառուցվածքի

ծն լինելուց, ինչպես մինչ այդ ընկալվում էր, վերածվում է ամբողջ հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգևոր էությունը ներկայացնող համակարգի: Ժողովրդավարությունը դառնում է ժողովրդի իշխանության և համաձայնության մի համակարգ, որտեղ քաղաքացիները որոշումների մշակմանն ու ընդունմանը մասնակցում են ոչ թե ուղղակիորեն, այլ միջնորդավորված, իրենց ներկայացուցիչների միջոցով, որտեղ որոշումները ընդունում են ծայրերի մեծամասնությամբ հաշվի առնելով փոքրամասնության կարծիքը: Այդպիսի ժողովրդավարությունը անվանվում է Սահմանադրական, որոշ մտածողներ այն անվանում են նաև ազատական (լիբերալ), կամ լիբերալ-դեմոկրատիա:

Ժամանակակից ժողովրդավարությանը քնորոշ են մի շարք առանձնահատուկ գծեր և յուրահատկություններ:

Նախ, այսօր ժողովրդավարությունը կառուցվում է ազատության և հավասարության նոր ըմբռնման վրա: Ազատության և հավասարության սկզբունքները տարածվում են պետության բոլոր քաղաքացիների վրա, ի տարբերություն նախորդ շրջանի այն մտեցմանը, որտեղ մտահոգության հիմնական առարկան փոքրամասնության իրավունքների պաշտպանությունն էր: Հասարակության ժողովրդավարացմանը զուգընթաց այդ սկզբունքները աստիճանաբար հաստատվում են գործնական կյանքում:

Երկրորդ, Ուղղակի ժողովրդավարության սկզբունքները, որոնք սովորաբար իրականացվում են քննչության մեջ և տարածելով մեծ պետություններում, հիմնականում իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով, իսկ համազգային կամ կենտրոնական կառավարման մակարդակում զարգանում է ժողովրդավարության ներկայացուցչական ձևը: Այսինքն՝ քաղաքացիները պետության կառավարման մարմինների գործունեությանը մասնակցում են իրենց ընտրած ներկայացուցիչների միջոցով:

Երրորդ, ժողովրդավարության ներկայացուցչական ձևի զարգացումը պայմանավորված է հասարակության քաղաքացիների բազմաբնույթ շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Ժողովուրդն իր ներկայացուցիչների միջոցով իրագործելի է դարձնում իր շահերի, ազատությունների և իրավունքների պաշտպանությունը:

Չորրորդ ժամանակակից լիբերալ-ժողովրդավարական պետությունները իրարից շատ բաներով տարբերվում են, սակայն բոլորի համար ընդունելի են լիբերալ-ժողովրդավարության այնպիսի արժեքներ ու սկզբունքներ, ինչպիսինքն են ժողովրդին որպես իշխանության աղբյուրի ընդունումը, քաղաքացիների իրավահավասարությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը, պետության իշխանության հիմնական մարմինների ընտրովի լինելը, որոշումների ընդունման ժամանակ փոքրամասնության ներառվումը մեծամասնությանը, առանց փոքրամասնության իրավունքները ոտնահարելու, օրենքի գերակայությունը, իշխանության բաժանումը և այլն: Ոմանք նշում են նաև այնպիսի սկզբունքի պարտադիր կիրառման անհրա-

ժեշտությունը, ինչպիսին է անհատի իրավունքի գերակայությունը պետության իրավունքից: Մենք այդ տեսակետը չենք ընդունում, որի մանրամասն բացատրությունը կտրվի հաջորդող ենթավերնագրում:

Հինգերորդ, Ազատական (լիբերալ) ժողովրդավարությունը դիտվում է որպես շարունակվող գործընթաց, որը սկիզբ է առել Անգլիայի և ԱՄՆ-ի վաղ Մահմանադրական շրջանից, շարունակվում է հաստատվել որպես հասարակական կյանքի ժողովրդավարացման հիմնական երաշխիք և միտված է տարածվելու ամբողջ աշխարհում:

Տարբեր ժողովուրդների և պետությունների համար ժողովրդավարական սկզբունքների հաստատումն ու զարգացման հնարավորությունները տարբեր են: Ինքնին հասկանալի է որ վերը շարադրած սկզբունքները սոսկ հայտարարությամբ կյանքում չեն հաստատվում: Դրանց գործնական իրականացման համար որոշակի նախադրյալներ ու երաշխիքներ են անհրաժեշտ: Բավարար չէ միայն ժողովրդավարության սկզբունքների քննչին համապատասխանող օրենսդրություն մշակել: Անհրաժեշտ է նաև ստեղծել այն պայմաններն ու մեխանիզմները, որոնք նարողանալին ապահովել այդ օրենքների իրականացումը: Իսկ դա կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ ձևավորվում է բնակչության քաղաքական կուլտուրայի համապատասխան մակարդակ, երբ քաղաքացիները պատրաստ են պաշտպանելու ժողովրդավարական արժեքները և օգտվել այդ արժեքներից: Ասել է թե, երբ ժողովրդավարության սկզբունքներով ապրելը դառնում է քննչության մեծամասնության սոցիալ-քաղաքական պահանջումը, որի քավարարումն էլ մարդուն մղում է համապատասխան գործունեության, ինչն էլ ինքն գործնականում երաշխավորում է ժողովրդավարության հաստատումը:

Պետք է նշել նաև, որ ժողովրդավարությանը քնորոշ սկզբունքներն ու արժեքները, որոնք չափազանց թագմակողմանի վերլուծության և մշակումների է ենթարկված տեսական հետազոտությունների մակարդակով, իրենց մաքուր ձևով գործնականորեն դեռևս չեն հաստատվել հասարակական կյանքում: Պետությունների, ժողովուրդների զարգացման տարբեր մակարդակների պայմաններում ժողովրդավարության սկզբունքները հաստատվում են այդ պայմաններում ստեղծված հնարավորություններին համապատասխան: Այդ պատճառով էլ աշխարհում առկա են ժողովրդավարության հաստատման տարբեր մակարդակներ և դրսևորման տարբեր ձևեր: Որոշ երկրներում դրանք կայուն հաստատված, հասարակական կորմերի համակարգ դարձած հասարակության կեցության ձև են դարձել և շարժվում են կատարելագործման ուղիով, մյուսներում նրա սկզբունքները միայն կոր են ներդրվում հասարակության մեջ: Սակայն բոլորի համար ընդհանուրն այն է, որ արդի ժողովրդավարական պետությունների գործառնության հիմքում ընկած է ազատական-ժողովրդավարական ընդհանուր սկզբունքները և հասարակության ու անհատական կյանքի հիմնական արժեքների ներքին համաձայնության ընդունումը:

2. Ժողովրդավարության էությունն ու ընթացումը

Հազարամյակներ շարունակ մարդկային միտքը պրպտել ու փորձել է գտնել հասարակության կյանքի կազմակերպման այնպիսի ձևեր ու սկզբունքներ, որոնց կիրառումը հնարավորություն կտար ստեղծելու ներդաշնակ, հակասություններից ու ճգնաժամերից զերծ, քուրդի համար ընդունելի և քոյրի շահերը պաշտպանելու միտված հասարակական հարաբերություններով ձևավորված հասարակություն: Այնպիսի էր ասել, որ այժմ էլ այդ խնդիրը դեռևս վեոչևական լուծումը չի գտել: Սակայն այդ ճանապարհին մարդկային միտքը մեծ հաջողությունների է հասել, և դրանցից ամենաշահնակալիցը ժողովրդավարության գաղափարն էր: Այդ տեսանկյունից դիտարկելով ժողովրդավարությունը կարելի է գնահատել որպես քաղաքական մշակույթի բարձրագույն նվաճում և արժեք: Որպես հասարակական կյանքի կազմակերպման համակարգ ժողովրդավարությունը, ինչպես արդեն նշվել է վերը, հասարակության մեջ ներդրվեց երկու և կես հազար տարի առաջ իր նակական քաղաք պետություններում և իր գոյության 200 տարիների ընթացքում արմատավորվեց որպես հասարակության կառավարման նոր համակարգ, որը անկասկածաբար էր ստրկատիրության պայմաններում հիմնականում դա ժողովրդի անմիջական մասնակցությամբ իշխանության իրականացման առաջին դրսևորումն էր, սակայն, ինչպես ասվեց վերը, որին վիճաբանված չէր երկար գոյատևելու:

17-18 դարերի բռնկված բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունները եվրոպական մի շարք երկրներում նորից կյանքի կոչեցին մեծ երկու հազար տարի մերժված ու մոռացված ժողովրդավարական հարաբերությունները: Հասարակության մեջ տեղի ունեցող տեղաշարժերը, քաղաքական գարգացումները արմատապես վերափոխվեցին հասարակության ողջ քաղաքական, տնտեսական և սոցիալական հարաբերությունների բնույթը: Հա հեղափոխություն էր ոչ միայն հասարակության նշված ոլորտներում, այլև հեղափոխություն էր նախ և առաջ մարդկային մտածողության, մարդկային փոխհարաբերությունների ասպարեզներում: Առաջ քաշվեցին մարդկային ազատությունների, իրավունքների, սոցիալական արդարության, հավասարության, եղբայրության և համերաշխության կարգախոսներ և ձեռնարկվեցին դրանց իրականացման համար անհրաժեշտ քաղաքական կառույցների և պետական հաստատությունների ստեղծման գործընթացներ: Սկիզբ էր դրվել վերածնված ժողովրդավարության սկզբունքների հիման վրա պետական նոր կառույցների և իշխանության իրականացման միանգամայն այլ համակարգի ձևավորման գործընթացի:

Հասարակության գարգացման այդ աստիճանում հասարակական կյանքի բարդացման հետևանքով ժողովրդավարության սկզբունքական ձևը, որը ժողովրդի ուղղակի իշխանություն էր նշանակում, այն էլ քնակության շնչին մասի մասնակցությամբ, չէր կարող բավարարել և լուծում տալ հասարակության առջև ծառայած բարդ խնդիրներին: Եականորեն փոխվում էր իշխան-

ության ձևավորման, պետական մարմինների գործառույթների, քաղաքական կյանքի ժողովրդի մասնակցության սկզբունքներն ու հնարավորությունները: Ժողովրդավարությունը ձեռք էր բերում նոր իմաստ ու բովանդակություն և վերածում էր անբողջ հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական և հոգևոր էությունը ներկայացնող փոխհարաբերությունների ամբողջական համակարգի:

Ժամանակակից քաղաքական գրականության մեջ ժողովրդավարության տեսական վերլուծություններում առկա են տարբեր մոտեցումներ և մեկնաբանություններ: Հրանց արդյունք են այն բանի, որ հասարակության գարգացման տարբեր աստիճաններում, ազգային ավանդույթների ու սովորույթների, քաղաքական գիտակցության մակարդակի, քաղաքական տարբեր համակարգերի պայմաններում ժողովրդավարությունը և՛ որպես իշխանության իրականացման սկզբունքների համակարգ, և՛ որպես պետական կառուցվածքի ձև, և՛ որպես հասարակության քաղաքական կյանքի կազմակերպման համակարգ, և՛ որպես ընդունված քաղաքական մշակույթային արժեք իր ամենատարբեր դրսևորումներն ունի: Եվ քնական է, որ այդ տարբեր դրսևորումները առաջացնում են տարբեր մոտեցումներ և մեկնաբանություններ: Ժողովրդավարության սկզբունքների հաստատման համար որոշակի պայմաններ են անհրաժեշտ: Հասկանալի է, որ տարբեր երկրներում, հասարակության գարգացման տարբեր մակարդակներում այդ պայմանները տարբեր են: Հետևաբար ժողովրդավարության հաստատման հնարավորություններն ու դրսևորման ձևերը, մակարդակներն ու սկզբունքներն էլ են տարբեր լինում, արտացոլելով հասարակության քաղաքական կյանքի իրավական վիճակը, ինչը նույնպես ժողովրդավարության տարբեր մեկնաբանությունների պատճառ կարող է լինել:

Տարբեր մոտեցումները կարող են արդյունք լինել նաև հետազոտողի նախափորձություններից, հետազոտության ուղղվածությունից, կախված այն անից, թե հետազոտողը ժողովրդավարության որ առանձնահատկությունն էր առանձնացրել, ինչն է նրան հետաքրքրում, դրսևորման որ ձևը, որ սկզբունքների գերակայությունն է նրա համար առաջնահերթ և այլն: Գե, որ ժողովրդավարությունը կարող է ուսումնասիրվել որպես քաղաքական մշակույթի բարձրագույն արժեք, որպես պետական կառուցվածքի առանձնահատկ ձև, որպես մարդու ազատությունների և իրավունքների պաշտպանության սկզբունքներ իրականացնող քաղաքական համակարգ և այլն: Եվ ամեն անգամ հենց այդ կողմերի առանձնացմամբ էլ կարող է պայմանավորված լինել ժողովրդավարության բնորոշումը:

Ժողովրդավարությունը որոշակի սկզբունքների և նորմերի հիման վրա հասարակության կառուցվածքում իրականացնող իշխանության ձև է, որոնց մեջ առաջնային նշանակությունը ունեն:

ա/ Իշխանության ձևավորման սկզբունք: Ժողովրդավարության հաստատման կարևորագույն պայմաններից մեկը իշխանության ձևավորման արթի լուծումն է: Որպեսզի իշխանությունը դառնա ժողովրդի շահերի ար-

տահայտիչ ու պաշտպան, նա պետք է կազմավորվի ժողովրդի կողմից: Ժողովրդավարությունը, ժողովրդի իրական իշխանությունը սկսվում է այն պահից, երբ հասարակության մեջ արմատապես փոխվում են իշխանության ձևավորման սկզբունքները, երբ ժողովուրդը հնարավորություն է ստանում անմիջական մասնակցություն ունենալով հասարակության կյանքում տեղի ունեցող գործընթացներին, իր ներկայացուցիչներից ձևավորել իշխանության մարմիններ: Դա տեղի է ունենում համընդհանուր ընտրությունների միջոցով, որի ընթացքում ժողովուրդը կամքի ազատ դրսևորմամբ իր ներկայացուցիչներից ձևավորում է իշխանության մարմիններ, նրանց լիազորելով տնօրինել իր կամքն ու պաշտպանել իր շահերը:

բ/ Իշխանության արդյուքը ժողովուրդն է: Ժողովրդավարական պետության մեջ միայն ժողովրդին է իրավունք տրված ձևավորելու սահմանադրական, օրենսդիր իշխանություն և այդ իշխանությունը միայն նրան է պատկանում: Ընտրելով իր ներկայացուցիչներին, ժողովուրդը իրավասու է նրանց պարբերաբար փոխել, իսկ մի շարք երկներում ժողովուրդը իրավունք ունի նաև անմիջական մասնակցություն ունենալ օրենքների մշակմանն ու ընդունմանը, ինչպես իր նախաձեռնությունների, այնպես էլ հանրաքվեների միջոցով:

Ընտրվելով ժողովրդի կողմից, նրա ներկայացուցիչները պարտավորվում են մշակել, ընդունել և իրականացնել ժողովրդի կամքին համապատասխան և նրա շահերն արտահայտող օրենքներ և որոշումներ: Զանր որ իշխանությանը այդպիսի օրենքներ և որոշումներ ընդունելու իրավունքը տվել է ժողովուրդը, ապա դա թույլ է տալիս ասելու, որ ժողովուրդն է իշխանության արքյուրը, այսինքն՝ նրանից է բխում հասարակության կյանքի կազմակերպման, հասարակության զարգացման համար անհրաժեշտ օրենքների և որոշումների ընդունման իրավունքը:

գ/ Ժողովրդի կամքը բարձրանում է օրենքի աստիճանի և պարտադիր է բոլորի համար:

Ընդունած օրենքները միտված լինելով հասարակության առաջընթացին, ժողովրդի շահերի պաշտպանությանը, դրանով իսկ դառնում է նրա կամքի արտահայտման իրական դրսևորում: Զանգի ժողովրդի քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլն իրավունքները հնարավոր է լրիվ պաշտպանել միայն նորմալ զարգացած հասարակության պայմաններում: Գետևաբար, ժողովրդի կամքին համապատասխանող օրենքների ընդունումը, դառնալով հասարակության զարգացման անհրաժեշտ պայման, պարտադիր լինելով հասարակության բոլոր անդամների համար, այլ բան չի, քան ժողովրդի կամքի բարձրացումը օրենքի աստիճանի:

դ/ Իշխանությունը պատասխանատու է միայն ժողովրդի կամ նրա կամքը արտահայտող օրենքի առջև: Ժողովրդի կամքին համապատասխանող օրենքների ընդունումը իրական նշանակություն և արդյունք են ունենում այն ժամանակ, երբ դրանք իրականացվում են, երբ դրանք մարմնավորվում են հասարակության կյանքում: Ցանկացած հասարակության մեջ օրենքների

իրականացման գործընթացներում վճռական դերը պատկանում է ժողովրդին: Որքանով այդ օրենքները ընդունելի են հասարակության մեծամասնության համար, այդքանով էլ նրանց իրականացման գործընթացը արդյունավետ և իրական է լինում: Գասարակության կյանքում առաջացած հակասությունների և ճգնաժամերի առաջացման հիմնական պատճառներից մեկը եղել է հասարակության մեծամասնության շահերը ունահարող օրենքներն ու իշխանությունների կամայականությունները: Բոլոր ժամանակներում ժողովուրդները տիրապետողների դեմ պայքարի են դուրս ելել հենց այն պատճառով, որ, կամ գործող օրենքները չեն համապատասխանել նրա շահերին, կամ իշխանությունները իրենց կամքը պարտադրելով ժողովրդին, դարձել են անօրինականությունների հիմնական հեղինակներ: Ժողովրդավարության պայմաններում ժողովուրդը լայն հնարավորություն է ստանում ոչ միայն ձևավորել իր կամքն ու շահերը պաշտպանող իշխանություն, այլև ուղղակի հսկողություն իրականացնել իշխանության գործունեության վրա, դրանով իսկ նպաստելով և՛ իր կամքին համապատասխանող օրենքների ընդունմանը, և՛ դրանց հասարակության կյանքում իրականացմանը: Որքանով ժողովուրդը շատ է շահագրգռված լինում օրենքների իրականացման մեջ, այնքանով ավելի մեծ ակտիվություն է դրսևորում նա իշխանության գործունեության վրա հսկողություն իրականացնելիս: Ժողովուրդը իրավասու է իշխանություններից պատասխան պահանջել նրա գործունեության համար և իշխանությունները պարտավոր են պատասխանատու լինել՝ ժողովրդի առջև, եթե ցանկանում են արժանանալ նրա վստահությանը: Գե որ, նրանց ընտրում և լիազորում է ժողովուրդը:

Ժողովրդավարության առանձնահատկությունների տարբեր մոտեցմամբ վերլուծությունների հետևանքով հանդիպում ենք տարբեր համառոտ բնորոշումների: Դրանցից են.

1. Ժողովրդավարությունը անվանում են քաղաքական կամ սոցիալական համակարգ, որն իր առջև խնդիր է դրել հնարավորինս մեղմելու հասարակության մեջ եղած սոցիալական և տնտեսական հակասություններն ու տարբերությունները:
2. Ժողովրդավարությունը կառավարման ձև է, որի դեպքում քաղաքական որոշումները ընդունելու իրավունքը իրականացվում է բացառապես բոլոր քաղաքացիների կողմից, մեծամասնության կառավարման իրավունքը պահպանումը կիրառելով որպես սկզբունք: Այդպիսի կառավարման ձևը անվանում են նաև անմիջական ժողովրդավարություն:
3. Ժողովրդավարությունը կառավարման ձև է, որի ժամանակ քաղաքացիները իրենց իրավունքները իրականացնում են իրենց ներկայացուցիչների միջոցով: Այն անվանում են ներկայացուցչական ժողովրդավարություն կամ ժողովրդի ներկայացուցիչների իշխանություն, որը ձևավորվում է ժողովրդի մեծամասնության ազատ կամքի դրսևորմամբ իրականացած ընտրությունների միջոցով և հսկվում է նրա կողմից:

4. Ժողովրդավարությունը կառավարման ձև է, որտեղ մեծամասնության իշխանությունը իրականացվում է սահմանադրական սահմանափակումների միջոցով, և որը փոքրամասնությանը երաշխավորում է խոսքի, խղճի, դավանանքի և այլն ազատություններ: Այդպիսի ժողովրդավարությունը հասնարվում է ազատական կամ սահմանադրական:

5. Ժողովրդավարությունը փոքրամասնության իրավունքները հարգող մեծամասնության իշխանություն է:

6. Ժողովրդավարությունը քաղաքական համակարգ է, որի ժամանակ ժողովուրդը բավականաչափ ընդունակություն ունի փոխելու ղեկավարությանը, բայց բավականաչափ ընդունակություն չունի ինքն իրեն կառավարել:

3. Ժողովրդավարական քաղաքական համակարգի հիմնական սկզբունքներն ու նորմերը

Ժողովրդավարորեն կազմակերպված հասարակությունում քաղաքական կյանքը գնալով աճելի բարդանում ու բազմազան է դառնում: Հասարակության քաղաքական կյանքը անընդհատ զարգանում և կատարելագործվում է: Այդ զարգացումները նպաստավոր պայմաններ են ստեղծում քաղաքական կյանքին բնակչության ազլելի (այն խավերի մասնակցության համար: Քաղաքական գործունեության ձևեր են դառնում զանգվածային քաղաքական ձեռնարկումները, ընտրական գործընթացները, միտինգներն ու ցույցերը, գործադուլներն ու անհնազանդության այլ ձևեր:

Պատմության երկարատև զարգացման ընթացքում մշակվել են հասարակական կյանքի կազմակերպման որոշակի նորմեր ու սկզբունքներ: Այդ նորմերի և սկզբունքների իրականացման շնորհիվ հասարակության քաղաքական կյանքը դառնում է աճելի կայուն, հնարավորություն ստեղծելով հասարակության հետագա առաջընթացի համար:

ՄԱԿ-ի կողմից 1948 թվականին ընդունած մարդու իրավունքների համընդհանուր իռչակագրում արձանագրված են մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմերի և սկզբունքների հիմնական դրույթները:

• **Անհատական իրավունքների բնագավառում** ընդունվում է յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունքը, ազատությունը, անձի անձեռնամխելիությունը, գաղտնի կամակագրության - խոսակցության իրավունքը, բնակարանի անձեռնամխելիության իրավունք, օրենքի առջև բոլորի հավասարությունը և այլն:

• **Քաղաքացիական իրավունքների բնագավառում** արձանագրված է ազատ տեղաշարժելու և բնակության տեղ ընտրելու իրավունքը, համոզմունքի, քաղաքացիություն ստանալու, ամուսնանալու և ընտանիք կազմելու, սեփականություն ունենալու իրավունք և այլն:

• **Քաղաքական իրավունքների և ազատությունների բնագավառում** ընդունվում է մտքի, խղճի, դավանանքի ազատություն, սեփական տեսակետ ունենալու և այն ազատ արտահայտելու իրավունք, ընտրելու և ընտրվելու իրավունք, քաղաքական կազմակերպության անդամ լինելու, միտինգների և ցույցերի մասնակցելու իրավունք, իշխանության ձևավորմանը և կառավարմանը մասնակցելու իրավունք և այլն:

• **Տնտեսական բնագավառում** մարդիկ ունեն սեփականատեր, գործարար լինելու իրավունք, ազատ և անվտանգ աշխատանքի իրավունք, աշխատանքի և մասնագիտության ազատ ընտրության իրավունք, հավասար աշխատանքի դեպքում հավասար վարձատրության իրավունք և այլն:

• **Առողջապահ ոլորտում** արձանագրված են մարդու արժանավայել կենսամակարդակ ունենալու, կրթության, առողջապահության պաշտպանության, սոցիալական ապահովության, հանգստի իրավունք և այլն:

• **Հոգևոր բնագավառում ընդունվում է** մտավոր սեփականության պաշտպանության, ազատ ստեղծագործելու իրավունք, սեփական գաղափարները ազատ արտահայտելու և դրանց պաշտպանելու իրավունք:

Հասկանալի է, որ հռչակագրում մարդու ազատությունների և իրավունքների արձանագրումը դեռևս բավարար չի դրանք կյանքում իրականացված համարելու համար: Անհրաժեշտ է մշակել համապատասխան օրենսդրություն և ապահովել նրա իրականացումը: Չրա հետ միասին հարկ է ձևավորել բնակչության քաղաքական կուլտուրայի այնպիսի մակարդակ, որ կրանց պատրաստ լինեն պաշտպանելու ժողովրդավարական արժեքները, իրավունքներն ու ազատությունները:

Ժողովրդավարության կարևորագույն արժեքներից է մարդկանց հավասարության սկզբունքի ընդունումը: Հավասարություն առելով չափոք է հասկանալ մարդկանց նույնացում կամ կրանց միջև ամեն ինչում հավասարության նշան դնել:

Ինչպես հայտնի է, մարդիկ բաժանված են տարբեր ռասսաների, ազգությունների, դասակարգերի, իրարից տարբերվում են դավանանքով, սեկսայն այս բոլորով հանդերձ նրանց մարդ են մնում և բոլորը հավասար են ստանձ առջև: Մյուս կողմից այդ տարբերակիչ հատկությունները չեն կարող պատճառ լինել մարդկանց քաղաքական և քաղաքացիական իրավունքների և ազատությունների անհավասարության համար: Մարդիկ իրարից տարբերվում են ընդունակություններով և կարողություններով, և դրանք դրսևորելու հնարավորությամբ: Ահա հենց այս տարբերություններն էլ կարող են իրական անհավասարության պատճառ լինել մարդկանց տնտեսական, սոցիալական և հոգևոր բնագավառներում: Ժողովրդավարությունը ենթադրում է այդպիսի անհավասարություն, քանզի արդար չէր լինի տարբեր ընդունակությունների և կարողությունների տեր մարդկանց հավա-

սար զարձատրել, և զոկել մարդուն ըստ իր ընդունակությունների արժան կյան գեանատվելու իրավունքից, որը շատ ավելի մեծ անարդարություն է:

Բանն այն է, որ հավասարության մասին խոսելիս, նկատի է առնվում բոլոր մարդկանց ընդունակությունների և կարողությունների դրսևորման համար օրենսդրորեն կարգավորված հավասար պայմանների և հնարավորությունների ստեղծումը: Եթե բոլոր մարդիկ ունենալին հավասար ընդունակություններ, ծնվելին միևնույն բարենպաստ պայմաններում, ստանալին հավասար կրթություն, այն ժամանակ, գուցե և, բոլորի համար հավասար պայմաններ ստեղծելով, հնարավոր լինի հասարակության մեջ ազդեցական արդարություն հաստատել: Դրա հետ միասին, պետք է նշել նաև այն իրողությունը, որ մարդկանց միջև շատ տարբերություններ հնարավոր չէ վերացնել միայն բոլորի համար հավասար օրենքների հաստատմամբ: Մակայն այդ օրենքները կարող են մեղմել, նվազեցնել այդ տարբերությունները և հավասար պայմաններ ստեղծել բոլորի համար ստեղծված հնարավորություններից օգտվելու համար:

Պլյուրալիզմն ունեցող ժողովրդավարության քաղմաթիվ տեսություններից ամենատարածվածը պլյուրալիստական (քաղմագանություն, քաղմակարծություն) տեսությունն է: Ըստ այդ տեսության ժողովրդավարական պետության մեջ քաղաքականության հիմնական շարժիչ ուժը ո՛չ ժողովուրդն է, ո՛չ էլ անհատը: Այդպիսի ուժ է համարվում սոցիալական խումբը (դասակարգը, միությունը, կազմակերպությունը, կուսակցությունը և այլն): Սոցիալական խմբի միջոցով անհատը հնարավորություն է առանում արտահայտելու և պաշտպանելու իր շահերը: Պլյուրալիզմի տեսության ներկայացուցիչներն էին Ջենտլին, Ռոլլեյսը, Մեդիսոնը, Գ. Լասկին, Է. Բերնշտեյնը և այլք: Ըստ էության, պլյուրալիզմը առաջացավ լիբերալիզմի գաղափարների հիմքի վրա, սակայն առաջ անցնելով նրանից, փորձեց հաղթահարել լիբերալիզմի գաղափարախոսության մեջ, միակողմ մեկնաբանությունը անհատի իրավունքի գերակացության ընդունման առումով: Ի տարբերություն լիբերալիզմի դասական ըմբռնման, որտեղ հասարակության կյանքի գլխավոր սուբյեկտը համարվում էր առանձին ազատ անհատը, պլյուրալիզմը այդպիսի սուբյեկտ է համարում հասարակական խումբը, իսկ անհատների շահերի պաշտպանության համար նրանց միջև մղվող մրցակցության փոխարեն ընդունվում է սոցիալական և քաղաքական ուժերի ազատ մրցակցության գաղափարը: Մակայն այդ ազատ մրցակցությունը պետք է տեղի ունենա բոլորի կողմից ընդունված «խաղի կանոնների» հիման վրա և նրանց միջև ծագած հակասությունները, քաղաքական արայքարը և այլն, պետք է լուծվեն հենց այդ ընդունված կանոնների համաձայն, բացառելով որևէ տեսակի բռնություն: Այն ենթադրում է ընդդիմության կարծիքի նկատմամբ համբերատարություն և հարգանք, համաձայնություն և փոխզիջումների գնալու պատրաստակամություն, հարգանք օրենքների, մարդու իրավունքների և ընդհանրապես ժողովրդավարության կարգերի հանդեպ:

Պլյուրալիստական ժողովրդավարության հիմնական հասկանիչներն են.

1. Այն շահագրգիռ խմբերին, որոնք երաշխավորում են անհատի շահերի, ազատությունների և իրավունքների պաշտպանությունը, ընդունել որպես ժողովրդավարական քաղաքական համակարգի գլխավոր տարրեր, հիմնական բաղադրիչներ: Ինչպես տեսնում ենք, չնայած չի մերժվում անհատի կարգավիճակը որպես իշխանության առաջնային սուբյեկտի, այնուհանդերձ, անհատի դերը խմբի համեմատությանը դարձնում է երկրորդական:

2. Խմբակային շահերի մրցակցությունն ու հավասարակշռությունը դիտարկել որպես ժողովրդավարական իշխանության սոցիալական հիմք, որպես նրա զարգացման անհրաժեշտ պայման, որպես հասարակության առաջնթացի երաշխիք:

3. Ի տարբերություն դասական լիբերալիզմի, պլյուրալիզմը ենթադրում է պետության գործունեության ոլորտների նշանակալի ընդարձակում, այն դիտելով որպես ամբողջ հասարակության ինքնակառուստումն երաշխավորող և մրցակցող շահերի միջև հավասարակշռություն ապահովող կարևորագույն մարմին, որպես արբիտր: Այսօր ամբողջ աշխարհում հասարակության մեջ տեղի ունեցող զարգացումները ապացուցում են պետության դերի բարձրացման անհրաժեշտությունը:

4. Պլյուրալիստական ժողովրդավարության կարևորագույն խնդիրներից մեկը հասարակության մեջ ժողովրդավարական մշակութային արժեքների և դրանց նկատմամբ պահանջմունքների ձևավորումն է: Ժողովրդավարական մշակույթի ձևավորումը դիտվում է որպես խմբային շահերի միջև տեղի ունեցող պայքարը քաղաքակիրթ ճանապարհով լուծելու անհրաժեշտ պայման, որպես ծագած հակասությունների և ձգնաձյների համեմատաբար սրանց հիվանդագին դրսևորումների լուծման ուղի:

5. Դեմոկրատիան պաշտպանում է սոցիալապես ճնշված խմբերին և անհատներին, նպատակ ձևենալով նրանց կենսամակարդակը բարձրացնելով, ապրելու պայմաններ ապահովելով լուծել ազդեցական արդարության ինդիքներ:

Կան ժողովրդավարության այնպիսի տեսություններ, որոնք մի փոքր այլ մտայնմամբ, սակայն հիմնականում հարում են պլյուրալիստական ժողովրդավարության սկզբունքներին: Դրանցից է Ըվեդիայում կիրառվող ժողովրդավարության համաձայնողական մոդելը, որը ենթադրում է մեծամասնության մասնակցության սկզբունքի և շխանության իրականացմանը համաձայնորեն քաղաքական, կրոնական և ազգային խմբերի մասնակցության սկզբունքի հիման վրա կառույալման համակարգի ձևավորում: Դրա հիմնական իմաստն այն է, որ ժողովրդավարական կառավարման համակարգում բացառվի մեկ արտոնյալ խմբի (էլիտայի) իշխանությունը և հնարավորություն ստեղծվի տարբեր քաղաքական, կրոնական, էթնիկական խմբերից համամասնորեն իշխանախմբեր ստեղծելու համար, որոնք իրար հետ ազատորեն մրցակցում են ընտրողների ձայները նվաճելու, նրանց վստահությունն արժանանալու համար:

ժողովրդավարության հիմնարար սկզբունքներից է մեծամասնության սկզբունքը, որը ժողովրդական ինքնուրույնության էությունն է, ինչի շնորհիվ էլ ժողովուրդը հայտարարում է իշխանության աղբյուր:

Մեծամասնության սկզբունքը իրականացվում է երկու ուղղակի և ներկայացուցչական ժողովրդավարության ձևով:

Ուղղակի կամ անմիջական ժողովրդավարության կողմնակիցները պնդում են, որ իրական ժողովրդավարությունը կարող է լինել միայն կառավարմանը ժողովրդի անմիջական մասնակցության ժամանակ, որի դեպքում նրա շահերն ու կամքի պաշտպանության հնարավորությունները ավելի մեծ են: Այս տեսակետի կողմնակիցների ակտիվ անմիջական ժողովրդավարությունը ելնում է նրանից, որ ժողովրդավարական պետության մեջ ժողովրդի կամքն ու պետական իշխանությունը պետք է նույնական լինեն: Անմիջական ժողովրդավարության առավելություն է համարվում այն, որ նա ամբողջապես ապահովում է իշխանության օրինականությունը, հաղթահարում է քաղաքական կյանքից քաղաքացիների օտարումը, քաղաքական համակարգին հաղորդում է ավելի կայուն բնույթ, քանզի իշխանությունները գտնվում են ժողովրդի անմիջական հսկողության տակ, ինչը իշխող էլիտային թույլ չի տալիս չարաշահելու իշխանությունը, և օտարվելու ժողովրդից:

Այս տեսակետի հակառակորդները թվարկելով անմիջական ժողովրդավարության թերությունները, նշում են, որ անմիջական ժողովրդավարության պայմաններում ցածր է ընդունված որոշումների արդյունավետությունը, ինչը հետևանք է պաշտոնատար անձանց ոչ բավարար մասնագիտական ունակությունների, քանզի կարևորագույն որոշումները ընդունվում են որևէ կերպ չհսկվող և ոչ մի պատասխանատվություն չկող լայն շրջանակ ներկայացուող ոչ մասնագետ, անիրազեկ պաշտոնատարների կողմից: Ըստ նրանց, այս պարագայում առաջանում է անբողջատիրության կամ ավտորիտարիզմի առաջացման վտանգ, հավասարության ինչպիսի ոտնահարում են մարդկանց ազատություններն ու իրավունքները: Որպես թերություն է համարվում նաև այն, որ անհնարին է առանց պարտադրանքի քաղաքացիների մեծամասնությանը պարբերաբար մասնակից դարձնել կառավարմանը, որովհետև բնակչության մեծամասնությունը չի ցանկանում կամավոր զբաղվել քաղաքականությամբ, նույնիսկ ընտրություններին չի ցանկանում մասնակցել և այլն:

Ներկայացուցչական ժողովրդավարության կողմնակիցները ժողովրդավարությունը հասկանում են որպես ժողովրդի առջև պատասխանատու ներկայացուցչական կառավարման համակարգ: Այս դեպքում ներկայացուցչական իշխանության կրողը համազգային պաշտամեծուն է, ինչպես նաև այլ օրենսդրական, ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մարմինները: Դրանք արտահայտում են տարբեր դասակարգերի, սոցիալական խմբերի, քաղաքական խմբավորումների և արհեստակցական խմբերի շահեր, որոնցից կազմավորված է անբողջ հասարակությունը:

Ժամանակակից ժողովրդավարական հասարակության մեջ պետական քաղաքականությունը հիմնականում ձևավորվում է ներկայացուցչական

հաստատություններում, որտեղ աշխատում են բանխմաց քաղաքական գործիչներ և կառավարողներ, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված է արդի տնտեսական, սոցիալական, քաղաքական խնդիրների բարդ ու քաղմակողմանի դրսևորումներով և դրանց լուծման համար անհրաժեշտ ընդունակություններ ու ունակություններ ունեցող մասնագետների ընտրությամբ: Այս դեպքում ժողովրդի կամքը չի նույնացվում իշխանությանը նրա անմիջական մասնակցության հետ: Այստեղ ժողովրդի կամքն արտահայտվում է նրա ներկայացուցիչների միջոցով, որոնք ժողովրդից ընտրված ստանալով իրավասու են ինքնուրույն որոշումներ կայացնել: Ժողովրդի և նրա ներկայացուցիչների միջև հարաբերությունը կառուցվում է վստահության, հսկողության վրա և իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունների սահմանադրական սահմանափակումների հիմքի վրա, ինչը իշխանություններին օրենքի շրջանակներում դարձնում է անկախ:

Ներկայացուցչական ժողովրդավարության հիմնական արժանիքներից է ազատ հասարակության ստեղծումը և հասարակական խնդիրների լուծման բարձր արդյունավետությունը: Դա երաշխավորում է հասարակության մեջ քաղաքական կայունություն և կարգ ու կանոնի հաստատում, պաշտպանում է հասարակությանը համընդհանուր համահավասարեցման վտանգից և այլն:

Իհարկե ներկայացուցչական ժողովրդավարությունը նույնպես զերծ չի թերություններից: Դրանցից կարելի է առանձնացնել.

ա) իշխանությունից ժողովրդի փաստացի մեկուսացումը, որը նախանց է ժողովրդավարությունից:

բ) իշխանության բյուրոկրատացման անխուսափելիությունը, ինչը կրում է պատգամավորներին և պաշտոնավորներին հասարակ ժողովրդից:

գ) Ավելի մեծ ինարավորություն է ստեղծվում պաշտոնատար անձանց կաշառելու, առավել հզոր ուժերի կողմից նրանց գնելու համար:

դ) Պետության մեջ աճում է ավտորիտար կառավարման սկզբունքների հաստատման վտանգը, որը աստիճանաբար սահմանափակում է օրենսդիր և գործադիր իշխանությունների անկախ գործունեության հնարավորությունները:

ե) Մեծ հնարավորություն է ստեղծվում քաղաքական խաղերի համար, որի հետևանքը շատ հաճախ դրսևորվում է մեծամասնության շահերը ունախարող օրենքների և որոշումների ընդունման ձևով, որը հետևանք է բարդ, բազմաստիճան իշխանության համակարգի:

զ) Ժողովրդավարության ներկայացուցչական ձևի պայմաններում իշխանության հիմնական կառուցվածքը ենթադրում է ընտրող-պաշտամեծուն կառավարություն վարչապետ կամ նախագահ մեխանիզմի կիրառում, որի ժամանակ իշխանությունները ընդունում են ըստ իրենց հայեցողության որոշումներ, որոնք որևէ կապ չունեն քաղաքացիների շահերի պաշտպանության հետ, իսկ երբեմն էլ, հակադրվում են նրան:

Այս բոլոր թերությունները չպետք է դիտել որպես ներկայացուցչական ժողովրդավարության բնածին արատներ, այսինքն, որ դրանք անխուսափելիորեն պետք է լինեն: Այդ թերությունները ավելի շատ արդյունք են այն բանի, որ ժողովրդավարությունը որպես այդպիսին դեռևս վերջնականապես չի հաստատվել հասարակության կյանքում: Եվ նրա թեր հաստատված, թերկայացած վիճակը ենթադրում է բազում թերություններ:

4. Ժողովրդավարական ինստիտուտները և նրանց գործառույթների հիմնական ստանձնահատկությունները

Ժողովրդավարական ինստիտուտները այն անհրաժեշտ հաստատություններն ու կառույցներն են, որոնց միջոցով հասարակության մեջ ձևավորվում, իրականացվում և հաստատվում են ժողովրդավարության նորմերն ու սկզբունքները: Ժողովրդավարության կենտրոնական ինստիտուտը ազատ ընտրություններն են, որին մասնակցում են ընտրելու իրավունք ունեցող քուրք քաղաքացիները: Ընտրությունների ընթացքում ժողովրդի կամքի ազատ դրսևորման ապահովումը դիտվում է որպես ժողովրդավարության կառավարման ձևի պահպանման անհրաժեշտ պայման:

Ժողովրդավարությունը ելնում է նրանից, որ բոլոր նրանք, ովքեր վերահսկում են քաղաքական իշխանության կառույցները, պետք է պարբերաբար, խիստ սահմանված ժամկետներում վերընտրվեն և պատասխանատվություն կրեն իրենց ընտրողների առջև: Ընտրողներին պետք է հնարավորություն տրվի կազմակերպել, ստեղծել իրենց կազմակերպությունները և նրանց միջոցով պաշտպանել իրենց շահերը: Այստեղից էլ ձևավորվում է ժողովրդական ներկայացուցչական համակարգի վերաբերյալ գաղափարների ժամանակակից ըմբռնումներ, որոնց համապատասխան իշխանության ներկայացուցչական մարմինները ընտրվում են ոչ թե ընդմիջտ, այլ սահմանադրության մեջ հստակ արձանագրված ժամկետով: Դրա հիմնական նպատակը նաև այն է, որ հնարավոր լինի կյանքում մարմնավորել «ոչ ո՞ք չպետք է տիրի իշխանությունը ամբողջությամբ» ժողովրդավարության սկզբունքը:

Ինքնին հասկանալի է, որ վերը նշված տեսական դրույթները, նորմերն ու սկզբունքները հասարակության մեջ դեռևս վերջնականապես չեն հաստատվել: Զաղաքացիների լրիվ իրավահավասարությանը կարելի է հասնել այն ժամանակ, երբ հասարակության մեջ հաստատվի իրավական, սոցիալական պետություն, քաղաքացիական հասարակություն և հասարակության կյանքի բոլոր բնագավառներում հաստատվի ժողովրդավարական սկզբունքներին համապատասխանող օրենքի գերակայությունը: Դեռևս այդպիսի պետությունն է դառնալու ժողովրդավարական հասարակության գլխավոր ուժը, որը ընդունակ է երաշխավորելու քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, պաշտպանելու անհատին կառավարողների ամեն տեսակ կամայականություններից և անօրինություններից: Իրավական պետության գործունեության հիմքում ընկած է սահմանադրականության սկզ-

բունքը, որի համապատասխան սահմանադրական և այլ իրավական նորմերը հասարակության մեջ գործում են անկախ կառավարությունների, դեկավարության կամ իշխանության մարմինների փոփոխություններից:

Սահմանադրականության հիմնական գաղափարը իշխանության քաժանումն ու սահմանափակումն է, առանց որի անհատների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը լիակատար լինել չի կարող: Այդ է, թերևս, պատճառը, որ զրեթե բոլոր երկրների սահմանադրություններում արձանագրված է իշխանության հիմնական մարմինների քաժանման, և նրանց փոխհարաբերությունների սկզբունքները: Ժողովրդավարական սահմանադրությունը կոչված է իրականացնելու հետևյալ ֆունկցիաները

ա) արտահայտում է ժողովրդի համաձայնությունը պետության կառուցվածքի վերաբերյալ:

բ) արձանագրում է կառավարման որոշակի ձևի առկայությունը:

գ) կառավարությանը օժտում և միաժամանակ սահմանափակում է իշխանության իրավասությամբ:

Սահմանադրության մեջ սահմանափակման սկզբունքի կիրառումը նշանակալից տեղ է գրավում և դառնում է իշխանության գործունեության հիմնական ուղեցույցը: Կառավարվողներին տրվում են բոլոր երաշխիքները կառավարողների կամայականություններից ազատ լինելու համար: Ե՛վ իշխանության մարմինները, և՛ մտողիկ պետք է ենթարկվեն միայն օրենքների:

Ժողովրդավարական հասարակությանը բնորոշ է բազմակուսակցական համակարգի առկայությունը: Բոլոր օրինական քաղաքական կուսակցությունները գտնվում են հավասար իրավա-քաղաքական պայմաններում և պայքարում են ինչպես իրենց ընտրազանգվածը ունենալու, այնպես էլ իշխանության տարբեր մարմիններում իրենց ներկայացուցիչներն ունենալու, համար: Զաղաքական կուսակցությունների վերաբերյալ ավելի մանրամասն վերլուծություն կտրվի հաջորդ քաժնում: Այստեղ նշենք միայն, որ քազմակուսակցական քաղաքական համակարգը ժողովրդավարության կարևորագույն ինստիտուտներից և քաղաքական նվաճումներից մեկն է:

Ժողովրդավարության մյուս կարևորագույն ինստիտուտներից են տեղական ինքնակառավարման մարմինները: Ժողովրդավարության պայմաններում պետության կառուցվածքի մեջ նշանակալից դեր են կատարում տեղական ինքնակառավարման մարմինները: Իշխանության տարբեր մակարդակներում իրավասությունների սահմանափակման արդյունքում, տեղական իշխանության մարմինները, հատկապես այն երկրներում, որտեղ ժողովրդավարությունը կայուն հաստատվել է, ձեռք են բերել ինքնակառավարման իրական հնարավորություն, օժտված են իրական իշխանությամբ: Զաղաքացիների ամենօրյա կյանքի հետ կապված շատ խնդիրներ լուծվում են իենց տեղական իշխանության մարմինների միջոցով:

Ժողովրդավարությունը խստորեն կապված է տարբեր հասարակական ուժերի ակտիվ գործունեության դրսևորման հետ: Դրանք կամավոր միավոր-

վում են տարբեր կազմակերպությունների, միությունների մեջ, որոնք մեծ ազդեցություն են թողնում հասարակական կյանքի քաղաքական զարգացումների վրա: Այդ կազմակերպությունները ինքն գործունեությամբ նպաստում են քաղաքացիների մասնագիտական, սոցիալական, հոգևոր և այլն շատ պահանջմունքների բավարարմանը: Դրանք գործունեությունը առավել արդյունավետ է դրսևորվում տեղական կառավարման համակարգի շրջանակներում:

**5. Ժողովրդավարության դրսևորման հիմնական ձևերը
ժողովրդավարության և լիբերալիզմի փոխհարաբերությունը**

Այսօր համամարդկային քաղաքական զարգացման ուղղվածությունը հասարակության ժողովրդավարացումն է: 17-18 դարերից ծնունդ առած արդի ժողովրդավարությունը, որը դեռևս որևէ երկրում վերջնական հաստատված համարել չի կարելի, իր կայացման ընթացքում ենթարկվել է քաղում փորձությունների, հարմարվելով տվյալ հասարակության զարգացման մակարդակին, նրանում հաստատված, արմատավորված և իշխող ավանդույթներին, սովորույթներին, բարքերին ու հոգեբանությանը: Դրանք պատճառ են դարձել, որ տարբեր երկրներում ժողովրդավարությունը իր առնաձեռնադաստուկ դրսևորումներն ունենա, ինչպես քոլանդակային, այնպես էլ ժամանակային առումով:

Ուշադրությամբ հետևելով համաշխարհային քաղաքական զարգացումներին, վերլուծելով տարբեր երկրներում հաստատված պետական կառուցվածքները, հասարակական կյանքի կազմակերպման ձևերը, իշխանության իրականացման սկզբունքները, հասարակական կառուցվածքների, մարդկային հանրույթների, սոցիալական խմբերի միջև հաստատված փոխհարաբերությունների բնույթը և վերջապես տվյալ հասարակության մեջ ընդունված և կիրառվող օրենքների բնույթն ու բովանդակությունը կարելի է առանձնացնել ժողովրդավարության դրսևորման հետևյալ հիմնական ձևերը.

1. լիբերալ-բուրժուական,
2. լիբերալ-ժողովրդավարություն,
3. ժողովրդավարություն:

Դրանցից յուրաքանչյուրը կարող է իր դրսևորման առանձնահատկություններն ունենալ:

Ձանի որ ժողովրդավարության էության և հիմնական սկզբունքների մասին արդեն խոսվեց վերը, այստեղ քննարկման առարկա դարձնենք մյուս երկու ձևերը:

Լաիս փորձենք պարզաբանել լիբերալիզմի էությունը, ուղղվածությունն ու կապը ժողովրդավարության հետ:

Լիբերալիզմը-պետության և հասարակության նկատմամբ անհատի իրավունքների և ազատությունների գերակայությունն ընդունող գաղափարախոսություն է: Այն ծագեց որպես հասարակության զարգացման անհրաժեշտ

արդյունք 17-րդ դարի վերջերին: Գոյություն ունեցող Ֆեոդալական կարգերի ընդերքում ձևավորվել էր ունևորների, գործարարների մի խավ, որը սակայն զրկված էր ազատ գործելու, քաղաքական կյանքին մասնակցելու և իր շահերը պաշտպանելու իրավունքից: 17-18 դարերի բուրժուական հեղափոխությունների հիմնական նպատակը, որոնք տեղի ունեցան Եվրոպական մի շարք երկրներում, հենց այդ ազատությունների և իրավունքների ձեռքբերումն էր: Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսքը վերաբերում էր բուրժուական ազատությունների նվաճմանը, ինչին էլ 1688 թվականին հասավ Անգլիայի բուրժուազիան, համաձայության գալով արիստոկրատիայի հետ համատեղ իշխանություն կազմելու գործում: Այսպես ծնվեց Մահմանադրական միապետությունը Անգլիայում, որի ակնառու գաղափարախոսն էր Ջ. Լոկկը:

Այսպիսով լիբերալիզմը ծնվեց որպես փոքրամասնության, անհատի, իսկ ամենից առաջ ունևոր դասի շահերը արտահայտող գաղափարախոսություն՝ ի հակակշիռ ժողովրդավարության: Ժողովրդավարությունը դիտելով որպես մեծամասնության իշխանություն, լիբերալիզմի ներկայացուցիչները (Լոկկ, Մոնտեսքյու, Թոկվիլ) գտնում էին, որ այն ոտնահարում է փոքրամասնության իրավունքներն ու ազատությունները, հասարակությանը տանում է դեպի համահավասարացման և զրկում է անհատին ազատ ձեռնտերեցության հնարավորությունից: Լիբերալիզմը հակված է երաշխավորել միայն անհատի ազատությունը և օրենքի առջև բոլորի ձևական հավասարությունը, բայց ոչ քաղաքացիների սոցիալական ազատությունը, ինչը վերջին հաշիվով հանգեցրեց նրան, որ արձանագրված անհատի շատ իրավունքներ, այն երկրներում, որտեղ իշխանությունը պատկանում է ունևոր դասին, վերածվեցին ունևոր դասի փաստական արտոնությունների, իհարկե օրենքի աստիճանի բարձրացմամբ, քանից այդ նույն օրենքները ընդունվում էին նույն ունևոր դասի ներկայացուցիչների կողմից:

Ըստ Ջ. Լոկկի, պետությունը պետք է ենթարկվի հասարակությանը, իսկ հասարակությունը պետք է ենթարկվի անհատին: Ըստ նրա, պետության հիմնական խնդիրը անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է: Գետևաբար, եզրակացնում է նա, պետությունը ավելի հզոր չի կարող լինել անհատից, և անհատի իրավունքները ավելի մեծ պետք է լինեն, քան պետության իրավունքն է: Այստեղ առկա է հակասություն, այն էլ բավականին ակնառու: Եթե, պարզ չէ, թե ինչպես պետք է պետությունը կարողանա պաշտպանել անհատի ազատություններն ու իրավունքները, եթե անհատի իրավունքներն ավելի մեծ են, անհատն էլ պետությունից հզոր է, ինչպես պետք է թույլը կարողանա պաշտպանել իրենից ուժեղին: Երկրորդ- Լոկկը պնդում է, և միանգամայն իրավացի, որ միայն օրենքի միջոցով է հնարավոր պաշտպանել և ընդլայնել անհատի ազատությունները, որտեղ չկա օրենք այստեղ չի կարող լինել ազատություն, ասում էր նա: Ջ.Լոկկը, անշուշտ գիտեի, որ այդ օրենքներն ընդունելու իրավունքը պատկանում է միայն պետությանը, իսկ ցանկացած օրենք սահմանելով մաքուր իրավունքների և ազատությունների շրջանակները, դրանով իսկ

ստեղծագործում է անհատի ազատությունների շրջանակները՝ և այդ է ծագում, պետությունը իրավասու՝ և թե՛ ոչ սահմանափակել անհատի իրավունքները նրե այդ առա պետությունը պետք է ավելի մեծ իրավունքներով օժտված լինի քան անհատը, այսինքն՝ նա պետք է անհատից հզոր լինի՝ Իսկ եթե պետությունը անհատի ազատությունները աստիճանափակող օրենքներ ընդունելու թույլտվությունը, ապա պարզ է նաև, որ նա չի կարող անհատի ազատությունները ապշտաանող օրենքներ ընդունել, եթե այդ օրենքները միտումնավոր չեն ընթանում հասուն արտոնյալ խնդր համար:

Շուրջ այն դեպքերում, երբ այնպիսի օրենքներ են ընդունվում, որոնք հավկած են անհատին օժտել աստիճանափակ իրավունքներով և սահմանափակել պետության իրավունքները, ապա մենք գործ ունենք օրենքի մեական ընտրելի հետ, քանզի այդ դեպքում՝ յնայած օրենքը Վերաբերում է օրող անհատներին, այդ օրենքներից օգուվել կարող են միայն այն լնչին վաղաժամությունը, որի ձեռքում է իշխանությունը, և որոնց տեղ են տեսնանան և ֆինանսական հզոր լծակներ, որոնց կարող են իրենց ռիզիկ և հնարավորությունների շնորհիվ պաշտպանել իրենց իրավունքները:

Ճակց տրամաբանական չէ նաև տրեքավիզմի այն անդումը թե, քակո որ հասարակությունը ստեղծվում է անհատներից, ապա այդ հասարակությունը պետք է ենթարկվի անհատին, որ անհատի շահերը և իրավունքները պետք է քարտի լինեն հասարակության շահերից և իրավունքներից, եթե հասարակությունը ձևավորվում է անհատներից, այսուքն անհատը հասարակության, որպես ամբողջական համակարգի, թեկուզ և անենահիմնական տարրերից մեկն է՝ ապա պարզ չէ, թե ինչու՞ պետք է հասարակությունը ենթարկվի անհատին, ինչու՞ անտք է անհատի շահից իրավունքներն ու ազատությունները գոտաանելի լինեն հասարակության, այսուքն քաղում այդ անհատներից ձևավորված ամբողջության շահերից, այդ ռկաքում ուր մնաց մյուս անհատների ազատություններն և իրավունքների պաշտպանությունը՝ այդ ստակն անհատներն հասարակություն չի կարող լինել, քայք չէ որ անանց հասարակության 1) անուստ լինել չի կարող, և անհատը որ իրավունքները կարող է ապշտականել միայն և միայն հասարակության մեջ և հասարակության միջոցով՝ Եթե անուստը պվելի հզոր ու իրավասու է քան հասարակությունը, ապա անգոր չի լինի տրողոք հասարակությունը անհատի ազատությունները ապշտականելու:

Մարդկային հասարակության հազարամյակների գոյության և զարգացման իրենական երաշխիքը եղել է հատուտեղ ամբողջի ուսմար անհրաժեշտ նորուներ, ազատությունների, սյգբունքների և օրենքների ընդունումն ու դրանց պատասաիր կիրառումը՝ սիա, սա է մեծում լիթերաչիզը, եվ միա՞ք աստծո, որ նրա գաղափարները ո սկզբանե դրմաթ չեն եղել մարդկային համայնգնության ռքմում, հանարակ դեպքում մարդկությունն է կենդանիները շատ տեսակների նման վաղուց անհետսագում կլվան, լղմանալով գոյության ուսմար մղղղ անհատաար կալքաթին:

Այս թե, լիթերաչիզը ընդհանրապես մեծում է պետության կամ հասարակության գոյության անհրաժեշտությունը, միշտ չի լինի Լիթերաչիզը՝ որն է այնպիսի պետության, որը վրանում է իսկել անհատի գործունեության վրա, ուսմուն հասարակության և պետության շահերի սահմանափակել անուստ իրավունքներն ու ազատությունները, պարտադրել անհատին ենթակվելու մեծամասնության շահելն արտասիակող օրենքներին, առաջ քաշելով այս թեզը, որ չի կարելու ճնշել անհատական ազատությունը հանուն ուսեղ պետության: Պետության հոմեական խնդրը ուսմարեղով անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, լիթերաչիզը պետությանը հասկացնում է իր՝ ունևոր դասի, անվտանգությունն ու ազատությունները պաշտաանող թեկնասախի դեթ, և տեթ լնելով հշիանության լծակներին հենց այդ նպատակին էլ ծառայելում է այն: Իսկ հասարակությունը լիթերաչիզի համար, ինչպես մեծ քանատեղծն էր անուս, ճոր արտասախոր է նուսնց նպանակների, ժգտանելու և շահերի լավատուն միջոք ու սիջաաար:

Լիթերաչիզին և ժողովրդավարության փոխարարեթուրությունների և փոկադարն կազմերի հոմնում ընկած է ազատության գաղափարը, ող երկուսը համար էլ իրմարար արժեքներից են: Ժողովրդավարությունը կլնում է այն սկզբունքից, որ քոյոր մարդիկ իրենց արժանապաստությունը և իրավունքներով ձևվում են ազատ և հավասար Լիթերաչիզը նախ չի ընդունում հավասարության գաղափարը, ապա մեծում է մեծամասնության իշխանության իրավանացման սյգբունքը և ազատությունը վերափախում է նրանց միայն ուլքեր կարող են այդ ազատություններից օգուվել, Իսկ թե ուլքեր հնարավորություն ունեն իրաանս օգուվելու իրենց իրավունքներից և ազատություններից՝ կարծում ենք մեկնարանության կարիք չի գգում:

Ժողովրդավարությունը նպվապե երաշխադրում է անհատի ազատությունները, քայք ոչ առանձնազված, ապտոկյալ, առավելություններով օժեված անհատի ազատությունները: Ժողովրդավարության արյաններում անուստ լանելով համկացվում է հասարակության քոյոր անուանաղը և լնդունված օրենքները հավասարապես վերաբերում և պարտադիր են քոյորի համար՝ նական հասարակությունը երեթե միանման շահեր, միատարր անուանելից ձևավորված լինել չի կարող: Այն միջոթ էլ բաժանված է իրեն մտանդակեթաով՝ գաղափարներով, ընդունակություններով, հնարավորություններով: մասնագրտական կտողություններով, պահանջմունքներով և էլ շատ քաներով՝ որարող տարբերող սոցիալական կազմերի, շեքտերի կազմեր և այլն՝ կր յապելից մեկը իրեր բեթուով լիշխանության լծակներ տնտեսական, ֆրեսնասական, աղևտրական կամ այլ գործունեություն, մադանգություն և այլն): ավելի մեծ հնարավորությունների, ունեցլածքի, սեպականության և հարստության տեթ է և նրան չի քալաաարում պտողության և հասարակության շահերը՝ պաշտպանությանն ուղղված հասարար հասարակության մեղող մեծամասնության շահերն արտասախորող օրենքներն ու դրոլունաթը: Այդ յապվը որ հնարավորությունները, հասարակությունը,

սեփականությունը իր հայեցողությամբ տնօրինելու, ակտիվ ձեռնբեռնություն ծավալելու պվելի մեծ ազատություններ է ուզում և գտնում է, որ պետությունը պետք է հենց այդ ազատությունները պաշտպանելուն ուղղված օրենքներ ընդունի: Եվ, քանի որ այդ խավը հասարակության մեջ միշտ էլ փոքրամասնություն է կազմում ապա լիբերալիզմի - փոքրամասնության և ժողովրդագավարության - մեծամասնության միջև առկա է հակասություն, որը հիմնականում հանգում է այն հարցին, թե՞ ով պետք է իշխանության կրողը լինի՝ ունեղների խավը, թե՞ ժողովուրդը: Լիբերալիզմը առանց տատանվելու պատասխանում է իհարկե ունևոր խավը (արդյունաբերողներ, ֆինանսիստներ ռազմական օլիգարխիան և այլն): Այս պարագայում լիբերալիզմը դառնում է սահմանադրական ավտորիտարիզմի գաղափարախոսություն:

Լիբերալ-ժողովրդագավարությունը այսօր աշխարհում տարածվող դեմոկրատական պետության ձևերից մեկն է, որը կառուցվում է ընդհանուր լիբերալ-ժողովրդագավարական սկզբունքների և արժեքների համալարգի վրա:

Լիբերալ-ժողովրդագավարությունը երկու հակադիր մոտեցումների միջև եղած հակասությունների հաշտեցման փորձ է: Ինչպես տեսանք, լիբերալիզմի հիմնական եռությունը հանգում էր հասարակության մեջ մեծամասնության նկատմամբ փոքրամասնության, այսինքն ունևոր դասի, իշխանության հաստատմանը: Սկզբնական շրջանում պայքարելով ֆեոդալական արքայազնության և իրավունքների համար բուրժուական ազատական (լիբերալ) գաղափարները բուրժի համար ընդունելի, դրական և առաջադիմական էր: Այն միտված էր ապահովելու ազատ ձեռնբեռնությունը, սեփականության իրավունքը, քաղաքական կյանքին մարդկանց մասնակցության իրավունքը և այլն, որոնց հասարակության զարգացման և առաջընթացի կարևորագույն գործոններն էին: Սակայն շատ շուտով, բուրժուազիայի իշխանության գալուց հետո, պարզ դարձավ, որ նրա առաջ քաշած հավասարության, ազատության, եղբայրության կոչերը հասարակության ճնշող մեծամասնության համար անիրականացի են: Երաշխավորելով անհատի ազատությունը, ճնականորեն ընդունելով օրենքի առջև բոլորի հավասարությունը և անտեսելով ժողովրդի սոցիալական իրավունքների պաշտպանությունը, լիբերալիզմը, փաստորեն, պաշտպանում էր միայն այն անհատների շահերը, ովքեր հասարակության մեջ իրենց զրաված դիրքի, ունեցվածքի շնորհիվ կարող էին օգտվել այդ ազատություններից և իրավունքներից: Իսկ, քանի որ այդպիսի հնարավորություն ունեին միայն ջնչին փոքրամասնություն կազմող ունևորների դասը, ապա ընդունված օրենքներն ու որոշումները, որոնք կոչված էին երաշխավորելու քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, շատ շուտով վերածվեցին ունևոր դասի փաստական արտոնությունների: Եվ որքան իշխանություն ունեցող փոքրամասնությունը այդ արտոնություններից ավելի շատ էր օգտվում, այնքան ավելի խորանում էր նրա և ժողովրդի միջև հակասությունները: Դենց այդ հակասություններն էլ 19-րդ

դարի սկզբներում շատ մտածողների միտքն ուղղեց դրանց հաղթահարման ուղիների որոնմանը, ինչն էլ ծնունդ տվեց սոցիալիստական տեսությունների առաջացմանը, որը դառնալով եվրոպայի մի շարք երկրներում արդեն կազմակերպված բանվոր դասակարգի գաղափարախոսություն, նրան պայքարի հանեց բուրժուազիայի դեմ: Սոցիալիզմի ներկայացուցիչները ի տարբերություն լիբերալիզմի ընդունում էին ժողովրդի իշխանության գերակայությունը փոքրամասնության նկատմամբ և առաջնային էին համարում քաղաքացիների սոցիալական իրավունքների պաշտպանությունը:

Դենևս բուրժուական հարաբերությունների հաստատման արշալույսին մի շարք մտածողներ (Ը.Մոնտեսքյո, Ա.Թոկվիլ, Լ.Ռուսո, Ա.Գամիլտոն և այլն), արդեն կանխատեսում էին փոքրամասնության իշխանության պայմաններում հակասությունների առաջացման վտանգը և առաջարկում էին իշխանության այնպիսի ձևի ստեղծում, որտեղ ներդաշնակված են փոքրամասնության և մեծամասնության շահերը, որտեղ իշխանությունը ըխում է ժողովրդից, բայց իրականացվում է նրա շահերն ու իրավունքները պաշտպանող փոքրամասնության միջոցով: Նրանց այդպիսի պետական կառուցվածքի ձև էին համարում հանրապետությունը: Ա. Թոկվիլը բացատրում էր, որ եթե իշխանությունը պատկանա միայն հարուստ արդյունաբերողներին, ապա նրանք կնմանվեն ֆեոդալական արիստոկրատներին և կկառավարեն նրանցից ավելի վատ:

Ֆրանսիական հայտնի քաղաքական գործիչ, ժողովրդագավարական թեի առաջնորդ Ռոբեսպիերը գտնում էր, որ 1789 թվականին ընդունված մարդու և քաղաքացիների իրավունքների հռչակագրում պետք է սեփականության հողվածի վերաբերյալ լրացուցիչ սահմանափակումներ մտցնել, հակառակ դեպքում ընդունված իրավունքները իրական կլինեն միայն հարուստների, սպեկուլյանտների և բորսային շնագալլերի համար:

20-րդ դարում լիբերալիզմը իր իսկ ծնած հակասությունների ճնշման տակ ստիպված էր անհատի իրավունքների կողքին ընդունելու նաև քաղաքացիների սոցիալ-տնտեսական իրավունքները, որը յուրաքանչյուր անհատի խոստանում էր կյանքի արժանապատիվ պայմաններ:

Այսպես ձևավորվեցին համաշխարհային հանրության կողմից ընդունված մարդու իրավունքների պաշտպանության ամբողջական համակարգեր, որոնք միտված լինելով հասարակական կյանքի բոլոր կողմերի ժողովրդագավարացմանը, դարձել են բոլոր երկրներում լիբերալ-ժողովրդագավարական սկզբունքների հաստատման գրավականը: Այդ սկզբունքների իրականացումը պետք է ապահովեր փոքրամասնության իրավունքներն ու ազատությունները պաշտպանող մեծամասնության իշխանության իրավանաջում: Այդ սկզբունքներն ու արժեքներն են, ժողովուրդը ընդունվում է որպես իշխանության աղբյուր, քաղաքացիների իրավահավասարության և մարդու իրավունքների պաշտպանություն, անհատի իրավունքի գերակայություն պետության իրավունքի նկատմամբ, պետական իշխանության հիմնական մարմինների ընտրովիություն, որոշումների ընդունման ժամանակ փոքրամասնու-

թյունը ենթարկվում է մեծամասնությանը, սակայն երաշխավորվում է փոքրամասնության իրավունքները, օրենքի գերակայություն, այսինքն օրենքի առջև բոլորի հավասարություն, իշխանության բաժանում, ենթադրելով նրանց հարաբերական ինքնուրույնություն և փոխադարձ հսկողության հնարավորություն և այլն:

Նկատի ունենալով նշված սկզբունքների իրականացման գործընթացները տարբեր երկրներում, կարելի է արձանագրել, որ լիբերալ-ժողովրդավարությունը դեռևս շարունակվող գործընթաց է: Սակայն ժամանակակից բոլոր ժողովրդավարական պետություններում արմատավորվել են լիբերալ ժողովրդավարական այն հիմնական սկզբունքները, որոնք թույլ են տվել հասարակական և անհատական հիմնական արժեքների, շահերի ներդաշնակման վերաբերյալ ներքին համաձայնության հասնել: Դրա հետ միասին պետք է նշել նաև, որ լիբերալ-ժողովրդավարության սկզբունքների ներդրումը հասարակական կյանքում այդքան էլ դյուրին չէ, առավել ևս, երբ այդ սկզբունքներից որևէ մեկը հակված է կողմերից մեկի շահերի պաշտպանությանը: Օրինակ՝ անհատի իրավունքների գերակայությունը պետության և հասարակության իրավունքների նկատմամբ, որը լիբերալիզմի հիմնարար պահանջներից մեկն է: Մենք վերջ շարադրածում արդեն ցույց տվեցինք, որ այդպիսի իրավունքից կարող է օգտվել միայն ուժեղ, հզոր, ունևոր, իշխանության լծակ ունեցող անհատը, բայց ոչ ժողովրդի ճնշող մեծամասնությունը, որի շահերի հիմնական պաշտպանը պետությունն է: Այդ պատճառով էլ դեռևս առկա է լիբերալիզմի և ժողովրդավարական սկզբունքների միջև ընթացող սուր պայքարը:

Դա սուր է դրսևորվում և այն երկրներում, որոնք նոր են անցում կառավարում դեպի ժողովրդավարական քաղաքացիական համակարգ, որտեղ նոր են ձևավորվում շուկայական հարաբերությունները: Այդ պայմաններում ձևավորվող ունևոր դասը ձգտում է ոչ միայն իշխանության, այլև որոշակի առանձնահատուկ ազատությունների իշխանության տված և իրենց օբյեկտիվորեն ունեցած արտոնություններից լավագույնս օգտվելու համար: Դա այսօր զգացվում է նաև այն երկրներում, որտեղ վաղուց ունևորների դասը հատատապես դարձել է իշխանության հիմնական կողմը, որը իր ֆինանսատնտեսական, ռազմական հզոր ուժի շնորհիվ կարողանում է պետությունը ծառայեցնել իր շահերի պաշտպանությանը:

Լիբերալ-ժողովրդավարության էությունը հանգում է հիմնականում այն ըմբռնմանը, որ մի կողմից ժողովուրդը-մեծամասնությունը, պետք է ընդունի անհատի ընդունակությունների, կարողությունների, հնարավորությունների ազատ դրսևորման և դրան համապատասխան ապրելու իրավունքը և աջակցի դրանց իրականացման համար անհրաժեշտ օրենքների ընդունմանն ու իրականացմանը: Մյուս կողմից, անհատը- փոքրամասնությունը, պետք է ընդունի ժողովրդի արժանապատիվ ապրելու իրավունքը և իր գործունեությամբ նպաստի այդ խնդրի իրականացմանը: Ծառերի այդպիսի ներդաշնակումն էլ հենց կլինի լիբերալ-ժողովրդավարության հաղթանակը:

Ուստի լիբերալ-ժողովրդավարական քաղաքական համակարգի հաստատումը կարելի է դիտել որպես մարդկային հետագա համակեցության համար անհրաժեշտ նորմերի և սկզբունքների իրականացման և արդի քաղաքակրթության պայմաններում հասարակական կյանքի կազմակերպման առաջադիմական պետական կառուցվածքի ձև: Եվ որպես այդպիսին, այն հասարակության զարգացման բարձրագույն արժեք է, մարդկության բաղձալի նպատակներից մեկը, որին նա քայլ առ քայլ մոտենում է, իր ճանապարհին հաղթահարելով քաղում խոլընդոտներ:

6. Ժողովրդավարության հաստատման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

Ժողովրդավարությունը լինելով իշխանության ձև, քաղաքական համակարգ, պետական կառուցվածքի լավագույն ձև, դրանով իսկ դառնում է քաղաքական մշակույթի բարձրագույն արժեք:

Հասարակությանը առաջարկվող ցանկացած նոր արժեք նրա կողմից ընդունվում, յուրացվում է միայն այնքանով, որքանով հասարակության զարգացման աստիճանը թույլ է տալիս և ընդունակ է այդ արժեքներից օգտվել, որքանով այդ արժեքների նկատմամբ հասարակության մեջ ձևավորվել է համապատասխան պահանջմունք: Ժողովրդավարությունն էլ, որպես հասարակական բարձրագույն արժեք հասարակության մեջ հայտարարություններով, հոչակագրերով կամ որոշումներով հաստատվել չի կարող, եթե նրա նկատմամբ հասարակության մեջ համապատասխան պահանջմունք չի ձևավորվել, եթե ժողովուրդը սովոր չի նրա սկզբունքներով ապրելուն, եթե նրանից, որպես արժեք, օգտվել չի կարող: Կարճ ասած, եթե հասարակությունը չի հասունացել ժողովրդավարության համար:

Այս թուրը նկատի ունենալով փորձենք պարզել, թե հայ ժողովուրդը 1990 թվականին, ե՞րբ հնարավորություն ստացավ թրթափելու ամբողջատիություն լուծել, պատրաստ էր արդյոք ժողովրդավարության սկզբունքներով ապրելուն, կա՞ր արդյոք մեր հասարակության մեջ նրա նկատմամբ ձևավորված պահանջմունք: Իրադրությանը ծանոթ ցանկացած ողջախոհ մարդ կարող է պատասխանել ոչ: Եվ դա ունեթ իր ինչպես օբյեկտիվ (տարակայան), այնպես էլ սուբյեկտիվ (ենթակայան) պատճառները: Նախորդ վարչակարգը ժողովրդական լայն զանգվածներին միշտ հեռու էր պահել քաղաքական կյանքին մասնակցելուց, որը պատճառ էր դարձել այն բանի, որ մեր ժողովուրդը չուներ քաղաքական այն կուլտուրան, որ կարողանար օգտվել ժողովրդավարության արժեքներից: Ժողովուրդը խեղաթյուրված պատկերացում ուներ ժողովրդավարության վերաբերյալ: Հետևաբար 1990 թվականին հայ ժողովուրդը ժողովրդավարության հաստատման համար չէր, որ ակտիվորեն մասնակցեց նոր իշխանությունների ձևավորման գործընթացին: Զանգի ժողովուրդը չէր կարող պայքարել մի բանի համար, որին անծանոթ էր, չիմանալով թե դա ինչ է, չունենալով, անշուշտ, դրա նկատմամբ պա-

հասցնուց: Ասկայն, այնուհանդերձ ժողովուրդը պակասորեն մասնակցեց իշխանությունների ձևավորման գործընթացին, ինչի շնորհիվ իրականացվեց ժողովրդավարության հաստատման հիմնական սկզբունքներից մեկը՝ իշխանությունը ձևավորելը ժողովուրդը, որով և Հայաստանում սկիզբ դրվեց ժողովրդավարության:

Ժողովրդի անտեղ մասնակցությամբ և նրա կողմից իշխանությունների ձևավորման պրոցեսի նիմազան նպատակը ժողովրդի կանջը օրենք ստեղծմանի բարձրացնելն ու այն հասարակություն ժողով անդամների համար պարտադիր դարձնելն է: Ասկայն Հայաստանում ժողովրդի կամքն այդպես էլ օրենքը ևստիճանի բարձրացվեց: Իսկ դա նշանակում էր, որ ժողովրդավարությանը յնչպե՛ս ծնվեց, բայց յնչպես սկսեց ծնվել: Խոսքը չի վերաբերում նրան, որ 1990 թվականի ընտրությունները հետո պետք է անմիջապես Հայաստանում հաստատվեր ժողովրդավարության թուր սկզբունքները: Հասկանալի է, որ ժողովրդավարության կայացման համար որոշակի ժամանակ է պետք: Խոսքը վերաբերում է առաջին հերթին այն քաղաքական գաղափարներին, որոնք ի յն՞ դարձնեցին ժողովրդավարության հաստատման հիմքերը: Եթե իրադարձությունները այլ կերպ զարգանային, ապա հնարավոր էր Հայաստանում ժողովրդավարությունը աստիճանաբար դարձնել իրողություն, ժողովրդի մեջ աստիճանաբար ձևավորել պահանջունը նրա նկատմամբ, ինչպես Շոլո է աշխարհի բազմաթիվ երկրներում: Որտե՛ր անհրաժեշտ էր նոր ձևավորված իշխանությունների ժողովրդավարության սկզբունքներին համապատասխանող քաղաքական գործունեության զրուհորում և նրա շահագրգռվածություն ժողովրդավարության հաստատման գործում: Ասկայն Հայաստանում իրադարձությունները զարգացան յորով հավանա՛մ ուղղությամբ, որի հետևանքով ժողովրդավարության ստեղծման անգամ ոչնչացվեցին, փոխարենը փորձելով հատուտել ասնձարձակ յիբելայիզմի գաղափարները:

Սյուպեա ընտրված պահեսամավորների մեծամասնությունը ժողովրդից յրագորություններ առանալով, հրամարվեցին նրան պատասխանատու յինել և նրա յրավուեցներն ու շահեոց պաշտպանել: Բարդացված յադերրից անտեղյակ ժողովրդի շահեթոմ յշխանության գլուխ եկան քաղաքական ուժը ժողովրդի կամքի մոխարեն յր կամքը բարկուսարեց օրենքի աստիճանի - այն պարտադրեց ժողովրդին: Իսկ դա արդեն քոնապատության քոտուց գեթ էր: Բայն այն շայն ժողովուրդը մեկուսացվեց, օտարվեց յշխանություններից: Գրասկցարար յինն ընդունվում այնպիսի օրենքներ ու դրոշումներ, որոնք հնարավորություն տային ժողովրդին հսկելու յշխանության գործունեության վրա: յինն մշակվում այնպիսի սկզբունքներ ու մեխանիզմներ, որոնք յուրյ տային հարկ եղան դեպքում յշխանություններն անպատասխանու հայտնել կամ հետ կանելի ընտրված աստգամավորին, ժողովուրդը գրկկած էր որեկեռա յշխանությունների գործունեության վրա ազդելու հնարավորությունից և անգոր էր որեկե մեռա մոխարու յրերի դրույունը: Արդյունքը եղավ այն, որ շատ կարճ ժամանակահատվածում ժողովուրդը միասարսիվեց յո ընտ-

րյաներից: Այնուհանդերձ 1990-1996 թվականների ընթացքում կայանա- նում տեղի ունեցավ քաղաքական տեղաշարժերի ազդեցության տակ ժող- յրդի որոշ մասի մոտ ձևավորվեցին ժողովրդավարական արժեքների նկատմամբ որոշակի պահանջունքներ, յնչով էլ նրանք կոտմտուրյվեցին 1996 թվականի ազգային ժողովի և 1996 թվականի նախագահական ընտրու- յունների ժամանակ: Լաթայն յշխանական ուժերը յայ հատկանում էին որ յոնեց գործունեության հետևանքով յն առժամանակու ժողովրդի վտա- ուությանը - նախապես պատրաստվել էին այդ ընտրություններին: Եթե մինչև 1996 թվականը, անկասկա յշխանության գործունեության քոույթից, այսպես թե այնպես աղխալած էինք ընդունել, որ յշխանությունները ձևավորվել են ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան: ապա 1996 թվա- կանի ընտրությունների և աստմանալորության հետևազվեր ժամանակ ժո- յղովրդի մասնակցությունն ու բացառալյան վերաբերմունքը յշխանախմբի նկատմամբ ստիպեց յշխանություններին դիմելու բացառալյա կեղծիքների, որով սկեզբ դրվեց ոչ ժողովրդավարական սկզբունքներով յշխանությունների ձևավորման գործընթացի: Հայաստանում սկիզբ դրվեց աբշտոնական քոնապետության, յսկ աստմանալորության օրինակաձացվեց այդ քոնապետությունը: Այս շրջադարձը վերջնականապես պատռեց ժողովրդավարի կայունուձան հազարձ քաղաքական ուժի դեմը:

Ժողովուրդը, բնականաբար, յեր կարող հանդուրձել յշխանությունների հայաձողությունա սոցյալաթը և ընդզոց: 1996 թվականի սեպտեմբերյան նախագահական ընտրություններում ոչ ասելով քոնապետությանը Ասկայն վարյակառոց հասցոել էր որ ձոնքում կենտրոնազելն այնպիսի ուժեր ու յնալներ, որոնք պատրաստ էին անգամ ժողովրդի վրա կրակելով ապահր- վել յշխանության քոնազավորմը, նախագահական պնշյունը զավթելուց հետո: Հայաստանում ազարտվեց քոնապետության հաստատման գործընթացը: Ահա այսպես, դեռևս քաղուրում ժողովրդավարությունը Հայաստանում յելողական արվեց:

Հայաստանում անցած տասը տարիների քաղաքական գաղափարները մեկ անգամ ևս առարկալորեն ապացուցեցին այն տեսակետի ճշմարտու- յունը, որ անորոշատրուտությունը ժողովրդավարության անցումը տեղի է ունենում անյորոտատրուտ մրցոցով: Ահայն թե այդ անյորոտատրուտը Հայաստանում ալելի կուրիտ ու օրին ձուով յրակամազվեց:

Անօրինականությունները, անաստեղծիությունը, քաղաքական հաղ- ձանքները, քաղաքական այ ուժերի նկատմամբ անհամուրոտուսանուրու- կը դարձել էին յշխանությունների գործունեության հիմնական սկզբունքե- ու: Ինչև յշխանախումբը կատարում էր ազոացուց և բացառալյա: «Անը դեմ հաղ յկա» ուայտարարությամբ: Իշխանության նման գործունեությունը անհետևանց մնալ յին ուարող և ընականաբար ուրձամ հասարակական հաղա- տությունների, դժգոհությունների, անօրինությունների և այլն հակահասա- յակական քոնույթների դրուհորման պատճառ:

Մի կողմից իշխանություններն էին իրենց գործունեությամբ ազելի ու ազելի հեռանում ժողովրդից, զրկվելով նրա վստահությունից և դառնալով նրա համար բացարձակ օտար մարմին, մյուս կողմից, սոցիալ-տնտեսական ծանր վիճակում հայտնված ժողովրդի հիասթափությունն ու հուսալքությունը, դժգոհությունն ու արհամարանքն էր խորանում իշխանությունների նկատմամբ: Եվ դրա տրամաբանական գագաթնակետը եղավ 1996 թվականի նախագահական ընտրությունների ընթացքում իշխանության կատարած բացահայտ կեղծիքներն ու ռազմական ուժի գործադրմամբ իշխանության բռնազավթումը: Դա իշխանության համար ժողովրդի և իշխանախմբի միջև կայացած դաժան զուտեմարտ էր, ժողովրդավարության և բռնապետության միջև տեղի ունեցող պայքար էր, որում հաղթեց ուժային կառույցների աջակցությունը ստացած իշխանախումբ, ինչն էլ թույլ է տալիս պնդելու, որ տեղի ունեցածը իշխանության բռնազավթում էր ռազմական հեղաշրջման տարրերի գործադրմամբ:

Քաղաքական այդպիսի շրջադարձերի արդյունքում Հայաստանի իշխանությունները անընդունելի դարձան, մեկուսացվեցին ոչ միայն սեփական ժողովրդից, այլ միջազգային ասպարեզում իրենց իսկ հովանավորվող քաղաքական ուժերից նույնպես: Բանն այն է, որ, եթե նույնիսկ տվյալ երկրում իշխանությունները ինչ որ հզոր ուժերի դրածոներ են, ապա այդ ուժերին անզամ ձեռնառու չի ունենալ այնպիսի դրածոներ, որոնք բացարձակապես չեն վայելում տվյալ երկրի ժողովրդի վստահությունը: Այլևս պարզ դարձավ, որ ապօրինի իշխանախումբը պետք է հեռանար ասպարեզից: 1998 թվականի փետրվարին տեղի ունեցավ ԳԳԸ-ական իշխանության անփառունակ հրաժարականը: Ասել, թե դա ժողովրդի համար ցանկալի իշխանափոխություն էր, կարծում ենք ճիշտ, կամ գոնե միանշանակ ընդունելի լինել չի կարող: Իշխանափոխությունը չի նշանակում նախագահ կամ նախարար փոխել: Այն ենթադրում է իշխանության քաղաքական կուրսի, նպատակների, ծրագրերի, գործունեության սկզբունքների, ժողովրդի նկատմամբ վերաբերմունքի, քաղաքական ուժերի փոխհարաբերությունների, տնտեսական սոցիալական, իրավական և այլն գործընթացների ընդլայնում և բովանդակության արմատական փոփոխություն: Այլ կերպ ասած, իշխանափոխություն նշանակում է քաղաքականության մեջ այնպիսի արմատական փոփոխություններ, այն սկզբունքներից հրաժարում, ինչը հանգեցնում է իշխանության ձգնաձամի:

Այս դեպքում տրամաբանորեն հետևում էր, որ պետք է իշխանության գան նոր քաղաքական ուժեր, նոր ծրագրերով, փոտեցումներով և գործունեության նոր սկզբունքներով, որոնք ընդունակ են լուծելու հասարակության առջև ծառայած առաջնահերթ խնդիրները: Մեզանում դա տեղի չունեցավ, քանզի փոխվել էր ոչ թե իշխանությունը, այլ ընդամենը մի քանի իշխանավորներ: Ավելի ճիշտ կլինի ասել, որ ոչինչ էլ չէր փոխվել, այլ ընդամենը տեղի էր ունեցել մեխանիկական տեղաշարժ: Իրենց վերջնականապես վարկաբեկած մի քանի առաջին դեմքերի փոխարինել էին դեռևս այդքան չվարկաբեկված նույն իշխանախմբի երկրորդական դեմքեր, հարկազատ մնալով մինչ

այդ իրենց որդեգրած գործունեության սկզբունքներին, մտածելակերպին, բարոյականությանը և այլն, քանզի մեկ օրվա ընթացքում վարկաբեկված ԳԳԸ-ականը Հանրապետականի կա՛մ երկրապահի դիմակ հագնելով, պարզ է որ երկրամբ նույնն էր մնալու:

Ժողովուրդը, սովորաբար, միշտ էլ չավատես է, և ցանկացած փոփոխություններից նա դրական ակնկալիքներ և հույսեր ունի: Բայց ժողովուրդը նաև արագ հիասթափվել գիտի, եթե նրա սպասելիքները չեն արդարանում: Այս դեպքում նույնպես, մեր ժողովրդին արագ հիասթափության էր սպասում, որովհետև նա շատ շուտ հասկացավ, որ իրեն տրված ոչ մի խոստում չի կատարվում, որ իշխանության ղեկի մոտ են հիմնականում նախկին վարչախմբի արդեն բազմիցս վարկաբեկված ու անարժան գործիչներ, որ նրանց գործունեության սկզբունքներում ոչինչ չի փոխվել և այլն և այլն, ու նա դառնացած արձանագրեց «ոչ էլ գա նույնն է լինելու» ընդունված անճշտությունը և նորից ձեռքն առավ պանդուխտի ցուպը:

Սակայն, այնուհանդերձ, հասարակության քաղաքական կյանքում որոշակի տեղաշարժեր կատարվեցին: Իշխող քաղաքական ուժը չէր կարող անտեսել այն իրողություններն ու գործոնները, որոնք դարձել էին իրենց նախորդների մեկուսացման և կործանման պատճառ: Փորձ էր արվում վերականգնել իշխանության հեղինակությունը, ինչը որոշակի գոհաբերություններ էր պահանջում, որն անհրաժեշտ էր ոչ միայն երկրի ներքին հարաբերությունների կայունացման, սեփական ժողովրդի վստահությանն արժանանալու, այլև արտաքին ուժերի կողմից ընդունվելու համար: Եվ իշխանությունները գնացին այդ գոհաբերություններին: Վերականգնվեցին արգելված կուսակցություններն ու լրատվամիջոցները, դադարեցին քաղաքական բացահայտ հալածանքները, որոշակիորեն բարելավվեց քաղաքական ուժերի ազատ գործունեության պայմանները և այլն, որոնք հասարակության ժողովրդավարացման գործընթացի կարևորագույն երաշխիքներ են, հետևաբար հասարակության մեջ ժողովրդավարական արժեքների և սկզբունքների հաստատմանն ուղղված կարևոր քայլ:

Բայց այս ամբողջը ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանրագույն խնդիրներին որևէ լուծում չտվեց, չլուծեց գործազրկության խնդիրը, չբարելավեց նրա սոցիալական ծանր վիճակը, չկարողացավ կանխել արտագաղթը և արդյունքում չկարողացավ նվաճել ժողովրդի վստահությունը: Ավելին, նախորդ իշխանությունների նկատմամբ ժողովրդի արհամարանքը, հակակրանքը փոխանցվեց նոր իշխանության նկատմամբ, ինչը արդյունք էր նախորդ իշխանախմբի հանցավոր գործունեության նկատմամբ նոր իշխանությունների ներողամտության, եթե ոչ պաշտպանության: Ժողովուրդը իր դեմ գործած հանցագործությունների համար պահանջում էր պատասխանատվության կանչել մեղավորներին, իսկ իշխանությունները անգոր էին ինքնադատատանի գնալ, ընդունակ չէին խոստովանելու իրենց մեղքը և ժողովրդի ներդամությունը հայցելու, համարձակություն չունեին ժողովրդին ասելու, որ

իրենց մասնակից են եղել քաղաք կառավարված հանցագործություններին, ինչպե՞ս իրենց իրենց պատժեն:

1999թվականի Ազգային ժողովի ընտրությունները նախորդների համեմատությամբ մեծ առաջընթաց էր, չնայած գերծ չէր կեղծիքներից և ընտրակաշառքներից:

Այդ ընտրությունների արդյունքում ձայների բացարձակ մեծամասնություն ստացած «Միասնություն» դաշինքի առաջնորդները որոշեցին մի քաղաքականություն, որը կարող էր արմատապես փոխել հասարակության կյանքը, կանխել հետագա քայքայումը, հարթահարել գոյություն ունեցող ճգնաժամը, ինչը որոշակի հույսեր և սպասելիքներ առաջացրեց ժողովրդի մեջ: Աննախադեպ անեց իշխանության նկատմամբ ժողովրդի մեծ մասի վստահությունը: Թվում էր, թե վերջապես կառավարությունը Վ. Սարգսյանի գլխավորությամբ դեմքով շուտ է եկել դեպի ժողովուրդը: Ձեռնարկվող միջոցառումները երկրի տնտեսությունը ոտքի կանգնեցնելու, ազգային խնդիրները լուծելու, անցյալի սխալներից ձերբազատվելու ուղղությամբ մեծ հույսեր էին ներշնչում: Հասարակությունը պատրաստվում էր հաջորդ քայլը կատարել քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործում: Բայց, ավաղ, ժողովրդի հույսն ու հավատը, վստահությունն ու սպասելիքները, որոնք մարմնավորվել էին Վազգեն Սարգսյանի և Կարեն Դեմիրճյանի կերպարում, գնդակահարվեցին 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովի նիստերի դահլիճում: Թե ով էր այն կազմակերպել, դեռ հայտնի չի և չի էլ լինելու, որովհետև գոնե այսօր բացահայտողը այնքան էլ շահագրգռված չի բացահայտման գործում: Դա միայն պետության ղեկավարների սպանությունը չէր: Ձեռնարկված էր ազգային միասնության, պետության հզորացման գնդակահարը: Ձեռնարկվեց ժողովրդի մեջ ապագայի նկատմամբ ծնված հույսը, հավատը: Դա նաև պետության առաջընթացը կանխել ցանկացող ուժանշխատական ուժերի լկտի գործունեության բացահայտ ցուցադրում էր դրով, կարծես, փորձում են ասել, քանի մենք կանք, ոչ մի առաջընթաց, ոչ մի արդարություն չիսել չի կարող: Եվ ամենացավալին այն, որ այդ տականցներից շատերը դեռևս գտնվում են իշխանության տարբեր մարմիններում և ազատորեն գործում են ի վնաս ժողովրդի և պետության:

Հայաստանի Հանրապետությունում, ահա, այսպիսի առանձնահատուկ պայմաններում էլ իրականացվում է ժողովրդավարության հաստատման գործընթացը:

Գրականություն

1. Аристотель. Политика. Афинская политика. М.1997
2. Арон Р. Демократия и тоталитаризм. М. 1993
3. Дильс Р. Введение в историю демократии. М. 1992
4. Ирихин Ю.В., Зотов В.Д., Зотова Л.В. Политология. М. 1999

5. Лейпхард А. Демократия в многообразных обществах. Сравнительное исследование. М. 1997
6. Линдсет С. Американская демократия в сравнительной перспективе. М. 1995
7. Локк Дж. Два трактата о государственном правлении. Два трактата о правительстве. Соч. В. 3т. М. 1998
8. Кагановской И. Будущее либеральной демократии в России. «Общественные науки в современность». 1995 № 2
9. Монтескье Ш. О духе законов. М. 1955
10. О свободе. Антология западноевропейской классической либеральной мысли. М. 1995
11. Шинтон. Государство. Политик. Законы. Соч В 3т. М. 1971-72
12. Политология. Курс лекций под ред. А.А.Радугина. М. 1999
13. Политология. под ред. В.Н. Лавриченко. М. 1999
14. Токаевель А. Демократия в Америке. М. 1992
15. Энтин М.Л. Международные гарантии прав человека. М. 1997
16. Уиппелер А.Г. Политология: власть, демократия, личность. Учебное пособие. М. 1994

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

Քաղաքական կուսակցություններ և կուսակցական հավակնոցներ

1. Քաղաքական կուսակցության ըմբռնումն ու էությունը

ժամանակակից հասարակության քաղաքական կյանքը քարոզ, հակասական և բազմազան է: Եվ դա բնական է, քանզի հասարակության կյանքի ժողովրդավարացմանը զուգընթաց ավելի ու ավելի շատ քաղաքացիներ են մասնակցում քաղաքական գործընթացների, որոնք, ինչպես միավորված, այնպես էլ առանձին ակտիվ պայքարում են իրենց շահերի, իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Հասարակությունը բաժանված է տարաբնույթ շահեր ու պահանջմունքներ, ընդունակություններ ու հնարավորություններ ունեցող անհատների, սոցիալական խմբերի, խավերի, դասակարգերի և այլն: Այդ տարաբնույթ, երբեմն էլ հակասական, շահերը հասարակության մեջ միշտ էլ առաջացրել են անհավասարություն, անարդարություններ, հալածանքներ, բախումներ և բռնություններ:

Մարդկանց որոշակի խմբերի, խավերի, հետազայում նաև դասակարգերի շահերը շատ հաճախ համընկել են, սակայն մարդիկ դա կամ չեն գիտակցել, կամ ի գործու չեն եղել իրենց ջանքերը միավորել և համատեղ պայքարել իրենց ընդհանուր շահերը, իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար, ինչն էլ, շատ հաճախ տարրերայնորեն բնկված մարդկային ընդդձումների մշտական պարտության պատճառ է դարձել:

Հասարակության զարգացման որոշակի աստիճանից սկսած մարդիկ սկսում են գիտակցել, որ իրենց շահերի, իրավունքների և ազատությունների համար առանձին-առանձին, առանց կազմակերպված պայքարի ոչ մի արդյունքի հասնել չեն կարող և սկսում են գիտակցել իրենց ջանքերը միավորելու և ընդհանուր հակամակորդի դեմ համատեղ պայքարելու անհրաժեշտությունը: Ահա, հենց այն պահից, երբ սոցիալական խմբերի, խավերի և դասակարգերի առաջադեմ ներկայացուցիչները օգնում են նրանց գիտակցելու ընդհանուր շահերի համար համատեղ պայքարելու անհրաժեշտությունը և կազմակերպում ու իրականացնում են այդ պայքարը, մենք, ըստ էության, գործ ունենց կուսակցությունների առաջացման հետ:

Քաղաքական գրականության մեջ լայն տարածում է գտել պատմության ընթացքում քաղաքական կուսակցությունների առաջացման փուլերի Մ.Վեբերի դասակարգումը, ըստ որի՝ ա) ձևավորվել են նախ արիստոկրատական խմբակներ, նույն արիստոկրատիայի ազատամիտ ներկայացուցիչներից, բ) առաջացել են քաղաքական ակումբները որոնցում քննարկվել են հասարակության կյանքում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները և փորձել են ինչ որ ձևով ազդել դրանց վրա, գ) առաջացել են զանգվածային կուսակցություններ: Եչենք, որ այս երեք փուլերով շատ քիչ կուսակցություններ են անցել: Ժամանակակից կուսակցությունների մեծ մասը ձևավորվել են միանգամից որպես զանգվածային կուսակցություններ:

Եչենք նաև, որ զանգվածային կուսակցությունները հիմնականում սկսեցին առաջանալ հասարակության ժողովրդավարացմանը զուգընթաց, իսկ ազատ գործունեության հնարավորություն ստացան միայն ժողովրդավարական այն պետություններում, որտեղ սահմանադրության մեջ հողված ընդունվեց կուսակցությունների մասին:

Զանգվածային կուսակցությունների առաջացման կարևորագույն նախապայմաններից էր համընդհանուր ընտրական իրավունքի ընդունումը: Այս պարագայում առանց լայն ընտրագանգվածի աջակցության իշխանության նվաճումը դառնում է անհնար: Դրա համար էլ փոքրաթիվ քաղաքական կուսակցությունները, որոնք սովորաբար հասարակության մի որևէ խավի (ձեռներեցների, առևտրականների, վաշխառուների և այլն) շահերն էին պաշտպանում, ստիպված էին փոխել իրենց գործունեության թևույթը, և առաջ քաշել այնպիսի ծրագրային դրույթներ, որոնք արտահայտեին բնակչության առավել մեծ մասի, ազգի պետության, այլ կերպ ասած համընդհանուր շահեր, որպեսզի արժանանային ժողովրդի մեծ մասի աջակցությանն ու նրա միջոցով նվաճեին քաղաքական իշխանությունը: Այդպիսի փոփոխությունը ընդլայնեց կուսակցությունների սոցիալական քազան, մեծապես ավելացավ նրանց անդամների և համախոհների թիվը, երբեմն հասնելով միլիոնների: Այդպիսի զարգացումը քաղաքական կուսակցություններին դարձրեց քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերությունների հիմնական միջնորդ:

Ժամանակակից ըմբռնմամբ քաղաքական կուսակցությունները առաջացել են 19-րդ դարում: Դրանց ծագումը պայմանավորված էր դարասկզբից սկսված դասակարգային հակամարտությունների սրմամբ, որը հանգեցրել էր քուրճուազիայի և բանվոր դասակարգի սուր առճակատման: Այդ պարագայում հակամարտող դասակարգերի, սոցիալական խմբերի և խավերի, և այլն թևույթի մարդկային հանրույթների ակտիվ ներկայացուցիչներից ձևավորվում են նրանց շահերը ներկայացնող և արտահայտող, նրանց պայքարը կազմակերպող քաղաքական կազմակերպություններ: Այդ պահից սկսած քաղաքական կուսակցությունները դարձել են հասարակության քաղաքական համակարգի կարևորագույն ինստիտուտներից մեկը: Այսօր դժվար է պատկերացնել մի պետություն, որտեղ չլինի գոնե մեկ քաղաքական կուսակցություն, իսկ պետությունների մեծ մասում առկա են երկու և ավելի կուսակցություններ:

Որպես քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցներ, քաղաքական կուսակցությունները արդյունք են հասարակության ժողովրդավարացման: Մյուս կողմից, լինելով ժողովրդավարության ծունդ, քաղաքական կուսակցությունների ակտիվ քաղաքական գործունեությունը, քաղաքական կյանքին նրանց ակտիվ մասնակցությունը դարձել է հասարակության ժողովրդավարացման հետագա կատարելագործման հիմնական երաշխիքներից մեկը: Ուստի, կարելի է պնդել, որ ժողովրդավարության կարևորագույն չափանիշներից մեկը քազմակուսակցական համակարգի առկայությունն է,

որի միջոցով հնարավոր է լինում ավելի լավ կազմակերպել քաղաքական ինստիտուտների փոխհարաբերություններն ու արդյունավետ գործունեությունը: Այսպիսի գնահատականը թույլ է տալիս քաղաքական կուսակցությունները դիտել նաև, որպես քաղաքակրթության կարևորագույն նվաճումներից մեկը:

Ուշադրություն դարձնելով քաղաքական գրականության մեջ եղած կուսակցությունների ընդդռնմաների վրա, նկատելի է դառնում, որ թուր հեղինակներն էլ կուսակցությունները դիտում են որպես

ա) համախոհների կազմակերպված խումբ, բ) սոցիալական որևէ խավի, խմբի շահերի ներկայացուցիչ և արտահայտիչ, գ) որ թուր կուսակցությունների հիմնական նպատակն է իշխանության նվաճումը և դրա օգնությամբ իրենց առջև դրված խնդիրների իրականացումը:

Կուսակցությունները եղած թուր հասարակական կազմակերպություններից ամենաքաղաքականն են և առաջատարը, իսկ հաճախ նաև վճռորոշ դեր են կատարում իշխանության համար պայքարի կազմակերպման գործընթացում: Կուսակցությունների կարևորագույն նպատակներից է նաև հասարակության և պետության միջև ուղիղ և հակադարձ կապերի հաստատումը, որը օգնում է նրանց հասարակության քաղաքակրթական շահերն ու պահանջմունքները քարծրացնել պետության քաղաքականության աստիճանի և իշխանության լծակների օգտագործման միջոցով իրականացնել դրանց: Լինելով քաղաքական համակարգի կարևորագույն տարր և որոշակի դասակարգերի, սոցիալական խմբերի ու խավերի պահանջմունքների, շահերի ու նպատակների արտահայտիչ, կուսակցությունները ինչպես իշխանության լծակների ուղղակի օգտագործման, այնպես էլ նրա վրա միջնորդավորված ազդեցության միջոցով, եռանդուն մասնակցություն են ունենում քաղաքական իշխանության իրականացման գործընթացներում:

Քաղաքական կուսակցությունների գործունեության կարևորագույն ուղղություններից է քննադատական քաղաքական գիտակցության ձևավորումն ու նրանց քաղաքական գործընթացներին մասնակից դարձնելը, որին նրանց փորձում են հասնել քննադատական վրա գաղափարական ներգործության շնորհիվ: Յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն հասարակությանն է ներկայանում որոշակի գաղափարական հենքի վրա ստեղծված ծրագրերով և դրանց իրականացման մեխանիզմներով: Ինչ չափով, որ նրանց առաջարկված ծրագրերը ընդունելի են դառնում քննադատական որևէ մասի համար, այնքանով էլ նրանց արժանանում են տվյալ մասի աջակցությանը և ճիշտ այդքանով էլ նրանց հնարավորություն ունեն իշխանություն նվաճել և իրականացնել իրենց ծրագրերը: Այն է, թե կուսակցությունների գործունեության արդյունավետությունը կախված է ոչ միայն նրանց անթերի, հասարակության առաջընթացին նպաստող, քննադատական մեծամասնության շահերն արտահայտող ծրագրերի անկայունությունից, այլ, գուցե և հիմնականում այն քանից, թե քննադատական քաղաքական գիտակցության մակարդակը հասու՞ է ընկալելու կուսակցությունների առաջարկած գաղափարներն ու ծրագրեր-

ընդ, գիտակցում է արդյո՞ք այդ ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը, տեսնում է արդյո՞ք դրանց իրականացման միջոցով իր իրական շահերի պաշտպանությունը և այլն:

Շնորհանրացնելով վերը ասածը կարելի է ձևակերպել հետևյալ ընդդռնմանը: Քաղաքական կուսակցությունը գաղափարակիցների, համախոհների, կամ միևնույն շահերն ունեցող մարդկանց կազմակերպված խումբ է, ներկայացնում և պաշտպանում է որոշակի սոցիալական խմբի, խավի, դասակարգի, իսկ երբեմն էլ քննադատական մեծամասնության կազմող զանգվածի շահերն ու պահանջմունքները և իր առջև նպատակ է դնում դրանց իրականացնել պետական իշխանության նվաճման կամ նրա իրականացմանը մասնակցելու ճանապարհով:

Քաղաքական կուսակցություններին ընդդռն է կանոնադրական փաստաթղթերով ամրագրված կազմակերպչական կառուցվածք, անդամություն, կուսակցության քաղաքական դեկլարություն, ներկուսակցական հարաբերությունների ընդունված ձևեր, ծրագրային և կանոնադրական փաստաթղթեր, որոնցում ամրագրված են կուսակցության գաղափարա-քաղաքական և կազմակերպչական հիմքերը, կուսակցության անդամների իրավունքներն ու պարտականությունները:

Գոյություն ունեն քաղաքական կուսակցությունների դասակարգման մի շարք չափանիշներ:

Սոցիալական բնույթի տեսանկյունից կուսակցություններն իրարից տարբերվում են նրանով, թե սոցիալական որ խմբի, խավի կամ դասակարգի շահերն են պաշտպանում, դրանց կարող են լինել քանկորներ, բուրժուազիան, գյուղացիությունը, ազգը և այլն:

Գաղափարական հենքի վրա կուսակցությունները բաժանվում են. ա)գաղափարաքաղաքական բնույթով, որոնց գործունեությունը հենվում է հստակ ձևակերպված գաղափարախոսության վրա, բ) ընտրական գործունեությամբ, որոնց օգտագործում են ժողովրդի համար ընդունելի կոչեր, հայտարարություններ, խոստումներ և այլն, նրանց իրենց կողմը գրավելու և ընտրություններում հաղթելու համար. գ) խարիզմատիկ, կամ առաջնորդի շուրջ համահիմքված մարդկանց միություն, որն իր անդամներին միավորում է ոչ թե ինչ որ գաղափարի կամ ծրագրի իրագործման շուրջ, այլ ճանաչված, հեղինակություն ունեցող անհատ- առաջնորդի շուրջը:

Կուսակցությունները կարող են իրարից տարբերվել նաև ըստ իրենց գրաված դիրքի: Այս դեպքում առանձնացվում են իշխող, իշխանամետ և ընդդիմադիր կուսակցություններ: Լինում են նաև ազատ գործող և արգելված կուսակցություններ:

Շատ կազմակերպչական հատկանիշների կուսակցությունները կարելի է տարբերակել. ա) զանգվածային կուսակցություններ, որոնց իրենց շարքերում ընդգրկում են մեծ թվով անդամներ, որի ֆինանսավորման հիմնական աղբյուրը անդամավճարներն են: Այստեղ մեծ դեր է խաղում կուսակցության

դադարարական գործունեությունը, որը դեկլարացիոն է՝ կուսակցության քաղաքական միջոցները,

բ) կառույցին կամ մասնագրության կուսակցություններ, որոնք իրենք սահմանափակ և մշտական անդամություն ունեն կրանց սովորաբար անջնջված և արանցում են այն անհատներին, որոնցից հոգանալովում ու ֆինանսավորում են, ովքեր ձեռնուտ են իրենց՝ իրանց հիմնականում ոչ-չանություն ձամ ֆինանսատնտեսական լծակներ ունեցող անհատներ են կլանող քնակաարար անդամավճար լեն հազարում, որս կարող է զգալի վրա՝ այդ կուսակցությունները հիմնականում գտնում են ընտրությունների շրջանում, ձգտելով ազատվել իրենց տնտեսաբան թեկնածուների հաղթանակը և՛ ընտրություններում, և՛ իշխանության մարմիններում:

Ըստ ներկուսակցական հարաբերությունների ընտրելի և հասարակության նկատմամբ վերաբերմանի կուսակցությունները կարելի է բաժանել.

1) Դեմոկրատական կուսակցություններ, որոնք ազատ միջուցում են իրար հետ ընակցության առաջել մեծ մասի սշակցությունը ստանալու և կրանց օգնությամբ ընտրություններում հաղթելու համար՝ իրենց նպատակին հասնելու համար ժողովրդավարական կուսակցությունները ընակցության ներգայնում հասարակության կրանց բարեփոխման, ժողովրդի շահերը արտահայտող ծրագրերում և անտիվ գործունեություն են ծավալում նախընտրական շրջանում իրենց տեսակետները ընակցությանը հասցնելու և մատչելի դարձնելու համար՝ այդ կուսակցությունները իրենց գործունեությունն իրականացնում են սահմանադրության շրջանակներում՝ ներկուսակցական կյանքում տունս է բազմակարգություն և կարող են լինել կան խմբակցություններ:

2) Այլընտրացիայական կամ մեկաշնորի ունեցող կուսակցություն, որը քաղաքական նախարեզից գուտս է մղում և արգելում է մյուս կուսակցություններին: Ո՛րենևայով միանձնյա իշխանություն, այդ կուսակցությունները ձգտում են իրենց գաղափարներն ու ծրագրերը պարտահոծել որդ հասարակությանը, որս համար օգտագործելով իշխանության լծակներն ու հասակախոթությունները ենթարկել հասարակության բոլոր ըսասանագրերին ու կարվերին, սրենցնելից ծառայեցնել իրենց նպատակներին: Կուսակցական հարաբերություններում իշխում է ընտրվենտրոնացումն ու կարգապահությունը, արգելված է բազմակարգության ու խմբակցությունների գոյությունը՝ իշխանության բոլոր մարմինները գտնվում են կուսակցության հսկողության տակ:

Այսպիսի մեթոդայի և կարիքաան մեծոհայի երկրներում կուսակցությունները հիմնականում առաջացել են ազգային ազատագրական շարժումների ազդեցության տակ՝ այդ է պատճառը՝ որ այդ կուսակցություններից մեծ մասը ունեն համազգային բնույթ, սրբմն պատշաճով ազգային ազատագրական պայքարի հիմնական կազմակերպիչներ, դատապրվ ՅՐ տեանկ հայտատուսակցություններ՝ Այստեղ լայն տարածում են գտել ազգային ժողովրդական կազմակերպություններն ու կուսակցությունները:

Արևմտյան քաղաքական տեսություններում կուսակցությունները հաճախ բնորոշվում են ընելով նրա ունեցած այն դեմից, որը կրանց կատարում են քաղաքական տոծերթագներում: Այդ տեսակետից կուսակցություն անելով շատ հաճախ նկատի ունեն մատրկանց ցանկացած խմբեր, որոնք միատեսակ քաղաքական հարցքներ ունեն և ընտրությունների ընթացքում ձգտում են իրենց ներկայացուցիչներն ունենալ պետական իշխանության մարմիններում:

Քաղաքական կուսակցությունները որպես քաղաքական գործունեության ընդունույն սուպելուսեր մի շարք ընդհանուր գծեր ունեն այլ հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետ: Իրանցից են, որոշանր կազմակերպվածություն և իշխանության ու կառավարման ապարատի առկայությունը, զախախարնկան սնգրուցների առկայությունը, ինչը որակուրում և մրավորում է կրանց անդամներին, կրանց գործունեության հիմքում որոշակի ծրագրային հրույթների ամրագրումը և այլն:

Իսկ այլ կազմակերպություններից կուսակցությունները հիմնականում տարբերվում են նրանով, որ իսցատար և նպատակամղված պայքարում են պետական իշխանության կլանման, պետական քաղաքականության ձևափոխման իրավունցի և իշխանության հրահանգման համար:

Քաղաքական կուսակցությունների երբեքանց կարելի է բնորոշել նաև ընելով, ա) կուսակցության սոցիալական կազմից և սոցիալական բազայից, ա) տեսակցության դեկլարացիայի կազմից, շահեծից ու նպատակներից, գ) կազմակերպության ծրագրային կողմնորոշումից, դ) կուսակցության կրանք գործունեությունից և այլն:

Այսպիսով, քաղաքական կուսակցությունները այնպիսի քաղաքական միավորումներ են, որոնք խտացված ձևով արտահայտում են սոցիալական խմբերի քաղաքական շահերը, նպատակներն ու գաղափարները, կազմավորված են այդ նույն սոցիալական խմբերի առաջել անտիվ ներկայացուցիչներից և դեկլարում են նրանց պայքարը պետական իշխանությունը նկաճելու և այն իրականացնելու գործընթացներում:

2. Քաղաքական կուսակցությունների հիմնական ֆունկցիաները

Քաղաքական կուսակցությունների բնույթն ու երբեքանց հասարակության մեջ կրանց տեղն ու դերը ավելի հատակ մատկերաբնելու, կրանց նպատակները ճշտ հասկանալու համար անորաճշտ է ուշադրություն դարձնել կուսակցությունների գործունեության հիմնական սկզբունքների ու ֆունկցիաների վրա:

Հասարակական քաղաքական համայնագրում քաղաքական կուսակցությունները կատարում են մի շարք կարևոր ֆունկցիաներ, որոնցով էլ պայմանապարկված է կրանց տեղն ու դերը հասարակության մեջ: Կարելի է առանձնացնել կրանցից հիմնականները.

1. Զաղաքական կուսակցությունների համար ամենահիմնականը իշխանության նվաճման կամ այն պաշտպանելու հարցն է: Այդ խնդիրը իրագործելու համար կուսակցությունները մշակում են իշխանության համար պայքարի ձևերը, միջոցներն ու մեթոդները, կախված այն քաղաքական կոնկրետ իրադրությունից, որում նրանք տվյալ պահին գտնվում են: Ժողովրդավարության պայմաններում այդ ֆունկցիան իրագործվում է սահմանադրական միջոցներով, այսինքն՝ իշխանության կենտրոնական և տեղական մարմինները ձևավորվում են ժողովրդավարական ընտրությունների միջոցով:

2. Զաղաքական կուսակցությունների կարևորագույն խնդիրներից մեկը քաղաքացիների, սոցիալական խմբերի բազում առանձնացված, մասնավոր շահերը նրանց ընդհանրական, միասնական քաղաքական շահերի վերածելն է: Ղրան հասնելու համար կուսակցությունը իր գործունեությունը ուղղում է այն քաղաքացիների, սոցիալական խմբերի ու խավերի միասնական շահերի ձևավորմանն ու հիմնավորմանը, որոնք նրա սոցիալական հիմքն են կազմում:

3. Մշակելով կուսակցության գաղափարախոսությունն ու ծրագիրը, սահմանելով իր քաղաքական նպատակները և որոշելով իր հիմնական ռազմավարությունը քաղաքական կուսակցությունը ձգտում է դրանք մատչելի դարձնել քաղաքացիներին և համոզել նրանց, որ դրանք իրականացումը հնարավոր է և համապատասխանում է նրանց շահերին:

4. Զաղաքական կուսակցությունները, լինելով որոշակի սոցիալական խմբի, խավի, դասակարգի և այլ տեսակի մարդկային հանրույթների շահերի արտահայտիչներ, դրանով իսկ հասարակական շահերի արտահայտիչներ են դառնում: Ասկայն իրական կյանքում սոցիալական խմբերի, խավերի և դասակարգերի կապը կուսակցությունների հետ միանշանակ չէ: Երբեմն կուսակցությունները ստանում են այնպիսի սոցիալական խմբերի աջակցությունը, որոնք շահերի արտահայտիչ դառնալ նրանք չեն հավակնել:

Այուս կողմից, մինևույն խմբի, խավի շահերը կարող են ներկայացնել նաև տարբեր կուսակցություններ, ինչը հաճախ մարդկանց թյուրիմացության մեջ է գցում, և նրանց կարող են նույնիսկ սխալ ընտրություն կատարել, հավատալով, կամ ընտրություններում աջակցելով այնպիսի կուսակցությունների, որոնք ոչ միայն չեն պաշտպանում տվյալ սոցիալական խմբի շահերը, այլև հակադիր են նրան:

Ժամանակակից քաղաքական կուսակցությունները, անկախ նրանց բնույթից, սովորաբար, փորձում են քաղաքացիներին ներկայանալ որպես նրանց բոլորի շահերի արտահայտիչներ, խոսելով հասարակության, ժողովրդի, ազգի և պետության անունից: Այնպես նրանց քաղաքական վարքի և գործունեության դրսևորման ժամանակ է երևում, թե նրանք իրականում ովքեր են, ինչ նպատակներ են հետապնդում և ինչու են քողարկում իրենց իրական դեմքը:

5. Զաղաքական կուսակցությունների գործունեության կարևոր ուղղություններից է քնակչության քաղաքական գիտակցության ձևավորումը, նրանց արմատական շահերի պաշտպանության և իշխանության նվաճման համար քաղաքացիների համախմբումն ու ակտիվացումը: Այդ նպատակին հասնելու համար, բացի իր սեփական քաղաքական միջոցների օգտագործումից, կուսակցությունները փոխհարաբերությունների մեջ են մտնում տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, որոշակի խնդիրների շուրջ համագործակցելով նրանց հետ և ակցնկալելով նրանց աջակցությունը: Զաղաքացիների համախմբում հնարավորություն է տալիս ստեղծել սոցիալական և գաղափարա-հոգեբանական հիմք կուսակցության երկարաժամկետ գործունեության համար: Այդ պարագայում ձևավորվում է համապատասխան հասարակական կարծիք, այդ նպատակի համար օգտագործելով զանգվածային լրատվամիջոցները:

6. Նախընտրական գործընթացների կազմակերպումը, ընտրությունների նախապատրաստվելն ու անցկացումը, իրենց թեկնածուների առաջադրումը և ընտրություններում նրանց հաղթանակի ապահովումը, իսկ հետագայում նաև իրենց պարլամենտական ներկայացուցիչների գործունեության վրա հսկողություն կազմակերպելը կուսակցությունների կարևորագույն ֆունկցիաներից մեկն է: Այդ ֆունկցիայի իրականացումով կուսակցությունները ժողովրդավարական պետություններում հանդես են գալիս, որպես գոյություն ունեցող պետական իշխանության պահպանման կամ փոփոխման հիմնական կազմակերպիչներ: Չենց կուսակցությունների նման գործունեության շնորհիվ է իրական պայմաններ ստեղծվում իշխանության խաղաղ ճանապարհով փոխելու համար:

7. Իշխանության իրականացման, նրա գործունեության վրա իրական հսկողություն սահմանելու ֆունկցիան կուսակցություններն իրագործում են խորհրդարանում ձևավորված իրենց խմբակցությունների միջոցով: Խմբակցությունները կուսակցության և իշխանությունների միջև կապող օղակ են: Խմբակցությունները լայնորեն օգտագործում են օրենսդրական նախաձեռնության և պատգամավորական հարցումների իրենց իրավունքները, ինչը նրանց գործունեության հիմնական ձևերից մեկն է:

Խորհրդարանական կուսակցական խմբակցություններին բնորոշ է խիստ կարգապահությունը, ինչը նրանց պարտավորեցնում է օրենսդրական նախագծերի քննարկման և ընդունման ժամանակ հանդես գալ միասնական ճակատով: Այդ կանոնների խախտումը օրինագրանցների համար կարող է ավարտվել խմբակցությունից և կուսակցությունից վտարումով, դրանով իսկ նրան զրկելով իաջորդ ընտրություններում ընտրվելու հնարավորությունից: Ասկայն կուսակցական խմբակցության անդամները օժտված են նաև հարաբերական ինքնուրույնությամբ այնքանով, որքանով որ նրանք ընտրված են ժողովրդի կողմից: Այդ պատճառով էլ խմբակցության անդամները պարտավոր են հաշվի առնել ոչ միայն կուսակցության դիրքորոշումը, այլև իրենց ընտրողների պատվիրանները, անշուշտ, նաև այն հովանավորների շահերը,

որոնց օժանդակել են նրանց ընտրական միջոցառումներին՝ ֆինանսավորելով դրանք:

8. Զաղաքական կուսակցությունների գործունեության կարևորագույն ձևերից մեկը այլ կուսակցությունների հետ փոխհարաբերությունների ծառայությունն է. ինչի համար մշակվում են որոշակի սկզբունքներ, մոտեցման ձևեր և այլն: Այդ փոխհարաբերությունների հաստատումը կարևոր է հատկապես այն ժամանակ, երբ ընտրությունների ընթացքում կուսակցություններից ոչ մեկը ձայների մեծամասնություն չի ստանում և ստիպված է խորհրդարանում այս կամ այն, ինչ հիմնականում որոշակի գաղափարական և ծրագրային նմանություն կամ մոտիկություն ունեցող կուսակցությունների հետ միավորվել խմբակցություն կազմելու համար:

9. Ընտրություններում պարտություն կրած և խորհրդարանում չլինի փոքրամասնություն կազմող քաղաքական կուսակցությունների համար, որոնք, սովորաբար, չեն ընդգրկվում կառավարության կազմում, գործունեության կարևորագույն ձև է դառնում խորհրդարանական ընդդիմության կազմակերպումը և պետական իշխանության մարմինների վրա ճնշում գործադրելը: Իշխանությանը ընդդիմադիր կուսակցությունները ուշադրությանը հետևում են իշխանությունների գործունեությանը և ամիթը բաց չեն թողնում նրանց թերություններն ու բացթողումները քննադատելու, դրանք հասարակությանը ներկայացնելու համար, օգտագործելով ինչպես զանգվածային լրատվամիջոցները, այնպես էլ խորհրդարանական լսումները: Նրանց գործունեությունը առավել արդյունավետ է լինում, եթե նրանք հանդես են գալիս հասարակության հուզող խնդիրների և քննադատության զգալի մասի շահերը շոշափող հիմնավորված առաջարկություններով, ինչը դառնում է հաջորդ ընտրություններում նրանց հաջողության հիմնական գրավականը: Խորհրդարանական ընդդիմության գործունեությունն էլ ավելի արդյունավետ է լինում, երբ նրանք կարողանում են սերտ փոխհարաբերությունների մեջ մտնել խորհրդարանից դուրս գտնվող կուսակցությունների հետ և ստանալ նրանց աջակցությունը:

10. Ինքնին հասկանալի է, որ քաղաքական կուսակցությունների գործունեությունը վերջին հաշվով գնահատվում է ոչ թե նրանով, թե ինչ են խոստացել ընտրողներին, ինչ ծրագրեր են առաջարկել նրանք, այլ ելնելով նրանից, թե իշխանության իրականացման ժամանակ ինքնանով են նրանք կարողացել պաշտպանել այն սոցիալական խմբերի շահերը, որոնց նրանք ներկայացնում են: Կառավարող կուսակցությունները ձգտում են այնպիսի սոցիալական քաղաքականություն իրականացնել, որը կապահովի նրանց գործունեության նկատմամբ քաղաքացիների դրական վերաբերմունքը և կարժանանա քննադատության լայն շրջանակների հավանությանը: Այդպիսի սկզբունքներով գործող քաղաքական կուսակցությունները, սովորաբար, ավելի երկար ժամանակ են մնում որպես կա-

ռավարող կուսակցություններ: Գակառակ դեպքում նրանք կորցնելով ժողովրդի վստահությունը, կորցնում են նաև իշխանությունը:

11. Կուսակցությունները եական դեր են խաղում քաղաքական համակարգի և ընդհանրապես հասարակության զարգացման ուղղվածության և քաղաքական կողմնորոշման ձևավորման գործում: Թե ինքնանով են կուսակցությունները այդ խնդիրը լավ կատարում, ուղղակիորեն կախված է քաղաքական համակարգում նրանց գրաված դիրքից: Առավել մեծ հնարավորություններով է օժտված կառավարող կուսակցությունը, որը մշակում և ձևավորում է պետության քաղաքականությունը, այն դարձնելով ամբողջ հասարակության շարժման հիմնական ուղղությունը: Պետական քաղաքականության մշակմանը մասնակցելու և այն կյանքում իրականացնելու ձգտումով էլ շատ հաճախ որոշվում է քաղաքական համակարգում կուսակցության գրաված տեղն ու նշանակությունը:

12. Զավազանց կարևոր է կուսակցությունների կազմակերպչական գործունեությունը, որը հիմնականում արտահայտվում է որոշակի կադրային քաղաքականության իրականացմամբ: Դեկավար կադրերի ընտրումն ու առաջադրումը իրականացվում է երկու ճանապարհով, ա) դեկավար մարմինների ընտրություններում թեկնածուների առաջադրում և ընտրությանը աջակցություն, բ) այս կամ այն պետական պաշտոնում կառավարող կուսակցության ծրագրերն ընդունող և նրա սկզբունքներին հավատարիմ մասնագետների նշանակում: Այս դեպքում հաշվի է առնվում տվյալ մասնագետի և՛ քաղաքական, և՛ մասնագիտական հատկանիշները: Քաղաքական կադրերի միջոցով կուսակցությունը իր քաղաքական գիծն է իրականացնում ինչպես պետական մարմիններում, այնպես էլ այլ կազմակերպություններում, իր քաղաքական ազդեցությունը տարածելով քաղաքական համակարգի մյուս հաստատությունների վրա:

13. Ակզբունքային նշանակություն ունի ներկուսակցական գործունեությունը, որն ուղղված է կուսակցության շարքերի միասնությանն ու ամրապնդմանը, այնպիսի արժեքների և նորմերի մշակմանը, որոնք նպաստում են կուսակցության անդամների և կողմանակիցների մոտ կուսակցության նկատմամբ վստահություն և հավատ ձևավորելու: Դրա նշանակությունը մեծ է հատկապես զանգվածային կուսակցությունների համար, որոնք քննադատության զգալի մասի շահերի պաշտպանի դերն ստանձնելով, իրենց առջև դրված խնդիրները կարող են իրականացնել միայն միասնական և կուր շարքերի առկայության պայմաններում:

3. Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը և դասակարգումը

Քաղաքական կուսակցությունները իրենց բազմազանությամբ հանդերձ արտաքնապես որոշակի ֆունկցիաներով և ընդհանուր գծերով նմանվում են իրար: Այդ նմանություններն էլ թույլ են տալիս որոշակի ընդհանուր հատկա-

նիշները վրա կուսակցություննեց տեսնակորե, խմբակորե ու դասակարգել: Կուսակցություննեի տիպարանության ունեում կարող է ընկած լինել տարբեր շահակնիշներ, որոնց ընդգծում են նրա հիմնական եույունն ու գործունեության ուղղվածությունը: Օրոհա կուսակցություննեից կարող են իրարից տարբերվել նամ նկատելի իրար ըստ դասակարգային ընդյոթ, ըստ գաղափարախոսության, ըստ ծագման, ըստ ներքին կառուկերուզարան կառուկածքի, ըստ հասարակարգի կառուկմք ունեցած իսրալեբեության, ըստ քաղաքանան համակարոսում գոսկած ոիղթ, ըստ կարգակիմաստ և այլն:

Քննարկեց դրակցից հիմնականները

Սոցիալ-դասակարգային ընդյոթ դուսե չարանիչ դիտելու դեպում նրանի է առկում այն հանգամանքը, թե կուսակցությունը ինչպիսի սոցիալական խմբերի շահեր է պատահարում: Դրանք կարող են լինել բանկուներ, ջուրոհաներ, գյուղացիներ, մանր սերակառուկեր, տրավորակցությունել: անարա-վաշխատանան հուսկ և այլն: Յուրաքանչյուր կուսակցության հիմնական առանձնահատկերունքը նրա սոցիալական ուղղվածությունն ու քաղաքական նպատակներն են: Դասակարգային ընդյոթ պայմանագրված է նրանով, որ կուսակցության գործունեությունը ուղղված է կոնկրետ դասակարգի կամ դասակարգերի, սոցիալական խմբի ու խավի շահերի պաշտպանությանը: և որպեսզի այդ խնդիրը կարողանա մարմնակորել կանցում, կուսակցության քարտեզային նպատակն է դառնում իշխանության նվաճումը, առանց որի նա իր ֆունկցիան ըր կարող կատարել: Դենց դիտեցով էլ, հիմնականում պայմանակորմված են կուսակցությունների ռազմավարական ինտիմներն ու քաղաքական սատորակցությունը: Ըստ սոցիալ-դասակարգային ընդյոթ տարբերակման ընդունված է առանձնացնել, կոնկրետական, սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական, որոնք կողմորդված են պաշտպանելու աշխատակորանան նալերի շահերը, ջուրոհական, լիերակորոտական, պարականղայան, որոնք պաշտպանում են ունեոր խավերի, ֆինանսարդյունաբերության տալիտայի մեկաշնորի շահերը, ջուրոհ-դեմոկրատական, որն աղտատայում է միջին խավերի, մանր սերականալուերի շահերը և այլն:

Ըստ գաղափարախոսության կուսակցությունները բաժանում են ա) գաղափարա քաղաքական, որոնց գործունեությունը ունակում է ընչ թե շատ հստակ նաակորված գաղափարախոսության վրա կենեց կոնկրետանան, սոցիալիստանան, լիերակիցի, պեիականության և այլն: բ) Դրաժառոկ կամ այլ կերպ առան ընտրության կուսակցություններ, որոնք զգուս-գործում են նախընտարան չղանում առակել որաուրիչ ու ժամանակի առումով ակորուզ այս կամ այն գաղափարները, կոնկրետ, լիտուկները է տարբերություն մի կուսակցություններ այս կազմակերպությունները անելի մեծ ուշադրություն են դարծում իրենց ընտրողներ, քան իրենց կուսակցության անդամների վրա: Արանց ակելի ընչ են գաղափարեզան, հաճախ կազմակերպում են գանգալալին խաղող միջոցառումներ բակցության

յան խավերին իրենց կողմը գոսկելու և ընտրություննեում խաղությունան դասելու համար: գ) Կարիզմատիկ-առաջնորդական կուսակցություններ, որոնք իրենց անդամներին համակարում են հեղինակություն ունեցող այն հասի շուրջը, որի գաղափարներն ու մտքոր առանց վերաաաորության ընտրանում են կուսակցության քոլոր աղդանների կողմից:

Ըստ իշխանության համակարոսում գրաված տեղի կուսակցությունները լիտում են ա) լիզակ-որինանանագլած, որոնց գործունեությունը անբարկված է տնեցով և ընդունկում է անտուրյան կողմից: Դրանք իրենց հերթին կարող են լինել իշխող, իշխանակետ և ընտնմաաիկ կուսակցություններ, որոնցից լիտաքանկուրը քաղաքական համակարոսում որոշակի դեր է կատարում, հասնապատահան իր կրաված դիրքի և ունեցած ինարակցությունների:

բ) կենեակ, ակղելված կուսակցություններ, որոնց գործունեությունը աղգելված է տնեցով, սակայն որոնք ակղելվ գործում են ընդհատաում և ձգտում են ինդալընան ձանաղաղով նկանել իշխանությունը:

Ըստ կազմակերպայանան կառուկվածքի կարելի է տարբերակել:

ա) գանգալալին կուսակցություններ, որոնք ընտրել է մշտական և մեծ թվով անդամություն: Զանգվածային կուսակցությունները առանձնանում են քաղախոսական հստակ կողմառուշմաք, ակղիվ դաստորակցական գործունեությանը: անդամներ և կուսակցության տարեկո կատուցների միջև սերտ կապերի առակայությանը: Այս կուսակցությունների ֆինանսակորան ոիմեական աղբյուրը անդամակցությունն են: Զանգվածային կուսակցությունները մեծ դեր են խաղում ընակցության գաղափարա-քաղաքական դաստիարակության, նրանք քաղաքական կողմառուշման ձևակորման գործում: կուսակցությունը դեկալումում են մասնագետ-պրոֆեսիոնել: քաղաքական գործիչները: Այդպիսից են կոնկրետական, սոցիալիստական, անցալում կան ֆուշոնտական կուսակցությունները:

բ) Կաղուկին կուսակցություններ, որոնցում աղկա է ընեստ որոշակի և մշտանան սերակություն: Այս կուսակցությունները սպորաքար սամմանակակ թվով անդամներ ունեն, անդամակար լեն հալաքում: Արանց գործունեությունը հիմնակասուս ուղղված է ընտրությունների կազմակերպմանը, ընտրող ունեանկով ընտրությունների ընթացում ապահովել այն թեկնաուներո հաղթանակը: որոնք ֆինանսալան և կուրապեյն առակցում են սուսակցությանը: Այս կուսակցությունները ոիմանակում առտատայում են իշխանակորների, քաղաքական գործիչների, ֆինանսա-արդյունաբերական կորնարակի և գործարար աշխարի այն ներկայացուկիների շահերը: ողբեր ապառովում են կուսակցության կուրապան ծախսերը, որոնց ներդրաններով ծղաքում են կուսակցության հիմնական միջոցները: Դրա հալակ էլ այն կուսակցությունները մեծ ձգտում շատ անդամներ ունանել, այլ ձգտում են իրենց կողմը գրամել, ինչքան հնարակոր է ակելի շատ սոցիալական վերնակալի նեոսակցուկներ, ոնկիակակոր և ունեոր անուրունելի:

Ըստ այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են ներկուսակցական հարաբերությունները, ներկուսակցական կազմը, հասարակարգի նկատմամբ կուսակցության վերաբերմունքը, քաղաքական համակարգի նկատմամբ վերաբերմունքը և այլն կարելի է տարբերակել ժողովրդավարական-դեմոկրատական և ամբողջատիրական-տոտալիտար կուսակցություններ:

Ժողովրդավարական են համարվում այն կուսակցությունները, որոնք այլ կուսակցությունների հետ ազատ մրցակցության պայմաններում ձգտում են գանգվածների առավել մեծ մասի փտահուությանն արժանանալ և նրանց օգնությամբ, նրանց ազատ կամքի դրսևորմամբ ընտրությունների ընթացքում նվաճել քաղաքական իշխանությունը: Ժողովրդավարական կուսակցություններն իրենց գործունեությունը ենթարկում են սահմանադրական նորմերին և գործում են սահմանադրության շրջանակներում: Այս կուսակցությունները կարող են արտահայտել հասարակության տարբեր խավերի շահեր, նայած, թե դրանցից ով ինչ գաղափարախոսություն և ծրագրեր է պաշտպանում, ասենք՝ բանվորների, գյուղացիների, մանր սեփականատերերի և այլն:

Ամբողջատիրական կամ տոտալիտար կուսակցությունները երկրում միակ գոյություն ունեցող օրինական կուսակցությունն է, որը իր ձեռքում կենտրոնացնելով իշխանության բոլոր լծակները արգելում է այլ կուսակցությունների գոյությունը և հասարակության բոլոր դասակարգերին, սոցիալական խմբերին ու խավերին պարտադրում է իր գաղափարախոսությունն ու շահերը: Ներկուսակցական կյանքում առկա է խիստ կենտրոնացում ու կարգապահություն, վարից-վեր իշխում է անվերապահ ենթակայության սկզբունքը, արգելված է տարակարծությունն ու այլախոսությունը: Ամբողջապես հսկելով իշխանության բոլոր մարմինների վրա կարողանում է օրենքը վերածել իր քաղաքական նպատակների իրականացման հիմնական միջոցի:

Կուսակցությունների տարբերակման առավել տարածված տեսակետներից է ըստ ծախս-կենտրոն-աջ կողմնորոշման դասակարգումը: Այս արտահայտությունները ծագել են դեռևս 1789 թվականի Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ: Սահմանադրական ժողովը դաիլիճում տեղաբաշխվել էր այնպես, որ միապետության վերականգման կողմնակիցները նստել էին նախազահողից աջ, իսկ հեղափոխական-հանրապետության կողմնակիցները նրա ձախ կողմում: Այդ պահից սկսած, նրանք, ովքեր վճռական են տրամադրված աշխատավորների շահերը պաշտպանելու, սոցիալական խնդիրների գերակայությունը ընդունելու և դրա իրականացումը հակված են կատարել հասարակական քաղաքական համակարգի արմատական, հեղափոխական վերափոխման ճանապարհով քաղաքական տեսություններում անվանվեցին ծախեր: Իսկ այն կուսակցությունները կամ քաղաքական գործիչները, ովքեր պաշտպանում էին ունևորների շահերը, քարոզում էին պահպանողական գաղափարներ, հասարակության կյանքում ձգտում էին ռեֆորմների, խաղաղ զարգացումների ճանապարհով փոփոխություններ կատարել կուլեցին աչեր: Այսօր քաղաքական գրականության մեջ բոլոր այն կուսակցությունները, որոնք հանդես են գալիս հասարակության սոցիալական

խնդիրների առաջնայությամբ, պետության դերի ուժեղացման տեսակետները, ընդունված է ծախ կողմնորոշման կուսակցություն անվանել: Դրանցից են հիմնականում կոմունիստական, սոցիալիստական, երբեմն նաև ազգային ճակատի տիպի կուսակցությունները: Կան կուսակցություններ, որոնք ծախ համարվող կուսակցությունների հետ ունեն բավականին ընդհանուր գծեր, սակայն առկա են նաև սկզբունքային տարբերություններ, ինչը նրանց ծախերից դեպի կենտրոն է տեղափոխում, ինչի համար էլ նրանց անվանում են ծախ կենտրոնական կուսակցություններ: Օրինակ՝ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները:

Կենտրոնականի տակ հասկանում են հիմնականում գյուղացիական, մանր-բուրժուական խավերի շահերը պաշտպանող կուսակցություններին: Օրինակ՝ Ազրարային, գյուղացիա-դեմոկրատական և նման տիպի կուսակցություններ:

Այլ են համարվում այն կուսակցությունները, որոնք հակված չեն ընդունելու հասարակության մեջ արմատական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, և ձգտում են լնչին փոփոխություններով պահպանել գոյություն ունեցող հասարակարգը, ինչի համար էլ նրանց անվանում են պահպանողական կուսակցություններ: Դրանք հիմնականում ունևոր դասի, ֆինանսատնտեսական օլիգարխիայի շահերի արտահայտիչներն են: Այդպիսի կուսակցություններից են լիբերալ-դեմոկրատական և լիբերալիզմի սկզբունքները պաշտպանող այլ կուսակցություններ:

Շնդհանրացնելով վերը շարադրածը, կուսակցությունները կարելի է դասակարգել ըստ հետևյալ ընդհանուր հիմքերի, ընդունելով որս հեղինակներ Յու.Վ.Իրինսկի, Վ.Դ.Չուտուլի և Լ.Վ.Չուտուլայի տված դասակարգումը (տես 5.289)

- Ըստ դասակարգային ընդթի կուսակցությունները կարող են լինել.
- բանվորական, կոմունիստական, սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական,
- բուրժուական, մանր բուրժուական, ազգային բուրժուական, առևտրա-վաշխարողական,
- միջին խավերի, դեմոկրատական, նաև սոցիալ դեմոկրատական,
- գյուղացիական, գյուղացիա-դեմոկրատական, ազրարային,
- միջդասակարգային, բանվորա-գյուղացիական, մտավորական, ազգայինական, կրոնադավանաբանական, ցեղային և այլն:
- Ըստ քաղաքական գործունեության եղանակների կուսակցությունները լինում են
- առավելապես պատյամենտական,
- առավելապես արտապարլամենտական:
- Ըստ գոյություն ունեցող հասարակարգի նկատմամբ վերաբերմունքի.
- հեղափոխական,
- ռեֆորմատորական,
- լիբերալիստական

- պահպանողական:
- Ըստ կազմակերպչական կառուցվածքի տեսակի.
- կադրային,
- զանգվածային, կոշտ կամ ճկուն կազմակերպությամբ:

Ըստ հասարակության քաղաքական համակարգում գրաված տեղի և դերի.

- ազդեցիկ (կառավարող կամ չկառավարող) կամ քիչ ազդեցիկ,
- ձախեր, կենտրոնականներ, աջեր,
- ընդդիմադիր:

Ըստ պետական կառուցվածքի ձևի նկատմամբ վերաբերմունքի

- ունիտար-միապետական,
- ֆեդերալիստական,
- անջատողական:

Ըստ գաղափարախոսության

- խիստ գաղափարեցված, ուղղափառ (օրթոդոքսալ) կամ ոչ ուղղափառ,
- պրագմատիկական, դասակարգային կամ ընտրողական:

← 4. Կուսակցական համակարգեր

Կախված երկրում գոյություն ունեցող կուսակցությունների քանակից և տեսակներից քաղաքական համակարգում նրանց միջև հաստատվում են որոշակի կապեր ու փոխհարաբերություններ: Այդ կապերի և փոխհարաբերությունների ամբողջությունն ընդունված է անվանել կուսակցական համակարգ: Լինելով հասարակության քաղաքական համակարգի կարևորագույն գործոն, կուսակցական համակարգը մեծ ազդեցություն է թողնում հասարակության ամբողջ քաղաքական կյանքի վրա, չնայած նրան, որ յուրաքանչյուր կուսակցություն գործում է իր ծրագրերի և կանոնադրության շրջանակներում և յուրաքանչյուրը պայքարում է իշխանության նվաճման համար:

Քաղաքական գրականության մեջ լայն տարածում է գտել միակուսակցական, երկկուսակցական և բազմակուսակցական համակարգերի ընդունումը:

Միակուսակցական համակարգի պայմաններում իշխանությունը ամբողջապես հսկվում է մեկ կուսակցության կողմից, իսկ հաճախ կուսակցությունն ու իշխանությունը այնքան են սերտաճում, որ փաստորեն կուսակցությունն է իրականացնում իշխանությունը, կամ լավագույն դեպքում իշխանության բոլոր մարմինները կատարում են միայն կուսակցության պատվերը:

Որպես կանոն, այդպիսի համակարգը բնորոշ է ամբողջատիրությանը (ԽՍՀՄ-ԱՄԿ, ԳԺԳ-ԶԿԿ և այլն): Որոշակի զարգացման աստիճանի հասած արդյունաբերական երկրներում որպես կանոն միակուսակցական համակարգ է հաստատվում, երբ իշխանության գլուխ են անցնում կոմունիստները, իսկ զարգացող երկրներում, հատկապես եթե նրանց ազգային ազա-

տագրական պայքարի շնորհիվ նոր են ձեռք բերել անկախություն, իշխանության գլուխ է անցնում լայն ազգային ճակատի նշանակություն ունեցող կուսակցություն: Սկզբնական շրջանում և՛ կոմունիստական և՛ ազգային ճակատի տիպի միակուսակցական համակարգերը կարող են հսկայական դրական տեղաշարժեր արձանագրել, քանզի այդպիսի համակարգը թույլ է տալիս համախմբել ամբողջ հասարակության միջոցներն ու հնարավորությունները և դրանք ուղղել կոնկրետ տնտեսական և սոցիալական խնդիրների իրականացմանը: Դրա վրա ապացույցն է 20-ական թվականներից հետո երկրի ավերված տնտեսության արագ վերականգնումը, հայրենական պատերազմից հետո երկրի վերականգնումը և այլն: Սակայն հասարակության հետագա զարգացումը ցույց տվեց, որ միակուսակցական համակարգը չի կարող ապահովել հասարակության հետագա առաջընթացը, չի կարող ժողովրդի և իշխանության միջև ներդաշնակ կապեր հաստատել, ընդունակ չի ապահովելու հասարակության կյանքի ժողովրդավարացման իրականացումը, խղճնդոտում է իշխանությունների բաժանմանը, արգելափակում է հասարակության մեջ առաջավոր մտքի, այլախոհության, հակադիր հայացքների գոյությունը, ինչը վերջին հաշվով հանգեցնում է հասարակության կյանքի բոլոր կողմերի հետընթացին ու քայքայմանը: Չուր չի աաված, որ ցանկացած մենիշխանություն տանում է դեպի կործանում: Կուսակցական մրցակցության բացակայության պայմաններում ցանկացած այլախոհություն իշխող կուսակցության կողմից ենթարկվում է հալածանքի, իսկ երբեմն էլ ուղղակի ֆիզիկական ոչնչացման: Իշխող կուսակցությունը այն, ինչ չի համապատասխանում իր գաղափարներին, տեսակետներին և վարած քաղաքականությանը և դրա համար նրա հասցեին արված ցանկացած քննադատություն որակում է որպես թշնամական գործունեություն և խիստ պատժում է: Իշխող կուսակցությունը իր վրա վերցնելով պետության բոլոր ֆունկցիաները, փաստորեն փոխարինում է կենտրոնացված իշխանությանը: Քաղաքական կյանքի ձախճացումը իր ազդեցությունն է թողնում հասարակության կյանքի բոլոր ոլորտների վրա: Հասարակության մեջ հաստատվում է վախի, կասկածանքի մթնոլորտ: Բնակչությունը թաքցնում է իր իրական մտքերը, չնայած արտաքինապես համաձայնվում է իշխանությունների հետ: Արդյունքում, գնալով ավելի ու ավելի կամայական ու սանձաբժակ է դառնում կուսակցական բյուրոկրատական ապարատը, հովանավորությունը, կաշառակերությունը, անպատեժիխությունը դառնում են հասարակական կյանքի մշտական ուղեկիցներ: Ժողովրդի կողմից իշխանության գործունեության վրա որևէ հսկողություն քայքայվում է, ընտրությունները դառնում են ձևական միջոցառումներ, ժողովրդը վերջնականապես և ամբողջապես մեկուսացվում է քաղաքական կյանքից: Վերջիվերջ հասարակությունը զրկվում է իր զարգացման հնարավորություններից և հետագա գոյության ու առաջընթացի անհրաժեշտ պայման է դառնում միակուսակցական համակարգի վերացումը:

Երկուսակցական համակարգը հիմնականում բնորոշ է այն երկրներին, որոնցում հաստատված են տվյալ հասարակության անդամների մեծամաս-

նության կողմից ընդունելի կայուն սոցիալական, տնտեսական և մշակութային ավանդական արժեքներ: Այս դեպքում միայն երկու առաջատար կուսակցություններ են մրցակցում իշխանության նվաճման համար և նրանցով է ձևավորվում հասարակական քաղաքական համակարգի միջուկը: Երկկուսակցական համակարգը չի ենթադրում անկայման միայն երկու կուսակցությունների ամկայություն Կարող են լինել և այլ կուսակցություններ (օրինակ, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում կոմունիստները), սակայն դրանք քաղաքական համակարգում էական դեր չեն խաղում, չեն արժանանում տվյալ երկրների բնակչության գոնե այնքան մասի աջակցությանը, որ կարողանան տեղ ապահովել պառլամենտում կամ կառավարությունում: Երկկուսակցական համակարգ ասելով նկատի է առնվում այն երկու հիմնական կուսակցությունների առկայությունը, որոնք մշտապես (ավանդաբար) դիտվում են որպես իշխանության հիմնական հավակնորդներ Որպես երկկուսակցական համակարգի դասական օրինակներ կարելի է նշել ԱՄՆ, որտեղ քաղաքական պայքարի հիմնական սուբյեկտներ են դեմոկրատներն ու հանրապետականները, Մեծ Բրիտանիան՝ լեյբորիստներն ու պահպանողականները: Այդ կուսակցությունները իրարից հիմնականում տարբերվում են գործնականում միևնույն խնդրի լուծման տարբեր մոտեցումներով: Այսինքն, նրանցից ոչ մեկը հասարակական կյանքի արմատական վերափոխումների հարց չեն դնում, և հավանաբար, հենց դրա համար էլ մշտապես արժանանում են բնակչության մեծամասնության աջակցությանը, որոնք համար եղած արժեքները (հասարակության տնտեսական կարգը, իրավական ու բարոյական նորմերը և այլն) հարազատ ու ընդունելի են: Նրանք հասարակության առջև ծառայած խնդիրների լուծման տարբեր մոտեցումներ են առաջարկում և կախված այն բանից, թե նրանցից որի մոտեցումն է ընդունելի բնակչության մեծամասնության համար, նա էլ իշխանությունը գլխավորելու և կառավարություն կազմելու իրավունք է ստանում: Իհարկե, պետք է նկատել, որ տարբեր երկրներում առկա են նրանք բնորոշ առանձնահատկությունները, որոնք էական դեր են խաղում քաղաքական համակարգի գործառույթներում:

Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում երկկուսակցական համակարգը հաճախ ներկայացնում են, մի կողմից, լիբերալիստական ուղղվածությամբ կուսակցությունները, որոնք պայքարում են հասարակական կյանքին պետության նվազագույն միջամտության, ազատ շուկայական մրցակցության, անհատի իրավունքի գերակայության համար: Մյուս կողմից, սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող կուսակցությունները, որոնք պայքարում են բնակչության սոցիալական բարձր պաշտպանվածության, տնտեսության վրա պետության հսկողության մեծացման, մեծ շահույթից առավել մեծ հարկումների, առաջնահերթ համարելով սոցիալական խնդիրների իրականացումը, ինչն էլ հաճախ նրանց օգնում է ընտրություններում հաղթանակ տանել: Եվ պատահական չէ, որ Եվրոպայի բավականին թվով երկրներում իշխանության գլուխ են կանգնած հենց սոցիալիստական կամ սոցիալ-դեմոկ-

րատական կուսակցությունները: Այստեղ նույնպես կարող են լինել այլ կուսակցություններ, սակայն հիմնական պայքարը ընթանում է այդ երկու ուղղությունները ներկայացնող կուսակցական խմբավորումների միջև:

Երկկուսակցական համակարգի բնորոշ գիծն այն է, որ այն բավականին կայուն և կանխատեսելի է դարձնում հասարակության քաղաքական կյանքը, հեշտացնում է բնակչության կողմնորոշումը ընտրությունների ընթացքում, ընտրողը հնարավորություն է ստանում ազատ ընտրելու իր համար նախընտրելի ծրագիր ներկայացնող կուսակցությանը կամ անհատին: Երկկուսակցական համակարգը որոշակի երաշխիք է ստեղծում նաև կառավարության կայունության և արդյունավետ գործունեության համար, քանի որ իշխանության գլուխ անցած կուսակցությունը, սովորաբար, խորհրդարանում մեծամասնություն ունի:

Երկկուսակցական համակարգը կարող է լինել կոշտ, խիստ, և ճկուն, որը չափված է ինչպես կուսակցությունների բնույթից, այնպես էլ գոյություն ունեցող քաղաքական համակարգում ընդունված սկզբունքներից և մեթոդներից: Օրինակ, Մեծ Բրիտանիայում պառլամենտի կարևորագույն քաղաքական որոշումների ընդունման ժամանակ երկու կուսակցության բոլոր պատգամավորներն էլ պետք է քվեարկեն իրենց կուսակցության հանձնարարության օգտին: Կուսակցական կարգապահության խախտումը շատ խիստ պատժվում է: Իսկ ԱՄՆ-ում կուսակցական համակարգը ավելի ճկուն է: Այստեղ կոնգրեսականը պարտավորված չէ կատարելու կուսակցության պատվերը և կարող է ազատ դրսևորել իր կամքը: Իհարկե, դա հետագայում կարող է ազդել նրա կուսակցական կարիերայի վրա:

Բազմակուսակցական համակարգը բնորոշ է բավականին մեծ թվով երկրների. Կուսակցությունների քանակը այս համակարգում կարող է տատանվել 3-4-ից (Բելգիա, Գերմանիա, Ավստրիա) մինչև 80-100 (Ռուսաստան, Չայնաստան և այլն): Բազմակուսակցությունը ժողովրդավարության անհրաժեշտ պայմաններից մեկն է, որը վերջ տալով որևէ կուսակցության իշխանության մենաշնորհին, պայմաններ է ստեղծում մարդկանց ազատ մտածողության, գաղափարական կողմնորոշման և քաղաքական գործունեության համար: Սակայն կուսակցությունների չափազանց մեծ քանակի առկայությունը չի նշանակում, որ ժողովրդավարությունը վերջնականապես հաստատվել է այդ երկրում: Ավելին, չափազանց շատ թվով կուսակցությունների առկայությունը հասարակության քաղաքական անկայունության, նրա թույլ զարգացման, ժողովրդավարական ինստիտուտների կայացած չլինելու վկայությունն է. քանզի նորմալ չէ, երբ մի քանի տասնյակ կուսակցություններ են միանգամից հավակնում իշխանության:

Կուսակցությունների չափազանց շատ քանակը, սովորաբար, բնորոշ է անցումային շրջանում գտնվող երկրներին, երբ դեռ հստակ ձևավորված չէ հասարակության քաղաքական համակարգը, երբ դեռ կայացած չեն ոչ միայն քաղաքական համակարգի հիմնական կառույցներն ու ինստիտուտները (իշխանությունների բաժանման սկզբունքը, ընտրությունների համակար-

զը, օրենսդրական դաշտը և այլն), այլև հենց իրենք, կուսակցությունները, երբ դեռևս ամրագրված չեն պետության զարգացման հիմնական ուղենիշները արձանագրող ծրագրեր, որոնք, սովորաբար, ազգային կամ պետության զարգացման ծրագրեր են կոչվում և ընկած են պետության քաղաքականության հիմքում:

Բազմակուսակցական համակարգի ձևավորումը արդյունք է տարբեր գործոնների, որոնցից կարելի է առանձնացնել պատմական, ազգային, սոցիալական, դասակարգային, գաղափարական, հասարակության զարգացման աստիճանի, բնակչության քաղաքական գիտակցության մակարդակի և այլն գործոնները, որոնցից յուրաքանչյուրը կարող է պատճառ դառնալ մեկ և ավելի կուսակցությունների առաջացման: Բազմաթիվ մակարդակային կուսակցությունների առաջացման պատճառ կարող է լինել նաև ազգային մասնատվածությունը, խմբակային, կլանային կամ շահերն ու հավակնությունները, տեղական մտածելակերպը և այլն: Սովորաբար, այդպիսի քանակի կուսակցությունների ռոյալտումը ժամանակավոր բնույթ է կրում:

Բազմակուսակցական համակարգի կայացմանն ու հաստատմանը գուզընթաց, որքանով որ իրոք կայանում են նրա հիմնական բաղադրիչները՝ ժողովրդավարական հաստատություններն ու ինստիտուտները, որքանով հստակեցվում է պետության քաղաքականության գերակայող ուղղությունները, որքանով բարձրանում է քաղաքացիների զաղափարա-քաղաքական գիտակցությունը, այնքանով էլ աստիճանաբար առանձնացնում են այն հիմնական քաղաքական կուսակցությունները, որոնք իրենց գործունեությամբ արժանանում են բնակչության որևէ մասի աջակցությանը և նրանց շնորհիվ ընտրություններում որոշակի հաջողությունների են հասնում, դառնալով խորհրդարանում բնակչության այդ մասի ներկայացուցիչը և այդ չափով մասնակից դառնալով իշխանության իրականացմանը: Մնացած կուսակցությունները աստիճանաբար ծուլվում են իրենց գաղափարներին հարակից կուսակցությունների մեջ կամ ուղղակի վերանում են: Եվ քանզի էլ պատահական չէ, որ ոչ մի զարգացած երկրում այսպիսի բազմազանությամբ կուսակցություններ չկան: Իհարկե, բազմակուսակցական համակարգի պայմաններում ավելի լավ են արտահայտված տարբեր դասակարգերի, սոցիալական խմբերի և խավերի շահերը: Բայց դա հնարավոր է դառնում միայն այն ժամանակ, երբ կուսակցությունները կայացած են և իրենց կազմակերպվածությամբ և գործունեությամբ, իրենց ծրագրերով ու գաղափարախոսությամբ կարողանում են նվաճել բնակչության որոշակի մասի վստահությունն ու աջակցությունը, դրանով իսկ ստեղծելով կայուն սոցիալական բազա, ինչը նրանց իրական հնարավորություն է տալիս պայքարելու իշխանության նվաճելու կամ նրանում տեղեր ունենալու համար:

Բազմակուսակցությունը նպաստում է ինչպես համամասնական ներկայացուցիչների առավել լայն շրջանակի ընդգրկում, այնպես էլ մեծամասնական ընտրություններում երկու փուլերով ընտրությունների կազմակերպում, որը ստիպում է մի շարք կուսակցությունների միավորվել և հաս-

դես գալ միասնական ծրագրով, իսկ հետագայում նաև ստեղծել կոալիցիոն կառավարություն:

Չնայած թվացյալ ակնառու արժանիքներին (բազմախոհություն, տարակարծություն, մրցակցության ազատություն, մարդու իրավունքների պաշտպանություն և այլն) բազմակուսակցական համակարգը ունի իր թերությունները Ի տարբերություն երկկուսակցական համակարգի, բազմակուսակցական համակարգերը չեն նպաստում հասարակության առավել միավորմանն ու համախմբմանը, նրա միասնական պահանջունքների բավարարմանը: Եթե երկկուսակցական համակարգում յուրաքանչյուր կուսակցություն պայքարում է հնարավորինս շատ ընտրողների իր կողմը գրավել և արդյունքում հաղթող կուսակցությունը ստանում է բնակչության կեսից ավելի վստահությունը, ապա նա արդեն հասարակության մեծամասնության շահերի արտահատիչ է դառնում, որի դեպքում բարձրանում է նաև քաղաքական համակարգի արդյունավետությունը:

Բազմակուսակցության պայմաններում, երբ առկա են բազում, համեմատաբար, փոքր կուսակցություններ և նրանցից յուրաքանչյուրը արտահայտում է ընտրողների չնչին մասի շահերը, իշխանությունը կարող է գտնվել հակադիր կեցվածք ունեցող քաղաքական գործիչների ձեռքին, որի պայմաններում, սովորաբար իշխանությունը արդյունավետ չի գործում, հաճախանում են կառավարական ճգնաժամերը, սրվում են կոալիցիայի ներսում միջկուսակցական հակասությունները, հետևաբար անկայուն է դառնում նաև քաղաքական համակարգը: Տարբեր կուսակցությունների ծրագրերի ազատ ընտրությունը բազմակուսակցության ժամանակ, որքան էլ տարօրինակ լինի, դառնում է անհնարին: Բանն այն է, որ բազմակուսակցական համակարգում կառավարությունը միշտ լինում է կոալիցիոն և նրանում ընդունվող որոշումները այդ կոալիցիոն կազմող կուսակցությունների փոխգիշումների և փոխհամաձայնության արդյունք են, որոնք շատ հաճախ չափազանց հեռու են այն ծրագրային խոստումներից, որոնք նրանք տվել են իրենց ընտրողներին: Այսինքն՝ կոալիցիայի մեջ մտած կուսակցությունները երբեմն դրված են լինում երկընտրության առջև, կամ պետք է չկատարեն իրենց ընտրողների պատվերները, կամ պետք է դուրս գան կոալիցիայից: Այդ պատճառով էլ, շատ հաճախ բազմակուսակցական համակարգերում կոալիցիոն կառավարությունները կամ քայքայվում են, կամ ստիպված են լինում հրաժարական տալ: Սուր հակասություններից և ճգնաժամերից կարողանում են երբեմն խուսափել այն կառավարությունները, որոնք ձևավորված են այնպիսի կուսակցություններից, որոնք նախընտրական կուսակցական միավորումներ են ստեղծում և միասնական ծրագիր են ներկայացնում իրենց ընտրողներին և հաղթելու դեպքում համատեղ իրագործում են հենց այդ ծրագիրը, ինչը արդեն նրանց միջև հակասությունների առաջացումը բացառում է:

Բազմակուսակցական համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղում խորհրդարանական խմբակցությունների գործունեությունը, որտեղ առավել

տեսանելի է խորհրդարանական կուսակցությունների դիրքորոշումները, մոտեցումներն ու կեցվածքը հասարակության առջև ծառայած կարևոր խնդիրների, քննչությանը հուզող հարցերի վերաբերյալ: Խորհրդարանում ծավալված գործունեությունը կուսակցությունների համար նաև հաջորդ ընտրություններում հաջողության հասնելու հիմնական երաշխիքներից մեկն է:

5. Զաղաքական կուսակցությունների առաջացումը հայ իրականության մեջ

Հասարակության մեջ քաղաքական կուսակցությունների առաջացմանը, սովորաբար, նախորդում է կոնկրետ սոցիալական խմբերի, խավերի, դասակարգերի կամ ազգի կողմից իրենց շահերը կազմակերպված ձևով պաշտպանելու անհրաժեշտության գիտակցումը:

Հայ իրականության մեջ քաղաքական կուսակցությունների առաջացումը իր որոշակի առանձնահատկություններն է ունեցել, ինչը պայմանավորված էր 19-րդ դարի երկրորդ կեսի այն իրադարձություններով, որում հայտնվել էր հայ ժողովուրդը: Այն է.

ա) Հայ ժողովուրդը գտնվում էր բռնապետության ծանր լծի տակ, ինչը առաջնային էր դարձնում ազգային ազատագրական խնդիրները:

բ) Հայաստանը բաժանված էր երկու տարբեր բռնապետությունների միջև, ինչը դժվարեցնում էր ազգի համախմբումը և միասնական պայքարի կազմակերպումը:

գ) Գոյություն ուներ ազգի ազատագրման, կամ ազգային հիմնախնդիրների լուծման տարբեր, երբեմն իրարամերձ մոտեցումներ, որի հիմքում ընկած էր տարբեր սոցիալական շերտերի շահերի պաշտպանությունն ու կողմնորոշումները:

դ) Ազգային ազատագրական գաղափարներն ու ծրագրերը հիմնականում մշակվում էին դրսում, այլ երկրների օրինակների վրա, առանց հաշվի առնելու հայ իրականության առանձնահատկությունները, ինչի պատճառով էլ դրսից ներմուծված շատ գաղափարներ մատչելի չէին հայրենիքում ապրող ազգի մեծամասնության համար:

Սովորաբար քաղաքական կուսակցությունների առաջացմանը նախորդում է որոշակի նախապատրաստական ժամանակաշրջան և տեղի է ունենում որոշակի փուլերով, որոնք համարվում են քաղաքական կուսակցությունների առաջացման անհրաժեշտ պայմաններ: Դրանք են՝

ա) երկրում քաղաքական գործունեության համար ստեղծված նպաստավոր պայմանները,

բ) ժողովրդի ծանր սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը, որ առաջացնում է ժողովրդի ղգձոհությունը և ծնում է իշխանությունների դեմ կազմակերպված պայքարի անհրաժեշտություն,

գ) գանգվածների գաղափարա-քաղաքական գիտակցության ձևավորումը,

դ) ազգի առջև դրված խնդիրների իրագործմանը ժողովրդի ակտիվ մասնակցության գիտակցումը,

ե) գանգվածներին համախմբելու ընդունակ, քաղաքական ակտիվ ուժերի և նրանց մշակած ծրագրերի անկայությունը:

Հայ քաղաքական կուսակցությունների առաջացմանը նախորդել է մի ժամանակաշրջան, որը կոչված էր գաղափարապես նախապատրաստելու և ազգային ուժերը համազգային խնդիրների լուծումներ առաջարկող ծրագրերի շուրջը նրանց համախմբելու համար:

19-րդ դարի երկրորդ կեսին Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներում տեղի ունեցան խոշորամասշտաբ քաղաքական իրադարձություններ, որոնք նշանակալից ազդեցություն ունեցան հայ իրականության վրա: Այդ պայմաններում հասարակության շերտավորման և դասակարգային շահերի համապատասխան էլ ձևավորվեցին հայ հասարակական քաղաքական հոսանքները, որոնք արտահայտվեցին հասարակական մտքի երեք հիմնական ուղղություններով. Դրանք են.

1. **Կղերա-ֆեոդալական հոսանք**, որն արտահայտում էր հայ հետադեմ հոգևորականության, ավատատիրական (ֆեոդալական) և արտոնյալ ունևոր դասի շահերը: Լինելով հետադիմական գաղափարների քարոզիչ, այն ձգտում էր միապետական, ֆեոդալական կարգերի վերականգման, եկեղեցու դերի բացարձակեցման և այլն: Այդ հոսանքի հիմնական պարագլուխներն էին Գաբրիել Այվազովսկին (1812-1880) և Հովհաննես Զամուռնյանը (1801-1888): Այս հոսանքի ներկայացուցիչները դեմ էին հայ ժողովրդի ազատագրական պայքարին, նրա առաջադիմությանը, աշխարհաբար լեզվին, աշխարհիկ դպրոցին և այն ամենին, ինչը կարող էր նպաստել ժողովրդի կրթությանն ու լուսավորությանը: Նրանք կատաղի պայքար էին մղում հայ ժողովրդի ազատության և առաջադիմության համար մարտնչող ուժերի դեմ և կոչ էին անում ժողովրդին հնազանդվել և չպայքարել տիրապետող օտար բռնապետության դեմ. Հավանաբար այն պարզ պատճառով, որ օտար բռնապետությունը նրանց արտոնությունների պաշտպանության հիմնական երաշխիքն էր, իսկ լիբերալ-բուրժուական հեղափոխական-դեմոկրատական գաղափարները մերժում էին այդ արտոնությունները:

2. **Լիբերալ-բուրժուական հոսանքի** ձևավորումը պայմանավորված էր նախ բուրժուազիայի տնտեսական, քաղաքական ու գաղափարական դիրքերի հաստատման ու ամրապնդման անհրաժեշտությամբ, ինչը Եվրոպական երկրների մեծ մասում բուրժուական գաղափարախոսության տարածման և կապիտալիստական կարգերի հաստատման արդյունք էր:

Լիբերալ-բուրժուական հոսանքը պաշտպանում էր զարգացող ազգային բուրժուազիայի շահերը և պայքարում էր միապետական և ֆեոդալական կարգերի դեմ, ձգտելով դրանք փոքրել խաղաղ բարեփոխումների ճանապարհով և դեմ էր ժողովրդական-գանգվածային շարժումներին և հեղափոխական պայքարին: Այդ հոսանքի աչքի ընկնող ներկայացուցիչներն էին

Ստեփանոս Նազարյանը, Նահապետ Ռուսիյանը, Գրիգոր Օտյանը և ուրիշներ

Ստ Նազարյանը (1812-1879) հայ լուսավորչական շարժման ակնապետ դեմքերից էր 1856 թվականին Նա Նալբանդյանի հետ միասին ստեղծեցին իր ժամանակի ամենատառաջահիմնական ամսագիրը՝ «Հյուսիսսփայլը»: Լինելով մեծ հայրենասեր Ստ. Նազարյանը ամսագրի էջերում համարձակ տպագրում էր հայ ժողովրդի ազգային իրավունքների, նրա քաղաքական, ինքնիշխանությունն ունենալու վերաբերյալ ուսանելի հոդվածներ, Սակայն Նա ղեմ էր պետական կարգերը հեղափոխական ճանապարհով փոխելուն, հետևաբար Նաև հեղափոխությունների, ապստամբությունների և այդ ճանապարհով ազգային ազատագրական պայքարին: Այնուհանդերձ, լիբերալ-բուրժուական, հոսանքը իր դրական ազդեցությունն ունեցավ հայ իրականության վրա թե՛ քաղաքական գիտակցության և թե՛ գաղափարական պայքարի ձևավորման գործում:

3. **Հեղափոխական-դեմոկրատական հոսանքը** հայ իրականության մեջ ձևավորվեց որպես ճնշված, շահագործվող լայն խավերի շահերի պաշտպանությանն ուղղված գաղափարախոսություն: Նրա առաջացման ու զարգացման համար մեծ դեր են խաղացել Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի ազատագրական շարժումներն ու այնտեղ ստեղծված հեղափոխական իրադրությունը:

Հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքի կենտրոնական դեմքը, հիմնադիրն ու պարագլուխը Միքայել Նալբանդյանն էր (1829-1866), որը քաղաքական պայքարի ճանապարհ էր անցել ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատներ Զեյնիչևսկու, Գերցենի և Ռոբոլյուբովի հետ և դարձել նրանց գաղափարների ջատագովը հայ իրականության մեջ: Հեղափոխական-դեմոկրատները ճնշված ժողովուրդների փրկությունը տեսնում էին զինված ապստամբության ճանապարհով տիրապետող կարգերը տապալելու մեջ: Հայ իրականության մեջ այն պետք է իրականացվեր երկու ուղղությամբ: Մի կողմից օտար բռնակալության՝ ցարիզմի և սուլթանիզմի լծից ազատվելու, մյուս կողմից, սեփական շահագործողներից ազատագրվելու ուղղությամբ: Մ. Նալբանդյանը առաջիններից մեկն էր, որ ամբողջ խորությամբ ըմբռնեց հայ ժողովրդի ազատագրման իրական ուղին և ժողովրդին զինված պայքարի կոչ էր անում ինչպես օտար, այնպես էլ սեփական հարստահարողների դեմ: Նա իրեն ամբողջապես նվիրեց Հայաստանի ազատության և անկախության գաղափարին և դարձավ այդ գաղափարների առաջին քարոզիչը: «Այս նպատակին հասնելու համար, - գրում է նա, -չպիտի ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև գեներով և արյունով, եթե մի օր արժանի լինենք գեներ առնել մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով...: Ահավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսնում ենք ազգի փրկությունը»: Մ. Նալբանդյանի այս գաղափարները դարձան հայ ժողովրդի ազատագրական պայքարի հիմնական նշանաբանը:

Քաջածանոթ լինելով հայ իրականությանը, որտեղ հայ ժողովրդի ճնշող շեծամասնությունը գյուղացիություն էր Նա գյուղացիության ազատագրությունը կապում էր հողային հարցի լուծման հետ: Ազգի ազատագրության գլխավոր խնդիրը Նա համարում էր սոցիալական ազատագրումը: Նա չէր ընդունում ռեֆորմների ճանապարհով ազատության հասնելու հնարավորությունը և անհաշտ պայքար էր մղում լիբերալ-բուրժուական գաղափարախոսության դեմ:

Մ Նալբանդյանը մեծ ջանքեր գործադրեց Հայաստանի երկու հատվածների դեմոկրատական շարժումը, բոլոր առաջավոր հեղափոխական ուժերը համախմբելու և ընդհանուր միասնական ճակատ ստեղծելու ընդհանուր հպարտավորողի դեմ: Նրա գործով ու գաղափարներով դաստիարակվեց ազատասեր ու հայրենասեր գործիչների մի քանի սերունդներ, բազում հետևորդներ ու համախոհներ:

Հայ ճանաչված հեղափոխական-դեմոկրատներից էին Նաև Ստեփան Ռսկանը (1825-1901), Հարություն Մվածյանը (1831-1874), Մաթևոս Մամուրյանը (1830-1901) և շատ ուրիշներ, որոնք մեծ ներդրում ունեցան 19-րդ դարի երկրորդ կեսի ազգային ազատագրական պայքարի գործում:

Այսպիսով հայ հասարակական-քաղաքական հոսանքների, հատկապես հեղափոխական-դեմոկրատների գաղափարական գործունեությունը իրենց կնիքը դրեցին ազգային ազատագրական պայքարի վրա, որն իր սուր ծայրով ուղղված էր հայ ժողովրդի ամենախիստին թշնամու՝ Ռուսական բռնակալության դեմ:

Ազատագրական գաղափարների ազդեցության տակ 19-րդ դարի 60-70-ական թվականներին հայ իրականության մեջ ձևավորվեցին հեղափոխական մեծ թվով խմբակներ, որոնք փորձեցին ազատագրական գաղափարների տարածման և զինված պայքարի կազմակերպման միջոցով ազատագրել արևմտյան Հայաստանը: Այդ պայքարի առաջին խոշոր դրսևորումն էր 1862 թվականի Չեյթանի ապստամբությունը, որը շրջադարձային էր հայ ազատագրական շարժման մեջ: Ապստամբության կայծերը տարածվեցին Սասունում, Մուշում, Էրզրումում, Վանում և այլուր: Հայաստանի երկու հատվածներում էլ ձևավորված բազում խմբակները իրենց հիմնական խնդիրն էին համարում ազգային ազատագրական պայքարի կազմակերպումն ու իրականացումը: Այդպիսի խմբակներից էին 1869 թվականին Ալեքսանդրապոլում ստեղծված «Բարենպատակ ընկերությունը», (ղեկավարներ Արսեն Կրիտյան, Պետրոս Հայկազունի), 1874թ. Ղարաբաղի խայն (Վանաձոր) հիմնված «Հայրենիքի սիրո գրասենյակ» (Համբարձում Բայասանյանց), որոնք հայ երիտասարդության մեջ տարածում էին Մ Նալբանդյանի ազատաիրական և հայրենասիրական գործերն ու գաղափարները, ժողովրդին էին հասցնում նրա «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» նշանավոր աշուտությունը:

1872 թվականին Վանում հիմնվում է «Միություն ի փրկություն» խմբակը (Հակոբ Կուրյան, Նշան Երզնկյան), որի նպատակն էր կազմակերպել

ուայերի միասնական պայքարը Թուրք և Զուրդ բռնակալների դեմ: Խմբակը Վասպուրականի հայերի ազատագրությունը կապում էր Ռուսաստանի օգնության հետ:

1881 թվականին Խաչատուր Կարեկցյանի գլխավորությամբ Էրզրումում (Կարին) ստեղծվում է «Պուշտպան Յայրենյաց» գաղտնի կազմակերպությունը, նպատակ ունենալով համախմբել հայերին և միացյալ ուժերով պայքարել Թուրքական բռնակալության դեմ և ազատագրել հայրենիքը: Կազմակերպության աչքի ընկնող ղեկավարներից էին նաև Կ.Նշիկյանը և Բ.Նավասարդյանը: Կազմակերպությունը տպում էր հայրենասիրական կոչեր, ձեռք էր բերում զենք ու զինամթերք և զինում իր անդամներին, պատրաստվելով ապստամբության:

1882թ. Մոսկվայի հայ ուսանողների կողմից հիմնադրվում է «Յայրենասերների միությունը», որը հիմնականում Ռուսաստանի նարոդնիկական գաղտնի խմբակների աշխատանքներին մասնակցած Մոսկվայի, Պետերբուրգի, Օդեսայի, Կիևի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանողներից էր կազմված: Նրա հիմնադիրն ու ղեկավարը Ներսես Աբեյանն էր (1855-1933), որի խմբագրությամբ հրատարակվում էր անլեգալ օրգան «Ազատության ավետաբեր» թերթը: Նրանք իրենց առաջնահերթ խնդիրն էին համարում հայկական հարցի լուծումը, խստորեն դատապարտում էին թուրքական բռնությունները և խիստ քննադատության էին ենթարկում Եվրոպական երկրներին, որոնք որևէ քայլ չէին ձեռնարկում Բեռլինի կոնգրեսում ընդունված 61-րդ հոդվածի իրագործման ուղղությամբ, համոզված լինելով, որ հայ ժողովրդին Եվրոպան ազատություն չի տալու, որ ազատությունը պետք է ձեռք բերվի արյան գնով:

1882թ. Երևանում ձևավորվում է «Յայասեր և Ազգասեր» խմբակը, (ղեկավարներ Վասակ Պապաջանյան, Ռուբեն Զալալյան և այլ ճանաչված մտավորականներ): Խմբակի հիմնական նպատակն էր հայրենասիրական, ազգային-ազատագրական գաղափարների տարածումը, պայքարում էր ազգային ճնշման դեմ, պայքարում էր հայ մշակույթի զարգացման համար:

1870-80-ական թվականները Թիֆլիսը դարձել էր կովկասահայերի ազատագրական պայքարի գլխավոր կենտրոնը:

Բեռլինի կոնգրեսից հետո հայ մտավորականությունը վերջնականապես հույսը կտրեց այլ ուժերի օգնությամբ Յայաստանը ազատագրելու հնարավորությունից, և թափ առավ սեփական ուժերով Յայաստանի ազատագրության գործի կազմակերպումը: Այս գաղափարների տարածման գործում իրենց անգնահատելի ծառայությունը ունեցան Գրիգոր Արծրունին, Ռաֆֆին, Ռաֆայել Պատկանյանը և մի շարք ուրիշ հայրենասեր-մտավորականներ: Այդ պայմաններում 1883 թվականի սկզբներին մի խումբ հայրենասեր երիտասարդների (Զրիստափոր Միքայելյան, Ալեքսանդր Պետրոսյան, Խոսեֆ Մալումյան, Գ. Միրզոյան, Գ. Ղարաջյան և Կարո Մելիքյան) ջանքերով հիմնադրվում է մի հայրենասիրական գաղտնի խմբակ, որը ակտիվ պայքար էր ծավալում ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության

դեմ: Նշենք, որ այս բոլոր խմբակներն էլ, ինչպես Թուրքիայի, այնպես էլ ցարիզմի կողմից գործում էին խիստ հալածանքի պայմաններում: Չնայած նրանց միջև հաստատված թույլ կապերին, նրանք բոլորն էլ գրեթե նույն նպատակն ունենալով, գործում էին առանձին-առանձին, ինչը, բնականաբար, մեծ արդյունք տալ չէր կարող: Սակայն այս խմբակների գործունեությունը ցույց տվեց, որ ազգային ազատագրական պայքարի հաջողությունը կարող է ապահովվել միայն տարանջատված խմբակների միավորման և համագալսյին միասնական պայքարի միջոցով: Ինչի շնորհիվ էլ աստիճանաբար ընդլայնելով շարժման ներքին և արտաքին կապերը հիմք դրվեց ազգային ազատագրական պայքարի նոր փուլի: Ազգային-հայրենասիրական խմբակներին փոխարինելու եկան հայ քաղաքական կուսակցությունները:

1885 թվականին Ֆրանսիայի Մարսել քաղաքում հիմնադրվում է Արմենականների կուսակցությունը, որը հայ իրականության մեջ ստեղծված առաջին քաղաքական կուսակցությունն էր: Նրա հիմնադիրն էր Մկրտիչ Փորթուզալյանը (1848-1921): Մինչ այդ Մ.Փորթուզալյանը հասարակական քաղաքական մեծ գործունեություն էր ծավալել Վանում: Լինելով Վանի կենտրոնական վարժարանի տնօրեն, այն վերածել էր հեղափոխական աշխատանքների և ազգային ազատագրական գաղափարների տարածման կենտրոնի, որին ակտիվ մասնակցություն ունեին նաև Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան հայրիկ) և Գրիգոր Սրվանձտյանը: Այդ գործունեության համար թուրքական կառավարությունը նրան հետապնդում էր, ինչի պատճառով էլ նա փախչում է Ֆրանսիա և Մարսելում հիմնում է «Արմենիա» թերթը, որի անունով էլ կոչվեց Արմենականների կուսակցությունը: Նրանք իրենց գլխավոր խնդիրն էին համարում Արևմտյան Յայաստանի ազատագրումը, և իրենց գործունեությունը հիմնականում ծավալել էին Վանում: Ունեին իրենց ծրագրերը, որը կոչվում էր «Վարդապետություն Յայաստանի ազատագրության», որտեղ հարց ու պատասխանի ձևով առաջադրվում էր Յայաստանի ազատագրման հիմնական ուղիները: Յիմնական նպատակը Յայաստանում բուրժուա-դեմոկրատական կարգեր հաստատելն էր: Նրանք հայ ժողովրդին կոչ էին անում զենքի միջոցով և սեփական ուժերով ազատագրել հայրենիքը, միաժամանակ ընդունելով, որ Յայաստանը կարելի է ազատագրել նաև մեծ տերությունների օգնությամբ, իսկ ոմանք դա նույնիսկ փողի միջոցով էին հնարավոր համարում: Լինելով ազգային ազատագրական քաղաքական կազմակերպություն Արմենական կուսակցությունը առաջադիմական դեր խաղաց Արևմտյան Յայաստանում, արտահայտիչն էր հայ բուրժուազիայի, պաշտպանելով նաև հայ գյուղացիության և ժողովրդական մյուս խավերի շահերը: Սակայն դրանով հանդերձ, նրան չհաջողվեց ստեղծել զանգվածային և կուռ կազմակերպություն: 1921 թվականին Պոլսում նրանք վերակազմվեցին և կոչվեցին Ռամկավար ազատական կուսակցություն և գործում են մինչև օրս:

1887 թվականին մի խումբ Կովկասահայ ուսանողներ ժնևում հիմնեցին «Յնչակ» թերթը և նույն անունով «Յնչակյան կուսակցությունը»: Կուսակցու-

թյան հիմադիրներն էին Ավետիս Նազարբեկյանը (Նազարբեկ), Մարո Վարդանյանը, Ռուբեն Խանգատյանը, Գաբրիել Կաֆյանը և այլն: Նրանք կապեր ունեին Գ. Պլեխանովի ու Նրա ժնկյան խմբակի, ինչպես նաև Նարոդնիկների հետ, որոնց գաղափարների ազդեցության տակ էլ Նրանք կազմել էին իրենց ծրագիրը: Ծրագրում նրանք արձանագրում էին մոտակա և հեռակա նպատակներ: Մոտակա նպատակ էին համարում հայկական հարցի լուծումը, Արևմտյան Հայաստանի ազատագրումը, գտնելով, որ նախ պետք է ձեռք բերել լայն ռամկապետական, քաղաքական ազատություն և ազգային անկախություն, որպեսզի հնարավոր լինի հասնել սոցիալիստական հասարակության ստեղծման, ինչը նրանց հեռակա նպատակն էր: Այդ նպատակների հասնելու հիմնական միջոց էին համարում զինված պայքարը, հեղափոխությունը: Հնչակյանները իրենց համարում էին մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական կուսակցություն և սկզբում իրենց կոչում էին «Հայ սոցիալիստ հեղափոխականների կազմակերպություն» և չափազանց շատ նմանություններ ունենալով Նորաստեղծ «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցության հետ, փորձեցին միավորվել և միասին պայքարել Հայաստանի ազատագրության համար, սակայն ինչ-ինչ պատճառներով միասնությունը չկայացավ:

1890 թվականին Թիֆլիսում Զրիստափոր Միքայելյանի և Նրա համախոհների ջանքերով տարբեր հեղափոխական խմբակների միավորմամբ ստեղծվեց Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, որի օրգանն էր «Դրոշակ» թերթը:

Հայ Հեղափոխական Դաշնակցության ելույթները խեղաթուրված է խորհրդահայ պատմագրության մեջ, այն բնորոշելով որպես բուրժուական և ազգայնամոլական կուսակցություն: Իրականում ՀՀԴ-ն սոցիալիստական կուսակցություն է, որը միշտ էլ հանդես է եկել որպես շահագործվող աշխատավոր խավերի արտահայտիչ, անշուշտ, առաջնային խնդիր համարելով հայկական հարցի լուծումը և Արևմտյան Հայաստանի ազատագրումը:

Չենք կարծում, որ խորհրդահայ պատմաբանները ծանոթ չէին ՀՀԴ ծրագրին, ուր շատ հստակ ասված է,- «Սոցիալիզմը աշխատավոր ընդհանրության և մարդու անհատի ազատագրության ամենից գաղափարական և ամենից հեղափոխական շարժումն է...: Սոցիալիզմը կոչված է նվաճելու մարդկային իրավունքների ու ազատությունների իդեալը և հաստատելու Ազատ մարդու, Ազատ Զաղաքացու և Ազատագրված Աշխատանքի գերիշխան վեհապետությունը...: Սոցիալիզմը դեմ է ազգային բացառիկության ամեն մի գաղափարի, ցեղապաշտության, կամ ազգայնամոլության ամեն մի երևույթի, ազգերը ինքնուրույն արժեք են, օժտված հավասար կարելիություններով...: Յուրաքանչյուր ազգի բնական և անկապտելի իրավունքն է կազմում սեփական հայրենիքը- իբրև այդ ազգի գոյատևման, և առաջադիմության և ստեղծագործական կենսական ազդակ» (տես ՀՀԴ ծրագիր, ընդունված 1982թվ. 22-րդ ընդհանուր ժողովի կողմից: Էջ 6-11): Այս բոլորից հետո ՀՀԴ-ն անվանել բուրժուական կամ ազգայնամոլական առնվազն ան-

հեթեթություն է, որը կարող էր միայն կոմունիստներին կամ լիբերալիզմի գաղափարներին բնորոշ լինել:

1890 թվականին Դաշնակցականներն ու Հնչակյանականները փորձեցին միավորվել, հրատարակեցին իրենց մանիֆեստը, ուր ասված էր «Հայ հեղափոխականների դաշնակցությունը սրանով դիմում է բոլոր հայերին և հրավիրում կանգնել մի դրոշակի տակ, նպատակ դնելով Թուրքաց Հայաստանի տնտեսական և քաղաքական ազատությունը»: Սակայն միավորման փորձը ձախողվեց և այդ կուսակցությունները հետագայում նույնիսկ թշնամացան իրար հետ, ինչը մեծ հարված էր ազգային ազատագրական պայքարին:

Դաշնակցությունը 19-րդ դարի 90-ական թվականներին իր ամբողջ գործունեությունը կենտրոնացրել էր Արևմտյան Հայաստանում հայկական հարցի լուծման շուրջը: Ստեղծվում էին գաղտնի կազմակերպություններ, որոնք պետք է զինեին ժողովրդին և նախապատրաստեին ապստամբության: Ստեղծվում էին զինված խմբեր, ֆիդայական ջոկատներ և կռվում էին թուրքական կանոնավոր բանակի դեմ: Սակայն այդ ամբողջը մեծ արդյունք տալ չէր կարող, նախ, որ այդպես էլ չստեղծվեց ազգային պայքարի միասնական ճակատ, և առանձին-առանձին ֆիդայական խմբերը, որքան էլ նրանք նվիրյալ հայրենասերներ լինեին, ի գորու չէին կռվելու և հաղթելու թուրքական կանոնավոր բանակին:

Երկրորդ, խոշոր տերությունները թուրքիային դիտելով իրենց դաշնակից և իրենց շահերից ելնելով չէին աջակցում հայերին և չէին հակադրվում թուրքերին:

Երրորդ, ոչ միայն միասնություն չկար հայ քաղաքական կուսակցությունների միջև, այլև սկզբնական շրջանում Հնչակները, իսկ հետագայում նաև հայ բոլշևիկները իրենց հակադաշնակցական և հակազգային գործունեությամբ կազմալուծում էին ազգային ազատագրական պայքարի շարքերը:

Այնուհանդերձ, հայ քաղաքական կուսակցությունները, հատկապես ՀՀԴ-ն, իրենց նշանակալից դերն ունեցան հայ իրականության մեջ, ինչպես ազգային ազատագրական պայքարի կազմակերպման, հայ դատի համար պայքարի գործում, այնպես էլ սփյուռքում հայապահպանման ազգանվեր գործում, երբ բոլշևիկյան հալածանքների պատճառով ստիպված էին հեռանալ հայրենիքից և գործել օտարության մեջ:

6. Կուսակցական համակարգերի առաջացման առանձնահատկությունները Հայաստանում

20-րդ դարի սկզբներին Անդրկովկասում ստեղծվում են սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, որոնց գաղափարական հիմքը մարքսիզմն էր: Հայ իրականության մեջ սկզբում առաջանում էին խմբակների ձևով: 1901թվականին Երևանում հիմնվում է սոցիալ-դեմոկրատական խմբակ, որը կապեր ուներ Թիֆլիսի ՌՍԴԲԿ կոմիտեի հետ: 1901-1902 թվականներին սոցիալ-դեմոկրատական խմբակներ են ստեղծվում Ալեքսանդրապոլում և

տեղի կայազորում, Կարսում, Ալավերդիում և Զաղպատում 1902 թվականին թիֆլիսում ստեղծվում է «Հայ սոցիալ-դեմոկրատական միություն» կազմակերպությունը, որի հիմնադիրներն էին Ստ. Շահումյանը, Բ.Կևոնյանցը, Ա. Չուրաբյանը, Ա.Խումարյանը և ուրիշներ: Սակայն ստեղծված բոլոր խմբակներն ու կազմակերպությունները իրենք իրենց համարում էին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ճյուղերից մեկը: Այսինքն, որպես այդպիսին, հայ իրականության մեջ միասնական և ինքնուրույն սոցիալ-դեմոկրատական կուսակցություն չկար:

1903թվականին թիֆլիսում գումարվում է ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների առաջին համագումարը, որը որոշում է միավորել առանձին-առանձին գործող սոցիալ-դեմոկրատական կոմիտեները և ստեղծել կուսակցության կովկասյան միությունական կենտրոն: Լինելով Համառուսաստանյան ՌՍԴԲԿ ճյուղերից մեկը, հայ բոլշևիկները փորձում էին Կովկասում իրագործել հեղափոխության ճանապարհով ցարիզմի տապալման խնդիրը: Այդ ժամանակ արդեն բոլշևիկների գաղափարական առաջնորդն էր Վ.Ի.Լենինը, որը մարքսիստական ուսմունքում որոշակի փոփոխություն էր մտցրել կապված կապիտալիզմից սոցիալիզմին անցման ուղիների հետ:

1918թվականի Մայիսի 28-ին Հայաստանը հռչակվեց որպես անկախ հանրապետություն. Ավելի քան 600 տարիներ պետականությունը կորցրած Հայ ժողովուրդը վերջապես վերագտավ իր անկախությունը և վերականգնեց իր պետականությունը: Առաջին հանրապետության կառավարությունը գլխավորում էր Հայ Բեղափոխական Դաշնակցությունը: Կառավարության կազմի մեջ կային նաև Զնչակյաններ, ռամկավարներ, էսեռներ, մենշևիկներ և նույնիսկ մեկ բոլշևիկ:

Դա փաստորեն Հայաստանում բազմակուսակցական քաղաքական համակարգի ստեղծման առաջին փորձն էր: Սակայն նրան վիճակված չէր կայանալ, քանզի չափազանց կարճ տևեց առաջին հանրապետության կյանքը, նույնիսկ պետականությունը չհասցրեց լրիվ կայանալ:

Առաջին հանրապետության ստեղծման հենց առաջին օրից հայ բոլշևիկները սկսեցին համախմբել իրենց ուժերը ընդդեմ նորաստեղծ հայկական իշխանության: 1918-1920 թվականների ընթացքում հայ բոլշևիկները կազմակերպում են գործադուլներ, հակակառավարական ցույցեր և այլ բոլորը ուղղված էր դաշնակցական կառավարության դեմ: Ցավալին այն է, որ կոմունիստ պատմաբանները, նկատի ունենալով հայ կոմունիստների կողմից ազգային բանակի քայքայմանն ու կազմալուծմանն ուղղված գործունեությունն ու կատարած աշխատանքները, այն գնահատում էին որպես հայ բոլշևիկների մեծագույն ձեռքբերումներ: Իրականում դա նորանկախ հայոց պետականության, հայ ժողովրդի միասնության և նրա ազգային նպատակների դեմ ուղղված մեծագույն դավաճանություն էր:

1920 թվականի հունիսին կազմավորվեց Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որն էլ ավելի ուժեղացրեց պայքարը դաշնակցական կառավարության դեմ: Հայ կոմունիստները ոգևորվելով Հայաստանի սահ-

մանների մոտ կանգնած Ռուսական 11-րդ բանակի առկայությունից, Հայաստանի ողջ տարածքով մեկ կազմակերպում էին ցույցեր, գործադուլներ և ապստամբություններ: Նրանք զինված ապստամբություն են կազմակերպում Կարսում, Սարիղամիշում, Նոր-Բայազետում, Դիլիջանում, Չանգեզուրում և այլուր, որոնք, սակայն, ճնշվում էին կառավարության կողմից: 1920 թվականին մայիսմեկյան ցույցեր կազմակերպվեցին Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ղարաբիլիսայում, Չանգեզուրում և այլ տեղերում: Այդ ցույցերից հետո Ալեքսանդրապոլում երկաթուղայինները ապստամբություն բարձրացրին և Մայիսի 10-ին Հայաստանի Զեդեկում ամբողջ Հայաստանի տարածքում հռչակվեց սովետական իշխանություն. Այդ հակակառավարական ապստամբությունը նույնպես ճնշվեց:

Սակայն բոլշևիկյան քարոզչությունը, նրա կազմակերպված ցույցերը, գործադուլները, ապստամբությունները վերջնականապես թուլացրին և քայքայեցին դեռևս կայացման ընթացքում գտնվող հայոց անկախ պետականությունը: Ստանալով Բոլշևիկյան Ռուսաստանի համաձայնությունն ու աջակցությունը Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա: Գտնվելով երկու զիջատիչ բռնապետությունների ճնշման տակ, հետեղեռնյան, թույլ ու քայքայված Հայաստանը ի գործու չէր դիմակայելու այդ ճնշումներին. Հայաստանի գլխին կախվել էր ոչնչանալու և արևմտյան Հայաստանի ճակատագրին արժանանալու վտանգը: Այդ պարագայում հանուն Հայաստանի հետագա գոյության, Դաշնակցական կառավարությունը որոշեց իշխանությունը հանձնել Կոմունիստներին: 1920 թվականի դեկտեմբերի 1-ին ՌՍՖՍՀ կառավարության ներկայացուցիչ Լեգրանի և Հայաստանի կառավարության կողմից լիազորված Դրոյի ու Համբարձում Տերտերյանի միջև տեղի ունեցան բանակցություններ: Դեկտեմբերի 2-ին Լեգրանի և Դաշնակցական կառավարության ներկայացուցիչների միջև Երևանում կնքվում է համաձայնագիր, որով դաշնակցությունը ճանաչում էր կոմունիստների իշխանությունը Հայաստանի ողջ տարածքում:

Զետագայում բոլշևիկ տեսաբանները հրճվանքով կգրեն, որ «Դա հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության» հաղթանակն էր Հայաստանում, որը իր ձևով նաև խոստովանանք էր այն բանի, որ Հայ բոլշևիկները Ռուսաստանի օգնությամբ կարողացան վերացնել Հայոց անկախ պետականությունը, ինչը նրանք իրենց մեծագույն հաղթանակն էին համարում:

Այսպիսով, Հայաստանում վերացվեց դեռևս ձևավորման փուլում գտնվող բազմակուսակցական համակարգը և հաստատվեց ամբողջատիրական քաղաքական ռեժիմ, որին բնորոշ է միակուսակցական համակարգը:

Յոթ տասնամյակներ շարունակ կոմունիստական կուսակցությունը իր մենաշնորհ իշխանությունն էր հաստատել Հայաստանում, արգելելով այլախոհությունը, այլ կուսակցությունների գոյությունը, բացարձակ հսկողություն սահմանելով հասարակական կյանքի բոլոր կողմերի և իշխանության բոլոր մարմինների վրա, հիմնականում փոխարինելով նրանց:

Միակուսակցական համակարգը Հայաստանում, ինչպես և ԽՍՀՄ մյուս հանրապետություններում վերացվեց ԽՍՀՄ փլուզումից հետո, նրա ողջ տա-րածքում բռնկված հայտնի դեպքերից հետո

1988 թվականի փետրվարին Հայաստանում բռնկվեց ազգային շարժու-մը, որը սկսվեց Արցախը Հայաստանին վերամիավորման պահանջով, վեր-ջացավ ՀՀԸ բռնապետության հաստատմամբ, որի ճակատին գրված էր Անկախ Հայաստանի Հանրապետություն, այդպես էլ չլուծված թողնելով Արցախի խնդիրը:

1990 թվականի օգոստոսին նոր ձևավորված գերագույն խորհրդի կողմից ընդունվեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որում այլ դե-մոկրատական արժեքների հետ հռչակվում էր նաև կուսակցությունների ազատ գործունեության իրավունքը, իսկ 1991 թվականի գարնանը ընդուն-վեց կուսակցությունների մասին օրենքը, որով էլ Հայաստանի Հանրապե-տությունում սկիզբ դրվեց բազմակուսակցական համակարգի առաջացման:

Հայաստանում քաղաքական կազմակերպություններ և կուսակցություն-ներ սկսեցին առաջանալ շարժման հենց առաջին օրերից, իսկ որոշ քաղա-քական կազմակերպություններ (ԱԻՄ, Հայ Դատ) դրանից քիչ առաջ՝ 1987 թվականին աշնանը: Ծարժման գլուխ էր կանգնած Ղարաբաղ կոմիտեն (Իգոր Մուրադյան, Վաչե Սարուխանով), որի կազմը չգիտես ինչու մայիսին փոխվեց և ժողովրդին ներկայացվեց 11 հոգուց բաղկացած նոր խումբ: Հավանաբար այդպես էր ձեռնտու արևմուտքի տեղապահ ուժերին: 1988թ. օգոստոսին Ղարաբաղ կոմիտեն հայտարարեց համազգային շարժման կազ-մակերպման մասին, որը 1989թ. նոյեմբերից վերածվեց կուսակցության (ՀՀԸ): 1989 թվականի մայիս-հունիս ամիսներին ձևավորվեց Հայաստանի Ազգային Անկախության կուսակցությունը, որը շատ արագ մեծ հեղինակու-թյուն ձեռք բերեց, և արժանացավ ժողովրդի վստահությանը Պատահակալ չէ, որ բանտից (կամ ինչպես քաղաքական շրջանակներում ընդունված էր անվանել վերապատրաստման կուրսերից) վերադառնալով, Ղարաբաղ կոմիտեն սերտ կապեր և համագործակցություն հաստատեց հենց ՀԱԱԿ-ի հետ, որը ինչպես հետագայում պարզվեց, կապված էր ՀՀԸ լիդերների որո-շակի նկատառումների հետ և քնականաբար ժամանակավոր քնույթ ուներ: 1989 թվականի նոյեմբերին կայացած I համագումարում ՀՀԸ-ն իրեն հռչա-կեց կուսակցություն, որը շատ արագ ճանաչվեց իշխանությունների կողմից, գրանցվեց և դարձավ բացի կոմունիստներից միակ օրինական ընդդիմադիր կուսակցությունը, Արդեն ՀԱԱԿ-ը իր հզորությամբ ու կազմակերպվածու-թյամբ ձեռնտու չէր ՀՀԸ-ին և սկսվեց նրան թուլացնելու և քայքայելու գործ-ընթացը, ինչը շատ չուշացավ՝ 1989 թվականի նոյեմբերի վերջին ՀԱԱԿ-ը պառակտվեց Չմոռանանք, որ ՀՀԸ-ի բոլոր ձեռնարկումների ակտիվ պաշտ-պան էր ՊԱԿ-ը, որը իր գործակալների հզոր բանակի միջոցով կարողանու էր ոչ միայն հսկողություն իրականացնել նոր ձևավորված քաղաքական կազմակերպությունների վրա, այլև ցանկացած ժամանակ դրանք քայքայել, տրոհել, բաժանել ռեալ ուժ չներկայացնող մասերի և թույլ չտալ հզորանալ

ու դառնալ ՀՀԸ-ի համար վտանգավոր հակառակորդ: Նախապես կանխո-րոշված էր (հավանաբար Բուրիդկայում), որ իշխանության պետք է գա ՀՀԸ-ն և իշխանության, ՊԱԿ-ի, իրավապահ մարմինների գործունեությունը ուղ-ղված էր այդ խնդրի իրականացմանը:

1989 թվականի ամռան-աշնան ամիսներին ստեղծվեցին Նախմասնադրական Իրավունք միությունը (Հրանտ Խաչատրյան), Հանրապե-տական կուսակցությունը (Աշոտ Նավասարդյան) և մի շարք հասարակական և մարտական միություններ: Ինքնին հասկանալի է, որ ստեղծված բոլոր հասարակական-քաղաքական կազմակերպությունները, չնայած գործում էին ազատ ու անթաքույց (որքանով դա թույլ էր տալիս ՊԱԿ-ը), իրենց կար-գավիճակով ոչ ձևական (ոչ օրինական, չգրանցված, թույլատրություն չունե-ցող կազմակերպություններ էին):

1990 թվականի օգոստոսին իրենց բացահայտ գործունեության մասին հայտարարեցին Հայ Հեղափոխական Դաշնակցությունը, Ռամկավար Ազա-տական, Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցությունները, ինչը նշանակում էր երկարատև վտարանդիությունից Հայ Ավանդական կուսակ-ցությունների վերադարձ Հայրենիք:

1991թ. գարնանը ընդունվեց կուսակցությունների մասին օրենքը, սկիզբ դնելով բոլոր քաղաքական կազմակերպությունների օրինականացման:

Այսպիսով 1988 թվականից հետո Հայաստանում ձևավորվեց բազում հա-սարակական քաղաքական կազմակերպություններ, որոնց թիվը հարյուրի է մոտենում, ինչի պատճառով էլ բնականաբար չենք թվարկում բոլորին, ոմանք հանպատրաստից, առանց քաղաքական պայքարի փորձ ունենալու, սակայն ազգային հիմնախնդիրների լուծման մտահոգությամբ, ոմանք ավե-լի հստակ ու նեղ շահեր հետապնդելով, ոմանք էլ պատվերով, որոշակի հանձնարարություններ կատարելու համար:

Հայ իրականության մեջ առաջացավ բազմակուսակցական համակարգի ձևավորման բարենպաստ քաղաքական պայմաններ Սակայն, չնայած քա-ղաքական կուսակցությունների առաջացման համար ստեղծված նպաստա-վոր իրավական և քաղաքական պայմանների (օրենքի առկայություն, տնտե-սական ճգնաժամ, հասարակության գաղափարական, քաղաքական և տն-տեսական շերտավորում և այլն), խոսել Հայաստանում կայացած բազմա-նուսակցական համակարգի մասին դեռ վաղ է, կամ գոնե պետք է խոսել որոշակի վերապահումներով Դա պայմանավորված էր հայ իրականության մեջ եղած մի քանի առանձնահատկություններով:

1 Հայաստանում չկար կայուն հաստատված ժողովրդավարական ավանդույթներ, որոնք քաղաքական կուսակցությունների և բազմակու-սակցական քաղաքական համակարգի կայացման անհրաժեշտ պայմանն են:

2 Հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը տասնամյակներ շարունակ նեղուսացված լինելով քաղաքական կյանքից, չունեի քաղաքական

գիտակցության այնպիսի աստիճան, որ կարողանար ճշտ կողմնորոշվել բարդ քաղաքական իրադարձություններում, այդ պատճառով է՝

3. Նա որևէ մեկ քաղաքական կուսակցության չէր դիտում որպես իր շահերի իրական արտահայտիչ էր դառնում **Նրանցից** որևէ մեկի համար ամուր սոցիալական բազա, չէր վստահում նրանց, հատկապես 90-ական թվականների կեսերից սկսած, երբ ՀՀԸ-ն նրան վերջնականապես հուսախաբ արեց:

4. Նոր կուսակցությունները արագ ծագում, իրենց մասին ամպագող-գող հայտարարություն էին անում և նույն արագությամբ էլ մոռացվում էին ժողովրդի կողմից, որոնց ճնշող մեծամասնությանը ժողովուրդը այդպես էլ չճանաչեց:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի կուսակցականացումը տեղի էր ունենում ոչ թե ներքևից, այսինքն՝ ոչ թե ժողովրդի աջակցությանն ու վստահությանն արժանանալով էին դառնում նրա ներկայացուցիչները և տեղ գրավում քաղաքական համակարգում, ինչպես դա տեղի էր ունենում կայուն ժողովրդավարական կարգեր ունեցող շատ երկրներում, այլ վերևից, այսինքն՝ համախոհների փոքր խումբը կամ մի ճանաչված լիդեր իրենք են փնտրում կողմնակիցներ, ֆինանսական աջակցություն և դրանից հետո ստեղծվում քաղաքական կուսակցություն, որոնք սովորաբար փոքրաթիվ են, երբեմն մի քանի հոգուց բաղկացած: Այդ է պատճառը, որ այդ կուսակցություններից շատերը հայտնի են միայն իրենց լիդերով: Այդ ձևով ստեղծված գաճաճ կուսակցություններից շատերը այդպես էլ մնում են չճանաչված ու չընդունված: Իսկ դրանց մի մասը քաղաքական կուսակցության պիտակը կրում է որպես քողաժածկույթ, կատարած հանցագործությունների համար պատասխանատվությունից խուսափելու միտումով (ՀՀԸ-ն և Նրանցից ծնված տարբեր արբանյակ-կուսակցություններ՝ Ազատություն (Բագրատյան), Ճշմարիտ ուղի (Բլեյան) և այլն):

Նման իրավիճակը, անշուշտ, հասարակության քաղաքական կյանքի իրական պատկերն է արտացոլում, որը նաև նշանակում է, որ Հայաստանում բազմակուսակցական քաղաքական համակարգը չնայած ձևականորեն կարծես թե առկա է, (ազգային ժողովում կուսակցությունների առկայությունը, կառավարության մեջ տարբեր կուսակցությունների ներկայությունը և այլն), սակայն իրականում այն կայացած չէ, քանզի բացի իշխող կուսակցությունից կամ կուսակցական բլոկից, մյուս կուսակցությունները, նույնիսկ, եթե նրանց ներկայացուցիչները առկա են կառավարության կազմում, որպես քաղաքական համակարգի բաղադրիչներ, իրենց հիմնական ֆունկցիաները (պաշտպանել այն սոցիալական խմբի և խավի շահերը, որոնց նրանք ներկայացնում են, իրական ազդեցություն ունենալ իշխանության իրականացման վրա, վճռորոշ դեր խաղալ ազգային հիմնախնդիրներին առնչվող օրենքների և որոշումների ընդունման գործում) չեն կատարում:

1998 թվականի փետրվարյան իշխանափոխությունից հետո որոշակի քայլեր կատարվել են Հայաստանում բազմակուսակցական համակարգի

կայացման ուղղությամբ, չկան այն քաղաքական հալածանքներ, արգելված կուսակցություններ և ռատվամիջոցներ, ինչը բնականաբար դրական տեղաշարժ է: Սակայն չկա նաև իշխանության գործունեության սկզբունքների արմատական փոփոխություն, ինչը անհրաժեշտ է նրա նկատմամբ ժողովրդի և քաղաքական ուժերի վստահության վերականգնման համար: Որոշակի հույսեր ծագեցին 1999 թվականի մայիսին ազգային ժողովի ընտրություններում Միասնության դաշինքի հաղթանակից հետո, որի առաջնորդները՝ Վ.Մարգարյանն ու Կ.Դեմիրճյանը իրենց գործունեությամբ ու մոտեցումներով կարող էին լուծում տալ ազգային շատ հիմնախնդիրների և երկիրը դուրս բերել ծանր տնտեսական կացությունից: Միևնույն ժամանակ դրական տեղաշարժ արձանագրվեց բազմակուսակցական քաղաքական համակարգի կայացման գործում, համենայն դեպս ընդդիմադիր կուսակցությունների նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը դա էր հուշում: Սակայն այդ հույսերը՝ նրանց ծնող առաջնորդների հետ միասին, զնդակահարվեցին 1999 թվականի հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովի նիստերի դադարում, օրը ցեռելով, բոլորի աչքի առջև, առանց որևէ խոչընդոտի, ինչը հիվանդ ու աննորմալ հասարակության բնորոշ գծերից մեկն է:

Այնուհանդերձ, պետք է արձանագրել, որ վերջին երեք տարիներում բազմակուսակցական համակարգի կայացման ուղղությամբ Հայաստանում դրական առաջընթացը առկա է:

Գրականություն

1. Համբարյան Ա.Ա. Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին եր.1990
2. Հայ Հեղափոխական դաշնակցության ծրագրի 22-րդ ընդհանուր ժողով. 1982.
3. Զաղաքազիտություն Պետրոսյան Ռ. Հ. եր.2002
4. Евдокимов Е.Б. Партия и политической системе буржуазного общества. Св. 1900
5. Ирхин Ю.В. Зотов В.Д. Зотова Л.В. Политология учебник М. 1999
6. Панарин А.С. Политология учебник. М. 1999
7. Политология. Курс лекций под ред. А.А. Радутина М. 1999
8. Политология. Курс лекций под ред. М.Н.Марченко М. 1997
9. Политология учебник. под ред. В.Н. Лавренко М. 1999
10. Политология под ред. Д.С. Клименьева М. 1997
11. Политология: Энциклопедический словарь. под ред. А.И.Аверьянова М. 1993
12. Политические партии в условиях демократии ФРГ. Фонд К. Аденауэра 1997
13. Политические партии России М. 1995

ՉԼՈՒՆ ՏԱՍՆՍԵԿԵՐՈՐԴ

Քաղաքականության իրականացման հիմնական ոլորտները

Ինչպես արդեն նշվել է վերը, քաղաքականությունը իշխանությամբ օժտված սուբյեկտի կողմից հասարակության կյանքի բոլոր բնագավառներում պետականորեն իրականացվող գործընթաց է: Ինչպես ցույց է տալիս ամենօրյա պրակտիկ գործունեությունը, քաղաքականությունը թափանցելով հասարակության կյանքի բոլոր բնագավառները, ակտիվորեն մասնակցում և ներգործում է այդ ոլորտներից յուրաքանչյուրի կազմակերպման, կառավարման ու կարգավորման, կենսագործունեության և նրան բնորոշ խնդիրների իրագործման վրա: Այդ ոլորտներից յուրաքանչյուրը իրեն առանձնահատուկ խնդիրների բովանդակությամբ, ուղղվածությամբ, ծավալով, սկզբունքներով և այլն տարբերվում են իրարից և դրանցից յուրաքանչյուրում անհրաժեշտ է լինում օգտագործել իշխանության իրականացման տարբեր միջոցներ ու եղանակներ, մոտեցումներ ու սկզբունքներ: Սակայն դրանք, լինելով հասարակության կյանքի անհրաժեշտ բաղադրիչներ, իրար հետ սերտորեն փոխկապակցված են, փոխադարձաբար ենթադրում են իրար, փոխալայմակավորված են իրարով և մեկ ամբողջական միասնություն են կազմում: Անել է, թե դրանք առանձին-առանձին կարող են լինել միայն որպես հարաբերականորեն ինքնուրույն ոլորտներ, ճիշտ այնպես, ինչպես ամբողջի մասն է ունենում որոշակի ինքնուրույնություն: Ուստի, դրանց բաժանումը կարող է զուտ պայմանական բնույթ ունենալ, որի հիմնական նպատակը այդ ոլորտներից յուրաքանչյուրի առանձնահատկություններն ու նրանց միջև փոխադարձ կապերի առավել լրիվ բացահայտելն ու ճանաչելն է, առանց որի նկատմամբ չէ դրանցից յուրաքանչյուրի համար իշխանության իրականացման համապատասխան մեթոդներ ու մոտեցումներ մշակել և իշխանության օգտագործման համապատասխան միջոցներ ու եղանակներ ընտրել:

Որպես հասարակության կյանքի հարաբերականորեն ինքնուրույն ոլորտներ կարելի է առանձնացնել տնտեսական, սոցիալական, իրավական, կադրային, կրթության, գիտության և մշակույթի, պաշտպանության, արտաքին քաղաքականության ոլորտներ, որոնց սովորաբար անվանում ենք պետության տնտեսական քաղաքականություն, սոցիալական քաղաքականություն, իրավական, կադրային, արտաքին քաղաքականություն և այլն: Քննարկենք դրանցից մի քանիսի առանձնահատկությունները: Նախապես նշենք, որ տարբեր պետություններում, տնտեսական տարբեր համակարգերում և քաղաքական ռեժիմներում հասարակական կյանքի տարբեր ոլորտների միջև փոխադարձ կապերը պայմանավորված են մի շարք գործոններով, որոնք պատճառ են դառնում իշխանության իրականացման համապատասխան միջոցների ու եղանակների օգտագործման: Նշենք նաև, որ ներքո շարադրվածը վերաբերում է կայուն ժողովրդավարական քաղաքական համակարգերում գործառնող հասարակությանը:

1.Տնտեսական քաղաքականություն: Հասարակության կյանքի կարևորագույն ոլորտը և նրա հիմքը նյութական արժեքների արտադրության համակարգն է, որտեղ մարդիկ իրենց նյութական պահանջմունքների բավարարման համար ստեղծում են նյութական բարիքներ: Անկախ այն բանից, թե ինչպիսի տնտեսական համակարգ ունի տվյալ պետությունը, հասարակության կյանքում նրա տնտեսական համակարգված գործունեությունը միշտ առաջնային նշանակություն է ունեցել հասարակության համար, չնայած նրան, որ հասարակության զարգացման տարբեր աստիճաններում և տարբեր քաղաքական ռեժիմների պայմաններում այն կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Սա նշանակում է, որ ցանկացած հասարակության զարգացման և առաջընթացի հնարավորությունը նախ և առաջ պայմանավորված է նրա տնտեսական զարգացմամբ, որովհետև, ինչպես ցույց է տալիս պատմությունը և ամենօրյա պրակտիկ գործունեությունը, հասարակության առջև ծագած տարաբնույթ բոլոր խնդիրները՝ սոցիալական, պաշտպանական, կադրային, կրթական, գիտության և մշակույթի և այլն, հնարավոր է իրականացնել միայն այն չափով, ինչ չափով որ դա թույլ է տալիս հասարակության տնտեսական, նյութական միջոցները: Ուստի սխալված չենք լինի ասելով, որ մարդկային կյանքի ու կենսագործունեության ողջ համակարգը ուղղակիորեն կախված է նյութական արժեքների արտադրությունից, սեփականատիրության, բաշխման, փոխանակման ու սպառման ձևից ու բնույթից, այն բանից, թե ինչքանով են բավարարվում մարդկանց նյութական պահանջմունքները: Եվ հենց այդ պատճառով էլ նյութական արտադրության ոլորտը հասարակության կենսագործունեության ու զարգացման հիմնական, առաջնային և որոշիչ գործոն է համարվում:

Սակայն մյուս կողմից, հասարակության նյութական արժեքների արտադրության համակարգի զարգացումը ուղղակիորեն կախված է հասարակության կյանքի մյուս ոլորտներում իրականացվող քաղաքականության բնույթից, ձեռքբերումներից ու հաջողություններից: Այսինքն, որ չափով որ տնտեսական քաղաքականության իրականացումն է իրական պայմաններ ստեղծում պետության կողմից հասարակության կյանքի մյուս ոլորտներում ձեռնարկած խնդիրների իրականացման համար, ճիշտ այդ չափով էլ այդ ոլորտներում իրականացվող քաղաքականության ձեռքբերումներն են օբյեկտիվ ու նպաստավոր պայմաններ ստեղծում տնտեսական քաղաքականության իրականացման համար:

Արդի ժողովրդավարության պայմաններում հասարակության տնտեսական կյանքին պետության մասնակցության ձևն ու բնույթը պայմանավորված է տվյալ երկրում հաստատված սեփականատիրական հարաբերությունների բնույթից և դրանց համապատասխան ընդունված օրենքների և նորմերի համակարգից: Լիբերալ-բուրժուական սկզբունքներով ժողովրդավարական երկրներում (ԱՄՆ), որտեղ բացարձակապես իշխում է մասնավոր սեփականատիրական հարաբերությունները, հասարակության տնտեսական կյանքի վրա պետության ազդեցությունն ու հսկողությունը հասցված է

նվազագույնի: Այս ասարագայում պետության մասնակցությունը տնտեսական կյանքին դրսևորվում է հիմնականում հարկային քաղաքականության, տնտեսական պատժամիջոցների կիրառման և արտաքին շուկաների ձեռքբերման ձևով: Պետությունը զրեթե մասնակցություն չունի արտադրության կազմակերպման, արտադրական հարաբերությունների կարգավորման, և նմանատիպ գործընթացներում:

Ժողովրդավարության այլ համակարգերում, հատկապես սոցիալական առաջնությունը ընդունող երկրներում, որտեղ իշխում են սոցիալ-դեմոկրատական հարաբերությունները (Շվեդիա) և որտեղ առկա են սեփականության տարբեր ձևեր, հատկապես, եթե պետական սեփականության դերը նշանակալից է, պետության տնտեսական քաղաքականության իրականացման շրջանակները ավելի լայն են և ավելի ծավալուն խնդիրներ է իրականացնում: Այս պարագայում պետության առաջնահերթ խնդիրներից են սեփականության բոլոր ձևերի զարգացման և գործառնության համար նպաստավոր պայմանների ապահովումը, ինչպես օրենսդրական նորմերի ընդունման և իրավական դաշտի ստեղծման, այնպես էլ արտադրության տարբեր ճյուղերի զարգացումն ապահովելու նպատակով, վարկային ճիշտ քաղաքականություն վարելու, հաղորդակցման միջոցների, էներգետիկայի զարգացման ձևով: Մշակում է հասարակության զարգացման ծրագրեր, իրագործում է երկարաժամկետ պլանավորում և այլն: Այլ կերպ ասած, այստեղ պետությունը հանդես է գալիս որպես հասարակության տնտեսական կյանքի հիմնական կազմակերպիչ և ինչ որ չափով էլ հիմնական պատասխանատու, քանզի իր վրա է վերցնում բնակչության կյանքի նորմալ պայմանների ստեղծման պարտականությունը, մարդկանց կենսամակարդակի անընդհատ բարձրացման խնդիր իրականացումը:

Տնտեսական քաղաքականության կարևորագույն խնդիր՝ նյութական արժեքների արտադրության իրականացումը մեծ չափով կախված է նաև այդ բնագավառում գործընթացների կազմակերպիչներից, այսինքն տնտեսական քաղաքականության սուբյեկտների՝ կառավարման մարմինների, պետական հաստատությունների ու կազմակերպությունների այնպիսի հատկանիշներից և ընդունակություններից, ինչպիսիք են կազմակերպչական ունակությունները, հասարակության իրական հնարավորությունների հաշվառումը և դրանց ճիշտ օգտագործումը, պահանջարկի և առաջարկի, շուկայի ուսումնասիրությունը, կադրերի ճիշտ ընտրությունն ու օգտագործումը և այլն:

Ընդհանրացնելով վերը շարադրածը, կարելի է առանձնացնել պետության տնտեսական քաղաքականության իրականացման հետևյալ հիմնական խնդիրները

1. նյութական արժեքների արտադրության կազմակերպում,
2. սեփականության բոլոր ձևերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում.

3. հասարակության նյութական, էներգետիկ և աշխատանքային ռեսուրսների ճիշտ հաշվառում և դրանց նպատակային օգտագործում,

4. պահանջարկի, առաջարկի, սպառման, փոխանակման և բաշխման հարաբերությունների ուսումնասիրություն և դրանց համապատասխան գործընթացների կազմակերպում և կողմնորոշում,

5. շուկաների ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում դրանց ձեռք բերում,

6. տնտեսության գերակայող ճյուղերի առանձնացում և դրանց զարգացման ապահովում,

7. տնտեսության զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակում և պլանավորման իրականացում,

8. արդյունաբերական ճյուղերի զարգացման համար ներդրումների ապահովում,

9. ներքին և արտաքին վարկերի վերցնելն ու դրանց խիստ նպատակային օգտագործելը.

10. հարկային այնպիսի քաղաքականության իրականացում, որը ոչ թե խոչընդոտեր, այլ խրախուսեր նյութական արժեքների արտադրությանը, անկախ սեփականության ձևից,

11. հասարակության համար կենսականորեն անհրաժեշտ նյութական արժեքների արտադրության ճյուղերի նկատմամբ առանձնակի մոտեցում, ինչպես արտոնյալ հարկերի, այնպես էլ արտոնյալ վարկերի տրամադրման ձևով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև պետական օգնություն, հատկապես գյուղատնտեսության բնագավառին,

12. այլ երկրների, ձեռներեցների մասնակցությամբ համատեղ ձեռնարկությունների ստեղծման ժամանակ պետության շահերի պաշտպանություն:

Այս խնդիրների իրականացմամբ հնարավոր է լինում ոչ միայն ապահովել հասարակության տնտեսական զարգացումը, այլև իրական պայմաններ է ստեղծվում հասարակության կյանքի մյուս բնագավառներում պետության քաղաքականության հաջող իրականացման համար:

2. Սոցիալական քաղաքականությունը հասարակության ներդաշնակությանը, համերաշխությանն ու սոցիալական արդարության ապահովմանն ուղղված պետականորեն կազմակերպված գործընթացների ամբողջությունն է: Նրա հիմնական նպատակն է մարդկանց աշխատանքի, բնակարանի և այլն նյութական ու հոգևոր պահանջմունքների բավարարումը, առողջության պաշտպանությունը, ծերերի, հաշմանդամների և գործազուրկների կենսապայմանների ապահովումը, մարդկանց կյանքի ապահովագրումը, սեփականության պաշտպանությունը և այլն:

Աշխարհի տարբեր երկրներում բավականին մեծ փորձ է կուտակվել մարդկանց սոցիալական պահանջմունքների բավարարման, ասել է, թե սոցիալական քաղաքականության իրականացման ուղղությամբ:

Սոցիալական քաղաքականության իրականացման հնարավորություններն ու հաջողությունները ուղղակիորեն կախված են, ինչպես հասարակու-

թյան տնտեսական հարաբերությունների զարգացման աստիճանից, այնպես էլ պետության սոցիալական ուղղվածությունից. այսինքն սոցիալական պետության կայացման աստիճանից: Սոցիալական պետությունը իրականացնում է նպատակամղված և ուժեղ քաղաքականություն, որն ուղղված է բնակչության կենսամակարդակի բարձրացմանը կամ գոնե մարդկանց կենսական պահանջմունքների կայուն բավարարմանը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, ժամանակակից առողջապահական, կրթական և սոցիալական ապահովության համակարգերի ստեղծմանը, կարիքավորների շահերի պաշտպանությանը և այլն: Այդ նպատակի համար, բացի պետության հատկացրած միջոցներից, օգտագործվում են նաև տարբեր հասարակական ֆոնդեր, որը թույլ է տալիս ապահովելու ձրի կոթություն, նախադպրոցական դաստիարակություն, բժշկական սպասարկում, իրականացնելու լայն սոցիալական ծրագրեր, ասենք, բնակարանային շինարարություն, նոր աշխատատեղերի ստեղծում, մատաղ սերունդի հետ կապված հատուկ ծրագրերի իրականացում և այլն: Օրինակ՝ մեզիսայում հասարակական ֆոնդերի միջոցներով բանվորների համար առանձնատներ են կառուցում, հտալիայում և Իսպանիայում այդ միջոցների օգնությամբ իրականացնում են երիտասարդների աշխատանքի տեղավորման և պաշտպանվածությանը ծրագրեր:

Ինքնին հասկանալի է, որ մարդկանց սոցիալական պահանջմունքների բավարարմանն ուղղված պետության քաղաքականությունը առավել լրիվ ու արդյունավետ կարող է լինել հասարակության տնտեսության զարգացման առավել բարձր աստիճանում, հատկապես նյութական արժեքների արտադրության ոլորտի զարգացման ու ձեռքբերումների շնորհիվ:

Սոցիալական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է նաև հասարակության մեջ սոցիալական արդարության հաստատումը: Այդ խնդրի իրականացման հիմնական միջոցը նախ և առաջ մարդկանց աշխատանքով ապահովելն ու նրանց ընդունակությունների և կարողությունների ազատ դրսևորման համար նպաստավոր պայմանների ապահովումն է: Ուստի պետության սոցիալական քաղաքականությունը, այդ թվում և սոցիալական արդարության հաստատելը, կարելի է իրականացված համարել, եթե՝ լուծված է բնակչության աշխատանքային զբաղվածության խնդիրը, երբ մարդն իր աշխատանքի դիմաց ստանում է այնքան վարձատրություն, որը բավարարում է նրա և նրա ընտանիքի անդամների նորմալ կենսամակարդակի ապահովման համար:

Այսպիսով, սոցիալական քաղաքականության հիմնական խնդիրներն են.

1. բնակչությանը աշխատանքով ապահովելը՝ մարդու աշխատանքի պահանջմունքի բավարարումը,
2. յուրաքանչյուր մարդու համար նրա ընդունակությունների և կարողությունների ազատ դրսևորման համար պայմանների ստեղծումը,
3. բնակչության նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարումը,

4 ժամանակի պահանջների համապատասխան առողջապահական և կրթական համակարգերի ստեղծումը,

5 մատաղ սերունդի և երիտասարդության դաստիարակության, կրթության և հանգստի կազմակերպման համակարգերի ձևավորումը,

6 ծերերի, կարիքավորների, անաշխատունակների և գործազուրկների նորմալ կենսապայմանների ապահովումը,

7. թոշակավորման և նպաստների բաշխման կառույցների ստեղծումը,

8 ընտանիքի ձևավորման, ընտանեկան հարաբերությունների կարգավորմանն ու կայացմանը, հասարակության վերարտադրությանն ուղղված խնդիրների իրականացումը,

9 հասարակական ֆոնդերի ձևավորում և դրանց միջոցով սոցիալական ծրագրերի առավել լրիվ իրականացում,

10. այլ հասարակական կազմակերպությունների կողմից սոցիալական քննիչի խնդիրների իրականացման ժամանակ պետության աջակցության ապահովումը:

Այդօրինակ խնդիրների իրականացումը թույլ կտա ստեղծել ներդաշնակ, համեմատաբար հակասություններից ու ճգնաժամերից գերծ. բնակչության բարձր կենսամակարդակ ապահովող հասարակություն: Այնքան, որ սոցիալական խնդիրների իրականացումը անմիջական ազդեցություն է ունենում տնտեսական գործընթացների իրականացման վրա:

3. Իրավական քաղաքականություն: Հասարակության կյանքի կազմակերպման և կառավարման, նրա տարբեր կառույցների, հաստատությունների, կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների կարգավորումն ու նրանց գործունեության երաշխավորումը, և ընդհանրապես հասարակության մեջ կարգ ու կանոնի իրականացումը հնարավոր է միայն որոշակի կանոնակարգային քննիչ ունեցող ընդունված նորմերի, որոշումների և օրենքների համակարգի միջոցով: Այդպիսի համակարգի ձևավորման մենաշնորհը պատկանում է պետությանը: Պետությունը լինելով իրավական ֆունկցիաների իրականացնող միակ և հիմնական սուբյեկտը, այդ բնագավառում իր առջև դրված խնդիրները իրականացնում է օրինաստեղծ գործունեության շնորհիվ, հաստատելով իրավական նորմեր, ընդունելով օրենքներ, որոնք անհրաժեշտ են հասարակական հարաբերությունների, քաղաքացիների և տարբեր սուբյեկտների վարքի կարգավորման համար: Սակայն պետության իրավական գործունեությունը չի սահմանափակվում միայն իրավական նորմերի և օրենքների ընդունմամբ: Իրավական քաղաքականության խնդիրն է նաև ընդունված նորմերն ու օրենքներն իրականացնել հասարակության մեջ, հեկել դրանց իրականացման գործընթացների վրա, ընդունված նորմերն ու օրենքները դարձնել հասարակության բոլոր անդամների համար պարտադիր, ապահովել օրենքի առջև բոլորի հավասարությունը, պաշտպանել քաղաքացիների օրենքով նախատեսված իրավունքներն ու ազատությունները, հարկ եղած դեպքում կիրառել նաև պատժամիջոցներ: Այդպիսի խնդիրների իրականացման համար ստեղծվում են համապատաս-

իսան մարմիններ, որոնցից յուրաքանչյուրը այդ խնդիրներից որևէ մեկը իրականացնելով, բոլորը միասին իրականացնում են պետության իրավական քաղաքականությունը: Կարելի է առանձնացնել իրավական քաղաքականության իրականացման երեք հիմնական բնագավառներ, որոնցից յուրաքանչյուրը իրեն հատուկ խնդիրների իրականացմամբ է զբաղվում: Դրանք են. ա) պետության օրինաստեղծ գործունեություն, որի իրականացման հիմնական սուբյեկտն է օրենսդիր իշխանությունը, բ) օրենքների իրականացմանն ուղղված գործունեություն, որն իրականացվում է գործադիր իշխանության մաս կազմող իրավապահ մարմինների կողմից, գ) օրենքների իրականացման վրա հսկողության իրականացում, որն իրականացնում է դատական իշխանությունը:

Ամփոփ ձևով կարելի է իրավական քաղաքականության հիմնական խնդիրները համարել.

1. հասարակության զարգացումն ապահովող օրենքների մշակում և ընդունում,
2. հասարակության մեջ կարգ ու կանոնի ապահովում,
3. օրենքների գերակայության ապահովում,
4. օրենքների իրականացման վրա հսկողության սահմանում,
5. բոլոր սուբյեկտների գործունեության իրականացման համար իրավական դաշտի ստեղծում,
6. օրենքի առջև բոլորի հավասարության ապահովում,
7. մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն,
8. սեփականության իրավունքի ապահովում,
9. հանցավորության դեմ պայքարի կազմակերպում և պատժամիջոցների կիրառում,
10. քաղաքացիների իրավագիտակցության ձևավորում:

Իրավական քաղաքականությունը պետության ընդհանուր քաղաքականության իրականացումն ապահովող հիմնական միջոցներից մեկն է, նրա իրավական հիմքն է: Իրավական քաղաքականության իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է հատկապես այն իրավապահ մարմինների գործունեությունից, որոնք պարտավոր են ապահովել օրենքի կայացումը և հսկել կայացման գործընթացների վրա:

Հասարակության մեջ, սովորաբար խոշորամասշտաբ իրավախախտումները տեղի են ունենում իրավապահ մարմինների անմիջական մասնակցությամբ, ինչը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, սկսած հանցագործությունների կազմակերպումից, դրանց հովանավորումից, օրենքը անձնական շահերին ծառայեցնելուց, օրենքի իրականացմամբ շահագրգռված չլինելուց մինչև անգործության դրսևորում: Օրինակ՝ 1991 թվականից մինչև 1998 թվականի սկիզբը Հայաստանում կատարված ծանրագույն հանցագործությունների ճնշող մեծամասնությունը կազմակերպել ու իրականացրել են իրավապահ մարմինները հանրապետության նախագահի և ներքին գործերի

նախարարի անմիջական ղեկավարությամբ, ինչը վկայում են չբացահայտված հանցագործություններն ու տեղի ունեցած դատավարությունները:

Ուշադրություն դարձնելով տարբեր երկրների իրավախաբեությունների գարգացումների և հանցավորության դեմ իրականացվող պայքարի գործընթացների վրա ակնհայտ է դառնում, որ ա) կազմակերպված հանցագործությունները, չնչին բացառությամբ, առանց իշխանության, հատկապես իրավապահ մարմինների, մասնակցության, տեղի չեն ունեցել: Այստեղ խոսքը չի վերաբերում ամբողջ իշխանությանը: Խոսքը վերաբերում է իշխանությանը օժտված և իշխանական համակարգում որոշակի դիրք ունեցող, հանցավոր աշխարհի հետ համագործակցող անհատներին, որոնց օգնությամբ իշխանության (ծակները տվյալ իշխանության մարմնի անունից օգտագործվում է ի նպաստ հանցավոր աշխարհի): Բ) Հանցագործությունները դիմնականում չեն բացահայտվում այնտեղ, որտեղ դրանում շահագրգռված չեն իշխանության վերին օղակները, հատկապես, երբ կայացած չի դատական իշխանությունը, կամ այն գտնվում է իշխանության վերին օղակների ազդեցության տակ (Քենեդու սպանությունը ԱՄՆ-ում, մի շարք սպանություններ Հայաստանում և այլն): գ) Հանցագործությունների և անօրինականությունների աճը հասարակության մեջ ուղիղ համեմատական է իրավապահ մարմինների և իշխանությունների օրինազանց գործունեությանը: դ) Օրենքի չիրականացմանը, խեղաթյուրմանը, շրջանցելուն և այլն, մեծապես նպաստում է իրավապահ մարմիններում պատահական մարդկանց, այդ թվում հատուկ նպատակներով այդ համակարգ թափանցած հանցավոր աշխարհի ներկայացուցիչների ամկայությունը:

Իրավական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է նաև բնակչության իրավագիտակցության ձևավորումը, առանց որի օրենքի իրականացումը, այն բոլորի համար պարտադիր դարձնելը, օրենքի առջև բոլորի հավասար պատասխանատվության խնդրի իրականացումը անհնար է: Առանց իրավագիտակցության ձևավորման հնարավոր չէ մարդկանց մեջ օրենքի նկատմամբ պահանջմունք ամրագրել: Օրենքը, ընդունված իրավական նորմերը պետք է դառնան քաղաքացիների գործունեության հիմնական կողմնորոշիչներ և երաշխավորեն մարդու ազատ գործունեության ապահովումը: Պետք է հասնել նրան, որ մարդու համար օրենքին ենթարկվելը, օրենքի իրականացումը ավելի ծեռնտու լինի, ավելի շահավետ լինի, քան օրենքի, իրավական նորմերի շրջանցումը կամ դրանցից խուսափումը:

Մրանք են հիմնականում այն խնդիրները, որնք պետք է իրականացվեն պետության իրավական քաղաքականության միջոցով:

4. Կադրային քաղաքականություն: Առօրյա, կենցաղային մեկնաբանություններում պետության կադրային քաղաքականություն ասելով, հասկացվում է կառավարման համակարգում կադրերի տեղաշարժ (ազատում, նշանակում և այլն), ինչը չի համապատասխանում կադրային քաղաքականության ամբողջական բովանդակությանը: Կառավարման համակարգում կադրային տեղաշարժերը իրականացումը կադրային քաղաքականության չնչին,

թեկուզ և լավ տեսանելի մասն է միայն: Կադրային քաղաքականությունը պետության ամենակարևոր և բազմաբնույթ դրսևորումներ ունեցող գործու- նեության ձևերից մեկն է, որն իրականացվում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում. ամենատարբեր մակարդակներով և առանձնահա- տուկ բնույթ ունեցող խնդիրների իրականացման ձևերով: Ցանկացած պե- տության, հետևապես և հասարակության, զարգացման հիմնական նախա- պայմաններից և երաշխիքներից է մարդկային գործունի՝ մարդկանց ընդու- նակությունների և կարողությունների, ակտիվ ներառումը հասարակական արժեքների ստեղծման գործընթացների մեջ: Հասկանալի է, որ ինչքան մարդկանց ընդունակությունները, մասնագիտական կարողությունները, հմտությունները, գիտելիքների պաշարը զարգացած լինեն և դրանք նպա- տակամղված ներառվեն ու օգտագործվեն կյուրակական և հոգևոր արժեքների արտադրության ոլորտում, այնքան հասարակության զարգացման հնարա- վորությունները իրական ու նշանակալից են լինում: Պարզագույն ճշմարտու- թյուն է, որ առանց բարձրակարգ մասնագետների առկայության, առանց գիտատեխնիկական նվաճումների ներդրման արդի ժամանակաշրջանի պա- հանջներին համապատասխանող արտադրության ճյուղերի զարգացումն ապահովել հնարավոր չէ: Հետևաբար, կադրային քաղաքականության հիմ- նական խնդիրը, նախ և առաջ մասնագետների, ասել է թե կադրերի պատ- րաստելն է:

Ցանկացած պետության համար, եթե նույնիսկ նա ունի չափազանց նպաստավոր բնակլիմայական պայմաններ, բնական ռեսուրսների մեծ պա- շարներ և այլն, կարևորագույն խնդիրը մարդկային ներուժի զարգացումն ու այն ճիշտ օգտագործելն է: Զանգի, որքան էլ մեծ բնական հարստություննե- րի տեր լինի տվյալ պետությունը, առանց այնպիսի կադրերի առկայության, որոնք ընդունակ են այդ հարստությունները ճիշտ օգտագործել, բազմա- պատկեր և ծառայեցնել հասարակության զարգացմանը, այդ բնական հարստությունները տվյալ պետության զարգացման համար ոչինչ արժեն: Ավելին, համապատասխան կադրերի և նրանց գործունեության բացակայու- թյան պայմաններում, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը (Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի երկրները), երկրի հարստությունները թալանվում ու փոշիանում են, այդ երկրները դառնում են համեղ պատահ իզոր պետությունների համար, նվաճվում ու զաղուրթացվում են հզորների կողմից և վերածվում են կախյալ ու հետամնաց երկրների:

Ուսումնասիրելով այլ պետությունների զարգացման ընթացքը, ակնհայտ է դառնում, որ հասարակության արագընթաց զարգացում ու առաջընթաց է ապահովել հիմնականում այն երկրներում (Ճապոնիա, ԱՄՆ, ԽՍՀՄ և այլն), որտեղ մեծ ուշադրություն է դարձվել կադրերի ձևավորման վրա, առանց ինչի ժամանակի պահանջներին համապատասխանող արտադրության կազ- մակերպում, գիտության և տեխնիկայի զարգացում, հասարակության բնա- կան և մարդկային ռեսուրսների նպատակային օգտագործում, հետևապես և հասարակության զարգացում, պարզապես հնարավոր չէ: Փորձը ցույց է

տալիս նաև, որ համեմատաբար աղքատ բնական ռեսուրսներ ունեցող երկի- րը (Ճապոնիա, Անգլիա, Բելգիա և այլն), բարձր զարգացած մասնագետնե- րի, ասել է թե կադրային բանկի, առկայության պայմաններում կարող է արդի պայմաններին և պահանջներին համապատասխանող գիտատեխնի- կական առաջընթաց և դրա շնորհիվ կյուրակական արժեքների արտադրու- թյան բավականին բարձր մակարդակ ապահովել:

Պետության կադրային քաղաքականության իրականացման հնարավո- րությունը մեծապես կախված է հասարակական կյանքի մի շարք ոլորտներում, հատկապես տնտեսության, կրթության և գիտության ոլորտ- ներում, իրականացվող քաղաքականության ձեռքբերումներից: Բանն այն է, որ կադրերի, հատկապես բարձրակարգ մասնագետների պատրաստումը և ընդհանրապես հասարակությանն անհրաժեշտ կադրերի ձևավորումը մի ներփակ, առանձնացված գործընթաց չի և պահանջում է ինչպես հսկայա- կան միջոցների ներդրում, այնպես էլ պետականորեն իրականացվող կազ- մակերպչական գործընթացների մի ամբողջ համակարգ: Այն սկսվում է նա- խադարոցական տարիքի մատաղ սերունդի ձևավորումից, շարունակվում է դպրոցական կրթության միջոցով անհրաժեշտ գիտելիքների պաշարի ձևավորմամբ, անցնում է մասնագիտական և բուհական կրթական համա- կարգերով, ստացած տեսական գիտելիքները ամրագրվում են պրակտիկ գործունեության ընթացքում, ձևավորվում է բարձրագույն գիտական և կա- ռավարման մասնագետների պատրաստման դպրոցներ, որի արդյունքում է միայն հնարավոր լինում ապահովել կադրերի այն քանակի և որակի ձևավորումը, ինչն անհրաժեշտ է, ինչպես հասարակության կյուրակական և հոգևոր արժեքների ստեղծման և դրանց անընդհատ զարգացման, այնպես էլ գիտության և կառավարման համակարգերի կազմակերպման և զարգաց- ման համար: Այդ խնդիրների իրականացումը հիմնականում կապված է կր- թության և գիտության ոլորտում իրականացվող քաղաքականության հետ:

Այսօր արդեն շատ երկրների պետական, քաղաքական գործիչներ և հայտնի գիտնականներ (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ճապոնիա, Ռուսաստան և այլն), այն տեսակետն են հայտնում, որ պետության ապագան անմիջապես կախված է կրթության որակից: Դրանցից ելնելով շատ պետություններ իրենց առջև խնդիր են դրել արմատական վերափոխություններ կատարել կրթության ոլորտում, մշակում են կրթության և գիտության ամբողջ համա- կարգը ընդգրկող ծրագրեր և համապատասխան քաղաքականություն:

Կադրային քաղաքականության կարևորագույն խնդիրներից է նաև հա- սարակության զարգացման առաջնային ճյուղերի զարգացումն ապահովելու համար համապատասխան քանակի և որակի կադրերի պատրաստումը: Այլ կերպ ասած, կադրային քաղաքականության հիմնական եությունը հասարա- կության կադրային պահանջմունքի բավարարումն է, որի իրականացման համար պետությունը մշակում է կրթության անընդհատությունը ապահովող ծրագրեր, ստեղծում է բոլորի համար ուսումնառության հավասար հնարա- վորություններ, հարկ եղած դեպքում ստեղծում է պետության միջոցների

հաշվին կադրերի պատրաստման համակարգեր. ապահովելով ծրի կրթություն ստանալու հնարավորություն և այլն: Որոշ երկրներում (ԱՄՆ, Ճապոնիա) հատուկ կառույցներ են ձևավորվել, որոնց հիմնական խնդիրն է տաղանդավոր երեխաների հայտնաբերումը և պետության միջոցներով նրանք բարձրակարգ մասնագետ դառնալու համար բոլոր պայմանների ստեղծումը:

Ինչպես տեսնում ենք, կադրային քաղաքականության իրականացման գործում բացի նյութական միջոցներից, չափազանց մեծ է նաև կրթության և գիտության ոլորտում իրականացվող գործընթացների նշանակությունը: Կարելի է ասել, որ կրթության ոլորտում իրագործվող խնդիրները կադրային քաղաքականության իրականացման հիմնական երաշխիքն է: Սակայն, ակնհայտ է նաև այն ճշմարտությունը, որ կրթության ոլորտում իրագործվող խնդիրները նույնպես հսկայական միջոցների ներդրում են պահանջում: Այս տեսանկյունից, ինչպես հասարակության կյանքի բոլոր ոլորտների զարգացման, այնպես էլ կադրային ու նաև կրթության քաղաքականության իրականացումը կապված է հասարակության նյութական արժեքների արտադրության ոլորտի ձեռքբերումների, նրա ստեղծած միջոցների հետ: Սակայն պետության տնտեսական քաղաքականության իրականացման հնարավորությունները, իրենց հերթին, անմիջապես կապված են կադրային քաղաքականության իրականացման իրողության հետ: Ուստի, դժվար չէ նկատել, որ դրանք իրար հետ խիստ փոխկապակցված, իրարով փոխադասանավորված գործընթացներ են, և մեկի իրականացումը ուղղակիորեն կապված է մյուսի իրականացման աստիճանից:

Իսկ ինչ վերաբերում է կադրային նշանակումներին կամ ընդհանրապես կադրային տեղաշարժերին, ապա կադրային քաղաքականության ճիշտ իրականացման դեպքում, երբ առկա է համապատասխան կադրային բանկ, նորմալ պետության մեջ խնդիրը հանգում է եղած մասնագետներից լավագույն կազմակերպչական ունակություն ունեցողի ընտրությանը, ովքեր ընդունակ են ապահովելու տվյալ ոլորտի զարգացումն ու առաջընթացը:

5. Արտաքին քաղաքականությունը հաճախ մեկնաբանվում է որպես պետության ներքին քաղաքականության տրամաբանական շարունակություն: Այսօր աշխարհում ոչ մի պետություն չի վիճակի չի միայն իր սեփական միջոցներով ապահովել համաշխարհային զարգացման տենդենցներին համապատասխանող առաջընթաց: Չկա մի պետություն, որն իր զարգացման համար ունենա բոլոր անհրաժեշտ միջոցները, լինեն դրանք բնական այաշարներ, թե ֆինանսական ռեսուրսներ, գիտության և տեխնիկայի նվաճումներ կամ համապատասխան կադրեր, ներքին կամ արտաքին շուկաներ և այլն: Այս պարագայում յուրաքանչյուր պետություն իր առջև դրված ներքին խնդիրները լուծելու և իր զարգացումն ապահովելու համար ստիպված է լինում լրացուցիչ միջոցների ձեռքբերման ուղղությամբ գործունեություն ծավալել, ինչն էլ հենց արտաքին քաղաքականության հիմնական էությունն է կազմում: Այսինքն, արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներ

րից մեկը պետության զարգացման անհրաժեշտ միջոցների պակասը լրացնելն է, ինչը իրականացվում է այլ պետությունների հետ տարբեր բնագավառներում համագործակցելու, տարաբնույթ փոխհարաբերություններ հաստատելու, փոխշահավետ տնտեսական պայմանագրեր կնքելու և այլ տիպի հարաբերությունների միջոցով: Այդօրինակ խողովակներով պետությունը կարողանում է իր առջև դրված ներքին խնդիրների իրականացման համար ներգրավել լրացուցիչ միջոցներ, որոնց կարիքը նա զգում է:

Ցանկացած պետություն կարող է ոչ միայն անհրաժեշտ միջոցների և հնարավորությունների պակաս ունենալ այլև որոշ պաշարների, արտադրատեսակների, հնարավորությունների ու միջոցների, և նույնիսկ աշխատուժի ավելցուկ ունենալ, որոնց լավագույն օգտագործումից է կախված պետության զարգացման հետագա հնարավորությունը: Այս դեպքում պետության արտաքին քաղաքականության համար կարևոր խնդիր է դառնում արտաքին շուկաների ձեռքբերումը, ինչը բավականին դժվարին խնդիր է, հատկապես թույլ զարգացած երկրների համար:

Արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներն են երկրի սահմանների և տարածքների պաշտպանությունը, միջպետական հարաբերությունների հաստատումն ու զարգացումը, արտաքին առևտրի իրականացումը, այլ պետությունների հետ տարբեր ոլորտներում համատեղ գործունեության համակարգումը, միջպետական միություններին և կազմակերպություններին մասնակցությունը և այլն: Արտաքին քաղաքականությունը իրականացվում է այլ երկրների հետ դրվանագիտական հարաբերությունների հաստատման և համապատասխան կառույցների ձևավորման միջոցով: Այդ նպատակով, տարբեր երկրներում հաստատվում են պետությունը ներկայացնող դիվանագիտական հաստատություններ (դեսպանատուն, հյուպատոսություն և այլն), որոնց միջոցով պետությունը իր հարաբերություններն է կարգավորում այլ պետությունների և ժողովուրդների հետ:

Արտաքին քաղաքականության կոնցեպցիայի հիմքում ընկած է պետության ազգային շահերի, երկրի սահմանների և անկախության, քաղաքացիների անվտանգության պաշտպանության և միջազգային հարաբերությունների համակարգում պետության ակտիվ և իրավահավասար մասնակցության ապահովման սկզբունքները:

Արդի ժամանակներում ավելի է կարևորում արտաքին քաղաքականության դերն ու նշանակությունը: Համաշխարհային զարգացման բնույթն այնպիսին է, որ ոչ մի պետություն չի կարող գոյատևել ու զարգանալ, իր անվտանգությունն ու շահերը պաշտպանել առանց այլ պետությունների հետ համատեղ ընդհանուր ծրագրեր իրականացնելու, բարեկամներ ու դաշնակիցներ ընտրելու, համաշխարհային կառույցներին անդամակցելու, ինչը մեծապես կախված է հենց պետության դիվանագիտական կառույցների ակտիվ ու նպատակասլաց գործունեությունից: Չմոռանանք, որ աշխարհը միաբնու չէ, որ առկա են մի շարք պետական խմբավորումներ, որոնցից յուրաքանչյուրը իրենց առանձնահատուկ շահերն են հետապնդում: Այս դեպ

քում արտաքին քաղաքականության իրականացնող սուբյեկտների հիմնական խնդիրներից մեկն էլ այդ հարաբերություններում ճիշտ կողմնորոշվել է, բարեկամների, դաշնակիցների ճիշտ ընտրությունն է, ինչը արդի պայմաններում միջազգային քաղաքականության մեջ պետական, ազգային շահերի պաշտպանության հիմնական երաշխիքներից մեկն է:

Պետության արտաքին քաղաքականության ձևավորման վրա նշանակալից ազդեցություն են ունենում ինչպես արտաքին, այնպես էլ, առավել ևս, ներքին գործոնները: Արտաքին քաղաքականության կայացման ու զարգացման վրա ազդում են հասարակության ներսում առկա հակասություններն ու չլուծված խնդիրները, հատկապես երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների ընտրման հարցերի և վերափոխումների իրականացման ժամանակ: Արտաքին քաղաքականության վրա մեծ ազդեցություն ունի նաև արդի միջազգային հարաբերությունների ամբողջ համակարգը: Օրինակ՝ Հայաստանում սեփականաշնորհման իրականացման գործընթացները, Արցախյան խնդրի կարգավորումը հիմնականում պայմանավորված են միջազգային կազմակերպությունների դիրքորոշումից, իսկ երբեմն էլ ուղղակի նրանց գործունեությունից:

Գրականություն

1. Балл Т. Власть "Политические исследования" 1993. # 5.
2. Данилов А. Переходные общество. Проблемы системной трансформации. Минск. 1998.
3. Ильин. Аксиомы власти. "Новое время" 1990. # 1
4. Ирхин Ю. В., Зотол В. А. Зотова А. В. Политология. М. 1999
5. Политология. Курс лекции. под ред. А. А. Радугина. М.1999
6. Политология. Учебник. Под. ред. В. Н. Лавриенко. М. 1999
7. Հարությունյան Է.Ա. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ Եր. 2000

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Քաղաքական գործընթացները և հասարակության պոպուլյարացի **1. Քաղաքական գործընթացների էությունն ու բովանդակությունը**

Հասարակության մեջ տեղի են ունենում բազմաբնույթ իրադարձություններ, տեղաշարժեր, զարգացումներ ու գործընթացներ, որոնց ամենօրյա ազանատեսն ենք մենք, և որոնք այս կամ այն ձևով ու չափով ազդում են մեզ վրա՝ դառնալով մեր կյանքի ու կենսագործունեության անխզելի մասը: Այդ գործընթացները կարող են լինել տնտեսական, սոցիալական, իրավական, դաստիարակչական, պաշտպանական և այլ բնույթի, որոնցից յուրաքանչյուրի նպատակը համապատասխան գործողությունների իրագործման միջոցով հասարակության կյանքի տվյալ բնագավառի առջև դրված խնդիրների իրականացումն է: Եվ անկախ այն բանից, թե մենք այդ գործընթացներին անմիջապես մասնակցում ենք, թե ոչ, կամ ինչ չափով ենք մասնակցում, այդ գործընթացները առարկայորեն ազդում են մեր կենսագործունեության վրա, քանզի դրանց իրականացումից է կախված մարդկանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարումը, նրանց շահերի ազատությունների, իրավունքների և անվտանգության պաշտպանությունը, հասարակության կայունությունը, ներդաշնակ զարգացումն ու առաջընթացը:

Այդ գործընթացների մեջ իր առանձնահատուկ դերն ու նշանակությունն ունի գործողությունների իրականացման այն ամբողջական համակարգը, որը կոչված է ինչպես իշխանության, այնպես էլ քաղաքական ընդդիմության և առանձին սուբյեկտների կողմից իրականացնելու քաղաքական բնույթի խնդիրները: Այդ նպատակով իրականացվող գործողությունների ամբողջ համակարգը անվանում ենք քաղաքական գործընթացներ: Գործընթաց ասելով հասկանում ենք իրար հաջորդող փոխկապակցված գործողությունների շարք, որն ուղղված է որևէ կոնկրետ նպատակի իրականացման: Քաղաքական գործընթացի նպատակը բնականաբար քաղաքական բնույթի խնդիրների իրականացումն է: Ասել է, թե բոլոր դեպքերում քաղաքական գործընթացները առնչվում են իշխանությանը, իշխանական հարաբերություններին կամ իշխանության գործունեությանը:

Հասարակության քաղաքական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերի, փոփոխությունների, զարգացումների վերլուծությունը թույլ է տալիս հստակ պատկերացում կազմել քաղաքական գործընթացների դրսևորման նախադրյալների, դրանց զարգացման վրա ազդող գործոնների և սոցիալական ուղղվածության մասին:

Հասարակական գործունեության քաղաքական ձևերի ծագման և զարգացման նախադրյալները կապված են մարդկանց կյանքի պահպանման պահանջմունքի, նրանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման հետ, և քաղաքական կյանքում տեղի ունեցող գործընթացները հիմնականում ուղղված են հենց այդ պահանջմունքների բավարարմանը: Սակայն մարդկային պահանջմունքները բնության և սոցիալական միջավայրի անընդհատ փոփոխությունների ազդեցության տակ միշտ փոփոխվում են,

պատճառ դառնալով նոր առաջացած պահանջմունքների բավարարմանն ուղղված համապատասխան գործողությունների ու ձեռնարկումների իրականացման, որի արդյունքում փոխվում և կատարելագործվում է հասարակության կյանքը, այդ թվում նաև հասարակության քաղաքական կյանքը, հատկապես, երբ այդ պահանջմունքների համակարգում առկա են քաղաքական բնույթի պահանջմունքներ (իշխանության, նրա գործունեության բնույթի փոփոխություններ, հասարակական կյանքի կազմակերպման սկզբունքների փոփոխություններ, կառավարման սկզբունքների փոփոխություններ և այլն) Այս տեսանկյունից քաղաքական գործընթացները կարելի է դիտարկել որպես հասարակության քաղաքական կյանքի վերարտադրության և նրա հետագա զարգացման անհրաժեշտ պայման

Ամբողջությամբ վերցրած քաղաքական գործընթացը ենթադրում է քաղաքական երևույթների զարգացման ընթացք, որոշակի քաղաքական նպատակների իրականացմանն ուղղված գործողություն, կոնկրետ տարածության և ժամանակի մեջ զարգացող հասարակության ոռոշակի քաղաքական համակարգի գործունեության ձև, հասարակական գործընթացների մի այնպիսի ձև, որն ուղղված է տարբեր ծավալի և նշանակությամբ քաղաքական խնդիրների իրականացմամբ որևէ վերջնական արդյունքի հասնելուն (հեղափոխություն, իշխանության նվաճում, իշխանության ձևավորում, ընտրությունների, քաղաքական շարժումների, միտինգների, գործադուլների կազմակերպման և իրականացման միջոցով նոր քաղաքական համակարգի, տնտեսական հարաբերությունների, կառավարման սկզբունքների հաստատում և այլն):

Քաղաքական գործընթացը իրադարձությունների և երևույթների, տարբեր քաղաքական սուբյեկտների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների հետևողական գործողությանների, ձեռնարկումների, նախաձեռնումների իրականացմանն ուղղված քայլերի ամբողջությունն է, որոնք ուղղված են հիմնականում հետևյալ բնույթի խնդիրների իրականացմանը.

1. Գործընթացներ, որոնք իրականացվում են իշխանության օրինական գործունեության միջոցով և նպատակ ունեն իրագործելու պետության նախատեսած և ընդունած քաղաքական որոշումները, նախաձեռնումները, ծրագրերը և այլն, որին այլ կերպ անվանում են պետության քաղաքականություն. Այլ կերպ ասած, դա իշխանության իրականացման նպատակով ձեռնարկված գործողությունների ամբողջ համակարգն է:

2. Գործընթացներ, որոնք, ինչպես խաղաղ, այնպես էլ զինված ճանապարհով ուղղված են իշխանության նվաճմանը (հեղափոխություն, ընտրություններ, նախընտրական պայքար, այդ թվում և իշխանության բռնի գավթում, ռազմական հեղաշրջում և այլն):

3. տարբեր քաղաքական ուժերի, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, անհատների կողմից կազմակերպված գործընթացներ, (միտինգներ, ցույցեր, արգելափակումներ, գործադուլներ և այլն), որի հիմնա-

կան նպատակն է ոլջսասության գործունեության վրա ազդելով ստիպել նրան իրագործելու սոցիալական այն հանրույթի (խմբի, խավի, դասակարգի) պահանջներին ու շահերին համապատասխանող խնդիրներ, որոնց ներկայացնում են տվյալ գործընթացը կազմակերպող քաղաքական ուժերը:

Ինչպես իշխանության նվաճման, այնպես էլ իշխանության գործունեության վրա ազդելու նպատակով իրականացվող քաղաքական գործընթացները սկսվում են հասարակության մեջ իշխանությունների նկատմամբ ներքեվից եկող համապատասխան ազդակների, վերաբերմունքի ծագմամբ ու ձևավորմամբ: Գործընթացի նախաձեռնողները կարող են լինել ընդդիմադիր կուսակցությունները, սոցիալական հանրույթները, հասարակական միություններ՝ ու քաղաքական գործունեությամբ ճանաչված անհատները, որոնք ձևավորվում են կազմակերպված զանգվածային գործողությունները րենց առջև դրված նպատակները իրականացնելու համար: Ըստ առաջադրված պահանջների այդ գործողությունները կարող են ամենատարբեր ձևերով դրսևորվել (միտինգներ, ցույցեր, գործադուլներ, ընտրություններ, գինված հեղաշրջում և այլն): Այստեղ, անշուշտ, մեծ դեր է խաղում հասարակության քաղաքական կյանքում տեղի ունեցող քաղաքական տեղաշարժերն ու իշխող հասարակական հարաբերությունները, հասարակության քաղաքական կյանքի ժողովրդավարացման աստիճանը, քաղաքացիների ակտիվության և քաղաքական գիտակցության աստիճանը, լիդերների կազմակերպչական հատկանիշները, նրանց քաղաքական որոշումների ընդունման և իրականացման փորձն ու հմտությունները, քաղաքական զարգացումների հետագա ընթացքի և արդյունքի կանխատեսելու կարողությունները և այլն:

Ամենաընդհանուր ըմբռնմամբ քաղաքական գործընթացները կոնկրետ տարածության և ժամանակի մեջ քաղաքական տարբեր սուբյեկտների միջև ծավալված փոխհարաբերությունների ամբողջությունն է, որի արդյունքում տեղի է ունենում մի քաղաքական համակարգից, իրադրությունից, վիճակից, դրսևորման ձևից մեկ այլ վիճակի, համակարգի, իրադրության, մակարդակի անցում: Այդ անցման ժամանակ քաղաքական գործընթացների վրա իր ազդեցությունն է թողնում հասարակության քաղաքական կյանքի բնույթը որոշող և տվյալ պահին հիմնական համարվող քաղաքական գործընթացը (հեղափոխություն, տնտեսական համակարգի վերափոխում, հասարակության ժողովրդավարացում, իշխանության ճգնաժամ, ընտրությունը և այլն) Այս առարգայում բազային քաղաքական գործընթացը քաղաքական մյուս գործընթացների համար դառնում է մի տեսակ կողմնորոշիչ:

Քաղաքական գործընթացների կազմակերպումը սկսվում է որոշակի քաղաքական նպատակ հետապնդող գաղափարի, ծրագրի ձևավորումից, որը ամբողջական տեսքի բերելուց հետո, մշակվում են նրան հասնելու ձևերն ու մեթոդները, ճշտվում են նրա մասնակիցներն ու սահմանները և համապատասխան միջոցների իրականացման եղանակները, որից հետո սկսվում է ռոն քաղաքական գործընթացը:

Քաղաքական գործընթացների իրականացման յուրաքանչյուր փուլ, կախված կոնկրետ սոցիալ-քաղաքական պայմաններից, կարող է իր որոշակի առանձնահատկությունն ունենալ և ընթանալ ինչպես նորմալ զարգացման, առաջադիմության ուղղությամբ, այնպես էլ ունենալ հետադիմական, բնույթ և ընթանալ քայքայման ուղղությամբ: Քաղաքական գործընթացների, զարգացումը նորմալ է համարվում, երբ քաղաքական համակարգը գործընթացների բոլոր փուլերում գործառնում է համաչափ, երբ քաղաքացիների և իշխանության փոխհարաբերություններում որակական փոփոխություններ, չեն առաջանում, քաղաքական համակարգի կառուցվածքը մնում է անփոփոխ: Այլևս մնալով հանդերձ, կարող է փոխվել նրա գործառնություն բնույթը, կառուցվածքային որոշ տարրեր, չչեղվելով նախօրոք ընդունած նորմերից ու սկզբունքներից, նպատակ ունենալով դրանք համապատասխանեցնել հասարակության կամ նրա առանձին շերտերի առաջադրած նոր պահանջ-մուտքերին: Այնք, կարող են փոխվել կառավարության կամ իշխանության այլ մարմինների կազմը, փոխվեն հասարակության զարգացմանը խոչընդոտող նորմեր, սկզբունքներ, որոշումներ ու օրենքներ, բավարարվեն քաղաքական ուժերի կողմից առաջադրած որոշակի պահանջներ և այլն:

Բայց հնարավոր է նաև քաղաքական գործընթացների այնպիսի ընթացք, որի ժամանակ տեղի են ունենում ընդունված սկզբունքներից ու նորմերից, հաստատված ավանդույթներից ու սովորույթներից կտրուկ շեղում, ինչը տանում է քաղաքական համակարգի քայքայման ու կործանման: Ի դեպ, չի կարելի միանշանակ պնդել, որ զարգացման նշված երկու ձևերից մեկը մյուսի նկատմամբ, դրական արդյունքի առաջացման տեսակետից, առավելություն ունի, կամ, որ մեկը միշտ առաջադիմական է, իսկ մյուսը՝ հետադիմական: Հասարակության զարգացման տարբեր աստիճաններում միևնույն նպատակը հետապնդող քաղաքական գործընթացները (քաղաքական համակարգի մի ձևից մյուսին անցումը, պետական կառուցվածքի ձևի փոփոխությունը, տնտեսական համակարգի փոփոխությունը և այլն) կարող են և առաջադիմական լինել, և հետադիմական, նայած թե, այդ գործընթացները իրականացնող քաղաքական սուբյեկտները ինչ նպատակ են հետապնդում: Եթե հասարակության քաղաքական համակարգը, պետական կառուցվածքը տնտեսական հարաբերությունները, օրենսդրական համակարգը և այլն արգելակում, խոչընդոտում ու խանգարում են հասարակության հետագա զարգացմանը, այլևս չեն համապատասխանում հասարակության պահանջ-մուտքերին, անընդունելի են դառնում ժողովրդի մեծամասնության համար, չեն ապահովում մարդու ազատությունների և իրավունքների պաշտպանությունը, չեն երաշխավորում հասարակության մեջ սոցիալական արդարության հաստատում և այլն, ապա այդպիսի քաղաքական համակարգի, պետական կառուցվածքի և այլն, կործանմանն ու վերափոխմանն ուղղված քաղաքական գործընթացները, նույնիսկ, եթե դրանք իրականացվում են բռնության կիրառմամբ, առաջադիմական բնույթ ունեն. հետևաբար, առաջադի-

մական, պատմաիրավաբան բնույթ ունեն բոլոր այն քաղաքական ձեռնարկումները, որոնք իրականացման նպատակն է հասարակության հետագա կայուն զարգացումը, մարդկանց կյանքական և հոգևոր պահանջմունքների լրիվ բավարարումը, քաղաքացիների ազատությունների և իրավունքների, անվտանգության և կենսագործունեության ապահովումը, հասարակության մեջ սոցիալական արդարության հաստատումը, ժողովրդավարության սկզբունքների, բազմակարծության երաշխավորումը, բնակչության մեծամասնության շահերին համապատասխանող քաղաքականության իրականացումը, օրենքի առջև բոլորի հասարակության սկզբունքի կիրառումը և այլն:

Հետադիմական, քայքայիչ ու կործանարար քաղաքական գործընթացներ ասելով, հասկանում ենք բոլոր այն քաղաքական ձեռնարկումների ամբողջությունը, որոնք խաթարում են հասարակության կայուն ու նորմալ զարգացմանն ու առաջընթացին, որոնք միտված են նեղ, խմբային, կլանային կամ անհատական շահերին ծառայեցնել իշխանության լծակները, կամ ձգտում են նվաճել իշխանությունը հենց այդ նպատակներին ծառայեցնելու համար, կազմավորում են հասարակության միասնությունը, դառնում են պետության և հասարակության, ժողովրդի և իշխանության միջև չհիմնավորված հակասությունների սրման պատճառ, սուբյեկտիվ շահերից ելնելով հակված են արհեստական քաղաքական ճգնաժամեր առաջացնելու և հասարակական կյանքը ապակայունացնելու, ձգտում են ցանկացած ճանապարհով գալվել իշխանությունը կազմակերպելով ահաբեկչական գործողություններ, հասարակության մեջ առաջացնում են վախի, անվստահության մթնոլորտ: Այս պարագայում, եթե նման գործընթացի սուբյեկտը իշխանությունն է, ապա նա սովորաբար մեծում է օրենքը, դառնում է անպատժելի, պարարտ հող է ստեղծում կազմակերպված հանցագործության, կաշառակերության, հովանավորչության, պաշտոնական դիրքի չարաշահման, պետական միջոցների թալանի ու փողի հարկահանության և շատ ուրիշ հակահասարակական երևույթների թալանի ու փողի հարկահանության համար: Դրա վառ օրինակը կարող է լինել 1990-1997թթ. ՀՀ-ական իշխանության գործունեությունը, որի արդյունքը այսօրվա Հայաստանի ծանր սոցիալական և տնտեսական վիճակն է:

Դժվար չէ նկատել, որ և՛ առաջադիմական, և՛ հետադիմական քաղաքական գործընթացները կարող են իրականացնել ինչպես իշխանությունները կամ նրա առանձին մարմիններ, սակայն ամպայման իշխանության լծակների օգտագործմամբ, այնպես էլ ընդդիմությունը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, թե մեկը, կամ մյուսը, իրենից առջև ինչ նպատակներ են դրել, ինչ խնդիրներ են փորձում իրականացնել և ինչպիսի մեթոդներով, միջոցներով ու ձևերով են ձգտում դրանք իրագործել:

Սովորաբար, հետադիմական հակում ունեցող քաղաքական ուժերի գործունեությունը հասարակության համար քայքայիչ ու կործանարար է ինչպես նրա իշխանության ունենալու պայմաններում, այնպես էլ իշխանությունը կորցնելուց հետո իշխանությանը որպես ընդդիմություն հանդես գալու ժամանակ: Օրինակ՝ ՀՀ-ի գործունեության օրոք, որն ուղեկցվում էր

հենց նրա կողմից հասարակության մեջ կազմակերպված հանցագործությունների, անօրինականությունների, պաշտոնական դիրքի չարաշահումների, պատվերով սպանությունների և այդ բոլորի համար անպատժելիության աննախադեպ աճով, իշխանությունը կորցնելուց հետո նրա գործելակերպի բնույթը նույնն է, ամեն զեղծ փորձում է ապակայունացնել հասարակությունը, չհիմնավորված ու սուտ լուրերով փորձում է ժողովրդին հանել իշխանության դեմ, ամեն կերպ խուսափում է կատարած բազում հանցագործությունների համար պատասխան տալուց և այլն:

Ի դեպ, աչքի է զարնում այն իրողությունը, որ որքան առաջադիմական, հասարակության շահերին համապատասխանող գործունեություն է ծավալում իշխանությունը, այնքան քայքայիչ, հետադիմական նպատակներ հետապնդող քաղաքական ձեռնարկումներ են փորձում իրականացնել իշխանությունների հետ չհամագործակցող, նրան հակադրվող քաղաքական ուժերը, քանզի այս դեպքում նրանց հիմնական խնդիրը ցանկացած ճանապարհով իշխանության գավթումն է, այն սեփական շահերին ծառայեցնելու նպատակով:

Նույն սկզբունքը հիմնականում առկա է նաև հակառակ դեպքում, այսինքն, որքան իշխանությունների գործունեության բնույթը հակահասարակական, հետադիմական է, այնքան հասարակության առաջընթացով շահագրգռված քաղաքական ընդդիմության ձեռնարկած գործընթացների բնույթը առաջադիմական և կառուցողական է:

Բովանդակային առումով կարելի է քաղաքական գործընթացներ համարել շարքային քաղաքացիների և իշխանության ներկայացուցիչների բոլոր այն գործողությունները, որոնք միտված են, ինչպես պաշտպանելու իշխող վարչակարգը և նրա գործունեության սկզբունքները, ինչը իշխանության ներկայացուցիչների գործունեության բուն էությունն է, այնպես էլ տապալելու, փոխելու գոյություն ունեցող իշխանությունը կամ ստիպելու նրան իր գործունեությունը համապատասխանեցնելու հասարակության, ժողովրդի կամ նրա որոշակի մասի շահերին, ինչը, սովորաբար, իրագործում է ընդդիմությունը շարքային քաղաքացիների ակտիվ մասնակցությամբ:

Քաղաքական գործընթացների բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանում առկա է քաղաքացիների քաղաքական կամքի դրսևորման երկու հիմնական ձևեր

Առաջին - քաղաքական գործընթացներին շարքային մասնակիցների ամենատարբեր քաղաքական գործունեության ձևով, օր` ընտրություններին, հանրաքվեներին, գործադուլներին, հասարակական-քաղաքական շարժումներին մասնակցությունը: Երկրորդ - քաղաքական վերնախավի և լիդերների կողմից հասարակության կյանքի կառավարմանն ու կազմակերպմանն ուղղված որոշումների ընդունման և դրանց իրականացման ձևով:

Քաղաքական գործընթացների բովանդակությունը լայն ընդգրկում ունի, սկսած ելակետային գաղափարների շուրջ տեսակետի, ծրագրի կամ կոնցեպցիայի մշակումից մինչև նրա ամբողջական տեսության ձևավորումն ու

այն կյանքում մարմնավորելու համար անհրաժեշտ մեթոդների, միջոցների, եղանակների և ուղիների ընտրությունը: Սովորաբար նման զարգացման դեպքում քաղաքական գործընթացների վերջնական նպատակները ավելի հստակ են ուրվագծում, ինչը քաղաքական գործընթացների սուբյեկտներին հուշում է թե ինչ մեթոդների, միջոցների, մետոդների ընտրության և օգտագործման շնորհիվ է հնարավոր հասնել առաջադրված խնդրի իրագործմանը:

Ընդհանրացնելով վերը շարադրածը կարելի է արձանագրել, որ քաղաքական գործընթացների հիմնական խնդիրը այնպիսի քաղաքական որոշումների ընդունումն ու իրականացումն է, որոնք պետք է, մի կողմից միավորվեն և պաշտպանեն քաղաքացիների տարաբնույթ շահերը, մյուս կողմից, հաշվի առնվեն ամբողջ հասարակության զարգացման և առաջընթացի շահերը: Ի դեպ հասարակության առջև ծառայած քաղաքական խնդիրը առավել դյուրին ու լրիվ է լուծվում այն ժամանակ, երբ պետական իշխանության մարմինների ու հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործողություններն ընթանում են միևնույն ուղղությամբ:

2. Քաղաքական կոնֆլիկտների և սոցիալական համաձայնության դերն ու տեղը քաղաքական գործընթացներում

Քաղաքական կոնֆլիկտը (հակադրությունը, հակամարտությունը), քաղաքական սուբյեկտների, սոցիալ-քաղաքական ուժերի միջև եղած լուրջ տարածայնություն, հակադրություն, բախում և պայքար է իշխանության նվաճման, այն բաժանելու, նրա վրա ազդեցություն ունենալու, ինչպես նաև իրենց քաղաքական կարգավիճակը փոխելու համար:

Ամենաընդհանուր ձևով քաղաքական գործընթացները կարելի է բաժանել երկու տեսակի.

- 1 Քաղաքական գործընթացներ, որոնց հիմքում ընկած են սոցիալ-քաղաքական կոնֆլիկտներ.
- 2 Քաղաքական գործընթացներ, որոնք հենվում են քաղաքական սուբյեկտների միջև հաստատված սոցիալական համաձայնության (կոնսենսուսի) վրա ✓

Այն է թե, բոլոր քաղաքական գործընթացներում առկա են կամ կոնֆլիկտներ, կամ սոցիալական համաձայնություն, ինչն էլ պայմանավորում է սոցիալ-քաղաքական սուբյեկտների փոխհարաբերությունների բնույթը.

Քաղաքական կոնֆլիկտների խնդիրը դարձել է քաղաքագիտության ուսումնասիրման հիմնական պրոբլեմներից մեկը, որին նվիրված են բազում հետազոտություններ

Քաղաքական միտքը պատմության ողջ ընթացքում պտտվել է հասարակության զարգացման երկու կոնցեպցիաների շուրջ: Համաձայն մեկի, խաղաղությունն ու համաձայնությունը, հասարակական կարգ ու կանոնն ու միասնությունը միշտ էլ բնորոշ են եղել մարդուն և հասարակությանը, հա-

մայատասխանել են նրանց իրական բնույթին, հատուկ են եղել նրանց Համաձայն մյուս տեսակետի հասարակության մեջ կարգ ու կանոնը և միասնությունը անհնար է առանց հակասությունների ու կոնֆլիկտների, քանզի հասարակության մեջ կարգ ու կանոնը, միասնությունը, համաձայնությունը անհնարին է առանց ուժի և պարտադրանքի գործադրման, առանց մեկի իշխանության և մյուսների ենթակայության ու իրավազրկման:

Ելնելով պատմականորեն ձևավորված նման մոտեցումներից քաղաքագիտության մեջ առաջացել են երկու հիմնական հոսանքներ՝ Թ.Պարսոնսի կառուցվածքային ֆունկցիոնալիզմի (կոնսենսուս, համաձայնողականություն) դպրոցը և Ռ. Գաեներդֆի կոնֆլիկտների դպրոցը

Կառուցվածքային ֆունկցիոնալիզմի հոսանքը ելակետային է համարուայն, որ ա) ցանկացած հասարակություն հարաբերականորեն կայուն տարբերից է կառուցված: ք) այդ տարրերից յուրաքանչյուրը հասարակության մեջ իր առանձնակի դերն է կատարում, օժանդակելով համակարգի պահպանմանն ու ամրապնդմանը: գ) համակարգի տարրերը հենվում են արժեքների լիզիտիվության և կոնսենսուսի վրա, (լիզիտիվության տակ հասկացվում է իշխանության, քաղաքական նորմերի և տվյալ հասարակության կանոնների օրինականությունը և դրանց հասարակության կողմից ընդունելի լինելը):

Քաղաքական տեղաշարժերի և զարգացումների փորձը ցույց է տալիս, որ կոնսենսուսի (համաձայնության) հիմքի վրա իրականացվող քաղաքական գործընթացները, կամ ժամանակավոր բնույթ են ունենում (կռալիցիոն կառավարության կազմելը, քաղաքական բլոկների ձևավորումը, ազգային համերաշխությունը և այլն), կամ հնարավոր է լինում միայն հասարակության զարգացման որոշակի աստիճանում (կայուն հաստատված, զարգացած ժողովրդավարության պայմաններում), կամ միայն կոնկրետ պայմաններում և կոնկրետ խնդիրների իրականացման շուրջ որոշակի քաղաքական ուժերի միջև համաձայնություն ձեռք բերելու դեպքում (օրենքների, որոշումների ընդունման ժամանակ, իշխանությունը անվստահություն հայտնելու, համատեղ քաղաքական քայլեր, միտինգներ, ցույցեր իրականացնելու ժամանակ և այլն): Եվ այնքանով, որքանով այդ ձեռնարկողները միտված են հասարակության կյանքում դրական զարգացմանն ու առաջընթացին նպաստող փոփոխությունների առաջացմանը, այդքանով էլ սոցիալական համաձայնությունը տարբեր քաղաքական սուբյեկտների միջև իր նշանակալից դերն է խաղում հասարակության հետագա առաջընթացի գործում:

Համաշխարհային քաղաքական զարգացումների վերլուծությունը ցույց տալիս, որ հասարակության քաղաքական կյանքի կազմակերպումը սոցիալական համաձայնության հիմքի վրա իրականացվող քաղաքական գործընթացները գնալով ավելի ու ավելի իրական ու լայնամասշտաբ են դառնում այն երկրներում, որոնցում ամուր հաստատված են ժողովրդավարության սկզբունքները: Եվ որքան կատարելագործվում են ժողովրդավարության սկզբունքները, այնքան հասարակական համաձայնության հիմքի վրա կազ-

մակերպված քաղաքական գործընթացները առավել մեծ արդյունքներ են արձանագրում և հասարակության կայուն զարգացման հնարավորությունն էլ մեծանում է:

Սոցիալական համաձայնությունը քաղաքական կոնֆլիկտների (հակասությունների) հաղթահարման կարևորագույն միջոցներից մեկն է, և որքան այդ միջոցից լավ են օգտվում քաղաքական ուժերը, այնքան ծագած հակասությունների ու հակամարտությունների հաղթահարման հնարավորությունը մեծանում է, այնքան հասարակությունը գերծ է մնում ավելորդ կոռուստներից և վայր ու վերումներից:

Սոցիալական համաձայնության հիմքի վրա իրականացվող քաղաքական գործընթացների դերն ու անհրաժեշտությունը մեծանում է հատկապես անցման շրջանում գտնվող հասարակության համար, որտեղ ցանկացած քաղաքական կոնֆլիկտի խորացում հակված է ապակայունացնելու հասարակությունը և առաջացնելու զարգացմանն ու առաջընթացին խոչընդոտող բազում արգելքներ, երբեմն էլ պատճառ դառնալով մեծ ավերածությունների:

Սոցիալական համաձայնության հիմքում ընկած է քաղաքական տարբեր ուժերի կողմից հասարակության առջև ծագած խնդիրները համատեղ լուծելու անհրաժեշտության գիտակցումը, ինչն էլ քաղաքական ուժերին մղում է, հասարակության համար որևէ կարևոր խնդրի լուծման ժամանակ, միավորելու ջանքերը և համատեղ քաղաքական գործընթացների կազմակերպելու միջոցով հասնել տվյալ խնդրի իրագործմանը: Որքան քաղաքական տարբեր ուժերը համաձայնության շատ եզրեր են գտնում, որքան նրանց շահերը համընկնում են տվյալ խնդրի իրականացման ժամանակ, այնքան նրանց միջև սոցիալական համաձայնությունը կայուն է լինում, իսկ այդ հիմքի վրա համատեղ կազմակերպած ու իրականացվող քաղաքական գործընթացներն էլ առավել արդյունավետ են լինում: Մյուս կողմից հարկ է նշել, որ թերի կամ չսայացած սոցիալական համաձայնությունը միշտ էլ կարող է վերածվել քաղաքական հակամարտության, ինչը միշտ էլ վտանգում է հասարակության կայուն զարգացմանը: Ուստի խոսելով սոցիալական համաձայնության մասին, որպես քաղաքական գործընթացի հիմքի, այն պետք է նախ և առաջ դիտել որպես քաղաքական կոնֆլիկտների կանխման ու նաև հաղթահարման շարունարագույն եղանակներից մեկը:

Քաղաքական կոնֆլիկտների տեսության կողմնակիցները ելնում են այն ռեույթից, որ կոնֆլիկտները հասարակության զարգացման բնական և անհրաժեշտ գործոնն է, որ սոսանց կոնֆլիկտների այդ զարգացումը անհնարին է Հայացք ձգելով հասարակության զարգացման ինչպես հեռավոր անցյալի, այնպես էլ հեռավոր ապագայի վրա, պարզ է դառնում, որ հասարակության զարգացումը միշտ էլ ուղեկցվել և ուղեկցվելու է քաղաքական կոնֆլիկտներով: Այնտեղ, որտեղ կան մարդիկ կան նաև կոնֆլիկտներ, քանզի երբեք հասարակությունը առանց հակասությունների, հակադիր շահերի ու զարգացիարների, տարաբնույթ պահանջմունքների գոյություն ունենալ չի կարող: Բացառված է երբևիցե մի այնպիսի վիճակ, որ հասարակության մեջ իշխի

բացարձակ միակարծություն, միատեսակ շահեր ու զաղափարներ, միատեսակ ընդունակություններ և կարողություններ, ինչն էլ իրավունք է տալիս պնդելու, որ հասարակության մեջ հակասություններ միշտ էլ լինելու են: Ուստի լինելով սոցիալ-քաղաքական երևույթ կոնֆլիկտները բնորոշ են ցանկացած հասարակությանը և ընկած լինելով քաղաքական գործընթացների հիմքում միտված են հասարակության մեջ ծագած հակասությունների հաղթահարմանը: Այսպիսի պնդումը կարող է տարօրինակ թվալ, այն առումով, թե ինչպես են կոնֆլիկտները դառնում հասարակության մեջ ծագած հակասությունների հաղթահարման միջոց: Բանն այն է, որ ցանկացած հասարակության մեջ առկա են անհամաձայնության, առճակատման, պարտադրանքի, բռնության հատկանիշներ: Քաղաքական համակարգը սոցիալ-քաղաքական սուբյեկտների համար հակադրման առճակատման, բաց տարածություն է: Կոնֆլիկտները հենց այդ սուբյեկտների միջև անհամաձայնությունների, խումբների, առճակատումների և հակամարտությունների սահմանը ընդգծող սոցիալական երևույթն է, որը հասարակությանը մղում է այդ հակասությունների լուծման համար անհրաժեշտ ինստիտուտներ, մեխանիզմներ ու հարաբերություններ ստեղծել: Այլ կերպ ասած կոնֆլիկտները հասարակությանը հուշում են թե նա ինչ կարևորագույն խնդիրների լուծման անհրաժեշտության առջև է կանգնած, ցույց են տալիս դրանց առաջացման պատճառները և մատնանշում է դրանց լուծման ճանապարհները: Կոնֆլիկտների անընդհատ լուծման ճանապարհով առաջադիմական փոփոխություններ են կատարվում ողջ քաղաքական համակարգում, թույլ չտալով, որ ծագած հակասությունները խորանան և վերածվեն անլուծելի ճգնաժամերի: Միևնույն ժամանակ, կոնֆլիկտները ավելի համախմբված են դարձնում քաղաքական ուժերին, ավելի նպատակասլաց են դարձնում նրանց գործունեությունը ինչը վերջին հաշվով տանում է ամբողջ հասարակության միավորման և համախմբման: Վ

Վ Քաղաքական կոնֆլիկտներն իրենց ամենատարբեր դրսևորումներն ունեն և դրանք կարելի է դասակարգել տարբեր հիմքերից ելնելով օրինակ ըստ հակասությունների բնույթի (դասակարգային հակամարտություններ, զաղափարական տարբերություններ և այլն), ներքին և արտաքին բնույթի (կախված սոցիալական համակարգի նկատմամբ եղած վերաբերմունքից), ըստ դրսևորման բնագավառի (տնտեսական, քաղաքական, հոգևոր, ազգամիջյան, միջազգային և այլն):

Կոնֆլիկտները կարելի է դասակարգել ըստ գործողության ժամանակի, օրինակ՝ կարող են լինել ձգձգվող կամ արագընթաց, ըստ ուժգնության-թուլլի կամ ուժեղ, գործողության մասշտաբի-տեղական կամ տարածաշրջանային, ըստ դրսևորման ձևի-խաղաղ կամ զինված, ըստ մասնակիցների քանակի-բազմասուբյեկտ կամ երկկողմանի, ըստ արձանագրած արդյունքների-դրական կամ բացասական, կառուցողական կամ ապակայունացնող և այլն:

Քաղաքական կոնֆլիկտները կարելի դասակարգել նաև սոցիալական միջավայրի վերլուծության հիման վրա՝ օրինակ՝ կոնֆլիկտներ, որոնք ծա-

գում են եթնիկական խմբերի միջև, տարածքային հանրությունների միջև, պետությունների միջև, տարբեր աղանդների միջև, տարբեր զաղափարախոսությունների միջև, կուսակցությունների միջև, տարբեր կուլտուրաների միջև, իշխանության և ժողովրդի միջև և այլն:

Ցանկացած քաղաքական կոնֆլիկտ իր զարգացման որոշակի փուլերն ունի՝ ա) սկզբնական փուլ, հաճախ այն անվանվում է թաքնված շրջան, որի ժամանակ հասարակության մեջ կուտակվում են կոնֆլիկտների տարրերը, առաջացնելով քաղաքական խմորումներ, բ) հասունացման փուլ, որը բնորոշվում է նաև որպես բացահայտ հակադրման շրջան և գ) ավարտական փուլ:

Առաջին փուլում հակասությունների կուտակումն ու զարգացումը հանգեցնում են կոնֆլիկտային իրադրության առաջացման: Այս փուլում հակամարտող կողմերը սկսում են գիտակցել իրենց շահերը, որոշում են այդ շահերը բավարարելու խանգարող հանգամանքները, ճշտում են իրենց և հակառակորդի շահերի անհամապատասխանության պատճառները, որոշում են իրենց շահերի պաշտպանության հիմնական միջոցներն ու եղանակները և պատրաստվում են կոնկրետ գործողությունների:

Երկրորդ փուլում տեղի է ունենում բաց առճակատում հակադիր կողմերի միջև, որի դեպքում քաղաքական սուբյեկտների և մասնակիցների կողմից իրականացվող գործողությունները կարող են լինել ինչպես խաղաղ, այնպես էլ բռնության միջոցների գործադրմամբ:

Ավարտական փուլը կարող է տանել կամ փակուղի, կամ բռնության միջոցների գործադրմամբ հանգեցնել որոշակի արդյունքի, կամ ունենալ խաղաղ կարգավորման արդյունք: Կոնֆլիկտների խաղաղ կարգավորման ժամանակ գործադրվում են այնպիսի միջոցներ, ինչպիսիք են համոզելը, փոխհամաձայնությունը, փոխզիջումը, քաղաքական և ֆինանսական ճնշումը, օրենքի գործադրումը և այլն: Հակառակ պարագայում առաջանում է քաղաքական լարվածություն, հակադիր կողմերի միջև տեղի են ունենում բացահայտ բախումներ, սանձալիքներ, որոնք կարող են հանգեցնել սկսած տեղային բնույթների բախումներից մինչև քաղաքացիական պատերազմների:

Ընդհանրացնելով ասածը կարելի է եզրակացնել, որ հասարակությունը առանց հակասությունների, կոնֆլիկտների լինել չի կարող: Ուստի խնդիրը առանց կոնֆլիկտների հասարակության ստեղծելի չէ, ինչը գուցե անհնարին է հսկողը ճիշտ ժամանակին, առանց հետաձգելու, ընդունված նորմերի և քաղաքական սկզբունքների շրջանակներում այդ պահին առաջացած կոնֆլիկտների լուծումը գտնելն է: Չարգացած ժողովրդավարության պայմաններում կոնֆլիկտների մեծ մասը լուծվում են ոչ թե պետության, այլ հասարակական-քաղաքական տարբեր ինստիտուտների միջոցով՝ օրինակ՝ քաղաքական կուսակցությունների, կուսակցական բլոկների, խմբակցությունների, հասարակական տարբեր կազմակերպությունների գործունեության

միջոցով: Այդպիսի երկրներում պետությունը, սովորաբար, կոնֆլիկտների լուծմանը միջամտում է հետևյալ դեպքերում.

1. երբ կոնֆլիկտները լրջորեն վտանգում են այն մարդկանց շահերը, ովքեր դրա մասնակիցը չեն:

2. երբ կոնֆլիկտի մասնակիցների կողմից թույլ է տրվում անօրինական բռնարարներ:

3. երբ առաջանում է այնպիսի վտանգ, որ կոնֆլիկտները ձգձգվելով կարող են վերածել հասարակության անդամների մի մասի կողմից մյուսների վրա բռնության հաստատման: Նշենք, որ պետության կողմից նման միջամտությունը մեծամասամբ, ամրագրված է օրենքով: Անցումային փուլում գտնվող երկրներում կոնֆլիկտների լուծմանը պետության միջամտությունը մեծանում է, սակայն, այս դեպքում էլ, սովորաբար, դեռևս չկան կոնֆլիկտների հաղթահարման համար հստակ մշակված սկզբունքներ, մեխանիզմներ, կամ դրանք կարգավորող օրենքներ և կոնֆլիկտները լուծվում են ըստ իշխող խավի կամքի պարտադրանքի, առանց միջոցների միջև խտրություն դնելու:

Նկատի ունենալով քաղաքական կոնֆլիկտների հիմքում ընկած հակասությունների բնույթը, դրանք կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի.

1. Զաղաքական կոնֆլիկտներ, որոնց հիմքում ընկած են իշխանության՝ և ժողովրդի, կամ նրա որոշակի շերտերի շահերն արտահայտող քաղաքական ուժերի միջև եղած հակասությունները: Այն կարելի է անվանել նաև ներպետական քաղաքական կոնֆլիկտներ: Այս դեպքում քաղաքական գործընթացներն ուղղված են լինում իշխանության պահպանմանը կամ նվաճմանը, իշխանության բաժանմանը կամ նրան մասնակից լինելուն, և իշխանության գործունեության վրա ազդելու միջոցով որոշակի քաղաքական նպատակների իրականացմանը:

Էթնօրաքաղաքական կոնֆլիկտներ, որոնց հիմքում ընկած են ինչպես ազգային տարբեր հանրությունների միջև ծագած հակասությունները, որոնք կարող են ունենալ պատմական, տարածքային, կրոնական, լեզվական, մշակութային և այլն բնույթի, այնպես էլ, հատկապես բազմազգ պետության մեջ, ազգերի և կենտրոնական իշխանությունների միջև առաջացած հակասությունները, որոնք կարող են լինել տնտեսական, սոցիալական, քաղաքական, իրավական բնույթի: Էթնօրաքաղաքական կոնֆլիկտների հիմնական մասնակիցները տարբեր ազգային հանրություններն են:

3. Միջպետական կոնֆլիկտներ, որոնց հիմքում կարող են ընկած լինել տնտեսական և քաղաքական հակադիր շահեր, տարածքային պահանջատիրական խնդիրներ, պատմականորեն ձևավորված թշնամանք, Էկոլոգիական խնդիրներ և այլն:

Զաղաքական կոնֆլիկտների վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենադժվար հաղթահարող կոնֆլիկտները էթնօրաքաղաքական բնույթի հակասություններն են: Դրանք կարող են դրսևորվել հետևյալ հիմնական ձևերով.

ա) տարածքային կոնֆլիկտներ, որոնք պայմանավորված են տվյալ ազգության պատմական հողերի միավորման ձգտումով, երբ նրա տարածքի ինչ որ մասը տարբեր ձևերով անջատել են նրանից (զրավել, խլվել, գավթել են և այլն):

բ) կոնֆլիկտներ, որոնք առաջանում են ազգային ինքնորոշման իրավունքից օգտվելու և անկախ պետություն ստեղծելու ժամանակ, ինչին միջոց փորձում է հակազդել այն պետությունը, որի կազմում գտնվում է տվյալ ազգային միավորը: Այստեղ հակադրվում են ազգային հանրության ու կենտրոնական իշխանությունը:

գ) կոնֆլիկտներ, որոնց հիմքում ընկած են այս կամ այն պետության տարածքային պահանջները հարևան պետությունից, ինչը, սովորաբար, տեղի է ունենում այն ժամանակ, երբ հարևան պետությունը պատմության ինչ որ փուլում գավթել է այդ տարածքը:

դ) կոնֆլիկտներ, որոնք հետևանք են տարածքների կամայական փոփոխությունների:

ե) կոնֆլիկտներ, որոնց հիմքում ընկած են պատմական բնույթի գործոններ, որոնք պայմանավորված են երկարատև ազգային-ազատագրական պայքարի ավանդույթներով: Այս դեպքում անկախության ձգտող ազգային միավորի և տիրապետող պետության կամ ազգի միջև հակադրությունները սովորույթի ուժով երկար ժամանակ շարունակվում են նաև անկախություն ձեռք բերելուց հետո:

զ) կոնֆլիկտներ, որոնցում լեզվա-մշակութային հակասությունների բողի տակ (բազմազգ պետության մեջ պետական լեզվի հարցը, ազգային փոքրամասնությունների լեզվի և մշակույթի կարգավիճակի հարցը և այլն), թաքնված են տարբեր ազգային հանրությունների միջև խորը տարածայնություններ և սուր հակասություններ:

Էթնօրաքաղաքական կոնֆլիկտների հաղթահարման և լուծման նպատակով միջազգային կազմակերպությունների կողմից (հատկապես ՄԱԿ-ի կողմից) ընդունվել են մի շարք նորմեր ու սկզբունքներ, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս խուսափել ազգամիջյան կոնֆլիկտների հետագա խորացումից, և դրանք լուծել խաղաղ կարգավորման ճանապարհով: Այդպիսի սկզբունքներից են, պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը, ազգերի ինքնորոշման իրավունքը, տարածքային ամբողջականության պահպանության սկզբունքը և այլն:

Էթնօրաքաղաքական կոնֆլիկտների լուծման կարևորագույն միջոցներից մեկը խաղաղ բանակցությունների միջոցով ծագած հակասությունների հաղթահարումն է, որը ենթադրում է փոխշահավետության սկզբունքի կիրառում և փոխադարձ գիշումների պատրաստականություն:

Զաղաքական կոնֆլիկտների լուծման համար անհրաժեշտ միջոցառումներից են.

-կոնֆլիկտի տեղայնացում, թույլ չտալով, որ այն ծավալվի և ներառի նոր գործոններ, որոնք կղժկարեցնեն նրա լուծումը:

-խուսափել խնդիրը ինչպես պարզունակ համարելուց, այնպես էլ ծայրահեղացնելուց Կարևոր է որ կոնֆլիկտի հակադիր կողմերը կարողանան այն դիտարկել ընդհանուրի շահերից ելնելով, ցուցաբերեն այնպիսի մոտեցում ինչը միավորում է երկու կողմերին ասեղն մարդասիրությունը, ժողովրդավարությունը, մարդու իրավունքները և այլն

-կառուցողական ջանքերի և միջոցների ընդունման ժամանակ չի կարելի դանդաղել, քանզի քաղաքական կոնֆլիկտների լուծման մեջ ժ անակի գործոնը մեծ դեր է խաղում. Ցանկացած բաց թողնված հարմար պահ կարող է տասնապատկել խնդրի կարգավորման դժվարությունը:

-չավագույնս օգտագործել կոնֆլիկտների կարգավորման կուտակված փորձը, հաշվի առնելով դրանց ազգային առանձնահատկությունները:

Քաղաքական հակասություններն ու կոնֆլիկտները անխուսափելի են և հարցը դրանց արգելելու մեջ չէ. ինչը արդի հասարակության զարգացման աստիճանում անհնարին է: Խնդիրը քաղաքակիրթ ձևերով ծագած կոնֆլիկտների լուծման համար արդարացի նորմերի, սկզբունքների, «խաղի կանոնների» մշակումն է. ինչը թույլ կտա քաղաքական կոնֆլիկտները լուծել առանց հասարակության հետագա առաջընթացին ու զարգացմանը խոչընդոտելու, խուսափելով հասարակության համար մեծագույն կորուստներից:

3. Քաղաքական գործընթացների դասակարգումը

Քաղաքագիտական գրականության մեջ հանդիպում ենք քաղաքական գործընթացների ամենատարբեր դասակարգումների, ինչը հիմնականում, պայմանավորված է նրանով, թե դասակարգման համար ինչ հիմք է ընդունվում. Զանախ հիմք են ընդունվում քաղաքական փոփոխությունների բնույթը-հեղափոխություն կամ ռեֆորմներ, առաջադիմական և հետադիմական, ներքին կամ անցումային փոփոխություններ և այլն:

Քաղաքական գործընթացները դասակարգվում են նաև տարածքային հիմքի վրա, տեղական բնույթի. որոնք ընթանում են պետության առանձին վարչական տարածքում, տարածաշրջանային բնույթի, որոնք դրսևորվում են հարևան երկրների հետ քաղաքական հարաբերությունների ձևով, համաշխարհային բնույթի, որը դրսևորվում է միջազգային քաղաքական հարաբերությունների ձևով:

Քաղաքական գործընթացները կարող են դասակարգվել նաև ըստ իրա վիճակի, կայուն և անկայուն, ըստ շահերի, նպատակների, գաղափարա խոսության, ըստ իրականացնող սուբյեկտների և մասնակիցների և այլն:

Բոլոր տեսակի քաղաքական գործընթացները կոչված են այս կամ այն չափով փոփոխելու հասարակության կյանքը, երբեմն ամբողջովին, երբեմն էլ մասնակիորեն:

Հասարակական կյանքում քաղաքական փոփոխություններն ընթանում են տարբեր ուղղություններով, տարբեր ժամանակահատվածներում ու արագությամբ, միտված են տարբեր խնդիրներ ու նպատակներ իրականաց-

նել. Հնարավոր տարաբնույթ քաղաքական փոփոխություններից ընդունված է առանձնացնել մի քանի հակադիր բնույթ ունեցող գույզեր-հեղափոխություններ-ռեֆորմներ, առաջադիմական-հետադիմական, ներքին-անցումային բնույթի փոփոխություններ:

Հասարակական կյանքի քաղաքական փոփոխությունների մեջ միշտ էլ մեծ հետաքրքրություն են ներկայացրել հեղափոխություններն ու ռեֆորմները:

Քաղաքական հեղափոխությունները փոխում են քաղաքական ամբողջ համակարգի հիմքը-իշխանության ձևավորման, իրականացման բնույթն ու եղանակները, քաղաքական իշխանության ձևերը, հիմնական քաղաքական դերակատարների տեղն ու դերը, հասարակության սոցիալ-տնտեսական, հրավա-քաղաքական հարաբերությունները և այլն: Քաղաքական հեղափոխությունները գործնականում ենթադրում են բացահայտ բռնությունների կիրառման միջոցով քաղաքական համակարգի արմատական փոփոխություններ. Հեղափոխությունները, սովորաբար, արդյունք են հասարակության մեջ չհաղթահարված և խորացող քաղաքական կոնֆլիկտների, որոնք անընդհատ կուտակվելով ավելի ու ավելի են սրում տարբեր սոցիալական հանրույթների, իշխանության և ժողովրդի միջև ծագած հակասությունները, որի ղեկնանջով ստեղծվում է մի այնպիսի իրադրության, երբ տարբեր քաղաքական ուժերի բացահայտ բախումն ու առձակատումը դառնում է անխուսափելի Գոյություն ունեն մի շարք տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլն գործոններ, որոնք նպաստում են հեղափոխության հասունացմանն ու իրականացմանը: Դրանցից են սոցիալ տնտեսական ծայրահեղ անհավասարությունը, անարդարությունը, կառավարող քաղաքական ուժերի անընդունակությունը լսելու և հասկանալու զանգվածների ղզղոհության պատճառները և բավարարելու նրանց կենսական անհրաժեշտ պահանջները, հասարակությունը կառավարելու իշխող խավի անընդունակությունը, որի ժամանակ, սովորաբար, զանգվածները այլևս հին ձևով կառավարվել չեն ցանկանում և ձգտում են փոխել իրենց համար անընդունելի կարգերը. Երբ հասարակության մեջ առկա են թվարկված գործոնները, առաջանում է հեղափոխական իրադրություն, այսինքն առաջանում է քաղաքական հեղափոխության իրականացման իրական հնարավորություն:

Սոցիալական հեղափոխություններն անցնում են զարգացման հետևյալ փուլերով - հասունացում, պայթում կամ բռնկում, հաղթանակ և ինստիտուտիալիզացիա: Հեղափոխության հասունացման փուլը, սովորաբար, երկար ժամանակահատված է պահանջում, ինչի տևողությունը պայմանավորված է հասարակության մեջ քաղաքական զարգացումների բնույթով, քաղաքական ուժերի կազմակերպվածությամբ ու նախապատրաստական գործողություններով, զանգվածների քաղաքական գործընթացներին ակտիվ մասնակցելու գիտակցությամբ, իշխող խավի և ժողովրդի միջև առաջացած հակասությունների բնույթով, ու նաև այն բանով, թե որքանով է իշխանությունը վերցնել ցանկացող քաղաքական ուժը պատրաստ ու ընդունակ իրականացնելու:

հեղափոխությունը: Երբ նշված պայմաններն առկա են տեղի է ունենում հեղափոխության պայթյուն, ինչը դրսևորվում է կառավարող ուժերի և ապստամբների միջև զինված բախման ձևով:

Այս փուլին բնորոշ են համընդհանուր բռնություններ, ինչը հանգեցնում է մարդկային զոհերի և նյութական մեծ կորուստների: Ապստամբները կարող են հաղթել կամ պարտվել, երկու դեպքում էլ հեղափոխության ճակատագիրը դեռ վճռված չէ: Երրորդ փուլը որոշում է հաղթողին, եթե ապստամբներին չի հաջողվում հաղթել, ապա իշխանության փոփոխություն տեղի չի ունենում: Իսկ եթե հաղթում են ապստամբները, ապա իշխանության են գալիս նոր քաղաքական ուժեր, լիդերներ, որոնք իրենց վրա են վերցնում հասարակության կառավարումը: Ինչպես ցույց է տալիս հեղափոխությունների փորձը, հաղթանակից հետո հեղափոխական ղեկավարների միջև շատ հաճախ ծագում են տարաձայնություններ, ինչը կապված է նրանց տեսակետների տարբերությանների, ամբիցիաների առկայության հետ: Այդ տարաձայնությունները խորանալով, երբեմն վերածնում են նրանց միջև այնպիսի ներքին սուր հակասությանների, որ նրանք սկսում են իրար ոչնչացնել: Այդ առթիվ Լ. Բերդյաևը գրում էր «հեղափոխությունը խժոճում է իր սեփական գավակներին» (2,117): Ավարտական փուլում ստեղծվում և ամրապնդվում են նոր պետական և իշխանական մարմիններ ու կառույցներ, ստեղծվում են քաղաքական կյանքի նոր ձևեր:

Այսպիսով, հեղափոխությունները հասարակության սոցիալական համակարգի արմատական վերափոխմանն ուղղված քաղաքական գործընթաց է, որը ենթադրում է իշխող խավերի, խմբերի դերերի փոփոխություն, ծնելով նոր քաղաքական, իրավական և տնտեսական հարաբերությունների համակարգ, առաջացնելով նոր հաստատությունների և արժեքների ստեղծման անհրաժեշտություն:

Հասարակության զարգացումը, հատկապես նրա արմատական վերափոխումների փուլերում, միշտ էլ ուղեկցվում է նորանոր խնդիրների և պահանջ-մոլեքների առաջացմամբ: Եվ այդ զարգացումը տեղի է ունենում ճիշտ այն չափով, ինչ չափով որ լուծվում են առաջացած խնդիրները և բավարարվում են նոր ձևավորված պահանջմունքները: Ուստի, շատ կարևոր է ժամանակին նկատել ծագած խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիները: Այդ խնդիրները կարող են առնչվել հասարակության կյանքի որևէ ոլորտին, որևէ կողմին, կամ լինել համագգային բնույթի, այսինքն ուղղված լինել հասարակության ամբողջական վերափոխմանը, երբ հասարակության հետագա զարգացումը անհրաժեշտաբար պահանջում է լայնամասշտաբ ու որակավանկ փոփոխություններ: Օրինակ՝ հասարակության քաղաքական համակարգի, տնտեսական համակարգի, իշխանության արմատական փոփոխությունները և այլն: Եթե այդ խնդիրները ժամանակին չեն լուծվում, ապա, մի կողմից, հասարակության զարգացումն ու առաջընթացն է արգելակվում, մյուս կողմից հասարակության մեջ անբավարարվածությունն ու դժգոհություններն են մեծանում, հիմք դնելով տարբեր սոցիալական հանրույթների,

քաղաքական ուժերի միջև հակասությունների առաջացման, որոնք ինչպես նշվեց վերը, խորանալով վերածնում են կոնֆլիկտների, ճգնաժամերի և քաղաքական առճակատումների: Իսկ եթե այդ խնդիրները ժամանակին նկատվում և իրենց լուծումն են գտնում, ապա տեղի է ունենում հասարակական կյանքի աստիճանական վերափոխում, զերծ մնալով կոնֆլիկտների ու հակասությունների հետագա սրումից: Այն բոլոր քաղաքական գործընթացները, որոնք ուղղված են հասարակության կյանքի աստիճանական վերափոխման ճանապարհով ապահովել նրա ժամանակի պահանջներին համապատասխանող զարգացումն ու առաջընթացը, ընդունված է անվանել ռեֆորմներ- բարեփոխումներ, բարեփոխումներ:

Ռեֆորմները իշխանությունների և քաղաքական ուժերի կողմից իրականացվող գիտակցված և նպատակամղված քաղաքական գործընթացներ են, որոնք միտված են հասարակության զարգացումը, կարգ ու կանոնը, կայունությունը ապահովելու նպատակով ժամանակին իրականացնելու այնպիսի քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական և այլ բնույթի փոփոխություններ, որի պահանջն ստաջացել է հասարակության զարգացման հետագա առաջընթացն ապահովելու համար, ինչը դարձել է հասարակության տարբեր խավերի ու խմբերի և նրանց շահերն արտահայտող քաղաքական ուժերի առաջնահերթ նպատակը:

Ռեֆորմները, սովորաբար, ուղղված չեն ամբողջ քաղաքական համակարգի կտրուկ ու արմատական վերափոխմանը, ինչը տեղի է ունենում հեղափոխությունների ժամանակ, այլ ենթադրում են հասարակության կյանքի տարբեր կողմերի աստիճանական բարեփոխումների ճանապարհով իրականացնել հասարակության ամբողջ քաղաքական համակարգի բարեփոխում: Ռեֆորմների իրականացման ժամանակ պահանջվում է հասարակության հիմնական հասարակական-քաղաքական ուժերի գոնե նվազագույն համաձայնություն և համատեղ գործունեություն, ինչը հնարավորություն է տալիս խուսափել կոնֆլիկտներից ու սուր առճակատումներից և առաջացած տարաբնույթ խնդիրները լուծել խաղաղ ճանապարհով: Այս պարագայում, ինչպես իշխանությունը, այնպես էլ իշխանությանը մաս չկազմող, բայց բարեփոխումների իրականացմամբ շահագրգիռ քաղաքական ուժերը, մշտապես իսկում են քաղաքական գործընթացների վրա, որպեսզի բարեփոխումների ընթացքը չզանդաղի, չշեղվի նախատեսված ուղղությունից և իրապես կայանա:

Իշխանությունը հասարակության մեջ կայունության, կարգ ու կանոն պահպանելու նպատակով ձգտում է, օրենքի շրջանակներում, կարգավորել սոցիալական խմբերի միջև եղած տարաձայնությունները և հաստատել այնպիսի հարաբերություններ, որպեսզի այդ տարաձայնությունները քաղաքական ուժերի միջև չվերաճեն հակասությունների և առճակատումների:

Ասածից չի հետևում, որ այս դեպքում պետք է ամեն ինչ հարթ ու խաղաղ ընթանա, որ ռեֆորմները միշտ իրականացվում են իշխանության և նրան ընդդիմադիր քաղաքական ուժերի և սոցիալական խմբերի միջև փոխըմբռն-

ման, համերաշխության ու համաձայնության պայմաններում: Հաճախ, երբ իշխանությունները թերանում կամ խուսափում են նախատեսված բարեփոխումները իրականացնել ընդդիմությունը օրենքի շրջանակներում ձեռնարկում է քաղաքական մի շարք գործընթացներ (սեփական մամուլի միջոցով իշխանության գործունեության մեկնաբանում և քննադատություն, գործադուլներ, միտինգներ ցույցեր և այլն), որոնց միջոցով փորձում է ազդել իշխանությունների վրա, ստիպել նրան իրականացնելու հասարակության հիմնական մասի համար պահանջմունք դարձած սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական քնուկախ խնդիրներ:

Ռեֆորմների իրականացման ընթացքում քաղաքական բազմաբնույթ գործընթացների մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն օրենսդիր և գործադիր մարմինների ընտրությունները: Ընտրությունները, որպես ամենազանգվածային քաղաքական գործընթացներ, առավել արդյունավետ են կայացած ժողովրդավարական համակարգով հասարակությունում, որտեղ օրենսդիր են երաշխավորված է և ապահովում է քաղաքական տարբեր ուժերի ազատ գործունեությունը, գաղափարների ու ծրագրերի ազատ մրցակցությունը, և, որ քիչ կարևոր չի, ժողովրդի կամքի ազատ դրսևորման հնարավորությունը: Ընտրությունները, որոնք առաջին հայացքից մեզ տրվում են որպես իշխանության ձևավորման գործընթացներ, իրականում կոչված են շատ ավելի խորը և հասարակական ինչդրության առավել մեծ խնդիրներ լուծելու:

Ընտրությունները, եթե դրանք խեղաթյուրված չեն կեղծիքներով ու բռնություններով և իրապես արտահայտում են ժողովրդի կամքի ազատ դրսևորումը, փաստորեն ենթադրում են հասարակական կյանքի բարեփոխումներին միտված նոր գաղափարների, ծրագրերի, հասարակության կյանքի կառավարման նոր ձևերի ու սկզբունքների, նորմերի և օրենքների, իսկ ամբողջությամբ վերցրած հասարակության հետագա զարգացման նոր ուղու ընտրություն: Նրա հիմնական խնդիրը, այս դեպքում, հենց այս պահանջներին համապատասխանող իշխանության ձևավորումն է, այլ ոչ թե սոսկ իշխանության ձևավորումը: Ասել է, թե ընտրությունները, նախ և առաջ, հասարակության հետագա առաջընթացին միտված կարևորագույն քաղաքական գործընթացներ են, այդ առաջընթացի հիմնական նախապայմաններից մեկը:

Ընտրական գործընթացների իրականացման սկզբունքները ամրագրված են օրենսդրական նորմերով: Ժողովրդավարական երկրներում ընտրական գործընթացները ընդգրկում են պետական իշխանության բոլոր մակարդակները, կենտրոնականից մինչև տեղական մարմինները, նախագահից մինչև տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների ընտրությունը:

Ընտրական գործընթացների իրականացման անհրաժեշտ պայմաններն են.

1. Ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուների և կուսակցությունների համար հավասար հնարավորությունների ապահովումը (հավա-

սար ֆինանսավորում, տեղեկատվության միջոցների ապահովում, պետական մարմինները պահպանում են չեզոքություն և չեն միջամտում նախընտրանան գործընթացին և այլն):

2. Թեկնածուների գրանցման առկայությունը, որը պետք է որոշի, թե ընտրական բյուլետենում գրանցվել ցանկացող թեկնածուն համապատասխանում է արդյո՞ք օրենքի առաջադրած պահանջներին թե՛ ոչ: Այդպիսի պահանջներ կարող են լինել ընտրական իրավունքը, տարիքային ցենզը, քաղաքացիությունը, մասնագիտական պիտանելիությունը:

3. Ընտրողների գրանցման ինստիտուտը, որը պետք է կազմի ընտրողների ցուցակը, ինչը ընտրական տեղամասերի ղեկավարներին և ընտրական հանձնաժողովի անդամներին թույլ է տալիս ճշտելու ընտրողի ընտրություններին մասնակցելու իրավունքը և պարզելու նրանց տվյալ ընտրատարածքի բնակիչ լինելու հանգամանքը:

Այսօր աշխարհում գործում են տարբեր ընտրական համակարգեր, սակայն լայն տարածում են գտել հիմնականում երկու մեծամասնական և համամասնական ընտրական համակարգեր: Մեծամասնական ընտրական համակարգերում կիրառվում է երկու սկզբունք: Բացարձակ մեծամասնության սկզբունքը, որի դեպքում թեկնածուն ընտրված է համարվում, եթե ստանում է ընտրողների ձայների կեսից ավելին 50%+1 ձայն: Եթե թեկնածուներից ոչ մեկը չի հավաքում նշված չափով ձայներ, ապա նշանակվում է երկրորդ փուլ, որին արդեն մասնակցում են առաջին փուլում առավել շատ ձայներ ստացած երկու թեկնածուները և հաղթում է նա, ով ստանում է առավել շատ ձայներ:

Երկրորդը ձայների հարաբերական մեծամասնության սկզբունքն է, որի դեպքում հաղթում է այն թեկնածուն, որը ավելի շատ ձայն է հավաքել, քան իր հակառակորդներից յուրաքանչյուրը առանձին վերցրած: Այս դեպքում երկրորդ փուլը բացառվում է: Այս սկզբունքը լուրջ թերություն ունի, քանզի կուսակցությունը ընտրության մասնակիցների ավելի քիչ ձայներ ստանալով կարող է խորհրդարանում մեծամասնություն կազմել: Օրինակ՝ եթե ընտրության մասնակցում է հինգ կուսակցություն և ձայները բաշխվում են ասես 15, 18, 20, 22 և 25 տոկոսներով, ապա ընտրված է համարվում տվյալ ընտրատարածքում ընտրողների ընդամենը 25% ձայներ ստացած թեկնածուն, ներկայացնելով ամբողջ ընտրատարածքը, որին 75%-ը չի ընտրել: Այս թերության հաղթահարմանը նպաստում է համամասնական ընտրական համակարգի կիրառումը, որի դեպքում ստեղծվում են ավելի շատ թվով ընտրական տարածքներ և ըստ ստացած ձայների քանակի կուսակցությունները տեղեր են ստանում խորհրդարանում:

Մեր ժամանակներում մեծամասնական ընտրական համակարգեր կիրառվում են Անգլիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Ճապոնիայում և այլն:

Համամասնական ընտրական համակարգեր գործում են Ավստրիայում, Բելգիայում, Բուենաստանում, Իտալիայում, Գերմանիայում, Սկանդինավյան երկրներում և այլուր:

Երբեմն այս երկու համակարգերը կիրառվում են միասին, օր. Հայտատա-
նում: Այս դեպքում, սովորաբար, օրենքով ամրագրված է յուրաքանչյուր հա-
մակարգով ընտրվող պատգամավորների քանակը (Հայաստանում ընդուն-
ված է 75-համամասնական և 56-մեծամասնական հարաբերությունը):

Այսպիսով, ընտրությունները հասարակության նորացմանը, բարեփո-
խումներին միտված գործընթացներ են, քանզի կոչված են հասարակության
առաջընթացին նպաստող նոր գաղափարներ ու ծրագրեր իրականացնելու
պատրաստ ու ընդունակ քաղաքական ուժերից իշխանություններ ձևավորել,
ժամանակին ապահովելով հասարակության առջև ծառայած խնդիրների
լուծումը: Կամ գոնե, այդպիսին պետք է լինի նրա հիմնական արդյունքը:

Թե որքանով է հաջողվում ընտրությունների միջոցով հասնել հասարա-
կության առջև դրված նպատակների իրականացմանը, այլ հարց է, ինչը
կախված է մի շարք կարևոր գործոններից (օր հասարակության զարգաց-
ման մակարդակը, ժողովրդավարական սկզբունքների հաստատման աստի
ճանը, գանգվածների քաղաքական գիտակցության և քաղաքական գործըն-
թացներին գիտակցված մասնակցելու աստիճանը, քաղաքական կուսակցու-
թյունների կազմակերպվածության աստիճանը, հեղինակությունը և էլի շատ
գործոններ):

Քաղաքական գործընթացները երբեմն բնութագրվում են որպես առաջա-
դիմական կամ հետադիմական ուղղվածություն ունեցող քաղաքական փո-
փոխություններ: Այդ փոփոխությունները կոչված են, կամ պահպանելու հա-
սարակության տվյալ պահի քաղաքական արժեքները (մարդու իրավունքնե-
րը, քաղաքացիական ազատությունները, հասարակության համախմբվա-
ծությունը, հասարակական համաձայնությունը և այլն), կամ մերժելու
դրանք:

Քաղաքական գործընթացները կարող են կազմակերպվել և իրականաց-
նել նաև անլեզալ, ընդհատակյա, օրենքով չնախատեսված և արգելված ձևե-
րով: Այդպիսի դրսևորում ունեցող գործընթացները կարող են լինել և առա-
ջադիմական, և հետադիմական բնույթի: Եթե դրանք ուղղված են բռնապե-
տական սկզբունքներով գործող իշխանության տապալմանը, ապա որքան էլ
բռնի ու դաժան դրսևորում ունենա, այն կարելի է առաջադիմական համա-
րել: Իսկ, եթե այն ուղղված է ազգային շահերի գերակայությունը ապահո-
վող, ժողովրդի մեծամասնության շահերը պաշտպանող, ժողովրդավարու-
թյան սկզբունքներով քաղաքականություն իրականացնող իշխանության
տապալմանը և խմբի, կլանային նեղ շահերի պաշտպանության նպատակ
ունեցող իշխանության հաստատմանը, ապա, բնականաբար, դա հասարա-
կության համար քայքայիչ, կործանարար և հետադիմական նշանակություն
ունեցող քաղաքական գործընթաց է:

Քաղաքական փոփոխությունները առաջադիմական են համարվում երբ,
1 Քաղաքական համակարգը անընդհատ փոփոխվող սոցիալական պա-
հանջների նկատմամբ դրսևորում է բարձր հարմարվողականություն,

այսինքն՝ արագ արձագանքում է հասարակության մեջ ծագած խնդիրներին և
ձգտում է լուծել դրանք:

2 Պետական կառավարման համակարգում տեղի է ունենում կառույցնե-
րը և ֆունկցիաների տարանջատում, այսինքն, սկսվում է գործել իշխանու-
թյունների բաժանման սկզբունքը:

3 Պետության գործունեությունում փոքրանում կամ, սահմանափակվում է
պարտադրանքի, բռնության գործադրման դերը:

4 Աճում են իշխանության գործունեության վրա քաղաքացիական ներգոր-
ծության և ճնշման հնարավորությունները, նպատակ ունենալով այդ ճանա-
պարհով օրինականացնել և պաշտպանել քաղաքացիների անհատական և
սոցիալական շահերը:

5 Բարձրանում է քաղաքական գործիչների և իշխանական վերնախավի
կազմակերպչական և կառավարելու ունակությունները, կոմպիտենցիան

6 Քաղաքական ինստիտուտների գործողությունները ուղղված են և նպաս-
տում են հասարակության համախմբմանը և հասարակական համաձայնու-
թյանը:

Եթե քաղաքական գործընթացները նշված հետևանքները չեն առաջաց-
նում, նշանակում է քաղաքական համակարգը դրսևորում է հետադիմության
նշաններ:

4. Քաղաքական գործընթացների մասնակցության հիմնական ձևերը

Հասարակության կյանքին քաղաքական մասնակցությանը քաղաքացի-
ների կամավոր գործունեությունն է, որի միջոցով հասարակության անդամ-
ները մասնակցում են հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական
գործընթացներին (ընտրություններ, միտինգներ, գործադուլներ, քաղաքա-
կան ձեռնարկումներ և այլն) և ուղղակի կամ միջնորդավորված մասնակից
են դառնում պետական քաղաքականության ձևավորմանը:

Այն կարող է դրսևորվել մշտապես, կամ դեպից-դեպ, օգտագործելով
օրինական կամ ոչ օրինական մեթոդներ, լինել կազմակերպված կամ ան-
կազմակերպ:

Ռևստի քաղաքական մասնակցություն ասելով պետք է հասկանալ առան-
ձին քաղաքացիների կամ նրանց խմբերի ձեռնարկած գործունեություն, որի
նպատակն է ազդել պետության քաղաքականության, պետական կառավար-
ման մարմինների գործունեության վրա, ինչպես նաև քաղաքական ղեկավա-
րության, քաղաքական իշխանության բոլոր մակարդակների ղեկավարների
ընտրության վրա: Քաղաքական գործընթացներին մասնակից լինելով, սո-
ցիալ-էթնիկական կամ սոցիալ-քաղաքական խմբերը ներառվում են հասա-
րակության մեջ տեղի ունեցող կոնկրետ քաղաքական տեղաշարժերի և գար-
գացումների պրոցեսի մեջ և իրենց ակտիվ գործունեությամբ ազդում և ուղ-
ղվածություն են տալիս հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական
փոփոխություններին. Քաղաքական գործընթացներին մասնակցությունը

մարդկանց շահերի պաշտպանության կարևորագույն միջոցներից մեկն է Պետականորեն կազմակերպված հասարակության պայմաններում քաղաքացիների ներգրավումը քաղաքական որոշումների ընդունման և կառավարման գործընթացների մեջ այս կամ այն չափով քաղաքականացնում է հասարակության սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտները, իհարկե այն չափով միայն, ինչ չափով դրանք առնչվում են իշխանական հարաբերություններին:

Քաղաքական գրականության մեջ տարբերվում են մի շարք անհատական և խմբային քաղաքական մասնակցության ձևեր, որոնք կարող են լինել կամավոր և պարտադիր, ակտիվ և պասիվ, ավանդական և նորարական, օրինական և ոչ օրինական բնույթի: Դրանից կախված էլ առանձնացվում է քաղաքական մասնակցության տեսակները: Օրինակ՝ մասնակցություն ընտրություններին, քաղաքական որոշումների ընդունմանը, կառավարմանը, քաղաքական լիդերների և նրանց գործունեության վրա հսկողությանը, օրենքների ընդունմանը, պահպանմանն ու իրականացմանը, նախընտրական և այլ բնույթի քաղաքական ձեռնարկումներին, քաղաքական միտինգների և ժողովների, գործադուլների, գանգվածային քաղաքացիական անհազանդության գործընթացների, ազատագրական շարժման հեղափոխությանը, քաղաքական կուսակցությունների գործունեությանը և այլն:

Քաղաքացիների քաղաքականության մասնակցության կոնկրետ ձևերը, տեսակները, միջոցները, մակարդակները, ծավալն ու արդյունքները պայմանավորված են տվյալ քաղաքական համակարգին բնորոշ հարաբերություններով և գործառնության սկզբունքներով:

Ավտորիտար քաղաքական ռեժիմի պայմաններում նրա քաղաքական համակարգին բնորոշ հարաբերությունները ձգտում են հնարավորինս սահմանափակել քաղաքականությանը հասարակական որոշակի խմբերի և խավերի մասնակցությունը: Այս պարագայում իշխանությանը հակադրվող քաղաքական ուժերը գրկված են քաղաքական հիմնական գործընթացներին, հատկապես, իշխանության ձևավորման գործընթացին ազատ մասնակցելու հնարավորությունից և հիմնականում ստիպված են գործել ընդհատակում, ոչ լեգիտիմ միջոցներով:

Ամբողջատիրական քաղաքական համակարգում մարդկանց քաղաքականության մեջ ներգրավման ողջ պրոցեսը դրված է խիստ հսկողության տակ: Այս դեպքում քաղաքացիները քաղաքականությանը մասնակցում են այնքանով և այն ձևով, ինչքանով և ինչ ձևով թույլ է տալիս տիրող իշխանախումբը կամ նրա կամքը արտահայտող օրենսդրական նորմերը:

Ժողովրդավարական հասարակության մեջ փորձ է արվում ստեղծել բոլոր անհրաժեշտ նախադրյալներն ու պայմանները քաղաքականության մեջ հնարավորինս լայն զանգվածների ներգրավման համար: Այս պարագայում մարդկանց քաղաքական գործընթացներին մասնակցության չափն ու ակտիվությունը ուղղակիորեն կապված է տվյալ հասարակության մեջ ժողովրդավարության հաստատման աստիճանի հետ: Իր զարգացման տարբեր աստի-

ճաններում ժողովրդավարությունը տարբեր հնարավորություններ է ստեղծում քաղաքացիների քաղաքականությանը մասնակցելու համար, ինչը կապված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հետ:

Անհատի քաղաքական մասնակցության համար էականորեն կարևոր գործոն է նրա քաղաքական ուղղվածությունը, քաղաքական շահերը, շարժառիթները, պահանջմունքները, գաղափարները, ավանդույթները և այլն: Լեծ նշանակություն ունի այն հանգամանքը, թե անհատը որքանով է շահագրգռված քաղաքական փոփոխություններով և հատկապես, որ ուղղությամբ փոփոխություններին է պատրաստ նա աջակցել, քանզի միայն այս դեպքում է անհատը գիտակցված և ակտիվ մասնակցում քաղաքական գործընթացներին:

Քաղաքական մասնակցության աստիճանի վրա մեծ ազդեցություն են թողնում սոցիոկուլտուրական և աշխարհագրական միջավայրը (ընտանիքը, հանրույթը, բնակավայրը), սոցիալ-տնտեսական գործոնները (կրթական մակարդակը, ազատ ժամանակը, բարեկեցությունը, նյութական միջոցների առկայությունը, քաղաքական կուսակցությունների անդամակցությունը, իշխանության նկատմամբ դիրքորոշումը և այլն): Քիչ նշանակություն չունեն նաև սոցիալ-դեմոգրաֆիական և ազգային-էթնիկական գործոնները: Մարդկանց հասարակական կյանքին քաղաքական մասնակցությունը գնահատվում է որպես ժողովրդավարության հիմնական բնորոշ գծերից մեկը, որպես քաղաքական սոցիալիզացիայի և քաղաքական դաստիարակության միջոց, որպես կոնֆլիկտների լուծման եղանակ, որպես պետությունից քաղաքացիների օտարման դեմ պայքարի միջոց:

Քաղաքական գործընթացների միջուկը և զլխավոր բաղադրիչը իշխանության իրականացման կամ նրա վրա ազդելու միտումով մարդկանց գործողություններն են: Այդ գործողությունները չափազանց տարաբնույթ են, որոնք կարող են դրսևորվել ընտրություններին, միտինգներին, ցույցերին, գործադուլներին և այլն զանգվածային ձեռնարկումներին նրանց մասնակցության ձևով:

Քաղաքական փոքրամասնությունը (քաղաքական էլիտան, լիդերները, ակտիվիստները, պետական գործիչները և այլն), քաղաքական գործընթացներին մասնակցում է հենվելով իր, մասնագիտական կարողության, համոզելու ունակության, կազմակերպչական ընդունակության վրա: Հասարակ քաղաքացիները քաղաքական գործընթացների վրա կարողանում են ազդել և ուղղություն տալ նրան իրենց քանակական մասնակցությամբ:

Նկատի ունենալով սուբյեկտների քաղաքական գործընթացների մասնակցության տարբեր հնարավորությունները, չափերն ու սահմանները, առաջադրած արդյունքները և այլն, կարելի է առանձնացնել մասնակցության երեք հիմնական տեսակներ.

- 1 քաղաքական մասնակցություն պետական կառավարման միջոցով,
- 2 քաղաքական ընդդիմության կազմակերպված մասնակցություն,

3. քաղաքական գործընթացներին շարքային քաղաքացիների մասնակցություն:

Նշենք, որ պետական կառավարման իրականացման ոչ բոլոր ձևերն են համարվում քաղաքական գործունեություն, քանզի դրանք կարող են լինել նաև գուտ իրավական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլն:

Պետական կառավարումը քաղաքականության հետ սերտաճում է այլ դեպքում, երբ իշխանության կառույցների գործունեությունն ուղղված է հասարակության համար պահանջմունք դարձած և նրա հետագա զարգացմանը միտված պետական ծրագրերի, որոշումների ու նորմերի իրականացմանը: Այլ կերպ ասած, պետության քաղաքականության իրականացմանն ուղղված բոլոր գործընթացներին իշխանության կառույցների մասնակցությունը, որը այլ բան չէ, քան իշխանության իրականացման գործընթաց, կարելի է դիտել որպես քաղաքական մասնակցության պետական կառավարման միջոցով:

Պետական կառավարումը կարելի է բնորոշել որպես սոցիալական կառավարման հատուկ տեսակ, որպես պետական կազմակերպությամբ օժտված և համընդհանուր իշխանության կառույցներ ունեցող քաղաքականության սուբյեկտ: Պետական կառավարումը իրավասու է ընդունելու կառավարման վարչական մեթոդներ և պարտադրանքի սանկցիաներ, միաժամանակ օգտագործելով սոցիալական հաղորդակցման օրինական ձևեր, խմբերի ու անհատների հետ փոխազդեցության օրինական միջոցներ: Այն իրավասու է նաև տնօրինելու և համակարգելու հասարակության կոլեկտիվ ռեսուրսները և նպատակամղված օգտագործելու դրանք:

Պետական կառավարման մեջ քաղաքականության խնդիրն է մշակել երկրի զարգացման ծրագրեր և ընտրել դրանցից ամենաարդյունավետն ու նպատակահարմարը:

Ցանկացած մեծածավալ ծրագրի իրականացման համաձայնությունն ու իրավունքը պետք է տա ժողովուրդը կամ, գոնե, նրա շահերն արտահայտող հիմնական քաղաքական ուժերը: Ըշմարտությունն այն է, որ առանց լայն զանգվածների աջակցության, ծրագրերի իրականացման գործընթացներին նրանց ակտիվ մասնակցության, ցանկացած, նույնիսկ ամենահիմնային ծրագրեր, իրականանալ չեն կարող: Ուստի հենց այդ խնդրի, այսինքն՝ ընդունված ծրագրերի և որոշումների իրականացման համաձայնություն ստանալու, իշխանության կառույցների և քաղաքական ուժերի գործունեությունը համակարգելու և եղած հնարավորությունները լավագույնս համախմբմանն էլ, հիմնականում, պետք է ուղղված լինի պետության, որպես քաղաքականության սուբյեկտի շանքերը:

Այսպիսով, պետական կառավարման քաղաքական ձեռքբերումը հիմնականում կապված է այնպիսի պայմանների ստեղծման հետ, որոնք թույլ կտային ընտրել հասարակության զարգացման այնպիսի ուղի, որի հետ համաձայն պետք է լինի հասարակության անդամների մեծ մասը, և որի իրականացմանը ակտիվորեն պետք է մասնակցի ժողովուրդը: Ասել է, թե պետա-

ան կառավարման իրականացման ժամանակ կարևոր է ոչ միայն այն, որ ընդունվեն ժողովրդի շահերն արտահայտող, հասարակության առաջընթացն ապահովող ծրագրեր, այլև այդ ծրագրերի իրականացմամբ ժողովրդի շտաբգրության ապահովում, առանց որի քաղաքական գործընթացներին, հատկապես պետական ծրագրերի և որոշումների իրականացմանը ժողովրդի ակտիվ մասնակցություն ակնկալել հնարավոր չէ: Հետևաբար, պետական կառավարման մեջ հիմնական քաղաքական խնդիրներից է դառնում իշխանության և ժողովրդի միջև այնպիսի փոխհարաբերությունների համաձայն ձևավորումը, որը կերաշխավորեր ժողովրդի շահագրգիռ մասնակցությունը պետական ծրագրերի իրականացման գործընթացների մեջ:

Քաղաքական մասնակցության կարևորագույն ձևերից է քաղաքական ընդդիմության գործունեությունը: Քաղաքական ընդդիմության կողմից կազմակերպված քաղաքական գործընթացները, հիմնականում, դրսևորման երևույթն են:

Դրանք կարող են իրականացվել օրինական, կամ ինչպես ընդունված է ասել, լեգալ գործունեության միջոցով, որի դեպքում քաղաքական ընդդիմությունը օգտվելով իր սահմանադրական իրավունքներից, օրենքի շրջանակներում պայքարում է իշխանության նվաճման, նրան մաս կազմելու կամ նրա գործունեության վրա ազդելու համար: Իր նպատակին հասնելու համար քաղաքական ընդդիմությունը ձեռնարկում է համապատասխան քաղաքական գործընթացներ (նախընտրական պայքար, միտինգներ, ցույցեր, գործադուլներ և քաղաքական բնույթի այլ կազմակերպված գործողություններ): Նշենք, որ այս սկզբունքով իրականացվող քաղաքական գործընթացները բնորոշ են ժողովրդավարական հասարակությանը: Այս պարագայում քաղաքական գործընթացները իրականացվում են մի շարք փուլերով: Դրանք սկսվում են հասարակության մեջ իշխանական կառույցներին հասցեագրված ներքինից եկող համապատասխան ազդակների, դժգոհությունների, բողոքներ ծագմամբ ու ձևավորմամբ: Քաղաքական ընդդիմությունը զանգվածային ճշգրտություններին կազմակերպված բնույթ տալու և դրանք իշխանությանը ներկայացնելու միտումով համակարգում և հիմնավորում է ժողովրդի առաջնաձև պահանջները և ձեռնարկում է միջոցառումներ այդ պահանջները իշխանություններին ներկայացնելու համար: Քաղաքական ուժերի կողմից ձեռնարկված քայլերը կարող են իրականացվել ինչպես զանգվածների անմիջական մասնակցությամբ, այնպես էլ առանց զանգվածային գործողությունների կիրառմամբ:

Եթե քաղաքական ուժերը ներկայացնում են իշխանությունը, կամ մաս են կազմում նրան (ազգային ժողով, կառավարություն), ապա ժողովրդի պահանջները նախ այդ կառույցների միջոցով է ներկայացվում իշխանություններին: Եթե իշխանությունները բավարարում են ժողովրդի պահանջները, ապա քաղաքական ընդդիմությունը իր համար լուծում է երկու կարևորագույն խնդիր: Դրանով, նախ, նա արժանանում է ժողովրդի վստահությանը և հարևոր նախադրյալներ է ստեղծում հաջորդ ընտրություններում հաղթելու

և ավելի մեծ կազմով իշխանության մաս կազմելու համար: Երկրորդ այդպիսի քայլերի իրականացմամբ քաղաքական ուժը դառնում է իշխանության գործունեության վրա ազդող իրական գործոն, ինչը հասարակության հետ տազա առաջընթացի կարևոր երաշխիքներից մեկն է Իսկ, եթե իշխանությունները չեն բավարարում ընդդիմության պահանջները, ապա, նա ձեռնարկում է գանգվածային քաղաքական գործողություններ, դրանց միջոցով փորձում է ազդել իշխանությունների վրա, ստիպելով նրան կատարելու ներկայացված պահանջները: Այս պարագայում քաղաքական գործընթացները զարգացումը կարող է հանգեցնել երկու հիմնական արդյունքի: Կամ արմատապես փոխվում է իշխանության գործունեության բնույթը, եթե իշխանությունները չեն գնում ժողովրդի և նրա շահերն արտահայտող քաղաքական ուժի հետ հակասությունների խորացման ճանապարհով և բավարարում են նրանց պահանջները: Կամ տեղի է ունենում իշխանափոխություն, որը սակայն, դեռևս չի նշանակում, որ նոր ձևավորված իշխանությունը անպայման ժողովրդի շահերի արտահայտիչն է լինելու:

Այստեղ, անշուշտ, մեծ դեր է խաղում հասարակության քաղաքական կյանքի ժողովրդավարացման աստիճանը, քաղաքացիական հասարակության կառույցների զարգացման մակարդակը, ժողովրդի քաղաքական գիտակցության և քաղաքական ակտիվության աստիճանը, քաղաքական ուժերի կազմակերպվածության աստիճանը, նրանց նպատակները, գործունեության ձևերն ու մեթոդները, ազգային շահերի գերակայության ընդունումը և այլն:

2. Քաղաքական գործընթացները կարող են կազմակերպվել և իրականացվել նաև անլեգալ, ընդհատակյա, տվյալ դեպքում հակասահմանադրական (օրենքով չնախատեսված և արգելված ձևերով): Այս պարագայում քաղաքական ձեռնարկումների հիմնական նպատակը իշխանության նվաճումն է և այդ ճանապարհով պետական կառուցվածքի, տնտեսական, քաղաքական և իրավական համակարգերի արմատական վերափոխումը: Քաղաքական գործընթացների այսպիսի դրսևորումը, սովորաբար, ուղեկցվում են ուժի գործադրմամբ, պարտադրանքի և բռնության կիրառմամբ, այլ կերպ ասած՝ հեղափոխության միջոցով: Այդպիսի դրսևորում ունեցող Քաղաքական գործընթացները կարող են ունենալ ինչպես առաջադիմական, այնպես էլ հետադիմական բնույթ: Եթե դրանք ուղղված են բռնապետության սկզբունքներով գործող, ժողովրդից օտարված և նրա շահերն անտեսող իշխանությունների տապալմանը, ապա, որքան էլ այն բռնի ու դաժան դրսևորում ունենա, այն առաջադիմական է: Իսկ, եթե այն ուղղված է ազգային շահերի գերակայությամբ, ժողովրդի մեծամասնության շահերը պաշտպանող, ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան քաղաքականության իրականացնող իշխանության տապալմանը, ապա, բնականաբար, դա հասարակության համար քայքայիչ, կործանարար և հետադիմական նշանակություն ունեցող քաղաքական գործընթաց է:

Այստեղ կարևոր նշանակություն ունի հասարակության զարգացման, հատկապես ժողովրդի քաղաքական գիտակցության աստիճանը՝ Սովորաբար, ներկայիս շահերի հետապնդող քաղաքական ուժերը իշխանությունը նվաճում են հենց ժողովրդի աջակցությամբ, օգտվելով նրա միամտությունից, անփորձությունից և քաղաքական տգիտությունից: Այդպես եղավ 1990 թվականին, երբ ՀՀԿ իր կեղծ հայրենասիրական քարոզներով և ամպագոռոտ խոստումներով կարողացավ խաբել ժողովրդին, ստանալ նրա աջակցությունը, նվաճել իշխանությունը և այն ամբողջապես ծառայեցնել իր խմբային շահերին, իշխանության լծակները դարձնելով ազգային հարստության թալանի և սեփական հարստության ստեղծման հիմնական միջոցներ:

Քաղաքական մասնակցության կարևորագույն ձևերից է նաև շարքային քաղաքացիների քաղաքական գործունեությունը: Քաղաքական գործընթացներին մարդիկ կարող են մասնակցել և որպես անհատներ, և որպես այս կամ այն կազմակերպության անդամ՝ Դա մեծապես կախված է անհատի քաղաքական արժեքային կողմնորոշումից:

Քաղաքական գործընթացներին մասնակցելիս, շարքային քաղաքացու վրա ազդում են այնպիսի սոցիալական, քաղաքական և հոգեբանական գործոններ, ինչպիսիք են անհատի սոցիալական կարգավիճակը և այդ կարգավիճակի շնորհիվ հասարակության քաղաքական կյանքում ազդեցություն ունենալու հնարավորությունը, այլ խմբերի և խավերի հետ նրա շահերի ներդաշնակության գիտակցման անհրաժեշտությանը, ակտիվության աստիճանն ու սահմանները և այլն:

Չարգացած ժողովրդավարական հասարակության փորձը ցույց է տալիս, որ հասարակության մեջ որքան մեծ է գանգվածների քաղաքական ակտիվությունը, որքան գիտակցված և ազատ է նա դրսևորում իր կամքը ընտրությունների ընթացքում, այնքան անհատի դերը հասարակության քաղաքական կյանքում նշանակալից ու ազդեցիկ է, իսկ դրսևորած գործունեությունն էլ արդյունավետ է, ինչի շնորհիվ մեծանում է հասարակության առաջընթացի հնարավորությունը:

Կարելի է առանձնացնել քաղաքական մասնակցության և քաղաքական վարքի դրսևորման անհատների հետևյալ տեսակները՝

- 1 քարձր քաղաքական ակտիվությամբ անհատ, որը մշտապես մասնակցում է քաղաքական կյանքին: Այդպիսից կարող են լինել ինչպես պաշտոն ու դեր ունեցող և մասնագիտորեն քաղաքականությամբ զբաղվող անձեր, այնպես էլ քաղաքական հաստատություններում կամ կազմակերպություններում որևէ դեր չխաղացող անհատներ,
- 2 անհատներ, որոնք առիթից-առիթ են մասնակցում քաղաքական գործընթացներին, ասենք՝ ընտրություններին, առանձին քաղաքական միջոցառումներին և այլն,
- 3 անհատ, որը հետաքրքրվում է քաղաքականությամբ, սակայն ինքը գործնականում չի մասնակցում քաղաքական գործընթացներին,

4. պատիվ անհատ, որը չեզոք կամ բացասական վերաբերմունք ունի քաղաքականության նկատմամբ,
5. ապաքաղաքականացված և քաղաքական կյանքից օտարված անհատ, որը բացասական վերաբերմունք ունի քաղաքականությանը իր մասնակցության նկատմամբ:

Չարգացած ժողովրդավարության պայմաններում, ելնելով այն ճշմարտությունից, որ հասարակության զարգացման կարևորագույն երաշխիքներից մեկը զանգվածների ակտիվ մասնակցությունն է հասարակության քաղաքական կյանքին, մշակվում են քաղաքական կյանքին մասնակցության բազմապիսի ձևեր, մեթոդներ ու միջոցներ, որոնք թույլ են տալիս քաղաքացիների առավել լայն շրջանակների ընդգրկել հասարակության քաղաքական կյանքում ընթացող քաղաքական գործընթացների մեջ և պայմաններ ստեղծել ավելի ազատ ու անկաշկանդ դրսևորել նրանց քաղաքական հայացքներն ու գործունեությունը:

Նշենք նաև, որ ժողովրդավարության զարգացման տարբեր աստիճաններում քաղաքական մասնակցության հնարավորությունները նույնպես տարբեր են: Կարելի է վստահ ասել որքան ժողովրդավարական է հասարակությունը, այնքան քաղաքական մասնակցության բազմապիսի ձևեր ու հնարավորություններ են առկա:

Ժողովրդավարության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ անհատների և նրանց տարբեր հանրությունների քաղաքական մասնակցությունը տեղի է ունենում կամավոր սկզբունքով, ինչը մեծամասամբ պայմանավորված է անհատների քաղաքական գիտակցության բարձր մակարդակով:

Յետազոտությունները ցույց են տալիս, որ մարդկանց քաղաքական գործընթացներին ակտիվ մասնակցությունը պայմանավորված է նաև այնպիսի գործոններով, ինչպիսիք են սեռը, հասակը, կյանքական բարեկեցությունը, ազատ ժամանակը, կրթությունը և այլն: Օրինակ՝ առավել ակտիվություն են դրսևորում տղամարդիկ, հատկապես 35-55 տարիք ունեցողները: Երիտասարդությունը առանձնանում է քաղաքական մասնակցության արդյունավետ և անսպասելի գործընթացում:

Հասարակության զարգացման արդի աստիճանում նկատվում է նաև այն տեղեկեցը, որ առավել զարգացած երկրներում քաղաքական գործընթացներին զանգվածների մասնակցությունը աստիճանաբար նվազում է: Այդ երկրներում քաղաքացիների մեծ մասը առաքաղաքականացված է և ակտիվություն է դրսևորում միայն ընտրությունների ընթացքում: Այս պարագայում քաղաքացիների նման պասիվությունը ավելի շատ իշխանությունների կայուն գործունեության և երկրի քաղաքական կայունության արդյունք է, ինչը պետք է դիտվի, որպես տվյալ հասարակության դրական նախնուհի:

Չանգվածների քաղաքական մասնակցության զգալի աճ է նկատվում անցումային փուլում գտնվող երկրներում, առավել ևս, երբ նրանցում քաղաքական ճգնաժամերն ու առճակատումները դառնում են անխուսափելի: Դալ հիմնականում տեղի է ունենում ավտորիտար կամ տոտալիտար ռեժիմներից:

ժողովրդավարական ռեժիմին անցնելու ժամանակ: Այս դեպքում առավել ակտիվ են սկսում գործել քաղաքական կուսակցությունները, որոնց քանակը, սովորաբար, անցման շրջանում բավականին շատ է լինում:

5. Քաղաքական գործընթացների իրականացման փուլերը: Քաղաքական տեխնոլոգիաների կիրառումը:

Յուրաքանչյուր քաղաքական գործընթաց ինչ որ չափով, թեկուզ և մասնակիորեն և աննշան փոխում է գոյություն ունեցող քաղաքական հարաբերությունների ինչ որ կողմը, բնույթը, դրսևորման ձևերը, իսկ վերջին հաշվով նաև նրա ամբողջական պատկերը: Ասկայն հասարակության մասշտաբով այդ փոփոխությունները նկատելի են դառնում միայն այն ժամանակ, երբ դրանք կուտակվելով առաջացնում են քաղաքական համակարգի որակական փոփոխություններ: Իսկ քանի դեռ դա տեղի չի ունեցել, քաղաքական համակարգը գտնվում է իր հարաբերական կայուն վիճակում և գործառնում է սովորականի պես: Այս դեպքում քաղաքական համակարգի համար բնորոշ է քաղաքական ինստիտուտների կայուն բնույթը, չնայած այս դեպքում նույնպես ինարավոր են կառավարման համակարգում ինչ որ փոփոխություններ: Այսպիսի իրավիճակը ընդունված է անվանել քաղաքական համակարգի պարզ վերարտադրության փուլ:

Քաղաքական գործընթացների գործառնության առանձնահատկություններից մեկը նրա ցիկլայնությունն է, այսինքն որոշակի ժամանակահատվածում միևնույն քաղաքական գործընթացի պարբերաբար իրականացումը, օրինակ՝ 4-5 տարին մեկ անգամ ընտրությունների իրականացումը:

Քաղաքական գործընթացների ցիկլերի ներսում կարելի է առանձնացնել մի քանի փուլեր, որոնցում իրականացվում են քաղաքականության հիմնական ֆունկցիաները: Դրանց երբեմն անվանում են քաղաքականության գործընթացային ֆունկցիաներ: Այդ գործընթացային ֆունկցիաների իրականացման փուլերից էլ ձևավորվում է ամբողջական քաղաքական գործընթացը:

Նշենք, որ այդ փուլերից յուրաքանչյուրը իրեն բնորոշ խնդիրներն ունի, որոնց ռեթական իրականացման միջոցով է միայն ինարավոր իրականացնել քաղաքական գործընթացների ամբողջական ցիկլը: Կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական փուլերը:

Առաջին փուլում տեղի է ունենում տարբեր սոցիալական խմբերի շահերի համակարգում: Դրանք հիմնականում այն խմբերն են, որոնք գիտակցել են, որ առանց իշխանության վրա համատեղ ազդելու իրենց առջև դրված խնդիրները լուծել չեն կարող: Այդ շահերի ձևակերպումն ու պաշտպանությունը իրենց վրա են վերցնում բազմաթիվ հասարակական կազմակերպություններ ու միություններ (արհմիություններ, ձեռներեցների միավորումներ, սպառողների միություններ և այլն):

Երկրորդ փուլը բնորոշվում է այդ շահերի ամփափուման, հաստատման գործընթացով, որի մեջ սկսում են ներառվել կամ հաշվառվել նաև փոքր խմբերի և առանձին անհատների շահերը և տեղը է ունենում քաղաքական շահերի ընդհանրացում, այսինքն, ի մի են բերվում բոլոր շահերը, դրանցից ձևակերպում են բոլորի համար ընդունելի պահանջներ ղեկը հնարավորություն է տալիս համատեղ գործողություններով հասնել լռեց անոջ դրված խնդիրների իրականացմանը, կամ գոնե համատեղ պաշար ծավալել իրենց նպատակներին հասնելու համար: Այդ շահերի պաշտպանության և այդ պայքարի կազմակերպման դերում հանդես են գալիս արդեն խոշոր քաղաքական կուսակցությունները, միավորումները, շարժումները և այլն:

Քաղաքական գործընթացների երրորդ փուլում համաձայնություն է ձեռք բերվում նմանատիպ շահեր ունեցող հիմնական շահառու ռուծերի միջև և տեղի է ունենում որոշակի քաղաքական գծի մշակում, որը գլխավորապես, իշխանության ներկայացուցչական մարմնի գործունեության արդյունք է, չնայած քիչ չեն դեպքերը, երբ մշակված քաղաքականության ուղղվածությունն ու իրականացման հնարավորությունը կախված է միայն գործադիր իշխանությունից (Հայաստան, Ռուսաստան):

Քաղաքական գործընթացի ցիկլի չորրորդ փուլի ռեզիլն է ընդունված կոլեկտիվ քաղաքական որոշումների իրականացումը, տեսականից գործնական իրականացման փուլին անցնելը: Այլ կերպ ասած, իշխանության մարմինները կոնկրետ գործունեություն են ծավալում տնտեսական ռեսուրսների միավորման, բյուջեի կայացման և նման համապետական խնդիրների իրականացման ուղղությամբ: Այս գործունեությունն արդեն երրորդ իշխանության մենաշնորհն է, սակայն որի գործողությունների վրա հսկելու իրավունք ունի օրենսդրական իշխանությունը: Գործնականում աշխարհի հսկողության իրականացումը կախված է լինում քաղաքական ուժերի հարաբերակցությունից, և այն բանից, թե նրանցից ով է հսկում պետական իշխանության գլխավոր ճյուղի՝ կառավարության գործունեության վրա:

Ինքնին հասկանալի է, որ քաղաքական ցիկլերի և նրանց տարբեր փուլերի աշխարհի մեկնաբանությունը բնորոշ է միայն որոշակի գայուն քաղաքական համակարգ ունեցող հասարակությանը, այն էլ՝ երկրորդ կարգի կառավարության պայմաններում:

Քաղաքական գործընթացները իրականացվում են որոշակի մեթոդների, միջոցների, եղանակների, հնարքների կիրառման միջոցով՝ որոնց ամբողջությունը քաղաքագիտության մեջ անվանվում է քաղաքական տեխնոլոգիա: Առավել ուսումնասիրված և հաճախակի օգտագործվող տեխնոլոգիաներից են.

1. Ընտրական տեխնոլոգիա, որի տակ հասկացվում է բոլոր այն կազմակերպական, քարոզչական, տեղեկատվական և այլն ձեռնարկումների ամբողջությունը, որոնք պետք է օգնեն քաղաքական կուսակցությանը կամ անհատ թեկնածուին հաղթելու ընտրություններում: Այն սկսում է ընտրական կոմ-

պանիայի կազմակերպիչների «շտաբի» թիմի ձևավորմամբ: Թիմի կառուցվածքում, որպես կանոն, լինում է երեք մակարդակի ղեկավարություն՝ ա) կազմակերպչական միջուկ, որը կազմված է ուղղորդող ղեկավարներրց, ֆինանսական տնօրեններից և գործակալներից, վստահված անձերից, մամուլի քարտուղարից, տեխնիկական ծառայության պետերից (անվտանգություն, տրանսպորտ և այլն), բ) նեղ մասնագետներից, որոնք աշխատում են որոշակի ուղղությամբ (վերլուծաբաններ, հեղինակություն (իմիջ) ստեղծողներ, լրատվամիջոցների հետ կապ հաստատողներ, իրավաբաններ և այլն), գ) թեկնածուի կամ կուսակցության օգտին ստորագրություն հավաքողներ, պլակատ կապնողներ, քարոզչական թերթիկներ տարածողներ և այլն: Թիմի մեծ մասը աշխատում է վարձատրությամբ, կան նաև կամավոր սկզբունքով աշխատող ակտիվիստներ:

Թիմի «ուղեղային» կենտրոնը մշակում է նաև ընտրական պայքարի ընդհանուր ռազմավարությունը հենվելով իր ունեցած ռեսուրսների վրա (ֆինանսական, կազմակերպչական, ղեկավար-տեղեկատվական և այլն), որոնցից կարևորագույնը մեր ժամանակներում ֆինանսական ռեսուրսներն են, որոնք ձևավորվում են պետության հատկացված միջոցներից, կազմակերպությունների և անհատների կամավոր նվիրատվություններից և այլն: Իհարկե, լինում են դեպքեր, երբ վճռական դեր են խաղում մյուս ռեսուրսները, ասենք ժողովրդի մոտ ունեցած բարձր հեղինակությունը, կազմակերպչական բարձր մակարդակ ունեցող, տարածված և համակարգված կառույցներ ունեցող կուսակցությունները, որոնց համար ֆինանսական և այլ տիպի ռեսուրսները այս դեպքում կարող են երկրորդական դեր խաղալ: Վճռական դեր կարող է խաղալ նաև այնպիսի հանգամանքը, ինչպիսին է վարչական կառույցների դերը, այսպես ասած իշխանական ռեսուրսները, որոնք, չնայած օրենքով իրավունք չունեն միջամտելու նախընտրական պայքարին և ազդելու ընտրությունների արդյունքների վրա, սակայն, գործնականում այդ միջամտությունն ու ազդեցությունը անխուսափելի է, առավել ևս, երբ թեկնածուն բարձր պաշտոնյա է և ընդունելի է տեղական մարմինների համար: Բանն այն է, որ նախընտրական պայքարի ընթացքում բարձր պաշտոնյաները իրենց աշխատանքային գործունեության շրջանակներում բազում հանդիպումներ և ուղևորություններ են ունենում, և այս պարագայում դժվար է առանձնացնել նրա աշխատանքային պարտականությունների կատարումը քարոզարշավից, ինչն էլ նրանց որոշակի արտոնյալ պայմանների մեջ է դնում:

Հաշվարկելով իրենց բոլոր ռեսուրսները ընտրական գործընթացների մեջ ակտիվորեն ներառվում են արդեն վերլուծաբաններն ու կանխատեսողները, որոնց խնդիրն է ուսումնասիրել ընտրական տեղամասերի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրադրությունը, որոշելու ընտրողների քաղաքական տրամադրություններն ու սպասելիքները, առօրյա հոգսերը և այլն, որոնց իմացությունն ու շահարկումը կարող է օգտագործվել թեկնածուի հեղինակությունը բարձրացնելու համար, նրան ներկայացնելով որպես ընտրողներ-

րին հետաքրքրող հիմնախնդիրներին ծանոթ և դրանց լուծման համար պայքարող անհատի: Գործի են դրվում նաև հասարակական կարծիքի ուսումնասիրման մասնագետները, նպատակ ունենալով ոչ միայն հետևելու թեկնածուների նախընտրական վարկանիշին, այլև որոշակի չափով ձևավորելու իրենց թեկնածուի վարկանիշը. տարբեր լրատվամիջոցներով հասարակական կարծիքը ի օգուտ իրենց թեկնածուի ներկայացնելով, ինչը սովորաբար պատվերով կատարված հարցումների արդյունք է և չի համապատասխանում իրականությանը:

Կատարած վերլուծությունների հիման վրա արդեն վերջնականապես ձևավորվում են նախընտրական պայքարի հիմնական ծրագրային դրույթներն ու կոչերը, մշակվում են ընտրողների հետ աշխատանք տանելու գործողությունների որոշակի պլան, ճշգրտվում են հանդիպումների ժամանակացույցը, նախապատրաստում են ՉԼՄ-ներում հրապարակվող հոդվածներ, քարոզչական նյութերի տարածում, բարեգործական ձեռնարկումներ և այլն:

Ընտրողների մոտ թեկնածուի քաղաքական վարկանիշը ձևավորելու և բարձրացնելու գործում հաշվի է առնվում այն հանգամանքը, որ շատ հաճախ քվեարկելիս ընտրողները կողմնորոշվում են ոչ թե բանականությամբ, կամ թեկնածուի առաջադրած ծրագրերի պաշտպանությամբ, այլ զգացմունքներով: Այս առանձնահատկությունները հաշվի առնելով էլ շատ թեկնածուներ խաղում են ընտրողների հոգեբանության վրա, գիտակցաբար ընտրողներին են ներկայանում այն տեսքով, այնպիսի հարցեր են շոշափում և այնպիսի խոստումներ են տալիս, որ կարողանան ազդել նրանց հոգեբանության վրա:

Վարկանիշը դատարկ տեղում առաջանալ չի կարող: Թեկնածուն պետք է որ օբյեկտիվորեն որոշակի դրական հատկանիշները կրող լինի, որոնք ընտրողներին են ներկայացվում ՉԼՄ-ների միջոցով, իհարկե, այդ դրական հատկանիշը և ուռճացնելով և դրանց վրա այլը գումարելով:

Հասարակական կարծիքը դրական վերաբերմունք ունի քաղաքական գործիչների այնպիսի հատկանիշների նկատմամբ, ինչպիսիք են մասնագիտական ունակությունը, սկզբունքայնությունը, արդարամտությունը, հայրենասիրությունը, վճռականությունը, կազմակերպչական ընդունակությունը և այլն: Հաշվի առնելով գանգվածների մոտեցումներում նման հատկանիշներին առավելություն տալը, թեկնածուի վարկանիշի բարձրացման համար օգտագործվում են այնպիսի գնահատականներ, ինչպիսիք են «ուժեղ դեկավար», «լավ տևտեսավար», «արդարամիտ», «հայրենասեր», «իր գործի լավագույն գիտակ», «ժողովրդական», «մարդամոտ և ընկերասեր» և այլն հասարակության համը ընդունելի գնահատականներ: Բարձր վարկանիշ ունեցող թեկնածուի համար ընտրական գործընթացում նման գնահատականները լավագույն ռեսուրսներից են համարվում:

Արդի հասարակությունում քաղաքական տեխնալոգիաների մեջ կարևորագույն դեր է խաղում լոբբիզմը: Քաղաքական բառապաշարում լոբբիզմի տակ հասկացվում է իշխանության կառույցների վրա դրսից կազմակերպ-

ված ձևով ազդելու յուրահատուկ մեխանիզմ, որի նպատակն է ընդունել տալ այս կամ այն սոցիալական կամ էթնիկական խմբերի ու հանրույթների շահերն արտահայտող օրենսդրական նախագծեր և քաղաքական որոշումներ:

Լինելով իշխանության մարմինների գործունեության վրա դրսից միջամտելու և ազդելու միջոց, սկզբնական շրջանում լոբբիզմը ընկալվել է որպես միայն սովորապես, անդրկուլիսյան քաղաքական գործընթաց և դիտվել է որպես կորուպցիայի դրսևորման ձև: Ինքնին հասկանալի է, որ այսպիսի ըմբռնման պարագայում պետք է փորձ արվեր այն արգելել: Սակայն գիտակցելով, որ ինչպիսին էլ լինի լոբբիզմի ձևերը, միևնույն է օրենսդրական և գործադիր իշխանությունների վրա այս կամ այն հզոր ուժերի, կազմակերպչած խմբերի կողմից ճնշումը, միջամտությունն ու ազդեցությունը չի վերանայու, որ միշտ էլ իշխանության մարմիններում այդ խմբերը ունենալու են իրենց համակիրները, ներկայացուցիչները, կամ նրանցից այս կամ այն չափով ուղղակի կախյալ անհատ-պաշտոնյաներ, մի շարք երկրներում (ԱՄՆ, Չեռնոսևիա, և այլն) լոբբիզմը օրինականացվեց, այն համարելով քաղաքական գործունեության օրինական ձևերից մեկը, այդ մասին ընդունելով հատուկ օրենքներ: Իսկ այն երկրներում, որտեղ լոբբիզմը պաշտոնապես դեմաքս չի օրինականացվել, չի էլ արգելվում և լուելայն հանդուրժվում է, որպես քաղաքական գործունեության ձև, անշուշտ որոշակի վերապահումներով:

Լոբբիստները, որպես տարբեր շահերով խմբերի ներկայացուցիչներ, իշխանության մեջ եղած իրենց ներկայացուցիչների կամ համախոհների միջոցով ձգտում են իրականացնել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներ (օր. հայկական կամ հրեական լոբբին տարբեր երկրներում): Լոբբիստական գործունեության ընթացքում օգտագործվում են բոլոր այն քաղաքական ռեսուրսները, ինչը կարող է նպաստել նրանց առջև դրված խնդրի իրականացմանը: Առանձին աշխատանք է տարվում իշխանության յուրաքանչյուր անդամի հետ, նրանց ենթարկելով, այսպես ասած «մշակման», օգտագործելով տրամաբանական փաստարկներ, համոզելու մեթոդներ, տարբեր ֆոնդերի ֆրանսսական միջոցներից նրանց ֆինանսավորելը, ընտրությունների ընթացքում նրանց աջակցելու խոստումներ տալը, իսկ երբեմն էլ շանտաժն ու ահաբեկումը:

Ներքին քաղաքականության ոլորտում լոբբիստների հիմնական խնդիրը իրենց ձեռնտու մարդկանց օրենսդրական և գործադիր մարմիններում բարձր պաշտոնների նշանակելն է և նրանց միջոցով իրենց շահերը պաշտպանող օրենքների և որոշումների ընդունումը: Այդ խնդրի իրականացումը ուղեկցվում է գանգվածային լրատվամիջոցներով հասարակական կարծիքի վրա ազդելով հող նախապատրաստել իրենց ներկայացուցչի առաջ քաշման կամ նշանակման համար: Իսկ հաճախ անդամակցում են տարբեր ազդեցիկ քաղաքական կուսակցությունների կամ դառնում են նրա համար հովանավոր, աջակցում են նրանց ընտրությունների ընթացքում, օգնում են նրանց իշխանությունը նվաճելու կամ ազդեցիկ մաս կազմելու իշխանությանը և

Նրա միջոցով լուծելու իրենց առջև դրված խնդիրները՝ Ակտիվորեն մասնակցում են նշանակալից քաղաքական միջոցառումներին, ձգտելով նրանում տեսանելի դերակատարություն ունենալ: Այդպիսի գործունեության շնորհիվ լոբբիստներին հաջողվում է իրենց անդամների կամ համախոհների համար բարձր վարկանիշ ապահովել, հաջողության հասնել ընտրություններում և իրենց ներկայացուցիչներին ունենալ իշխանության մարմիններում:

Լոբբիզմը այսօր դիտվում է որպես ժողովրդավարական քաղաքական համակարգի կարևոր տարր, որը հնարավորություն է տալիս տարբեր սոցիալական խմբերի շահերը քաղաքակիրթ ձևով պաշտպանել, մի տեսակ կապ հաստատելով որոշակի շահերով խմբերի և պետական կառույցների միջև:

Քաղաքական գործընթացներում քաղաքական տեխնոլոգիայի կիրառումը հնարավոր է քաղաքական համակարգի որոշակի կայուն գործունեության պայմաններում: Կայունություն ասելով չպետք է հասկանալ բացարձակ անփոփոխություն:

Այստեղ խոսքը վերաբերում է նրան, որ քաղաքական տեխնոլոգիաների մշակումն ու կիրառումը ենթադրում է կանխատեսելի և կրկնվող քաղաքական գործընթացների անհրաժեշտություն, քանզի անիմաստ կլիներ նախապես մշակել քաղաքական գործունեության ծրագրեր ու սկզբունքներ, չիմաստալից թե ապագայում ինչպիսի քաղաքական իրադրություն, տեղաշարժեր ու զարգացումներ են լինելու: Նշենք, որ կայունությունը երբեք բացարձակ չի լինում, այլ միշտ հարաբերական է, քանզի քաղաքական գործընթացներն ուղղված են հասարակական կյանքի, իսկ առաջին հերթին քաղաքական կյանքի այս կամ այն չափով փոփոխմանը-փոխվում է կառավարության, խորհրդարանի կազմը, առաջանում են նոր շահերով խմբեր, փոփոխվում է իշխանության գործունեության սկզբունքը և այլն: Սակայն այս բոլորը տեղի է ունենում դեռևս գործառնող քաղաքական համակարգի ներսում, ինչն էլ թույլ է տալիս այն բնորոշել որպես կայուն գործառնող քաղաքական համակարգ:

Քաղաքական կայունությունը հասարակության քաղաքական կյանքի այնպիսի վիճակ է, երբ հասարակության մեջ եղած բոլոր քաղաքական ինստիտուտները նորմալ գործառնում են, ապահոված են իրավական, քաղաքական և բարոյական նորմերի, ինչպես նաև հասարակության կարևորագույն ավանդույթների գործառնության ինստիտուտները, որպես հասարակական կյանքի կազմակերպման անհրաժեշտ քաղաքացիներ: Քաղաքական կայունության պայմաններում հնարավոր է լինում խաղաղ ճանապարհով լուծել կոնֆլիկտային իրադրությունները, մեծանում է հասարակական համաձայնության հնարավորությունը և այլն: Իսկ այս ամբողջը թույլ է տալիս տվյալ հասարակական համակարգին արդյունավետ գործառնելու և զարգանալու, պահպանելով իր կառուցվածքային և որակական որոշակիությունը: Քաղաքական կայունության պայմաններում տարբեր քաղաքական սուբյեկտների միջև առկա է հաստատուն կապերի համակարգ, որի շնորհիվ

տարբեր սոցիալական և քաղաքական ուժերի միջև որոշակի համաձայնություն է ձեռք բերվում հասարակության զարգացման ուղղության, նպատակները և մեթոդների շուրջ:

Քաղաքական կայունությունը կարող է բնորոշ լինել ցանկացած քաղաքական ռեժիմին: Քաղաքական կայունություն կարող է հաստատվել և բուկոնության ճանապարհով և ժողովրդավարության զարգացման, նրա սկզբունքների կիրառման ճանապարհով, ինչը կախված է տվյալ հասարակության մեջ գործող քաղաքական համակարգի բնույթից: Բռնության ճանապարհով հաստատված կայունությունը հենվում է վախի, ճնշման, հալածանքի, սահմանափակումների վրա, և ինչպես ցույց է տալիս պատմությունը, հաստատուն և հարատև չի լինում, քանզի այն միայն ժամանակավոր հաջողություն է ապահովում որոշ քաղաքական ուժերի համար: Այդպիսի կայունությունը հասարակությանն է պարտադրվում իշխող վերնախավի կողմից հիմնականում ընդդիմության բացակայության և ժողովրդին քաղաքական կյանքից մեկուսացնելու պայմաններում: Քաղաքական կայունությունը կարելի է տարբերակել ըստ դրսևորման ձևերի, մասշտաբների, տևողության և այլն, ինչը հիմնականում կախված է քաղաքական կյանքում ներառված քաղաքական սուբյեկտների բնույթից: Տարբերակվում են նաև ներքաղաքական, կրոնական և միջազգային քաղաքական կայունության ձևեր:

Քաղաքական կայունության հիմնական երաշխիքները, պայմաններն ու գործոններն են.

- քաղաքական համակարգի արդյունավետ գործունեությունը նրա բոլոր ենթահամակարգերով հանդերձ, հասարակության զարգացման և առաջընթացի հետ առնչվող կենսական խնդիրների լուծման հաջողությունները,
- հասարակության զարգացման հիմնախնդիրների շուրջ առաջատար սոցիալական խմբերի և նրանց շահերն արտահայտող քաղաքական կազմակերպությունների փոխհամաձայնությունը
- իշխանությունների գործունեության նկատմամբ քաղաքացիների վստահությունը,
- քաղաքական ռեժիմի և իշխանության գործունեության արդյունավետությունն ու օրինականությունը,
- տվյալ հասարակության բնական գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովող իրավական համակարգի առկայությունը, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, կենտրոնական և տեղական իշխանությունների միջև լիազորությունների հավասարակշռված բաժանումը, տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործումը,
- հասարակության մեջ ծայրահեղ բևեռացման բացակայությունը,
- հասարակության մեջ չկան սուր սոցիալական, ազգային-էթնիկական և կրոնական հակասություններ.

- իշխանության կառույցների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների ու շարժումների ղեկավարների միջազգային փորձը օգտագործելու ընդունակությունը, միջազգային և կրոնական կայունացնող գործոնների օգտագործումը ազգային հարաբերությունների զարգացման, սոցիալական առաջընթացի և հասարակության քաղաքական կայունացման համար:

Քաղաքական կայունությունը միշտ ժամանակավոր բնույթ ունի և կախված է տվյալ հասարակության քաղաքական համակարգի արդյունավետ գործառնելու ժամանակամիջոցից։ Հայտնի է, որ հասարակական կյանքն անընդհատ զարգանում է և գոյություն ունեցող համակարգը միշտ էի, որ հասցնում է համապատասխանորեն փոխվել և բավարարել հասարակության զարգացման պահանջները, ինչի հետևանքով քաղաքական համակարգը թուլանում է՝ պատճառ դառնալով հասարակության քաղաքական կյանքի ապակայունացմանը:

Ապակայունացնող գործոնները չթվարկելով, ասենք, որ դրանք հիմնականում վերը նշված կայունացնող երաշխիքների, պայմանների և գործոնների բացակայության հետևանք են. գումարած նաև այնպիսի երևույթները, ինչպիսիք են ձգձգվող ճկնածամերը, հանցագործության բարձր մակարդակը և այլն:

Գրականություն

1. Баков В.І. Межнациональные противоречия и конфликты. Социально-политический журнал. 1994, №7-8
2. Бердяев Н.А. Царство духа и царство кесеря. М. 1994
3. Ирхин Ю.В., Зютов В.Д., Зютова Л.В. Политология. М. 1999
4. Лебедева М.М. Политическое урегулирование конфликтов. М. 1997
5. Основы конфликтологии. М. 1997
6. Политология. Курс лекций. Под ред. А.А.Радугина. М. 1999
7. Политология. Учебник. Под ред. В.П. Лавренко. М. 1999
8. Парария А.С. Политология. Учебник. М. 1999
9. Скапи Дж. Конфликты. Пути их преодоления. Киев. 1991
10. Семягин Г.Ю. Политическая стабильность общества. М. 1997
11. Сперанский В.И. Основные виды конфликтов: проблемы классификации. Социально-политический журнал. 1995, №7
12. Технологии и организация выборных компаний. М. 1993
13. Հարությունյան Է Ա Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ Եր 2000

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ **Ազգեր և ազգային քաղաքականություն** **1. Ազգերի ծագումն ու ըմբռնումը**

Ի՞նչ է ազգը, ի՞նչ ենք հասկանում ազգ ասելով, ի՞նչով է պայմանավորված, ազգիերի գոյություն ունեցալու այսչափ բազմազան ըմբռնումները, բնորոշումներն ու սահմանումները

Ինչպես հասարակական գիտությունների, հատկապես փիլիսոփայության և քաղաքագիտության տեսական ուսումնասիրությունների առումով, այնպես էլ գործնականում իրագործվող միջազգային քաղաքականության մեջ, արդյունաբերական ժամանակաշրջանի ամենաբարդ ու հակասական, ինչ որ տեղ նույնիսկ անլուծելի թվացող, սոցիալ-քաղաքական պրոբլեմաներից մեկը ազգային հարցն է:

Գիտական գրականության մեջ, ու նաև միջազգային փոխհարաբերություններում, "ազգի" ըմբռնման ամենատարբեր մոտեցումներ են առկա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամենատարբեր բնորոշումների հիմքում շատ հաճախ ընկած են կամ ազգային մտածելակերպով հետազոտողների սուբյեկտիվ մոտեցումներն ու գեահատականները (կենսաբանական ծագման, արյան ընդհանրության, կրոնական հատկանիշները և այլն), եամ հետազոտողի կողմից դասակարգային, գաղափարախոսական սկզբունքներով մոտեցումների գերակայության ընդունումը (բուրժուական ազգ, սոցիալիստական ազգ և այլն), կամ վերազգային, ապազգային արժեքներով եղմորոշվող մոտեցումները (կոսմոպոլիտիզմ, աշխարհաքաղաքացի, քաղաքական ազգեր և այլն):

Ազգերի տարբեր ըմբռնումներն ու բնորոշումները արդյունք են նաև առևտմական տարբեր ժամանակաշրջաններում, հետևաբար նաև հասարակության զարգացման տարբեր աստիճաններում ազգերի ձևավորման այնպիսի առանձնահատկությունների, ինչպիսիք են քոչվոր ցեղերի նպատակաշար կյանքի անցելը, ինչը ուղեկցվել է տարածքների նվաճումով և տեղաբնակներին ոչնչացնելով կամ բռնի ձուլումով (օրինակ՝ թուրքերը, թաթարները, եվրոպական ազգերը ամերիկյան մայրցամաքում և այլն):

Տարբեր ըմբռնումները կարող են արդյունք լինել նաև համաշխարհային գաղութատիրության փլուզման, օրի հետևանքով շատ ազգություններ, էթնիկական խմբեր, ժողովուրդներ ազգային ազատագրական պայքարի շնորհիվ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և հզոր պետությունների օժանդակությամբ ձեռք բերեցին ինքնուրույն զարգացման հնարավորություն և ձևավորվեցին կամ ձևավորման պրոցեսում են գտնվում որպես ազգեր:

Կարելի է խոսել ազգերի առաջացման երկու հիմնական սկզբունքների մասին.

Ազգեր, որոնք ձևավորվել են իրենց բնորաններում՝ իրենց պատմական տարածքներում, (եգիպտացիներ, չինացիներ, հնդիկներ, հույներ, հայեր և

այլն) և ազգեր, որոնք ձևավորվել են կամ այսօր էլ գտնվում են ձևավորման պրոցեսում, ոչ իրենց պատմական տարածքներում, այլ ժողովուրդների տարածքները գրավելով ու սեփականացնելով, (օրինակ՝ թուրքերը, թաթարական ցեղերը, ամերիկացիները, կանադացիները, լատինաամերիկյան պետությունները և այլն)։ Ձևավորման այս երկու տարբեր փուլերով անցած ազգերի մոտ առաջացել են մի շարք տարբերակիչ առանձնահատկություններ, որոնք իրենց կնիքն են դրել ազգերի մտածելակերպի, հոգեբանության մշակույթի, ավանդույթների, սովորույթների վրա։

Իրենց պատմական տարածքներում ազգերի ձևավորումը տեղի է ունեցել երկարատև հազարամյակների ընթացքում մարդկային հասարակության ձևավորման և սոցիալիզացիայի պրոցեսին զուգընթաց։

Սոցիալիզացիայի ցածր աստիճանում գտնվող նախնադարյան մարդկային հոտը հասարակության հետագա զարգացման հետևանքով (աշխատանքի, աշխատանքային գործիքների, երկրագործության, մասնավոր սեփականության առաջացման ու զարգացման շնորհիվ), սկսվում է քայքայվել և հոտի համատեղ ապրելու անհրաժեշտությունը փոխարկվում է ավելի փոքր, արյունակցական կապերով միավորված մարդկանց խմբերով ապրելու անհրաժեշտությամբ։ Այսպես առաջացել է մարդկային հասարակության որակապես նոր՝ տոհմատիրական հասարակարգ, որի բնորոշ գիծը արյան ընդհանրությամբ և արյունակցական կապերով միավորված մարդկանց էթնիկական խմբերի համատեղ կեցությունն է։ Ասել է թե, ազգերի առաջացմանը նախորդել է քայքայվող նախնադարի ներսում տոհմերի, ցեղերի, էթնիկական խմբերի ձևավորման պրոցեսը, ինչն էլ հետագա զարգացման ընթացքում անհրաժեշտություն է առաջացրել մարդկանց հանրույթներին առանձնանալու և առանձին ապրելու։ Տոհմերի, ցեղերի, էթնիկական հանրույթների համատեղ և երկարատև ապրելու պրոցեսում էլ աստիճանաբար ձևավորվում են այն հիմնական հատկանիշները, որոնք բնորոշ են ազգին (ընդհանուր տարածք, ընդհանուր լեզու, ընդհանուր համակեցության նորմեր և այլն)։

Ազգերի ձևավորման ընթացքում ամենակարևոր և հիմնական գործոնը տարածքն է։ Առանց սեփական տարածքի ազգ լինել չի կարող։ Այն փաստը, որ տարբեր ազգեր պատմության տարբեր փուլերում են առաջացել և այսօր էլ դեռ շատերը գտնվում են ձևավորման պրոցեսում, հուշում է այն մասին որ այն էթնիկական խմբերը, ժողովուրդները, որոնք ի սկզբանե նստակյաց կյանքով ապրել են իրենց պատմական տարածքների վրա, ազգի ձևավորման նպաստավոր պայմաններն ու հնարավորությունները ավելի վաղ են ծագել։ Իսկ այն ժողովուրդները որոնք վարել են ջուր, թափառական կյանք, որպես ազգ են ձևավորվել սկսած այն ժամանակից, երբ նվաճել ու սեփականացրել են տարածքներ ու անցել են նստակյաց կյանքի (օրինակ՝ թուրքական, թաթարական ցեղերը)։

Ազգերի ձևավորումը տեղի է ունեցել տոհմերի ու ցեղերի, էթնիկական խմբերի ու ժողովուրդների մերձեցման, միավորման ու ձուլման միջոցով,

ինչը հանգամանքների բերումով կարող է տեղի ունեցած լինել և կամավոր միավորման ու համատեղ կյանք վարելու միջոցով, և բռնի նվաճման ու ոչնչացման ճանապարհով։ Եթե մարդկային հասարակության ձևավորման ամենահիմնական նախադրյալը եղել է մարդկանց համատեղ ապրելու անհրաժեշտության գիտակցումը, ապա ազգերի ձևավորման կարևոր նախադրյալներից մեկը եղել է տոհմերի, ցեղերի և էթնիկական խմբերի միավորելու և համատեղ ապրելու անհրաժեշտության գիտակցումը։

Տոհմերը, ցեղերը գոյատևության դաժան գոտեմարտում իրենց գոյությունը, տարածքը, ունեցվածքը պաշտպանելու, կամ այլոց տարածքներն ու ունեցվածքը խլելու համար ստիպված են եղել անհաշտ պայքար մղել միմյանց դեմ, որի ընթացքում ոմանք իրենց հակառակորդներին ոչնչացրել են, նվաճել ու իրենց են միացրել մյուսներին և տեղի է ունեցել տոհմերի, ցեղերի ու էթնիկական խմբերի, ինչպես նաև տարածքների միավորման և խոշորացման գործընթաց, ինչով էլ սկիզբ է դրվել ազգի առաջացման պրոցեսին։

Էթնիկական հանրույթի միավորման պրոցեսը կարող է տեղի ունեցած լինել նաև տոհմերի և ցեղերի կամավոր միավորման սկզբունքով։ Ավելի ազդեցիկ, հզոր ցեղերից պաշտպանվելու համար երբեմն հարևան, որոշակի նմանություն ու ընդհանրություն (կենսաբանական-արյունակցական, լեզվական, ավանդույթներ, սովորույթներ և այլն) ունեցող տոհմերն ու ցեղերը կամավոր միավորվել են թշնամուց համատեղ պաշտպանվելու համար։ Այս պարագայում ավելի ուժեղ ու կենսունակ էթնիկական հանրույթը իր շուրջն է համախմբում մյուսներին, որն էլ կարող է հետագայում դառնալ ազգի ձևավորման միջուկը։

Այսպիսով, թե բռնի նվաճման ու միավորման, և թե կամավոր միավորման դեպքում նախ և առաջ ձևավորվում է ընդհանուր տարածքը, որի վրա համատեղ կյանք վարող տարբեր էթնիկական հանրույթներին միավորում է համատեղ ուժերով այդ տարածքը և նրա վրա ստեղծած իրենց ունեցվածքը թշնամուց պաշտպանելու անհրաժեշտությունը։ Ուստի, տարածքի առկայությունը ազգի ձևավորման, իսկ հետագայում նաև նրա գոյության պարտադիր պայմանն է։ Կարելի է ասել, որ ազգի ձևավորումը սկսվում է նրա տարածքային սահմանների ճշգրտումից և այդ սահմաններից ներս համատեղ կյանքի կազմակերպումից։

Ընդհանուր տարածքը և նրանում համատեղ կյանքի կազմակերպումը առաջացնում է այնպիսի քաղաքական կառույցների ձևավորման անհրաժեշտություն, ինչպիսիք են պետությունը կամ պետություն հիշեցնող հարաբերությունների համակարգ (իշխանության, իրավական նորմեր, հասարակական կյանքի կազմակերպման կառույցներ ու սկզբունքներ, անվտանգության ապահովման և պաշտպանության կառույցներ և այլն), որը մշակում և իրականացնում է բոլորի համար պարտադիր օրենքներ, համակեցության կանոններ, բարոյական նորմեր ու սկզբունքներ և այլն։ Հետևաբար ազգերի ձևավորման երկրորդ կարևորագույն նախադրյալը պետության առաջացումն է, որի գործունեության շնորհիվ էլ ժամանակի ընթացքում աստիճա-

նաբար ձևավորվում են այնպիսի հատկանիշներ ու գործոններ, ինչպիսիք են ընդհանուր լեզուն, մշակույթը, մտածելակերպը, հոգեբանությունը, բարոյական նորմերն ու ավանդույթները և այլն:

Դիտարկումները ցույց են տալիս, որ ա) իր պատմական կամ սեփական տարածքից դուրս, այլ պետություններում ապրելով, որքան էլ տվյալ էթնիկական հանրույթը քանակապես մեծաթիվ լինի, կամ տնտեսական ու քաղաքական առումով ազդեցիկ ու նշանակալից դեր ունենա տվյալ պետության մեջ, եթե նա տվյալ պետության կազմում որոշակի տարածքի վրա հանդես չի գալիս որպես առանձին, քաղաքական կարգավիճակ ունեցող ինքնուրույն ազգային միավոր, ապա նա չի կարող հանդես գալ որպես ազգ և դիտվում է որպես ազգային փոքրամասնություն կամ ուղղակի տվյալ պետության քաղաքացի: Բ) Ապրելով իր պատմական հանրույթը չի վերաճում ազգի, մնալով տոհմերի, ցեղերի մակարդակի, կամ ծուլվում է իրեն նվաճողներին և անհետանում պատմության թատերաբեմից: Գ) Եթե ազգերի ձևավորման ընթացքում պետության ամկայությունը կարևորագույն և անհրաժեշտ պայման է, ապա հետագայում պետականությունը կորցնելուց հետո ազգերը կարող են իրենց տարածքների վրա երկար ժամանակ գոյատևել այլոց տիրապետության տակ: Դա հնարավոր է դառնում այն դեպքում և միայն այն ազգերի համար, որոնք պետականություն ունենալու ժամանակ ձևավորվել ու ամրագրել են այնպիսի հատկանիշներ ու կապեր (ընդհանուր գրական լեզու, մշակույթ, ավանդույթներ և այլն), որոնց շնորհիվ ապահովում է ազգապահպանության խնդիրը, և այնպիսի կառույցներ, որոնք կարող էին փոխարինել պետական կառույցներին (օրինակ՝ հայերի դեպքում եկեղեցին):

Ազգերի ձևավորման երրորդ կարևորագույն նախադրյալը հաղորդակցման ընդհանուր միջոցի՝ լեզվի ձևավորումն է, առավել ևս գրական լեզվի առաջացումը, ինչը կարևորագույն և անհրաժեշտ պայման է ընդհանուր մշակույթի, մտածողության, հոգեբանության և այլն ընդհանուր հատկանիշների ձևավորման համար:

Սովորաբար տիրապետող է դառնում այն էթնիկական հանրույթի լեզուն, որն ավելի ուժեղ ու կենսունակ է, որը նվաճել կամ կամավոր իր շուրջն է համախմբել այլ ցեղերի ու ժողովուրդների: Սակայն դա չի նշանակում, որ մյուս ցեղերի ու էթնիկ խմբերի լեզուները իսպառ վերանում ու մոռացվում են: Ընդհանուր լեզվի առաջացումը բարդ ու երկարատև գործընթաց է, որի ընթացքում տարբեր էթնիկական լեզուներից (մասնավոր, երբ որանք իրար հետ որոշակի նմանություն ունեն կամ նույն լեզվախմբին են պատկանում), փոխառնվում են նրանց լավագույն լեզվական նվաճումները, լրացվում են իրարով, աստիճանաբար դառնալով բոլորի կողմից ընդունելի և հասկանալի հաղորդակցման միջոց:

Ընդհանրացնելով վերը ասվածը, կարելի է ձևակերպել հետևյալ բնորոշումը: Ազգը պատմական երկարատև ժամանակահատվածում որոշակի տարածքի վրա ձևավորված մարդկանց հանրություն է, որին բնորոշ է

տարածքի, լեզվի և լեզվամտածողության, մշակույթի, հոգեկան կերտվածքի, բարոյական սկզբունքների, ավանդույթների ու սովորույթների ընդհանրությունը: Առկա են նաև մի շարք այլ ընդհանուր առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են այն միջավայրով, աշխարհաքաղաքական դիրքով, զարգացման մակարդակով և այլն, որում ապրում է տվյալ մարդկային հանրույթը: Այդպիսի առանձնահատուկ գծեր առաջանում են նաև ազգի զարգացմանը զուգընթաց, համապատասխանելով հասարակության զարգացման աստիճանին ու պահանջներին:

Հասարակության զարգացման արդի աստիճանում, երբ տեղի են ունենում զանգվածային տեղաշարժեր, խորացված էմիգրացիոն պրոցեսներ, հեշտացել է ապրելավայրի ազատ ընտրության հնարավորությունը, ազգերի ձևավորման ավանդական ձևերին զուգահեռ տեղի են ունենում ազգերի նոր սկզբունքներով առաջացման գործընթացներ, որի հիմնական բնորոշ գիծը տարբեր ազգային հանրությունների և ազգային պատկանելիության մարդկանց միևնույն պետության տարածքում երկար ժամանակ համատեղ ապրելու, ընթացքում աստիճանաբար ընդհանուր լեզու, մշակույթի ձևավորման ճանապարհով միասնական ժողովրդի, իսկ զարգացման հետագա ընթացքում նաև ազգի վերածվելն է, (օրինակ՝ ԱՍՆ, ՀԱՀ, Լատինաամերիկյան ժողովուրդներ և այլն):

Հավանաբար, այս իրողություններից ելնելով է արդի գիտական գրականության մեջ տարածվել ազգի ըմբռնման երեք հիմնական մոտեցումներ.

- իրավաքաղաքական ազգեր
- սոցիոմշակութային ազգեր
- կենսաբանական, արյան ծագման ընդհանրություն ունեցող ազգեր

Ազգի ըմբռնման իրավաքաղաքական մոտեցման դեպքում ազգը դիտվում է որպես այս կամ այն պետության քաղաքացիների ընդհանրությունը: Այս տեսակետը լայն տարածում գտավ հատկապես Եվրախորհրդի կողմից մշակված և ընդունված քաղաքացիության մասին կոնվենցիայից հետո, որտեղ "քաղաքացիություն" հասկացությունը սահմանվում է որպես անհատի իրավական հարաբերություն, առանց ազգային պատկանելիությունը նշելու: Միջազգային իրավունքի մեջ ազգերի մասին խոսելիս նկատի է առնվում հենց քաղաքացիական կամ քաղաքական ազգերը: Այսպիսի մոտեցման հիմքում ընկած է այն թեզը, որ ազգային հարաբերությունները, կամ մարդկային հանրություններում էթնիկական հարաբերությունները պետությունից առանձին կամ նրան զուգահեռ չի լինում: Այդ հարաբերությունները բոլոր դեպքերում միջնորդավորված է պետությամբ, քանզի պետության օրենսդրական շնորհիվ է տվյալ պետության տարածքում տարբեր էթնիկական հանրություններից ձևավորվում հավասար քաղաքական իրավունքներով օժտված միասնական ժողովուրդ, ինչն էլ պատճառ է դարձել խոսելու քաղաքական ազգերի մասին:

Այսօր աշխարհում առկա են երեք հազար ձևավորված կամ ձևավորման ընթացքում գտնվող ազգեր ու ժողովուրդներ: Իսկ եթե բոլոր էթնիկական

խմբերը հաշվենք, ապա դրանք մոտենում են տասն հազարի, այն դեպքում, երբ պետությունների թիվը երկու հարյուրից էլ պակաս է: Եվ, որպեսզի հնարավորինս մեղմվի և բացառվի պետության տարածքում եղած տարբեր էթնիկական խմբերի ու ժողովուրդների միջև առաջացած հակասությունները լավագույն տարբերակ է համարվել բոլոր էթնոսների (ազգեր, ազգայթներ, ժողովուրդներ և այլն), հավասար քաղաքական կարգավիճակի ընդունումը: Միջազգային ասպարեզում քաղաքական ազգերը հանդես են գալիս ազգային պետությունների ձևով, (օրինակ՝ ՄԱԿ-ում բոլոր երկրները հանդես են գալիս որպես ազգային պետություններ, որոնցից յուրաքանչյուրը կարող է տասնյակ ժողովուրդներ ներկայացնել), ներկայացնելով իրենց ազգային շահերը, գերքը, դրոշը, հիմնը և այլն: Մի շարք երկրներում (ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Իսպանիա, Իտալիա և այլն) ազգի բնորոշման հիմքում դրվում է իրավաքաղաքական մոտեցումը, որտեղ առաջնային է համարվում պետության բոլոր քաղաքացիների իրավահավասարությունը անկախ նրանց էթնիկական հատկանիշից, քանակական կազմից կամ պատմական նշանակությունից:

Առգիմնականությամբ մոտեցման դեպքում շեշտը դրվում է այնպիսի հատկանիշների ընդհանրության վրա, ինչպիսիք են լեզուն, մշակույթը, կրոնը, ավանդույթներն ու սովորույթները: Դա թույլ է տալիս ազգը դիտել որպես մարդկանց այնպիսի հանրութեն, որոնց բնորոշ են հոգևոր մշակույթի, պատմական զարգացման, վարքագծի, բարոյական նորմերի, ապրելակերպի և այլն ընդհանրություն: Այս դեպքում, սովորաբար խոսվում է կուլտուրական ազգերի, կամ էթնոազգերի մասին:

Քաղաքական կյանքում ազգային ընդհանրությունը երբեմն նույնացվում է կրոնական ընդհանրության հետ: Օրինակ՝ խոսվում է արաբական կամ մահմեդական ազգերի մասին հիմք ընդունելով իսլամը, որպես բոլորի համար պարտադիր կրոն, չնայած նրան, որ արաբական ազգերի մեջ մտնում են իրենց զարգացման մակարդակով, մշակույթով, լեզվով ու ավանդույթներով իրարից չափազանց տարբերվող Եգիպտացիներ, սիրիացիներ, լիբանանցիներ, պաղեստինցիներ և այլն: Առավել ևս, որ իսլամը միասնական կրոն չէ, բաժանված է երկու ճյուղերի - շիիներ և սուննիներ, իսկ այսօր արդեն իսլամի մեջ առաջանում են նոր արմատական ուղղություններ (վահաբիզմ) Իհարկե, կրոնը ժողովրդի հոգևոր մշակույթի կարևոր բաղադրիչն է, սակայն կրոնական ընդհանրությունը չի կարող ապահովել ազգային և քաղաքական ընդհանրությունը:

Երբեմն ազգերի բնորոշման հիմքում դրվում է լեզվական նմանությունը, ասենք, թուրքալեզու ազգեր, անգլախոս ժողովուրդներ, սլավոններ և այլն:

Տնտեսական կապերի, տարածքի, լեզվի, ազգային մշակույթի և հոգեբանության ընդհանրությունը առաջացնում են ազգային ընդհանուր գիտակցություն, որը ազգի գոյության և զարգացման կարևորագույն պայմաններից է: Ազգային ինքնագիտակցությունը միավորում է ոչ միայն գոյություն ունեցող օբյեկտիվ կապերը, այլև էթնիկական հանրությունների ներսում գործող այն-

պիսի առանձնահատուկ գործոններ, ինչպիսիք են ազգային պատկանելիությունը, ազգային հպարտությունը, հայրենասիրությունը և այլն: Առանց ազգային գիտակցության և ինքնագիտակցության չկա և չի կարող ազգ լինել: **Ազգը ոչ միայն օբյեկտիվ գոյություն ունեցող հանրութեն է, այլև գիտակցության և ինքնագիտակցության սուբյեկտիվ գործոն, որը թույլ է տալիս մարդուն ասելու "ես հայ եմ", "ես ռուս եմ" իսկ հանրութեն հնարավորություն է տալիս ասելու "մենք հայ ենք", "մենք ռուս ենք" և այլն, ազգային տարածքի հետ կապվածությունը մարդուն թույլ է տալիս ասելու "Յայաստանը իմ հայրենիքն է", "Ֆրանսիան իմ հայրենիքն է" և այլն:**

Յուրաքանչյուր ազգի կենսունակությունն ու ակտիվությունը մեծապես **կախված է և որոշվում է նրա ինքնագիտակցության բնույթով** ու մակարդակով: Տարբեր ազգերի ձևավորման գործընթացները, տեղի ունենալով պատմության տարբեր դարաշրջաններում և կրելով այդ դարաշրջանի առանձնատարկությունների կնիքը, նշանակալից չափով կախված են եղել նաև տնտեսական, քաղաքական, էթնիկական հատկանիշների փոխհարաբերություններից: Ազգի կայացման գործընթացը և նրա գոյության պայմանների ստեղծումը տեղի է ունենում միաժամանակ, որպես մեկ ընդհանուր գործընթացի երկու կողմեր, որոնք իրար լրացնելով ապահովում են ազգի ձևավորումն ու զարգացումը:

Ազգերի ըմբռնման երրորդ մոտեցման հիմքում ընկած է կենսաբանական (գենետիկական) առանձնահատկությունը, որտեղ ազգի **հիմնական** բնորոշիչը համարվում է արյան ընդհանրությունը: Մի շարք երկրներ իրենց սահմանադրության մեջ առանձին հողվածով արյունակցական կապը ազգային ապտկանելիության միակ հիմքն են համարում: Օրինակ՝ համաձայն ճապոնիայի և Գերմանիայի սահմանադրությունների ազգը կազմում են միայն այն մարդիկ, որոնց երակներում հոսում է ճապոնական կամ Գերմանական արյուն: Այդ է պատճառը, որ Գերմանիայում քաղաքացիություն կարող են ստանալ **միայն այն մարդիկ, ովքեր կարողանում են ապացուցել, որ իրենց արյունը գերմանական ծագում ունի:**

Գրեթե նույն մոտեցումներն ունեն հրեաները, այն առանձնահատկությամբ, որ արյան հետ միասին պարտադիր պայման է համարվում նաև **որեական կրոնը (հուդաիզմը):**

Նշենք, որ կենսաբանական գործոնը մարդու կյանքում մեծ դեր է խաղում, նշանակալից հետք թողնելով մատաղ սերնդի կենսակերպի, բնավորության գծերի և մտավոր կարողությունների վրա: Սակայն այնուհանդերձ, ազգությունը միայն ծագումնաբանական, արյան գործոնով բնորոշելը ճիշտ չէ, քանզի այդ դեպքում հաշվի չեն առնվում այնպիսի կարևորագույն գործոններ, ինչպիսիք են տարածքը, լեզուն, մշակույթը և այլն:

Նշենք նաև, որ ազգերի ըմբռնման վերը նշված մոտեցումները առանձին-առանձին, իրենց մաքուր ձևով իրականության մեջ գրեթե չկան: Գրականության մեջ այդ մոտեցումները հաճախ համատեղվում են, այն վերապահումով, որ ամեն անգամ ազգի բնորոշման մեջ դրանցից մեկին կամ մյուսին

առաջնություն է տրվում: Ինչը երբեմն նաև սուբյեկտիվության տարր է պարունակում և կախված է հետազոտողի ազգային պատկանելիությունից, գաղափարախոսությունից, քաղաքացիական կողմնորոշումից և այլն: Դիտարկումները ցույց են տալիս, որ կենսաբանական գործոնի գերակայությունը հիմնականում տիրապետող է փոքր, թույլ, այլուց տիրապետության տակ գտնվող և օտար միջավայրում ապրող ազգերի մոտ, կամ իրենց աստծո ընտրյալ համարող, ուրիշ ազգերից իրենց վեր դասող, այլ կերպ ասած, ազգայնամոլական գաղափարախոսությամբ ու մտածելակերպով կողմնորոշվող ազգերի մոտ:

2. Ազգային ինքնորոշման իրավունքը: Դրանորման ձևերն ու իրականացման հնարավորությունները

Ինչպես արդեն նշվեց վերը, արդի ժամանակաշրջանի միջազգային քաղաքականության ամենաբարդ խնդիրներից մեկը ազգային հարցի կարգավորումն է: Միջազգային ճանաչված բազում կազմակերպություններ մեծ ջանքեր են գործադրում ազգային հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, փորձելով դրա հիմքում դնել այնպիսի սկզբունքները, որոնք նախ ընդունելի լինեն ժողովուրդների ու ազգերի համար, և երկրորդ, որ այդ ընդունված սկզբունքները իրոք դառնան ազգամիջյան հարաբերությունների կարգավորման իրական լծակներ:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին կեսի համաշխարհային քաղաքական զարգացումների, ազգային ազատագրական պայքարի համընդգրկուն բնույթի, երկու համաշխարհային պատերազմների (1914-1919 և 1939-1945) արդյունքը եղավ այն, որ աշխարհի տասնյակ երկրներ ու ժողովուրդներ ազատագրվելով գաղութատիրության լծից, ծեղք բերեցին անկախություն: Հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո պարզ դարձավ, որ հասել է նոր, առանց գաղութատիրության, աշխարհակարգ ստեղծելու դարաշրջանը:

Արդեն 1948թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի կողմից ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում շարադրվեցին այն հիմնական սկզբունքները, որոնց կիրառումը պետք է հնարավորություն տար առանց՝ ոռաստայական, ազգային, կրոնական, լեզվական, մշակութային զարգացման մակարդակների տարբերությունը հաշվի առնելու, ապահովել աշխարհի բոլոր մարդկանց իրավահավասարությունը, իրավունքները, ազատություններն ու արժանապատվությունը: Անշուշտ, հռչակագրի ընդունումը չէր նշանակում մարդկային իրավունքների հարցի վերջնական կարգավորում: Այն ընդամենը "ուղեցույց էր" համաշխարհային հանրության կողմից, մարդկային հարաբերությունների կարգավորման անհրաժեշտ սկզբունքների արձանագրում էր, որը իր իրականացման երկար ճանապարհն ունի անցնելու, առավել ևս, որ այսօր աշխարհում դեռ շատ երկրներ կան, որոնք օբյեկտիվորեն պատրաստ չեն այդ սկզբունքները իրականացնել (զարգացման աստի-

ճան. քաղաքական ոեժիմ, ավանդույթներ, ազգամիջյան կոնֆլիկտներ և այլն):

Այդ հռչակագրի ընդունումը պարտավորեցնում էր պետություններին, (քանի որ նրանք ստանձնել էին այդպիսի պարտավորություն, հռչակագրի տակ ստորագրելով): Իրենց տարածքներում իրականացնելու մարդու իրավունքների պաշտպանությունը, ինչը իր հետ բերում էր նաև այն ազգերի, ժողովուրդների, էթնիկական խմբերի իրավունքների պաշտպանության անհրաժեշտություն, որոնք գտնվում էին այս կամ այն պետության կազմում և գրկված էին որոշակի քաղաքական ինքնուրույն կարգավիճակից: Ավելին, հետագայում պարզ դարձավ, որ մարդու իրավունքների պաշտպանությունը չի կարող իրական լինել, քանի դեռ չի լուծվել ազգերի, ժողովուրդների, էթնիկական հանրույթների իրավահավասարության հարցը, այսինքն քանի դեռ ժողովուրդները չեն կարողանում օգտվել իրենց ինքնորոշման իրավունքից, հնարավոր չի իրականացնել մարդու իրավունքների պաշտպանությունը (օրինակ՝ քրդերը Թուրքիայում): Քանզի անիմաստ է խոսել մարդու իրավունքների պաշտպանության մասին, եթե ոտնահարված են այն հանրույթների իրավունքները, որի անդամն է տվյալ անհատը: Ուստի մարդու իրավունքների պաշտպանությունը իրական, կիրառելի դարձնելու համար, նախ անհրաժեշտ էր ճանաչել և ընդունել ազգերի, ժողովուրդների, էթնիկական հանրույթների իրավահավասարությունն ու ազատությունը:

Այդ անհրաժեշտության գիտակցմամբ էր, թերևս, պայմանավորված 1960 թվականի դեկտեմբերի 14-ի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ընդունած գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիրը, որը ելևելով միջազգային զարգացման իրողություններից, նշում էր, որ ազատագրության գործընթացը չի կարելի կանգնեցնել և հետ շրջել, որ առավել խորը ճգնաժամերից խուսափելու համար պետք է վերջ տրվի գաղութատիրությանը և նրա հետ կապված ժողովուրդների իրավունքների ոտնահարումներին, արձանագրելով այն համոզմունքը, որ բոլոր կախյալ ժողովուրդներն իրավունք ունեն ձգտելու ազատության և հասնելու իրենց անկախությանը, որ նրանք իրավունք ունեն իրականացնելու իրենց ինքնիշխանությունը, և ամբողջականությունը իրենց ազգային (տվյալ դեպքում պատմական) տարածքում: Հռչակագրում արձանագրած սկզբունքները ելնում էին այն բանի գիտակցումից, որ պետությունների, ժողովուրդների միջև հնարավոր չէ կայուն ու բարեկեցիկ, խաղաղ ու բարեկամական հարաբերություններ հաստատել, եթե դրանք չեն հենվում բոլոր ժողովուրդների իրավահավասարության ընդունման, ինքնորոշման սկզբունքների հարգման ու մարդու իրավունքների պաշտպանության վրա: Դրանից ելնելով էլ հռչակագրում նշվում է "բոլոր ժողովուրդները իրավունք ունեն ինքնորոշման, այդ իրավունքից ելնելով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնում են իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը (8,63)":

Այսպիսով ազգերի ինքնորոշման իրավունքը դարձել է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից մեկը: Ազգային ինքնորոշումը ժողովուրդների ազգային ինքնիշխանության, անկախության, սեփական պետության կամ ազգային ինքնավարության ստեղծման հնարավորություն ունենալու իրավունքն է: Ազգային ինքնորոշման իրավունքի հիմքում դրված է այն սկզբունքը, որ բոլոր ազգերը, ժողովուրդները, էթնիկական հանրությունները պետք է իրավունք ունենան տնօրինելու իրենց ճակատագիրը, ընտրելու: իրենց զարգացման ուղին, որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը և այլն:

Ազգային ինքնորոշման իրավունքի սկզբունքները ամրագրված են Նաև ՄԱԿ-ի 1960թ. դեկտեմբերի 16-ի, 1970թ. (և ուժի մեջ է մտել 1976թ. մարտի 1-ից) կանոնադրության և մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի մեջ: ՄԱԿ-ի 1970 թվականի ընդունած միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում ասվում է՝ «Ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, անկախ պետության կազմի մեջ մտնելու կամ նրա հետ միավորվելու ազատությունը, կամ ժողովրդի կամքի ազատ դրսևորմամբ այլ քաղաքական կարգավիճակի հաստատումը համարվում է այդ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացում» (8.63): Ինչպես տեսնում ենք հռչակագրում ընդունված սկզբունքից չի բխում, որ ազգային ինքնորոշման իրավունք ասելով պետք է հասկանալ անպայման տվյալ ժողովրդի առանձնացում և անկախ պետության ստեղծում: Բազմազգ պետություններում ժողովուրդներին, էթնիկական հանրություններին ազգային պետականություն պետական միավորում և նույնիսկ կուլտուրական ինքնավարություն ստեղծելու իրավունքը նույնպես պետք է դիտել ազգային ինքնորոշման դրսևորման ձևեր: Ինչպես ցույց տվեցին հետագա միջազգային քաղաքական իրադարձությունները, այդ սկզբունքի իրականացումը այնքան էլ դյուրին խնդիր չէ, և շատ դեպքերում չարաշահվում է այն ժողովուրդների քաղաքական արտոնյալ խափ կողմից, որոնք օգտվելով իրենց ժողովրդի քաղաքական տգիտությունից և հետամնացությունից, հետապնդելով ենթաբային շահեր, անպայման ձգտում են դուրս գալ տվյալ պետության կազմից և ստեղծել անկախ պետություն: Սովորաբար, այդ ուժերի թիկունքում կանգնած են լինում արտաքին հզոր ուժեր, որոնց օգնությամբ, եթե հաջողվում է ստեղծել անկախ պետություն, ապա դրանք դառնում են հզոր քաղաքական ուժերի դրածուներ, խամաճիկներ, ժողովուրդը հայտնվում է կրկնակի ճնշման ու շահագործման մեջ, իսկ երկիրը դատապարտվում է հետամնացության: Ինքնորոշման սկզբունքի իրականացումը ենթադրում է նաև մի շարք այլ օբյեկտիվ դժվարություններ, արգելքներ ու խոչընդոտներ:

Անշուշտ ազգային ինքնորոշման իրավունքի ընդունումը նպատակ է ունեցել քաղաքակիրթ ճանապարհով կարգավորել և լուծել ազգերի, ազգային կազմավորումների, էթնիկական հանրությունների, մեծ ու փոքր ժողովուրդների միջև եղած հարաբերություններն ու ծագած հակասությունները, էլենտով նրանց բոլորի հավասար իրավունքի ապահովման սկզբունքից Սակայն

իդէ տեղի կունենա, եթե աշխարհի բոլոր ժողովուրդներն ու էթնիկական հանրությունները կամ, նույնիսկ ոչ բոլորը, այլ միայն նրանք, ովքեր դա ցանկանում են, իրականացնեն իրենց ինքնորոշման իրավունքը: Տեղի կունենա այն, որ աշխարհը կվերածվի մի անկառավարելի քաոսի:

Այսօր աշխարհում ընդամենը երկու հարյուրից էլ պակաս պետություններ կան, որոնց միջև առկա են բազում չլուծված հակասություններ, և շատ հազվագյուտ են դեպքերը, երբ ազգամիջյան հակասությունների լուծման շուրջ պետությունների կամ պետական և քաղաքական խմբավորումների միջև հնարավոր է լինում համաձայնության գալ և հարցը լուծել խաղաղ կարգավորման ճանապարհով (օրինակ թուրքերի և քրդերի, հրեաների և պաղեստինցիների, հայերի և ազերիների, ռուսների և չեչենների, վրացիների և արխազների միջև և այլն):

Իսկ, եթե բոլոր ժողովուրդները օգտվելով իրենց ինքնորոշման իրավունքից ստեղծեն իրենց անկախ պետությունները, աշխարհում կառաջանան երեքից-չորս հազար, իսկ գուցե և տասը հազար պետություններ, առավել ևս որ այսօր ոչ միայն էթնիկական հանրություններն են ձգտում ինքնորոշման իրավունքի իրականացմամբ անկախվել, այլև մի շարք պետություններում տարածքներ, մարզեր են ցանկանում դուրս գալ պետության կազմից և ստեղծել անկախ պետություն (Իտալիա, Կանադա):

Յնարավոր է արդյոք այս պարագայում կառավարելի դարձնել ազգամիջյան հարաբերությունները, գտնել բոլորի համար ընդունելի այնպիսի սկզբունքներ, որը բավարարի նրանց ու ընդունելի լինի բոլորի համար: Յավանաբար ոչ: Փոքր ժողովուրդների և էթնիկական հանրությունների մեջ դժվար է գտնել այնպիսից, որոնք հակված չլինեն կարծելու, որ իրենց ազգային իրավունքները հարևանների կողմից ոտնահարված են, որ իրենց պատմական տարածքների մի մասը հարևանները խլել են և այլն, և բնականաբար ձգտելու են արդարությունը վերականգնելու իրենց տարածքները հետ պահանջելով, Իսկ դա արդեն նշանակում է պատերազմ բոլորի կողմից բոլորի դեմ, որը տեղային բնույթից հեշտությամբ կարող է վերածել համաշխարհային բնույթի:

Այնուհետև, ցանկացած ազգային ինքնորոշման սկզբունքի իրականացման փորձ իր հետ բերում է բազում ազգամիջյան հակասությունների առաջացում, առաջին հերթին հակասություն ինքնորոշվող ժողովրդի և այն պետության միջև, որի կազմից նա փորձում է դուրս գալ: Իսկ այդ հակասությունների հետագա սրումը անխուսափելի է դարձնում բռնության կիրառումը, զինված բախումներն ու պատերազմը, (Ռուսաստան-Չեչենյա, Յարավելավիա-Ռոսնյա-Կոսովո, Վրաստան-Աբխազիա, Ադրբեջան-Արցախ և այլն), Յազվադեպ է պատահում, որ ազգային ինքնորոշման սկզբունքի կիրառման ճանապարհով այս կամ այն ժողովրդի կամ ազգային հանրույթի անկախ պետություն ստեղծելու ցանկության հետ պետությունը, որի կազմից ձգտում է դուրս գալ տվյալ էթնիկական հանրույթը, կամովին համաձայնվի, և ընդունի ինքնորոշվող ժողովրդի իրավունքը:

Անհրաժեշտ է մի կարևորագույն գործոն էլ նշել, որը իր էությունը ուղիղված է ժողովուրդների ինքնորոշման արմատական ձևի դրսևորման դեմ: Ինչը գրեթե անհնարին է դարձնում ինքնորոշման ճանապարհով ազգային անկախ պետության ստեղծումը: Դա Միջազգային իրավունքի մյուս կարևոր սկզբունքն է - պետության տարածքային ամբողջականության, նրա սահմանների անխախտելիության սկզբունքը: Այդ սկզբունքը նույնպես ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության, և մի շարք համընդհանուր ընդունելիության արժանացած միջազգային իրավական փաստաթղթերի մեջ: 1975 թվականին Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի կողմից ընդունած եզրափակիչ փաստաթղթում արձանագրված է, որ բոլոր մասնակից պետությունները պարտավորվում են հարգել մյուսների տարածքային ամբողջականությունը: Սակայն հարկ է նշել, որ այդ փաստաթղթում փորձ է արված նաև տալ այնպիսի ձևակերպումներ, որ բազմազգ պետության մեջ ինքնորոշման իրավունքի իրականացման ժամանակ տարածքային ամբողջականության սկզբունքը չդառնա ավելորդ հակասությունների առաջացման պատճառ: Այդ փաստաթղթում ասվում է, որ մասնակից պետությունը պետք է հարգի ժողովուրդների սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը և նրանց իրավահավասարությանը: Այս ձևակերպումը չափազանց նշանակալից է բազմազգ պետությունների փոքրամասնություն կազմող ժողովուրդների համար, նրանց էթնիկական իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Սակայն անյուսահեղձ, այն հաճախ անհնարին է դարձնում ազգային ինքնորոշման սկզբունքի իրականացումը, ինքնորոշվել ցանկացող այն ժողովուրդների համար, ովքեր ձգտում են անկայան դուրս գալ տվյալ պետության կազմից և ստեղծել իրենց ազգային անկախ պետությունը: Նախ այն պատճառով, որ պետությունը պետք է անկայան տա իր համաձայնությունը իր սահմանները փոփոխելու համար: Եվ երկրորդ ակնհայտ է, որ ցանկացած ինքնորոշվել ցանկացող ժողովուրդ իր ինքնորոշման իրավունքը կարող է իրականացնել միայն որոշակի տարածքի վրա:

Այս առումով, այդ երկու սկզբունքների միջև հակասություն կա, քանզի էթնիկական հանրույթը չի կարող ինքնորոշվել առանց տարածքի, իսկ տարածքով ինքնորոշվելը չի կարող չանհրաժեշտալ տարածքային ամբողջականության վրա: Այդ հակասությունը հիմնականում առաջանում է այն դեպքում, երբ ինքնորոշվող հանրույթը ձգտում է ամպայանս դուրս գալ տվյալ պետության կազմից, քանզի միայն այդ դեպքում է պետության տարածքային ամբողջականությունը խախտվում: Այստեղից կարելի է եզրակացնել որ պետության տարածքային ամբողջականության պահպանման և սահմանների անխախտելիության սկզբունքը ընդունվել է բազմազգ խոշոր ու հզոր պետությունների քանքերով հենց նրա համար, որ իրենց երկրներում ազգային ինքնորոշման իրավունքի իրականացումը չկարողանա դառնալ երկրի մասնատման պատճառ: Ասել է, թե այդ սկզբունքի ընդունումը հիմնականում ձեռնադր էր բազմազգ պետություններին, նախապես կանխելու համար իրենց տարածքների մասնատման վտանգը:

Դա է, թերևս, պատճառը, որ միջազգային քաղաքականության մեջ այս երկու սկզբունքների իրականացումը շատ հաճախ կախված է լինում հենց հզոր պետությունների կամ պետական խմբավորումների կամքից ու մոտեցումներից, նայած, թե տվյալ պահին հզոր պետություններին կամ պետական խմբավորումներին, որ սկզբունքի իրականացումն է շահավետ: Օրինակ՝ չափազանց շատ շահագոգոված լինելով խորհրդային միության փլուզմամբ Արևմտյան պետությունները առաջնությունը տվեցին ինքնորոշման սկզբունքին և կայծակնային արագությամբ ճանաչում էին իրենց անկախ պետություն հռչակած խորհրդային հանրապետությունների իրավունքները, որպես միջազգային իրավունքի սուբեկտների, որի արդյունքում առաջացման անկախ պետություններ:

Նույնը կարելի է ասել Զարավարված վերաբերյալ, որի քայքայմամբ շահագրգռված էր արևմուտքը: Իսկ երբ նրանց ձեռնադր էլ տվյալ պետության մասնատումը, նրանք առաջ են մղում տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը (օրինակ՝ Արցախը, Աբխազիան, Պաղեստինը և այլն): Այնուհանդերձ և՛ ազգային ինքնորոշման սկզբունքը, և՛ տարածքային ամբողջականության սկզբունքը միջազգային քաղաքականության մեջ ազգային հարաբերությունների կարգավորման կարևորագույն գործոններ են, անշուշտ, եթե դրանք կիրառվում են արդարության և ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան:

Այսպիսով, ազգային ինքնորոշման սկզբունքը կարող է իրականացման երկու դրսևորում ունենալ.

ա) ինքնորոշման սկզբունքի իրականացում, որի հետևանքով առաջանում է ինքնիշխան, անկախ պետություն: Այն երբեմն անվանում են ինքնորոշման իրավունքի իրականացման արմատական դրսևորում:

բ) ինքնորոշման իրավունքի իրականացում, որի արդյունքում տվյալ պետության կազմում առաջանում է որոշակի քաղաքական կարգավիճակ ունեցող ազգային միավորում (ինքնավար հանրապետություն, կուլտուրական ինքնավարություն և այլն):

Ազգային ինքնորոշման սկզբունքի իրականացումը, անկախ նրա դրսևորման ձևից կոչված է պաշտպանելու ժողովուրդների իրավահավասարություններն ու իրավունքները, հավասարակշռելու փոքր ու մեծ ժողովուրդների հարաբերությունները, նպաստավոր պայմաններ ստեղծելու ժողովուրդների ինքնությունը զարգացման, կյանքի կազմակերպման համար, ինչը բնավ էլ չի նշանակում, որ այդ ամբողջը կարող է տեղի ունենալ միայն անջատվելու և անկախ պետություն ստեղծելու պարագայում:

Ավելին, փոքր, թույլ ու հետամնաց ժողովուրդների զարգացման իրական հնարավորությունը մեծ ու հզոր պետությունների կազմում ինքնորոշման սկզբունքի իրականացումն է, քանզի հենց փոքր ու թույլ ժողովուրդներին ու էթնիկական հանրույթներին ձեռնադր էլ դուրս գալ մեծ պետության կազմից և դառնալ անկախ ինքնիշխան պետություն, որովհետև նրա ազգային շահերն ու իրավունքները շատ ավելի լավ կարող է պաշտպանվել տվյալ պե-

տության կազմում և նրա միջոցով, քան առանձնացված և ինքնուրույն: Եշտե՞նք, որ խոսքը վերաբերում է այնպիսի պետությանը, որը հակված չէ հարգելու ու պաշտպանելու փոքր ժողովուրդների իրավունքները, որոնք սովորաբար, ամրագրված են լինում պետության սահմանադրության մեջ:

Համաշխարհային քաղաքական զարգացումների, տնտեսա-ֆինանսական մրցակցության բնույթն այնպիսին է, որ ցանկացած փոքր ազգ ինքնորոշվելիս որպես անկախ պետություն, իսկույն հայտնվելու է այս կամ այն հզոր պետության կամ քաղաքական խմբավորումների ազդեցության ոլորտում և դառնալու է նրանից ռազմաքաղաքական և ֆինանսա-տնտեսական առումներով կախյալ երկիր և ձեռք բերված քաղաքական անկախությունը ոչինչ է արժելու: Իսկ հզոր, զարգացած պետությունների կազմում իրենց որոշակի ազգային իրավունքներն ունեցող էթնիկական հանրույթները (ազգույթներ, ժողովուրդներ, ցեղեր և այլն) լինի դա ազգային հանրապետության, մարզային ինքնավարության, թե կոլտուրական ինքնավարության ձևով, մի տեսակ արտոնյալ վիճակում են գտնվում (ասածը վերաբերում է ժողովրդավարական հասարակությանը): Մի կողմից էթնիկական հանրույթները բոլոր հնարավորություններն ստանում են իրենց ազգային արժեքները զարգացման համար, ազատորեն օգտվելով տվյալ բազմազգ պետության հարուստ մշակութային արժեքներից, գիտության և տնտեսության նվաճումներից, մյուս կողմից նրանց ազգային իրավունքներն ու անվտանգությունը հուսալիորեն պաշտպանված է տվյալ պետության կողմից, ինչը նրանք առանձնացված անել չեն կարող: Ասածը նպատակ չունի պնդելու, որ բոլոր դեպքերում ազգային ինքնորոշման իրավունքի իրականացումը անկախ պետության ստեղծման ելքով ճիշտ է:

Կան ժողովուրդներ, որոնք միանգամայն արժանի են դրան և պայքարում են իրենց իրավունքների համար (ջրդեր, իռլանդացիներ, բասկեր, աբխազներ, չեչեններ և այլն): Այստեղ հարցը այլ կերպ պետք է դնել, օրինակ՝ բուն չեչեն ժողովրդի (ոչ թե նրա էլիտայի) համար, որն է ձեռնառն առանձին անկախ պետություն ունենալ, թե ունենալ ազգային պետականություն Ռուսաստանի կազմում: Իհարկե, կարելի է պնդել, որ չեչեն ժողովուրդը պետք է որոշի, թե ինչ կարգավիճակ է ուզում: Եվ դա կլինե՞ր ազգային ինքնորոշման սկզբունքի իրականացման չեչեն ժողովրդի միանգամայն օրինական իրավունքը Սակայն, եթե այսօր արդեն հայտնի է, թե ինչ հետևանք է ունենալու տարածաշրջանում Չեչնիայի անկախությունը, ինչպիսին են Չեչնիայի արմատական ուժերի հավակնությունները տարածաշրջանի հարևան պետությունների նկատմամբ, և այլն, ապա ճիշտ է վարվում արդյո՞ք Ռուսաստանը, մերժելով Չեչնիայի անջատողական պահանջները: Չէ որ Ռուսաստանն էլ իրավունք ունի մտածելու իր վաղվա անվտանգության մասին: Զվիրավորելով չեչեն ժողովրդի արժանապատվությունը, հակված ենք կարծելու, որ նա ինքը պատրաստ է ինքնորոշման արմատական ձևի իրականացմանը, և մի խումբ ազգայնական վերնախավը կարող է ստիպել նրան իր կամքին ենթարկվել և սխալ ընտրություն կայացնել: Եվ կարծում ենք, որ Չեչնիայի:

իամար այս ասարագայում ազգային պետություն Ռուսաստանի կազմում դեռ չեչեն ժողովրդի համար ամենալավագույն ուղին է:

Ամփոփելով վերը ասածը կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները.

- ազգային ինքնորոշման սկզբունքը փոքր ու թույլ ժողովուրդների իրավունքները պաշտպանող միջազգայնորեն ընդունված կարևորագույն իրավական սորմ է.
- ազգային ինքնորոշման սկզբունքը բազմազգ պետություններում ապրող ազգային փոքրամասնություններին հնարավորություն է տալիս ստեղծելու իրենց ազգային քաղաքական կառույցները, որը նրանց հարատևելու և զարգանալու հիմնական երաշխիքն է.
- ազգային ինքնորոշման սկզբունքի ընդունումը պարտավորեցնում է պետություններին հարգելու իրենց տարածքում ապրող էթնիկական փոքրամասնությունների ազգային շահերն ու իրավունքները.
- ազգային ինքնորոշման իրավունքը հնարավորություն է տալիս էթնիկական հանրույթներին կամովի որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը: Ազգային ինքնորոշման սկզբունքի կիրառումը հնարավորություն է տալիս քաղաքակիրթ ճանապարհով կարգավորելու փոքր և մեծ ժողովուրդների միջև եղած հարաբերությունները, ծագած հակասությունները լուծել խաղաղ ճանապարհով.
- ինչպես տվյալ պետության կազմից դուրս գալու, այնպես էլ տվյալ պետության կազմում ինքնորոշվելու ճանապարհով ազգային պետականություն ստեղծելու հարցը լուծվում է ժողովրդի կամքի ազատ դրսևորման հանրաքվեի միջոցով.
- Տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը բազմազգ պետությունների քայքայումն ու մասնատումը կանխող միջազգային սորմն է. տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը չպետք է կիրառել ինքնորոշվել ցանկացող այն ազգային հանրույթի նկատմամբ, որը զավթվել և բռնակցվել, գաղութացվել է տվյալ պետության կողմից:

3 Ազգային պետականության և ազգային ինքնավար կազմավորումների հիմնական ձևերը

Մարդկային հասարակության զարգացման հազարամյակների ընթացքում ստեղծվել են բազմատեսակ պետական կառուցվածքի ձևեր, որոնք իրենց գոյության ընթացքում ձևափոխվել ու կատարելագործվել են, համապատասխանելով հասարակության զարգացման տվյալ աստիճանին բնորոշ հասարակության կյանքի կազմակերպման պահանջներին:

Տասնյակ ազգերի ու ժողովուրդների նվաճման ու ստրկացման ճանապարհով մերթ ձևավորվել են հսկայածավալ կայսրություններ (եգիպտոս, Բոմ Ռուսաստան), որի ընթացքում բազում ցեղեր ու ժողովուրդներ ծուլվել

ու անհետացել են պատմության թատերաբեմից, մերթ կործանվել են կայսրություններ, որոնց փլատակներից ծնվել են նոր ազգային պետությունները։

Այսպես, դարեր շարունակ մարդկությունը իր զարգացման ընթացքում կարծես, փնտրել է հասարակական կյանքի կազմակերպման այնպիսի քաղաքական կառույցներ, որոնք իվիճակի լինեին ապահովել նրա անվտանգությունը, կայուն զարգացումն ու առաջընթացը։

Այսօր էլ մարդկությունը, տակավին չի լուծել այդ բարդ խնդիրը, չի գտել հասարակական կյանքի կազմակերպման այն ձևերը, որոնք միանշանակ ընդունելի լինեին բոլոր ազգերի ու ժողովուրդների համար, ինչի վառ ապացույցը գոյություն ունեցող ազգամիջյան կոնֆլիկտներն ու բախումներն են։ Մեծ ու փոքր ժողովուրդների միջև անլուծելի թվացող հակասություններն ու վեճերը, իրավազրկված ժողովուրդների ու ազգերի առկայությունը և այլն։ Ասել է, թե մարդկությունը այդ ուղղությամբ, դեռ երկար ճանապարհ ունի անցնելու։

Արդի քաղաքական գրականության մեջ գոյություն ունեցող բազմաթիվ սակ ազգային-պետական կառուցվածքները խմբավորելով, առանձնացվում է երեք հիմնական ձևեր, որոնցից յուրաքանչյուրը կապված տվյալ հասարակության առանձնահատկությունների և մի շարք այլ գործոնների հետ կարող է իր դրսևորման յուրահատկություններն ունենալ։

1. Ունիտար (միասնական) պետություն, որի կազմում պետական կազմավորումների կարգավիճակ ունեցող սուբյեկտներ չկան։ Այդպիսի պետությանը բնորոշ է մեկ սահմանադրություն, մեկ քաղաքացիություն, պետական իշխանության մեկ բարձրագույն մարմին, բաժանված այնպիսի վարչատարածքային միավորումների, որոնք ինքնուրույնության իրավունքով օժտված չեն (օր. Հայաստանի Հանրապետությունը)։ Միասնական (ունիտար) պետության կազմի մեջ մտնող մարզերը, շրջանները և այլն, ղեկավարվում են իշխանության կենտրոնական մարմինների ընդունած օրենքներով, նրանց տարածքային սահմանները կարող են փոխվել համաձայն համապետական օրենքների, առանց տեղական մարմինների և տեղական բնակչության համաձայնության։

Գոյություն ունեն ունիտար պետությունների երկու տարատեսակներ, կենտրոնացված և ապակենտրոն։ Կենտրոնացված միասնական պետության մեջ տեղական մարմինների ենթարկումը կենտրոնական իշխանություններին իրականացվում է կենտրոնից նշանակված պաշտոնական անձանց միջոցով։

Ապակենտրոն ունիտար պետության ղեկավարում տարածքային մարմինները ձևավորվում են առանց կենտրոնի միջամտության, նրանից անկախ, սակայն գործում են համապետական օրենսդրությանը համապատասխան, որոնց համար այդ օրենքները պարտադիր են։ Այդպիսի պետություններից են Ֆրանսիան, Իսպանիան, Իտալիան, Ճապոնիան, Հայաստանը և այլն։ Ունիտար իրավունքը այսօր աշխարհում առավել տարածված պետական կառուցվածքներից է։

ձևերից է։ Նշենք, որ միասնական (ունիտար) պետություն ասելով չպետք է հասկանալ նաև էթնիկական հատկանիշների առումով հասարակության միատարրություն։ Աշխարհում դժվար գտնվի մի պետություն, որի ազգային կազմը միատարր լինի, որում չապրեն տարբեր էթնիկական հանրույթներ։ Ունիտար պետության միատարրության մասին խոսելիս նկատի է առնվում քաղաքական միատարրությունը, այսինքն այն, որ գոյություն ունեցող էթնիկական հանրույթներից ոչ մեկը քաղաքական ինքնուրույնությամբ և կարգավիճակով օժտված չէ։ Պա է, թերևս, պատճառը, որ մի շարք երկրներում հակասություններ են առաջանում կենտրոնական իշխանությունների և էթնիկական հանրույթների միջև, որտեղ էթնիկ խմբերը որոշակի քաղաքական իրավունքներ են պահանջում, երբեմն էլ անկախանալու համար սուր պայքար են ծավալում (օրինակ Իսպանիայում՝ բասկերը, Կանադայում՝ ֆրանսախոս համայնքը Զվերբեկի մարզում, Նոր Չելանդիայում՝ արմատական մահմեդականները, Թուրքիայում՝ քրդերը և այլն)։

2. Ազգային պետական կառուցվածքի հաջորդ ձևը, որը հազվագյուտ է առատահում և շատ անկայուն է (համենայն դեպս մինչև այժմ փորձը դա է ցույց տալիս) կոնֆեդերացիան է։ Կոնֆեդերացիան անկախ պետությունների միություն է, որի ղեկավարում միության անդամ յուրաքանչյուր պետություն լրիվությամբ պահպանում է իր ինքնիշխանությունը։ Տվյալ միավորման հիմնական խնդիրը արտաքին քաղաքականության բնագավառում և ռազմական բնույթի նպատակների իրականացումն է, որը հետապնդում է համատեղ ջանքերով միջազգային հարաբերություններում նրանցից յուրաքանչյուրի շահերի և յուրաքանչյուրի տարածքին ամբողջականության պաշտպանություն։

Ինչ վերաբերում է այդ պետությունների ներքին խնդիրներին, դրանք սահմանափակվում են միասնական մաքսային հարկումների, և մի շարք այլ երկրորդական կառուցվածքների շուրջ երկուստեք համաձայնությամբ։

Կոնֆեդերացիայի պայմաններում չկան բոլորի համար ընդհանուր օրենսդրական և գործադիր իշխանության մարմիններ։ Պետությունների իրականացվող քաղաքականության շուրջ համաձայնության գալու նպատակով ստեղծվում են որոշակի մարմիններ և պաշտոններ, սակայն դրանք օժտված չեն ուղղակի իշխանությամբ և կատարում են միության մեջ մտնող պետությունների հանձնարարականները։ Որոշումները ընդունվում են միաձայնության (կոնսենսուս) սկզբունքից ելնելով և ուժի մեջ են մտնում միայն անդամ պետությունների կենտրոնական իշխանությունների հաստատումից հետո։ Անդամ պետությունները օժտված են ընդունված որոշումները չեղյալ հայտարարելու իրավունքով, որից հետո նրանք իրավասու են դրանք չկատարել։

Հայտնի են մի քանի կոնֆեդերատիվ պետություններ, որոնք սակայն շատ կարճ կյանք են ունեցել և դադարացրել են իրենց գոյությունը՝ Դրանցից Ուտ պատմական ժամանակագրության կարելի է նշել ԱՄՆ (1781-1789), Ըսեցարիա (1815-1848), Շվեդիա և Նորվեգիա (մինչև 1905 թվականը),

Ավստրո-Յունագրիա (մինչև 1918 թվականը), Եգիպտոս ու Սիրիա (միացյալ Արաբական հանրապետություն 1958-1961 թվականները) և այլն:

Կոնֆեդերացիաների գոյությունը դադարում է հիմնականում հետևյալ պատճառներով.

ա) մասնակից պետությունների միջև ծագած խոր հակասությունը, որը անհնարին է դարձնում նրանց համագործակցությունը.

բ) այն խնդիրների վերջնական իրականացումը, հանուն որի նրանց միավոր վել էին,

գ) կոնֆեդերացիան ֆեդերացիայի վերածելու իրողությունը (օր. ԱՄՆ Շվեյցարիա).

Այսօր որպես կոնֆեդերատիվ պետության օրինակ կարելի է դիտել Եվրո միությունը, որը բավականին մեծ դեր է խաղում աշխարհում և իր գործող ներությամբ օրինակ է ծառայում պետությունների միջազգային փոխհարաբե-րությունների համար: Կարելի է կոնֆեդերատիվ պետական կառուցվածք համարել ԱՊՅ պետությունների միությունը, եթե այն կայանա, Ռուսաստան Բելգիոս միությունը, որոնք այսօր գտնվում են ձևավորման պրոցեսում:

Աշխարհում տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացները հուշում են, որ հասարակության զարգացման հետագա ընթացքը տանում է դեպի նոր կոնֆեդերատիվ պետությունների առաջացման.

3. Ֆեդերատիվ պետությունը ազգային-պետական քաղաքական կազմա-կերպության ամենատարբեր ձևեր ենթադրող համակարգ է: Ֆեդերատի-պետությունը ազգային պետական քաղաքական կազմակերպության տարբեր ձևեր ենթադրող համակարգ է: Ֆեդերատիվ (դաշնային) պետությունը պետական կառուցվածքի այնպիսի ձև է, որը կազմված է որոշակի քաղաքակ-կան ինքնուրույնություն ունեցող պետական կազմավորումներից, որոնք միավորմամբ ստեղծվում է միութենական, կամ հաճախ անվանում են դաշ-նային պետություն: Կախված դաշնային պետության մեջ ընդգրկված սուբ-յեկտների ազգային գործունից կարելի է առանձնացնել ֆեդերատիվ պետու-թյան կառուցվածքային հետևյալ տեսակները. ա) դաշնային պետությունները, որոնք ձևավորվել են տարածքային հիմքի վրա; (օրինակ. ԱՄՆ, Ավստրալիա, Ավստրիա, Արգենտինա, Բրազիլիա, Մեքսիկա և այլն): Այս պարագայում որ-պես դաշնային պետության սուբյեկտներ հանդես են գալիս քաղաքակա-ն ինքնուրույնություն և կարգավիճակ ունեցող մարզերը, որոնք ունեն իրեն-ս իշխանության մարմինները, օրենքներ ու որոշումներ ընդունելու իրավունք և այլն: բ) Դաշնային պետություններ, որոնք ձևավորվում են ազգային հիմքի վրա; (Յնդկաստան, Պակիստան, Բելգիա, Նիգերիա), այսինքն ինքնուրույն միութենական (դաշնային) պետություն, որը կազմավորված է որոշակի ին-քնուրույնությամբ օժտված և քաղաքական սուբյեկտի կարգավիճակ ունե-ցող եթնիկական հանրություններից: գ) Դաշնային պետություն, որը ձևավոր-վում է խառը ազգային-տարածքային հիմքի վրա (Ռուսաստան, Կանադա, Շվեյցարիա): Այդպիսի պետություններում դաշնության սուբյեկտների դերում հանդես են գալիս, ինչպես ազգային հանրությունները, այնպես էլ առանձին

մարզեր, որոնք որպես ֆեդերացիայի սուբյեկտներ ունեն հավասարազոր կարգավիճակ. Ներկայումս աշխարհում հաշվում են քսան այդպիսի պետու-թյուններ.

Բոլոր ֆեդերատիվ (դաշնային) պետությունները հենվում են հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

1 միութենական (ֆեդերատիվ) օրենսդրության գերակայություն.

2 պետական կառուցվածքի միասնական հիմք.

3. դաշնության ամբողջ տարածքում մարդկանց, ապրանքների ազատ տեղաշարժ, հենվելով այն հանգամանքի վրա, որ դաշնային սուբյեկտների ներքին սահմանները չեն համարվում որպես պետական սահման.

4. արգելված է դաշնության սուբյեկտի կարգավիճակի միակողմանի փո-փոխությունը, քանզի դրանով կարող է ոտնահարվել մյուս սուբյեկտների շահերը.

5 արգելվում է սուբյեկտի անջատումը դաշնությունից, ինչը կոչված է երաշխավորելու պետության տարածքային ամբողջականությունը: Ֆեդերա-տիվ պետության մեջ ամենադժվարին հարցը միութենական (կենտրոնա-կան) պետության և դաշնության սուբյեկտների միջև իրավունքների ու պար-տականությունների սահմանադրական համապատասխանության խնդիրն է, ինչն էլ շատ հաճախ դառնում է կենտրոնական (ֆեդերալ) իշխանություն-ների և դաշնության սուբյեկտների միջև սուր հակասությունների առաջաց-ման պատճառ: Այդպիսի հակասություններից գերծ մնալու միտումով զիտ-բունքներ, որոնք պահպանումը կարող է երաշխավորել դաշնային պետության կայունությունը: Դրանք են

- դաշնային պետության տարածքը ձևավորվում է նրա սուբյեկտների տարածքից:
- դաշնության ներքին սահմանները կարող են փոխվել միայն նրա սուբ-յեկտների համաձայնությամբ, օրենքով նախատեսված կարգով, դաշնու-թյան սուբյեկտներն օժտված են սահմանափակ քաղաքական ինքնու-րույնությամբ,
- բարձրագույն օրենսդրական մարմինը՝ պառլամենտը, կազմված է երկու պալատից, նրանցից մեկը՝ վերին պալատը ապահովում է դաշնության սուբյեկտների ներկայացուցչությունը, մյուսը՝ ստորին պալատը համազ-գային կամ համապետական ներկայացուցչություն,
- դաշնության սահմանադրությունը և նրա սուբյեկտների սահմանադրու-թյունները չպետք է իրար հակասեն, իսկ հակասության հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է դաշնության սուբյեկտների սահմանադրությու-նը համապատասխանեցնել համապետական սահմանադրությանը, իսկ մինչ համապատասխանեցնելը, գործում է դաշնային պետության սահ-մանադրությունը,
- միութենական օրենսդրության գերակայության ժամանակ դաշնության սուբյեկտները կարող են իրենց իրավասության շրջանակներում ընդու-

նել դաշնության օրենքներին չհակասող ցանկացած օրենսդրական ակտեր, դաշնության սուբյեկտները չեն կարող լինել միջազգային իրավունքի սուբյեկտներ (չեն կարող լինել ՄԱԿ-ի անդամ), սակայն կարող են մասնակցել միջազգային գիտական և մշակութային կազմակերպությունների գործունեությանը, արտասահմանում ունենալ ներկայացուցչություն և այլն: Բազմազգ դաշնային պետություններում ձևավորվում են տարբեր բնույթի ազգային պետական կազմավորումներ, ինչը կարող է կախված լինել տվյալ ժողովրդի գարգացման մակարդակից, գեադեցրած տարածքից, որպես «ազգի» ձևավորման աստիճանից, պատմական անցյալից, մշակութային, ավանդույթից և այլն: Դրա լավագույն օրինակը հանդիպում ենք Ռուսաստանի դաշնությունում, որտեղ առկա են դաշնության ինքնուրույն սուբյեկտ հանդիսացող այնպիսի ազգային պետական կազմավորումներ, ինչպիսիք են ազգային հանրապետությունները (21), ազգային ինքնավար մարզ (1 հրեական), ինքնավար 10 շրջան: Սակայն անկախ նրանց կազմավորման ձևից, գարգացման աստիճանից, քանակական կազմից, նրանք բոլորն էլ Ռուսաստանի դաշնության իրավահավասար անդամներ են:

Ուշադրություն դարձնելով միջազգային գարգացումների վրա նկատելի դառնում, որ դաշնային պետությունները գնում են գարգացման տարբեր ուղղություններով: Մասնագետներից ոմանք գտնում են, որ ամերիկյան և եվրոպական ֆեդերալիզմը գնալով վերաճում է ապակենտրոնացված ունիտար պետության, այսինքն, աստիճանաբար վերանում է դաշնային պետության սուբյեկտների այդչափ քաղաքական ինքնուրույնություններ ունենալու անհրաժեշտությունը: Իսկ լատինաամերիկյան դաշնային պետությունները գնում են դեպի կենտրոնացված ունիտար պետություն ստեղծելու ճանապարհով: Իհարկե, բոլոր դեպքերում, այսօր գոյություն ունեցող դաշնային պետություններին և նրանցում ընդգրկված սուբյեկտներին սպասվում է երկարատև գարգացման և ձևավորման ուղի, որոնք կարող են արտահայտվել և՛ կարգավիճակի փոփոխման, և՛ սահմանների ձևափոխման, և՛ միացվորման ու սերտաճման ձևերով:

4. Ազգային քաղաքականություն և գաղափարախոսություն

Ինչ ենք հասկանում «ազգային քաղաքականություն» ասելով, ո՞րն է քաղաքականության ազգային բնույթը կամ ազգային կողմնորոշվածությունը:

Ինչպես արդեն նշվել է առաջին գլխում, քաղաքականությունը իշխանության իրականացման միջոցով որոշակի նպատակի միտված պետականորեն կազմակերպված գործընթաց է: Այդ իմաստով ազգային քաղաքականություն ասելով կարելի է հասկանալ ազգային նպատակների իրականացման միտված պետականորեն կազմակերպված գործընթաց:

Իսկ ի՞նչ է նկատի առնվում «ազգային» հասկացության բովանդակության տակ, արդյո՞ք բոլոր դեպքերում այն օգտագործելիս միևնույն նշանակությունն ու իմաստն է նկատի առնվում:

«Ազգային» հասկացությունը օգտագործվում է ամենատարբեր իմաստներով ու նշանակությամբ: Այն օգտագործվում է նշելու համար այս կամ այն ազգի, ազգույթի, ժողովրդի էթնիկական պատկանելիությունը, ծագումնաբանությունը, ավանդույթներն ու սովորույթները և այլն: Երբեմն օգտագործվում է նաև շատ ավելի նեղ իմաստով և նույնացվում է «ազգայնական» կամ «ազգայնամոլական» հասկացության հետ, ինչի հետևանքով բացարձակացվում է էթնիկական ծագման և պատկանելիության, արյան ընդհանրության գաղափարը և աղճատվում ու սահմանափակվում է «ազգային» հասկացության բովանդակությունն ու իմաստը:

Երբ ասում ենք ազգային դիմագիծ, ազգային լեզու, ազգային ավանդույթ և այլն, այս դեպքում իրոք նկատի ենք ունենում էթնոսի ազգային պատկանելիությանը բնորոշ հատկանիշները կամ էթնիկական հիմքի վրա ձևավորված հատկանիշները, արյան ընդհանրությունը և այլն: Այսինքն այս դեպքում այն օգտագործում ենք էթնոսին, ազգին բնորոշ հատկանիշները նշելու համար:

Սակայն «ազգային» հասկացությունը շատ ավելի լայն ընդգրկում ունի և ինչպես քաղաքագիտության մեջ, այնպես էլ քաղաքական հարաբերություններում հաճախ օգտագործվում է «պետություն» կամ «պետական» հասկացության փոխարեն, անտեսելով էթնիկական հատկանիշները: Օրինակ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ազգային շահ, ազգային հարստություն, ազգային տնտեսություն, ազգային անվտանգություն, ազգային բանակ և նման հասկացությունները, ապա այստեղ «ազգային» հասկացության բովանդակության մեջ առաջնայինը, հիմնականը ոչ թե էթնիկական հատկանիշների գաղափարն է, այլ պետության, պետականության գաղափարը: Երբ ասում ենք Անդրկովկասում Ռուսաստանը իր ազգային շահերն ունի, կամ պարսից ծոցում ԱՄՆ իր ազգային շահերն է պաշտպանում, բնականաբար նկատի չունենք ռուսների, կամ անգլիացի խոսող ամերիկացիների շահերը: Այստեղ խոսքը վերաբերում է Ռուսաստան պետության, ԱՄՆ պետության շահերին, որոնք արտահայտվում են Ռուսաստանի դաշնությունում և ԱՄՆ-ում ապրող տասնյակ ազգերի ու ազգույթների, ժողովուրդների և էթնիկական խմբերի շահեր: Ուստի պարզ է, որ այս դեպքում ազգային քաղաքականություն ասելով պետք է հասկանալ պետության քաղաքականություն, ազգային շահերը՝ պետական շահերի, ազգային անվտանգությունը՝ պետական անվտանգություն և այլն:

Հաճախ հանդիպում ենք այնպիսի արտահայտությունների, որոնց մեջ «ազգային» և «պետություն» կամ «պետական» հասկացությունները օգտագործվում են կողք-կողքի, միաժամանակ: Օրինակ ազգային պետություն կամ ազգային պետականություն, պետության ազգային շահեր, պետության ազգային քաղաքականություն և այլն:

Ազգային պետություն և պետականություն ասելիս կարելի է ենթադրել որ խոսքը վերաբերում է էթնիկական հատկանիշի հիման վրա ստեղծված պետությանը, ինչը կարող է վերաբերել նաև դաշնային (Ֆեդերատիվ) պետության մեջ որոշակի ինքնուրույնությամբ, կամ պետական կարգավիճակով օժտված (չեչեններ, թաթարներ, չուաշներ, կալմիկներ և այլն) և ազգային պետական կառուցվածք ունեցող դաշնության ասբյեկներին, որի հիմնական նպատակն է նշելու դաշնային պետության մեջ ազգային հիմքի վրա ձևավորված քաղաքական սուբյեկտի բնույթը:

Իսկ, երբ ասում ենք պետության ազգային շահեր, այս դեպքում խոսքը վերաբերում է պետության պետական շահերին, որի դեպքում «ազգային արտահայտությունը օգտագործվում է ընդամենը շահերի բնույթը (պետական) ընդգծելու համար: Որովհետև, երբ ասում ենք պետությունը իր ազգային շահերն է պաշտպանում, դա նույնն է, եթե ասենք, որ պետությունը իր շահերն է պաշտպանում: Հաճախ պետության ազգային շահեր ասելով նկատի է առնվում պետության համընդհանուր, համազգային շահերի բնույթը՝ չնայած դրա կարիքը չի գագցվում, քանզի պետության կամ պետական շահեր ասելով արդեն հասկացվում է տվյալ պետության ընդհանուր շահերը: Հավանաբար, այս երկու իրար ենթադրող՝ պետական-ազգային հասկացությունների համատեղ օգտագործման իմաստը ընդամենը պետական շահերը գերակայությունը ընդգծելու նպատակ ունի:

«Ազգային քաղաքականություն» հասկացությունը ունի նեղ և լայն ըմբռնում: Նեղ ըմբռնման դեպքում ազգային քաղաքականությունը ասելով նկատի է առնվում բազմազգ, հատկապես դաշնային պետության մեջ ազգային հարաբերությունների կարգավորմանն ուղղված պետության կողմից իրականացվող գործընթացների ամբողջությունը: Այն է, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, նրանց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար հավասար պայմաններ ստեղծում և պետական աջակցություն, էթնիկական հանրությունների քաղաքական իրավունքների և ազատությունների պաշտպանություն, պետության կազմում ազգային փոքրամասնությունների համար ազգային ինքնորոշման իրավունքից օգտվելու հնարավորության ստեղծում և այս կամ այն աստիճանի քաղաքական կարգավիճակի ճանաչում և այլն: Ուստի կարելի է նշել որ ազգային քաղաքականության նեղ ըմբռնման դեպքում խոսքը վերաբերվում է բազմազգ պետության մեջ ազգամիջյան հարաբերությունների կարգավորմանն ուղղված պետության քաղաքականությանը:

Ազգային քաղաքականության լայն ըմբռնման տակ հասկացվում է պետության ամբողջական շահերի պաշտպանությանը միտված գործընթացների ամբողջությունը (պետության տարածքների ամբողջականության պաշտպանություն, տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային համազգային խնդիրների իրագործման ճանապարհով հասարակության զարգացման ու առաջընթացի ապահովում, արտաքին հարաբերություններում պետական շահերի պաշտպանության նպատակով դաշնակիցների

գործընկերների, շուկաների ձեռք բերում և այլն): Այլ կերպ ասած, այս դեպքում խոսքը վերաբերում է պետության ընդհանուր քաղաքականությանը:

Այսպիսով, ազգային քաղաքականություն ասելով պետք է հասկանալ ինչպես հասարակության ներքին կյանքում, այնպես էլ արտաքին հարաբերությունների ոլորտում պետության կողմից մշակված ծրագրերի և դրանց իրականացմանը միտված գործընթացների ամբողջությունը:

Ազգային քաղաքականության հիմքում, սովորաբար, դրվում է պետության ամբողջականությունն ու հզորությունը ենթադրող, նրա շահերը պաշտպանող, զարգացման հիմնական ուղղություններն ու հիմնախնդիրները տեսականորեն հիմնավորվող գաղափարախոսություն: Այն, երբեմն անվանում են նաև ազգային գաղափարախոսություն, ազգային զարգացման ծրագիր, պետության ռազմավարական դոկտրինա և այլն, որում արտացոլված են լինում համազգային հիմնախնդիրները, նպատակներն ու ձգտումները և դրանց իրականացնելու հիմնական միջոցները, մեթոդներն ու ձևերը:

Ազգային քաղաքականության նեղ ըմբռնման պարագայում ազգային գաղափարախոսությունը երկակի բնույթ ունի: Մի կողմից նրանում արտացոլված է տվյալ էթնոսի ազգային նպատակներն ու իղծերը, շահերն ու իրավունքները, լեզվամտածողությունն ու մշակութային արժեքները, արժանապատվությունը, ավանդույթներն ու սովորույթները և այլն:

Մյուս կողմից, ազգային փոքրամասնությունների գաղափարախոսությունը բազմազգ (դաշնային) պետության մեջ մասն է կազմում համազգային գաղափարախոսության և բնական է, որ ազգային փոքրամասնությունների շահերը, ազատություններն ու իրավունքները, նպատակներն ու ձգտումները, կարող են իրականանալ միայն այն չափով, ինչ չափով որ համազգային գաղափարախոսության հիմքի վրա իրագործվող ազգային քաղաքականությունը կարողանում է լուծել իր առջև դրված համապետական ծրագրերը, այդ թվում և ազգային հարաբերությունների կարգավորմանն ուղղված խնդիրները: Իհարկե մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե ազգային (պետական) քաղաքականությունը մշակելիս և իրականացնելիս, ինչպես է հաշվի առնված ազգային փոքրամասնությունների շահերը, իրավունքները, ազգային առանձնահատկությունները և այլն: Եթե հասարակության մեջ հաստատվել են ժողովրդավարական սկզբունքները, պետականորեն պաշտպանված են ազգերի ազատություններն ու իրավահավասարությունը, այդ դեպքում յուրաքանչյուր ազգային միավորի, էթնիկական խմբերի նպատակներն ու ձգտումները համընկնում են համազգային գաղափարախոսության, նպատակների ու խնդիրների հետ, ներդաշնակվում և սերտաճում են նրան, ինչի հետևանքով էլ հնարավոր է լինում խուսափել ինչպես կենտրոնական իշխանությունների և ազգային փոքրամասնությունների ու նրանց տեղական կառույցների, այնպես էլ ազգերի միջև ծագող հակասություններից:

Իսկ, եթե բռնապետություն է, կամ ունիտար պետություն է, որտեղ ազգային փոքրամասնությունները զրկված են իրենց իրավունքներից օգտվելու հնարավորությունից և ենթարկված են իշխող ազգի կամքին, ապա այս դեպքում ազգային փոքրամասնությունների շահերն ու իրավունքները, նպատակներն ու ձգտումները, հետևաբար և ազգային գաղափարախոսությունը ոչ միայն մաս չէ կազմում պետության գաղափարախոսությանը, այլև միջով հակված է հակադրվել նրան և բախումներին ու հակասությունները դառնում են անխուսափելի:

Ուստի կարելի է պնդել, որ կայացած ժողովրդավարության պայմաններում ազգային փոքրամասնությունների նպատակները, շահերը, ձգտումներն ու իղծերը ամբողջացնող գաղափարախոսությունը ոչ միայն չի հակադրվում պետության համազգային նպատակներին, ու խնդիրներին, ծրագրերին, ու քաղաքականությանը, այլև լինելով նրա անհրաժեշտ բաղկացուցիչ մասը լրացնում, հարստացնում ու աջակցում է ազգային քաղաքականության իրականացմանը իր ներուժի, առանձնահատկությունների և հնարավորությունների չափով, քանզի շահագրգռված է համազգային քաղաքականության իրականացմամբ, զիտակցելով, որ պետության քաղաքականության իրականացումից է կախված և միայն այդ ճանապարհով է հնարավոր իր ազգային նպատակների, շահերի ու ձգտումների իրականացումը: Այս դեպքում ազգային գաղափարախոսությունը երկու հիմնական խնդիր է իրականացնում.

ա) միտված է սեփական ազգային արժեքների (լեզու, մշակույթ, կրոն և այլն) պահպանման ու զարգացման միջոցով ազգի ինքնության, դիմագծի գոյատևման ապահովմանը:

բ) ներդաշնակվելով ու ներառվելով պետության քաղաքականության մեջ, օգտվելով նրա նվաճումներից ու հնարավորություններից ավելի կայուն ու իրական է դարձնում ազգի զարգացումն ու առաջընթացը:

Նշենք նաև, որ բազմազգ պետության մեջ քաղաքական կայունության ապահովումը, նրա կայուն զարգացումն ու առաջընթացը շատ հաճախ պայմանավորված է լինում հենց ազգամիջյան հարաբերությունների կարգավորմանն ուղղված պետության ազգային քաղաքականության բնույթով: Որտեղ հարգվում և պաշտպանվում են ազգային փոքրամասնությունների իրավունքները, նաաստավոր պայմաններ են ստեղծվում նրանց տնտեսական, սոցիալական և ազգային մշակույթի զարգացման համար, այնտեղ հասարակությունը գերծ է մնում ազգամիջյան հակասություններից, բախումներից, կենտրոնախույզ ու անջատողական միտումներից: Իսկ, որտեղ ազգային շահերը, իրավունքներն ու ազատությունները ոտնահարվում են, որտեղ առկա են ազգային փոքրամասնությունների ճնշում ու շահագործում, այնտեղ ազգամիջյան հակասություններն են անխուսափելի և անջատողական միտումներն են ակտիվ գործում, շատ հաճախ դառնալով կենտրոնական իշխանությունների և ազգային ինքնավար միավորումների միջև առձակամասն պատճառ:

Ազգային գաղափարախոսության հիմնական խնդիրն է տալ ազգի (իսկ, եթե բազմազգ պետություն է ուրեմն ազգերի) միասնության ապահովման և ամբողջ ազգի (ազգերի) միասնական ջանքերով ազգային (պետական) հիմնախնդիրների իրականացման տեսական հիմնավորումը:

Սակայն, երբեմն պետության կողմից իրականացվող ազգային գաղափարախոսության հիմքում դրվում են ազգայնամուլական, ֆաշիստական, կրոնական արմատականության գաղափարներ, ինչը ոչ միայն չի նպաստում ազգերի միասնությանը, ազգամիջյան հարաբերությունների կարգավորմանը, այլև հաճախ լինելով իշխող ազգի կամքի պարտադրման հիմնական միջոց և ուղղված լինելով ազգային փոքրամասնությունների շահերի, իրավունքների ու ազատությունների դեմ, դառնում է ազգամիջյան, իսկ երբեմն էլ միջպետական հակասությունների սրման ու բախումների պատճառ: Սովորաբար, այդպիսի գաղափարախոսություններին բնորոշ են, կամ այլ ազգերի վրա իշխելու հավակնությունը, ինչի համար էլ այն հաճախ անվանում են նվաճողական գաղափարախոսություն, կամ իրենց ազգային բացառիկության ընդունումը, օրինակ ֆաշիզմը, սիոնիզմը, պանթուրքիզմը և այլն, կամ կրոնական արմատականությունը, օրինակ պանիսլամիզմը, վահաբիզմը և այլն:

Գոյություն ունի նաև փոքր ու թույլ ժողովուրդների ազգային գաղափարախոսություն, որը հակադրվելով նվաճողների գաղափարախոսությանը, խնդիր ունի պահպանել ազգային ինքնությունը, ազգը փրկել ծուլման և ուժացման վտանգից, ասել է թե նրա հիմնական ֆունկցիան ազգի գոյապահպանության խնդիրն է, և տվյալ դեպքում հանդես է գալիս որպես ազգի ինքնապաշտպանության կարևորագույն միջոց:

Նվաճողական գաղափարախոսության հիմնական խնդիրն է հիմնավորելու և արդարացնելու գերիշխող ազգերի տիրապետությունը թույլ ժողովուրդների վրա, պարտադրելու նրանց իրենց արժեքներն ու մշակույթը, ծուլելու, իսկ երբեմն էլ ոչնչացնելու փոքր ժողովուրդներին, այդ ամբողջը ներկայացնելով որպես քաղաքակրթության տարածում, որպես թույլ ու հետամնաց ազգերին կրթելու ու զարգացնելու առաջադիմական նպատակ: Այդպիսի գաղափարախոսության ցայտուն դրսևորում էր գաղութատեր պետությունների վարած քաղաքականությունը, որի հետևանքով հարյուրավոր ազգեր դարձր շարունակ դատապարտված էին հետամնացության ու շահագործման, քայքայման ու ոչնչացման:

Առավել վտանգավոր գաղափարախոսություն է ռասիզմը, որի հիմքում ընկած էր մարդկանց ստորին և բարձրագույն ռասաների մասին տեսությունը, մարդկանց բաժանելով երկու հիմնական խմբի՝ տերերի և ստրուկների, իշխողների և իշխվողների: Ռասիզմի գաղափարախոսության հիմնական դրսևորումներից է ֆաշիզմը, սիոնիզմը և այլն: Այս գաղափարախոսության հիմքում ընկած է նախ և առաջ ազգային բացառիկության գաղափարը, որը միտված է տվյալ ազգը (գերմանացիներ, հրեաներ) վեր դասել մյուս ազգերից և ռասաներից:

Ազգայնամուլական գաղափարախոսության դրսևորում է նաև շովինիզմը որը ելնում է փոքր ազգերի շահերը մեծ ազգերի շահերին ծառայեցնելու անհրաժեշտության ընդունումից: Այս գաղափարախոսությունը հիմնականում կիրառվում է բազմազգ պետության մեջ (հիմնականում ժողովրդավարության բացակայության պայմաններում) և նպատակ ունի ապահովել տիրապետող ազգի իշխանությունը մյուս ազգերի ու ժողովուրդների վրա: Այն շատ հաճախ իրականացվում է քողարկված ձևով, օգտագործելով ինտեր-նացիոնալիզմը, մարդու իրավունքների, ժողովուրդների բարեկամության կեղծ կարգախոսներ: Սակայն իրագործվող քաղաքականությունը հիմնականում ուղղված է ազգերի մերձեցմանն ու ձուլմանը:

Նվաճողական գաղափարախոսության դրսևորումներից են պանիսլավիզմն ու պանթուրքիզմը: Պանիսլավիզմը (համաիսլամականություն) կրոնաքաղաքական գաղափարախոսություն է, որի հիմքում ընկած է թուրքիայի գլխավորությամբ իսլամ դավանող բոլոր ժողովուրդների քաղաքական միավորման գաղափարը: Ծագելով 19-րդ դարի երկրորդ կեսերից այն ուղղված էր ոչ մուսուլման ժողովուրդների դեմ, առաջ քաշելով այն գաղափարը, որ ամենակատարյալ պետությունը մահմեդական կրոնական սկզբունքներով ստեղծված օսմանյան պետությունն է: Այն ձգտում էր մի շարք մահմեդական պետությունների (օսմանյան կայսրության, Իրան, Աֆղանստան, միջին ասիական, Յնդկաստանի մուսուլմանական մասը, Ինդոնեզիան, Աֆրիկյան մի շարք պետություններ) միավորման միջոցով ստեղծել հզոր մուսուլմանական աշխարհակալ պետություն, որի գլխին պետք է կանգնած լիներ թուրքական սուլթանը: Այն դարձնելով պետական քաղաքականության ելակետ և ձգտելով հասնել իրենց նպատակին թուրքերը ֆիզիկական ոչնչացման էին ենթարկում օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ոչ մուսուլման ժողովուրդներին (հայեր, հույներ, սլավոններ և այլն): Այդ գաղափարախոսությունը արձագանք չգտավ այլ մուսուլմանական պետություններու և բնականորեն իր նպատակին հասնել չէր կարող: Այդ գիտակցելով, թուրքերը առաջ քաշեցին թուրքիզմի գաղափարախոսությունը, որի հիմնական նպատակն էր թուրքացնել Թուրքիան, առաջ քաշելով Թուրքիան միայն թուրքերին և կարգախոսը: Այդ գաղափարախոսության վրա հենված քաղաքականությունն իրականացնելիս թուրքերը ցեղային մոլեռանդությամբ ֆիզիկապես ոչնչացնում, կամ պարտադիր դավանափոխ էին անում ոչ թուրք ժողովուրդների, ձգտելով բոլորին ուժացնել ու ձուլել թուրքերին: Թուրքիզմի գաղափարախոսությանը զուգընթաց առաջ էր քաշվում պանթուրքիզմի գաղափարախոսությունը, որը ի տարբերություն պանիսլավիզմի, որում առաջնային էր համարվում կրոնը, այստեղ առաջնային էր համարում լեզուն և ձգտում էր թուրքերի գլխավորությամբ միավորել թուրքալեզու բոլոր ժողովուրդներին և միջերկրականի ափերից մինչև Չինաստան ընկած տարածքներ վրա հաստատել համաթուրքական պետություն:

Որպես ազգային գաղափարախոսության դրսևորման ձևեր են նացիոնալիզմը (ազգայնական) ու սիոնիզմը: Հզոր ու մեծ ազգերի նացիոնալիզմը

վերջին հաշվով հանգում է շովինիզմի և ազգային բացառիկություն է քարոզում: Իր ազգը վեր դասելով մյուսներից: Փոքր ազգերի նացիոնալիզմը հիմնականում ինքնապաշտպանության նպատակ ունի, հակադրվում է շովինիզմին, արտահայտում է համազգային շահեր, նպաստում է ազգային ինքնագիտակցության զարգացմանը և դառնում է ազգի գոյատևման հիմնական երաշխիքը: Ազգայնական գաղափարախոսության մեջ ներառվում են տվյալ ազգին բնորոշ մի շարք դրական հատկանիշներ, միասնական ազգային մտածելակերպն ու հոգեբանությունը, հպարտությունն ու արժանապատվությունը, պատմական անցյալն ու մշակութային արժեքները և այլն:

Նշենք, որ ազգայնական գաղափարախոսությունը բնորոշ է գրեթե բոլոր ազգերին, ունենալով, անշուշտ, իր դրսևորման ամենատարբեր ձևերը:

Ազգային գաղափարախոսության առանձնահատուկ տեսակ է սիոնիզմը: Լինելով որպես հրեական ազգային գաղափարախոսություն, սիոնիզմը պնդում է, որ աշխարհի բոլոր հրեաները միասնական ազգ են, որ հրեաներն են ևստծո ընտրյալ ազգը, իսկ մնացած ազգերը «գոյեր» են և պետք է ծառայեն հրեաներին: Սիոնիզմի հիմքում ընկած է ինչպես արյան ընդհանրության, այնպես էլ կրոնի ընդհանրությունը՝ Եհովայի պաշտամունքը, որ Խրայելի աստվածն է համարվում: Սիոնիզմը իր դրական ազդեցությունը ունեցավ հրեա ժողովրդին միավորելու և Խրայելի պետության ստեղծման գործում, սակայն միևնույն ժամանակ բացառիկ դեր վերապահելով հրեական ազգին և արհամարհելով մյուս ազգերին ձեռք է բերել ազգատյաց բնույթ: հատկապես իր հարևան ժողովուրդների նկատմամբ:

5. Ազգային ազատագրական պայքարի հիմնական խնդիրներն ու առանձնահատկությունները արդի աշխարհում

Պարեր շարունակ հարյուրավոր ազգեր, ազգույթներ ու ժողովուրդներ ապրաբել են իրենց գոյատևման ու ապրելու իրավունքի համար, անհաշտ պայքար են մղել իրենց շահագործողների, նվաճողների ու գաղութարարների դեմ:

Վերջին 500 տարիների ընթացքում աշխարհում տեղի է ունեցել ավելի քան 275 պատերազմ, որից մոտավորապես 95-ը ունեցել է ազգային ազատագրական պայքարի բնույթ: Ոմանք պայքարել են օտարների լծից ազատագրվելու և անկախություն ձեռք բերելու համար, ոմանք էլ պայքարել են ընդամենը ոչնչանալու, չձուլվելու և իրենց ազգային ինքնությունը պահպանելու համար: Ուժեղ, կենսունակ ու կազմակերպված ազգերն ու ժողովուրդները կարողացել են ոչ միայն դիմանալ ու գոյատևել, այլև ծաղկել ու զարգանալ, ստեղծել իրենց անկախ պետությունը: Իսկ տասնյակ ու հարյուրավոր փոքր ու թույլ, տկար ու հետամնաց ազգեր, ազգույթներ ու ցեղեր Կարողանալով հակադրվել վերահաս վտանգին, կամ ենթարկվել ու դարերով ստրկացվել են նվաճողների կողմից, կամ ոչնչացվել ու անհետացել են Կատմության թատերաբեմից:

Բոլոր ժամանակներում էլ ազգային ազատագրական պայքարի հիմնական նպատակը եղել է անկախության նվաճումը, առանց որի ազգի գոյությունը միշտ էլ վտանգված է: Անշուշտ, խոսքը չի վերաբերում անպայման անկախ պետություն ունենալուն, որին շատ ազգեր ու ժողովուրդներ պարտատ չեն և չեն էլ ձգտում դրան: Անկախության ձգտումը շատ ժողովուրդների համար ազգային ինքնությունը պահպանելու, արժանապատիվ ապրելու նշանակություն ունի, թեկուզ բազմազգ պետության կազմում: Այս դեպքում ժողովուրդները, ազգերն ու ազգությունները պայքարում են իրավահավասարության, ճնշումից ու շահագործումից ազատվելու համար:

Ազգային ազատագրական պայքարը առավել մեծ վերելք ապրեց 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի առաջին կեսին և ծավալվեց ամբողջ աշխարհի հոլմ մեկ: Հասարակության զարգացման աստիճանը, համաշխարհային մասշտաբով հասարակության մեջ տեղի ունեցած քաղաքական տեղաշարժերն ու զարգացումները (համաշխարհային երկու պատերազմները (1914-1918 և 1939-1945), հեղափոխությունները, սոցիալիզմի համաշխարհային համակարգի առաջացումը և այլն, միջազգային հարաբերություններում այնպիսի փոփոխություններ էին առաջացրել, որ գաղութատիրության գոյությունը ավանդական ձևով դարձել էր անհնարին:

20-րդ դարի հիսունական թվականներին պաշտոնապես հայտարարվեց համաշխարհային գաղութատիրության փլուզման մասին: Տասնյակ ազգեր ու ժողովուրդներ երկարատև պայքարի շնորհիվ, թոթափելով գաղութային լուծը, ձեռք բերեցին անկախություն, ստեղծելով իրենց ազգային պետությունները:

Սակայն, ինչպես ցույց տվեց պատմությունը, քաղաքական անկախություն և պետականություն ձեռք բերելով, դեռևս երկար ժամանակ գաղութացված ժողովուրդները չազատվեցին ճնշումից ու շահագործումից, չդարձան ինքնուրույն ու անկախ: Քաղաքական տիրապետությանը փոխարինելու եկան փոքր ազգերի ու ժողովուրդներին ճնշելու և շահագործելու, նրանց կախյալ վիճակում պահելու նոր ձևեր ու մեթոդներ, որը ստացավ ներգաղութատիրություն անվանումը: Տասնյակ պետություններ ձեռք բերելով քաղաքական անկախություն (իսկ ոմանց էլ քաղաքական անկախությունը շնորհվեց հենց գաղութատեր պետության կողմից), մինչև այսօր էլ ֆինանսատնտեսական կախման մեջ են մնացել իրենց նախկին տերերից, կամ նրանց փոխարինած ավելի հզոր պետություններից, դառնալով վերջիններիս համար էժան հումքի և աշխատուժի աղբյուր:

Բանն այն է, որ տասնամյակներ շարունակ տիրելով տվյալ երկրին, գաղութատեր պետությունն իր ձեռքում է կենտրոնացնում այդ երկրի հիմնական տնտեսական լծակները, ազգային հարստության հիմնական աղբյուրները, ֆինանսական հիմնական միջոցները և այլն: Հետագայում ճանաչելով տվյալ երկրի անկախությունը, գաղութատեր պետությունը իր ձեռքից բաց էլ թողնում այդ երկիրը, տնտեսապես իրենց կախյալ վիճակում պահելու և նրա ազգային հարստությունը թալանելու հնարավորությունը, ինչի համար էլ

ձգտում է ցանկացած միջոցներով ինչքան հնարավոր է երկար պահել իր ներկայությունը տվյալ երկրում: Այդ նպատակին հասնելու համար էլ հենց նախկին գաղութատեր պետության իշխանությունները հովանավորում, աջակցում ու կաշառում են նախապես իրենց կողմը գրաված տվյալ երկրի ազգային վերնախավին, օգնում են նրանց զավթել իշխանությունը, որոնք հետագայում հյուսնազանգ ծառայում են իրենց տերերին: Ահա հենց այս դրածո ուժերի օգնությամբ էլ հզոր պետությունները շարունակում են իրենցից կախյալ վիճակում պահել և կողոպտել այդ երկրի ազգային հարստությունները, մինևույն ժամանակ նրանց պարտադրելով իրենց ցանկալի քաղաքականության իրականացում:

Բնական է, որ այդպիսի կախյալ վիճակը թույլ չէր տալու նորանկախ պետություններին զարգանալու, առավել ևս, որ այդ զարգացմամբ ոչ միայն շահագրգռված չէին հզոր պետությունները, այլև բոլոր միջոցներով խանգարում էին նրանց հնարավոր զարգացմանը: Առավել ծանր է այն ժողովուրդների վիճակը, որտեղ հզոր տերությունների կողմից իշխանության են բերվում ապագային դրածո ուժեր, որոնք դառնալով օտար ուժերի կամակատարներ իրենց ժողովրդին դնում են կրկնակի ճնշման և շահագործման վիճակում:

Փաստորեն գաղութատիրությունը ոչ թե վերացավ իր իրական իմաստով, այլ կերպարանափոխվեց, ձեռք բերեց ավելի «քաղաքակիրթ» ձև: Այսինքն, բացահայտ գաղութատիրությունը փոխարկվեց բողաբկված, ավելի նուրբ ու կենդանի գաղութացմամբ, քաղաքական տիրապետումը փոխարկվեց ֆինանսատնտեսական տիրապետմամբ, քաղաքական ազդեցության ոլորտները զուգակցվեցին տնտեսականով: Բռնության միջոցների (բանակ, ոստիկանություն և այլն) կիրառման փոխարեն նոր ու նախկին տերերը սկսեցին կիրառել տնտեսական ու ֆինանսական միջոցներ ու լծակներ, որը ավելի քաղաքակիրթ ու ընդունելի ձև էր համարվում: Տվյալ երկրի վրա իշխելու, տիրապետելու այդպիսի մեթոդների կիրառումը շատ ավելի էժան ու արդյունավետ էր ներգաղութատեր պետության համար, և իր տեսանելի կողմով համապատասխանում էր միջազգային ընդունված նորմերին, առավել ևս, որ ֆինանսական և տնտեսական ձեռնարկումները այս կամ այն հետամնաց երկրում միշտ էլ ներկայացվում են որպես հզոր պետության կազմից ցուցաբերած մարդասիրություն, տնտեսական օգնություն, աջակցություն և այլն:

Նշված առանձնահատկություններից ելնելով կարելի է ազգային ազատագրական պայքարի արդի դրսևորումները, ըստ նրա առջև դրված խնդիրների, բաժանել երեք հիմնական ուղղությունների:

1. Դեռևս կան ազգեր ու ժողովուրդներ (բողոք, պաղեստինցիներ, չեչեններ և այլն), որոնք ձգտում են օգտվել ազգային ինքնորոշման միջազգայնորեն ընդունված իրավունքից և դուրս գալով այն պետության կազմից, որում նրանք գտնվում են, ստեղծել իրենց ազգային անկախ պետականությունը: Այս պարագայում հարցի արդարացի լուծումն այն է, որ եթե ինքնորոշման իրավունքի սկզբունքի իրականացումը բխում է ամբողջ ազգի

շահերից և դա նրա ցանկությունն է, այլ ոչ թե որոշակի շահեր հետապնդող նեղ խմբի ցանկություն, ապա այդ ժողովուրդը պետք է օգտվի այդ իրավունքից: Սակայն, ինչպես ցույց տվեց պատմական փորձը, միջազգային քաղաքականության մեջ ազգային ինքնորոշման սկզբունքը շատ հաճախ իրականացվում է քաղաքական հզոր ուժերի հայեցողությամբ ու ցանկությամբ և բնական է, որ այդ պարագայում որոշ ժողովուրդներ զրկվում են այդ իրավունքից օգտվել միայն այն պատճառով, որ դրանում հզոր ուժերը շահագրգռված չեն, օրինակ, քրդերը՝ Թուրքիայում, պաղեստինցիները՝ Իսրայելում և այլն:

2. Բազմազգ պետության մեջ շատ ազգեր ու ժողովուրդներ պայքարում են ոչ թե տվյալ պետության կազմից դուրս գալու համար, այլ տվյալ պետության կազմում իրենց ազգային պետական կառուցվածքը ստեղծելու, որոշակի ինքնուրույնություն ունենալու միջոցով իրենց ազգային ինքնությունը մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները պահպանելու և որպես ազգայնատենելու համար: Արդեն նշել ենք, որ ազգային ինքնորոշման իրավունքը սկզբունքի իրականացման ձևերից է նաև որևէ պետության կազմում ազգային ինքնավարության ստեղծումը, որի համար և պայքարում են շատ ժողովուրդներ: Նշենք, որ ազգային պայքարի այս ձևը շատ հաճախ արդյունավետ ու առանց սուր դրսևորումների ու բախումների է լինում: Իհարկե դա չի նշանակում, որ այդ պայքարը բոլոր դեպքերում հաջողության է հասնում: Երբեմն բազմազգ պետությունը, երկրի ներսում ազգային հարաբերությունների կարգավորման և ազգամիջյան հակասությունների լուծման անհրաժեշտությունից ելնելով, ինքն է որոշակի իրավունքներ շնորհում փոքր ժողովուրդներին, ստեղծելով նրանց համար ազգային իրավունքների պաշտպանության ու նրա հետագա զարգացման որոշակի հնարավորություններ:

3. Միջազգային հարաբերությունների զարգացման արդի փուլում շատ ազգեր ու ժողովուրդներ ազգային ազատագրական պայքարի առաջին փուլում ձեռք են բերում քաղաքական անկախություն և ստեղծում են իրենց ազգային պետականությունը: Սակայն քաղաքական անկախություն ձեռք բերելով, ժողովուրդները չեն ազատվում ճնշումից ու շահագործումից և երբեմն չափազանց երկար ժամանակ գտնվում են բռնապետության կամ հզոր ուժերի դրածո իշխանությունների տիրապետության տակ: Սովորաբար, այդպիսի երկրներում իրականում կայացած է լինում ոչ թե պետությունը, այլ օտար հզոր ուժերի ակտիվ աջակցությունը վայելող իշխանախմբի իշխանությունը: Այս պարագայում տվյալ երկիրը գտնվում է ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում, սովորաբար երկրում տիրում է անօրինակաստությունը, հանցագործության աճը, կաշառակերությունն ու հովանավորությունը: Երկրի քայքայված ու հետամնաց վիճակը, ներքին ու արտաքին ճնշումն ու շահագործումը ժողովրդի վիճակը դարձնում է անտանելի, աճում է ժողովրդի դժգոհությունն ու ատելությունը տիրող կարգերի ու իշխանությունների նկատմամբ, ինչն էլ վերջին հաշվով հանգեցնում է բախման ու առճակատման, հեղափոխությունների ու քաղաքացիական պատերազմների:

որ այլ կերպ ասած, սկսվում է ազգային ազատագրական պայքարի երկրորդ փուլը, որը սովորաբար, ավելի սուր և անզիջում դրսևորումներ է ունենում: Երբեմն պատճառ դառնալով մեծաքանակ զոհերի ու մեծագույն կորուստների: Այս դեպքում ժողովուրդը պայքարում է և տեղական, և օտար տիրապետության դեմ, ձգտելով տնտեսական անկախության նվաճման ճանապարհով հասնել սոցիալական արդարության հաստատման: Այստեղ ազգային ազատագրական պայքարի հիմնական խնդիրն է քաղաքական իշխանության փոփոխման միջոցով, նախ հասնել ազգային շահեր պաշտպանող իշխանության ձևավորման, ապա նաև այդպիսի իշխանության միջոցով տնտեսական անկախության ապահովման:

6. Արցախի ազատագրական պայքարը որպես Հայ դատի բաղկացուցիչ մաս

Շատ ժողովուրդներ պատմության ընթացքում կորցնելով իրենց պետականությունը դարձրել շարունակ գտնվել են այս կամ այն, երբեմն էլ միաժամանակ մի քանի պետությունների տիրապետության տակ: Գերիշխող պետությունները նվաճված ազգին, ժողովրդին ավելի հեշտ տիրելու և իրենց կամքին ենթարկելու համար, մասնավոր այն երկրներում, որտեղ իրենց պատմական տարածքների վրա ապրել են էթնիկապես միատար ազգեր, իրենց հայեցողությամբ վերածնել են նվաճած երկիրը տարբեր վարչական տարածքների, ձգտելով զրկել տվյալ ժողովրդին միասին ապրելու և միասնական լինելու հնարավորությունից, հաճախ տեղահանելով բնիկ ժողովուրդին իրենց պատմական տարածքներից և այդտեղ վերաբնակեցնելով օտարների, հիմնականում նվաճող ազգի ներկայացուցիչների: Այդպիսի պատմական ճակատագրի բովով է անցել նաև Հայ ժողովուրդը:

Դարեր շարունակ լինելով տարբեր բռնապետությունների տիրապետության տակ Հայաստանի պատմական տարածքները, ինչպես տարբեր պետությունների միջև, այնպես էլ նույն պետության կազմում, բազմիցս ենթարկվել են նվաճողների կողմից ամենատարբեր վերածնումների: Գրաված տարածքները յուրացնելու, սեփականացնելու նպատակով նվաճող պետությունը տեղահանել է հայ ժողովրդին իր պատմական տարածքներից, ենթարկել է ֆիզիկական բնաջնջման և վերացման Այդպիսի քաղաքականություն հետևողական են իրականացնել հատկապես թուրքերը և նրանց կրտսեր եղբայրները՝ ադրբեջանցիները, որոնց ծրագրած ու իրականացրած ցեղասպանության հետևանքով այսօր առանց հայերի է մնացել արևմտյան Հայաստանը, Նախիջևանը և Արցախ աշխարհի մեծ մասը:

1918-1921թթ. բոլշևիկյան Ռուսաստանի և Երիտթուրքերի կառավարության բարեկամությունը հայ կոմունիստների ակտիվ աջակցությամբ նոր արհավիրք դարձավ Հայ ժողովրդի գլխին: Մեկ անգամ ևս Հայոց պատմական տարածքները վերածնելով ըստ բոլշևիկների և բոլշևիկացած թուրքերի հայեցողությամբ, մասնատվեց ու բաժանվեց Թուրքիայի, Ադրբեջանի և

վրաստանի միջև, մի փոքրիկ կտոր էլ Հայաստան անունով նվիրաբերվել՝ հայ կոմունիստներին, որպես նրանց դավաճանության արդարացի գին:

Հայ ժողովուրդը երբեք չի հաշտվել իր պատմական տարածքներ կորստի հետ և միշտ էլ այդ հարցը բարձրացրել է տարբեր միջազգային ատյաններում պատմական արդարությունը վերականգնելու համար, սակայն միշտ էլ բախվել է աշխարհի հզորների անտարբերությանը:

1988 թվականի փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Մայիս 31-ին հայրենիքի վերամիավորելու մասին: 1988 թվականի հունիսի 15-ի Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը արտահայտելով հայ ժողովրդի կամքը, պաշտպանեց ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի որոշումը:

Հայ ժողովրդի արդարացի պահանջին արդե՞ջանցիները պատասխանեցին Ադրբեջանի հայաշատ վայրերում (Սուվալայիթ, Բաքու, Կիրովաբադ 1 այլև) հայ բնակչության կոտորածներ կազմակերպելով, իսկ այնուհետև արդյաբեջանական խաժամուժը խորհրդային բանակի օգնությամբ **հարձակվեցի** Արցախի հայկական գյուղերի վրա, նրանցից շատերին տեղահանելու (Ճահումյանի շրջան, Գետաշենի ենթաշրջան և այլն), իրենց պատմական հայրենիքից: Այսպես 1990 թվականի սկզբներին սկսվեց հայ-ադրբեջանական պատերազմը, որը տևեց մինչև 1994 թ հաշտության կնքումը, և որը ընթացքում հայ ազատամարտիկները փայլուն հաղթանակ տարան, ազատագրելով ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև մի շարք հայկական պատմական տարածքներ:

1991 թվականի սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում հրավիրվեց ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Ճահումյանի շրջանի խորհուրդների համատեղ նստաշրջան, որտեղ ընդունվեց հռչակագիր նշված տարածքների վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծման մասին: Ամեն ինչ արվել էր օրինականության շրջանակներում, ազգային ինքնորոշման սկզբունքի և միջազգային այլ սկզբունքների համապատասխան, ինչը վավերացվել էր այդ տարածքներում անցկացված հանրաքվեով և ԼՂԻՄ-ի ու Ճահումյանի շրջանի իշխանության մարմիններով 1988-1991թթ. ընդունած որոշումներով: Սակայն ինչպես հետագայում պարզվեց, այն ոչ միայն չդարձավ Արցախյան հարցի կարգավորման եռաշխիք, այլև հարցը դարձրեց ձգձգվող ու անլուծելի: Հավանաբար, ինչ որ ուժերի (և՛ ներքին, և՛ արտաքին), ձեռնատու էր Արցախի հարցի միջազգայնացումը: Հայաստան-Ադրբեջան ներքին խնդրից այն վերածվեց միջազգային խնդրի և նրա լուծման իրավունքը վերապահվեց միջազգային ուժերին Ջանգի հայտնի է, որ ինքնորոշման սկզբունքի կիրառման ճանապարհու անկախություն ձեռք բերել հնարավոր է միայն միջազգային հանրույթի կողմից ինքնորոշվողի ընդունած որոշումը ճանաչելու դեպքում, այս դեպքում Արցախը որպես միջազգային քաղաքականության սուբյեկտ, ասել է թե՛ անկախ պետություն, ճանաչելուց հետո: Սակայն ինչպես ցույց են տվե

վերջին շրջանի միջազգային քաղաքական գաղափարները ազգային ինքնորոշման իրավունքի սկզբունքի նկատմամբ միջազգային հզոր ուժերի որե՞նց յուրահատուկ վերաբերմունքն ունեն և միշտ էլ էլնում են իրենց սեփական շահերից, ինչն էլ հարցի լուծման ժամանակ միշտ էլ առաջացնում է երկակի մոտեցում, նայած թե տվյալ դեպքում ազգային ինքնորոշման իրավունքի ճանաչումով ինչքանով են շահագրգռված հզոր պետությունները: Օրինակ, երբ արևմուտքին ձեռնադր էր հարկողային Միության կործանումը, նա չափազանց արագ ճանաչեց ԽՍՀՄ կազմից դուրս եկած հանրապետությունների անկախությունը, նույն բախտին արժանացավ նաև Հարավսլավիան: Արցախի անկախության ճանաչմամբ հզոր պետությունները ոչ մի շահագրգռվածություն չդրսևորեցին: Եվ տեղի ունեցավ այն, ինչին ձգտում էին Արցախյան հարցը միջազգայնացնել ցանկացող ուժերը: Արցախի հարցը դարձավ միջազգային հզոր ուժերի ձեռքին խաղաքարտ այս տարածաշրջանում իրենց շահերն ու ազդեցության ոլորտները պաշտպանելու համար:

Բնավ էլ արդարացված, ինչ որ տեղ էլ հասկանալի չէր, թե ինչու և ում ջանքերով 1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների խորհրդի նստաշրջանի և նույն թվականի հունիսի 15-ի ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը ԼՂԻՄ-ը Հայաստանի վերամիավորվելու մասին մի կողմ նետվեց և առաջ քաշվեց ԼՂԻՄ-ի անկախության հարցը: Չէ որ Արցախը Հայաստանին վերամիավորելու պահանջը նույնպես ազգային ինքնորոշման իրավունքի իրականացման դրսևորում էր, ինչը առաջ էր քաշվել Արցախի ժողովրդի կողմից, միջազգային բոլոր նորմերին համապատասխան և ընդամենը նպատակ ուներ վերականգնելու Հայ ժողովրդի ոտնահարված իրավունքները Այս դեպքում հարցի լուծումը կախված կլիներ երկու պետություններից, որը պետք է անպայման լուծվեր խաղաղ, թե ոչ խաղաղ ճանապարհով: Ուստի, եթե Արցախի անկախության հարցը դրված չլիներ, այն կարելի էր արդեն լուծված համարել, նույնիսկ եթե Ադրբեջանը համաձայն չէ այդպիսի լուծման հետ: Չէ որ Հայ ժողովուրդն էլ երբեք համաձայն չի եղել նրա պատմական տարածքների ապօրինի բռնազավթման, մասնատման ու այլոց նվիրման հետ: Հայ ժողովուրդը հազարավոր զոհերի և արյան գնով կարողացավ պաշտպանել իր իրավունքը, ազատագրելով իրենից ինչպե՛ս պատմական տարածքների մի մասը և վերականգնել արդարությունը ինչու՞, ուրե՞մն հարցը միջազգայնացվեց, որի արդյունքում կարող է արյան գնով ձեռք բերածը նորից կորցնել: Այսօր, արդեն, հետևելով բանակցությունների գործընթացին, կարելի է եզրակացնել որ ինչպիսին էլ լինի Ղարաբաղյան հարցի լուծումը, այն հայ ժողովրդին ձեռնադր չի լինելու, քանզի փոխզիջման տարբերակի ընդունումը արդեն նշանակում է հայ ժողովրդի ազատագրած պատմական տարածքների որոշ մասի զիջում հակառակորդին Մյուս կողմից, մենք նման մոտեցմամբ մեզանից օտարում ենք Նախնիքների հարցը և լուծությամբ ընդունում ենք նրա մեկընդմիշտ կորուստը:

ղակի ազգի ոչնչացման ու վերացման բնույթը ըստ իրենց նկատմամբ դրսևորած վերաբերմունքի էլ ճնշված ազգերի մոտ ժամանակի ընթացքում համապատասխան վերաբերմունք է ձևավորվում իշխող ազգերի նկատմամբ: Երբ հակասությունների բնույթը տնտեսական կամ քաղաքական բնույթ է, ապա դրանց հաղթահարումից հետո երկու նախկինում հակադիր ազգերի միջև կարող են հաստատվել նորմալ, նույնիսկ բարեկամական հարաբերություններ: Այդպիսի օրինակներ շատ են. Անգլիա-Կանադա, Յնդկաստան-Պորտուգալիա-Բրազիլիա, Իսպանիա-Արգենտինա, Մեքսիկա, Հայաստան-Պարսկաստան, Ֆրանսիա-Ալժիր և այլն: Իսկ, երբ իշխող ու ճնշված ազգերի միջև հարաբերությունները կրել են հալածելու, իրավազուրկելու, ստորացնելու ու ոչնչացնելու բնույթ, ապա այս դեպքում ճնշված ազգերի պատմական հիշողությունը երկար ժամանակ թույլ չի տալիս մոռացության մատնեկրած վիրավորանքներն ու ստորացումները, կորուստներն ու կոտորածները ինչի հետևանքում առաջանում է հակակրանք ու ատելություն իշխող ազգի նկատմամբ, ինչը պատմական հիշողության միջոցով միշտ փոխանցվում հաջորդ սերունդներին, և այդ ամրագրված հիշողությունը երկար ժամանակ խանգարում է ազգերի միջև համերաշխության ու խաղաղության հաստատմանը: Օրինակ՝ Հայաստանը եղել է և Պարսկաստանի, և Ռուսաստանի, և Թուրքիայի տիրապետության տակ: Սակայն ոչ Պարսկաստանի, որ Ռուսաստանի, առավել ևս այդ երկրների ժողովուրդների նկատմամբ Հայ ժողովուրդը երբեք ատելություն չի ունեցել և այսօր էլ հակված է լավագույն բարեկամական հարաբերություններ հաստատել նրանց հետ: Սակայն Թուրքերի անմարդկային վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ, կազմակերպված ջարդերը, իրագործած ցեղասպանությունը և դրանից ցնկիկաբար իրաժարումը հայ ժողովրդի պատմական հիշողության, հոգեբանության, մտածողության, հավանաբար նաև արյան քիչներում ատելություն են առաջացրել մարդկային այդ տեսակի նկատմամբ, հավանաբար երկար ժամանակ չկարողանալով ներել իրեն հասցված անբուժելի վիրավորանքներն ու կորուստները: Այնպես, որ հայ-թուրքական հակասությունների հիմքում ճնշված երկու պատճառներն էլ հավասարապես առկա են:

Ազգամիջյան հակասությունների պատճառ կարող են լինել նաև ազգային և կրոնական պատկանելիության գործոնները:

Թուրքիայի տիրապետության տակ եղած բոլոր ժողովուրդներն էլ (հայեր, հույներ, քրդեր, ասորիներ և այլն) ենթարկվել են ազգային հալածանքի, այն էլ պետականորեն կազմակերպված և ծրագրված ձևով, ինչը թուրքիզմի գաղափարախոսության իրականացման հիմնական դրսևորումն էր, որի հիմնական նշանաբանն էր Թուրքիան - թուրքերին կարգախոսը: Հետևաբար, այդ ժողովուրդների հալածանքը Թուրքիայում մեկ հիմնական պատճառ ունեթուրք չլինելը, այսինքն ազգային պատկանելիությունը, ինչը երբեմն ուղեկցվել է նաև կրոնական գործոնով: Հայերին, Հույներին թուրքերը կոտորում էին ոչ թե նրա համար, որ նրանք քրիստոնյա էին, այլ նախ և առաջ նրա համար, որ նրանք թուրք չէին, այլ ազգ էին: Թուրքերը այսօր կոտորում են քրդերին:

չնայած նրանք մուսուլմաններ են, կոտորում են, որովհետև Թուրք չեն, այսինքն ազգային պատկանելիության պատճառով:

Ազգային հալածանքի այս դրսևորումը ամրագրվելով հալածված ազգերի հիշողության մեջ, իրական պատճառ է դառնում ազգամիջյան հակասությունների առավել սուր դրսևորումների (հակակրանքի, ատելության, անհանդուրժողականության) համար:

Այնպես, որ ազգային պատկանելիության և կրոնական գործոնի հիմքի վրա ծագած հակասությունները բնորոշ են գրեթե բոլոր երկրներին: Սակայն նկատելի է, որ ժողովրդավարության սկզբունքներով գործող պետություններում այն շատ թույլ է արտահայտված և կախված ժողովրդավարության սկզբունքների հաստատման մակարդակից ազգամիջյան հակասություններն էլ իրենց տարբեր դրսևորումներն են ունենում: Իսկ այն երկրներում, որտեղ ժողովրդավարությունը դեռ չի հաստատվել կամ ձևական բնույթ է կրում, այդ երկրներում ազգային պատկանելիության և կրոնական գործոնը ազգամիջյան հակասությունների առաջացման եական պատճառ են դառնում: Անշուշտ, ազգամիջյան հակասությունների մեջ որոշակի տարբերակում է նկատվում զարգացած և հետամնաց երկրներում, նրանցում եղած մշակութային արժեքների, ավանդույթների ու սովորույթների, ազգային առանձնահատկությունների տարբերությունները կարող են նպաստել ինչպես ազգամիջյան հակասությունների սրմանը, այնպես էլ թուլացմանն ու վերացմանը:

Վաղուց անցել են այն ժամանակները, երբ ազգերի ու պետությունների միջև ծագած հակասությունները համարվում էին նրանց ներքին գործը, և նրանք էին պարզաբանում իրենց հարաբերությունները, հիմնականում հարցը լուծելով ի օգուտ ուժեղի:

Այսօր աշխարհում չկան մեկուսացված պետություններ և ցանկացած տեղական բնույթի ծագած ազգամիջյան հակասություն, լինի դա հարևան պետությունների միջև, թե բազմազգ պետության մեջ ազգային պետական կազմավորումների և կենտրոնական իշխանությունների միջև, իսկույն դառնում են միջազգային հանրույթի քննարկման և հետաքրքրության առարկա: Բնան այն է, որ յուրաքանչյուր պետություն ՄԱԿ-ի, այս կամ այն միջազգային կազմակերպության, միջպետական միավորումների ու դաշինքների անդամ է, տնտեսական և քաղաքական հարաբերություններով կապված է շատ երկրների հետ, ինչի շնորհիվ, ինչպես ինքն է դառնում այդ դաշնակից երկրների շահերի ու ազդեցության ոլորտը, այնպես էլ այդ պետություններն են դառնում նրա շահերի և ազդեցության ոլորտը: Այնպես, որ ցանկացած պետության մեջ տեղի ունեցող իրադարձությունն այսպես, թե այնպես շոշափում է այդ պետության դաշնակիցների շահերը, ինչը անտարբեր չի թողնում նաև այն միջազգային կազմակերպություններին, որին անդամակցում է տվյալ պետությունը: Առավել ևս, որ ցանկացած տեղային բնույթի ազգամիջյան կամ միջպետական հակասություններ, վերածվելով պատերազմի, կարող են հակասության մեջ ներթափել կողմերի դաշնակիցներին և տեղային բնույթի անտերազմները կարող են վերածվել պետական խմբավորումների միջև

պատերազմի, ինչը կարող է տանել դեպի համաշխարհային պատերազմի որը ոչ մի կերպ թույլ տալ չի կարելի, քանզի այն կարող է դառնալ արդի քաղաքակրթության վերջին պատերազմը, դառնալով մարդկայի հասարակության կործանման պատճառ:

Ահա, այս վտանգի գիտակցումից ելնելով էլ միջազգային հանրության հանձինս ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների, որի մեջ միաշարքում են աշխարհի գրեթե բոլոր պետությունները, մշակել և ընդունել են մի շարք միջազգային նորմեր ու սկզբունքներ, որոնք պարտադիր լինելով բոլոր պետությունների համար, դարձել են ազգամիջյան և միջպետական հակասությունների կարգավորման հիմնական միջոցներ: Այդպիսի սկզբունքներից են մարդու իրավունքների պաշտպանության, ազգային ինքնորոշման իրավունքի, տարածքային ամբողջականության պահպանման, պետությունների ներքին գործերին չմիջամտելու, ծագած հակասությունները խաղաղ բանակցությունների ճանապարհով կարգավորելու սկզբունքները: Այսօր այդ սկզբունքների կիրառման միջոցով փորձ է արվում կարգավորել նաև Արցախյան խնդիրը:

Գրականություն

1. Иркин Ю.В., Зотов В.Д., Зотова Л.В. Политология М. 1999
2. Панарин А.С. Политология М. 1999
3. Политология. Под ред. А.А. Радугина М. 1999
4. Политология. Под ред. Д.С. Клементьева М. 1997
5. Политология: Энциклопедический словарь. М. 1993
6. Политическая культура: теория и национальные модели. М. 1994
7. Поздняков Э.А. Геополитика. М. 1995
8. Права человека. Сборник международных договоров. Том 1, часть 1 ООН. Женева
9. Тошенко Ж.Т. Социология. М. 1995
10. Семегин И.Ю. Политическая стабильность общества. М. 1997
11. Հարությունյան Է. Ա. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ Եր. 2000.

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՉՈՐՍԵՐՈՐԴ

Անհատը և քաղաքականությունը: Քաղաքական լիզեռություն և քաղաքական վեոնախավ (Ելիտա)

1. Անհատը որպես քաղաքականության սուբյեկտ և օբյեկտ

Անհատի ըմբռնումը ինչպես հասարակության զարգացման տարբեր փուլերում, այնպես էլ հասարակական տարբեր գիտություններում տարբեր է: Հին աշխարհում Արիստոտելը մարդուն համարում էր քաղաքական էակ, ելնելով այդ ժամանակներում հունական քաղաք պետությունների կառավարման գործերին քաղաքացիների ազատ ու ակտիվ մասնակցության իրողությունից: Միջին դարերում մարդը հիմնականում դիտվում էր որպես կրոնական էակ, ինչը արդյունք էր եկեղեցու անսահմանափակ իշխանության հաստատման և հասարակության մեջ կրոնական նորմերի տիրապետմանը: Վերածննդի ժամանակաշրջանի ազատության և հումանիզմի գերիշխող մտածելակերպը մարդուն համարում էր որպես բնության զարգ. Բնորոշելով նրան որպես բանական էակ՝ Մեր ժամանակներում լսելի են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են առևտրական մարդ, գործարար մարդ և այլն:

Փիլիսոփայության մեջ անհատ է համարվում ինքնագիտակցությամբ օժտված մարդը, հոգեբանները անհատ են համարում բոլոր մարդկանց առանց տարիքային տարբերության:

Քաղաքագիտության մեջ անհատի և հասարակության փոխհարաբերությունները ուսումնասիրվում է իշխանության և իշխանական հարաբերությունների նկատմամբ անհատի վերաբերմունքին և դրսևորած քաղաքական վարքագծին առնչվող հարցերը: Այս դեպքում, խոսքը վերաբերում է, ոչ թե ընդհանրապես անհատին, նույնիսկ եթե նա օժտված է բարձր ինքնագիտակցությամբ, այլ այնպիսի անհատի, որի գործունեությունն ու վարքագիծը ուղղակիորեն առնչվում են քաղաքականությանը, այսինքն կապված են իշխանության և իշխանական հարաբերությունների ողջ համակարգի հետ, սկսած իշխանության ձևավորման գործըվթացից, նրա գործունեության վրա ազդելուց մինչև իշխանության լծակների օգտագործման ողջ համակարգը: Հետևաբար, այստեղ խոսքը վերաբերում է քաղաքական անհատի մասին:

Այսօր հասարակության ժողովրդավարացման պայմաններում առավել շատ խոսվում է քաղաքական անհատի մասին, որպես հասարակության քաղաքական կյանքի ամենակարևոր և ազդեցիկ մասնակցի: Սակայն պարզ է, որ մարդը միշտ և ցանկացած տարիքում չէ, որ մասնակից է դառնում հասարակության մեջ տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին և գործընթացներին, և միշտ չէ, որ գիտակից ու ակտիվ մասնակցություն է ունենում դրանց: Ուստի քաղաքական անհատի մասին խոսելիս, պետք է նկատի ունենալ անհատի կոնկրետ վերաբերմունքը քաղաքականության նկատմամբ, քաղաքական գործընթացներում նրա գիտակցված ներառվածությունը, նրա քաղաքական հասունությունն ու ինքնագիտակցությունը:

բաղաբաղական վարքագծի դրսևորման առանձնահատկություններն ու շարժառիթները և այլն: Երբ Կանտը ասում էր, որ մարդը անհատ է դառնույ շնորհիվ ինքնագիտակցության, որը նրան տարբերում է կենդանիներից և թույլ է տալիս հր «ես»-ը ազատորեն ենթարկել բարոյական օրենքների անստիճանական կարելի է վերագրել բաղաբաղական անհատին, որովհետև հասարակության մեջ հաստատված սկզբունքների ընդունումը կարող է մերժումը և դրանց գիտակցված ենթարկվելու կամ ընդդիմանալու անհրաժեշտությունը նախ և առաջ անհատի բաղաբաղական վարքագծի դրսևորում է քանզի այդ ձևով անհատը մի կողմից ակտիվորեն ազդում է հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացների վրա, մյուս կողմից այդպիսի վարքագծի դրսևորմամբ նպաստում է հասարակության մեջ հաստատված արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Հասարակության զարգացման յուրաքանչյուր պատմական փուլում անհատի և բաղաբաղականության, մարդու և իշխանության փոխհարաբերություններն իրենց առանձնահատուկ դրսևորումներն են ունենում:

Նշենք, որ ինչպես անհատը, այնպես էլ բաղաբաղականությունը միշտ չեն եղել: Սկզբնական շրջանում, երբ հասարակական կյանքը կարգավորվել էր կառավարվել է ավանդույթներով, սովորույթներով, ծեսակատարումներով և այլն, չի եղել բաղաբաղական իշխանություն, ուստի չի եղել նաև բաղաբաղականություն: Որը բաղաբաղական իշխանության կողմից իրականացվող գործընթաց է մյուս կողմից մասնակց մարդը եղել է տոհմի, ցեղի սովորական անդամ չունենալով անգամ իր անունը և որպես ինքնագիտակցի էակ կայացած չի եղել, ուստի որպես անհատ հանդես գալ էր կարող:

Գետնագայում, երբ զարգանում է տնտեսությունը, առաջանում է հավելյալ արդյունքը, աշխատանքի անհատական բաժանումը և մասնավոր սեփականությունը դրան գուցա հեռաբար ձևավորվում է սոցիալական անհատականությունը, անհատը իր առանձնահատկություններով, շահերով ու նպատակներով: Եվ այն այս փոփոխությունները միաժամանակ բարդացնում են հասարակական կյանքը, որը անհրաժեշտաբար պահանջում է նրա կանոնադրված կազմակերպում, որն արդեն իրականացվում է որոշակի իրավապահ նորմերի և օրենքների համակարգի կիրառման շնորհիվ, որով էլ սկիզբ է դրվում բաղաբաղական իշխանության իրականացման: Այսպես առաջանում է բաղաբաղականությունը, որի առանձնահատկությունն ու հիմնական դերը հասարակության մեջ առանձին անհատների ու սոցիալական խմբերի տարաբնույթ շահերի ու նպատակների համաձայնեցումն ու ներդաշնակումն է ինչը սկիզբ է դրում անհատի ինքնուրույնության պահանջմունքը բավարարելու և հասարակության ամբողջականությունը պաշտպանելու համար: Եվ է՞, բաղաբաղականությունն ու անհատը առաջացել են պետության առաջացման և գործառնման հետևանքով:

Այն ժամից սկսած, երբ հասարակության կյանքի կազմակերպումը տեղի է ունենում բաղաբաղական իշխանության իրականացման միջոցով, այդ պայմաններում անհատը դառնում է բաղաբաղականության և՛ սուբյեկտ, և՛ օբյեկտ:

Որպես բաղաբաղականության սուբյեկտ, անհատը և նրա տարբեր միավորումները հասարակության բաղաբաղական կյանքին գիտակցից ու ակտիվ մասնակցություն են ունենում և որպես բաղաբաղական իշխանության կրող, և՛ որպես իրականացնող, քանզի նա է միայն օժտված իշխանությամբ: Իսկ, երբ նա հանդես է գալիս որպես բաղաբաղականության սուբյեկտ, այդ դեպքում անհատը դառնում է բաղաբաղականության օբյեկտ, եթե նույնիսկ նա դա չի ցանկանում, կամ փորձում է հեռու մնալ բաղաբաղականությունից ու չառնչվել նրան: Այստեղից էլ այն արտահայտությունը, որն ասում է. նա ով չի զբաղվում բաղաբաղականությամբ, բաղաբաղականությունն է զբաղվում նրանով:

Հասարակության զարգացման արդի, հատկապես ժողովրդավարության սկզբունքների հաստատման պայմաններում, բաղաբաղականության սուբյեկտ են դառնում երկրի գրեթե ողջ հասուն բնակչությունը, ինչպես այս կամ այն մարդկային հսկողության (դասակարգի, բաղաբաղական կուսակցության, արիստոկրատիայի և այլն) անդամ լինելով, այնպես էլ որպես անհատ, մասնակցելով իշխանության ձևավորման և իրականացման գործընթացներին:

Անհատների բաղաբաղական ակտիվության դրսևորման աստիճանը տարբեր է: Մակայն ակնհայտ է այն հանգամանքը, որ ժողովրդավարության ժամանակ բոլոր պայմանները ստեղծվում են, որ անհատը մեկուսացված չլինի բաղաբաղականությունից և նրան մասնակցի կամ որպես բաղաբաղականության սուբյեկտ, կամ որպես բաղաբաղականության ակտիվ օբյեկտ, որն ընդունակ է և հնարավորություն ունի ազդելու բաղաբաղականության սուբյեկտի գործունեության վրա: Անհատի և բաղաբաղականության փոխհարաբերությունն այնպիսին է, որ ինչքան քիչ անհատներ են մասնակցում բաղաբաղականությանը որպես նրա սուբյեկտ, այնքան մեծ չափով անհատներ դառնում են բաղաբաղականության օբյեկտ և օգտագործվում մյուս բաղաբաղական սուբյեկտների կողմից:

Անհատների մի մասը բաղաբաղական բարձր ակտիվություն է դրսևորում, մյուսները՝ համեմատաբար ցածր աստիճանի ակտիվություն, երրորդները ընդհանրապես խուսափում են բաղաբաղականությունից: Բաղաբաղականությունից մեկուսանալու ցանկությունը հիմնականում արդյունք է այն բանի, որ բաղաբաղական գիտակցության բացակայության կամ ցածր աստիճանի պայմաններում անհատը դեռևս չի գիտակցում իր դերն ու նշանակությունը բաղաբաղական գործընթացներում, ուղղակի կապ չի տեսնում իր գործունեության, հնարավորությունների օգտագործման և հասարակության մեջ տեղի ունեցող բաղաբաղական փոփոխությունների միջև:

Անհատների բաղաբաղական տիպերը առանձնացնելիս կարելի է հիմք ընդունել ինչպես նրանց դրսևորած բաղաբաղական վարքագիծը, այնպես էլ բաղաբաղականությանը մասնակցելու աստիճանը: Բաղաբաղական վարքագիծը կարող է գոյություն ունեցող կարգերի և բաղաբաղական համակարգի նկատմամբ լինել ինչպես կառուցողական, այնպես էլ մերժողական բնույթի: Առաջին դեպքում մենք գործ ունենք գոյություն ունեցող բաղաբաղական համակարգը պաշտպանող անհատի հետ, երկրորդ դեպքում՝ բաղաբաղական համակարգը

մերժող անհատի հետ՝ Այս երկու տարբեր ծայրահեղությունների միջև առկա է քաղաքական համակարգի նկատմամբ տատանվող, կամ որևէ վարքագիծ ու վերաբերմունք չդրսևորվող մեծ գանգված, որոնք էլ հիմնականում հանդիսանում են քաղաքականության օբյեկտներ

Քաղաքականությանը ակտիվ կամ պասիվ մասնակցության աստիճանները կարող են ծայրահեղորեն տարբերվել իրարից, սկսած գոյություն ունեցող կարգերի պաշտպանության կամ կործանման համար կատաղի պայքարից մինչև քաղաքականության նկատմամբ չրիվ անտարբերություն ու քաղաքական մեկուսացումը: Ըստ քաղաքականության նկատմամբ դրսևորված վերաբերմունքի կարելի է տարբերակել անհատների հետևյալ տիպերը. ակտիվիստներ, իրավասու դիտորդներ, իրավասու քննադատներ, պասիվ քաղաքացիներ, ապաքաղաքականացված անհատներ և քաղաքականությունից օտարված անհատներ: Հին աշխարհի փիլիսոփա Պերիկլը (430 թ. մթա) հավանաբար այս հանգամանքն է նկատի ունեցել պնդելով, որ քչերն են քաղաքականություն արարում, սակայն նրա մասին դատողություններ կարող են անել բոլորը:

Ս.Վեբերը ըստ քաղաքական վարքագծի շարժառիթների և նպատակներ առանձնացնում էր քաղաքական անհատների երկու հիմնական տիպեր.

1) քաղաքականության համար ապրողներ, 2) քաղաքականության հաշվին ապրողներ: Առաջինները ձգտում են իշխանության, նպատակ ունենալով կատարելագործել հասարակական հարաբերություններն ու հասարակության կյանքը, այդ ձևով ձգտելով ծառայել հասարակությանը երկրորդներ իշխանությունը դիտում են որպես հարստության և փառքի աղբյուր: Երբեմն այս երկու ծայրահեղ տիպական առանձնահատկությունները համատեղվում են միևնույն անհատի մեջ: Այս դեպքում մարդը կարող է միևնույն ժամանակ ձգտել ինչ որ լավ բան անել հասարակության համար չմոռանալով նաև իր սեփական շահերը: Ըստ երևույթին հասարակության համար ավելի շահեկան է, երբ անհատը ակտիվ քաղաքական գործունեություն է ծավալում հանուն հասարակության չմոռանալով նաև իր շահերը, եթե իշխանությունը կաշտոնական դիրքը չի ծառայեցվում սեփական շահերին և չի շրջանցվում օրենքը:

Անհատի քաղաքական վարքագիծը դրսևորվում է տարբեր ձևերով և միջոցներով: Այն կարող է դրսևորվել քաղաքական շարժումների, քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների ու սոցիալական խմբերի գործունեության մասնակցելով: Կարող է իրականացվել նաև անհատական գործունեության միջոցով, օրինակ ընտրությունների ընթացքում կամքի ազատ դրսևորմամբ և այլն:

Ըստ քաղաքականությանը մասնակցելու բնույթի կարելի է առանձնացնել անհատների հետևյալ տիպեր

1. Քաղաքական կյանքին հարաբերականորեն ինքնուրույն շարքայիս մասնակիցներ: Մարդկանց այս տիպին են պատկանում նրանք, ովքեր քաղաքականությամբ հատուկ չեն զբաղվում և քաղաքական կազմակերպու-

թյուններում և միություններում որևէ պաշտոն չեն զբաղեցնում, սակայն քաղաքական նշանակալից գործընթացներին, ասենք միտինգներին, ընտրություններին մասնակցում են, դրսևորելով որոշակի ակտիվություն:

2. Անհատ, որը որևէ քաղաքական կազմակերպության ներկայացուցիչ է: Այստեղ մարդու դերը և անելիքները բխում են նրա կարգավիճակից: Լինելով այս կամ այն քաղաքական կազմակերպության անդամ, անհատը կամավոր ստանձնում է որոշակի հանձնարարականներ և պարտավորություններ, որոնց իրականացման համար դրսևորում է համապատասխան ակտիվություն: Զանգի ստանձնած պարտավորությունների կատարումը անհատի համար գիտակցված անհրաժեշտություն է: Մյուս կողմից, լինելով քաղաքական կազմակերպության անդամ, անհատը պարտավոր է կատարել տվյալ կազմակերպության կանոնադրությունը, ծրագիրը, որոշումներն ու նախատեսումները: Նշենք, որ անհատների այս տիպերը աչքի են ընկնում նախ և առաջ որպես գաղափարական անհատներ, և հենց այդ գաղափարների մարմնավորման համար էլ նրանք բարձր քաղաքական ակտիվություն են դրսևորում:

3. Անհատներ, որոնք հանդես են գալիս որպես քաղաքական լիդերներ: Անհատի այս տիպը ինչ որ քաղաքական շահեր իրականացնելու նպատակով ընդունակ է ազդելու այլոց վրա և իշխանության որոշակի ֆունկցիաներ իրականացնելով նրանց մղել որոշակի գործողության: Խոշոր քաղաքական լիդերները հանդես են գալիս որպես առաջնորդներ, որոնք, սովորաբար, վայելում են մեծ հեղինակություն, վստահություն ու հավատ և օժտված են գանգվածներին իրենց հետևից տանելու ընդունակությամբ:

Կանգ առնենք անհատի առաջին տիպի ընկարկման վրա, քանի որ, անհատի երկրորդ տիպի մասին խոսվել է կուսակցություններին վերաբերող գլխում, իսկ երրորդի մասին կխոսվի ստորև:

Ինքնուրույն շարքային անհատը ոչ քաղաքական լիդեր է, ոչ քաղաքական ֆունկցիոներ (կատարող), և նրա համար քաղաքականությունը ոչ ապրուստի միջոց է, ոչ էլ մասնագիտություն: Այդպիսի անհատների քաղաքական ակտիվության աստիճանի վրա տարբեր գործոններ են ազդում, որոնց մեջ կարևորվում են մարդկանց սոցիալատնտեսական կենսագործունեության պայմանները: Այստեղ մարդկանց վարքագծի գլխավոր շարժառիթը տնտեսական պահանջմունքներն ու շահերն են: Թերևս դա է պատճառը, որ հասարակության մեջ քաղաքական պայքարը վերջին հաշիվով տանում է դեպի սեփականության տիրապետման և օգտագործման իրավունքի հաստատմանը: Մարդկանց քաղաքական ակտիվ վարքագծի դրսևորման գործոններ կարող են լինել նաև ինքնահաստատման ձգտումը, որոշակի արտոնությունների, գնահատման, պարգևատրման, խրախուսման արժանանալու ձգտումը և այլն:

Անհատի քաղաքական վարքագծի վրա մեծ ազդեցություն է գործում հասարակական քաղաքական համակարգը: Քաղաքական ակտիվության դրսևորման առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվում ժողովրդավա-

րական քաղաքական համակարգում, որտեղ անհատը լայն հնարավորություններ ունի դրսևորելու քաղաքական ակտիվություն, մասնակից դառնալով հասարակության քաղաքական կյանքի զարգացումներին:

Անհատի քաղաքական վարքագծի վրա նշանակալից ազդեցություն գործում նաև քաղաքական կոլտուրայի զարգացման աստիճանը, առաջի հերթին այնպիսի արժեքներ, ինչպիսիք են գաղափարախոսությունը, քաղաքական ավանդույթներն ու սովորույթները, պատմամշակութային արժեքների համակարգը և այլն: Դրանք կարող են և՛ նպաստել անհատի քաղաքական ակտիվության դրսևորմանը, և՛ արգելակել այն:

Բացի նշված գործոններից անհատի քաղաքական վարքագծի վրա ազդում են բազում այլ գործոններ. ասենք միջազգային իրադրությունը, մտայն ծելակերպը, քաղաքական կողմնորոշումը, գիտակցության աստիճանը այլն:

Անհրաժեշտ է նշել նաև, որ անհատի քաղաքական ակտիվության դրսևորման գործոնները կրում են կոնկրետ պատմական, գաղափարական և քաղաքականության պայմանների կնիքը և ամեն մի կոնկրետ դեպքում անհատի քաղաքական վարքագիծը իր դրսևորման որոշակի առանձնահատկություններն ունի: Այս տեսանկյունից կարելի է խոսել նաև տարբեր ժամանակաշրջանների և տարբեր քաղաքական համակարգերի անհատների տիպերի մասին:

2. Անհատի քաղաքական սոցիալականացումը

Անհատի քաղաքական վարքագծի տարբեր աստիճանի դրսևորումներ կարևորագույն պայմաններից է նաև քաղաքական սոցիալականացումը՝ Ամենաընդհանուր ըմբռնմամբ անհատի սոցիալականացումը մարդացման գործընթացն է, որի ընթացքում մարդը կենդանի էակից աստիճանաբար վերածվում է հասարակական էակի:

Չնայած գիտական գրականության մեջ անհատի սոցիալականացման խնդիրների վերաբերյալ չափազանց առատ վերլուծությունների, այնուհամ դերձ, միանշանակ ընթրում չկա: Մի դեպքում նրա բովանդակությունը հավելված է դաստիարակությանը, մեկ այլ դեպքում անհատի ձևավորմանը ինչը հեռու չի ճշմարտության որոշակի չափաբաժնից:

Այդ գործընթացի բարդ ու բազմակողմանի բնույթը անհրաժեշտություն է դարձրել այդ երևույթի տարբեր տեսանկյուններից ուսումնասիրման, որոնք բաղվում են տարբեր հասարակական գիտությունների:

Ըստ փիլիսոփաների սոցիալականացումը մարդկային անհատի կողմից որոշակի գիտելիքների, նորմերի և արժեքների համակարգի յուրացման գործընթաց է, որը թույլ է տալիս նրան գործառնել որպես հասարակության լիիրավ անդամ:

Հոգեբանները սոցիալականացումը դիտում են որպես անհատից (հոգեբանները անհատ են համարում մարդում ընդհանրապես, առանց տարիքա-

յին տարբերության), անձի ձևավորման ու զարգացման գործընթաց, սկսած մարդու ծնված օրվանից մինչև սոցիալ հոգեբանական հասունությունը: Ըստ հոգեբանների, այս գործընթացը ընթանում է սոցիալական խմբերում և հանգեցնում է անհատի կողմից գիտելիքների, սոցիալական վարքի ձևերի, լեզվի, հմտությունների, բարոյական և իրավական սկզբունքների, արժեքների ու նորմերի, սոցիալական դերերի և գործունեության տեսակների, հաղորդակցման հմտությունների յուրացմանը:

Ըստ սոցիոլոգիայի սոցիալականացումը անհատի կայացման գործընթաց է, որի ընթացքում անհատը աստիճանաբար ձեռք է բերում գիտակցության և վարքի հասարակական նշանակությամբ բնորոշ գծեր, որոնք կարգավորում են նրա և հասարակության փոխհարաբերությունները: Ըստ սոցիոլոգների անհատի սոցիալականացումը սկսվում է նրա ծնված օրվանից և վերջանում է մարդու քաղաքացիական հասունության շրջանում: Այսպիսի տեսակետը կարելի է վիճարկել:

Այն, որ մարդու սոցիալականացման գործընթացը սկսվում է նրա ծնված օրվանից, անվիճելի է: Բայց մարդու վարքն ու գիտակցությունը անընդհատ զարգանում ու փոփոխվում են նրա ողջ կյանքի ընթացքում, ինչը թելադրված է հասարակության անընդհատ զարգացման ու առաջընթացի պահանջով: Մյուս կողմից չի կարելի մարդու քաղաքացիական հասունությունը սահմանափակել տարիքային գործոնով: Քաղաքացիական հասունությունը ավելի շատ ենթադրում է մարդու քաղաքական գիտելիքների, կողմնորոշումների որոշակի համակարգ, որը նրան թույլ է տալիս իր տեղը ճշտելու հասարակության մեջ, ակտիվ մասնակցություն ունենալու հասարակության քաղաքական կյանքում տեղի ունեցող իրադարձություններին, գիտակցելով այդ մասնակցության անհրաժեշտությանը:

Անհատի սոցիալականացումը ենթադրում է մարդկային սոցիալական փորձի փոխանցում սերունդներին, ինչն էլ ժառանգականությունը, ավանդույթների պահպանումն ու յուրացումը դարձել են մարդկանց ամենօրյա կյանքի անբաժանելի մասը: Դրանց միջոցով նոր սերունդը հաղորդակցվում է հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր բնագավառների խնդիրներին և դառնում է դրանց լուծման մասնակից:

Անհատի սոցիալականացումը կապված է մարդու աշխատանքային, հասարակական-քաղաքական և ճանաչողական գործունեության հետ: Բավարար չէ, որ մարդը միայն գիտելիքներ ձեռք բերի: Անհրաժեշտ է, որ այդ գիտելիքները վերածվեն համոզմունքների և դառնան մարդու գործողությունների ուղեցույցը, քանզի միայն իր գիտելիքների մեջ համոզված լինելու դեպքում է մարդը ձգտում դրանք մարմնավորել պրակտիկ գործունեության ընթացքում:

Այսպիսով, անհատի սոցիալականացումը, ըստ էության, մարդու կողմից այն հասարակական հարաբերությունների յուրացման յուրահատուկ ձևն է, ինչը տեղի է ունենում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Արդի պայմաններում անհատի սոցիալականացման գործընթացը նոր պահանջներ է ներկայացնում Դա պայմանավորված է նրանով, որ այսօր հասարակության սոցիալտնտեսական, քաղաքական և հոգևոր կյանքի արմատական փոփոխությունները կարող են կատարել միայն կրթված, մասնագիտական մեծ հմտություններ ունեցող և բարձր գիտակցական մակարդակով անհատները: Միայն հասարակության մեջ արմատական փոփոխությունների անհրաժեշտությունը գիտակցող և դրանում համոզված մարդն է ընդունակ ակտիվորեն ներառվել վերափոխումների գործընթացներում:

Անհատի սոցիալականացման չափազանց բարդ գործընթացը պահանջում է մարդու գոյության միջոցների անընդհատ կատարելագործում, որը մարդուց պահանջում է ամենօրյա հետևողական գործունեություն, միևնույն ժամանակ ստիպում է նրան գիտակցելու իր պատասխանատվությունը ինչպես հասարակության, այնպես էլ իր անձնական խնդիրների իրականացման ժամանակ: Անհատի սոցիալականացումը հասարակական բոլոր խնդիրների (ուժման անբաժանելի բաղադրիչն է, և նրանից է կախված հասարակության առաջընթացը և մարդկանց գիտակցության և վարքի ձևավորման արտիճանը: Անհատի սոցիալականացումը ենթադրում է նաև մարդկանց գիտակցության և վարքագծի մեջ բացասական երևույթների հաջթահարում և վերացում:

Սոցիալականացման գործընթացը տեղի է ունենում ազգային և համաշխարհային մշակույթների փոխազդեցության պայմաններում: Եվ չնայած ընդունված է համաշխարհային մշակույթը առաջնային համարել հասարակության գիտակցության համակարգում, այնուհանդերձ, պետք է ընդունել, որ ազգային առանձնահատկությունները երբեմն վճռական դեր են խաղում մարդկանց գիտակցության ձևավորման գործում և երբեմն որոշիչ են դառնում հասարակական և քաղաքական շարժումների ժամանակ:

Ընդհանրացնելով վերը շարադրածը կարելի է նշել, որ անհատի սոցիալականացման եուրյունը հանգում է մարդու կողմից որոշակի գիտելիքների, նորմերի և արժեքների համակարգի յուրացման, որը թույլ է տալիս նրան գործառնել որպես հասարակության լիարժեք ու լիիրավ անդամ: Անհատի սոցիալականացման այդ հիմքի վրա էլ բարձրանում է անհատի քաղաքական սոցիալականացումը:

Եթե անհատի սոցիալականացումը կենդանի էակից մարդու հասարակական էակի ձևավորման և կայացման գործընթաց է, ապա քաղաքական սոցիալականացումը մարդու հասարակական էակից քաղաքական էակի ձևավորման և կայացման գործընթաց է: Անշուշտ, այս երկու փուլերի միջև չկա կարելի հստակ սահմանագիծ անցկացնել: Այսինքն, դա չի նշանակում, որ մարդու սոցիալականացման գործընթացը ատեղ է ավարտվի ու հետո միայն սկսվի քաղաքական սոցիալականացման գործընթացը: Անհատի սոցիալականացման որոշակի աստիճանից սկսած, ինչքանով որ թույլ է տալիս սոցիալականացված անհատի գիտակցական մակարդակը, հատկապես պատանիների և երիտասարդների պարագայում, և այն միջավայրը, որում

յուսեք ապրում են, սկսվում է նաև քաղաքական սոցիալականացման գործընթացը: Սակայն մի բան ակնհայտ է, որ հասարակական էակ դառնալը քաղաքական էակի վերածվելու անհրաժեշտ պայմանն է:

Քաղաքական գրականության մեջ անհատի քաղաքական սոցիալականացումը նույնպես տարբեր մեկնաբանություններ ունի: Նշենք դրանցից մի քանիսը՝

1 Քաղաքական սոցիալականացումը քաղաքական համակարգում անհատի ներառվածության գործընթաց է:

2 Քաղաքական սոցիալականացումը անհատի կողմից հասարակության կուտակած և մշակութային ավանդույթներում, խմբային և համահասարակական արժեքներում, նորմերում և քաղաքական վարքագծում ամբաօրված սոցիալական և քաղաքական փորձի յուրացման գործընթաց է:

3 Անհատի քաղաքական սոցիալականացումը անհատի կողմից այն սոցիալական հանրույթի սոցիալական նորմերի և մշակութային արժեքների յուրացման և գիտակցման գործընթաց է, որին նա պատկանում է:

4 Քաղաքական սոցիալականացումը-առանձին մարդու, որպես որոշակի հասարակության անդամի և պետության քաղաքացու կողմից համապատասխան քաղաքական մշակույթի հիմնական տարրերի ինտեգրացման և յուրացման գործընթաց է:

Կան նաև քաղաքական սոցիալականացման նեղ և լայն ըմբռնումներ:

Նեղ ըմբռնման դեպքում քաղաքական սոցիալականացումը դիտվում է որպես անհատի մեջ քաղաքական արժեքների, համոզմունքների, սովորույթների ու ավանդույթների գիտակցված և նպատակամղված ներդրման գործընթաց, որը իրականացվում է պաշտոնական և կիսապաշտոնական հաստատությունների, ինստիտուտների և կազմակերպությունների կողմից: Այս դեպքում այս կազմակերպությունների հիմնական նպատակը իշխող կարգերի նկատմամբ մարդկանց մոտ դրական վերաբերմունքի մշակումն է:

Լայն ըմբռնման քաղաքական սոցիալականացումը մարդու կենսագործունեության բոլոր փուլերում քաղաքական ուսուցման ողջ համակարգն է, գոյություն ունեցող բոլոր ձևերով:

Այսպիսով, սոցիալականացումը անհատի կողմից մարդկային ողջ սոցիալական փորձի յուրացման և ակտիվ վերարտադրության գործընթաց է, որը իրականացվում է անհատի և նրա տարբեր հանրույթների գործունեության միջոցով: Իսկ անհատի քաղաքական սոցիալականացումը կարելի է դիտել որպես մի պրոցես, որի ընթացքում անհատի որոշակի տարիքից սկսած մի քանի փուլերով ձևավորվում են նաև քաղաքական կյանքի նկատմամբ որոշակի պատկերացումներ, քաղաքական գործունեության փորձ և քաղաքական հաղորդակցման հմտություններ:

Անհատի քաղաքական սոցիալականացումը նախ և առաջ անհատի քաղաքական գիտակցության, աշխարհայացքի, մոտեցումների, կողմնորոշումների ձևավորման գործընթաց է, որի արդյունքում էլ առաջանում է քաղաքական անհատը: Քաղաքականությանը անհատի մասնակցության ակտիվ կամ

պասիվ լինելը առաջին հերթին կապված է նրա քաղաքական սոցիալականացման աստիճանից: Այլ կերպ ասած, որքան բարձր է անհատի քաղաքական գիտակցության աստիճանը, որքան գիտակցված է նա ներառվում քաղաքականության մեջ, այնքան ակտիվ ու արդյունավետ է նրա քաղաքական գործունեությունը:

Անհատի քաղաքական սոցիալականացումը թույլ է տալիս տվյալ սոցիալական համակարգում բավականին արդյունավետ իրականացնել տարբեր քաղաքական կազմակերպությունների քաղաքական փոխհարաբերությունները, պահպանել քաղաքական համակարգի և հասարակության կայուն հավասարակշռությունն ու զարգացումը:

Քաղաքական սոցիալականացման հիմքում ընկած է նախորդ սերունդների կողմից ստեղծած ողջ քաղաքական մշակութային արժեքները և քաղաքական փորձը, որոնց աստիճանական յուրացմամբ էլ անհատը վերածվում է քաղաքական անհատի: Որքան անհատը լավ է յուրացնում եղած քաղաքական մշակութային արժեքներն ու քաղաքական փորձը, այնքան նա գոյություն ունեցող քաղաքական համակարգում ավելի ճիշտ է կողմնորոշվում, այնքան ավելի լավ է գիտակցում իր դերը հասարակության մեջ, այնքան նա քաղաքականապես ավելի ակտիվ է:

Որպես գործընթաց անհատի քաղաքական սոցիալականացումը տեղի է ունենում որոշակի աստիճանական հաջորդականությամբ: Այդ տեսանկյունից կարելի է առանձնացնել հետևյալ բաղադրիչները.

1. հասարակական-քաղաքական փորձի ըմբռնում և յուրացում.
2. հասարակության և պետության քաղաքականության մասին գիտելիքների վերածումը ներքին համոզմունքի.
3. սեփական քաղաքական հայացքները պաշտպանելու ընդունակության մշակում.
4. հասարակական-քաղաքական գործունեության անհրաժեշտ հմտությունների ձեռքբերում, նրա հիմնական սկզբունքների և նորմերի յուրացում.
5. ձեռք բերած գիտելիքներն ու համոզմունքները քաղաքական գործունեության և հասարակական հարաբերությունների այլ ոլորտներում իրականացնելու ունակություն:

Անհատի քաղաքական սոցիալականացումը գործառնում է տարբեր մակարդակներում:

Առաջին մակարդակը ամբողջ հասարակությունն է: Այս մակարդակում մարդը քաղաքական գործընթացի մեջ է ներառվում հասարակության մեջ ծագած յուրք խնդիրների ճնշման տակ: Ասեմք, մարդկանց ներգրավումը զանգվածային հասարակական-քաղաքական շարժումներում տեղի է ունենում հասարակության մեջ տեղի ունեցող խոշորամասշտաբ փոփոխությունների ազդեցության շնորհիվ, երբ մարդն այլևս չի կարողանում անտարբեր մնալ շրջապատում կատարվող զարգացումների նկատմամբ:

Մարդկանց քաղաքականացումը կարող է պայմանավորված լինել նաև գործազրկության սրմամբ, իշխանության կաշառվածությամբ, հանցագործության աճով, կենսամակարդակի վատթարացմամբ և այլն:

Անհատի քաղաքական սոցիալականացման գործառնության երկրորդ մակարդակը սոցիալ-հոգեբանականն է: Մարդը քաղաքականապես սոցիալականացվում է ոչ միայն սոցիալական մեծ խմբերում (դասակարգ, կուսակցություն), այլև փոքր խմբերում (ընտանիք, ընկերություն և այլն): Այդ պատճառով էլ նրա քաղաքական սոցիալականացմանը շատ բանով նպաստում է միջանձային հարաբերությունները: Այդպիսի հաղորդակցման ընթացքում մարդը ենթարկվում է իր գրուցակցի ազդեցությանը և այդ ընթացքում էլ տեղի է ունենում անհատի քաղաքական ինքնադաստիարակում: Միջանձային շփումները, հատկապես քաղաքական խնդիրների շուրջ ծագած հարցերի քննարկումը, օգնում է անհատին ավելի ճիշտ կողմնորոշվելու քաղաքական իրադարձություններում, հստակ դիրքորոշումն ունենալու իշխանությունների կամ քաղաքական ուժերի նկատմամբ և համապատասխան քաղաքական վարքագիծ դրսևորելու:

Երրորդ մակարդակը ներանձային է: Այս մակարդակում անհատի քաղաքական սոցիալականացումը տեղի է ունենում մարդկանց շահերի, պահանջ-մոլանքների, արժեքային կողմնորոշման ազդեցության տակ: Դեռ այդ գործոններն են նշանակալից ազդեցություն գործում մարդու քաղաքական գիտակցության ձևավորման վրա և հենց այդ գործոններն են ուղղորդում մարդկանց քաղաքական վարքը:

Այսպիսով, անհատի քաղաքական սոցիալականացումը չափազանց բարդ և բազմաբնույթ սոցիալական գործընթաց է: Շնորհիվ քաղաքական սոցիալականացման մարդը աստիճանաբար վերածվում է ոչ միայն անհատի, այլև՝ քաղաքացու, որը մտահոգված է հասարակության զարգացմամբ ու առաջընթացով և ակտիվ մասնակցում է նրանում տեղի ունեցող զարգացումներին և ինչ որ տեղ էլ դառնում է քաղաքականության սուբյեկտ ու արարող:

3.Քաղաքական լիզերության ըմբռնումը

Լիզերի, որպես առաջնորդողի, ուղղություն տվողի, առաջացման մասին կարելի է խոսել որպես մարդկային հասարակության հետ զուգահեռաբար ծագած ու զարգացած սոցիալական երևույթ:

Լիզերը այն անձն է, որը համապատասխան իրադրություններում առաջ է մղվում խմբի անդամների կողմից համատեղ գործունեություն կազմակերպելու և խմբային նպատակներին հասնելու համար: Խմբի որևէ անդամի լիզեր դառնալը պայմանավորված է ինչպես օբյեկտիվ հանգամանքներով (ներխմբային իրադրությամբ, միջանձային հարաբերությունների և գործունեության բնույթով և այլն), այնպես էլ սուբյեկտիվ գործոններով, հատկապես հոգեբանական, գիտակցական, և երբեմն էլ ֆիզիոլոգիական առանձ-

նահատկություններով, ինչը անձին դարձնում է առավել ազդեցիկ, որը նրան թույլ է տալիս կառավարել խմբի մյուս անդամների վարքն ու գործունեությունը: Նման մեկնաբանությունից դժվար չէ նկատել, որ լիդերը մարդկային հասարակության վաղ շրջանի հասարակական կյանքի կազմակերպման հիմնական գործոնն է եղել, քանզի տոհմի, ցեղի կյանքի կազմակերպման հիմնական ձևը իրականացվել է լիդերության (առաջնորդի) ինստիտուտի միջոցով: Ուստի լիդերությունը որպես սոցիալական երևույթ մարդկային էական հատկանիշներից մեկն է, առանց որի մարդկային համակեցությունը անհնար կլիներ:

Հասարակությունը գոյություն ունի ամենատարբեր մարդկային հանրույթների, սոցիալական խմբերի, կազմակերպությունների և միությունների միասնության ձևով: Այս տեսանկյունից ելնելով կարելի է խոսել տարբեր մակարդակների լիդերների մասին, սկսած մարդկանց ամենափոքր խմբերից (ասե՛ք՝ ընտանիք, ընկերություն, և այլն) մինչև պետական մակարդակի համընդհանրություն: Դրան զուգահեռ հաճախ խոսվում է նաև քաղաքական, գործարար, գիտության, արվեստի, կրոնական, կուսակցական լիդերների մասին: Սակայն ընդհանուրն այն է, որ բոլոր դեպքերում լիդերը պետք է օժտված լինի որոշակի ընդունակություններով ու կարողություններով, ունենա կյանքի փորձ ու հեղինակություն և վայելի տվյալ խմբի հավատն ու վստահությունը: **Այսպիսով լիդերը սոցիալական խմբի, կազմակերպության և ամբողջ հասարակության հեղինակավոր անդամն է, որի անհատական ազդեցությունը թույլ է տալիս նրան առաջնորդելու մարդկանց դեպի որոշակի նպատակների իրականացման, նշանակալից դեր խաղալ հասարակական քաղաքական գործընթացներում:**

Նշենք նաև, որ լիդերի ինչպիսին լինելը շատ բանով կախված է հասարակության զարգացման մակարդակից, նրանում տիրող բարոյաիրավական նորմերից, ավանդույթներից ու սովորույթներից, հասարակական քաղաքական համակարգի բնույթից և այլն: Այստեղից էլ, հաճախ խոսվում է իմաստուն, խելոք, հմուտ կազմակերպչի, գաղափարական, դժան, բռնակալ և այլ տիպի լիդերների մասին:

Հասարակության զարգացման ընթացքում անհատական լիդերությանը փոխարինելու է գալիս լիդերության ինստիտուտը, խմբային լիդերությունը, որը ավելի բարդ ու բազմակողմանի սոցիալական երևույթ է: Լիդերությունը կենտրոնական լիդերի և նրա հետևորդների փոխազդեցության շնորհիվ ձևավորված համակարգ է, որտեղ մի կողմից, ենթադրվում է այլ մարդկանց լիդերի վրա գործոն ազդեցությունը, մյուս կողմից, անհրաժեշտ է, որ նրանք ենթարկվեն լիդերին, պաշտպանեն նրա որոշումներն ու գործողությունները, պատրաստակամորեն հետևեն նրան: Այսինքն, այս դեպքում լիդերության հնարավորությունը կախված է լինում խմբային գործունեությունից, քանզի առանց հետևորդների ու նվիրյալների միայնակ լիդերի գոյությունը անհնար ու անհեթեթ կլիներ: Եվ, չնայած այդ հարաբերություններում լիդերն է կենտրոնական դեմքը, այնուհանդերձ նրա մերձավոր շրջապատի, նրա հայացք

ներն ու գործողության սկզբունքները կամավոր պաշտպանող և հասարակության մեջ տարածող անհատների շնորհիվ է նա իրականացնում լիդերությունը:

Այլ կերպ ասած, լինելով կենտրոնական դեմք, լիդերը իր շուրջն է համախմբում այլ լիդերների, առանց որոնց նա իր առջև դրված նպատակներին հասնել չի կարող: Զմուռանանք նաև, որ հենց մերձավոր շրջապատի, նվիրված անհատների կողմից է առաջ քաշվում տվյալ լիդերը, որը պետք է բավարարի իրեն վստահողներին, հետևորդներին պահանջները: Զիչ չեն դեպքերը երբ իր հետևորդների պահանջումներին չբավարարող լիդերները մեկուսացվել են, ինչը ցույց է տալիս, որ լիդերության ինստիտուտի պարագայում լիդերը գոյություն ունի միայն այլ անհատների (որոնց նույնպես կարելի է լիդերներ անվանել) հետ որոշակի փոխհարաբերությունների միջոցով:

Լիդերության տարբեր ձևերի մեջ յուրահատուկ տեղ է գրավում քաղաքական լիդերությունը, ինչը պայմանավորված է նրանով, որ հասարակության կյանքում այն առավել տեսանելի է, մեծապես ազդում է նրանում տեղի ունեցող իրադարձությունների վրա և առնչվում է մեծ թվով մարդկանց ճակատագրի հետ:

Հասարակության ժողովրդավարացմանը զուգընթաց աճում է հասարակության կյանքի գիտականորեն կազմակերպման դերը: Այդ պատճառով էլ քաղաքագիտության մեջ լիդերությունը դիտարկվում է որպես մարդկային, սոցիալական խմբերի, հասարակական կազմակերպությունների, ինստիտուտների և ամբողջ հասարակության հարաբերությունների կարգավորման կարևորագույն միջոցներից մեկը: Այս դեպքում լիդերության երկուսը հանգում է, մի կողմից քաղաքական սուբյեկտների միջև փոխհարաբերությունների կարգավորմանը, մյուս կողմից իշխանության իրականացմամբ հասարակության կյանքի կազմակերպմանն ու նրանում եղած խնդիրների իրականացմանը: Ուստի քաղաքական լիդերությունը անխաբիւրեն կապված է իշխանության գործոնի հետ, առնչվելով քաղաքականության սուբյեկտի և օբյեկտի միջև փոխհարաբերությունների ողջ համակարգին:

Քաղաքական լիդերը քաղաքական գործընթացների և սուբյեկտն է, և օբյեկտը՝ նրան քաղաքական սուբյեկտ է դարձնում այն, որ նա իր առանձնահատուկ հատկանիշներով ընդունակ է գլխավորել սոցիալ-քաղաքական շարժումները, նպատակ ունենալով իրականացնել ինչպես հասարակության, այնպես էլ իրեն առաջադրողների շահերը: Հանուն դրա էլ լիդերը օժտվում է իշխանական լիազորություններով, այսինքն իրավասու է դառնում մարդկանց ընդունակություններն ու կարողությունները, կամքն ու ներուժը ուղղորդելու հասարակական խնդիրների իրագործմանը, օգտագործելով համապատասխան նյութական և ֆինանսական միջոցներ:

Արդի քաղաքական լիդերությունը բազմադեմ է, ինչը արդյունք է այն բանի որ ղեկավարման, կառավարման ֆունկցիաների իրականացումը հիմնականում տեղի է ունենում ինստիտուտների, կառավարման կոլեկտիվ կառույցների միջոցով: Օրինակ, երբ ասում ենք նախագահական ինստիտուտ,

դրա տակ չի հասկացվում միայն երկրի նախագահը: Այդ կառույցը բավականին բարդ կառուցվածք ունի և մեծ թվով մարդկանց գործունեություն է ենթադրում: Եթե նախագահը պատրաստվում է որևէ քաղաքական հարցով ծրագրային հայտարարություն անել, ապա նա խորհրդակցում է իր աշխատակազմի, մասնագետների, խորհրդատուների հետ, որոնց միասնական շանքերով էլ ծնվում է այդ հայտարարությունը, դառնալով կոլեկտիվ գործունեության արդյունք: Անշուշտ, դրանով չի նսեմանում նախագահի, որպես լիդերի, դերը: Ընդհակառակը, այստեղ նրա, որպես լիդերի, դերը կայանում է հենց նրանում, որ քաղաքական խնդիրների լուծման լավագույն ճանապարհների պրպտման ժամանակ կարողանա ներգրավել մարդկանց, օգտագործել նրանց մասնագիտական կարողությունները, լսելու նրանց խորհուրդները և գտնելու լավագույն ելքը, հասարակության առջև ծառայած խնդիրների իրականացման ընթացքում: Այս տեսանկյունից լիդերությունը իհարկե կարելի է դիտել որպես առանձին անհատի հատկանիշ, սակայն իրականում այն կոլեկտիվ գործունեության արդյունք է: Յենց սրանով էլ առանձնանում է քաղաքական լիդերությունը խմբերի կամ կազմակերպությունների լիդերությունից:

Քաղաքական լիդերը միաժամանակ նաև քաղաքականության օբյեկտ է, այնքանով, որ տարբեր խնդիրներ իրականացնելիս նա միշտ գգում է տարբեր շահագրգիռ կողմերի ազդեցությունն ու ճնշումը և պետք է պատրաստ լինի ընկալելու նրանց պահանջներն ու առաջարկությունները, իր գործունեությունը համապատասխանացնելու այդ պահանջմունքներին, ընդունակ լինի փոխհամաձայնության, երբեմն էլ զիջումների:

Ցանկացած լիդերություն անցնում է իր գարգացման աստիճանական փուլերով: Սկզբից ծագում են հասարակական շարժումները, որոնք առաջ են քաշում իրենց լիդերներին, այնուհետև ձևավորվում են կուսակցությունները, որոնք մշակում են իրենց ծրագրերն ու կազմակերպչական սկզբունքները, ձևավորվում է կուսակցական ղեկավարությունը, որը առաջ է քաշում իր լիդերը, այնուհետև կուսակցությունը պայքարում է իշխանության համար, իշխանությունը սկսածելիս կուսակցությունը իր լիդերին լիազորում է բարձր պետական պաշտոնի, արդյունքում առաջանում է լիդեր-ղեկավարը:

Եթե փոքր խմբերում, որտեղ մարդկանց հարաբերությունները հենված են անմիջական շփումների վրա, առաջին պլան է մղվում անհատի ընդունակություններն ու լիդեր դառնալու պատրաստակամությունը, ապա քաղաքականության մեջ, որտեղ առկա են մարդկանց մեծ բազմություն, անհրաժեշտ է լիդերի դիրքորոշման ձևավորում: Ուստի քաղաքական լիդերությունը ենթադրում է մի կողմից հասարակության կողմից լիդերի ընդունակությունների ու հեղինակության ճանաչում, մյուս կողմից այն ենթադրում է կազմակերպության անդամների վրա լիդերի որոշակի ազդեցության առկայություն:

Քաղաքական լիդերությանը բնորոշ են որոշակի հատկանիշներ.

1 սեփական քաղաքական ծրագրի առկայություն և դրա իրականացման ընդունակություն, 2. ճանաչված լինի, ունենա հեղինակություն և պա

շտանախառնության զգացում: Միայն այն անհատն է ընդունակ դառնալու լիդեր, ով օժտված է իր վրա պատասխանատվություն վերցնելու ընդունակությամբ, 3. իր ամբողջ գործունեությամբ պետք է միշտ ապացուցի իր լիդեր լինելու իրավունքը և արդարացի մարդկանց վստահությունը:

Քաղաքական լիդերը, արտահայտելով որոշակի դասակարգի, սոցիալական խմբի կամ կուսակցության շահեր, նշանակալից ազդեցություն է ունենում քաղաքական իրադարձությունների ընթացքի վրա: Քաղաքական լիդերների դերը մեծ է հատկապես արմատական փոփոխությունների, անցումալի նրջանների ժամանակ, երբ պահանջվում է ծագած խնդիրները հստակ պատկերացնելու և արագ որոշումներ ընդունելու ընդունակություն: Այս դեպքում հաճախ խոսվում է նաև այն մասին, որ ծագած բոլոր խնդիրները վարող է լուծել ուժեղ լիդերը: Եվ, իրոք, հասարակության զարգացման որոշակի փուլում կարող է արդյունավետ լինել խիստ, պահանջկոտ լիդերի գործունեությունը, իհարկե, եթե այն չի վերածում անհատի կամայականությունների դրսևորման, անտեսելով հասարակության պահանջմունքները:

Այդ կապակցությամբ քաղաքական գրականության մեջ առանձնացվում են քաղաքական լիդերի հետևյալ բնորոշ գծերը.

- այս կամ այն հասարակական խմբի հայացքների հաշվի առնելու, արտահայտելու և պաշտպանելու ընդունակությունը,
- հասարակության շահերը նրա համար պետք է վեր դասվեն սեփական շահերից: Յենց դրանով է պայմանավորված նրա հեղինակության չափը,
- մարդկանց ակտիվ գործողությունների կազմակերպման ընդունակություն,
- հաղորդակցվելու և հռետորական ընդունակություն,
- բարձր քաղաքական կուլտուրա,
- լինի վառ անհատ, կրթված ու խոհեմ, բարձր բարոյական հատկանիշի տեր, լինի ազնիվ ու կարգապահ,
- ունենալով սեփական քաղաքական ծրագիր, նա պետք է կամք, նպատակամղվածություն և հեղինակություն ունենա այն կյանքում մարմնավորելու համար,
- կարևորագույն պայման է զանգվածների վստահությունը նվաճելու ընդունակությունը:

Այսպիսի հատկանիշների առկայությունը ցույց է տալիս, որ լիդեր չեն ծնվում, այլ դառնում են: Ուստի լիդերի հատկանիշներով բոլորը օժտված լինել չեն կարող: Քաղաքական լիդեր կարող են դառնալ միայն այն անհատները, որոնք առանձնանում են ինքնուրույն մտածելակերպով, զանգվածների շահերը պաշտպանելու ընդունակությամբ, հասարակության շահերը սեփական շահերից զերադասելու, քաղաքական որոշումներ ընդունելու և դրանք գործնական կյանքում իրականացնելու համար կառավարման ճիշտ մեխանիզմներ օգտագործելու ընդունակությամբ:

Լիդեր դառնալու համար անհրաժեշտ է արդարացնել մարդկանց վստահությունը և նրանց մոտ հեղինակություն ձեռք բերել Զաղաքական սուբյեկտի հետևից ժողովուրդը գնում է ոչ թե նրա համար, որ պարտավոր է գնալ, այլ նրա համար, որ դա բխում է նրանց շահերից և մարդիկ կամավոր իրենք են ցանկանում գնալ նրա հետևից:

Զաղաքական լիդերության երևույթի բարդությունը բացատրվում է նաև գոյություն ունեցող մի քանի մեկնաբանությունների առկայությամբ: Նշենք դրանցից մի քանիսը:

1. Զաղաքական լիդերությունը իշխանության տարատեսակություն է: Լիդերության այսպիսի մեկնաբանությունը հենվում է այն տեսակետի վրա, որ ցանկացած քաղաքական հարցում իշխանությունների բաժանման պահպանման և փոփոխման խնդիրը համարվում է որոշիչ:

2. Զաղաքական լիդերությունը այլ մարդկանց վրա ազդեցություն է ուրիշ բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները՝ Նախ, այդ ազդեցությունը պետք է լինի մշտապես՝ երկրորդ, քաղաքական լիդերի ազդեցությունը պետք է տարածվի ամբողջ խմբի, կազմակերպության, հասարակության վրա: Երրորդ, քաղաքական լիդերի ազդեցությունը արդյունք՝ նրա հեղինակության, կողմնակիցների վստահության, նրան, որպես ղեկավարի, ճանաչման:

3. Զաղաքական լիդերությունը կառավարման կարգավիճակ է, սոցիալական դիրքորոշում կապված ընդունված որոշումների հետ:

4. Զաղաքական լիդերությունը գործարարության յուրահատուկ տեսակ է, որի ժամանակ քաղաքական ձեռնեղենները ղեկավար պաշտոններ զբաղեցնելիս, իրենց ծրագրերը իրականացնում են հասարակական խնդիրների, քաղաքացիների շահերը պաշտպանելու քողի տակ: Պատահական չէ, որ քաղաքական լիդերները նախընտրական պայքարի շրջանում այդքան առատաձեռն են խոստումներ տալիս, սակայն իշխանության գալով, սովորաբար, դրանք չեն կատարում:

Ինչպես տեսնում ենք, քաղաքական լիդերության ընկալումը չափազանց տարաբնույթ է, ինչը կարող է արդյունք լինել տարբեր հասարակական-քաղաքական համակարգերում և հասարակության զարգացման տարբեր աստիճաններում իշխանությունների դրսևորած գործունեության սկզբունքների:

Նկատի ունենալով վերը նշված առանձնահատկությունները կարելի է քաղաքական լիդերությունը բնորոշել որպես իշխանական դիրք զբաղեցնողների, խմբի, կազմակերպության և ամբողջ հասարակության վրա անհատ մշտական և օրինական ազդեցություն:

Զաղաքական լիդերի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար, անհրաժեշտ է նշել մի քանի հիմնական առանձնահատկություններ, որոնք ազդում են լիդերի բնույթի և բովանդակության ձևավորման վրա: Դրանց մեջ կարևոր են

1. Լիդերի անձի, նրա ծագման, սոցիալականացման գործընթացի և առաջ շարժման եղանակի ուսումնասիրությունը:

2. Լիդերի շրջապատի, նրա հետևորդների և ընդդիմադիրների ուսումնասիրությունը:

3. Լիդերի և նրա կողմնակիցների միջև հարաբերությունների ուսումնասիրությունը:

4. Կոնկրետ իրադրություններում լիդերի և նրա հետևորդների փոխազդեցության արդյունքների վերլուծությունը:

Զաղաքական լիդերի բնույթն ուսումնասիրելիս, դիտարկման այս բոլոր ձևերն էլ կարևոր են: Սակայն կոնկրետ քաղաքական լիդերի առաջացման ժամանակ կարևոր դեր կարող են խաղալ դրանցից որևէ մեկը: Հետևաբար լիդերի առաջացման վրա կարող են ազդել տարբեր գործոններ, որի հետևանքով էլ կարող են առաջանալ տարբեր տիպի լիդերներ:

4. Զաղաքական լիդերների տիպերը և ֆունկցիաները

Զաղաքական գրականության մեջ քաղաքական լիդերի տիպաբանության վերաբերյալ իշխող տեսակետ է Մաքս Վեբերի մոտեցումները, որի հիմքում ընկած է իշխանություն իրականացնող անձի հեղինակության վրա հենվող դասակարգումը:

Ըստ Վեբերի կարելի է առանձնացնել երեք տեսակի լիդերներ, ավանդական, բանական-օրինական և խարիզմատիկ:

1. Ավանդական լիդերությունը հենվում է սովորույթների և ավանդույթների ուժի վրա: Լիդեր լինելու իրավունքը այս դեպքում մարդը ձեռք է բերում շնորհիվ իր ծագման: Դա հեղինակության մի տեսակ է, ինչից ինչ-որ ժամանակ օգտվել են ցեղերի առաջնորդները, ազգի գլխավորներն ու միապետերը: Չնայած լիդերի այս տիպը աստիճանաբար անցնում է պատմության գիրկը, այնուհանդերձ, դեռ շատ երկրներում (հատկապես արևելքում և այլ հետամնաց երկրներում) այն պահպանվում է և դեռ չի կորցրել իր նշանակությունը: Ավելին, շատ երկրներում, իրերի բերումով (հասարակության զարգացման աստիճանը, ազգային ավանդույթների և սովորույթների իշխումը, կրոնական գործոնը և այլն) լիդերության այս տեսակը իր դրական գործն է կատարում ազգային ինքնությունը պահպանելու գործում:

2. Ռացիոնալ-լեզալ (բանական-օրինական) լիդերությունը հենվում է բոլորի կողմից ընդունված իրավական կարգի գոյության օրինականության վրա: Արդի ժողովրդավարական հասարակությունում ընտրական գործընթացները, որոնք տեղի են ունենում ընդունված իրավական նորմերի շրջանակներում, քաղաքական լիդերի ձևավորման հիմնական ճանապարհն է: Այս դեպքում լիդերը հանդես է գալիս ոչ որպես անհատ, որից բխում է իշխանությունը, այլ որպես քաղաքական համակարգի մեջ ներառված պետական որոշակի խնդիր իրականացնող գործակալ, օժտված իշխանություն իրականացնելու լիազորությամբ:

3. Խարիզմատիկ (հեղինակության վրա հենված) լիդերությունը հենված է անհատի առանձնահատուկ հատկանիշների հավատալու վրա, որը ոչ թե ձեռք բերովի է, այլ բնատուր, ի վերուստ տրված, որպես աստվածային շնորհ Ըստ Վեբերի խարիզման (հեղինակությունը) դա անհատի ոչ սովորական հատկություն է, որի շնորհիվ նա գնահատվում է որպես գերբնական, գերմարդկային կամ առնվազն առանձնահատուկ ուժերով և հատկանիշերով օժտված էակ, ինչը անմատչելի է այլ մարդկանց:

Այլ լիդերության տեսակներից խարիզմատիկ լիդերության կարևոր տարբերությունը այն է, որ եթե մյուսներն ունեն քիչ թե շատ օբյեկտիվ հիմք, ասենք ավանդույթներ կամ օրենք, ապա խարիզմատիկ լիդերությունը ունի գուտ անհատական բնույթ, այսինքն, խստագույնս անձնավորված է:

Խարիզմատիկ լիդերության բնորոշ գիծը նաև այն է, որ նրա հետևորդները չափազանց եվիրված են անհատին և անմնացորդ հավատում են նրան: Վեբերը գտնում է, որ խարիզմատիկ լիդերությունը կայուն և երկարատև չի և ժամանակի ընթացքում վերածում է լիդերության մյուս տեսակներից որևէ մեկին, նայած թե հասարակության մեջ հաստատված քաղաքական համակարգի բնույթն ինչպիսին է:

Խարիզմատիկ լիդերությունը առավել վառ է դրսևորվում անցումային հասարակությունում, երբ անհրաժեշտ են արմատական փոփոխություններ կատարել հասարակության կյանքում, կամ երբ անհրաժեշտ է հաղթահարել համազգային ճգնաժամ և այլն: Խարիզմատիկ լիդերության օրինակներ կարող են լինել՝ Ստալինը-ԽՍՀՄ-ում, Մաո Յզեդուն-Չինաստանում, Ֆիդել Կաստրոն Կուբայում, դե Գոլը-Ֆրանսիայում և այլն:

Խարիզմատիկ լիդերը երբեմն ընդունակ է միայն իր բարոյական ազդեցությամբ, հենց իր գոյության փաստով հաղթահարելու և լուծելու ծագած շատ խնդիրներ և համախմբելու հասարակությունը:

Ամերիկյան քաղաքագետ Ռ. Թակերը, ելնելով քաղաքական լիդերի նպատակներից և հասարակության վրա ազդեցությունից, տարբերակում է քաղաքական լիդերների երեք տիպեր. պահպանողական, բարեփոխիչներ և հեղափոխականներ:

Պահպանողականները կողմնորշված են անվերապահորեն պահպանել գոյություն ունեցող հասարակական կարգի ձևերը: Դետևաբար, այս դեպքում քաղաքական լիդերի ամբողջ ակտիվությունը, նրա ծրագրերն ու գործողությունները ամբողջապես ուղղված են հիմնավորելու առանց փոփոխությունների տվյալ հասարակության գոյության անհրաժեշտությունը: Որպես գուտ պահպանողական լիդեր իր մաքուր ձևով, շատ քիչ է հանդիպում: Դաճախ այն դրսևորվում է գործունեության այս կամ այն բնագավառում, ասենք արտաքին քաղաքականության ոլորտում, ժողովրդավարական սկզբունքների հաստատման ժամանակ և այլն:

Պահպանողական լիդերի հիմնական խնդիրն է դառնում այլոց և իր հետևորդներին ապացուցելու և համոզելու, որ տվյալ պահին գոյություն ունե

ցող հասարակական քաղաքական համակարգը միակ ճշմարիտն ու արդարացին է և ամեն գնով այն պետք է պահպանել:

Բեֆորմատորները (բարեփոխիչներ) ձգտում են բարեփոխել ստեղծված հասարակական իրադրությունը լայնածավալ վերափոխումների իրականացման միջոցով, առաջին հերթին շեշտը դնելով իշխանական կառույցների փոփոխության վրա: Այդպիսի բարեփոխումներ իրականացրեց Չինաստանում Դեն Սյաոպինը, նա ապահովեց երկրի թռիչքաձև զարգացումը, որը բայտնի է Չինական հրաշք արտահայտությամբ: Բարեփոխիչ լիդերի հիմնական նպատակն է հասարակության մեջ կատարվող վերափոխումները իրականացնել հնարավորինս խաղաղ ճանապարհով, որոշակի աստիճանակետությամբ, առանց սուր հակասությունների, բախումների և կորուստների:

Հեղափոխականները, ավորաբար, հակված են առաջացած իրադրությունը լուծել արմատական վերափոխումների, հնի վերացման և նորի հաստատման ճանապարհով: Այս տիպի լիդերները համոզված են, որ հարցի լուծման այլ եղանակ գոյություն չունի, որ միակ ճիշտ լուծումը արմատական փոփոխություններն են, և նպատակին հասնելու համար բոլոր միջոցները արդարացված են: Այս դեպքում հեղափոխական լիդերների հիմնական խնդիրն է դառնում զինված ապստամբության կամ այլ բռնի ձևով իշխանության նվաճումը, ինչն էլ, սովորաբար, հանգեցնում է հասարակության մեջ հակասությունների խորացման, առձակատման, զինված բախման, ավերածությունների և կորուստների:

Ըստ գործունեության ոճի լիդերները լինում են ավտորիտար (միապետական) և ժողովրդավարական:

Միապետական լիդերը իշխանության մենաշնորհ ունեցող անհատն է: Այս տիպի լիդերը իր ենթականերին ակտիվ գործողության է մղում վարչական մեթոդների օգտագործման միջոցով: Նրա և հետևորդների միջև փոխհարաբերությունների բնույթը հրամայողի և ենթակայի հարաբերություն է, որտեղ լիդերը միանձնյա որոշումներ ընդունելու և այն այլոց պարտադրելու մենաշնորհ ունի: Նրա հիմնական գեները խիստ պահանջկոտությունն ու պատժելու վախն է: Լիդերի այս տիպը շատ ընդհանրություններ ունի ավանդական լիդերի տիպի հետ, հատկապես, ժառանգաբար լիդերության փոխանցման սկզբունքը:

Ժողովրդավարական լիդերը ի տարբերություն միապետի իր ձեռքում չի կենտրոնացնում ողջ իշխանությունը, իր վրա չի վերցնում ողջ պատասխանատվությունը, սերտ փոխհարաբերությունների մեջ է մտնում խմբի բոլոր անդամների, հատկապես իր հետևորդների հետ, խորհրդակցում և կիսվում է նրանց հետ իր ծրագրերի շուրջ, ինչի հետևանքով նրա գործունեությունը ձեռք է բերում կոլեկտիվ բնույթ:

Ըստ գործունեության բնույթի քաղաքական լիդերներին կարելի է տարբերակել:

1. Ունիվերսալ (համընդգրկուն) լիդեր. մշտապես դրսևորում է լիդերին, բնորոշ հատկանիշներ և ցանկացած պարագայում կարողանում է կողմնորոշվել և որոշումներ ընդունել:

2. Իրավիճակային կամ պահից-պահ լիդերի հատկանիշները դրսևորող անհատներ. որոնք որոշակի իրադրություններում առավել ճիշտ են կայրողանում կողմնորոշվել և գտնել հարցի լուծման արդյունավետ ուղիներ:

Քաղաքական լիդերները կարող են իրարից տարբերվել նաև որոնեց գործունեության բովանդակությամբ Օրինակ. լիդեր, որը ընդունակ է առաջ քաշել գաղափարներ, մշակել ծրագրեր և ոգևորել հետևորդներին դրանց իրականացման գործում. Լիդերներ, որոնք ո՞հանալի կազմակերպիչներ են և կարողանում են լավագույն ձևով իրականացնել նախապես տրված ծրագրերը: Կարող են լինել նաև միաժամանակ և ոգեշնչելու և կազմակերպելու և կատարելու ընդհանրություններով օժտված լիդերներ:

Բոլոր դեպքերում քաղաքական լիդերությունը կապված է իշխանության գործոնի հետ. Ըստ իշխանության նկատմամբ ունեցած վերաբերմունքի լի-նում են նաակենտրոն և սոցիոկենտրոն լիդերներ:

Լիդերի եսակենտրոն տիպը ձգտում է լինել իշխանության կենտրոնում, նրանում տեսնելով իր անձնական հաջողությունների, հարստության, ազդեցության, հայտնի դառնալու, որոշակի արտոնություններ ունենալու հիմնական երաշխիքը:

Լիդերի սոցիոկենտրոն տիպը իր գործունեության հիմնական իմաստը տեսնում է հասարակությանը ծառայելու, հասարակական պարտքը կատարելու մեջ: Անշուշտ լիդերի այդպիսի կողմնորոշումը չի կարելի ուռչել սոսկ նրա հայտարարությամբ: Այդպիսի հատկանիշները պարզվում են նրա պրակտիկ գործունեության ընթացքում:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, լիդերների այդպիսի բազմազան տիպե-րի առաջացումը բացատրվում է նրանց գործունեության տարբեր ուղղու-թյուններով ու դրսևորման ձևերով:

Լիդերի գործունեության բնույթը անխզելիորեն կապված է նրա ֆունկցիաների կատարման հետ: Առավել այցի ընկնող ֆունկցիաներից են

1. Վերլուծական ֆունկցիան, որը թույլ է տալիս քաղաքական լիդերին խորը և ռազմավարական վերլուծության ենթարկել ստեղծված իրադրություն-նր. ուսումնասիրելու քաղաքական կյանքի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոն-ների համակարգը, մշակելու գործողության ծրագիր, հիմնավորելով նպա-տակի իրականացման ռազմավարական և մարտավարական առաջնու-թյունները և այլն:

2. Կազմակերպչական ֆունկցիան քաղաքական լիդերի գանգվածնե-րին համախմբելու և քաղաքական ծրագրերի ու նպատակների իրականաց-մանը նրանց ակտիվ մասնակից դարձնելու ուսևակությունն է Կազմակեր-պիչ լիդերը պետք է կարողանա իր շուրջը համախմբել սոցիալական խմբերի, միավորել հասարակության տարբեր խավերի շանքերը, ձևավորելու հա-մախոհների և օգնականների խումբ, մշակելու քաղաքական գործունեու-

թյան ծրագրեր, կարգավորել և հսկել տեղի ունեցող գործողություններն ու գործընթացները:

3. Միավորման ֆունկցիան հասուն ընդհանուր նպատակների, առժեք-ների ու գաղափարների տարբեր սոցիալական շահերի միավորմանն ու համաձայնեցմանն ուղղված քաղաքական լիդերի գործառույթն է Այս դեպքում լիդերի գործառնության հիմնական էությունը տարբեր տեսակի քաղաքական և հասարակական ուժերի համախմբումն է իրականացվելիք ծրագրերի շուրջ և նրանց ջանքերի միավորումը առաջացած խնդիրները իրականացնելիս:

4. Քաղաքական լիդերն ունի նաև սորաբարակական ֆունկցիա, սոր, կա-ռուցողական գաղափարների ներմուծման և դրանց հիմնավորման ու պաշտպանության ուսևակություն, ընդունակություն: Այս դեպքում քաղաքա-կան լիդերը չպետք է չհիմնավորված, շտապողական որոշումներ կայացնի, չձգտի անսպալման, ինչ գնով էլ լինի իրականացնել իր սոր գաղափարները, քանզի ոչ մի բան այնքան մեծ վտանգ չի ներկայացնում պետության հա-մար, ինչքան չստուգված, չհիմնավորված ու արագ ընդունված արմատա-կան փոփոխություններ պարունակող ձեռնարկումները, եթե նույնիսկ դրանք իրենց էությամբ չափազանց առաջադիմական լինեն:

5. Հաղորդակցման ֆունկցիա, որը պետք է ապահովի իշխանության և տարբեր սոցիալական խմբերի միջև կայուն կապեր, որի անհրաժեշտու-թյունը առավել սուր է զգացվում անցման շրջանում գտնվող երկրներում, որտեղ, սովորաբար, գանգվածները անվստահություն են դրսևորում իշխա-նությունների նկատմամբ: Դրա լավագույն օրինակներ են այն պետական-քաղաքական գործիչները, որոնք ձգտում են ղնարավորինս շատ լինել ժո-ղովրդի մեջ, շփվել նրանց հետ, նրանց հաղորդակից դարձնել իրենց ծրա-գրերին, ժողովրդին դիմել լրատվության տարբեր միջոցների օգնությամբ և այլն: Այսպիսի մոտեցմամբ քաղաքական լիդերը ավելի մատչելի ու վստա-հելի է դառնում զանգվածների համար, արժանանում է նրանց համակրան-քին, բարձրանում է նրա հեղինակությունը և վերջապես դառնում է գանգ-վածների համար ընդունելի և գնահատված լիդեր, ինչն էլ ապահովում է նրա հետագա հաջողությունները ընտրություններում:

6. Քաղաքական լիդերի կարևորագույն ֆունկցիաներից է նաև արդա-րության, օրենքի և օրինականության երաշխավոր լինելը, ինչը մեծամա-սամբ համազգային քաղաքական լիդերների բնորոշ գիծն է: Այդպիսի ֆունկցիա իրականացնելու ընդունակ լիդերները կարողանում են անհրա-ժեշտության դեպքում հասարակությանը զերծ պահել քաղաքական վտան-գավոր զարգացումներից և օրենքի ու օրինականության շրջանակներում կարգավորել հասարակության մեջ ծագած սուր պրոբլեմները, կանխելով համազգային վերահաս վտանգը (քաղաքացիական պատերազմներ, հե-ղաշրջումներ և այլն) Դրա լավագույն օրինակն է 1959 թվականի Ֆրան-սիայում ստեղծված քաղաքական իրավիճակը, որը սպառնում էր վերաճել քաղաքացիական պատերազմի: Միայն գեներալ դե Գոլլի արդարության,

օրենքի և օրինականության երաշխավորի ֆունկցիան իրագործելու շնորհիվ հնարավոր եղավ համախմբելու ֆրանսիական ժողովրդին և ընտրություններում ստանալով ընտրողների ձայների 80% -ը երկիրը տանել կայուն զարգացման ճանապարհով:

Նշենք նաև, որ սովորաբար, քաղաքական լիդերությունը վերագրվում է մեկ անհատի (ինչպես դե Գոլի օրինակը), սակայն իրականում նրա բազմաթիվ ֆունկցիաներ իրականացնում են այլ մարդիկ, առաջին հերթին լիդերի հետևորդներն ու պաշտոնական դիրքի բերումով քաղաքականության այլ սուբյեկտներ: Ասել է, թե քաղաքական լիդերությունը (ժողովրդավարության պայմաններում առավել ևս) կոլեկտիվ գործունեություն է, որն սկսվում է որոշումների կոլեկտիվ նախապատրաստումից ու ընդունումից մինչև նրա կոլեկտիվ իրականացումը: Ժողովրդավարության պայմաններում քաղաքական ինստիտուտներն ավելի բարձր ինքնուրույնությամբ են օժտված ու կառավարման համակարգը կարող է գործառնել նաև լիդերների փոփոխման ժամանակ, եթե կտրուկ չի փոխվում պետության քաղաքականությունը, հասարակության քաղաքական համակարգի բնույթը, տնտեսական համակարգի էությունը և այլն: Ասել է, թե կայուն զարգացող ժողովրդավարության պայմաններում լիդերները կարող են փոխվել, առանց բացասական ազդեցություն ունենալու հասարակության հետագա առաջընթացի և կառավարման համակարգի գործունեության վրա:

Արդի ժամանակների հասարակության կյանքում տեղի ունեցող լայնածավալ քաղաքական զարգացումները առաջացրել են քաղաքական լիդերների ձևավորման և զարգացման նոր տենդենցներ:

Ժողովրդավարության պայմաններում քաղաքական լիդերների ընտրության, պատրաստման, դեպի իշխանություն գնալու և հենց նրանց գործունեությունը իրականացնում են որոշակի ինստիտուտներ: Քաղաքական լիդերները հսկվում են իրենց կուսակցության, ընդիմության և հասարակության կողմից: Այս ամբողջը այս կամ այն չափով սահմանափակում է նրանց իշխանությունը և ընդունված որոշումների վրա մեծանում է շրջապատի ազդեցությունը: Չարգացման այսպիսի տենդենցը կոչվում է լիդերության ինստիտուտականացում, այսինքն, լիդերների գործունեությունը հիմնականում քաղաքական ինստիտուտների միջոց իրականացնելու գործընթաց:

Մեկ այլ դեպքում քաղաքական լիդերների ակտիվությունը կենտրոնանում է տնտեսական և սոցիալական պրոբլեմների վրա, ինչը պայմանավորված է հասարակության տնտեսական կայունության ապահովման անհրաժեշտությամբ, քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության ամրապնդմամբ, ժողովրդի կենսամակարդակի աճով, որոնք կապված են քաղաքական լիդերի գործունեության հետ և, որոնց իրականացումը նպաստում է նրա ազդեցության ու հեղինակության աճին, ընդլայնում է նրա կողմնակիցների թիվը, թուլացնում է ընդիմադիրների դիրքերը:

Կարևոր զարգացման տենդենց է նաև քաղաքական լիդերության մասնակցության, այսինքն՝ քաղաքականությամբ զբաղվելը գնալով ավելի

շատ դառնում է մասնագետների գործունեություն: Եվ դրանում մեծ առաջընթաց է նկատվում և արդարացված է, քանզի, ինչպես հայտնի է, քաղաքականությունը միլիոնավոր մարդկանց ճակատագրի հետ է կապված և ոչ իրավասու, ոչ ձեռնահաս ու պատահական քաղաքական գործիչները այստեղ անելիք չունեն: Մյուս կողմից, պարզ է, որ յուրաքանչյուր գործունեություն պահանջում է որոշակի գիտելիքներ, հմտություններ ու փորձ: Ուստի շատ քաղաքական լիդերների հետագա հաջողությունը կախված է քաղաքականության մեջ մասնագիտանալուց, անհրաժեշտ գիտելիքներ և քաղաքական գործիչն բնորոշ այլ հատկանիշներ ձեռք բերելուց: Դա առավել ևս կարևոր է դառնում անցումային շրջանում, երբ լիդերից առավել մեծ ջանք ու եռանդ և գիտելիքների մեծ պաշար է պահանջվում հասարակության մեջ ծագած խնդիրների էությունը հասկանալու և դրանց լուծման ուղիները գտնելու համար:

5. Քաղաքական էլիտայի (ընտրախավի) բնորոշումը, ֆունկցիաները, ժամանակակից տեսությունները

Էլիտա (ընտրախավ) արտահայտությունը (ֆրանսերեն elite), նշանակում է լավագույն, ընտրյալ, ընտրյալ մարդիկ: Քաղաքագիտության մեջ էլիտա են անվանում մարդկանց, ովքեր իրենց քաղաքական գործունեությամբ արժանացել են բարձր գնահատականի, վստահության և ունեն իրենց հետևորդները: Այն հաճախ օգտագործվում է նաև որպես «կառավարող վերնախավ», «իշխող ուժ», «իշխանական շրջան» արտահայտությունների հոմանիշ:

Էլիտան բնորոշ է բոլոր հասարակություններին և պետություններին, որի գոյությունը պայմանավորված է հետևյալ գործոնների առկայությամբ.

1. մարդկանց հոգեբանական և սոցիալական անհավաստությունը, ընդունակությունների և կարողությունների տարբերությունը, քաղաքականությանը մասնակցելու հնարավորությունն ու ցանկությունը.

2. աշխատանքի բաժանման օրինաչափությունը, որը կառավարման գործունեության ընթացքում պահանջում է մասնագիտական գիտելիքներ, որպես նրա արդյունավետության երաշխիք.

3. կառավարման գործունեությունը բարձր հասարակական նշանակություն ունի և համապատասխանորեն գնահատվում է.

4. կառավարման գործունեության միջոցով սոցիալական տեսակի արտոնություններ ստանալու լայն հնարավորությունը: Հայտնի է, որ քաղաքական-կառավարման գործունեությունը ուղղակիորեն կապված է արժեքների և ռեսուրսների բաշխման հետ:

5. Քաղաքական ղեկավարության վրա գործնականում անհնար է համատարած հսկողություն սահմանել.

6. բնակչության լայն գանգվածների քաղաքական պասիվությունը, որոնց առօրյա կենսական շահերը քաղաքականության ոլորտից դուրս են գտնվում:

Ակնհայտ է, որ մարդիկ իրենց բնական և սոցիալական կարողություններով տարբերվում են, առավել ևս կառավարման բնագավառում, որտեղ տարբերությունները շատ ավելի նկատելի են: Ուստի քաղաքական էլիտա ասելով պետք է հասկանալ որպես կառավարելու առավել ընդգծված հատկանիշներով օժտված քաղաքական գործիչների, իշխանության իրականացնողների:

Քաղաքական էլիտան ներքնապես տարանջատված է Այլ հաճախ բաժանում են ա) կառավարողների, որոնք ուղղակիորեն օժտված են պետական իշխանությամբ և կոչվում են քաղաքական էլիտա և բ) ընդդիմության, որը իշխանության վրա հսկող կազմակերպված քաղաքական ուժն է: Երբեմն տարանջատում են ըստ գործունեության նշանակությամբ, օրինակ ա) բարձրագույն էլիտա, որը ամբողջ պետության համար նշանակություն ունեցող որոշումներ է ընդունում, բ) միջին էլիտա, որը հասարակական կարծիքի ձևավորման բարոմետրի դեր է կատարում, գ) վարչական էլիտա, այսինքն ծառայողներն ու վարչարարները, կամ ինչպես ընդունված է անվանել նրանց, չինովնիչությունը: Տարբերակվում են նաև կուսակցական, սոցիալական խմբերի լիդերներ:

Այլ կերպ ասած ժամանակակից հասարակության մեջ էլիտարությունը կայացած փաստ է և այն գոյատևելու է այնքան ժամանակ, քանի դեռ հասարակությունը վերջնականապես չի անցել լրիվ ինքնակառավարման, ինչը առայժմս մնում է որպես գաղափար, որպես բարձրագույն նպատակ:

Ժողովրդավարական պետության համար առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիր է դառնում ոչ թե մերժել քաղաքական էլիտայի գոյությունը կամ պայքարել նրա դեմ, այլ ձգտել ձևավորելու հասարակության համար առավել մասնագիտական, օգտակար ու արդյունավետ գործող քաղաքական էլիտա, որը կհամապատասխանի արդի հասարակության զարգացման պահանջներին, նրա կյանքի կազմակերպման ձևերին: Ուստի, զիտակցելով դրա անհրաժեշտությունը, պետք է ստեղծել էլիտայի ձևավորման համապատասխան ինստիտուտներ և մեխանիզմներ, որոնց միջոցով առաջացած էլիտան կարողանար կառավարման իրականացմամբ բավարարել հասարակության հետագա առաջընթացի պահանջներին:

Այդ խնդրի լուծման աստիճանը շատ բանով կախված է էլիտայի սոցիալական ներկայացուցչական բնույթից, այսինքն իշխանական համակարգում հասարակության տարբեր շերտերի ներկայությունից՝ որը ղեկավարություն է տալիս տարբեր սոցիալական խմբերի շահերը ներկայացնել ու պետականորեն պաշտպանել: Այդպիսի ներկայացուցչությունը անհրաժեշտ է մի շարք պատճառներով, որոնցից են.

ա) սոցիալական ծագումն ու պատկանելիությունը, ինչը անմիջականորեն ազդում է քաղաքական էլիտայի սոցիալ-քաղաքական կողմնորոշման վրա և ինչը նրանց թույլ է տալիս ավելի լավ պատկերացնել այն սոցիալական խմբի խնդիրներն ու շահերը, որոնց իրենք ներկայացնում են:

Իհարկե, դա չի նշանակում, որ բանվորների շահերը պետք է պաշտպանեն միայն այդ դասակարգի ներկայացուցիչները, կամ երիտասարդների շահերը պետք է պաշտպանեն միայն երիտասարդները: Քաղաքական էլիտայի այն մասը, որի համար առաջնային են համարվում պետության, հասարակության շահերը, ընդունակ է պաշտպանել նաև ցանկացած սոցիալական խմբի առաջադիմական շահեր: Օրինակ, գտրոգացած երկրներում շրջանական էլիտայի մեծ մասը բարձրագույն կրթությամբ մասնագետ-մտավորականներ են և հաջողությամբ պաշտպանում են սոցիալական տարբեր շերտերի շահերն ու իրավունքները, ելնելով այն սկզբունքից, որ ինչ ձեռնտու է ամբողջ հասարակությանը չի կարող ձեռնտու չլինել սոցիալական խմբերին ու շերտերին Այսինքն, Նույնիսկ տարբեր սոցիալական շերտերից իշխանական ընտրախափի մեջ մտած ներկայացուցիչները անուղղակիորեն պաշտպանում են մյուս սոցիալական շերտերի շահերը, որովհետև դա է պահանջում պետության շահերը: Մակայն դրա համար անհրաժեշտ է, որ էլիտայի մեջ մտած ներկայացուցիչները կարողանան վեր կանգնել նեղ խմբային շահերից և առաջնությունը տան հասարակական շահերին, ինչը, անշուշտ, որոշակի գաղափարական, բարոյական և մասնագիտական ընդունակություններ ու հատկանիշներ, պետական մտածելակերպ և քաղաքական կողմնորոշում է ենթադրում:

բ) Կարևոր գործոն է նաև էլիտայի ներկայացուցիչների կազմակերպչական (կուսակցական, արհմիութենական) պատկանելիությունը, քանզի կազմակերպչությունները, սովորաբար, ավելի մեծ հնարավորություններ ունեն ազդելու իրենց ներկայացուցիչների վրա և նրանց գործունեությունը մղելու ցանկալի ուղղությամբ:

Արդի ժողովրդավարության պայմաններում հասարակության մեջ էլիտայի վրա բացի կուսակցական հսկողությունից, իրականացվում է նաև պետական և հասարակական ինստիտուտների կողմից հսկողություն: Այդպիսի ինստիտուտներից են ընտրությունները, զանգվածային լրատվամիջոցները, հասարակական կարծիքի հարցումը և այլն:

Էլիտայի ելությունը, դերն ու նշանակությունը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է պարզել, թե ով է մտնում քաղաքական էլիտայի կազմի մեջ:

Քաղաքական էլիտայի մեջ մտնում են բարձրագույն դեկավար կադրերը, կառավարողներն ու գաղափարախոսները, մտավորականները, որոնց մտքերն ու կարծիքը յեծ հեղինակություն են վայելում էլիտայի մեջ են մտնում նաև առավել ազդեցիկ տնտեսական և վարչական շրջանակները, ՉԼՄ-ների դեկավարները և այլն: Էլիտայի մաս կարող են կազմել ազդեցիկ ընտանիքների անդամները (նախագահ, վարչապետ, նախարար և այլն), որոնք, կարծես թե, անմիջապես չեն մասնակցում որոշումների ընդունմանն ու իրականացմանը, սակայն մեծ ազդեցություն են ունենում և որոշումների ընդունման, և դրանց իրականացման վրա:

Քաղաքական էլիտայի գործունեությունը նրա ֆունկցիաների իրականացման արդյունք է. քանզի էլիտայի դերը հասարակության, կառավարման,

տնտեսության մեջ երևում է հենց նրա ֆունկցիաների իրականացման ընթացքում. Կարևոր ֆունկցիաներից են.

1. Էլիտան կոչված է ձևավորելու իր սոցիալական խմբի քաղաքական նպատակները. մշակելու նրա ծրագրային փաստաթղթերը
2. Էլիտան կարևորագույն դեր է խաղում սոցիալական խմբերի քաղաքական կամքի ձևավորման և դրանց իրականացման մեխանիզմների մշակման գործում:
3. Էլիտան կարգավորում և ուղղորդում է իր սոցիալական խմբի գործունեությունը ըստ իրադրության.
4. Էլիտան ղեկավար կադրերի հիմնական մասն է, քաղաքական և պետական կառավարման տարբեր տեղամասերի համար կադրերի ընտրության հիմնական կենտրոնը:

Հայաստանում քաղաքական Էլիտան ղեռն է կայացած չէ. կամ եթե եղած իշխանական վերնախավին համարենք քաղաքական Էլիտա. ապա այն չափազանց թույլ ու անկազմակերպ է, քանզի կայացած չեն այն հիմնական քաղաքական ինստիտուտները (կուսակցություններ, ընտրություններ և այլն), որոնք քաղաքական Էլիտայի ձևավորման անհրաժեշտ նախապայմանն են Այդ պատճառով էլ Հայաստանում գոյություն ունեցող իշխանական ընտրախավը ձևավորվում է ավելի շատ անձնական վստահության, ծանոթաբարեկամության կապերի, նեղ կլանային շահերի հիման վրա, քան մասնագիտական կարողությունների ու ընդունակությունների, կամ սոցիալական խմբի ու հասարակության շահերը հաշվի առնելով Հայաստանում քաղաքական Էլիտայի թուլության հիմնական պատճառներից է նաև այն, որ նրանց մեծամասնությունը սոցիալ-քաղաքական հենարան չունի, չի ներկայացնում որևէ կազմակերպված սոցիալական խմբի շահեր Քաղաքական Էլիտայի թուլության պատճառներից է նաև գաղափարական կողմնորշման բացակայությունը, խեղաթյուրված են բարոյական արժեքները, բացակայում են սոցիալ-քաղաքական հստակ ծրագրեր. Իշխանության գործունեության մեջ իշխող են նեղ կլանային շահերը, բացակայում է պետական մտածողությունը, հովանավորչությունն ու կաշառակերությունը դարձրել են սովորական երևույթ. երբեմն նույնիսկ իշխանության գործունեության հիմնական սկզբունք Այս ամբողջը պատճառ են դարձել իշխանությունների նկատմամբ զանգվածների անվստահության ու անտարբերության աննախադեպ աճի, որը նույնպես քաղաքական Էլիտայի թուլության հիմնական պատճառներից է:

Քաղաքական Էլիտա արտահայտությունը երկար ժամանակ չէր ընդունվում տեսաբանների կողմից հավանաբար այն պատճառով, որ Էլիտա արտահայտության տակ հասկացվում էր արտոնություններով օժտված խմբի գոյությունը: Արևմտյան շատ քաղաքագետներ գտնում էին, որ քաղաքական Էլիտա արտահայտությունը կիրառելի է չգարգացած հասարակության նկատմամբ և ընդունելի չէ հետինդուստրալ ժողովրդավարական հասարակությունների համար: Այնուհանդերձ, Էլիտա հասկացությունը հաստատվեց

քաղաքական տեսություններում և դարձավ նրա ուսումնասիրող պրոբլեմներից մեկը:

Էլիտայի տեսության առաջացման սկիզբը դրվեց XIX-XX դարերի սահմանագլխին, որի առաջին ռահպիրաները եղան ռուսացի մտածողներ Վ. Ղարբտոն (1848-1923), Գ Մուսկան (1858-1941) և գեոմանացի սոցիոլոգ Ռ Մրիխեյսը (1876-1936)

Իրենց աշխատություններում նրանք փորձեցին մանրամասն վերլուծել և հիմնավորել կառավարող ընտրախավի գոյության պատճառները, քաղաքական գործընթացներում նրա յուրահատուկ դերը, նրա ձևավորման հիմնական գործոնները և այլն: Որպես Էլիտայի առաջացման հիմնական գործոններ էին համարում

- մարդկանց անհատական ընդունակությունների և ելման կետի տարբերությունները.

արդի հասարակության մեջ համընդգրկուն, ամբողջական կազմակերպական կառույցների առաջացման անխուսափելիությունը, որոնցում առանձնանում են ղեկավար փոքրամասնություն և կառավարվող մեծամասնություն.

- հասարակության մեջ աշխատանքի այնպիսի մակարդակի կազմակերպում, որի դեպքում կառավարման գործունեությունը ձեռք է բերում յուրահատուկ նշանակություն.

Նրանք ելնում էին այն հիմնական գաղափարից, որ փոքրամասնության իշխանության ցանկացած ձևում իրականացվում է ոչ իրավասու զանգվածների կառավարում: Գ Մուսկան գրում էր, որ ցանկացած ժամանակ և ցանկացած տեղում այն բոլորը, ինչը կառավարման մեջ հանդիսանում է իշխանության իրականացման անհրաժեշտ քաղաղորդ է իր մեջ ներառում է հրաման ու պատասխանատվություն, միշտ էլ յուրահատուկ դասի իրավասությունն է եղել, որի տարրերը կարող են ամենատարբեր դրսևորումներն ունենալ, կախված ժամանակի կամ երկրի առանձնահատկություններից: Մակայն այդ դասը միշտ էլ ձևավորվում է որպես աննշան փոքրամասնություն նրան ենթակա զանգվածների համեմատությամբ:

Ըստ Մուսկայի, երեք հիմնական հատկանշներ են անհրաժեշտ Էլիտայի մեջ մտնելու համար. գինվորական փառք, հարստություն, հավատ. Հետագայում հստակեցնելով իր տեսակետը նշում էր, որ Էլիտայի դասը պետք է ձևավորվի խելքի ընդունակությունների և հարստության հիմքի վրա: Ինքնին հասկանալի է, որ նշված գործոնները միշտ էլ հասարակության փոքրամասնությանն են մատչելի, առավել ևս երեքը միասին: Ուստի փոքրամասնության իշխանությունը հասարակության մեջ միշտ էլ անխուսափելի է լինելու, քանզի դա կազմակերպված փոքրամասնության իշխանություն է անկազմակերպ մեծամասնության նկատմամբ: Դրանից ելնելով, Մուսկան քաղաքական տեսաբաններին առաջարկում էր մանրամասն ուսումնասիրելու Էլիտայի իշխանության գալու և հաստատվելու պայմանները:

Ցանկացած քաղաքակիրթ հասարակության մեջ, գրում էր Մոսկան, կառավարող ընտրախավը իր իշխանությունը չի հաստատում միայն փաստացի տիրապետման ձևով, այլ փորձում է դրան հաղորդել բարոյական և իրավական բնույթ, այն ներկայացնելով որպես նրա կողմից կառավարվող հասարակության մեջ համընդհանուր ճանաչում գտած գիտության և հավատքի անխուսափելի հետևանք

Ի տարբերություն Դ. Մոսկայի, Շ. Պարետոն էլիտայի ձևավորման հիմնական գործոն էր համարում հոգեանը: Նա էլիտային անվանում էր արիստոկրատիա և գտնում էր, որ նրա հաստատման էական գործոնը նրա հոգեկան հատկանիշներն ու ընդունակություններն են, որոնց մեջ նա առանձնաչափում էր զգացմունքները, կրթերը, բազդները, որոնց ամբողջությունից ձևավորվում է էլիտայի կառավարման շանսը: Ըստ Պարետոյի, այդ հատկանիշները թույլ են տալիս իշխանության գալու առավել ուժեղներին, ակտիվիստներին, ընդունակներին, ինչ-ես լավ, այնպես էլ վատ իմաստով: Պարետոյի կառավարման բանաձևը ծառայում էր կառավարող ընտրախավի իշխանությունը արդարացնելուն, որովհետև մեծամասնության աչքում այն ներկայացնել որքան հնարավոր է հիմնական և ընդունելի: Դրա հետ միասին, նա գտնում էր, որ կառավարող էլիտան իր իրական նպատակները միշտ թաքցնում է, իրեն միշտ ներկայացնելով որպես բոլոր ճնշվածների առաջնորդ ու պաշտպան և հավանացնում է, որ գործում է հանուն բոլորի բարոյության: Պարետոն գտնում է, որ արդի հասարակությունը նախորդներից տարբերվում է հիմնականում էլիտայի բնույթով: Կառավարելով մեծամասնությանը, էլիտան միշտ դժուր է ուժի և խորամանկության: Նա Մաքիավելու նման կառավարողներն բաժանում էր երկու խմբի-առյուծների և աղվեսների: Առյուծները կառավարում են ուժի և բռնության միջոցով: Աղվեսները կառավարում են խորամանկության, նենգության ու խաբեության միջոցով

Գերմանացի սոցիոլոգ Ռ. Միխեսը որպես էլիտայի հիմնական տարբերակիչ առանձնացնում էր «օլիգարխիայի երկայնա օրենքը», համաձայն որի ցանկացած կազմակերպություն ընդգծված ձևով օլիգարխիայի վերածվելու ձգտում ունի, այսինքն կազմակերպությունը անխուսափելիորեն բաժանվում է կառավարող փոքրամասնության և կառավարվող մեծամասնության: Հասնելով բարձր մակարդակի բարեության, կազմակերպությունը ստեղծում է կազմակերպված և կանոնակարգված կառավարման հերարխիկ (վերից-վար կառավարում) համակարգ, որը վերջին հաշվով իշխանությունը կենտրոնացնում է վերևների ձեռքում և վերջացնում է շարքային անդամների ազդեցությունը կազմակերպության մեջ: Այս ձևով, ըստ Միխեսի, տեղի է ունենում կառավարման համակարգի բյուրոկրատացում և կառավարող էլիտայի ձևավորում, որի լիդերները կազմակերպության մյուս անդամների համեմատությամբ օժտված են բավապահել մեծ արտոնություններով: Ի տարբերություն շարքային անդամների կազմակերպության ղեկավար էլիտան տիրապետում է ավելի շատ գիտելիքների և ինֆորմացիայի, ինչն էլ նրան հնար

ավորություն է տալիս իր ձեռքում կենտրոնացնելու կազմակերպության կառավարումը և կազմակերպության կողմից առաջ մղվելու դեպի քաղաքական էլիտայի շարքերը:

Ժամանակակից էլիտայի տեսություններում առաջացել են մի քանի մոտեցումներ, որոնց մեջ նշանակալից են Մաքիավելիստական, արժեքային, կառուցվածքա-գործառնական և լիբերալիստական մոտեցումները:

Մաքիավելիստական մոտեցման մեջ վճռական է համարվում պասիվ մեծամասնության և իշխող արտոնյալ փոքրամասնության միջև եղած տարբերությունը: Ըստ այդ մոտեցման էլիտան օժտված է հասարակության տարբեր ոլորտների, առաջին հերթին տնտեսական և քաղաքական ոլորտների, կառավարման յուրահատուկ ընդունակություններով: Այս դեպքում էլիտայի իշխանության հասնելու միջոցներ, նրա հատկանիշների, ընդունակությունների բարոյական գնահատականը գրեթե բացակայում է, քանզի բոլոր միջոցները նպատակին հասնելու համար արդարացված են: Գլխավորը այն է, որ էլիտան կարողանա իրականացնել կառավարման, վարչական ֆունկցիա, կարողանա պահպանել իր ղեկավարի և իշխող դիրքը ենթակաների նկատմամբ, ինչը պետք է նրան ապահովի առավելագույն նյութական և հոգևոր արժեքներ ստանալ:

Արժեքային մոտեցման մեջ էլիտան համարվում է ոչ միայն կազմակերպած կառավարողների փոքրամասնություն, այլև հասարակության առավել ստեղծագործական և արդյունավետ գործող մասը, օժտված բարձր մտավոր և բարոյական հատկանիշներով: Մարդկային գործունեության գլխավոր նպատակը, նշում է իսպանացի փիլիսոփա Օրտեգա ի Զասենսը, ստեղծագործելն է, կյանքում նոր արժեքների ստեղծումը: Ուստի յուրաքանչյուր հասարակության մեջ, եթե մարդկանց մեծ մասը սովորական մարդիկ են, ապա բժիշկներ, դատավորներ, նկարիչներ, բանվորներ և այլն, ապա հոգևոր էլիտան օժտված է հատուկ կենսական ուժերով, որը նրան դարձնում է լավագույնը, ընտրյալը, նա իր նկատմամբ պահանջկոտ է, քանզի օժտված է շնքնակատարելագործման իսկական ընդունակությամբ: Այդ տեսակետի կողմնակից էր նաև ռուս փիլիսոփա Ն. Բերդյաևը: Յուրաքանչյուր հասարակության առջև և՛ միապետական, և՛ ժողովրդավարական, ըստ նրա, կանգնած է էլիտայի ձևավորման և հաստատման խնդիրը, (Բերդյաևը էլիտային նույնպես անվանում էր արիստոկրատիա), քանզի իշխանությունը պետք է պատկանա լավագույններին, ընտրյալներին, որոնց վրա մեծ պատասխանատվություն է դրված և որոնք ընդունակ են իրենց վրա մեծ պարտականություններ վերցնել:

Ըստ կառուցվածքագործառնական մոտեցման էլիտային են պատկանում այն անհատները և մարդկանց խմբերը, որոնք հասարակության մեջ օժտված են բարձր սոցիալական դիրքով և հասարակության կարևորագույն ինստիտուտներում ու կազմակերպություններում զբաղեցնում են որոշակի ղեկավար դիրքեր: Նրանք հասարակության մեջ իրականացնում են կարևոր կառավարման ֆունկցիաներ և մեծ ազդեցություն ունեն այնպիսի որոշում-

ների ընդունման վրա, որոնք էական հետք են թողնում հասարակության զարգացման վրա Այս տեսակետի կողմնակիցներից էին Գ. Լասուելը (1902-1978) և Ս. Լեպստը (1922) Գ. Լասուելը գտնում էր, որ այդպիսի կարևորագույն ֆունկցիաներ (կարևոր քաղաքական որոշումներ մշակել ու ընդունել), իրականացնելու համար մեծ դեր է խաղում նրանց մտավոր գիտելիքները: Դրանցից ելնելով էլ նա քաղաքական էլիտայի մեջ ներառում էր միայն նրանց, ովքեր տիրապետում էին համապատասխան գիտելիքների և հասարակության մեջ առավել մեծ ճանաչում ու կարգավիճակ ունեին:

Լիբերալիստական մոտեցումը էլիտան բնորոշում էր որպես իշխող փոքրամասնություն. որը հասարակության մեջ պետական և տնտեսական հաստատություններում գրավում է նշանակալից դիրք և ազդեցություն ունի մեծ թվով մարդկանց կյանքի վրա: Այս մոտեցման շատագույններ էին ավստրիացի սոցիոլոգ Յոզեֆ Ա. Շումպետերը (1883-1950) և ամերիկացի մտածող Ռայտ Միլլսը (1916-1962): Ըստ Շումպետերի էլիտան հասնում է իր բարձրագույն դիրքին մրցակցության սուր պայքարի ընթացքում: Ժողովրդավարությունը բնորոշելով որպես քաղաքական ղեկավարության պարբերական փոփոխություն, նա գտնում էր, որ քաղաքական էլիտան հանդես է գալիս որպես լիբերալ- ժողովրդավարական արժեքների պաշտպան:

Ռ.Միլլսը հանդես էր գալիս ձախ լիբերալիստական էլիտայի կոնցեպցիայի դիրքից և քննադատական մոտեցում ուներ իշխող էլիտայի նկատմամբ: Իր «իշխող էլիտայի» աշխատության մեջ նա վերլուծելով ամերիկյան էլիտայի փորձը, ցույց էր տալիս թե ինչպես է էլիտան բռնության ինստիտուտի միջոցով տեր դառնում իշխանությանը, հարստությանը, արտոնություններին, զանգվածային լրատվամիջոցներին և գովազդին, որոնց միջոցով էլ իշխում է հասարակության վրա. Ըստ Միլլսի, ամերիկյան էլիտայի հզորությունը հասկանալու բանալին պետք է փնտրել հերարխիկ հաստատությունների՝ պետության, կորպորացիաների, բանակի մեջ, որոնք հանդիսանում են իշխանության հիմնական գործիք և որոնց միջոցով էլ իրականացվում է էլիտայի իշխանությունը: Էլիտան բնորոշելով որպես բարձրագույն սոցիալական շերտ, որպես բարձր խավերի հիմնական միջուկ, Միլլսը նշում էր, որ էլիտան իրենից ներկայացնում է ինչ որ համապարփակ սոցիալական և հոգեբանական ամբողջություն, որի անդամները իրար հետ կապված են որոշակի գործնական և ոչ ձևական հարաբերություններով: Միլլսը մանրամասն վերլուծության է ենթարկել էլիտայի հեղինակության հարցը: Նա գրում է, դուք որքան մեծ հեղինակություն ունեք, այնքան ավելի շատ այն ձեռք բերելու հնարավորություն ունեք:

Ամփոփելով վերը շարադրածը, կարելի է տալ քաղաքական էլիտայի հետևյալ բնորոշումը. Զաղաքական էլիտան տարբեր սոցիալական խմբերից, իշխանության մեջ ուղղակիորեն կամ միջնորդավորված ներառված այն անհատները և խմբերի միասնությունն է, որոնց գիտելիքների մակարդակը, մասնագիտական կարողությունները, կյանքի և քաղաքական փորձը, կառավարման հմտություններն ու ունակությունները թույլ են տալիս նրան իշխա-

նության լծակների օգտագործմամբ իրականացնելու հասարակության կառավարումը:

Գրականություն

1. Аристотел, соч. Т.11. М.1983
2. Ашин Г. Правящая элита и общество. /свободная мысль.1993-- # 7/
3. Бердяев Н. Философия неравенства.М.1990.
4. Блопдейл Ж. Политическое лидерство.М.1992.
5. Введение в политологию. Словарь – справочник. М.1990.
6. Вебер М. Избранные произведения. М.1990.
7. Имидж Лидера. М.1994.
8. Кротов Б.И. Лидерство: Социально – политические проблемы. М.1996.
9. Миссл Р. Властвующая элита. М.1959.
10. Моска Г. Элементы политической науки. /социологические исследования. – 1995 – # 4
11. Ортега и Гассет Х. Веласкес. Гойя. М. 1997.
12. Охотский Е.В. Политическая элита. М.1993.
13. Парето В. О применении социологических теорий. /социологические исследования. – 1995 – # 10
14. Политология. Под. ред. В.Н. Лаврипенко. М.1999.
15. Политология. Курс лекции. Под. ред. А.А. Радугина. М.1999.
16. Попер К. Открытое общество и его враги Т. 1. М. 1992.
17. Հարությունյան Է.Ա. Անցումային հասարակությունը որպես տրասֆորմացիոն գործունեության համակարգ՝ Եր.2000.
18. Նալչաջյան Ա.Ա. Հոգեբանական բառարան՝ Եր.1984.

ՉԼՈՒՄ 5 ԱՍԼՅԻՆԳԵՐՈՐԴ

Քաղաքական կուլտուրա (մշակույթ)

1. Քաղաքական կուլտուրայի ըմբռնումը, բնորոշումը և բովանդակությունը: Կառուցվածքի տարրերը: Դրսևորման մակարդակները

Գրականության մեջ հաճախ կուլտուրա և մշակույթ հասկացությունները տարբերակվում են այն տրամաբանությամբ, թե իբր մշակույթ հասկացությունը իր ընդգրկման իմաստով ավելի նեղ է և համապատասխանում է միայն հոգևոր ոլորտին: Մենք չենք կիսում այդ տեսակետը և «կուլտուրան» և «մշակույթը» դիտում ենք որպես համարժեք հասկացություններ:

Ընդհանուր կուլտուրայի (մշակույթի) տակ ընդունված է հասկանալ այն բոլոր արժեքները, որոնք մարդկությունն իր ողջ գոյության ընթացքում ստեղծելու ժամանակ է սերունդներին նյութական և հոգևոր արժեքների, իրավական և քաղաքական նորմերի, ավանդույթների ու սովորույթների ձևով:

Քաղաքական մշակույթը մարդկության կողմից ստեղծած արժեքների այն մասն է, որն առնչվում է հասարակության կյանքի կազմակերպմանն ու կառավարմանը, պետության ու նրա կառույցների ձևավորմանն ու կայացմանը, իշխանության ձևավորման և իրականացման ձևերին ու մեթոդներին, քաղաքական համակարգերի բնույթին ու գործառույթներին, քաղաքական կազմակերպությունների, պետության և իշխանությունների փոխհարաբերություններին, քաղաքական գործընթացներին և նրա մասնակիցներին, քաղաքական սուբյեկտների փոխհարաբերություններին և գործունեության սկզբունքներին և այլն: Այլ կերպ ասած, քաղաքական կուլտուրան այն ամբողջ արժեքների համակարգն է, որն առնչվում է հասարակության քաղաքական կյանքի հետ:

Քաղաքական կուլտուրայի ընդհանուր և հիմնական տարրերից են ավանդույթները, ազգային ժառանգությունը, աշխարհաքաղաքական գործունեությունը, պատմականորեն ձևավորված հասարակական և էթնիկական կառուցվածքները, դավանանքը և այլն:

Այդ արժեքների մեծ մասը մարդկությունը ժառանգություն է ստացել անցյալից քաղաքական ավանդույթների, սովորույթների, գրական ժառանգության, ուսմունքների և տեսությունների ձևով: Քաղաքական մշակույթային արժեքների մի մասն էլ ստեղծվում են ներկայումս հասարակության քաղաքական կյանքում տեղի ունեցող գործընթացներում անհատների և քաղաքական սուբյեկտների ամենօրյա գործունեության և քաղաքական վարքի դրսևորման միջոցով, ինչը անշուշտ հենված է անցյալից ժառանգված քաղաքական կուլտուրայի վրա:

Քաղաքական մշակույթի արժեքների մի մասն էլ կրում են տեսական բնույթ, այսինքն գոյություն ունեն տեսությունների, գաղափարների և ծրագրերի ձևով և միտված են ապագային:

Քաղաքական կուլտուրան քաղաքական համակարգի հարաբերականորեն ինքնուրույն գործառնող կարևորագույն կառուցվածքային տարրերից

է: Այն տվյալ հասարակության մեջ գործառնելով, արտացոլում է քաղաքական համակարգի զարգացման պատմությունը հին ժամանակներից սկսած: Հետևաբար, քաղաքական կուլտուրան ունի խորը պատմական և սոցիալ-հոգեբանական արմատներ: Քաղաքական կուլտուրայի տարրերը ևս են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ընթացող քաղաքական գործընթացներում և տարալուծված են քաղաքական մասնակիցների փոխհարաբերությունների ամբողջ համակարգի մեջ: Հետևաբար, կարելի է ասել, որ քաղաքական կուլտուրան մարդկային ընդհանուր մշակույթի անսկզբի բաղադրիչն է, որն ընդգրկում է պետության, իշխանության և իշխանական հարաբերություններին առնչվող արժեքների ամբողջ համակարգը:

Քաղաքական կուլտուրայի այսպիսի համընդգրկուն բնույթը գիտական շրջակաության մեջ առաջացրել է անենատարբեր մեկնաբանություններ և բնորոշումներ, ինչը արդյունք է նաև այն հանգամանքի, որ ա) մենք գործ ունենք տարբեր ժամանակաշրջանների կուլտուրաների հետ, բ) առկա են տարբեր ազգային կուլտուրաներ, իրենց զարգացման տարբեր մակարդակներով, գ) քաղաքական կուլտուրան մշտապես գտնվում է զարգացման և քրոփոխման պրոցեսում և ցանկացած վերջնական բնույթ ունեցող բնորոշում կարող է թերի լինել:

Ուշադրություն դարձնելով գրականության մեջ եղած քաղաքական կուլտուրայի բնորոշումներին, նկատելի է դառնում, որ այն հեղինակները, ովքեր հզտել են տալ քաղաքական կուլտուրայի ամբողջական էությունը բնորոշող սահմանում, այն ավելի շատ նման է եղել քաղաքական կուլտուրայի նպարագրության, քանզի այնպիսի բազմաշեղծ, բարդ ու բազմաբնույթ էրևույթ, ինչպիսին քաղաքական մշակույթն է, անհնարին է համառոտ բնորոշում տալ, միևնույն ժամանակ ընդգրկելով նրա բոլոր կողմերն ու առանձնահատկությունները: Իսկ, երբ փորձել են տալ քաղաքական կուլտուրայի համառոտ բնորոշում, ստացվել է քաղաքական կուլտուրայի վերացական կամ միակողմանի պատկերացում:

Կանգ առնենք գրականության մեջ եղած մի քանի բնորոշումների վրա:

1. Քաղաքական կուլտուրան պատմականորեն ձևավորված, հարաբերաբանորեն կայուն, մարդկանց դիրքորոշման, կողմնորոշման և վարքի ձևերի մեջ ամրագրված նախորդ սերունդների փորձն է, որն անմիջականորեն դրսևորվում է քաղաքական գործընթացների սուբյեկտների գործունեության մեջ: Ֆիքսելով այդ ամբողջ գործընթացների նկատմամբ նրանց վերաբերմունքի սկզբունքները, հիմնական տարրերը, դրանով իսկ ապահովելով հասարակության քաղաքական կյանքի վերարտադրությունը (4,280): Ասածը, անշուշտ, լրիվ վերաբերում է քաղաքական կուլտուրայի բովանդակությանն ու առանձնահատկություններին, սակայն հստակ պատկերացում քաղաքական մշակույթի մասին չի առաջացնում: Հեղինակները գրքի շարադրանքում իրանալի վերլուծության են ենթարկել քաղաքական կուլտուրայի առանձնահատկությունները, սակայն բնորոշման մեջ քաղաքական կուլտուրայի

միայն մեկ կառույց բաղադրիչ է (փորձը) երևում, որը չի կարող ամբողջական պատկերացում տալ նրա մասին:

2. Զաղաքական կուլտուրան դա քաղաքական մտածողության և քաղաքական գործունեության կուլտուրան է, ինչպես նաև քաղաքական ինստիտուտների, հասարակության կյանքի բոլոր քաղաքական կազմակերպությունների քաղաքակրթության աստիճանն ու գործունեության միջոցները: (Ռ.17:3) Բնորոշման առաջին մասը քաղաքական կուլտուրայի մեկնաբանության կենցաղային մակարդակն է հիշեցնում, երբ ինչ որ հարցի շուրջ վիճաբանության ժամանակ կողմերն իրար մեղադրում են քաղաքական կուլտուրա չունենալու մեջ, կամ երբ պետք է լինում մեկին, լինի դա սովորական անհատ թե քաղաքական գործիչ, գնահատել հասարակության քաղաքական կյանքի մասին նրա պատկերացումներից կամ գործունեության բնույթից ելնելով, նրան բնորոշելով որպես քաղաքական կուլտուրա չունեցող, քաղաքականապես տգետ, քաղաքականությունից անտեղյակ է և այլն: Մինևույն ժամանակ, քաղաքական մտածողությունն ու զրանով պայմանավորված քաղաքական գործունեությունը քաղաքական արժեքների յուրացման արդյունք են, ասել է թե, ցանկացած քաղաքական մտածողություն չի կարող իր մեջ ներառել ամբողջ քաղաքական մշակույթը, ուրեմն և, չի կարող նույնանալ նրա հետ: Հետևաբար այս մեկնաբանությունը նույնպես թերի է:

3. Զաղաքական կուլտուրան քաղաքական փոխազդեցությունների և նրանց կանոնների ու սորմերի կարգավորման ընդունված միջոցների պատմականորեն ձևավորված ամբողջությունն է, որը հիմնարար քաղաքական արժեքների, դիրքորոշումների և վարքի մոդելների համակարգի ձևով արտացոլված են սոցիալական սուբյեկտների հասարակական փորձի, ավանդույթների և շահերի մեջ (10,347) Այստեղ առաջնային է համարվում պատմականորեն ձևավորված քաղաքական փոխազդեցությունները, այն դիտելով որպես համակարգ, ինչը նույնպես քաղաքական կուլտուրայի ամբողջական բնույթը չի բացահայտում, որովհետև, քաղաքական մշակույթի արժեքները ստեղծվում են նաև այսօր, որոնք դեռևս պատմականորեն ձևավորված փորձի արդյունք չեն, սակայն քաղաքական մշակույթի կարևորագույն մասն են կազմում:

4. Առկա են նաև մի շարք այլ մեկնաբանություններ, որոնց վրա մանրամասն կանգ չառնելով հանդերձ, նշենք դրանցից մի քանիսի հիմնական բովանդակությունը

- քաղաքական կուլտուրան անհատի, քաղաքական կազմակերպություններում միավորված սոցիալական հանրույթների, քաղաքական գիտակցության և հասարակական-քաղաքական գործունեության կուլտուրան է:

- քաղաքական կուլտուրան հասարակության հոգևոր կուլտուրայի մի մասն է, իր մեջ ներառելով այն տարրերը, որոնք կապված են հասարակական-քաղաքական ինստիտուտների և քաղաքական գործընթացների հետ:

- քաղաքական կուլտուրան համանման գիտակցության և վարքի ամբողջությունն է, ինչը հատուկ է կոնկրետ սոցիալական հանրույթին կամ գրեկոնետ անհատին

- քաղաքական կուլտուրան քաղաքական հարաբերությունների որոշակի համակարգում սոցիալական սուբյեկտի քաղաքական գիտելիքների, արժեքային կողմնորոշումների և վարքի ձևերի իրականացում է:

Եթե վերը նշված քաղաքական կուլտուրայի բոլոր բնորոշումները դիտարկենք մեկ միասնության մեջ, ապա կունենանք քաղաքական կուլտուրայի լրիվ և ամբողջական պատկերացումը: Բայց այս դեպքում էլ, մենք կունենաք ոչ թե քաղաքական կուլտուրայի սահմանումը, այլ նրա առանձնահատկությունների, բնույթի ու բովանդակության մանրամասն վերլուծությունը:

Մյանգամայն իրավացի է Ա.Ս. Պանարինը, որը չփորձելով տալ քաղաքական կուլտուրայի ամբողջական բնորոշումը, առաջարկում է քաղաքական կուլտուրան դիտել որպես սիմվոլիկ համակարգ, նշելով, որ քաղաքական կուլտուրան միավորում է երեք ժամանակաշրջան, անցյալը, որն ամրագրված է քաղաքական ավանդույթներում, ներկան, որն արտացոլված է արդի քաղաքական իրականությանը համապատասխանեցված մարդկանց կառքի և նորմերի մեջ, ապագան, որը համատեղում է հավանականը, ցանկալին և անիրաժեշտը՝ «Քաղաքական կուլտուրան, գրում է Ա.Ս. Պանարինը, չարելի է սահմանել որպես սիմվոլիկ համակարգ, որն ընդգրկում է քաղաքական ավանդույթներ, քաղաքական նորմեր և արժեքներ, քաղաքական գաղափարներ և ապագայի ծրագրեր»: (6,327): Դժվար չի նկատել, որ հեղինակը, նշելով տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված արժեքների միավորման, միասնական համակարգերով ներկայացնելու անիրաժեշտությունը, նկատի ունի, ա) անցյալում ստեղծված քաղաքական ամբողջ մշակույթային արժեքները, որը նյութականացված, մարմնավորված են գոյություն ունեցող քաղաքական համակարգերում, քաղաքական ինստիտուտներ և քաղաքական սուբյեկտների փոխհարաբերություններում և գործունեության սկզբունքներում, բ) ներկայումս ստեղծվող քաղաքական կուլտուրայի արժեքները, որոնք արդի քաղաքական հարաբերություններում դրսևորվում են մաթոկանց և քաղաքական սուբյեկտների գործունեության և վարքի միջոցով, ինչը այլ բան չէ, քան անհատների և քաղաքական սուբյեկտների գործունեության միջոցով այսօր ստեղծված քաղաքական գաղափարների, սկզբունքների, հասարակության կյանքի կազմակերպման նոր ձևերի ու մեթոդների իրականացման գործընթաց:

Քաղաքական հարաբերությունների ոլորտում մարդու գործունեությունը ստեղծագործական բնույթ ունի, ինչպես անցյալի արժեքների օգտագործման այնպես էլ նոր քաղաքական արժեքների ներդրման առումով: Բանն այն է, որ մարդու կողմից անցյալի արժեքների յուրացման դեպքում է միայն նա հնարավորություն ունենում դրանք օգտագործել նոր քաղաքական իրավիճակներում, գտնելու դրանց կիրառման նոր ձևեր ու եղանակներ, որի ընթացքում էլ առաջանում է նախկին արժեքների վերաիմաստավորման, վե-

րափոխման, լրացման ու կատարելագործման անհրաժեշտություն, **ինչը** մարդուց պահանջում է ստեղծագործական մոտեցում, որի արդյունքում էլ ծնվում են քաղաքական մշակույթի նոր արժեքներ: գ) Խոսելով ապագայի մասին և համատեղելով հավանականը, ցանկալին և անհրաժեշտը, հեղինակը մատնանշում է այն իրողությունը, որ այսօր ծնվում են շատ գաղափարներ, մշակվում են քաղաքական նոր հարաբերությունների հաստատման ծրագրեր, որոնք միտված են ապագային, սակայն, որոնց իրականացման հավանականությունը պայմանավորված է հասարակության զարգացման աստիճանով, այսինքն հասարակությունը կարող է դեռևս պատրաստ չլինել նոր գաղափարների և ծրագրերի ներդրման համար, սակայն հասարակության համար դրանք և ցանկալի են, և՛ անհրաժեշտ: Եվ չնայած այդ գաղափարներն ու ծրագրերը դեռևս մնում են տեսության մակարդակում, այնուհանդերձ դրանք քաղաքական կուլտուրայի արժեքավոր մաս են կազմում: Օրինակ 17-18-րդ դարերում մի շարք խոշոր մտածողներ (Ջ.Լոկ, Թ.Հոբս, Շ.Մոնտեսքյո և ուրիշներ), առաջ են քաշել մի շարք կարևորագույն քաղաքական գաղափարներ (մարդու իրավունքների և ազատությունների, իրավական պետության, քաղաքացիական հասարակության, իշխանությունների՝ բաժանման սկզբունքների և այլնի մասին), որոնք այսօր էլ դեռևս գտնվում են իրականացման գործընթացներում և դեռ մնում որպես ապագայի լուծելիք խնդիր:

Եվ իրոք, միայն բոլոր ժամանակաշրջանների, այդ թվում և ապագայի, քաղաքական մշակութային արժեքները համախմբելով, միավորելով և որպես ամբողջական համակարգ ներկայացնելով է հնարավոր լինի պատկերացում կազմել քաղաքական կուլտուրայի մասին:

Նշենք նաև, որ քաղաքական կուլտուրայի կարևորագույն բաղադրիչն է նաև հենց քաղաքական կուլտուրայի վերարտադրության գործընթացը:

Քաղաքական կուլտուրան ցույց է տալիս մարդու և հասարակության կողմից քաղաքական գաղափարների, հայացքների, կոնցեպցիաների և ծրագրերի յուրացման աստիճանը, հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել տեղի ունեցող քաղաքական զարգացումների բնույթը, օգնում է մարդուն, քաղաքական կազմակերպություններին և հասարակությանը ճիշտ կողմնորոշվելու քաղաքական համակարգի նկատմամբ:

Երբ խոսում ենք հասարակության քաղաքական կուլտուրայի մակարդակի մասին, առաջին հերթին նկատի ենք ունենում քաղաքացիների կողմից քաղաքական կուլտուրայի արժեքների յուրացման և իրենց գործունեության մեջ դրանց կիրառման աստիճանը, ինչով էլ, սովորաբար, պայմանավորված է լինում մարդու և հասարակության վերաբերմունքը քաղաքական համակարգի, պետության և իշխանական կառույցների նկատմամբ: Այս տեսանկյունից քաղաքական կուլտուրան կարելի է դիտել որպես քաղաքականության, քաղաքական փոխհարաբերությունների, օրենքների և նորմերի մասին ազգի, սոցիալական խմբի և հասարակական այլ հանրույթների պատկերացումների ամբողջական համակարգ:

Իշխանության և քաղաքացիների փոխհարաբերություններում ամրագրված են որոշակի նորմեր, վարքի և արժեքների ձևեր: Դրանց մի մասը ձևակերպված են օրենսդրորեն, իսկ մյուս մասը հասարակության մեջ հաստատված են ավանդույթների, ծեսերի ու սովորույթների ձևով, որոնց միջոցով էլ ապահովվում են քաղաքական համակարգի ամբողջականությունն ու համախմբվածությունը:

Դրպես քաղաքական մշակույթի կարևորագույն տարրեր կարելի է առանձնացնել հետևյալ արժեքները

- քաղաքականության մասին գիտելիքները և քաղաքականությամբ հետաքրքրվելը,
- քաղաքական երևույթների գնահատման ընդունակությունը, իշխանության իրականացման վերաբերյալ դատողությունների ունակությունը,
- քաղաքական դիրքորոշման զգացմունքայնությունը, ասենք հայրենիքի նկատմամբ սերն ու հարգանքը, հայրենիքի հպարատության զգացումը, ազգային պատկանելիության զգացումը, թշնամու նկատմամբ վերաբերմունքը և այլն,
- տվյալ հասարակության մեջ հաստատված քաղաքական վարքագծի ձևերի ընդունումը, որոնք մարդուն օգնում են որոշելու ինչպես վարվել, ինչպես գործել տվյալ պահին,
- քաղաքական ավանդույթները, ծեսերն ու սովորույթները, կրոնը,
- միջազգային ընդունված նորմերն ու սկզբունքները,
- իշխանության ձևավորման և իրականացման հաստատված սկզբունքները:

Որպես քաղաքական կուլտուրայի կառուցվածքային տարրեր առանձնացվում են ճանաչողական, բարոյաարժեքավորման և վարքագծային տարրերը: Ճանաչողական տարրերից են քաղաքական գիտելիքները, քաղաքական կրթվածությունը, քաղաքական մտածողության ընդունակությունը, քաղաքական շահերի գիտակցումը, որը կարող է դրսևորվել անհատական, սոցիալական խմբի, պետական, հասարակական, տեղային և գլոբալ մակարդակներով: Ճանաչողական տարրերից են նաև երկրի օրենքների, խոշոր քաղաքական կազմակերպությունների ծրագրային դրույթների, հաստատված քաղաքական հարաբերությունների, տեղի ունեցող քաղաքական երևույթների ճանաչումն ու իմաստավորումը: Ճանաչողական կարևոր տարրերից են նաև պետական, կուսակցական և հասարակական-քաղաքական կազմակերպությունների էության, ֆունկցիաների ու կառուցվածքի մասին պատկերացումը, քաղաքական գործընթացներին մասնակցելու ձևերի և միջոցների իմացումը, կառավարման գործընթացներին մասնակցելու անհրաժեշտության գիտակցումը, միջազգային քաղաքական իրադարձություններով հետաքրքրվելն ու դրանց էության ըմբռնումը և այլն:

Քաղաքական կուլտուրայի արժեքավորող (գնահատողական) տարրերը դրսևորվում են իշխանության և քաղաքական երևույթների նկատմամբ վե-

րաբերմունքում, քաղաքական իրադարձությունների և գործընթացների բարոյական գնահատականներում, քաղաքականության մեջ կոնկրետ գործունեությամբ, քաղաքական ինքնագնահատմամբ:

Քաղաքական կուլտուրայի վարքագծի տարրերը կապված են քաղաքական գործընթացներին քաղաքացիների գիտակցված մասնակցության հետ: Օրինակ մասնակցություն: ա) հանրաքվեների ընթացքում պետական փաստաթղթերի նախագծերի քննարկմանը, բ) ներկայացուցչական մարմինների ընտրությունը, գ) տարբեր պետական և հասարակական կազմակերպությունների աշխատանքներին, դ) քաղաքական միջոցառումներին, միտինգներին, ցույցերին և այլն, ե) քաղաքական կուսակցությունների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությանը և այլն:

Յուրաքանչյուր կառուցվածքային տարր ենթադրում է հասարակության քաղաքական կյանքում մարդկության կողմից ստեղծած ընդհանուր մշակութային արժեքների առկայությունն ու դրանց օգտագործումը:

Ամբողջ քաղաքական կուլտուրան ներառված է մարդկային գործունեության երկու հիմնական ձևերի մեջ՝ ա) հոգևոր, կամ հոգևոր պրակտիկ գործունեության, որում առկա են քաղաքական փորձը, ավանդույթները, կողմնորոշումները, իշխանության նկատմամբ վերաբերմունքը և այլն, բ) առարկայական-գործառնական, որում ներառված են քաղաքական ինստիտուտների կազմակերպման որոշակի միջոցներ ու ձևեր, քաղաքական մտքի նվաճումների նյութականացման քաղաքական գործունեության եղանակներ ու մեթոդներ, քաղաքական գործընթացներն ու դրանց կազմակերպման ձևերը, որոնք փոխկապակցված են և ներծծված են ամբողջ քաղաքական կյանքի մեջ:

Առանձնացվում է քաղաքական կուլտուրայի դրսևորման երեք հիմնական մակարդակներ, աշխարհայացքային, քաղաքացիական և քաղաքական:

Աշխարհայացքային մակարդակը մարդու գիտելիքների մակարդակն է, որը նրան թույլ է տալիս ճանաչելու իր շրջապատում տեղի ունեցող քաղաքական երևույթների բնույթն ու նշանակությունը: Այս մակարդակում մարդը հնարավորություն է ստանում որոշելու իր տեղը քաղաքական կյանքում, կողմնորոշվելու քաղաքական գործընթացներին մասնակցելու կամ չմասնակցելու հարցում: Այդպիսի ընտրությունը կախված է մարդու կենսական դիրքորոշումից, օրինակ, անհատական կամ հասարակական շահերին նախապատվություն տալը, այս կամ այն կուլտուրայի արժեքների (ասեսք, արևմտյան թե՛ արևելյան, ազգային, թե՛ համաշխարհային) առաջնության ընդունումը, վերաբերմունքը իշխող գաղափարախոսության նկատմամբ և այլն:

Քաղաքացիական մակարդակում ձևավորվում է քաղաքական կուլտուրայի միջուկը: Այս մակարդակում է հիմնականում դրվում իշխանության նկատմամբ մարդու վերաբերմունքի, մարդու և իշխանության հարաբերությունների ձևավորման հիմքը: Մարդը սկսվում է ռադիոդակցվել քաղաքական կյանքին, որոշում է կայացնում մասնակցել, թե՛ չմասնակցել նրանում ընթացող գործընթացներին, ինչը կախված է այն բանից, թե ինչ վերաբեր-

մունք է ձևավորվել նրա և իշխանության միջև, իշխանության մասին նրա վստակեցումից, որից ելնելով էլ նա որոշում է իր քաղաքացիական իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը և պարտականությունների կատարման չափը քաղաքական գործընթացներին մասնակցելու միջոցով: Չենց այս մակարդակում է ձևավորվում իշխանություններին ենթարկվելու կամ հակադրվելու քաղաքացիների համոզմունքները, որոնք էլ նրան մղում են որոշակի քաղաքական քայլերի: Շատ մարդկանց համար այդ ներքին համոզմունքը ավելի մեծ դեր է խաղում նրանց քաղաքական կողմնորոշման և քաղաքական գործունեությունում, քան որևէ քաղաքական կուսակցության անդամակցելը ու նրանց գործունեությանը մասնակցելը:

Քաղաքական մակարդակում ձևավորվում են քաղաքական երևույթների նկատմամբ մարդու գնահատողական վերաբերմունքը, սկսած պետությունից և միջպետական հարաբերություններից մինչև հենց իրեն, որպես քաղաքական սուբյեկտի ինքնագիտակցումը: Մարդը վերջնականապես պարզում է որ և քաղաքականության փոխհարաբերությունները, սկսում է ավելի հստակ գիտակցել իր կյանքում քաղաքականության դերը: Չասնելով այդ մակարդակին, մարդիկ ակտիվ ներառվում են հասարակության քաղաքական կյանքի մեջ, կամ գիտակցաբար հեռանում, մեկուսանում են նրանից, որոնք մի մասը վերածվում է քաղաքական իրադարձությունների սոսկ դիտողի, սպասելով, որ իրենց փոխարեն ուրիշները կուծեն իրենց խնդիրները:

Քաղաքական կուլտուրայի մակարդակը կախված է նաև հաստատված իշխանության սկզբունքներից: Որքան քաղաքական իշխանության սկզբունքները ժողովրդավարական են, որքան ճկուն են քաղաքական իշխանության վրա հսկողության միջոցները, այնքան բարձր է քաղաքական կուլտուրայի մակարդակը: Այս տեսանկյունից քաղաքական կուլտուրան կարելի է դիտել որպես քաղաքական գործունեության ընթացքում առաջացած սոցիալական սուբյեկտների քաղաքական գիտակցության ձևորոշ գծերի ամբողջություն, որը դրսևորվում է այնպիսի քաղաքական իշխանության իրականացման, քաղաքական գործընթացներին մասնակցելու ընթացքում, որը բնորոշ է կոնկրետ գոյություն ունեցող քաղաքական համակարգին, և որը թույլ է տալիս սոցիալական խմբին և անհատներին դրան համապատասխան իրականացնել իրենց քաղաքացիական ազատությունները և իրավունքները:

Կարելի է առանձնացնել քաղաքական կուլտուրայի մշտական և փոփոխական արժեքներ: Մշտական արժեքներից են հասարակական-պատմական, ազգային մշակութային, սոցիալ-տնտեսական և այլն կայուն ու երկարակյաց գործոնները, պայմանները, կառուցվածքները և այլն: Դրանցից են հաստատված և գործող կայուն բարոյական նորմերն ու արժեքները, ազգային-հոգեբանական և կրոնական վարքի նորմերն ու ավանդույթները և այլն:

Փոփոխական արժեքներից են քաղաքական հայացքները, արժեքները, վերաբերմունքը կողմնորոշումները, որոնք քաղաքական զարգացումների և իրադարձությունների ազդեցության տակ կարող են արագ փոփոխվել:

Քաղաքական կուլտուրայի հարթաբերականորեն կայուն, կենսունակ տարրերից են ավանդույթները, ազգային մտածելակերպը, կրոնը, որոնք չափազանց դանդաղ են փոխվում կամ չեն փոխվում ընդհանրապես:

Ուշադրություն դարձնելով աշխարհում ընթացող քաղաքական գարգացումների վրա, կարելի է նկատել, թե մարդկանց, սոցիալական խմբերի, ազգերի քաղաքական վարքագծի վրա ինչ մեծ ազդեցություն է թողնում կրոնի գործոնը, մանավանդ նրա արմատական դրսևորման ժամանակ, ինչը բնորոշ է հետամնաց ժողովուրդներին: Դա պայմանավորված է նրանով, որ կրոնը ձեռք է բերել համակարգ ձևավորող գործոնի նշանակություն և կատարում է հասարակությանը միավորելու և կայունացնելու ֆունկցիա, քանզի նրանում ամրագրված են հասարակության համար համընդհանուր նշանակություն ունեցող բարոյամշակութային, ավանդական հիմնարար արժեքներ և դիրքորոշումներ:

Հասարակության քաղաքական կուլտուրայում կարևոր դեր են խաղում ավանդույթները, որոնց միջոցով ապահովվում է պատմական գարգացման շարունակական պրոցեսը: Ավանդույթները հիմք են հանդիսանում քաղաքական կողմնորոշման, համապատասխան քաղաքական մտածողության առաջացման համար, կատարում են հասարակությունը համախմբելու, իսկ երբեմն էլ տարանջատելու, մասնատելու ֆունկցիաները, ինչը կարող է դրսևորվել հնի և նորի պայքարի, սերունդների միջև հակասությունների սրման ձևով:

Քաղաքական կուլտուրան վկայում է, որ հասարակության ավանդույթները, նրա հրապարակային ինստիտուտների ոգին, նրա անդամների ձգտումներին ու կոլեկտիվ մտածողությունը, նրա առաջնորդների և քաղաքացիների մեծամասնության վարքի դրսևորման ոճն ու ձևերը ոչ թե սոսկ պատմական փորձի արդյունք են, այլ իրար հետ սերտորեն փոխկապակցված գոյություն ունեցող գործող փոխհարաբերությունների համակարգ: Քաղաքական ավանդույթները մարդու քաղաքական վարքի դրսևորման ժամանակ ուղղորդող սկզբունքի դեր են կատարում, իսկ սոցիալական խմբերի համար դառնում է նրանց փոխհարաբերությունների կարևոր կարգավորիչ գործոն: Այն օգնում է հստակ պատկերացում ունենալ քաղաքական գաղափարների ու նորմերի և ընդհանրապես ամբողջ քաղաքական ոլորտի բովանդակության և ամբողջականության մասին, նշում է այն շրջանակները, որում հասարակության անդամները ընդհանուր կամ մերժում են գոյություն ունեցող հասարակական քաղաքական համակարգի օրինականությունը:

Քաղաքական կուլտուրայի արժեքների ստեղծման և գերակայացման ընթացքում ձևավորվում է որոշակի քաղաքական փորձ, առաջանում է քաղաքական երևույթների ընկալման, գնահատման և մոտեցումների նոր համակարգ:

Քաղաքական կուլտուրայի հիմնական ցուցանիշը քաղաքական ինստիտուտներում մարդկության պատմական գարգացման ընթացքում ստեղծված քաղաքական արժեքների և մշակված գործունեության արդյունավետ

սկզբունքների նյութականացումն է: Դրա տակ կարելի է հասկանալ հասարակության արդյունավետ քաղաքական կառավարումը, քաղաքականության սոցիալական ուղղվածությունը, բոլոր քաղաքացիների ազատություններն ու պատասխանատվությունը, ժողովրդավարության և հրապարակայնության սկզբունքների իրականացումը և այլն: Քաղաքական ինստիտուտների կազմակերպման ավանդական ձևերի միջոցով հնարավոր է լինում հստակ պատկերացում կազմել, թե ո՞վ և ինչպե՞ս պետք է իրականացնի քաղաքական իշխանությունը, ինչպե՞ս և ու՞մ կողմից են ընդունվում քաղաքական որոշումները, ի՞նչ եղանակներով են դրանք իրականացվում, ինչպե՞ս են լուծվում քաղաքական կոնֆլիկտները, որո՞ւք են կադրերի ընտրության և քաղաքական իշխանության մեջ նրանց առաջխաղացման իրական մեխանիզմները, ի՞նչ դեր է խաղում ընդդիմությունը քաղաքական գործընթացներում և այլն:

Հասարակության քաղաքական կուլտուրայի մակարդակն է որոշում, թե ինչպիսի քաղաքական իշխանության ձևեր են հնարավոր հաստատել տվյալ հասարակության մեջ և ինչպիսի քաղաքական մասնակցություն է հնարավոր իրականացնել, հասարակության կառավարման ինչպիսի սկզբունքներ և մեթոդներ է հնարավոր իրականացնել և այլն:

Քաղաքական կուլտուրայի ձևավորման հիմնական ուղղություններից են պետության, քաղաքական կուսակցությունների, եկեղեցու, ՉԼՄ-ների, հայրական-քաղաքական կազմակերպությունների և շարժումների նպատակամղված, հոգևոր գաղափարական, քաղաքական-լուսավորչական գործունեությունը: Քիչ կարևոր չէ նաև ընտանիքի, դպրոցի, աշխատանքային յուլեկտիվի, ընկերական շրջապատի դերը, ինչը քաղաքական գիտակցության կենցաղային մակարդակի ձևավորման հիմքն է կազմում: Նշենք, որ քաղաքական գիտակցության կենցաղային մակարդակի ձևավորումը քաղաքական անհատի, ասել է թե քաղաքացու ձևավորման անհրաժեշտ նախալրյալն է:

Քաղաքական կուլտուրան ամբողջապես ներառված, մարմնավորված, նյութականացված է հասարակական-քաղաքական հարաբերություններում և հասարակական-քաղաքական գործունեության համակարգում: Եվ որպես լարգացող համակարգ քաղաքական կուլտուրան ինչպես ծագում, գարգանում ու կատարելագործվում է, այնպես էլ կարող է քայքայվել ու վերանալ, դր քայքայվում ու վերանում է նրան համապատասխանող քաղաքական ամակարգը: Ասածը չի նշանակում, թե նախկինում ստեղծված ողջ քաղաքական մշակույթը վերանում ու մոռացվում է: Պատմության գիրկն են անցում միայն այն արժեքները, որոնք իրենց դարն ապրել են, որոնք արդեն չեն ամապատասխանում հասարակության արդի գարգացման և առաջընթացի լահանջներին: Դրանց փոխարեն ստեղծվում են քաղաքական կուլտուրայի որ արժեքներ:

2. Բաղաքական կուլտուրայի տեսակները և դասակարգման սկզբունքները

Քաղաքական կուլտուրան դասկարգվում է տարբեր սկզբունքներից և չափանիշներից ելնելով նայած թե ինչն է հիմք ընդունվում դասակարգման համար և ինչ եղանակներով է կատարվում այդ դասակարգումը: Այդ իսկ պատճառով էլ գրականության մեջ հանդիպում են քաղաքական կուլտուրայի տարբեր մեկնաբանությունների և տեսակների:

Քաղաքական կուլտուրայի հիմնական կրողները մարդիկ են, որոնք հանդես են գալիս որպես նրա հիմնական սուբյեկտներ, քանզի յուրացնելով նախկինում ստեղծած քաղաքական մշակույթի փորձը, քաղաքական գործունեության նորմերն ու սկզբունքները մարդիկ գոյություն ունեցող քաղաքական համակարգի վերաբերյալ մշակում են իրենց սեփական համոզմունքների համակարգը, կողմնորոշումներն ու դիրքորոշումները, միևնույն ժամանակ դառնալով նաև քաղաքական կուլտուրայի օբյեկտներ, քանզի որպես քաղաքական արժեքների կրողներ, նրանք այդպիսին են դառնում հենց քաղաքական կուլտուրայի ազդեցության շնորհիվ:

Յուրաքանչյուր հասարակական քաղաքական համակարգի համապատասխանում է քաղաքական կուլտուրայի իրեն բնորոշ մոդելը: Այն դրսևորվում է, հիմնականում, ազգային առանձնահատկությունների ձևով: Ոչ մի երկրում որևէ քաղաքական համակարգ կայուն և զարգացող լինել է կարող, եթե տվյալ քաղաքական համակարգը չի ծնվել ու զարգացել այդ երկրում, չի հենվում այդ երկրի առանձնահատկությունների վրա և չի դարձել նրա սեփական կուլտուրայի զարգացման արդյունք:

Ելնելով քաղաքական համակարգի բնույթից և քաղաքական համակարգերի միջև եղած որոշակի նմանությունից նշվում են արդի ժամանակաշրջանին բնորոշ քաղաքական կուլտուրայի երկու հիմնական մոդելներ: Դրանք են ամբողջատիրական-ավտորիտարական և լիբերալ-ժողովրդավարական:

Ամբողջատիրական-ավտորիտարական քաղաքական կուլտուրային բնորոշ են հետևյալ գծերը

- հասարակության քաղաքական գիտակցությունը և արժեքները ձևավորվում են պետության կողմից կենտրոնացված ձևով: Համապատասխան դրան պետության շահերը վեր են դասվում առանձին քաղաքացիների և սոցիալական խմբերի շահերից: Հիմնական արժեքներից են կարգ ու կանոնը, համախմբվածությունը, քաղաքական վստահությունը, պետական քաղաքականության պաշտպանությունը, մեկ գաղափարախոսությունը, միասնական քաղաքականությունը,
- հասարակության քաղաքական լրատվության սահմանափակվածությունն ու միակողմանիությունը, իշխանության կառավարման մենաշնորհը Ակտիվ գործում է քաղաքական ցենզուրան:
- քաղաքական կուլտուրան ձևավորվում է վերևից առանց այլընտրանքային հնարավորության,

հասարակության մեծ մասի քաղաքական կուլտուրան ցածր է: Քաղաքական կուլտուրայի առաջընթացը չափազանց դանդաղ է ընթանում

Քաղաքական կուլտուրայի այս մոդելը արտաքին աշխարհից ինքնամեկուսացված է, ներփակված է իր սահմանների ներսում Առկա են բռնության ձևերի իրականացումը: Արտաքին աշխարհի հետ հարաբերության ժամանակ տվյալ քաղաքական մոդելին բնորոշ է անհանդուրժողականությունը, ագրեսիվության տարրերով: Սակայն այդ մոդելի ներսում միշտ չէ, որ ամբողջատիրական և ավտորիտարական դրսևորումները համամասնական են Կախված հասարակության մեջ հաստատված քաղաքական համակարգից առավելություն է ստանում մերթ մեկը, մերթ մյուսը: Երբ գերիշխում է ամբողջատիրական սկզբունքները, ապա վերը նշված բոլոր բնորոշ գծերը առկա են լրիվությամբ: Իսկ, երբ գերիշխում է ավտորիտարական քաղաքական կուլտուրան, ապա այս դեպքում կարող են առկա լինել նաև լիբերալ-ժողովրդավարական քաղաքական մշակույթի տարրեր:

Լիբերալ-ժողովրդավարական քաղաքական կուլտուրայի մոդելին բնորոշ է քաղաքացիների քաղաքական իրավունքների և ազատությունների ապահովումը, հասարակության կենսագործունեությունը կարգավորվում է միայն իրավական նորմերով: Այս մոդելի բնորոշ գծերն են.

- հասարակության քաղաքական գիտակցությունն ու արժեքները ձևավորվում են ապակենտրոնացված, բազմապիսի աղբյուրներից և բազմակարծության հիմքի վրա: Պետական շահերի առաջնության մակարդակը կախված է հասարակության, նրա սոցիալական խմբերի, քաղաքացիների շահերի հետ համընկումից: Հիմնական արժեքներն են. մարդու իրավունքը, ազատությունը, բազմակարծությունը, կարգ ու կանոնը, անձնական կյանքի և սեփականության անձեռնմխելիությունը, հասարակական կարծիքի գերակայությունը, քաղաքացիական հասարակությունը և այլն,

- հասարակության քաղաքական լրատվությունը բազմախողովակ է և այլընտրանքային. Քաղաքական ուղղակի սահմանափակումը հասցված է նվազագույնի և կիրառվում է հիմնականում արմատական, ծայրահեղական տեղեկատվության նկատմամբ Առկա է խոսքի և մամուլի ազատություն, սակայն այդ ազատության մակարդակները տարբեր են: Այն կախված է քաղաքական լրատվության աղբյուրի ֆինանսական հնարավորություններից, զանգվածային լրատվամիջոցներից, հատկապես, հեռուստատեսությունից օգտվելու հնարավորությունից,

- առկա է քաղաքական վարքագծի բազմազանություն,

հասարակության քաղաքական կուլտուրան գտնվում է բավականին բարձր մակարդակի վրա, որին բնորոշ է քաղաքական-կուլտուրական առաջընթաց և մշակութային նոր արժեքների ստեղծման մեծ հնարավորություններ: Թվարկած գործոնների ամբողջությունը ապահովում է հասարակության քաղաքական կյանքի շարժունակությունն ու ակտիվությունը:

Լիբերալ-ժողովրդավարական քաղաքական կուլտուրայի մոդելը առանձնացվում է արտաքին աշխարհի առջև բաց լինելու հանգամանքով:

Որոշակի արտակարգ իրավիճակներում (արտաքին վտանգ, քաղաքական, սոցիալական և տնտեսական ճգնաժամեր և այլն), լիբերալ-ժողովրդավարական քաղաքական կուլտուրայի շրջանակներում կարող է առաջանալ ավտորիտարական կուլտուրայի տարրերի օգտագործման անհրաժեշտություն, ինչը կարող է դրսևորվել հասարակության կենսագործունեության մեջ պետության առավել ծավալուն մասնակցության, քաղաքացիների իրավունքների սահմանափակման, քաղաքական ցենզուրայի խստացման ձևերով:

Նշված քաղաքական կուլտուրայի մոդելների ներսում տարբերակվում են քաղաքական կուլտուրայի տեսակներ:

Ավտորիտարական քաղաքական կուլտուրան բնորոշվում է պետության որոշիչ դերով: Այն ունի իրեն համապատասխան կառավարման, քաղաքական կյանքի վրա հսկելու և նրանում քաղաքացիների մասնակցության ձևեր ու մեթոդներ: Համաձայն ընդունված նորմերի պետության շահերը գերակայում են առանձին մարդկանց, սոցիալական խմբերի շահերից: Նրա հիմնական արժեքներից են միասնական օադափարախոսությունը, քաղաքական կարգը, քաղաքական միասնությունը, պետական քաղաքականության պաշտպանությունը:

Ամբողջատիրական քաղաքական կուլտուրան ենթադրում է քաղաքականության մեջ մարդկանց պետականորեն ուղղորդված և վերահսկվող մասնակցություն: Այս դեպքում խստագույնս զաղափարացված է քաղաքական վարքագիծը: Քաղաքական մտածելակերպն ու լեզուն ձևականացված է և զաղափարապես խիստ որոշակիացված է: Առկա է միայն մեկ կուսակցություն, որի ձեռքում է կենտրոնացված ողջ իշխանությունը:

Քաղաքական վերափոխումներից և արտաքին աշխարհի հետ հարաբերությունների տեսանկյունից ելնելով քաղաքական կուլտուրան բաժանվում է «փակ» և «բաց» քաղաքական կուլտուրայի տեսակների:

Քաղաքական կուլտուրայի «փակ» տեսակին բնորոշ է քաղաքական ներփակվածությունը: Այն հակված է իր սեփական քաղաքական արժեքներն ու նորմերը գերադասելի համարել ուրիշներից: Հիմնականում պաշտպանում է սեփական էթնիկական, կրոնական, պատմական, սոցիալական ավանդույթներն ու արժեքները: Չի ընդունվում այլ քաղաքական համակարգերի արժեքներն ու նորմերը: Քաղաքացիների քաղաքական ակտիվությունը սահմանափակվում է և գտնվում է խիստ հսկողության տակ: Քաղաքական կուլտուրայի այս տեսակը ձգտում է դեպի ամբողջատիրական-ավտորիտարական կուլտուրայի մոդելը:

Քաղաքական կուլտուրայի «բաց» տեսակը հարուստ քաղաքական ավանդույթներ ունի, կարողանում է արագ կողմնորոշվել քաղաքական փոփոխվող իրադրություններում, ընդունում է այլ կուլտուրաների փորձը: Այդպիսի համակարգում տեղի է ունենում մշտական ինքնաձևավորում: Առանձ-

նանում է քաղաքական կյանքի շարժունակությամբ, քաղաքական գործընթացների բազմազանությամբ և սոցիալ-քաղաքական համախմբվածության բարձր մակարդակով: Քաղաքական կուլտուրայի այս տեսակը ձգտում է լիբերալ-ժողովրդավարական մոդելին:

Երբեմն քաղաքական կուլտուրան դասակարգում են հիմք ընդունելով քաղաքականության մեջ մարդկանց մասնակցությունը և հասարակության զարգացման մակարդակը: Այս դեպքում առանձնացվում են. ա) նահապետական կամ ավանդական քաղաքական կուլտուրա, որը բնորոշ է տնտեսապես հետամնաց հասարակությանը, բ) ենթարկման քաղաքական կուլտուրա, որը բնորոշ է տնտեսապես զարգացած, արդյունաբերական, բայց ավտորիտարական հասարակությանը, գ) պարտիսիպատորական (մասնակցության), քաղաքական կուլտուրա, որին բնորոշ է գոյություն ունեցող քաղաքական համակարգի և նրա բոլոր կառույցների նկատմամբ հասարակության անդամների ներքին կողմնորոշվածությունը և գիտակից ու ակտիվ մասնակցությունը նրանում ընթացող գործընթացներին:

Նահապետական կուլտուրան առանձնանում է նրանով, որ բնակչության մեծամասնությունը սահմանափակվում է միայն իր անմիջական շրջապատում տեղի ունեցած երևույթների իմացությամբ, աշխարհին և երկրում իր ներկայությունից և քաղաքական համակարգի նկատմամբ ամբողջական վերաբերմունք չունի:

Ենթարկման քաղաքական կուլտուրան այն յուրահատկությունը ունի, որ բնակչությունը քաղաքականության մասին որոշակի պատկերացումներ ու գիտելիքներ ունի, զնահատում է քաղաքական երևույթները նրանց օրինականության տեսանկյունից, սակայն, դրանով հանդերձ քաղաքական համապարգի նկատմամբ պասիվ վերաբերմունք ունի, չի ձգտում այն փոխել իր ուժերով, չի ձգտում ակտիվ մասնակցել քաղաքական որոշումների ընդունման կամ դրա վրա ազդելու գործընթացներին:

Մասնակցության (պարտիսիպատորական) կուլտուրան առանձնանում է քաղաքական բոլոր կառույցների նկատմամբ բնակչության կողմնորոշման միասնականությամբ, ինչը ուղեկցվում է նրանց շահերի ձևավորման և շրանց համար ակտիվ պաշտպանության ձգտումով: Այդ ընթացքում էլ որոշվում է բնակչության քաղաքական կյանքին մասնակցության դերն ու նշանակությունը և քաղաքական համակարգում անհատի կարգավիճակը:

Համամարդկային քաղաքական-մշակութային տարածությունում քաղաքական կուլտուրայի հետ գուզահեռաբար դիտարկվում են նաև քաղաքական ենթակուլտուրաների (սուբկուլտուրա) առանձնահատկությունները:

Քաղաքական ենթակուլտուրաները բնորոշ են քաղաքականության կոնկրետ սուբյեկտներին: Դրանք իրարից տարբերվում են քաղաքականության բնույթում մարդկային հանրույթների բնորոշ հայացքներով, նախապիություններով ու վարքագծով: Առավել տարածված և ընդգծված դրսևորմամբ ենթակուլտուրաներից են.

ա) Արևմուտքի քաղաքական ենթակուլտուրա, որը կողմնորոշված է դեպի լիբերալ-ծողովրդավարական արժեքներն ու նորմերը: Այն առանձնանում է քաղաքական նախասիրությունների լայն ընտրությամբ: Նրա շրջանակներում քաղաքացին, որպես քաղաքականության սուբյեկտ, բավականին բարձր կարգավիճակ ունի: Քաղաքական կյանքը կարգավորվում է ընդունված հստակ կանոնակարգով: Այն համարվում է լիբերալ-վրդավարական քաղաքական մոդելի բազային հիմքը:

բ) Արևելքի քաղաքական ենթակուլտուրա, որը կողմնորոշված է դեպի պատմական-կրոնական ավանդույթները: Գործառնության շրջանակները սահմանափակ է, բնույթը խարիզմատիկ է: Նրա շրջանակներում հասարակության շատ խավեր, մեծամասամբ կանայք և երիտասարդներ, մեկուսացված են քաղաքական կյանքից: Այս ենթակուլտուրան առանձնանում է քաղաքական ստորակարգությամբ: Օրինակ, վարչական իշխանությունը առավելություն ունի ներկայացուցչական և դատական իշխանության նկատմամբ: Տարածված է իշխանության ժառանգական փոխանցման ձևը:

գ) Տարածաշրջանային քաղաքական ենթակուլտուրա, որը առանձնանում է տարածքային-պետական հատկանիշներով: Նրան բնորոշ է տարբեր պետությունների քաղաքացիների քաղաքական մտածողության և վարքի տարբերություններ: Օրինակ, Հայաստանի քաղաքացիների և գերմանացի քաղաքացիների, ԱՄՆ-ի և Ռուսաստանի քաղաքացիների, Ասիայի և Եվրոպայի քաղաքացիների քաղաքական մտածողության և վարքագծերի տարբերությունները: Նշենք նաև, որ քաղաքական ենթակուլտուրան կարող է առկա լինել նաև մեկ բազմազգ պետության շրջանակներում: Օրինակ, Ռուսաստանում ազգային հանրապետությունների և տարբեր տարածաշրջանների ենթակուլտուրաները: Այս դեպքում կարելի է խոսել նաև քաղաքային և գյուղական ենթակուլտուրաների մասին:

դ) Կրոնա-քաղաքական ենթակուլտուրա, որին բնորոշ է հասարակության քաղաքական կյանքում կրոնի և քաղաքականության խիստ համակցումը, կրոնի գործոնի էական ազդեցությունը մարդկանց քաղաքական կողմնորոշման և քաղաքական վարքագծի վրա: Օրինակ, Մուսուլմանական կրոնի զնայով աճող դերը քաղաքական գործընթացների վրա, հատկապես նրա արմատական դրսևորումը մի շարք մահմեդական երկրներում:

ե) Էթնո-քաղաքական ենթակուլտուրա, որը բնորոշ է ազգային միատարրություն չունեցող պետություններին: Լայն տարածում է գտնում ազգային փոքրամասնությունների քաղաքական ենթակուլտուրան:

Օրինակ Հույները-Թուրքիայում, ալժիրցիները-Ֆրանսիայում, բասկերը - Իսպանիայում, Եզդիները-Հայաստանում և այլն:

Ազգային փոքրամասնությունների քաղաքական ենթակուլտուրան առավել վառ է դրսևորվում հատկապես այն ժամանակ, երբ ոտնահարվում են նրանց ազգային իրավունքները կամ վտանգված է ազգային ինքնությունը:

զ) Երիտասարդական քաղաքական ենթակուլտուրա, որի հիմնական կրողը ուսանողությունն է: Այս ենթակուլտուրային բնորոշ է քաղաքական երևույթների նկատմամբ զգացմունքայնությունը, քաղաքական շահերի և վարքագծի հակասությունների բազմազանությունը, անհանդուրժողականությունը և այլն, որոնք, հիմնականում, քաղաքական փորձի պակասի արդյունք են: Սակայն, հենց երիտասարդական ենթակուլտուրայի ընդերքում են ծնվում ապագային միտված քաղաքական արժեքներ: Այս ենթակուլտուրան միշտ հանդես է գալիս, որպես իշխանության ընդդիմություն, նույնիսկ անկախ իշխանության բնույթից, հենց երիտասարդական կազմակերպություններն են համարվում ապագայի քաղաքական հիմնական ուժը:

Նշենք որ, նշված քաղաքական կուլտուրայի տեսակները իրենց մաքուր ձևով հասարակական կյանքում հազվագյուտ են պատահում: Սովորաբար, դրանք քաղաքական կյանքում առկա են միաժամանակ, այս կամ այն կուլտուրայի տեսակի տարրերի գերակայությամբ: Օրինակ, նույն հասարակության մեջ տարբեր սոցիալական շերտեր կարող են ունենալ տարբեր քաղաքական կուլտուրա և դրանից ելնելով դրսևորել տարբեր վերաբերմունք ինչպես առանձին քաղաքական երևույթների, այնպես էլ ամբողջ քաղաքական համակարգի նկատմամբ:

Նկատի ունենալով միևնույն քաղաքական համակարգում խառը քաղաքական կուլտուրաների միաժամանակյա առկայությունը, տարբերակվում են նաև քաղաքական կուլտուրայի խառը տեսակներ.

- Նահապետական-ենթարկման քաղաքական կուլտուրա, որի դեպքում նկատի է առնվում քաղաքական կյանքում ինչպես այս երկու տեսակի կուլտուրայի տեսակների համատեղ գոյությունը, այնպես էլ այլ կուլտուրայի տարրերի նկատմամբ նրանց գերակայությունը: Քաղաքական կուլտուրայի այս տեսակին բնորոշ է բնակչության մեծամասնության քաղաքականությունից հեռու մնալը, սակայն դրան գուցա հեռ քաղաքական կյանքում առկա է փոքրամասնության ակտիվ գործունեության դրսևորում, ձգտում քաղաքական որոշումների ընդունմանը մասնակից դառնալ կամ ազդել դրանց ընդունման վրա:

- Ենթարկման-մասնակցության քաղաքական կուլտուրայի, դեպքում բնակչության մեծամասնությունը այս կամ այն չափով տեղյակ է քաղաքական համակարգի, նրա կառույցների գործունեության մասին, պատկերացում ունեն այն քաղաքական նորմերի, վարքագծի շրջանակների, սահմանափակումների մասին, որոնց միջոցով կարելի է ազդել քաղաքական իշխանության գործունեության, քաղաքական կառույցների և ընդհանրապես քաղաքական կյանքում տեղի ունեցող երևույթների վրա: Այս դեպքում քաղաքական համակարգը մարդկանց կողմից չի ընկալվում մեկընդմիջ տրված և իրենցից կախում չունեցող երևույթ, այլ քաղաքական համակարգը դիտվում է որպես փոփոխվող, զարգացող համակարգ, ինչին բնակչությունը ձգտում է հասնել քաղաքական որոշումների և քաղաքական գործընթացների վրա ակտիվ ազդելով:

- Նահապետական-մասնակցության խառը քաղաքական կուլտուրայի տեսակը ծագում է այնտեղ, որտեղ մեկ հասարակության շրջանակներում կողք-կողքի գոյություն ունեն ավանդական սոցիալական խմբեր, որոնք մեկուսացված են քաղաքական գործընթացներից, և քաղաքական ակտիվ խմբեր օժտված բարձր քաղաքական գիտակցությամբ, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում քաղաքական համակարգի զարգացման և քաղաքական որոշումների ընդունման վրա ազդեցություն ունենալու համար:

Առանձնացվում են նաև համամարդկային քաղաքական կուլտուրայի արժեքներ և սկզբունքներ, որոնք առայժմ միջազգային հանրույթի կողմից ընդունվել են որպես հայտարարություն, սակայն ձգտում կա դրանք մարմնավորել ամբողջ աշխարհի քաղաքական համակարգում: Դրանցից են խաղաղությունը, ազատությունը, մարդասիրությունը, կարգ ու կանոնը, ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, միջազգային հարաբերություններում իրավահավասարությունը, ազգային ինքնորոշման իրավունքը և այլն:

Քաղաքական կուլտուրայի կարևորագույն բաղադրիչներն են համարվում:

ա) միջազգային քաղաքական լեզուն, որում արտացոլված են համամարդկային քաղաքական արժեքներն ու նրանց բովանդակությունը, ասենք, միություն, պառլամենտ, կուսակցություն, հանրաքվե, մարդասիրություն, միջավայր, սահմանադրություն և նման բովանդակությամբ հասկացություններ:

բ) միջազգային քաղաքական սիմվոլիկան, որը սերտորեն կապված է քաղաքական լեզվի հետ, սակայն իրենց զգացմունքա-հոգեբանական ազդեցության շնորհիվ ավելի համընդգրկուն բնույթ ունի: Օրինակ՝ երկրագնդի պատկերը, որը մարդու և բնության միասնության նշանն է, աղավաղված պատկերը-որպես խաղաղության նշան, գույների սիմվոլիկան, որոնցից յուրաքանչյուրն իր նշանակությունն ունի, ասենք, կապույտը՝ խաղաղության, սպիտակը՝ մաքրության, օգնության, կանաչը՝ կյանքի և այլն:

գ) միջազգային քաղաքական կազմակերպությունների գոյությունն ու գործառնությունը, որոնց գործունեությունը ուղղված է համամարդկային քաղաքական կուլտուրայի հաստատմանը, քաղաքական կյանքի գլոբալ խնդիրների իրականացմանը:

դ) միջազգային իրավունքը, որը խնդիր ունի կարգավորելու միջպետական հարաբերությունները հենվելով միջազգայնորեն ընդունված նորմերի և սկզբունքների, ինչպես նաև քաղաքական փոխհարաբերությունների պատմական փորձի վրա:

ե) Զամընդգրկման քաղաքական ինտեգրացիան (միավորում), որը առայժմ մնում է ցանկությունների շրջանակներում, սակայն որի կարևորությունը գնալով ավելի ու ավելի է զգացվում արդի գլոբալ խնդիրների սրվելուն զուգընթաց, որոնց լուծումը առանց ամբողջ մարդկության ուժերի միավորման հնարավոր չէ: Ասենք այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են խաղաղու-

թյունը, միջավայրի պաշտպանությունը, ահազնացող ահաբեկչությունը, նարկոտիկների տարածումը և այլն:

Կան նաև համընդհանուր նշանակությամբ բացասական արժեքներ և սկզբունքներ: Օրինակ, ա) քաղաքական պասիվությունը, անտարբերությունը, որը պատճառ է դառնում քաղաքական կյանքի ապակայունացման և հետընթացի, բ) քաղաքական մեկուսացումն ու տեղայնությունը, որը կտրված լինելով համաշխարհային քաղաքական զարգացումներից, խոչընդոտում է հասարակության զարգացմանը: գ) Քաղաքական բռնությունը, որը գոյություն ունի մարդկային կենսագործունեության ողջ պատմության ընթացքում Քաղաքական բռնությունը գոյություն կունենա այնքան ժամանակ, քանի դեռ առկա են մարդկանց քաղաքական շահերի անհամապատասխանություն և քաղաքական հակասություններ:

3.Քաղաքական կուլտուրայի ֆունկցիաները

Քաղաքական կուլտուրայի հորևոր հիմքը քաղաքական գիտակցությունն է: Քաղաքական գիտակցությունը հասարակության քաղաքական կյանքի, քաղաքական երևույթների, նորմերի և սկզբունքների մասին պատկերացումների ամբողջությունն է և հասարակական գիտակցության մյուս ձևերի հետ համատեղ մարդու աշխարհայացքի, աշխարհըմբռնման կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Այս տեսանկյունից քաղաքական գիտակցության դերը հասարակության կենսագործունեության մեջ դժվար է գերազնահատել:

Քաղաքական գիտակցությունը հասարակության քաղաքական կյանքի սոսկ պասիվ հայեցող չէ: Այն ընդունակ է առաջ անցնելու և կանխատեսելու քաղաքական գործընթացների զարգացման տեսլեցները, դրանով իսկ մեծ ազդեցություն ունենալ քաղաքական կյանքի վրա, քաղաքական կուլտուրայի զարգացման վրա, ինչպես նաև հասարակության կյանքի մյուս կողմերի վրա:

Քաղաքական գիտակցության մակարդակից է, հիմնականում, կախված, ինչպես առանձին անհատի, այնպես էլ նրանց հասարակական-քաղաքական միավորումների քաղաքական վարքը, քաղաքական գործունեության բնույթը: Ուստի, բնական է, որ, ինչպես հասարակության, այնպես էլ նրա դասակարգերի, սոցիալական խմբերի և մարդկային այլ հանրույթների քաղաքական գիտակցության մակարդակը պետք է ձգտորոնեն հաշվի առնել հասարակական գործընթացների քաղաքական կառավարման գործում: Ասել է, թե իշխանությունները, քաղաքական կուսակցությունները պետք է ձգտեն ձևավորել այնպիսի քաղաքական գիտակցություն, որը ընդունակ լինի ապահովել հասարակական-քաղաքական հավասարակշռությունը, առավել լրիվ արտահայտելու պետության սոցիալական առաջընթացի պահանջները:

Քաղաքական գիտակցությունն ունի իր առաջացման աղբյուրները: Դրանց մեջ կարևորներից են.

ա) Մարդու ընտանեկան միջավայրը: Ցանկացած հասարակության զարգացման երաշխիքը մեծամասամբ պայմանավորված է նրանով, թե ինչպիսի սոցիալ-քաղաքական արժեքներից, նորմերից և կենսագործունեության կանոններից են օգտվում նրա անդամները: Մարդիկ չեն ծնվում պատրաստի գիտելիքների պաշարով: Դրանք ձեռք են բերվում մարդու ամբողջ կյանքի ընթացքում: Սակայն դրանք հիմքը դրվում է ընտանիքում, որը համարվում է մարդու սոցիալականացման հիմնական միջավայրը: Խոսքը վերաբերում է գաղափարների և գզացմունքների ամբողջության դաստիարակման միջոցով փոխանցելուն, որոնք համապատասխան սոցիալ-հոգեբանական պաշար են ստեղծում քաղաքական գիտակցության ձևավորման համար: Դեռ այդ հիմքի վրա էլ ձևավորվում է քաղաքացու անձը:

բ) Լայն իմաստով լրատվությունը: Այն մարդուն է հասնում ինչպես անմիջական հաղորդակցման, այնպես էլ լրատվամիջոցների (հեռուստատեսություն, մամուլ, ռադիո) միջոցով:

գ) Անհատի սեփական փորձը, որը մերժում կամ հաստատում է ստացված գիտելիքների հավաստիությունը, միևնույն ժամանակ ազդելով մարդու քաղաքական գիտակցության ձևավորման և զարգացման պրոցեսի վրա:

Նշված աղբյուրների միջոցով մարդու մոտ առաջանում են գիտելիքների ամբողջական համակարգ, որը թույլ է տալիս սուբյեկտին վերլուծելու քաղաքական երևույթները և կողմնորոշվելու քաղաքական կյանքում:

Ի դեպ, ընտանիքից ստացած գիտելիքները կարելի է դիտել որպես տարբեր սերունդներից ժառանգված փորձ, ինչը, սակայն, կարող է լինել կեղծ և ճշմարիտ, որոնցում ճիշտ կողմնորոշվելու համար անհատից որոշակի գիտելիքների պաշար է պահանջում: Ամեն դեպքում մարդը ինքն է վերածնվողում այդ գործոնները մեկ միասնության մեջ, ստեղծելով իր քաղաքական դիմագիծը:

Շատ մարդկանց մոտ այդ պրոցեսը տեղի է ունենում տարրերայնորեն, պատահականորեն, նույնիսկ մարդկանցից անկախ: Ավելին, մարդկանց մեծամասնությունը հակված է կրկնելու այն քաղաքական դատողություններն ու մոտեցումները, ինչ նրանց սովորեցրել են, կամ ինչ նրանք լսել են ուրիշներից, արտաքին աղբյուրից:

Քաղաքական խնդիրների գիտակցումը, քաղաքական կյանքի մասին մարդկանց պատկերացումները սերտորեն կապված են նրանց քաղաքական շահերի և նախասիրությունների հետ: Այդ պատճառով էլ իրականությունը մարդկանց կողմից գնահատվում է քաղաքական գիտակցության միջոցով, ինչը կարող է և չհամապատասխանել իրականությանը: Օրինակ՝ Հայաստանը այս ծանր վիճակից դուրս բերելու տարբեր մոտեցումները, ինչը դրսևորվում է տարբեր քաղաքական ուժերի կողմից:

Քաղաքական գիտակցության արդյունք հանդիսացող շատ քաղաքական ուսմունքներ և արժեքներ մեր ժամանակներում ունեն աշխարհայացքային նշանակություն: Ուստի դրանք կարևոր են ոչ միայն մարդկանց արդի քաղաքական կուլտուրայի, այլև ամբողջ մարդկության հոգևոր, քաղաքակրթու-

թյան զարգացման համար: Դրա հետ միասին, հարկ է նշել, որ դեռևս քաղաքական գործընթացներում անկա են պետությունները և նրանց միավորումների, դասակարգերի, ազգերի, ժողովուրդների, կուսակցությունների քաղաքական գիտակցության տարբեր կողմնորոշումներ:

Քաղաքական գիտակցությունը մի շարք ֆունկցիաներ է կատարում:

1 Կարգավորող ֆունկցիա: Քաղաքական գիտակցությունը կարգավորում է մարդկանց սոցիալական վարքը, հենվելով իրականության ճիշտ ըմբռնման և քաղաքական գաղափարների, նորմերի, արժեքների, պատկերացումների և համոզմունքների վրա:

Քաղաքական գիտակցության կարգավորող ֆունկցիան առավել նշանակալից դեր է խաղում հասարակության անցումային շրջանում, ճգնաժամերի և արմատական վերափոխումների ժամանակ: Դեռևս հասարակության լայն խավերի, քաղաքական գիտակցության մակարդակից և վերևների դիրքորոշումից է կախված քաղաքական համակարգի արդյունավետությունը, քաղաքական զարգացումների ուղղվածությունն ու քաղաքական վերափոխումների հնարավորությունը:

2. Ճանաչողական-լրատվական ֆունկցիա: Վաղ թե ուշ, բայց ամպայման մարդիկ առնչվում են քաղաքական կյանքի հետ, նույնիսկ, եթե նրանք չեն ցանկանում զբաղվել քաղաքականությամբ: Քաղաքականությունը ազդում է մարդկանց կյանքի և ճակատագրի վրա պետության, օրենքների, կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների միջոցով: Դեռևս քաղաքական գիտակցության ձևավորման և ճիշտ կողմնորոշվելու նրանում: Այս տեսանկյունից քաղաքական գիտակցությունը կոչված է օգնելու մարդկանց ճիշտ քաղաքական ընտրություն կատարելու, ճանաչելու քաղաքական երևույթների բնույթը և համապատասխան գործունեություն ծավալելու:

3. Վճռվորման-գնահատման ֆունկցիա: Քաղաքական գիտակցությունը ոչ միայն օգնում է մարդուն ճանաչելու քաղաքական կյանքը, այլև հնարավորություն է տալիս որոշակի վերաբերմունք դրսևորելու քաղաքական երևույթների նկատմամբ, գնահատելու քաղաքական գործընթացների արդյունքները: Դեռևս քաղաքական իրականության արժեքորման հիմքի վրա էլ մարդիկ ձևավորում են իրենց քաղաքական հայացքները, համոզմունքները, դիրքորոշումները և այլն:

4. Համախմբող ֆունկցիա: Քաղաքական գիտակցությունը օգնում է մարդկանց իրենց որպես քաղաքացի գիտակցել, որոնք ոչ միայն պարտավորություն ունեն հասարակության և պետության առջև, այլև ունեն որոշակի իրավունքներ, ազատություններ և քաղաքական շահեր: Գիտակցելով իրենց որպես քաղաքացի, մարդիկ ավելի կոնկրետ ու ակտիվ են մասնակցում քաղաքական կյանքում տեղի ունեցող գործընթացներին:

Այս պարագայում քաղաքական գիտակցությունը համախմբում է մարդկանց քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների մեջ, ինչի

շնորհիվ էլ մարդիկ միասնաբար պայքարում են իրենց սոցիալ-քաղաքական շահերը պաշտպանելու համար:

Լինելով քաղաքական կուլտուրայի կարևորագույն բաղադրիչը, քաղաքական գիտակցությունը մեծապես նպաստում է քաղաքական կուլտուրայի հիմնական ֆունկցիաների իրականացմանը:

Քաղաքական կուլտուրայի հիմնական ֆունկցիաներից են.

-Ճանաչողական-գողմորոշիչ քաղաքական կուլտուրան նպաստում է ճիշտ հասկանալու քաղաքական երևույթների իմաստը, գիտակցել քաղաքական գործողությունների իրականացման հնարավորություններն ու սահմանները, իրավունքների ու ազատությունների իրականացման աստիճանը, հասարակության կյանքում քաղաքականության դերը և այլն:

-Նույնացման ֆունկցիան թույլ է տալիս մարդուն զգալու որոշակի քաղաքական կամ սոցիալական խմբի, իր պատկանելիությունը, հասկանալու իր տեղը հասարակության քաղաքական կյանքում, ճշտելու քաղաքական կյանքին իր մասնակցելու ձևերն ու միջոցները, պաշտպանելու իր ուսերույթի շահերը:

-Միավորվող ֆունկցիա. քաղաքական կուլտուրան հնարավորություն է տալիս տարբեր քաղաքական խմբերի միջև համաձայնության հասնելու և ապահովելու համակարգի վայունակությունը: Քաղաքական կուլտուրայի մեջ արտացոլված և ամրագրված է սոցիալական փորձի և պատմական ավանդույթների ընդհանրությունը:

-Հաղորդակցման ֆունկցիա, որն ընդհանուր լեզվի, քաղաքական տերմինների և սիմվոլների ընդհանրության հիման վրա քաղաքական գործընթացների մասնակիցների միջև տեղի է ունենում լրատվության փոխանակում և փոխադարձ ըմբռնում: Հաղորդակցման ֆունկցիան իրականացնում է նաև սերունդների փորձի փոխանցում հաջորդ սերունդներին:

-Կարգավորող ֆունկցիա: Քաղաքական կուլտուրան հենվելով ընդունված արժեքների, նորմերի, կանոնների վրա, որոնք մեծ մասը արձանագրված են օրենսդրության և սահմանադրության մեջ, կարգավորում է մարդկանց քաղաքական վարքագիծը:

-Սոցիալական ֆունկցիա: Քաղաքական կուլտուրան ձևավորվում է որոշակի քաղաքական հատկանիշներ, վարքի ձևեր, տվյալ քաղաքական համակարգին հարմարվելու ունակություն, որոնք անհրաժեշտ են մարդկանց գոյություն ունեցող համաներգում իրենց շահերը պաշտպանելու համար: Սոցիալականացումը իրականացվում է սոցիալական ինստիտուտների՝ ընտանիքի, պետության, քաղաքական կուսակցությունների, լրատվամիջոցների, դպրոցի, եկեղեցու և այլ միջոցներով:

Գրականություն

1. Баталов Э.Я. Политическая культура современного американского общества. М.1990.
2. Джунусов А. И. Политическая культура: Концептуальные аспекты. /Социально – политический журнал./1994. # 11: 12.
3. Житенев В.С. Политическая культура: опыт формирования и проблемы. М. 1990.
4. Ирхин Ю.В. Зотов В.Д. Зотова А.В. Политология. М. 1999.
5. Омелячкин О.В. Гражданская культура. Кемерово. 1996.
6. Панарин А.С. Политология. М. 1999.
7. Политическая культура. Теория и национальные модели. /Под ред. Ю.С. Гаджиева./ М.1994.
8. Политология. Курс лекций. Под ред. Радугина. М. 1999.
9. Политология. /Под ред. Г.В. Полушиной/ М.1999.
10. Политология. /Под ред. В.Н. Лавриненко. М. 1999.
11. Политологический словарь. /Под ред. В.Ф. Халшова. М.1995.

Արդի քաղաքական գաղափարախոսությունների հիմնական դրսևորումները

1. Զաղաքական գաղափարախոսության բնույթն ու նշանակությունը:

Զաղաքական գաղափարախոսությունը հասարակական գիտակցության կարևորագույն բաղադրիչն է և նշանակալից դեր է խաղում հասարակության քաղաքական կյանքում:

Գաղափարախոսության հիմնական խնդիրը սոցիալական խմբերի և դասակարգերի շահերի արտահայտությունն ու պաշտպանությունն է: Այն ծագել և զարգացել է սկսած այն պահից, երբ միատար հասարակությանը փոխարինելու են եկել սոցիալական տարբեր շերտեր ու խմբեր, իրենց ամենատարբեր շահերով ու տարբեր սոցիալական կարգավիճակով: Գաղափարախոսությունը ձևավորվում է որպես տարբեր սոցիալական խմբերի և դասակարգերի շահերի արտահայտման և պաշտպանության կարևորագույն միջոց: Ունենալով սոցիալ-դասակարգային բնույթ, գաղափարախոսությունը կանխորոշում է քաղաքական մտածողության ուղղվածությունը, ինչը թույլ է տալիս պնդելու, որ գաղափարախոսությունը իրականությունը արտացոլում է միակողմանի և հանդես է գալիս որոշակի սոցիալ-դասակարգային շահերի պաշտպանության տեսանկյունից: Նկատի ունենալով այս հանգամանքը Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը գաղափարախոսությունը բնորոշում էին որպես «կեղծ գիտակցություն», քանի որ մտածողության սոցիալ-դասակարգային ուղղվածությունը ենթադրում է միակողմանիություն, որը հակված է իրականության իր պատկերացումներն ու ըմբռնումները ներկայացնել որպես ամբողջական իրականության ամբողջական պատկեր, այսինքն յուրաքանչյուր գաղափարախոսություն իրեն իրավունք է վերապահում ներկայանալ որպես ամբողջ իրականության ճշմարիտ արտացոլում:

Սակայն մարքսիզմի դասականները գտնում էին, որ գաղափարախոսության սոցիալ-դասակարգային բնույթը չի խանգարում հասարակական երևույթների օբյեկտիվ և ճշմարիտ ուսումնասիրություններ կատարելուն: Թե գաղափարախոսական համակարգերում իրականությունը ինչպես է ներկայացվում, կախված է գաղափարախոսության սուբյեկտի բնույթից, ասենք, որոշակի հասարակական հարաբերությունների համակարգում դասակարգերի, սոցիալական խմբերի դրությունից, նրանից թե, ինչպիսի քաղաքական զարգացումներ են արտահայտում նրանց դասակարգային շահերը, ինչպիսի հարաբերության մեջ են գտնվում քաղաքական համակարգի հետ և այլն: Մինչև ժամանակ, գաղափարախոսության դասակարգային բնույթից ելնելով մարքսիզմը տարբերակում է առաջադիմական և հետադիմական գաղափարախոսություններ: Ըստ Մարքսիստների առաջադիմական գաղափարախոսությունը արտահայտում է այն դասակարգերի ու սոցիալական խմբերի շահերը, որոնց իրական վիճակը հասարակական հարաբերություն-

ների համակարգում պայմանավորում է մարդկության առաջընթացը Այդպիսի գաղափարախոսությունները, սովորաբար, հենվում են տվյալ ժամանակի առաջադիմական փիլիսոփայական ուսմունքների և գիտության նվաճումների վրա: Նրանց կողմից ստեղծած գաղափարների համակարգը հարաբերականորեն ճշմարտացի է արտացոլում իրականությունը, նրա բովանդակությունն ու զարգացման տեղեցները, ինչից ելնելով էլ, սոցիալական հանրույթները ձգտում են դրանք նյութականացնել, մարմնավորել կյանքում:

Հետադիմական է համարվում այն գաղափարախոսությունը, որը չի համապատասխանում մարդկության պատմական առաջադիմությանը և հակադրվում է նրան:

Այսպիսով գաղափարախոսության հիմնական խնդիրը սոցիալական խմբերի, դասակարգերի շահերի արտահայտումն ու պաշտպանումն է, իսկ դրա համար անհրաժեշտ է լինում ճանաչել և գիտակցել այդ շահերը, մշակել նպատակային ծրագրեր և դրանց իրականացման միջոցներ:

Քանի որ հասարակության սոցիալական կառուցվածքում գոյություն ունեն տարբեր սոցիալական խմբեր ու դասակարգեր, իրենց տարբեր շահերով, ապա հասարակության մեջ մշտապես տեղի է ունենում գաղափարական պայքար, որտեղ յուրաքանչյուր ձգտում է իր գաղափարախոսությունը կյանքի կոչել: Գաղափարախոսությունը ենթադրում է միասնական աշխարհայացքի և արժեքային կողմնորոշման համար պայքար, երբեմն նաև սոցիալական ինստիտուտների միջոցով:

Այսպիսով գաղափարախոսությունը ձգտում է համախմբել, միավորել հասարակությանը, իշխանության համար ստեղծել լայն սոցիալական բազա:

Լինելով ամբողջական համակարգ, գաղափարախոսությունը ըստ հասարակության կյանքի տարբեր ոլորտների ներքնապես տարանջատված է և տարբեր դրսևորումներ ունի, որոնցից հիմնականներն են քաղաքական, իրավական և կրոնական գաղափարախոսությունները:

Քաղաքական գաղափարախոսությունը գաղափարական համակարգի միջուկն է: Այն ծագում է որպես հասարակական պահանջմունք, նպատակ ունենալով կարգավորել սոցիալական խմբերի ու դասակարգերի հարաբերությունները, նրանցից յուրաքանչյուրի արմատական շահերը հաշվի առնելով, ինչին նա ձգտում է հասնել պետական իշխանության նվաճման կամ պետական կառավարմանը այլ ձևերով մասնակցելու միջոցով:

Քաղաքական գաղափարախոսությունը կարելի է բնորոշել որպես առանձնահատուկ ուսմունք, որը ձգտում է հիմնավորել այս կամ այն դասակարգերի կամ սոցիալական խմբի իշխանության ձգտելու հավակնությունները և դրա հետ միասին ձգտելով դրան հասնել հասարակական կարծիքը իրեն ենթարկելու ճանապարհով:

Քաղաքական գաղափարախոսության հիմնական նպատակներից են հասարակական գիտակցության վրա իշխելը, նրանում ներդնել իր արժեքային գնահատականները, նպատակներն ու քաղաքական զարգացման գա-

ղափարները, այդ արժեքների նպատակների և գաղափարների հիմքի վրա քաղաքացիների վարքագծի կարգավորելը՝

Քաղաքական գաղափարախոսությունը բաժանում են երեք մակարդակների տեսական, ծրագրային, վարքագծային կամ գործնական:

Տեսական մակարդակում ձևավորվում են քաղաքական տեսությունների հիմնական դրույթները, հիմնավորվում են որոշակի արժեքներ ու գաղափարներ, որոնք ընկած են առաջարկվող հասարակական կարգի հիմքում: Անհրաժեշտ է, որ գաղափարախոսությունը գերծ լինի ներքին հակասություններից և իրարամերժ գաղափարներից և ներկայանա որպես իրար ենթադրող, իրար հիմնավորող ու լրացնող գաղափարների մի ամբողջական համակարգ: Դրանից է, հիմնականում, կախված գանգվածների վերաբերմունքը գաղափարախոսության նկատմամբ, որը կարող է, ինչպես իր հետևից տանել մարդկանց, այնպես էլ նրանց վանել իրենից:

Ծրագրային մակարդակում սոցիալ-փիլիսոփայական սկզբունքներն ու գաղափարները բերվում են կոնկրետ քաղաքական ծրագրերի տեսքի, ձևավորվում են քաղաքական ուժերի կոնկրետ պահանջները, մշակվում է քաղաքական պայքարի տակտիկան և ստրատեգիան, որոշակիացվում են քաղաքական կուսակցությունների հարաբերությունների բնույթը, ինչպես իրենց հետ համերաշխ, այնպես էլ հակառակորդ կուսակցությունների, դասակարգերի և սոցիալական խմբերի նկատմամբ: Քաղաքական ծրագրերի միջոցով իրականացվում է դասակարգերի և սոցիալական խմբերի վարքագծի սոցիալական կարգավորում: Որպես քաղաքական ծրագրերի հիմնական սուբյեկտներ, հանդես են գալիս քաղաքական կուսակցությունները, որոնք իրենց ծրագրերը կյանքում մարմնավորելու համար ձգտում են համախմբել դասակարգերին ու սոցիալական խմբերին և նրանց ջանքերը ուղղել այդ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ լծակների ստեղծմանը, ասել է, թե իշխանության նվաճմանը:

Վարքագծային մակարդակում քաղաքական գաղափարախոսության ինդիքն է հասարակական գիտակցության մեջ ծրագրերի տեսքով ներդնել որոշակի գաղափարական կողմնորոշումներ, լոզունգներ, պահանջներ, որոնք առաջացնում են համապատասխան քաղաքական վարքագիծ:

Գաղափարական համակարգերը ընդունակ են համախմբել մարդկանց, միավորել նրանց ներքին էներգիան, այն ուղղելով որոշակի գործողությունների դրսևորման: Այս կամ այն գաղափարական համակարգի նշանակությունը որոշվում է քաղաքացիների կողմից նրա նպատակների և սկզբունքների յուրացման աստիճանով, նրանց պրակտիկ գործողության մղելու ընդունակությամբ: Ասել է, թե քաղաքական գաղափարները իրական, նյութական ուժ են դառնում այն ժամանակ, երբ տիրապետում են գանգվածներին, երբ ընդունակ են գանգվածներին տանելու իրենց հետևից:

Այսպիսով, քաղաքական գաղափարախոսությունը՝ շրջապատող իրականության նկատմամբ հայացքների և կոնցեպցիաների համակարգ է, որոշակի աշխարհըմբռնում է, որը դրսևորվում է որպես քաղաքական կողմնորոշում:

ների և դիրքորոշումների մի ամբողջական համակարգ: Այն միևնույն ժամանակ հանդես է գալիս որպես քաղաքական գործընթացների տեսական ուսմունք և գործողությունների ծրագիր:

Համաշխարհային քաղաքական բարդ գործընթացները, աշխարհի և իրականության մասին տարբեր ըմբռնումներն ու պատկերացումները, միջազգային քաղաքական զարգացումները, հասարակության զարգացման տարբեր աստիճաններն ու շերտավորվածությունը, ազգային առանձնահատկություններն ու ավանդույթները, բնակլիմայական պայմաններն ու ռեսուրսները և բազում այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների ազդեցության շնորհիվ համաշխարհային քաղաքական կյանքում մշակվել են տարբեր գաղափարական համակարգեր:

Արդի աշխարհում տարածում են գտել քաղաքական գաղափարախոսությունների հետևյալ հիմնական համակարգերը: Լիբերալիզմի, պահպանողականության, սոցիալիզմի, կոմունիստական և ազգայնամոլական կամ ֆաշիզմի գաղափարախոսական համակարգերը:

Բոլոր այս գաղափարական հոսանքները, անկասկած, կապված են որոշակի քաղաքական կուսակցության և պետական կառույցների գործունեության հետ: Անկայն դրանցից ոչ մեկը չի կարելի իր մաքուր ձևով ուղղակիորեն վերագրել միայն այս կամ այն կուսակցությանը կամ կառավարության վարած քաղաքական կուրսին: Նախ այն պատճառով, որ իրանցից յուրաքանչյուրը ձևավորվել ու հաստատվել է տարբեր սոցիալ-մշակութային պայմաններում: Երկրորդ, նշված գաղափարական հոսանքներից ոչ մեկը իր մաքուր ձևով հասարակության մեջ հաստատվել չի կարող: Երրորդ, քանզի հասարակությունը միատարր չէ, և հանուն հասարակության կայունության և կոնֆլիկտների հաղթահարման, գաղափարական փոխզիջումները դառնում են անխուսափելի: Երրորդ, հասարակության զարգացման ցածր աստիճանում բնակչության ճնշող մեծամասնությունը ապագաղափարացված է և գաղափարախոսության կրող ու նաև դա կյանքում նյութականացման ակտիվ մասնակից լինել չի կարող:

2. Լիբերալիզմի գաղափարախոսության առանձնահատկությունները

3.

Լիբերալիզմը (ազատականությունը), առավել տարածված գաղափարական հոսանքներից է, որը սկիզբ է առել 17-18 դարերում որպես քաղաքական ասպարեզ իջած խոշոր բուրժուազիայի գաղափարախոսություն: Նրա ակունքներում ընկած են ժամանակի խոշորագույն մտածողներ Ջ.Լոկկի, Ե.Մոնտեսքյոյի, Թ.Հոբսի, Ջ.Միլլի, Թ.Ջեֆերսոնի և այլ մտածողների աշխատությունները:

Լիբերալիզմը նախ և առաջ լուսավորության դարաշրջանի ապստամբության և մարդասիրության գաղափարախոսություն էր, որը պայքարի էր դուրս ելել բացարձակ տիրապետության և արտոնյալ խավի, հատկապես նրա տնտեսական հիմքի դեմ: Լիբերալիզմի հիմքում դրված է անհատի

ազատության սկզբունքը, որը գերակայող է մնացած բոլոր հասարակական ինստիտուտների նկատմամբ Այդ է պատճառը, որ լիբերալիզմը իր ամենատարբեր որսնորումներով հանդերձ բոլոր դեպքերում կանգնած է անհատականության ազատությունների, մարդկային անհատի արժանապատվության պաշտպանության դիրքերում և հանդուրժողականություն է քարոզում այլ մարդկանց հայացքների և համոզմունքների նկատմամբ:

Լիբերալիզմի հիմնական սկզբունքներից են. անհատի բացարձակ արժեքն ու մարդու իրավունքներում արտահայտված նրա ազատության ձգտումը անհատականության ազատության սկզբունքները որպես սոցիալական շահ, օգուտ, օրենքը որպես ազատությունների իրականացման բնագավառ, որպես անվտանգության երաշխիք, առանձին մարդու և մյուս մարդկանց իրավունքների հավասարակշռություն, ոչ թե մարդկանց, այլ օրենքի իշխանություն, իշխանության բաժանումը որպես օրենքի իշխանության գրավական, դատական իշխանության անկախություն, քաղաքական իշխանության ենթարկում դատական իշխանությանը, օրենքի գերակայությունը որպես սոցիալական վերահսկողության գործիք, անհատի իրավունքի գերակայությունը հասարակության և պետության իրավունքի նկատմամբ:

Ազատականության այս սկզբունքները տարբեր մեկնաբանություններ ու զարգացումներ են ունեցել լիբերալիզմի տեսաբանների աշխատություններում՝ ինչն էլ առաջացրել է լիբերալիզմի տարբեր հոսանքներ:

Լիբերալիզմը ազատության համար պայքարը դիտում էր որպես մարդու տնտեսական, ֆիզիկական և մտավոր ազատությունների ամեն տեսակի արտաքին սահմանափակումների վերացում: Նրանք հանդես են գալիս բոլոր տեսակի ժառանգական իշխանությունների և խավային արտոնությունների դեմ:

Լիբերալիզմի գաղափարախոսության մեջ ձևավորվել և կյանքում մարմնավորվում է պետության նկատմամբ քաղաքացիական հասարակության գերակայության գաղափարը: Այդպիսի դիրքորոշումների հիմքի վրա էլ ձևավորվեց «պետությունը գիշերային պահակ է» գաղափարը, որը նշանակում էր, թե պետությունը պետք է օժտված լինի սահմանափակ և նվազագույն ֆունկցիաներով: Դեռևս Ջ. Լոկկը պնդում էր, որ քաղաքացիական հասարակությունը հաստատուն մեծություն է, իսկ պետությունը նրանից ածանցիալ է, անցողիկ:

Լիբերալիզմի գաղափարախոսության գլխավոր արժեքը ազատությունն է, սակայն ոչ թե պարզապես անհատի ազատ զարգացումն ու ինքնահաստատումը, այլ ազատության շուկայական մեկնաբանությունը, որը հիմնականում նշանակում է մասնավոր ձեռներեցության ազատություն: Ասել է, թե լիբերալիզմի գաղափարախոսությունը հենվում է ազատության և մասնավոր սեփականության նույնացման վրա: Զետևաբար լիբերալիզմի մեջ ազատությունը տնտեսական բնագավառի երևույթ է:

Մասնավոր սեփականությունը լիբերալիզմի գաղափարախոսության մեջ դիտվում է որպես մարդու ազատության գրավական ու չափանիշ. Տնտեսա-

կան ազատությունից բխեցվում է քաղաքական և քաղաքացիական ազատությունը: Լիբերալիզմի տնտեսագիտական տեսություններում քարոզվում է ձեռներեցության, շուկայի և մրցակցության ազատությունը: Դրա հետ միասին, այս տեսության կողմնակիցները կառավարության պարտականություն էին համարում շուկայական համակարգերի բացասական հետևանքներից անհատի պաշտպանվածությունը:

Չնայած ընդհանուր արժեքների և սկզբունքների առկայությանը լիբերալիզմի մեջ առկա է նաև մարդու իրավունքների վերաբերյալ տարբեր ըմբռումներ, որն էլ առաջացրել է երկու հիմնական հոսանքներ. ա)բուրժուա-էլիտարական հոսանք, որը պաշտպանում էր խոշոր սեփականատերերի շահերն ու իրավունքները և պահանջում էր, որ պետությունը չմիջամտի սոցիալ-տնտեսական հարաբերություններին, բ)ժողովրդավարական հոսանք, որը էլնեյով «իրավունքը հավասարապես տարածվում է բոլորի վրա» թեզից, պնդում է, որ պետությունը դրա համար պետք է ստեղծի անհրաժեշտ պայմաններ:

Այլ վերպ ասած լիբերալիզմի գաղափարախոսության մեջ պետության վերաբերյալ առկա է երկու տարբեր մոտեցումներ, որոնցից առաջինը՝ բուրժուա-էլիտարական, իշխում էր մինչև 19-րդ դարի վերջը: Ըստ այս հոսանքի կողմնակիցների քաղաքական իշխանության իրավունք պետք է տրվի միայն սեփականատերերին, որոնք պետք է բարեխղճորեն տնօրինեն երկրի ազգային հարստությունները և ընդունեն խելացի օրենքներ, քակցի իրենց քաղաքական գործունեության համար նրանք կարող են պատասխանատու լինել իրենց սեփականությանը: Դժվար չէ նկատել, որ լիբերալիզմի գաղափարախոսության այս հոսանքի ներկայացուցիչները հիմնականում հանդես են գալիս խոշոր սեփականատերերի շահերի պաշտպանության դիրքերից, փորձելով հիմնավորել նաև այն գաղափարը, որ միայն սեփականատերերը պետք է քաղաքական իշխանության իրավունք ունենան:

Գաղափարախոսության ցանկացած տեսակ, ենթարկվելով հասարակական զարգացումների և նրանում տեղի ունեցող փոփոխությունների ազդեցությանը, փոփոխվում է, լրացվում և հարմարեցվում է նոր պայմաններին: Գաղափարախոսությունը կարող է արդյունավետ և զանգվածների կողմից ընդունելի լինել այնքանով, որքանով այն ընդունակ է արձագանքել հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին և ճշմարտացիորեն արտացոլել դրանք:

20-րդ դարի սկզբներում աշխարհում, հատկապես Եվրոպայում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական գործընթացների ազդեցության տակ լիբերալիզմը ներքին զարգացումներ ապրեց, որի հետևանքով նրա ներսում ձևավորվեց գաղափարախոսական նոր հոսանք-նեոլիբերալիզմ, որին անվանում են նաև ժողովրդավարական նամ սոցիալական լիբերալիզմ: Լիբերալիզմի այս հոսանքը վերախմբագրեց ու հստակեցրեց իր գաղափարախոսության մի շարք կարևորագույն քաղաքական-տնտեսական դիրքորոշումներ: Դրանք հիմնականում կապված են պետության տնտեսական և սոցիալական դերի

բարձրացման հետ. Նեոլիթերալիստներ ընդունում են տնտեսական հարաբերությունների կարգավորման մեջ պետության մասնակցության և ակտիվ սոցիալական քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը: Հասարակության մեծամասնության խավերի շահերից ելնելով նրանք հանդես են գալիս մոնոպոլիստների իշխանության սահմանափակման և նյութական բարիքները հարկային համակարգի և պետական սոցիալական ծրագրերի միջոցով բաշխման օգտին:

Այս հոսանքի կողմից ստեղծվեց «համընդհանուր բարեկեցության պետության» մոդելը, որը դարձել է ԱՄՆ-ի դեմոկրատական կուսակցության գործունեության գաղափարատեսական հիմքը:

Լիբերալիզմի մեջ դեմոկրատական ուղղվածությունը սկիզբ է առել դեռևս 19-րդ դարի կեսերից ԱՄՆ-ում, որի ակտիվ պաշտպաններից էին ԱՄՆ նախագահներ Բ.Ֆրանկլինը և Թ.Ջեֆերսոնը: Այն 19-րդ դարի 60-ական թվականներին և Ա.Լինկոլնի կողմից պաշտպանվեց և սկսվեց մարմնավորել կյանքում. Շատ ամերիկյան այդ ժամանակվա քաղաքական գործիչների «ամերիկյան երազանքի» իրականացման ամենաիրական ուղին հասարակական կյանքում ժողովրդավարական և սոցիալական ծրագրերի իրականացումն է, որը պետք է դառնա պետական քաղաքականության կյարևորագույն ուղղությունը: Այդպիսի մոտեցումը ուժեղացրեց ժողովրդավարության ուղղվածության դիրքերը և լիբերալիզմի մեջ արդեն 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին դարձել էր հաստատուն և գերակայող լիբերալ-դեմոկրատական հոսանք:

20-րդ դարի առաջին կեսում սոցիալական լիբերալիզմի դիրքերից հանդես էին գալիս գերմանացի մտածող Մաքս Վեբերը, ամերիկյան քաղաքական գործիչներ Ղ.Լ.Ջորջը, Վ.Վիլսոնը, Թ.Ռուզվելտը: Պրակտիկ կյանքում սոցիալական լիբերալիզմը մեծ հաջողությունների հասավ 30-40-ական թվականներին ԱՄՆ-ում և 50-ական թվականներից հետո Եվրոպայի մի շարք երկրներում, և 20-րդ դարի երկրորդ կեսում այն դարձավ լիբերալիզմի առաջատար հոսանքը:

Ժամանակակից սոցիալական լիբերալիզմի հիմնական էությունը հանդուր է հետևյալ սկզբունքների ամբողջությանը

1. Մասնավոր սեփականությունը հասարակական բնույթ ունի, քանզի նրա ստեղծմանը, բազմապատկմանն ու պահպանմանը մասնակցում են ոչ միայն սեփականատերերը, այլ նաև հասարակությունը:
2. Պետությունը իրավասու է կարգավորելու մասնատիրական հարաբերությունները: Այսինքն ընդունվում էր տնտեսական գործունեությանը պետության միջամտության անհրաժեշտությունը և պաշտպանվում էր պետության սոցիալական ծրագրերի գարգացման գաղափարը, ինչը, ինչպես ցույց կտրվի համապատասխան ենթավերնագրերում, սոցիալիզմի գաղափարախոսության հիմնական ելակետն է համարվում: Ղրա հետ կապված սոցիալական լիբերալիզմի մեջ կարևորագույն տեղ է գրավում պետության կողմից արտադրա-շուկայական մեխանիզմների մշակման.

պահանջարկի և առաջարկի հարաբերությունների կարգավորման և արտադրության պլանավորման խնդիրների լուծումը:

3. Արդյունաբերական դեմոկրատիայի լիբերալիստական տեսությունը զարգացնում է բանվորների կառավարմանը մասնակցելու գաղափարը
4. Ղասական լիբերալիզմի «պետությունը գիշերային պահակ է» տեսությունը փոխարինվել է «բարեկեցության պետություն» կոնցեպցիայով, որի հիմնական սկզբունքները պետք է լինեն. ա) հասարակության յուրաքանչյուր անդամի հասնում է ապրուստի համար նվազագույն միևիմուտ, բ) պետական քաղաքականությունը պետք է աջակցի երկրի տնտեսական կայունությանը և կանխի սոցիալական ցնցումները, գ) հասարակական քաղաքականության բարձրագույն նպատակներին մեկը ամբողջ բնակչության զբաղվածությունն է: 20-րդ դարում մարդկանց մեծամասնությունը վարձու աշխատող է և պետությունը պետք է շահագրգռված լինի թուլացնելու մարդկանց տնտեսական կախվածությունը սեփականատերերից: Իսկ դա հնարավոր է իրագործել միայն պետության կողմից ակտիվ սոցիալական քաղաքականության իրականացման միջոցով, որի կարևորագույն նպատակներից մեկը մարդկանց արժանապատիվ աշխատանքով ապահովելն է:
5. Ժամանակակից լիբերալիզմի մեջ կարևոր տեղ է գրավում սոցիալական արդարության կոնցեպցիան, որը հենվում է ձեռներեցության և տաղանդի համար անհատին վարձատրելու սկզբունքի վրա: Միևնույն ժամանակ հասարակական հարստությունը վերաբաշխելիս կարևոր է համարվում հաշվի առնել առավել քիչ պաշտպանված խմբերի շահերը:

Նշված սկզբունքների առկայությունը արդի լիբերալիզմի մեջ թույլ է տալիս պնդելու, որ սոցիալական լիբերալիզմի գաղափարների իրականացումը սոցիալական պետության ստեղծման կարևորագույն երաշխիքներից է. Ղառնալով արդի ժամանակաշրջանի ազդեցիկ գաղափարախոսություններից մեկը, այն դարձավ նաև ազդեցիկ գաղափարախոսությունների ծնունդ տվեց լիբերալիստական կուսակցությունների, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում իրենց գաղափարները հասարակության կյանքում մարմնավորելու համար: 1947 թվականից այդ դիրքերում կանգնած մոտ 30 կուսակցություններ ստեղծեցին «լիբերալիստական ինտերնացիոնալը» և հանդես եկան «լիբերալիստական մանիֆեստ» ծրագրով: Լիբերալիստական կուսակցություններից իրենց ծանրակշիռ դերն ունեն Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի լիբերալիստական կուսակցությունները, ԱՄՆ-ի դեմոկրատական կուսակցությունը և այլն

4. Պահպանողական գաղափարախոսություն

«Պահպանողականություն» (կոնսերվատիզմ) հասկացությունը երկու նշանակությամբ է օգտագործվում. 1) պահպանել ու պաշտպանել այն ամենը, ինչը մարդու համար արժեք է ներկայացնում, 2) անցյալի արժեքների ան-

փոփոխ պաշտպանությունը, առաջին հերթին նախկինում իշխող խավերի արտոնությունների պաշտպանություն:

Դասական պահպանողականությունը ծագել է 18-րդ դարում Անգլիայում, որպես լիբերալիզմի գաղափարախոսության ընդլայնում, որը շարունակվում է մինչև մեր օրերը: Պահպանողական գաղափարախոսության ստեղծողներն էին անգլիացի մտածող և քաղաքական գործիչ Էդմունդ Բերկը (1729-1797), Ֆրանսիացի հասարակական գործիչներ Ժ.Պե Մետրը և Լ.դե Բոնապոլը:

Կոնսերվատիզմը ծնվեց որպես բարձրացող բուրժուազիայի, բուրժուական հեղափոխությունից ծնունդ առած լիբերալիզմի գաղափարախոսությանը հակադրվող կղերա-ֆեոդալական գաղափարախոսություն, դեմ դուրս գալով լիբերալիզմի առաջ քաշած հասարակական կարգի արմատական վերափոխումներին: Դասական կամ պատմական պահպանողականության գաղափարախոսության հիմնադրույթն այն էր, որ այն, ինչ ստեղծվելու հաստատվել է աստծո կողմից (հասարակական կարգը, պետության կառուցվածքը, խավային արտոնությունները և այլն), մարդը իրավունք չունի փոխելու:

Պահպանողական գաղափարախոսության հիմնական սկզբունքներն են. մտածածային կամքով ստեղծված աշխարհի վերածննդի բնագավառում մարդկային բանականության սահմանափակում, ինչը բխում է գոյություն ունեցող բարձրագույն բարոյական օրենքից, որին մարդը պարտավոր է հետևել, այստեղից բխում է պետական իշխանությանը մարդու ենթարկվելու անհրաժեշտությունը, իշխանությունը որպես բնության (ասել է թե աստծո) կողմից ծնված արդարություն, մարդու մեղավոր հոգին պահանջում է նրա կրքերի սանձում, մարդիկ բնականորեն անհավասար են, որը առաջացրել է գոյություն ունեցող հասարակական դասակարգերն ու խմբերը, նախկինների ավանդույթների հարգանքը և նրանց ենթարկվելը:

Այդ սկզբունքներից էլնելով կոնսերվատիզմի համար հիմնական արժեքներ են դառնում պատմությունը, օրենքը, կարգը, հասարակական կայունությունը, ավանդույթները, ըստանիքը, ազգը, պետությունն ու հասարակությունը, իշխանությունը, հերարխիան, կրոնը և այլն:

Պատմական կոնսերվատիզմը լինելով աշխարհիկ և եկեղեցական ֆեոդալների շահերի արտահայտիչ, հակված էր պաշտպանելու ֆեոդալական հասարակական հարաբերությունների համակարգը: Սակայն կոնսերվատիզմի սոցիալական բազան շատ ավելի լայն է և նրա գաղափարախոսությունը ընդունելի է բոլոր այն մարդկանց ու նրանց հանրույթների համար, որոնց դիրքին, կեցությանն ու ապրելակերպին հասարակական կյանքում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական զարգացումներն ու փոփոխությունները կարող էին վտանգ սպառնալ: Չնայած հատկապես հասարակության այն մասն են, որոնք վախ ունեն ապագայի անորոշությունների նկատմամբ, հիմնականում գյուղացիներն ու մանր ձեռներեցները, որոնք չեն հավատում, որ փոփոխություններն իրենց համար կարող են դրական լինել և սովորած

լինելով արդեն առմատավորված հարաբերությունների պայմաններում ապրելուն հակված չեն արմատական փոփոխությունների:

Պահպանողական գաղափարախոսությունը հենվում է այն ըմբռման վրա, ըստ որի չի կարելի բնական վիճակով դասավորված իրերի դրությունը փոխել, որի տակ հասկացվում էր նաև հասարակության մեջ հաստատված ավանդույթները, բարոյական նորմերը, խավային արտոնությունները, կրոնը և այլն: Այդպիսի դիրքորոշումից էլնելով պահպանողականները պնդում էին հասարակության մեջ ժառանգականության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունը, դեմ լինելով նորամուծումների: Ըստ նրանց քաղաքական սկզբունքները պետք է հարմարացնել ազգային սովորույթներին, հաստատված հասարակական-տնտեսական և քաղաքական ինստիտուտներին: Նրանք համոզված էին, որ հասարակության հերարխիկ կառուցվածքը հաստատված է ի վերուստ և մարդու կողմից կամայականորեն փոխել չի գարելի: Այստեղից էլ բխեցնում էին, որ հավասարության սկզբունքը հակասում է մարդու բնույթին և չի կարող ընկած լինել հասարակական կարգի հիմքում:

Պատմական զարգացման ընթացքում լիբերալիզմի նման պահպանողական գաղափարախոսությունն էլ նշանակալից փոփոխությունների ենթարկվեց: Եթե սկզբնական շրջանում նա փորձում էր խանգարել, խոչընդոտել բուրժուական կարգերի փաստատմանը, այն համարելով անտրամաբանական, աստծո կողմից սահմանված կարգերի ոչնչացում և այլն, ապա բուրժուական հարաբերությունների փաստատումից հետո պահպանողականությունը միանշանակ կանգնեց այդ հարաբերությունների՝ առաջին հերթին խոշոր սեփականատերերի շահերի պաշտպանության դիրքերում:

Նրանք էլ լիբերալիստների նման գովերգում էին շուկայի մրցակցության ազատությունը, պահանջում էին սահմանափակել տնտեսության մեջ պետության միջամտությունը, դառնալով նոր արտոնյալ, ունևոր խավերի, հիմնականում խոշոր կապիտալի շահերի պաշտպան:

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած ձևավորվում է պահպանողական գաղափարախոսության նոր հոսանք-նեոկոնսերվատիզմ: Հետազոտողները այն կապում են 20-րդ դարի 70-ական թվականներում ԱՄՆ-ում Ռ.Ռեյզանի գլխավորությամբ իշխանության եկած հանրապետականների, Մեծ Բրիտանիայում Մ.Թեյտերի գլխավորությամբ իշխանության եկած պահպանողականների և Գերմանիայում Գ.Հոլլի գլխավորությամբ իշխանության եկած Զրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունների հետ:

Նոր պահպանողականությունը ձևավորվեց ի հակադրություն նեոլիբերալիզմի և սոցիալիզմի գաղափարախոսության. Այդ պատճառով էլ նեոկոնսերվատիզմի մի շարք կարևորագույն տնտեսա-քաղաքական դիրքորոշումներ հասկանալի են դառնում հենց այդ հակադրության ենթատեքստում: Ինչպես նշվեց վերը նեոլիբերալիզմը ընդունում էր տնտեսական գործունեության մեջ պետության միջամտության անհրաժեշտությունը, ընդունելով նաև պետության կողմից սոցիալական ծրագրերի զարգացման անհրաժեշտությունը: Ինչպես ցույց կտրվի հաջորդ ենթավերնագրում, դա սոցիալիզմի գա-

ղափարախոսության հիմնադրույթն է: Նեոկոնսերվատիզմը սկզբունքորեն ընդունելով տնտեսական գործունեությանը պետության մասնակցության անհրաժեշտությունը և որոշակի սոցիալական ֆունկցիաների իրականացման կարևորությունը, այնուհանդերձ պահանջում է սահմանափակել պետության գործունեության և միջամտության շրջանակները: Եվ հենց այդ հակապետական ուղղվածությունն էլ նեոկոնսերվատիզմի գաղափարա-քաղաքական դիրքորոշման որոշիչ գիծն է: Այդ մտտեցումից ելնելով նեոկոնսերվատիզմը գտնում էր, որ լավագույն կառավարությունը այն է, որ քիչ է ըշխում, ասել է, թե քիչ է մասնակցում հասարակական կյանքի կառավարմանը:

Արդի պահպանողականները հանդես են գալիս ի օգուտ բնակչության չունևոր խավերի միջոցների վերաբաշխման նպատակով իրականացվող քաղաքականության դեմ: Լինելով համահավասար բաշխման ակտիվ հակառակորդներ, նրանք պահանջում էին կրճատել պետության սոցիալական ծրագրերը: Նրանք համոզված էին, որ պետությունը կթու կովի վերածելը բարոյագրվում է մարդուն: Անհատը պետք է իր սեփական ուժերի վրա հույս դնի, երբեմն ակնկալի նաև հարազատների և համաքաղաքացիների օգնությունը, բայց ոչ պետության աջակցությունը, պնդում են նոր պահպանողականները: Ժամանակակից պետությունը պետք է ստեղծի հավասար պայմանների հնարավորություններ, այլ ոչ թե հավասար արդյունքի հնարավորություն:

ԱՄՆ-ում և Անգլիայում գալով իշխանության, նեոկոնսերվատիզմի ներկայացուցիչները գտնում էին, որ Նախորդ շրջանի պետությունը՝ լիբերալիստների և սոցիալ-դեմոկրատների իշխանության օրոք չափազանց շատ էր ծանրաբեռնված տնտեսական կարգավորման և սոցիալական ապահովության ֆունկցիաներով, ինչը հանգեցրեց պետական ապարատի աշխատանքում չինովնիկության (բյուրոկրատիզմի) ուժեղացմանը, թուլացրեց անձնական նախաձեռնությունն ու մրցակցությունը: Ռեյգանը նշում էր, որ պետության կողմից սոցիալական խնամակալությունը նսեմացնում է անհատանությունն արժեքը, խեղաթուրում է ամերիկյան արելակերպի ավանդական արժեքները: Դառնալով խոշոր կապիտալի վառ ջատագովներ, նեոկոնսերվատորները կապիտալիզմը հռչակեցին որպես ազատ մրցակցության դարաշրջան: Նրանք գրեթե կրկնելով Նախորդ շրջանի լիբերալիզմի գաղափարները հանդես էին գալիս նաև դեմոկրատական կապիտալիզմի կոնցեպցիայի պաշտպանության դիրքերից:

Գործնական քաղաքականության մեջ նեոկոնսերվատորները կրճատեցին պետական ապարատի քանակը, ներդրեցին կառավարման նոր մեթոդներ, որոնք առավել արդյունավետ եղան մասնավոր սեկտորում, ամեն կերպ խրախուսում էին մանր ձեռներեցությունը, ստեղծեցին լայն գանգվածների կողմից բաժնետոմսեր ձեռք բերելու կառույցներ, առաջին հերթին նույն ձեռնարկության աշխատողների համար, որոշ պետական ձեռնարկությունները դարձրին նրա վրա աշխատողների սեփականություն: Նրանք ձգտում էին արտադրության մեջ ներդնել տարբեր համակարգեր, որոնք կապահովեն

ձեռնարկության անձնակազմի ակտիվ մասնակցությունը արտադրանքի որակի բարձրացման գործում: Այս բոլորը արվում էր հաղթահարելու համար, ինչպես սեփականատիրոջից, այնպես էլ արտադրության միջոցներից և աշխատանքի արդյունքից աշխատողների օտարումը, որը ըստ նրանց կմեղվեր խոշոր կապիտալի և մանր ձեռներեցության, ինչպես նաև չունևորների և հարուստների միջև եղած ռակասությունները:

Նեոկոնսերվատորների հայացքների և գաղափարների այսպիսի կտրուկ շրջադարձը թույլ է տալիս պնդելու, որ այսօրվա պահպանողականները երեկվա լիբերալիստներն են, որոնք ընդունում են նաև ավանդույթների և սոցիոմշակույթի գործոնների դերը հասարակության զարգացման գործում: Հայացքների այդպիսի կտրուկ փոփոխությունը արդյունք էր նաև այն բանի, որ առանց սոցիալ-տնտեսական խնդիրներին առնչվելու նրանք չէին կարող իրական դիմադրություն ցույց տալ սոցիալական լիբերալիզմի կամ սոցիալիզմի գաղափարախոսությանը, որոնք մարմնավորելով հասարակության կյանքում հսկայական հաջողություններ էին արձանագրել Եվրոպայի շատ երկրներում:

Արդի ժամանակի նեոկոնսերվատորական գաղափարախոսության մեջ ի հայտ են եկել տարբեր ուղղություններ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում պահպանողականության գաղափարախոսության հիմնական արժեքների՝ այն է, ավանդույթների, խավային տարբերությունների, խոշոր սեփականատերերի իրավունքների պահպանման հնարավորությունները: Այդպես առաջացան մի քանի աջ պահպանողական հոսանքներ:

Որոշ աջ ուղղվածության պահպանողականներ իրենց գաղափարախոսությունը կառուցում են «հասարակությունը արտաքին թշնամուց պաշտպանելու» գաղափարի վրա, որը մեծ տարածում գտավ հատկապես երկրորդ աշխարհամարտից հետո, ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Արևմտյան Եվրոպայում: Նրանց համար գլխավոր թշնամին կոմունիզմն էր, իսկ հիմնական խնդիրը՝ Եվրոպան կոմունիզմից ազատագրումը: Ըստ այս ուղղության կողմնակիցների, արդի քաղաքական գիտակցության գլխավոր վտանգը, որը նրանց կարծիքով լիբերալիզմի մեղքով է եղել, թշնամանքի վտանգը թերազնահատելու և այն անտեսելու մեջ է: Ըստ նրանց լիբերալիզմի միջոցով արևմտյան հասարակության մեջ բարոյականության անկման արդյունք էր այնքան հեռու գնաց, որ մարդիկ կորցրին վտանգի զգացողությունը և դարձան հեզ ու խաղաղ: Նրանք գտնում են, որ թշնամանքի անընդունակությունը արևմտյան ժողովրդավարության հիվանդությունն է, որը ծնել է սոցիալական արդարություն, հավասարություն, նյութական շահերի գաղափարախոսություն, ինչը բթացնում է մարդկանց և թույլ չի տալիս առավել մեծ վտանգը նկատել և ռակադրվել նրան:

Մեկ այլ աջ պահպանողական ուղղություն զարգացնում էր ազգի գաղափարը, այն համարելով հասարակության գլխավոր հոգևոր արժեք: Նրանք լիբերալիստներին մեղադրում էին նրանում, որ նրանք ժողովրդի մեջ զարգացրել են սպառողական, նեղ նյութական շահերով մտահոգված

խմբակային եզրիզմ: Նրանք իրենց խնդիրն էին համարում ժողովրդին վերադարձնել ազգային ոգին, պատմական գիտակցությունը, որը թույլ կտար նրան զգալու իր պատմության միասնությունը և կպայքարեր այդ միասնության համար: Այդ տեսակետի շատագուցները հիմնականում գերմանացի մտածողներ Յ.Չուդիուտը, Բ.Վիլմսը, Ա.Մոլերը և ուրիշներն էին, որոնք փորձում էին վերականգնել գերմանական ազգի միասնական ոգին: Իրենց հայացքներով նրանք առավել ընդգծված աջ ազգայնական պահպանողականության ներկայացուցիչներ էին, ինչ որ չափով դեպի Նեոֆաշիզմը հակված: Սակայն նրանց ռասիստներ չի կարելի անվանել: Նրանք դեմ չէին ռասաների, ժողովուրդների, ազգերի և նրանց մշակութային գոյության և ինքնության պահպանմանը, գտնելով, որ նրանք պետք է հարգեն միմյանց և խաղաղ գոյակցեն, բայց չխառնվեն, չծուլվեն իրար: Նրանք մերժում էին ամեն տեսակի ռասայական ներդաշնակության հասնելու ձգտումները, ինչը ըստ նրանց, կարող է տեղի ունենալ միայն ի հաշիվ ռասաների խառնուրդի, կյանքի յուրահատուկ պայմանների ստեղծմանը, այլ կերպ ասած, արհեստականորեն ազդելու ձուլելու ճանապարհով: Ըստ նրանց ռասայական պրոբլեմի սրման հիմնական աղբյուրը հենց ռասայական հավասարության քաղաքականությունն էր, այն ձևով, ինչպես դա իրականացրին լիբերալիստները: ԱՄՆ-ում, օրինակ, որոշակի արտոնություններ մտցրեցին աֆրոամերիկացիների համար ԲՆԸ-եր ընդունվելիս, պետական հաստատություններ աշխատանքի անցնելիս և այլն: Նեոկոնսերվատորական այս ուղղությունը գտնում էր, որ անկախ էթնոռասայական դրություններից բոլորը պետք է դրված լինեն հավասար պայմանների մեջ, հաշվի առնելով, որ փոքրաթիվ էթնիկ խմբերն ու ռասաները մյուսների հետ հավասար ելակետային հնարավորություններ չունեն, ուրեմն, թող օգտվեն իրենց ընձեռնած հնարավորություններից իրենց կարողությունների չափով: Պետությունը պետք է, մասնակցի միջէթնիկական հարաբերությունների կարգավորմանը, բայց այդ միջամտությունը չպետք է լինի թույլ, փոքր էթնիկական խմբերին կառավարության կողմից հովանավորության կամ արտոնություններ տալու ձևով:

4. Սոցիալիզմի գաղափարախոսությունը

Արդի աշխարհում ազդեցիկ գաղափարական հոսանքներից է սոցիալիզմի գաղափարախոսությունը: Սոցիալիզմի գաղափարները ծագել են դեռևս հին աշխարհում, որոնք հիմնականում ունեին սոցիալ-տնտեսական մեկնաբանություն:

Հայ իրականության մեջ սոցիալիզմի գաղափարները իրենց մարմնավորումն էին գտել VII-IX դարերում բռնկված գյուղացիական շարժումների մեջ, որը պատմության մեջ հայտնի է Պավլիկյան շարժում անունով:

Պավլիկյանները գտնում էին, որ բոլոր մարդիկ պետք է լինեն հավասար, մերժում էին ազատատիրական արտոնությունները, դեմ էին եկեղեցուն, այն դիտելով որպես իրենց պարտադրված չարիք, իրենց զրկանքների պատճառներից մեկը:

Հետագայում սոցիալ-իրավական ասոցիացիայության յուրացումը Նոր գյուղացիական շարժման պատճառ դարձավ: IX-XI դարերում բռնկվեց Թուրքական շարժումը, որն ըստ էության պավլիկյան շարժման շարունակությունն էր, Նույն սոցիալ-տնտեսական և իրավական պահանջներով:

Թուրքականները առաջ քաշեցին սև տղամարդկանց և կանանց իրավահավասարության հարցը:

Աշխարհի շատ երկրներում դարեր շարունակ սոցիալիզմի գաղափարներին համապատասխան ստեղծվել էին վաղ քրիստոնեական համայքներ և Նրա կյանքը կազմակերպվում էր սոցիալական հավասարության սկզբունքների կիրառմամբ:

Սակայն սոցիալիզմը իր տեսական և գաղափարախոսական ձևավորումը ստացավ Նոր պատմության ժամանակաշրջանում: Սոցիալիզմի գաղափարների տեսական մեկնաբանությունների ենթ հանդիպում ուտոպիական սոցիալիզմի դասականներ, Թ.Մորի, Թ.Կոմպանելլայի, Ռ.Օուենի, Շ.Ֆուրյեի, Ա.Սեն-Սիմոնի աշխատություններում:

19-րդ դարի կեսերից սկսած Կ.Մարքսը (1818-1883) և Ֆ.Էնգելսը (1820-1895) ձեռնարկեցին սոցիալիզմի գաղափարախոսության գիտական հիմնավորման գործընթացը: Նրանց ուսմունքի հիման վրա ձևավորվեց մարքսիզմի գաղափարախոսությունը, որը դարձավ բանվոր դասակարգի գաղափարախոսություն և երկար ժամանակ սերտորեն կապված էր բանվորական շարժման հետ: Մարքսիզմի գաղափարները, հատկապես 1864 թվականին ստեղծված Առաջին հնտերնացիոնալի շնորհիվ, լայն տարածում գտան Եվրոպական շատ երկրներում, նպաստելով գանգվածային սոցիալական բանվորական կուսակցությունների ձևավորմանը: 1889 թվականին ստեղծվեց Երկրորդ հնտերնացիոնալը: Այդ ժամանակ մարքսիստական բանվորական շարժումները դեռևս միասնական էին և պաշտպանում էին մարքսիզմի հիմնադրույթները: Սակայն 1895թ. Էնգելսի մահից հետո նրանում սկսեցին խորանալ տարաձայնությունները մարքսիստական դրույթների մեկնաբանության շուրջը, ինչն էլ հանգեցրեց սոցիալիստական շարժման տրոհման: 1903 թվականին ձևավորված բուլշևիկյան կուսակցությունն իր շուրջը համախմբեց ինտերնացիոնալիստական ձախ ուժերին և ձևավորվեց միջազգային բանվորական շարժում: Ռուսաստանում 1917 թվականին Գոկտեմբերյան Հեղափոխության հաղթանակից հետո այդ ձախ ուժերը վերջնականապես բաժանվեցին սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից և ստեղծեցին իրենց սեփական կուսակցությունները, որոնք 1919թ. միավորվեցին Կոմունիստական Երրորդ հնտերնացիոնալի մեջ: Իսկ աջ սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական ուժերը որոշ ժամանակ անց վերականգնեցին իրենց միասնությունը, ստեղծելով Սոցիալիստական բանվորական Ինտերնացիոնալը (1923): Երկրորդ աշխարհամարտից հետո այն անվանվեց Սոցիալիստական Ինտերնացիոնալ և մեծ հաջողությամբ գործում է մինչև մեր օրերը:

Այսպիսով սոցիալիստական գաղափարախոսության շրջանակներում ձևավորվեցին երկու նոր գաղափարախոսական հոսանքներ՝ Բոլշևիկյան (երբեմն այն անվանում են Լենինիզմ, իսկ հետագայում կոմունիստական գաղափարախոսություն) և սոցիալ-դեմոկրատական (հետագայում նաև ժողովրդավարական սոցիալիզմ)։

Այդ երկու հոսանքները ծագելով ընդհանուր արմատներից, ունեն նաև մի շարք ընդհանուր կողմնորոշիչ արժեքներ։ Դրանցից են. բոլոր մարդկանց հավասարությունն ու եղբայրությունը, որը հենվում է հավասարության, սոցիալական արդարության, անհատի նկատմամբ հասարակության գերակայության, հասարակական հարաբերությունների կարգավորմանը պետության ակտիվ միջամտության անհրաժեշտությունն ընդունելու սկզբունքների վրա։

Սակայն կոնկրետ սոցիալ-քաղաքական և տնտեսական ծրագրերով այդ երկու հոսանքներն իրարից արմատապես տարբերվում են, երբեմն էլ խիստ հակադրվում են իրար։ Այդպիսի արմատական տարբերություններից են սեփականատիրական հարաբերությունների և իշխանության նվաճման ձևերի հարցերը։

Կոմունիստական գաղափարախոսության մեջ մասնավոր սեփականությունը մերժվում է և ընդունվում է պետական սեփականության մենաշնորհը (իր բոլոր հետևանքներով՝ միակուսակցական համակարգ, մեկ գաղափարախոսություն և այլն)։ Սոցիալիզմը գաղափարախոսության մեջ՝ ընդունվում է սեփականության, այդ թվում և մասնավոր սեփականության տարբեր ձևեր, պետության դերի գերակայության պայմանով. Կոմունիստներն ընդունում էին հեղափոխության ճանապարհով կապիտալիզմի տապալման անհրաժեշտությունը-սոցիալիստները նախընտրում են խաղաղ զարգացման և բարեփոխումների ուղին, ինչի համար նրանց բոլշևիկներն անվանեցին ռեֆորմիստներ։

Այսօր աշխարհի գրեթե բոլոր խոշոր երկրներում, բացառություն է կազմում ԱՄՆ, իրենց քաղաքական հեղինակությամբ առավել ճանաչված ուժերից են սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստամետ կուսակցությունները, որոնց մի մասը Եվրոպայի շատ երկրներում բազմիցս հաղթել են ընտրություններում, նվաճել են իշխանությունը և կազմել իրենց կառավարությունը։

Պատահական չէ, որ սոցիալ-լիբերալիստական ուղղվածությամբ քաղաքական ուժերը շատ հաճախ օգտվում են հենց սոցիալիզմի արժեքներից, կյանքում ներդնելով նրա որոշ սկզբունքներ, ինչը նրանց հեղինակության բարձրացման և ժողովրդի վստահությանն արժանանալու կարևորագույն երաշխիքներից է. մյուս կողմից, ինչու չէ, նաև հենց սոցիալիզմի դեմ պայքարի հաջողված մեթոդ։

Արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատիայի գաղափարախոսության հիմնադիրներն ու նրա ճանաչված լիդերներն էին Է.Բեռնշտեյնը և Կ.Կաուտսկին։ Նրանք խիստ քննադատության ենթարկեցին մարքսիստական մի շարք կարևորագույն դրույթներ, որոնք արդեն չէին համապատաս-

խանում բանվոր դասակարգի պայքարի նոր պայմաններին. Կ.Կաուտսկին նկատի ունենալով Ռուսաստանում իշխանության եկած բոլշևիկների գործելակերպն ու փորձը, նշում է, որ բոլշևիկները դեն են նետել դեմոկրատական և սոցիալիստական սկզբունքները և նրանցից տարբերակելու համար սոցիալ-դեմոկրատները իրենց հայացքների համակարգը անվանեցին ժողովրդավարական սոցիալիզմ։

Ժողովրդավարական սոցիալիզմի կոնցեպցիայում զարգացվում են հետևյալ հիմնադրույթային գաղափարները։ Նախ Բեռնշտեյնի կողմից հերքվեց կապիտալիզմի ճգնաժամի և ժողովրդավարական զանգվածների աղքատացման մասին Մարքսի ուսմունքը։ Ուստի պրոլետարական հեղափոխության համար հիմք չկա, եզրակացնում էր Բեռնշտեյնը։ Ժամանակակից լիբերալիստական ինստիտուտներն ի տարբերություն Ֆեոդալականի այնքան ճկուն, փոփոխական և զարգացման ընդունալի են, որ պահանջվում է ոչ թե նրանց ոչնչացում, այլ ընդամենը հետագա զարգացում, գնալով բարեփոխումների ճանապարհով, ինչը իրականացնելու համար հարկավոր է դեմոկրատական ճանապարհով ձեռք բերել իշխանություն։

Բուրժուազիան պետք է համոզվի, որ սոցիալիստները չեն ցանկանում բռնությամբ զավթել իշխանությունը այն նույն միջոցներով, ինչպես ժամանակին նրանք զավթեցին իշխանությունը, այսինքն բռնությամբ և արյունահեղությամբ։ Անհրաժեշտ է հրաժարվել պրոլետարիայի դիկտատուրայի թեզից, պնդում էր Բեռնշտեյնը, քանզի դասակարգային դիկտատուրան քաղաքական ցածր կուլտուրայի դրսևորում է։

Չնայած բանվոր դասակարգի մտավոր, քաղաքական և մասնագիտական մեծ ձեռքբերումներին, գրում էր Բեռնշտեյնը, այնուհանդերձ նրանք այնքան զարգացած չեն, որպեսզի իշխանությունը վերցնեն իրենց ձեռքը։ Չե տևաբար նախքան սոցիալիզմի հնարավոր լինելը մենք պետք է ստեղծենք ժողովրդավարների ազգ, քանզի իսկական դեմոկրատիայի զարգացումն է հենց սոցիալ-դեմոկրատիայի անմիջական խնդիրը։ Ըստ Կ.Կաուտսկու, դեմոկրատիան այն պետականության ձևն է, որտեղ պրոլետարիստը զարգացնում է իր ուժերն ու ընդունակությունները, որոնք անհրաժեշտ են հենց նրա ազատագրման համար։ Կաուտսկին գտնում էր, որ իրական ժողովրդավարությունը բուրժուազիայի իշխանության ձևը չէ, քանի որ նրանք ի սկզբանե դեմ էին համընդհանուր ընտրական իրավունքներին, ինչին բանվորները հասել են երկարատև պայքարի շնորհիվ։ Իրական ժողովրդավարությունը ըստ Կաուտսկու, ամենակարճ, հարուստ և առավել քիչ կորուստներով ճանապարհ է դեպի սոցիալիզմ։

Սոցիալիստական ինտերնացիոնալը 1951թ. Ֆրանկֆուրտյան ղեկավարացիայում հռչակեց իր պաշտոնական դոկտրինան, որը հայտնի է «Դեմոկրատական սոցիալիզմ» անունով, որում արձանագրված է սոցիալիստների այն հիմնական գաղափարները, որ սոցիալիզմին պետք է հասնել ժողովրդավարության ճանապարհով. Յուրաքանչյուր կուսակցության համար կարող է լինել ժողովրդավարական սոցիալիզմի մասին իր պատկերացումը, սակայն

բոլորի համար էությունը մեկն՝ է ժողովրդավարությունը ինդրի լուծման մեթոդ է, որը համապատասխանում է սոցիալիզմի էությանը. Պայքարի մնացած բոլոր միջոցները ադավաղում են սոցիալիստական նպատակները և այն դարձնում են անհասանելի.

Մինչ 70-ական թվականները Սոցիալիստական ինտերնացիոնալը արևմտաեվրոպական մասշտաբի կազմակերպություն էր. Ներկայումս այն բավականին աճել է, ընդգրկելով 139 կուսակցություններ 120 երկրներից: Դառնալով համաշխարհային շարժում, սոցիալ-դեմոկրատիայի հայացքներում տեղի են ունեցել մեծ տեղաշարժեր և զարգացումներ: Օրինակ սոցիալ-դեմոկրատիան դադարեց պաշտպանել սառը պատերազմը և հրաժարվեց հակակոմունիստական պայքարից. Գաղութատիրության փլզումից հետո նա վերանայեց և զարգացրեց իր հայացքները: Եթե նրանք նախկինում մերժում էին հեղափոխության գաղափարը, ապա այժմ ընդունում են հեղափոխության որոշ տեսակներ, ասենք ազգային-դեմոկրատական հեղափոխությունը, որպես գաղութային ճշումից ազատագրվելու ճանապարհ, դեմոկրատական հեղափոխություն, որպես բռնապետությունից ազատագրում և այլն: Սոցիալ-դեմոկրատները հանդես են գալիս Նեոգաղութատիրության դեմ: Սակայն, այնուհանդերձ, նրանք դեմ են սոցիալիստական հեղափոխությանը: Եթե երկրում գոյություն ունի ժողովրդավարությունը, ապա սոցիալիստական հեղափոխությունը անընդունելի է, պնդում են սոցիալ դեմոկրատները.

Կարևոր առաջընթաց արձանագրեց սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ Սոցիալիստների 1989թ. Ստոկհոլմում կայացած 18-րդ կոնգրեսում, որը նվիրված էր երկրորդ ինտերնացիոնալի 100 ամյակին: Կոնգրեսը ընդունեց «Սկզբունքների ղեկարացիա», որն ըստ էության Սոցիալիստների նոր ծրագիր էր, որում ժողովրդավարական սոցիալիզմը բնորոշվում էր որպես ազատության, արդարության և համերաշխության համար շարժում: Սոցիալ-դեմոկրատները հանդես են գալիս զլոբալ մասշտաբով քաղաքական, սոցիալական և տնտեսական դեմոկրատիայի համար: Ըստ սոցիալ-դեմոկրատների, լիբերալներն ու կոնսերվատորները ուռճացնում են ազատության գինը ի վնաս արդարության և համերաշխության, իսկ կոմունիստները, ընդհակառակը՝ ուռճացնում են արդարությունը և համերաշխությունը ի վնաս ազատության: Տնտեսական հարաբերություններում սոցիալ-դեմոկրատները ընդունում էին սեփականության բազմաձևությունը, գտնելով, որ մասնավոր սեփականությունը պետք է թույլատրվի և կարող է լրիվ գոյություն ունենալ պետական սեփականության հետ համատեղ: Սեփականության ձևը պետք է համապատասխանի արտադրության բնույթին և այն պետք է պլանավորվի: Վերջին ժամանակներս սոցիալ-դեմոկրատները առաջ են քաշել «տնտեսական սոցիալիզմի» կոնցեպցիան. համաձայն որի, միայն այն իրավունք ունի գոյության, ինչը չի վնասում մարդուն և բնությանը.

90-ական թվականներին սոցիալ-դեմոկրատները նորից ակտիվացրեցին իրենց գործունեությունը, ինչի հետևանքով էվրոպայի շատ երկրներում նրանք եկան իշխանության:

5. Կոմունիստական գաղափարախոսությունը

Կոմունիստական գաղափարախոսության հիմքում ընկած է Լենինի ուսմունքը, կամ ինչպես ընդունված է անվանել, Լենինիզմը:

Հրաժարվելով Մարքսիզմի հիմնադրույթային սկզբունքներից, նախ և առաջ աշխարհի առավել զարգացած երկրների միաժամանակյա կապիտալիզմից սոցիալիզմի անցման մարքսյան տեսակետից, Լենինը առաջ քաշեց «կապիտալիստական երկրների շղթայում թույլ օղակի» գաղափարը, որտեղ անհրաժեշտ էր անհապաղ բռնությամբ գավթել իշխանությունը, ոչնչացնել բուրժուական պետական մեքենան, վերացնել մասնավոր սեփականությունը, այն դարձնելով պետական սեփականություն:

Մարքսի տեսության մեջ սոցիալիզմը կապիտալիզմի զարգացման անհրաժեշտ և օրինաչափ հետևանք է, որպես մեկ տնտեսական ֆորմացիայից մեկ այլ՝ ավելի զարգացած համակարգի անցնելու պատմական անհրաժեշտություն: Հետևաբար, սոցիալիզմը, որպես հասարակական հարաբերությունների առավել առաջադիմական համակարգ կարող է առաջանալ միայն այն ժամանակ, երբ հասարակության մեջ ձևավորվում են նրա առաջացման համար անհրաժեշտ նախադրյալներ: Ինչպես ֆեոդալիզմի ընդերքում ձևավորված բուրժուական հարաբերությունները այլևս անհնարին էին դարձրել ավատատիրական կարգերի հետագա գոյությունը և հասարակության հետագա առաջընթացը անխուսափելի էր դարձրել ավատատիրության կործանումը, այնպես էլ Կապիտալիզմի ընդերքում պետք է հասունանային սոցիալիզմի նախադրյալները և անխուսափելի դարձնեին նրա հաղթանակը:

Սակայն սոցիալիզմի հաղթանակի այս տրամաբանությունը մերժվեց Լենինի կողմից: Նա առաջ քաշեց «Կապիտալիզմի շղթայում թույլ օղակի» գաղափարը, որը ենթադրում էր մեկ առանձին վերցրած թույլ զարգացած երկրում բռնությամբ իշխանության զավթում և իշխանության օգտագործմամբ հասարակության մեջ սոցիալիստական հարաբերությունների հաստատում: Իսկ դա նշանակում էր հասարակությանը պարտադրել հասարակական հարաբերությունների մի համակարգ, որին նա պատրաստ չէր ոչ արտադրության զարգացման մակարդակով, ոչ էլ գիտակցության աստիճանով: Ասել է թե հասարակությունը այդ պարագայում օբյեկտիվորեն և սուբյեկտիվորեն պատրաստ չէ սոցիալիստական հարաբերությունների հաստատման համար. Եվ բնավ էլ պատահական չէ, որ ԽՍՀՄ-ը դառնալով հզոր ամբողջատիրական երկիր, չկարողացավ արձանագրել սոցիալիստական հարաբերությունների հաղթանակը:

Լենինիզմի գաղափարախոսությունը դարձավ Հոկտեմբերյան Հեղափոխության ու ԽՍՀՄ-ում և այլ երկրներում սոցիալիզմի կառուցման գաղափարական հիմքը: Այդ գաղափարախոսության հիման վրա տեղի ունեցավ արտադրության համայնացում, գյուղի կոլեկտիվացում, ձևավորվեց հզոր ամբողջատիրական համակարգ: Սակայն այն դատապարտված էր կործանման, քանզի սոցիալիզմն ու բռնությունը անհամատեղելի են:

Միջազգային կոմունիստական շարժումը ծագել է Ռուսաստանում 1917թ. Յուլյետեմբերյան Յեղափոխության հաղթանակից հետո, և 1919-1943թթ. ժամանակաշրջանում զարգացել է հիմնականում կոմունիստական կուսակցության միավորող Կոմունիստական Ինտերնացիոնալի շրջանակներում: Կայացել է ընդամենը Կոմիտերնի յոթ կոնգրես, որոնցում մշակվել են կոմունիստական շարժման, նրա գաղափարախոսության ստրատեգիայի և տակտիկայի հանգուցային տեսական պրոբլեմները. Առանձնահատուկ նշանակություն ունեցավ Կոմիտերնի 7-րդ կոնգրեսը (1935), որը մշակեց հակաֆաշիստական ճակատի ստրատեգիան և գաղութային ու կախյալ երկրներում հակաիմպերիալիստական միասնական ճակատի պայքարի տակտիկան: Այդ նոր ստրատեգիայի և տակտիկայի հիմնական գաղափարը շարադրված էր Գ. Դիմիտրովի «Ֆաշիզմի հարձակումը և Կոմունիստական Ինտերնացիոնալի խնդիրները հանուն բանվոր դասակարգի միասնության ֆաշիզմի դեմ պայքարում» զեկուցման մեջ:

Երկրորդ աշխարհամարտից հետո միջազգային կոմունիստական շարժումը իր կապերը պահպանում էր կոմունիստական և բանվորական կուսակցությունների Միջազգային ժողովներում (1957,1969), ինչպես նաև աշխարհամասային ժողովներում, որոնք տեղի են ունենում Եվրոպայում, Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում և Ասիայում: Միջազգային կոմունիստական շարժումը մինչև սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզումը հատկապես 80-ական թվականներին հզոր քաղաքական ուժ էր:

80-ական թվականներին կոմունիստական կուսակցություններ կային աշխարհի երկրների մեծ մասում: Կոմունիստական շարժումը ընդգրկում էր մոտ 90 միլիոն մարդ, որից 86 միլիոնը բաժին էր ընկնում 15 սոցիալիստական երկրների (47-ը՝ Չինաստանին): 80 ոչ սոցիալիստական երկրներում կային մոտ 4 միլիոն կոմունիստներ (հստակ վիճակագրությունը բացակայում է): Մի շարք կոմունիստական կուսակցություններ չէին հրապարակում իրենց քանակը, նրանցից մոտ 20-ը տարբեր բռնապետական համակարգերում գտնվում էր ընդհատակյա վիճակում: Ոչ սոցիալիստական երկրներում գանգվածային կոմունիստական կուսակցություններ կային Իտալիայում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Ֆինլանդիայում, Յունաստանում, Կիպրոսում, Ճապոնիայում, Յնգաստանում, Չիլիում և այլն: Մի քանի խոշոր երկրներում (ԱՄՆ, Կանադա) կոմունիստական կուսակցությունները քանակապես փոքրաթիվ են, ընդամենը մի քանի հազար անդամներով, ինչի պատճառով էլ նրանց ներակայությունը քաղաքական կյանքում գրեթե չի երևում:

50-ական թվականներին Ստալինի մահից հետո ԽՍՀՄ-ում և սոցիալիստական մյուս երկրներում փորձ արվեց սոցիալիզմի նոր մոդելի մշակմամբ վերաիմաստավորել Կոմունիստական շարժումը, սակայն հաջողություններ չարձանագրվեց: 70-ական թվականներին կոմունիստական շարժման մեջ ստեղծագործական մոտեցում ցուցաբերեցին Իտալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Յունաստանի և այլ երկրների կոմունիստական

կուսակցությունները: Սակայն ԽՍՀՄ կոմունիստական կուսակցությունը, հատկապես նրա վերնախավը խանդով ու չարակամությամբ էր վերաբերվում նրանց գործունեությանը, քննադատելով ու մեղադրելով նրանց մաքր-սիզմից շեղվելու մեջ:

ԽՍՀՄ փլուզումից հետո սոցիալիզմի ճանապարհով են ընթանում մի քանի երկրներ, որոնցից Չինաստանն ու Վիետնամը օգտագործելով շուկայական հարաբերությունները սկսեցին զարգանալ, իսկ Յուսիսային Կորեան և Կուբան գնում են նախկին ճանապարհով:

6. Ազգայնամուլական գաղափարախոսություններ

Վերը նշված քաղաքական գաղափարախոսություններն իրենց բնույթով միջազգային են, և ազգային կամ կրոնական ուղղվածություն չեն ենթադրում: Սակայն դրանց հետ միասին աշխարհում առկա են գաղափարախոսության դրսևորումներ, որոնք ազգային կամ կրոնական գերակայություն են քարոզում, հակված լինելով այս կամ այն ազգը, էթնիկական հանրույթը ներկայացնել որպես այլոց նկատմամբ առավելություն ունեցող, արտոնյալ, աստծո ընտրյալ ազգ:

Այդպիսի գաղափարախոսություններից են ֆաշիզմը, ռասիզմը, սինիզմը, վահաբիզմը և այլն:

Ֆաշիզմը մինչև 1919 թվականին Իտալիայում և Գերմանիայում առաջացած գաղափարա-քաղաքական հոսանք է, որն արտահայտում էր ազգային բուրժուազիայի առավել ռակցիոն և ազրեսիվ խավերի շահերը: Այն ծագեց որպես ազգային-սոցիալիստական գաղափարախոսություն, որի ստեղծողներն էին Իտալական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ձախ թևի նախկին առաջնորդ Բ.Մուսսոլինը և գերմանական քաղաքական գործիչ Ա.Յիտլերը (Ա. Շիլկբրուբեր):

Ֆաշիզմի գաղափարախոսության հիմքում ընկած է ռասիզմը և էլիտարիզմը, այսինքն ռասայական անհավասարության գաղափարը, որը ենթադրում է մեկ ռասայի առավելությունը մյուսի նկատմամբ:

Ֆաշիզմը առաջ քաշեց մի տեսություն, ըստ որի որոշ ժողովուրդներ, ազգեր առավելություն ունեն մյուսների նկատմամբ, քանզի նրանք աստծո ընտրյալներն են, նրանց երակներում հոսում է արիական արյուն և նրանց կոչված են իշխելու աշխարհում, իսկ մյուսները պետք է ընդունեն նրանց իշխանությունը և ծառայեն նրանց: Գերմանական ֆաշիզմը պնդում էր, որ արդի աշխարհում պետք է գերակայող դեր ունենան մշակույթ ստեղծող ռասաները-արիացիները, որոնք թվին նրանք դասում էին նախ գերմանացիներին և մի շարք հյուսիսային ժողովուրդների (շվեդներ, նորվեգացիներ, դանիացիներ): Ռասայի ամբողջականությունը հայտարարվեց անանցանելի արժեք, ինչից ելնելով էլ ֆաշիզմի մեջ անհատականությունը զնահատվում է որպես երկրորդական արժեք՝ ռասայա-էթնիկական, ազգային-պետական արժեքի համեմատությամբ: Ֆաշիզմի գաղափարախոսության մեջ եական տեղ է գրավում առաջնորդության կամ ֆյուրերիզմի սկզբունքը, որը

տոտալիտարիզմի տերմինը, ասելով, որ ֆաշիստական պետությունը տոտալիտարական (ամբողջատիրական) է, այսինքն չի կարող թույլ տալ բացի իրենից այլ ասոցիացիաներ և արժեքներ:

Ֆաշիստական գաղափարախոսությունների շարքում իր յուրահատուկ տեղն ունի Ա.Սալազարի ստեղծած պորտուգալական դիկտատուրան (1932-1969):

Սալազարը իշխանության եկավ պորտուգալիայի աղքատության և հետամնացության շրջանում, ինչի համար նրան օժտեցին անսահմանափակ իշխանությամբ, որը պետք է թույլ տար նրան երկիրը ծանր վիճակից հանելու: Օգտագործելով ընձեռնած հնարավորությունը, նրան հաջողվեց աստիճանաբար ուղի հանել երկրի տնտեսությունը, Սալազարը նշում էր, «իմ գլխավոր սկզբունքներից մեկը, որին ես միշտ հետևում եմ, այն է, որ ոչ ոք չի կարող վիճարկել պետության ղեկավարի իրավասությունը. ինչը նշանակում էր, որ քաղաքական պրոբլեմների կարգավորման մեջ կա միայն մեկ գերագույն դատավոր, որի առաջադիմական որոշումները բոլորի համար պարտադիր են»: Ի տարբերություն այլ ֆաշիստական պետությունների, Սալազարի ստեղծած ֆաշիստական պետությունը Պորտուգալիայում իր բնույթով բավականին մեղմ էր:

Ֆաշիստական գաղափարախոսության իրականացումը քաղաքական և տնտեսական կյանքում կարելի է բաժանել ներքին և արտաքին քաղաքականության խնդիրների: Արտաքին քաղաքականության մեջ այն հանգեցրեց զավթողական գործունեության:

Ֆաշիստները ձգտում էին զավթել շատ պետություններ և ատրկացնել շատ ժողովուրդների ներքին քաղաքական կյանքում ֆաշիստական գաղափարախոսության հիմքի վրա ստեղծվեցին ամբողջատիրական (տոտալիտար) պետություններ, որում հասարակական և անձնական կյանքի բոլոր կողմերը դրված էին պետության հսկողության տակ. Ֆաշիստական պետություններում լայնորեն կիրառվում էր տնտեսության պետական-մոնոպոլիստական կարգավորման մեթոդը, ակտիվորեն ներդրվում էր դասակարգային ներդաշնակության գաղափարը: Սակայն ֆաշիստական գաղափարախոսության այս ընդհանուր գծերը ֆաշիստական տարբեր պետություններում տարբեր դրսևորումներ ունեցան: Ներկայիս ֆաշիստական գաղափարախոսությունը իր նշանակությունը և ազդեցությունը կորցրել է, չնայած առանձին դեպքում աշխարհի տարբեր երկրներում ռասիզմի, հակասեմիտիզմի, նեոֆաշիզմի և այլ ուսմունքների և քաղաքական շարժումների ձևով դեռևս հանդիպում են, որոնք փորձում են հաստատել այս կամ այն ռասայի, էթնիկական, դասակարգային և այլն հանրույթների արտոնությունները

Գրականություն

1. Берк Э. Размышления о революции во фракции /социологические исследования. 1991 #6.7.9. 1992 #2. 1993 #4/
2. Григорян Б.Т. "Просвещенный" консерватизм. /Вопросы Философии. 1979. #9/
3. Джилае М. Настоящее и будущее социалистической идеи /Рабочий класс и современный мир. 1990#5/
4. Ирхин Ю. В. Зотов В.Д. Зотова Л.В. Политология. М. 1999
5. Майон-Дельсоль Ш. Политические идеи XX века. М.1995
6. О свободе. Ангология западноевропейской классической либеральной мысли. М. 1995
7. Поздняков Э.А. Геополитика. М.1995
8. Политологический словарь. Под. ред. В.Ф. Халипова. М.1995
9. Политология. Курс лекции. Под. ред. А.А. Радугина. М.1999
10. Рахтмир П.Ю. Происхождение фашизма. М.1981
11. Самуэл Г. Либерализм. Опыт изложения принципов и программы современного либерализма. М.1996
12. Хайек Ф. Дорога к рабству. /Вопросы Философии. 1992 #5/
13. Фромм Э. Анатомия человеческой деструктивности. М.1994
14. Հարությունյան Է.Ա. Անցումային հասարակությունները որպես տրանսֆորմացիոն գործառույթների համակարգ: Եր. 2000

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՅՈՒԹԵՐՈՐԴ

Արդի Համաշխարհային քաղաքականությունը

1. Արդի միջազգային հարաբերությունների բնույթը

Արդի աշխարհում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, տեղաշարժերն ու զարգացումները արդյունք, հետևանք ու նաև շարունակությունն են վերջին տասնամյակներում աշխարհում տեղի ունեցած քաղաքական գործընթացների. Ուստի արդի միջազգային հարաբերությունների բնույթն ու ուղղվածությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է հետադարձ հայացք գցել վերջին տասնամյակներում տեղի ունեցած միջազգային քաղաքական իրադարձությունների վրա.

20-րդ դարավերջում աշխարհում տեղի ունեցած քաղաքական ծավալուն զարգացումներն ու տեղաշարժերը որակապես փոխեցին աշխարհի քաղաքական պատկերը, միջազգային հարաբերությունների բնույթն ու համաշխարհային զարգացման տեղեկեցներն ու հեռանկարները: Առաջացել է նոր աշխարհաքաղաքական կարգի ստեղծման անհրաժեշտություն:

90-ական թվականների սկզբներին ԽՍՀՄ փլուզմամբ, ինչը փաստորեն նշանակում էր նաև համաշխարհային սոցիալիստական համակարգի փլուզում, ավարտվեց կես դարյա սառը պատերազմը: Մինչ այդ աշխարհում առկա էր երկու ծայրահեղ հակադիր համաշխարհային համակարգերի՝ կապիտալիզմի և սոցիալիզմի միջև ընթացող դաժան մրցակցություն և անզիջում պայքար համաշխարհային տիրապետության հասնելու համար: Ձևավորվել էր նաև չմիացող երկրների միավորում, որը, սակայն, համաշխարհային քաղաքական գործընթացների վրա նշանակալից ազդեցություն չէր կարող ունենալ:

Երկրորդ, աշխարհամարտից ոետո կապիտալիզմի աշխարհի լիզերները սկսեցին գիտակցել, որ ԽՍՀՄ գլխավորությամբ սոցիալիզմի համաշխարհային համակարգը գեների ուժով, պատերազմի միջոցով կործանել հնարավոր չէ: ԱՄՆ քաղաքական և պետական գործիչների (Ա. Դալլես) կողմից մշակվեց սոցիալիզմի, ավելի ճիշտ, համաշխարհային կոմունիզմի դեմ պայքարի նոր դոկտրինա, որը ստացավ սառը պատերազմ անվանումը: Այն գործողության մեջ դրվեց 50-ական թվականների սկզբներից: Դոկտրինայի հիմնական նպատակն էր ներսից քայքայել, ջլատել սոցիալիստական համակարգը, առաջին հերթին ԽՍՀՄ-ը, թուլացնել և կործանել այն: Դրա համար օգտագործվում էին քարոզչական, գաղափարախոսական, տնտեսական ու քաղաքական, դիվանագիտական և հետախուզական պայքարի բոլոր ձևերը, դրա վրա ծախսելով ահռելի մրջոցներ: Այդ առթիվ ԱՄՆ պետական և քաղաքական գործիչ Զ. Բոեզինսկին նշում էր, որ այն ծախսերը, որ ԱՄՆ կատարում է կոմունիզմի դեմ պայքարի համար, եթե տրամադրեր թույլ, հետամնաց երկրներին նրանց տնտեսության զարգացման համար, աշխարհում աղքատության հարցը լուծված կլիներ: Օգտվելով իրենց տնտեսության զարգացման բարձր մակարդակից, հետևաբար և հսկայական ֆինանսական և տնտեսա-

կան ռեսուրսներ, միջոցներ ու հնարավորություններ ունենալու առավելությունից, Արևմուտքը ԱՄՆ-ի գլխավորությամբ սկսեց արագ թափով և ցուցադրաբար զինվել ռազմական նորագույն տեխնիկայով, զանգվածային բնաջնջման գեների (միջուկային, ջրածնային, ատոմային, կենսաբանական, քիմիական և այլն) տեսակներով, միաժամանակ կոչ անելով պետություններին համախմբվել համաշխարհային կոմունիստական վտանգի դեմ պայքարելու համար: Բնական է, որ սոցիալիզմի համակարգը ԽՍՀՄ գլխավորությամբ պետք է արձագանքեր նման կոչերին և ձեռնարկեր համապատասխան քայլեր կապիտալիզմի աշխարհին հակադրվելու և նրանից պաշտպանվելու համար:

Ասածը չի նշանակում, որ սառը պատերազմի և ռազմական մրցավազքի իրականացման մեջ միայն ԱՄՆ է մեղավոր: Դրանց առաջացման համար մեղքի իր բաժինն ուներ նաև ԽՍՀՄ-ը: Պատերազմից հետո ոգևորված ռազմական արդյունաբերության մեջ որոշակի հաջողություններից, կամ զուցեն հաղթողի հոգեբանական գործոնի ազդեցության տակ, կոմունիստական պետական գործիչներն ու տեսաբանները առաջ քաշեցին այն կոնցեպցիան, որ առաջին համաշխարհային պատերազմը ծնեց կոմունիստական պետություն, երկրորդ աշխարհամարտից հետո առաջացավ սոցիալիզմի համաշխարհային համակարգը, հետևաբար, երրորդ համաշխարհային պատերազմը կավարտվի ամբողջ աշխարհում կոմունիզմի հաղթանակով: Դա, փաստորեն, կապիտալիզմին նետված մարտահրավեր էր, երրորդ աշխարհամարտի պատրաստվելու կոչ, կապիտալիզմի կործանման նախատեսում, ինչն էլ զգուշացում եղավ զարգացած կապիտալիստական երկրների համար, որոնք նույնպես ստիպված էին արձագանքել և համապատասխան քայլեր ձեռնարկել:

Չեռնաբար, բուրժուական տեսաբանների և արևմտյան քաղաքական ու պետական գործիչների պնդումները համաշխարհային կոմունիստական վտանգի մասին, իր հիմնավորումն ուներ: Փաստարկված էր նաև նրանց մեկնաբանությունները, որ զինվում են ոչ թե պատերազմելու, այլ կոմունիստական վտանգից պաշտպանվելու և աշխարհում խաղաղություն ապահովելու համար: Ինչպես Արևմտյան քաղաքական գործիչներն էին պնդում, նրանք զինվում են, որ ԽՍՀՄ-ը չհամարձակվի պատերազմ սկսել: Ասել է թե, զինվում են միայն հակադիր համակարգերի միջև ռազմական հավասարակշռություն պահպանելու համար, որի դեպքում կողմերից ոչ մեկը չի համարձակվի պատերազմ սկսել:

Այսպես սկսվեց ռազմական մրցավազքը երկու հակադիր համակարգերի միջև, որի հետևանքով աշխարհում կուտակվեց այնքան զանգվածային բնաջնջման գեների պաշարներ, որը կբավականացնի տասնյակ անգամներ բնաջնջել ամբողջ երակրագնդի բնակչությունը:

Նշենք, որ երկու հակամարտ համակարգերի սուր պայքարը, ռազմական մրցավազքը դրսևորվում էր հիմնականում ԱՄՆ-ԽՍՀՄ հակամարտության ձևով:

ԱՄՆ և ԽՅՄ գտնվում էին չափազանց անհավասար պայմաններում: ԱՄՆ պատերազմից հետո (ու նաև հենց պատերազմի շտրոհիվ), դարձավ աշխարհի ամենահարուստ ու զարգացած պետությունը: Լինելով պատերազմող կողմ, ԱՄՆ պատերազմի ընթացքում ավելի շատ իր արտադրանքը արտահանելով ու իր դաշնակիցներին դրանք վաճառելով էր զբաղված (ըստ որոշ վիճակագրությունների, աշխարհի ոսկու պաշարների երկու երրորդը տեղափոխվել էր ԱՄՆ): Եվ հենց այդ կուտակած հսկայական հարստությունն էլ նրան թույլ էր տալիս ահռելի միջոցներ ներդնել ռազմական արդյունաբերության մեջ, առանց վտանգելու երկրի նորմալ զարգացման ընթացքին:

ԽՅՄ, ընդհակառակը՝ պատերազմից դուրս եկավ հսկայական նյութական և մարդկային կորուստներով: Երկրի Եվրոպական մասի զգալի հատվածը ավերակների էր վերածվել, իսկ պետությունը այնքան միջոցների տեր չէր, որը հնարավորություն տար և՛ պատերազմի հետևանքով ավերված երկիրը վերականգնելու, և՛ ժողովրդի սոցիալական վիճակը բարելավելու, և՛ այդ ամենով հանդերձ, հակառակորդից հետ չմնալու առումով, ռազմական հավասարակշռություն ապահովելու համար: Եվ ինչպես որ նախատեսել էին սառը պատերազմի տեսաբանները, ԽՍՀՄ-ը ներքաշվելով ռազմական մրցավազքի մեջ, ստիպված էր իր միջոցների առյուծի բաժինը ներդնել ռազմական արդյունաբերության զարգացման, զենքի նորագույն տեսակների ստեղծման բնագավառում, ինչը միջոցներ չէր թողնում տնտեսության զարգացման, սոցիալական խնդիրների լուծման, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման համար:

Բնական է, որ այդ պայմաններում գտնվող պետությունը ի վիճակի չէր ապահովել երկրի տնտեսության զարգացման այնպիսի տեմպեր, որը թույլ տար բարելավելու ժողովրդի կենսամակարդակը, ինչն էլ, իրոք աստիճանաբար հասարակության մեջ ավելացնում էր դժգոհների քանակը, որոնք լավագույն թիրախ էին Արևմուտքի գաղափարախոսության համար: Եվ քնավ էլ պատահական չէր, որ 90-ական թվականների սկզբներին ԽՍՀՄ փլուզմանը աջակցող մեծաքանակ արևմտամետ ուժեր հայտնվեցին երկրի ամբողջ տարածքում: Ասել է, թե սառը պատերազմի տեսաբանները գաղափարական պայքարի առումով նույնպես ճիշտ էին հաշվարկել ԽՍՀՄ փլուզման նախադրյալները և հասան իրենց նպատակին:

ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացել էր միջազգային հարաբերությունների սկզբունքորեն նոր համակարգի ձևավորման և համաշխարհային քաղաքական գործընթացների իրականացման նոր մեխանիզմների մշակման անհրաժեշտություն:

Միջազգային հարաբերությունների համակարգը երկու և ավելի պետությունների փոխհարաբերություն է: Նրան բնորոշ է ժողովուրդների, ազգերի, պետությունների և պետական համակարգերի միջև կապերի և փոխազդեցությունների ամբողջությունը:

Միջազգային հարաբերությունները համաշխարհային հանրության հիմնական քաղաքական սուբյեկտների միջև քաղաքական, տնտեսական, սո-

ցիալական, դիվանագիտական, իրավական, ռազմական ու մարդասիրական կապերի և հարաբերությունների համակարգված ամբողջություն է: Որպես համաշխարհային քաղաքականության հիմնական սուբյեկտներ հանդես են գալիս պետություններն ու միջազգային կազմակերպությունները: Պետություններ առավել հզոր և կազմակերպված սուբյեկտներ են, որոնց ձեռքում են գտնվում միջազգային կյանքի վրա ազդելու հիմնական միջոցները: Հենց պետությունների միջոցով են ժողովուրդներն ու ազգերը կազմակերպված ձևով ներկայացնում իրենց շահերը միջազգային ասպարեզում: Զանգի ոչ մի հասարակություն առանց պետության չի կարող կազմակերպել իր ներքին և արտաքին քաղաքականությունն ու այլ պետությունների հետ հարաբերությունները:

Միջազգային հարաբերություններում քաղաքականության առաջնահերթ նշանակությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. Միջազգային քաղաքական հարաբերությունները սերտորեն կապված են, իսկ երբեմն էլ սերտաճում են միջազգային տնտեսական հարաբերությունների հետ: Դրա վրա օրինակն է սառը պատերազմի ժամանակաշրջանում միջազգային քաղաքական և տնտեսական հարաբերությունների դրսևորման բնույթը, երբ քաղաքական նկրտումներով զանգվածային բնաջնջման միջոցների ստեղծման վրա աշխատում էին աշխարհի գիտնականների և տեխնիկական մտավորականության կեսից ավելին:
2. Զաղաքական հարաբերությունները իրենց մեջ ներառում են ինչպես քաղաքական, այնպես էլ ոչ քաղաքական գործընթացների կառավարման հիմնական լծակները:
3. Միջազգային քաղաքական հարաբերությունները հակված են համընդգրկուն (գլոբալ) դառնալու տեղեցեցին, ինչը պահանջում է լրիվ նոր մեխանիզմների մշակում և օգտագործում:
4. Միջազգային քաղաքական հարաբերությունները եական ազդեցություն են թողնում միջպետական հարաբերությունների ձևավորման և նոր աշխարհակարգի հաստատման վրա: Միջազգային հարաբերությունները հնարավորություն են տալիս ապահովել պետությունների և այլ միջազգային ինստիտուտների նորմալ գործառնությունը:
5. Աշխարհում սոցիալ-քաղաքական և տնտեսական լարվածությունը գտնվում է բոլոր ժողովուրդների ուշադրության կենտրոնում: Մյուս կողմից, ցանկացած երկրում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները կարող են առաջացնել աշխարհի հզոր քաղաքական ուժերի բախումը և միջազգային լարվածություն:

Միջազգային հարաբերություններն ու պետության ներքին քաղաքականությունը փոխկապակցված են և ազդում են մեկը մյուսի վրա: Մի կողմից պետությունների ներքին քաղաքականությունն է ազդում միջազգային հարաբերությունների բնույթի վրա, քանզի յուրաքանչյուր պետություն այդ հարաբերություններում ձգտում է իր ազգային շահերը պաշտպանել, ինչը բնականաբար անտեսվել չի կարող: Մյուս կողմից ցանկացած պետություն

ստիպված է հաշվի նստել աշխարհում հաստատված իրողությունների և տեղի ունեցող գործընթացների, միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հետ: Այլ կերպ ասած, գոյություն ունի պետության զարգացման ներքին և արտաքին գործոնների սերտ կապ ու փոխազդեցություն, որոնց բնույթն ու մակարդակը կապված է պատմական նոսկրետ պայմանների հետ:

Հարկ է նշել, որ արտաքին գործոնները գնալով ավելի մեծ ազդեցություն են թողնում ցանկացած պետության ներքին քաղաքականության վրա: Դա կապված է միջավայրի և ռեսուրսների պրոբլեմների սրման, սոցիալական հավասարության խախտման, աշխարհի տարբեր մասերում լուրջ հանադրությունների առկայության, թույլ զարգացած երկրների աղքատության համար համաշխարհային հանրույթի պատասխանատվության մեծացման, բնական աղետների հետևանքների վերացման հետ: Իսկ, որ ամենակարևորն է գնալով աճում է պետությունների, որպես համաշխարհային հանրույթի անդամների, միմյանցից փոխնապակցվածությունը: Այսօր աշխարհում չկա մի պետություն, նույնիսկ եթե նա գերտերություն է, հարուստ ու զարգացած է, որ իր խնդիրները լիովին կարողանա լուծել, առանց այլ պետությունների հետ սերտ հարաբերություններ հաստատելու: Անել է թե համաշխարհային քաղաքական գործընթացներում պետությունների համատեղ գործունեությունը դարձել է բոլոր երկրների համար անհրաժեշտություն, ինչն էլ մեր օրերում էլ ավելի է ուժեղացրել համաշխարհային ինտեգրացման գործընթացները:

Արդի շրջանում միջազգային հարաբերություններին բնորոշ է անցումային վիճակ: Տեղի է ունենում նոր համաշխարհային հանրության նախաձեռնման գործընթացներ, որի մեջ ներառված են ինչպես փոխադարձ շահեր ունեցող, այնպես էլ իրար հետ մրցակցող կամ հակադրվող տարբեր պետություններ:

Միջազգային հարաբերությունները, որպես պետությունների, միջպետական կազմակերպությունների, կուսակցությունների և անհատների միջև միավորող կապերի ամբողջություն, այն միջավայրն է, որտեղ իրականացվում են արտաքին և միջազգային քաղաքականության սկզբունքները:

Համաշխարհային քաղաքականությունը միջազգային իրավունքի սուբյեկտների նպատակամղված քաղաքական գործունեություն է, որը կապված է այդ սուբյեկտների շահերի համաձայնեցման, պատերազմի և խաղաղության հարցի լուծման, մարդկության գոյատևման, համընդհանուր անվտանգության և զինաթափման ապահովման, տարածաշրջանային, ազգային և համամարդկային կոնֆլիկտների կանխման և կարգավորման, շրջակա միջավայրի պահպանության, հետամնացության, աղքատության, սովի և հիվանդությունների հաղթահարման և այլն համամարդկային խնդիրների իրականացման հետ, նպատակ ունենալով աշխարհում հաստատել արդարացի կարգեր:

Համաշխարհային քաղաքականությունը ընդգրկում է միջազգային քաղաքական հարաբերությունների ողջ դաշտը, այն ամենը, ինչը ընկած է պե-

տությունների փոխհարաբերությունների հիմքում: Համաշխարհային քաղաքականությունը, հիմնականում, ենթադրում է մարդկության և նրա ազգային շահերն արտահայտող սուբյեկտների առջև ծառայած համընդհանուր խնդիրների համատեղ լուծում:

Միջազգային հարաբերություններում քաղաքականության առաջնային դերը պայմանավորված է հետևյալ գործոններով:

ա) Համաշխարհային քաղաքականության սուբյեկտները ունեն հսկայական միջոցներ և հնարավորություններ շրջապատի միջավայրի վրա ազդելու համար, օժտված են կառավարման հզոր լծակներով և կարողանում են ազդել համաշխարհային գործընթացների վրա: Այդպիսի սուբյեկտներից է ՄԱԿ-ը, անկախ պետությունների դիվանագիտական գործունեությունը, առաջատար և ինքնուրույն միջազգային կազմակերպությունները, միություններն ու հասարակական կազմակերպությունները: Հենց այս սուբյեկտների համաձայնությամբ ընդունված որոշումներն են ընկած միջպետական հարաբերությունների կարգավորման հիմքում:

բ) Միջազգային հարաբերությունները ունեն ընդգծված զլոբալացման, բարդացման և ծավալման միտում, որոնց կարգավորումը պահանջում է միջազգային քաղաքական մեխանիզմների կատարելագործում:

գ) Չափազանց սրվել է ամբողջ մարդկության անվտանգության, նրա գոյատևման խնդիրները արդի միջուկային դարաշրջանում: Հենց այդ ուղղությամբ պետք է կենտրոնացվեն համաշխարհային սուբյեկտների ջանքերը:

դ) Ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում արդի համաշխարհային զարգացման մեջ առկա հակասությունների լուծումը: Մի կողմից աճում է սոցիալ-տնտեսական համակարգերի տարատեսակները և նրանց գործառնության ձևերը, մյուս կողմից՝ մարդկությունը որպես «միասնական ամբողջականություն» գաղափարի առկայությունը, ինչը անհրաժեշտ է դարձնում ժողովուրդների և պետությունների փոխհարաբերություններում նոր մոտեցումների, փոխըմբռնումների և փոխշահավետ համագործակցության նոր ձևերի ներդրում:

Միջազգային քաղաքականության եությունն ու բովանդակությունը բացահայտվում է ինչպես համամարդկային խնդիրների վերլուծության միջոցով, այնպես էլ ազգային շահերի մեկնաբանության միջոցով, ինչը ընկած է յուրաքանչյուր պետության քաղաքական գործունեության հիմքում:

ԱՄՆ հայտնի միջազգայնագետ և պետական գործիչ Հ. Մորգենթաունը նշում էր, որ միջազգային քաղաքականությունը, ինչպես և մնացածները, իշխանության հանար պայքար է: Արտաքին քաղաքականության հիմնական նպատակն է կողմնորոշվել ազգային շահերում և պաշտպանել համապատասխան ուժային միջոցներում: Հենց շահերի կոնցեպցիայի կիրառումը մեզ կփրկի ինչպես բարոյական ծայրահեղությունից, այնպես էլ քաղաքական անխոհեմությունից: Մենք հարգանքի տուրք պետք է մատուցենք բոլոր պետություններին միայն այն ժամանակ, երբ նրանց կկարողանանք դիտել որպես որոշակի ուժային դրսևորմամբ իր շահերը հետապնդող քաղաքական

միավոր: Այլ կերպ ասած, հարգանքի արժանի է այն պետությունը, որը կարողանում է պաշտպանել իր շահերը: Եվ, իրոք ուժի և շահերի միջև հավասարակշռության կարևորագույն գործոն է համաշխարհային քաղաքականության մեջ կայունության ապահովումը համար: Զանգի միջազգային քաղաքականությունը միշտ էլ երկակի բնույթ ունի՝ այլապատասխանել և իրականացնել սեփական շահերը, դրա հետ միասին միջազգային հարաբերությունների ցանկացած սուբյեկտ այս կամ այն չափով պետք է հաշվի առնի ուրիշ պետությունների և համաշխարհային հանրության շահերը: բ) Համաշխարհային քաղաքականությունը ածանցված է իրենց շահերի համար սուբյեկտների պայքարից և դրա հիմքում ընկած է իշխանության համար պայքարը և համաշխարհային քաղաքական գործընթացների վրա ազդեցություն ունենալու ձգտումը:

2 Համաշխարհային քաղաքական գործընթացների բնույթը

Երկրագնդում գնալով հաստատվում է փոխկապակցությունների գլոբալ համակարգ: Իրենց շահերի իրականացման նպատակով համաշխարհային քաղաքականության սուբյեկտների փոխազդեցությունները իրենցից ներկայացնում են քաղաքական գործընթացների յուրատեսակ համակարգ:

Համաշխարհային քաղաքական գործընթացը միջազգային հարաբերությունների բազմատեսակ ինստիտուցիոնալ սուբյեկտների գործունեության, աշխարհում տարատեսակ քաղաքական գործընթացների համակարգված ամբողջություն է, որտեղ յուրաքանչյուր քաղաքական սուբյեկտ ձգտում է իր շահերը իրականացնել: Նրա հիմնական սուբյեկտներն են ժողովուրդները, ազգերը, պետությունները, միջազգային կազմակերպությունները, ոչ պետական միավորումները, հասարակական շարժումները, վերազգային կորպորացիաները, կրոնական կազմակերպությունները, քաղաքական և հասարակական լիդերները:

Արդի համաշխարհային քաղաքական գործընթացների կառուցվածքում իրենց նշանակալից դերն ունեն, ա) ՄԱԿ-ը և այլ օրինական միջազգային կազմակերպություններ ու հաստատություններ: բ) տարածաշրջանային և ենթատարածաշրջանային ինստիտուտների քաղաքական գործունեությունը: Խոսքը վերաբերում է միջպետական, ազգային և այլ տիպի հասարակական խմբավորումներին ու միություններին, որոնց միասնական գործունեությունը իր ազդեցությունն է թողնում միջազգային հարաբերությունների վրա: գ) անկախ պետությունների արտաքին քաղաքականությունը, որը համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների իրականացման հիմնական ձևն է:

Այսօր ամբողջ աշխարհը բաժանված է այս կամ այն պետական խմբավորումների, ռազմա-քաղաքական բլոկների քաղաքական ազդեցության ոլորտների, որոնց բարդ փոխհարաբերությունների ազդեցության տակ էլ ձևավորվում ու դրսևորվում են համաշխարհային քաղաքական գործընթաց-

ները: Սկսած 80-90-ական թվականներից միջազգային քաղաքական գործընթացներում իր որոշիչ նշանակությունն է ստացել միջազգային անվտանգության ամրապնդման, մարդկության կյանքից պատերազմի երևույթը բացառելու խնդիրը:

Միջազգային անվտանգության ապահովման կարևորագույն ուղղությունը միջուկային զենքի տարածման արգելումն է, որի իրականացումը դարձել է անհետաձգելի խնդիր: Միջուկային զենքի չտարածման գաղափարը ծագել է 60-ական թվականների սկզբներին, երբ միջազգային հանրույթը սկսեց գիտակցել միջուկային հակադրության անհեռանկարային լինելը, նրա անվերահսկելիության և տարածման վտանգը: 1968 թվականին Մոսկվայում, Վաշինգտոնում և Լոնդոնում երեք պետությունների միջև ստորագրվեց պայմանագիր միջուկային զենքի չտարածման մասին, որին 1991 թվականին միացան աշխարհի 141 երկրներ: Պայմանագրի հիմնական էությունն այն էր, որ միջուկային պետությունները պարտավորվում էին միջուկային զենք կամ այլ միջուկային սարքավորումներ չտրամադրել որևէ այլ երկրի, իսկ միջուկային զենք չունեցող երկրներն էլ պարտավորվում էին իրենց չստեղծել և ուրիշներից ձեռք չբերել զենքի այդ տեսակները: Այդ պարտավորությունների կատարման վերահսկողությունը դրվել է Միջազգային Ատոմային Էներգիայի Գործակալության վրա: Չնայած պայմանագրի մեծ նշանակությանն ու արդյունավետությանը, նրան չեն միացել երկու միջուկային տերություններ՝ Չինաստանն ու Ֆրանսիան, և մի խումբ երկրներ, որոնք մոտ են միջուկային զենքի ստեղծմանը-Հարավ Աֆրիկյան Հանրապետությունը, Իսրայելը, Պակիստանը, Յուգոսլավիան, Արգենտինան և Բրազիլիան:

Արդի համաշխարհային քաղաքական գործընթացը բնորոշվում է որպես երկբևեռ համակարգից-բազմաբևեռ աշխարհի անցում: Սակայն առկա են նաև այլ մեկնաբանություններ և կանխատեսումներ: Միջազգային քաղաքականության մասնագետները ելնելով արդի աշխարհում քաղաքական զարգացումների բնույթից և առկա իրողություններից կանխատեսում են Նոր աշխարհաքաղաքական կարգի ձևավորման երեք ուղղություններ: Համաձայն առաջին տեսակետի, աշխարհը իրենից ներկայացնում է երկու հակադիր բևեռներ, որտեղ ԽՍՀՄ-ի տեղը կզրավի սոցիալիստական Չինաստանը: Շատ տեսաբանների կարծիքով այդպիսի մոդելի կայացման հնարավորությունը չափազանց անիրական է: Երկրորդ տեսակետը առաջ է քաշում միաբևեռ-ավտորիտար աշխարհակարգի մոդելը, որում ԱՄՆ իր կամքով և ցանկություններով սկսելու է աշխարհի Նոր կարգերի կառուցումը, անշուշտ, ելնելով իր ազգային շահերից և աշխարհըմբռնումից: Այս տեսակետը հենվում է այսօր աշխարհում ԱՄՆ-ի որդեգրած քաղաքականության վրա, որը առիթը բաց չի թողնում միջազգային հարաբերություններում ինչպես տեսական, այնպես էլ պրակտիկ գործունեությամբ աշխարհին պարտադրելու իր հավակնությունները, իրեն հռչակելով Նոր աշխարհակարգի ստեղծման միակ օրինական ճարտարապետը: Դրան հասնելու համար նա օգտագործում է իր տնտեսական, քաղաքական և ռազմական ճնշման բոլոր մի-

ջոցները, Դրա վառ ապացույցն է Իրաքի նկատմամբ կիրառվող ուժի գործադրման քաղաքականությունը, Հարավսլավիայի դեպքերը, որտեղ փաստորեն իրականացվեց բացարձակ ագրեսիա անկախ պետության նկատմամբ, Ի դեպ, Եվրոպայի ՆԱՏՈ-ի անդամ շատ երկրներ այդ գործողություններին մասնակցում էին իրենց կամքին հակառակ, ԱՄՆ ճնշման տակ: Սակայն ինչպես ցույց են տալիս վերջին շրջանի քաղաքական զարգացումները, հատկապես Ռուսաստանի և Չինաստանի ղեկավարների կատարած հայտարարությունը, որում միանշանակ անհամաձայնություն է հայտնվում ԱՄՆ նկրտումների նկատմամբ, կարելի է պնդել, որ այս տեսակետը նույնպես քիչ հավանականություն ունի իրականանալու: Նշենք, որ միաբևեռ աշխարհակարգի ստեղծմանը դեմ են աշխարհի պետությունների մեծամասնությունը:

Երրորդ տեսակետը ենթադրում է աշխարհում ստեղծել բազմաբևեռ աշխարհակարգ և հասնել առանց հակասությունների ժողովրդավարական համակարգի ստեղծման հնարավորությանը, ինչը ավելի շատ է համընկնում աշխարհի ժողովուրդների ցանկություններին: Զանգի միայն միջազգային իրավական նորմերի և սկզբունքների հիման վրա պետությունների և ժողովուրդների իրավահավասար հարաբերությունների հաստատման պայմաններում է հնարավոր ստեղծել անհակասական, կայուն և անվտանգ աշխարհ: Այս տեսակետի իրականանալու հնարավորությունը ավելի հավանական է:

Համաշխարհային քաղաքական գործընթացների հիմնական ուղղվածությունը հասարակությունների և պետությունների ժողովրդավարացումն է: Նրանում ներառված են հարյուր միլիոնավոր մարդիկ: Տեղի է ունենում քաղաքական և տնտեսական փոխադարձ կապերի և հարաբերությունների բարդ երկմիասնական զլոբալիզացման գործընթաց: Դա արտահայտվում է աշխարհում հսկայածավալ տարատեսակ ժողովրդատնտեսական և ազգային-պետական համակարգերի առկայությամբ: Ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում հասարակական առաջընթացի գործոնը, որպես համաշխարհային քաղաքակրթության հիմնական երաշխիք:

Նշանակալից բարձրացել է համաշխարհային քաղաքական գործընթացների կառավարելիությունը: Արդի համաշխարհային քաղաքական գործընթացների մեջ գերակշռող միտումը միջազգային անվտանգության ամրապնդման խնդիրն է, որի վտանգը չի անցնի այնքան ժամանակ, քանի դեռ աշխարհի տարբեր մասերում ծագում են ազգային առճակատումներ, պատերազմներ ու բռնություններ: Գնալով ավելի մեծ վտանգ է ներկայացնում միջազգային ահաբեկչության ծավալումը, ծայրահեղության դրսևորումները, կրոնական արմատականությունը, որոնք պահանջում են բոլոր պետությունների ջանքերի միավորում՝ ընդհանուր չարիքի դեմ առնելու համար: Սակայն, ցավոք սրտի մի շարք պետություններ խրախուսում են այդ դրսևորումները և դրանք օգտագործում են իրենց նպատակների համար:

Արդի համաշխարհային քաղաքական գործընթացները զարգանում են նոր պատմական պայմաններում, երբ աշխարհաքաղաքական հարաբերու-

թյուններն ու կապերը դառնում են վերահաս փոփոխություններում գերիշխող և քաղաքակրթության զարգացման հեռանկար:

Համաշխարհային քաղաքական գործընթացներին բնորոշ են հետևյալ գծերը

1. Կենտրոնի առկայությունը, որի դերում հանդես է գալիս ՄԱԿ-ը, «ությակ» երկրների փոխհարաբերությունները, առաջատար միջազգային կազմակերպությունների գործունեություն ՆԱՏՈ-ն և այլն:
2. Առաջին պլան են մղվում մարդկային քաղաքակրթության զարգացման համընդգրկուն խնդիրները:
3. Աճում է տարատեսակ քաղաքական սուբյեկտների փոխհարաբերությունների և համագործակցության միտումները:
4. Անընդհատ քանակապես ծավալվող համաշխարհային քաղաքական գործընթացների սուբյեկտների միջև առկա են հակասական փոխազդեցություններ: Միևնույն ժամանակ, համաշխարհային քաղաքականության մեջ աճում է մարդու դերը, նրա իրավունքների, ազատությունների և կենսական շահերի նշանակությունը:
5. Առկա է հակասական մոտեցում «բազմաբևեռ» (Ռուսաստան, Չինաստան և այլն) և «միաբևեռ» (ԱՄՆ) աշխարհակարգի ստեղծման վերաբերյալ, հակասություն կա նաև քաղաքակրթությունների միջև (Արևմտյան, Արևելյան, Իսլամական և այլն):
6. Քաղաքական գործընթացներում առկա է սոցիալ-քաղաքական ուժերի, քաղաքականության իրականացման միջոցների, ձևերի ու մեթոդների բազմազանություն: Իրենց ազդեցություն են թողնում այնպիսի հակասական միտումներ, ինչպիսիք են ժառանգականությունը, ավանդույթներն ու նորամուծությունները, կայունությունն ու փոփոխականությունը, հեղափոխական և էվոլյուցիոն տարրերի համատեղումը, գիտակցված գործունեության և տարերայնության դրսևորումները և այլն:

3. Համաշխարհային քաղաքականության համընդգրկուն (գլոբալ) խնդիրները

20-րդ դարակեսից սկսած աշխարհաքաղաքական զարգացումների, հակամարտությունների, տարբեր քաղաքական համակարգերի միջև տեղի ունեցող ռազմական միջավազքի, պետական և ռազմական խմբավորումների առճակատումների, ինչպես նաև բնության նկատմամբ մարդկության վերաբերմունքի և աշխարհի մեծ մասում երկրների հետամնացության ու աղքատության առկայության հետևանքով մարդկությունը ժառանգել է մի շարք այնպիսի չլուծված խնդիրներ, որոնք իրենց անհետաձգելի լուծումն են պահանջում, քանզի սերտորեն առնչվում են մարդկության գոյության խնդիրներին հետ:

Ցավոք մարդկությունը չափազանց ուշ սկսեց գիտակցել, որ այս երկրա-

գունդը իր հնարավորություններով անսահմանափակ չէ, որ նրա ռեսուրսները անսպառ չեն, որ երկրագունդը ամբողջ մարդկության ընդհանուր տունն է և այդ տունը խնամքի և հոգատարության կարիք է զգում:

Տարված իրենց գաղափարա-քաղաքական, ռազմա-տնտեսական ազդեցության ոլորտների ընդարձակման հոգսերով, մի շարք խոշոր պետություններ (ԽՍՀՄ, ԱՄՆ, Չինաստան, Անգլիա, Ֆրանսիա), այնքան զանգվածային բնաջնջման զինատեսակներ ստեղծեցին, որոնց չնչին մասի օգտագործումն անգամ կարող է մարդկության համար աղետալի ու կործանարար լինել: Ուստի, վտանգված էր նաև մարդկության գոյության խնդիրը, ինչը նույնպես շատ ուշ գիտակցվեց մարդկության կողմից:

Ամբողջ մարդկությունը հայտնվել է մի նավակում և քաղաքական հարաբերությունների ցանկացած սուբյեկտի կողմից առաջացրած ցնցում կարող է հանգեցնել նավակի և նրանում գտնվողների անխուսափելի կործանման: Այս բոլորի գիտակցումն է ընկած արդի ժամանակաշրջանի միջազգային քաղաքականության սուբյեկտների հարաբերությունների հիմքում, ինչն էլ նրանցից շատերին ստիպել է հրաժարվելու իրենց քաղաքական հավակնությունից: Աստիճանաբար աշխարհը հրաժեշտ է տալիս վերջին կայսրություններին, ռազմական հակազդությանն ու մրցակցությանը: Սկսվել է պատմության նոր դարաշրջան:

Համաշխարհային զարգացման մեջ գնալով ավելի մեծ նշանակություն է ստանում աշխարհի և նրանում գործառնող սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգերի բազմազանության և աշխարհի միասնության հակասության լուծման խնդիրը, ինչը ենթադրում էր համամարդկային մի շարք հիմնախնդիրների համատեղ լուծում, նույնիսկ հակադիր շահեր ունեցող պետությունների միասնական ջանքերով:

Ահա այսպիսի չլուծված գլոբալ խնդիրների ծանր բեռով էլ մարդկությունը մուտք գործեց երրորդ հազարամյակ: Մարդկության առջև կանգնած են խնդիրներ, որոնց լուծումը առանց երկմտանքի կարելի է համարել նրա գոյության անհրաժեշտ գրավականը: Այդպիսի խնդիրները ընդունված է անվանել գլոբալ, համընդգրկուն, կամ համամարդկային խնդիրներ: Դրանք կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի.

1. Միջազգային սոցիալ-քաղաքական խնդիրներ, որոնցից առանձնանում են միջուկային պատերազմի կանխումը, ռազմական մրցավազքի թուլացումը, իսկ եթե հնարավոր լինի, նաև վերացումը, տարածաշրջանային, միջպետական հակասությունների կարգավորումը և առանց բռնության աշխարհի ձևավորումը, որը պետք է հենված լինի ժողովուրդների միջև վստահության հաստատման և համընդհանուր անվտանգության համակարգի ամրապնդման վրա:

2. Միջազգային սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրներ, հետամնացության և նրա հետ կապված աղքատության ու կուլտուրական հետամնացության հաղթահարում, համաշխարհային համախառն արդյունքի արդյունավետ արտադրության և վերարտադրության ապահովում, էներգետիկական, հում-

քային և պարենային ճգնաժամերի լուծման ուղիների հայտնաբերում: Դեմոգրաֆիկական իրադրության օպտիմալացում, հատկապես զարգացող երկրներում, որտեղ բնակչության աճը չափազանց բարձր տեմպեր ունի և երկրագնդի բնակչության գերաճը տեղի է ունենում հենց նրանց հաշվին, (ըստ վիճակագրության, Եվրոպայի բնակչության աճը արդի զարգացման տեմպերով կարող է կրկնապատկվել 123 տարում, իսկ մուսուլմանական երկրներում նույն տեմպերով բնակչությունը կրկնապատկվում է 23 տարվա ընթացքում), խաղաղ նպատակներով մերձերկրյան և համաշխարհային օվկիանոսի յուրացում:

3. Սոցիալ-էկոլոգիական խնդիրներ, որոնք կապված են մարդկանց բնակության, բնական միջավայրի հետագա վատթարացման հետ: Սուր անհրաժեշտություն է դարձել մթնոլորտի զազային կեղևի՝ օզոնի շերտի բարելավման ուղղությամբ միջոցառումների իրականացումը, կենդանի և անկենդան բնության ներդաշնակ զարգացման ուղղությամբ ձեռնարկումները, երկրագնդի բնական ռեսուրսների խելամիտ օգտագործումը, ռազմական գործողությունների, ձեռնարկումների (միջուկային զենքի փորձարկումներ և այլն), հետևանքով բնության վրա վնասակար ազդեցությունների կանխումն ու արգելումը:

4. Մարդու և հասարակության առաջընթացի խնդիրները, այն ներառում է սոցիալական, տնտեսական և անհատական իրավունքների ազատությունների ապահովումը, սովի համաճարակային հիվանդությունների, տգիտության վերացում, անհատի հոգևոր զարգացումը, հասարակությունից, պետությունից, բնությունից և այլ մարդկանցից մարդու օտարման հաղթահարումը:

Այս խնդիրների լուծումը մարդկությունը իրականացնում է միջազգային քաղաքականության բոլոր սուբյեկտների միջև ընթացող պայքարի, փոխհարաբերությունների բարդ պայմաններում, որի ընթացքում այդ սուբյեկտները, երբեմն և առանց ավելորդ ոգևորության ու շահագրգռվածության, բայց ստիպված են լինում իրենց ազգային շահերը ստորադասել համամարդկային շահերից: Դրա հետևանքով գլոբալ բնույթ ունեցող խնդիրների լուծման գործընթացներում տարբեր մակարդակի արդյունքներ է արձանագրվել: Մարդկությունը առավել հաջողությունների է հասել համաշխարհային պատերազմի կանխման և աշխարհի անվտանգության պահպանման խնդիրների լուծման ոլորտում, քանզի այստեղ բոլոր պետությունների ազգային հիմնական շահերը համընկնում են. հր հերթին, խաղաղության ամրապնդումը նպաստում է մյուս համամարդկային խնդիրների իրականացմանը:

Սկսած 20-րդ դարի 90-ական թվականների սկզբներից, տեղի է ունենում հակամարտությունից հավասարակշռության անցում, որը հենվում է երկու հակամարտ ռազմական-քաղաքական համակարգերից բազմաբևեռ աշխարհակարգի անցնելու անհրաժեշտության վրա: Նույնիսկ ռազմապես հզոր գերտերությունները սկսեցին գիտակցել, որ նոր պայմաններում արդեն պատերազմը, որպես քաղաքականության միջոց, միջպետական հարաբերությունների կարգավորման կամ իրենց նպատակների իրականացման միջոց

լինել չի կարող: Գիտակցելով նաև, որ համագործակցելը շատ ավելի ձեռնտու է: Այդ առնչությամբ Ա. Վարդանյանը գրում է. «բարձր բարոյական արժեքների վրա հենված փոխշահավետ միջազգային հարաբերությունները, բացի կողմերից յուրաքանչյուրին ձեռնտու լինելուց արձանագրված են նաև պայմանագրերի մակարդակով և աննշան շեղումներով պահպանվում են, ստեղծելով կայունության ավելի ծանրակշիռ երաշխիք: Այլ կերպ ասած, նման քաղաքականությունը արկածային չէ, դրա համար էլ պետություններին և ժողովուրդներին կարող է երկար տարիներ կայուն բարիքներ բերել»: (1, 313):

Արդի միջազգային հարաբերությունների վերակառուցումը ենթադրում է հետևյալ սկզբունքների իրականացումը.

- արդի աշխարհի հակասական պատկերացումը փոխարինել նրա միասնական համակարգ լինելու պատկերացմամբ: Աշխարհը դիտել որպես կեցության բարձրագույն արժեք, իսկ մարդու զարգացումը՝ ցանկացած առաջընթացի չափանիշ.

- հրաժարում ուժի գործադրումից և պետությունների անվտանգության ապահովում բացառապես քաղաքական միջոցներով, ելնելով բոլորի համար հավասար, համընդհանուր անվտանգության սկզբունքից, որը հենվում է համընդգրկուն միջազգային անվտանգության համակարգի ստեղծման վրա:

- այս կամ այն երկրի ժողովուրդների ձեռք բերած սոցիալական և քաղաքական ազատությունների անվերապահ և ամբողջական ընդունում:

- արդի քաղաքակրթությունը պահպանելու խնդիրները լուծելու համար երկրների և աշխարհի տարածաշրջանների համագործակցության անշեղ խորացում.

- միջպետական հարաբերությունների գաղափարացումից հրաժարում և երկխոսության ու փոխգիշերման պատրաստակամություն:

Արդի աշխարհաքաղաքական կարգի ձևավորման հիմնական սկզբունքները արձանագրված են մի շարք միջազգային փաստաթղթերում, որոնցից կարելի է առանձնացնել 1986 թվականին ընդունված Դելիի դեկլարացիան, որի քաղաքական նշանակությունը նրանում ձևակերպված միջուկային զենքից ազատ և առանց բռնությունների աշխարհի կառուցման տասը սկզբունքներն են: Դրանք են.

1. Խաղաղ գոյակցությունը պետք է դառնա միջազգային հարաբերությունների համընդհանուր նորմ:

2. Մարդկային կյանքը պետք է ընդունվի որպես բարձրագույն արժեք:

3. Մարդկային հանրության կյանքի հիմքում պետք է ընկած լինի բռնության մերժումը:

4. Վախի և կասկածի պետք է փոխարինի փոխըմբռնումն ու վստահությունը.

5. Յուրաքանչյուր պետության քաղաքական և տնտեսական անկախության իրավունքը պետք է ընդունվի և հարգվի:

6. Չինվելու վրա ծախսվող միջոցները պետք է օգտագործվեն սոցիալական

և տնտեսական զարգացման ապահովման համար:

7. Պետք է ստեղծվեն անհատի համակողմանի զարգացման երաշխավորված պայմաններ:

8. Մարդկության կյուբական և մտավոր հնարավորությունները պետք է ծառայեն գլոբալ խնդիրների լուծման համար:

9. «Վախի հավասարակշռության» փոխարեն պետք է հաստատվի համընդգրկուն միջազգային անվտանգությունը:

10. Միջուկային զենքից և բռնությունից զերծ աշխարհը պահանջում է զինաթափման ուղղված կոնկրետ և անհետաձգելի միջոցառումներ, միջուկային զենքի պաշարների ոչնչացում, ցանկացած զենք տիեզերք դուրս բերելու արգելում, միջուկային զենքի փորձարկման ամբողջական արգելում, զանգվածային բնաջնջման նոր զենքի տեսակների ստեղծման արգելում, քիմիական զենքի արգելում և նրա պաշարների ոչնչացում, սովորական զինատեսակների և զինված ուժերի մակարդակի կրճատում:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ համաաշխարհային քաղաքականության սուբյեկտների ջանքերի միավորմամբ այսօր ձևավորվել է նոր, ժողովրդավարական աշխարհակարգի կոնցեպցիա, ինչը ամբողջությամբ ընդունվում է պետությունների մեծամասնության կողմից: Այդ կոնցեպցիայի հիմնական սկզբունքներն են.

- միջազգային հարաբերությունների ապառազմականացումը.

- համընդգրկուն և տարածաշրջանային անվտանգության համակարգի ստեղծում՝ հենված բոլոր երկրների շահերի հավասարակշռության վրա.

- տարբեր երկրներում քաղաքական կտրուկ զարգացումների, փոփոխությունների դեպքում դրանք տեղայնացնելով ապահովել միջազգային կայունություն.

- պետությունների միջև եղած հարաբերությունները դնել իրավական հիմքի վրա, երաշխավորելով նրանցից յուրաքանչյուրի սոցիալ-քաղաքական ընտրության ազատությունը, ինքնուրույնությունը և անկախությունը.

- միջազգային հարաբերությունների ապագաղափարացումը.

- ամբողջ աշխարհում երկրների և ժողովուրդների փոխհարաբերությունների միջոցով հասնել մարդու իրավունքների ամբողջական պաշտպանությանը.

- համաաշխարհային խաղաղության պահպանության մեջ ՄԱԿ-ի դերի ուժեղացումը:

Այդ ուղղությամբ մարդկությունը բավականին նվաճումներ արդեն արձանագրել է:

Կնքվել են միջուկային զենքի կրճատման, չտարածման պայմանագրեր, ոչնչացվել է քիմիական զենքի պաշարները: Միացյալ ուժերով համաաշխարհային հանրության հաջողվում է տեղայնացնել և կարգավորել մի շարք տարածաշրջաններում բռնկված ռազմական բախումներ ու պատերազմներ: Ընդարձակվում է տիեզերքի ուսումնասիրության միջազգային համագործակցությունը: Սակայն այս ամբողջը դեռևս առաջին քայլերն են նոր աշ-

խարհակարգի ստեղծման ճանապարհին: Հետևաբար, դեռ շատ չլուծված խնդիրներ են մնում, հատկապես՝ էկոլոգիայի, բնակչության գերաճի, բնական ռեսուրսների, հետամնացության և աղքատության ոլորտի համամարդկային խնդիրները դարձել են անլուծելի:

Արդի զարգացումների փորձը ցույց է տալիս, որ հենց համամարդկային արժեքների հովվությունը է հնարավոր ապահովել միջազգային սկզբունքների իրականացումը, հասնելու բոլոր երկրների փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը, յուրաքանչյուր ժողովրդի համար ստեղծելու սեփական զարգացման ուղու ընտրության իրավունքի հնարավորություն:

Այսպիսով, նոր աշխարհակարգի հիմնական նպատակն է դառնում ստեղծել բազմակողմանի զարգացած հասարակություն և անհատ, հասնել մարդկության և քաղաքակրթության հումանիզացմանը, մարդու և բնության միջև հաստատել կայուն ներդաշնակություն:

4. Արդի ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը

Նոր աշխարհակարգի ձևավորման բարդ ու հակասական խնդիրների լուծումը, նոր պետությունների քաղաքական ասպարեզ իջնելն ու նրանց ակտիվ գործունեությունը, գիտնականների և քաղաքական գործիչների ուշադրությունը հրավիրեցին աշխարհաքաղաքական գործոնների (տարածություն, բնակչություն, բնական ռեսուրսներ, մարդկանց ապրելու միջավայր) ուսումնասիրության վրա: Դա պայմանավորված էր նրանով, որ վերջին մի քանի տասնամյակներում նշված գործոնները գնալով ավելի մեծ ազդեցություն էին գործում համաաշխարհային քաղաքականության զարգացման տենդենցների, միջազգային հարաբերությունների բնույթի և միջպետական փոխհարաբերությունների զարգացման վրա:

Աշխարհաքաղաքականությունը (գեոպոլիտիկա) միջազգային հարաբերությունների տեսության հիմնարար հասկացություններից է, որի վերլուծության միջոցով հնարավոր է լինում պատկերացում կազմել, թե պետությունների կամ պետական խմբավորումների դիրքը, սահմանա-տարածքային առանձնահատկությունները, բնական հարստությունները, բնակչության քանակն ու կազմը և այլն, տվյալ կոնկրետ պատմական ժամանակում ինչպիսի ազդեցություն են թողնում տեղային, տարածաշրջանային, մայրցամաքային և գեոպոլիտիկական քաղաքական գործընթացների վրա:

Այդ առումով աշխարհաքաղաքականությունը կարելի է դիտել որպես գիտական կոնցեպցիա, որը հենվում է ամբողջ աշխարհի և յուրաքանչյուր կոնկրետ երկրի ֆիզիկական, տնտեսական և քաղաքական աշխարհագրության օբյեկտիվ տվյալների, փաստերի վերլուծության և ընդհանրացման արդյունքների վրա, բացահայտելով մարդկության և յուրաքանչյուր առանձին վերցրած ժողովրդի զարգացման վրա բնական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային գործոնների փոխազդեցությունների դերն ու նշանակությունը:

Գեոպոլիտիկական քաղաքական դոկտրինա է, որն արտացոլում և վերլուծում է պետությունների արտաքին քաղաքականության, միջազգային հարաբերությունների բարդ կապերն ու կախվածությունը պետությունների և երկրների աշխարհագրական դիրքից, ինչի տակ հասկացվում է բնակլիմայական պայմանները, տարածքը, բնական պաշարները, բնակչության քանակն ու կազմը և այլն:

Այդ հասկացությունը առաջին անգամ օգտագործել է շվեդացի պատմության և քաղաքական գիտությունների պրոֆեսոր Ռ. Չելլեն (1864-1922) նշելով, որ Գեոպոլիտիկական պետության՝ որպես տարածության մեջ մարմնավորված աշխարհագրական օրգանիզմի մասին գիտություն է: Այդ տեսությունը զարգացրել են նաև գեոմանացի մտածողներ Ֆ. Ռատցելը (1844-1904) և Կ. Հաուսհոֆերը (1869-1946): Վերջինս հրատարակում էր «Գեոպոլիտիկա» ամսագիրը, որի մեջ առաջ էր քաշում իր «մայրցամաքային բլոկ» տեսությունը, որի տակ նկատի ուներ Ռուսաստանի, Գերմանիայի և Ճապոնիայի համագործակցությունը:

Ըստ ռուս գեոպոլիտոլոգ Ա.Գ. Դուգինի, «Գեոպոլիտիկան» հենվում է հետևյալ ենթադրության վրա, որ աշխարհագրական դիրքը՝ ճակատագիր է: Ըստ նրա, աշխարհագրությունն ու տարածությունը աշխարհաքաղաքականության մեջ ունեն այն նույն ֆունկցիաները, ինչ ֆունկցիա որ ունեն փողն ու արտադրական հարաբերությունները մարքսիզմի և լիբերալիզմի մեջ, այսինքն դրանք մարդկության գոյության հիմնարար արժեքներն են:

Արտաքննապես գեոպոլիտիկան նմանվում է պետության արտաքին քաղաքականությանը, որում արտահայտված են ժողովուրդների և երկրների տարածքային շահերը: Գեոպոլիտիկայի կարևորագույն խնդիրներից է համաաշխարհային, տարածաշրջանային և պետական անվտանգության հարցերի ուսումնասիրման ժամանակ հաշվի առնել քաղաքական և աշխարհագրական գործոնների դերն ու նշանակությունը և նրանց ազդեցությունը համաաշխարհային քաղաքական գործընթացների վրա:

Վերջին տասնամյակներում տարբեր պետությունների քաղաքա-աշխարհագրական գիտական վերլուծությունները հստակ ուշադրություն են հրավիրում քաղաքակրթությունների միջև ընթացող փոխազդեցությունների և հակազդեցությունների գործընթացների ուսումնասիրությունների վրա, ելնելով դրանց պատճառ-հետևանքային կապերի բացահայտման և զարգացման տեսլենցների հստակ պատկերացման անհրաժեշտությունից:

Աշխարհաքաղաքականությունը իր օրինաչափություններն ունի. Դրանցից են.

- Հսկողությունը տարածքի վրա կորցնում են այն աշխարհաքաղաքական սուբյեկտները, որոնք օժտված չեն անհրաժեշտ և բավարար հնարավորություններով նվաճելու կամ պահպանելու տարածքներ, օժտված չեն ինքնապահովման անհրաժեշտ հատկանիշներով:
- Մեկ աշխարհաքաղաքական սուբյեկտի կողմից տարածության վրա հսկողության կորուստի դեպքում այդ տարածքներն անցնում են ուրիշների:

- Աշխարհաքաղաքական սուբյեկտի կայունությունը, ամրությունն ու անվտանգությունը հնարավոր է տարածության վրա որոշակի ենթահսկողության իրականացման միջոցով, քանզի ինչքան ընդարձակ է տարածքը, այնքան դժվար է նրա հսկողությունն ու կառավարումը:

- Երբեմն առավելություն է ստանում այն սուբյեկտը, որը հսկում է տարածքի ստրատեգիական նշանակությամբ կետերը, իսկ աշխարհաքաղաքական տարածությունում սուբյեկտի ուժեղ կամ թույլ լինելը պայմանավորված է նրա ինքնաբավարարման աստիճանից և առանցքային կետերի վրա հսկողություն իրականացնելու հնարավորությունից:

- Տիեզերական տարածության և հաղորդակցման ոլորտների վրա հսկողություն:

- Պետության աշխարհաքաղաքական դիրքը մեծամասամբ կախված է նրա տնտեսական և ռազմական հնարավորությունների զարգացման մակարդակից, միջուկային տերություն լինելու հանգամանքից:

- Աշխարհաքաղաքական տարանջատվող գծերը և երկրների ու ժողովուրդների տարանջատումը տեղի է ունենում իշխող հարուստ և կախյալ աղքատ տնտեսությունների բաժանման ձևով, ասենք՝ «Արևմուտք-Արևելք», «Հյուսիս-Հարավ», «Կենտրոն-Ծայրամաս» և այլն: Այսպես, ըստ փճակագրության, աշխարհի 3 միլիարդ բնակչությանը՝ Սահարայից հարավ՝ Աֆրիկան, Հարավային Ասիան, Հնդկաստանը, Չինաստանը, բնակչության յուրաքանչյուր շնչին տարեկան հասնում է 400 դոլար, մեկուկես միլիարդ մարդու տարեկան եկամուտը մերձավոր արևելքում, Լատինական Ամերիկայում և Հյուսիսային Աֆրիկայում կազմում է 2000 դոլար, իսկ 850 միլիոն մարդու միջին տարեկան եկամուտը զարգացած երկրներում կազմում է քսան հազար դոլար: (II, 181):

- Աշխարհաքաղաքական առաջնություններն ու պետության նպատակների դիտարկումները պետք է կատարել միջքաղաքակրթությունների վերլուծությունների ենթատեսքում, քանզի միևնույն տարածաշրջանի քաղաքակրթության շրջանակներում գտնվող տարբեր երկրների միջև փոխըմբռնումը ավելի հեշտ է կայանում, քան նրա շրջանակներից դուրս գտնվող երկրների համար է:

- Բնակչության քանակը, ազգային առանձնահատկություններն ու գծերը պետք է անպայման դիտվեն որպես աշխարհաքաղաքական կարևորագույն գործոններ: Վ

Նշենք, որ համաաշխարհային քաղաքական գործընթացներում և միջազգային հարաբերություններում կախված կոնկրետ պատմական պայմաններում տեղի ունեցող քաղաքական զարգացումներից, միջպետական հարաբերությունների բնույթից, զաղափարա-քաղաքական և ռազմա-տնտեսական հակամարտության դրսևորումներից և այլն, աշխարհաքաղաքական տարբեր գործոններ տարբեր դեր ու նշանակություն են ձեռք բերում, ինչպես դրական, այնպես էլ բացասական իմաստով: Դա առաջին հերթին կախված է այն իրողությունից, թե տվյալ երկրի նկատմամբ

հզոր պետությունները ինչպիսի դիրքորոշում, վերաբերմունք ունենալով՝ Իրաքի և Հարավսլավիայի նկատմամբ ԱՄՆ-ի իրականացված քաղաքականությունը:

(Պետությունները իրենց աշխարհագրական դիրքով, տարածքներով, բնական ռեսուրսներով, բնակչության քանակով և կազմով իրարից տարբերվող ենթյունանք հարուստ բնական ռեսուրսներ, հսկայական տարածքներ, բնակչիմայական լավագույն պայմաններ, մարդկային մեծ ռեսուրսներ ունենալուները զրկված են այդ բարեմասություններից, ինչը առաջացնում բնական անհավասարությունը: Սակայն այդ բնական անհավասարությունը ղեռն է չի երաշխավորվում բոլոր հարուստ երկրների զարգացումն ու հզորացումը, չի դարձնում նրանց միջազգային քաղաքականության վրա նշանակալից ազդեցություն ունեցող սուբյեկտներ: Հզոր ու զարգացած են լինու այն երկրները, որոնք կարողանում են լավագույն ձևով օգտվել ոչ միայն իրենց հնարավորություններից, այլև կարողանում են այլ երկրների հետ այն պիսի հարաբերությունների մեջ մտնել, որոնց շնորհիվ հնարավոր է դառնու ինչպես իրենց հնարավորությունների լավագույն օգտագործումը, այնպես է մյուս երկրների հնարավորություններից օգտվել: Իսկ դրա լավագույն միջոցը պետությունների միջև փոխշահավետ համագործակցությունն է, որը կարող է հնարավոր դառնալ ժողովրդավարական սկզբունքներով սոր աշխարհակարգի ձևավորման դեպքում:

5. Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը և քաղաքական զարգացումների բնույթը անցումային շրջանում

Հայաստանը գտնվում է յուրահատուկ աշխարհաքաղաքական պայմաններում, որում առկա են մի շարք բացասական արդյունք ծնող գործոններ: Դրանցից են.

ա) Հայաստանը անկախ է երկիր է, ինչը նրան զրկում է այլ պետությունների հետ անմիջական հաղորդակցումից և հարաբերություններից: բ) Հայաստանը չափազանց փոքր տարածք ունի, որի հիմնական մասը լեռնային է, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում սեփական գյուղատնտեսական մթերքների արտադրության և ժողովրդի պահանջմունքների բավարարման համար: գ) Բնական պաշարների, հատկապես էներգետիկ ռեսուրսների պակասը, որի հետևանքով երկրի արդյունաբերության զարգացումն ու գործունեությունը կախված է լինում հումքի ներկրման հնարավորությունից: դ) Հայաստանի հարևան երկրներից երեքը մուսուլմանական են, որոնցից մեկը՝ Իրանը արմատական իսլամական պետություն է, իսկ մյուս երկուսի՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ առկա է պատմականորեն ձևավորված ազգամիջյան թշնամություն և շատ չլուծված խնդիրներ, որոնք ուղղակիորեն ազդում են տարածաշրջանի քաղաքական զարգացումների վրա: Չորրորդ հարևան պետությունը՝ Կրաստանը, քրիստոնյա երկիր է, որի տարածքով է այսօր Հայաստանը կապվում իր հիմնական դաշնակից Ռուսաստանի հետ.

Սակայն Վրաց-Աբխազական հակասությունների առկայությունը և Վրաց-թուրքական հարաբերությունների սերտաճումը Հայաստանին զրկում են Վրաստանի տարածքի հաղորդակցման ուղիներից լավագույնս օգտվելու հնարավորությունից, որի պատճառով երկրի տնտեսական զարգացումը դժվարանում է:

Ահա այս աշխարհաքաղաքական գործոնների ազդեցության տակ են տարածաշրջանում ձևավորվում և ընթանում քաղաքական տեղաշարժերն ու զարգացումներ:

Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը, տարածաշրջանում սոր ձևավորվող միջպետական հարաբերությունների ընթացքը, տարածաշրջանի նկատմամբ միջազգային քաղաքական ուժերի ցուցաբերած հետաքրքրությունը ենթադրել են տալիս, որ առաջիկայում այստեղ քաղաքական տեղաշարժերն ու զարգացումները անխուսափելի են: Որպեսզի կարողանանք մոտավոր պատկերացում ունենալ այդ զարգացումների հետագա ընթացքի ու ուղղվածության մասին, անհրաժեշտ է դիտարկել մի քանի կարևորագույն գործոններ, որոնք ընկած են այդ զարգացումների և տեղաշարժերի հիմքում: Որպես կարևորագույն գործոններ կարելի է առանձնացնել հետևյալները.

1. ԽՍՀՄ փլուզումից հետո Անդրկովկասում առաջացան երեք անկախ պետություններ. Այդ պետությունների կայացման գործընթացը դեռևս չի ավարտվել, չի ստացել իր ավարտուն տեսքը, որում հստակ ուրվագծված լինեն դրանց զարգացման հետագա միտումները: Պետությունների կայացման գործընթացը ուղեկցվել է և երկար ժամանակ դեռևս ուղեկցվելու է միջազգային քաղաքական հզոր ուժերի միջամտությամբ, ձգտելով այն վերածել իրենց քաղաքական ազդեցության ոլորտի, դրա հետ միասին Արևմուտքը ԱՄՆ-ի գլխավորությամբ Անդրկովկասում իրականացնում է հստակ քաղաքականություն, որի հիմնական նպատակը այս տարածաշրջանը իրենց քաղաքական ազդեցության ոլորտ դարձնելն է:

Հետևաբար Արևմուտքը ԱՄՆ-ի գլխավորությամբ լուծում էին իրենց առջև դրված երկու հիմնական խնդիր, նախ թուլացնել Ռուսաստանին, որպեսզի տարածաշրջանում այն դադարի գերիշխող ուժ լինելուց: Երկրորդ՝ իրենց ձեռնտու տնտեսակարգ պարտադրել տարածաշրջանի պետություններին, աստիճանաբար նրանց դարձնելով տնտեսապես կախյալ թույլ պետություններ և պարտադրել այդ պետություններին իրենց ձեռնտու ներքին և արտաքին քաղաքականություն: Եվ քանի դեռ ԱՄՆ-ը իր խնդիրը վերջնականապես չի իրականացրել, այս իրողությունը տարածաշրջանի քաղաքական զարգացումների վրա խորը ազդեցություն է թողնելու:

2. Տարածաշրջանում քաղաքական զարգացումների ընթացքի և ուղղվածության վրա իր խորը ազդեցությունն են թողնում Անդրկովկասի երեք անկախ պետությունների միջև պատմականորեն ձևավորված հարաբերությունները: Այդ պետությունների միջև տարածայնությունների և հակասությունների առկայությունը մի կողմից, և մյուս կողմից՝ հարևան պետությունների նկատմամբ նրանց դիրքորոշումների տարբերությունները քաղաքական լուծում-

ներ են պահանջում: Հետևաբար, քաղաքական զարգացումները ընթանալու են ինչպես անդրկովկասյան երեք պետությունների միջպետական հարաբերությունների հաստատման ու զարգացման, այնպես էլ նրանց և հարևան պետությունների միջև հարաբերությունների հաստատման ուղղությամբ: Պետք է նկատել, որ Հայաստան-Վրաստան-Ադրբեջան հարաբերությունների բնույթը ուղղակի արտացոլումն է լինելու նրանց և հարևան պետությունների միջև հաստատված հարաբերությունների:

3 Անդրկովկասը, հանձինս այս երեք անկախ պետությունների, իր աշխարհաքաղաքական դիրքով Մերձավոր Արևելքը ամենակարճ ճանապարհով կապում է հյուսիս-եվրոպական պետությունների ճնշող մեծամասնության հետ և խաչմերուկի ու կամրջի դեր է կատարում, որը նրան դարձնում է մի շարք պետությունների քաղաքական և տնտեսական շահերի ոլորտ: Այն հատկապես մեծ կարևորություն ունի Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի համար: Ռուսաստանի համար մեր աշխարհաքաղաքական դիրքը, մի կողմից, Մերձավոր արևելք տանող ամենակարճ ուղին է, որը շոշափում է նրա տնտեսական շահերը, մյուս կողմից Անդրկովկասը Ռուսաստանի հարավային սահմանների անվտանգությունը ապահովող ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող տարածաշրջան է, որտեղ նա անմիջապես առճակատվում է իր վաղեմի հակառակորդ, ԱՄՆ-ի շահերը ներկայացնող Թուրքիայի հետ: Եվ բնական է, որ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ընթացող անգիջում պայքարը տարածաշրջանում իրենց տնտեսական ու ռազմական գերիշխանությունը հաստատելու համար է. Զանի որ անդրկովկասյան երեք պետություններից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ վերաբերմունքն ու դիրքորոշումն ունի այդ երկու պետությունների նկատմամբ, ապա հետագա քաղաքական զարգացումները ընթանալու են անդրկովկասյան երեք պետությունների միջև ներքին պայքարի ուղեկցությամբ, որը աստիճանաբար պետք է հստակեցնի նրանց քաղաքական դիրքորոշումը Ռուսաստանի և Թուրքիայի նկատմամբ: Այսօր տնտեսապես թույլ Ռուսաստանը ի վիճակի չէ իր տնտեսական ներկայությունը, հետևապես և իր տնտեսական շահերն ու ազդեցությունը հաստատել տարածաշրջանում: Սակայն ռազմական ներկայությունը արդեն ակնհայտ է Հայաստանում, այս օրերին՝ նաև Վրաստանում, ռազմական բազաները հաստատելու ձևով:

Ելնելով ներկայիս ռուս-իրանական բարի դրացիական հարաբերությունների բնույթից, Իրանի համար Անդրկովկասը, հատկապես Հայաստանը դեպի Եվրոպա տանող ամենակարճ ու շահավետ ուղին է, հատկապես նրա նավթային ռեսուրսների իրացման տեսակետից: Հեռանկարային զարգացման առումով Իրան-Եվրոպա նավթային ուղին տնտեսապես ձեռնտու է թե՛ Հայաստանին ու թե՛ Վրաստանին և թե՛ Ռուսաստանին. Այստեղ չպետք է մոռանալ Իրան-Արևմուտք-ԱՄՆ և Իրան-Թուրքիա հակասության առկայությունը, որը և Իրանին մղում է այդպիսի խնդրի իրականացման: Թուրքիայի համար Անդրկովկասի աշխարհաքաղաքական դիրքը ձեռք է բերել սոր նշանակություն: Թուրքիան փորձում է այն օգտագործել որպես անկախություն

ստացած մուսուլմանական պետությունների և Ռուսաստանի ֆեդերացիայի մեջ մտնող մահմեդական ժողովուրդների վրա իր ազդեցությունը տարածելու լավագույն ճանապարհ: Թուրքիայի այս նկատառումների իրականացման հիմնական խոչընդոտը կարող է լինել Հայաստանը: Ուստի քաղաքական զարգացումների հետագա ընթացքի վրա մեծ ազդեցություն կարող է ունենալ Հայ-թուրքական հարաբերությունների զարգացման բնույթը:

4. Տարածաշրջանում քաղաքական զարգացումների հետագա ընթացքի վրա իր անմիջական ազդեցություն են թողնում ազգամիջյան կոնֆլիկտները: Այն ճարպկորեն օգտագործվում է միջազգային քաղաքական ուժերի կողմից տարածաշրջանում իրենց քաղաքական ներկայությունն ու ազդեցությունը ապահովելու համար: Ազգամիջյան կոնֆլիկտների առկայությունը արևմտյան հզոր պետությունների և ԱՄՆ-ի համար ընդամենը առիթ է տարածաշրջանի իրենց քաղաքական ազդեցության ոլորտը դարձնելու համար: Այն իրականացվում է ամենատարբեր ձևերով ու անվանումներով՝ սկսած մարդասիրական օգնությունից մինչև խոշոր տնտեսական ծրագրերի պարտադրումը: Այն արդեն հստակ իրականացվում է Հայաստանում, որի արդյունքը ազգային հարստության անխիղճ թալանն է, տնտեսության աննախադեպ քայքայումը, խոշոր պարտքերի գոյացումը, ժողովրդի սոցիալական ծանր վիճակը և այլն, և այլն:

5. Տարածաշրջանի քաղաքական զարգացումների վրա իր մեծ ազդեցություն են թողնում նաև Արևմուտք-ԱՄՆ-իրան և Արևմուտք-Թուրքիա, ինչպես նաև Թուրքիա-Իրան հարաբերությունները: Ինքնին հասկանալի է, որ Իրան-Թուրքիա հակասության պատճառով է Իրանը ձգտում դեպի Եվրոպա դուրս գալ Անդրկովկասով և Ռուսաստանով: Բացառված չէ, որ Ռուսաստան-Արևմուտք հակասությունների հետագա խորացումը ստիպի արևմտյան պետություններին և ԱՄՆ-ին փոխելու իրենց քաղաքական դիրքորոշումները Իրանի նկատմամբ, նայատակ ունենալով նրան կտրել Ռուսաստանից: Տեսականորեն այդպիսի հնարավոր զարգացումը պետք է դառնա մեր քաղաքականությունը մշակողների իմացության նյութը:

Սակայն, այսօրվա իրողությունն այն է, որ որքան խորանում և զարգանում են ռուս-իրանական հարաբերությունները, այնքան սրվում են ԱՄՆ-Իրան հակասությունները: Հայաստանը որպես Իրանի բարեկամ երկիր, կարող է հայտնվել այդ հակասությունների տիրույթում: Այսօր ԱՄՆ Հայաստանի նկատմամբ դեռևս կիրառում է հանդուրժողականություն, իսկ երբեմն նույնիսկ սիրաշահելու քաղաքականություն, որը ցանկացած պահի կարող է փոխվել:

Գրականություն

1. Вартанян А. А. Политология и мораль. К вопросу о мировом политическом порядке. М. 1997.
2. Гаджиев К. С. Геополитика. М. 1997.
3. Дугин А. Г. Основы геополитики. Геополитическое будущее России. М. 1997.
4. Загладин Н. В., Загладина Х. Т., Мунтян М. А. Мировое политическое развитие: век XX. М. 1995.
5. Ирхин Ю. В., Зотов В. Д., Зотова А. В. Политология. М. 1999
6. Киссинджер Г. Дипломатия. м. 1997.
7. Мировой политический процесс. Под ред. А. А. Мигولاتьева. М. 1994.
8. Повлов В. И. Тематика курс "Мировой политический процесс" (Вестник Московского университета. Сер. 12 Политические науки. 1995 #3)
9. Политология. Курс лекции. Под ред. А. А. Радугина. М.1999
10. Политология. Энциклопедический словарь. М.1993
11. Ушаков А. М. Современная геополитика. Под ред. В. И. Жукова. М. 1997.
12. Цыганова П. А. Политическая социология международных отношений. М. 1994.
13. Энгин М. А. Международные гарантии прав человека. М. 1997.
14. Հարությունյան Է. Անցումային հասարակությունը որպես տրանսֆորմացիոն գործունեության համակարգ. Եր. 2000թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
ՂԼՈՒՑ ԱՌԱՋԻՆ	
Զաղաքագիտությունը որպես գիտություն	
1. Զաղաքագիտության ձևավորման նախապատմությունը	5
2. Զաղաքագիտության բնորոշումը, օբյեկտը և առարկան.....	8
3. «Զաղաքականություն» հասկացությունը, էությունն ու բովանդակությունը.....	11
4. Զաղաքագիտության կատեգորիաներն ու մեթոդները.....	14
5. Զաղաքագիտության ֆունկցիաները.....	19
6. Զաղաքագիտության տեղը հասարակական գիտությունների համակարգում.....	22
ՂԼՈՒՑ ԵՐԿՐՈՐԴ	
Զաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները	
1. Զաղաքական միտքը հին աշխարհում.....	27
2. Զաղաքական միտքը միջնադարյան Եվրոպայում.....	33
3. Զաղաքական միտքը Վերածննդի դարաշրջանում.....	37
4. Զաղաքական միտքը XVII-XIX դարերում.....	40
5. Զաղաքական միտքը 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբներին.....	48
6. Զաղաքական միտքը 20-րդ դարում.....	57
ՂԼՈՒՑ ԵՐՐՈՐԴ	
Զաղաքականության հիմնական սուբյեկտները	
1. «Զաղաքականության սուբյեկտ» հասկացությունը.....	64
2. Զաղաքականության սուբյեկտի հիմնական տեսակները.....	68
3. Միջազգային քաղաքականության սուբյեկտները: Նրանց հիմնական տեսակները և ձևավորման սկզբունքները.....	73
ՂԼՈՒՑ ԶՈՐՐՈՐԴ	
Հասարակության քաղաքական կյանքը	
1. «Հասարակության քաղաքական կյանք» հասկացությունը.....	77
2. Զաղաքական կյանքին սոցիալական խմբերի և անհատների մասնակցության ձևերն ու առանձնահատկությունները.....	79
3. Պետության հասարակության փոխհարաբերությունների հիմնական ձևերը.....	82
4. Զաղաքական կյանքի կազմակերպման հիմնական սկզբունքներն ու նորմերը.....	85
5. Զաղաքական կյանքի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում.....	88
ՂԼՈՒՑ ՀԻՆՉԵՐՈՐԴ	
Հասարակության քաղաքական համակարգը	
1. «Զաղաքական համակարգ» հասկացության բնորոշումը.....	92
2. Զաղաքական համակարգը որպես քաղաքական ինստիտուտների փոխկապակցված ամբողջություն.....	94
3. Զաղաքական համակարգի կառուցվածքն ու ֆունկցիաները.....	97
4. Զաղաքական վարչակարգերի (ռեժիմների) տիպերը.....	102

5. Զանգվածային հաղորդակցության և լրատվության միջոցների դերը քաղաքական համակարգում.....	107
6. Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի առանձնահատկությունները.....	112
ՂԼՈՒՑ ՎԵՑԵՐՈՐԴ	
Պետությունը և հասարակությունը	
1. Պետության ծագումն ու բնույթը.....	118
2. Պետության դերն ու հիմնական ֆունկցիաները.....	123
3. Պետության կառուցվածքն ու կառավարման ձևերը.....	128
4. Իրավական պետության էությունն ու կայացման առանձնահատկությունները.....	135
5. Սոցիալական պետության և քաղաքացիական հասարակության առանձնահատկությունները.....	140
ՂԼՈՒՑ ՅՈՒԹԵՐՈՐԴ	
Իշխանություն և իշխանական հարաբերությունները	
1. Իշխանության բնույթն ու բնույթը, էությունն ու բովանդակությունը.....	147
2. Իշխանության իրականացման հնարավորությունները և հիմնական միջոցները.....	152
3. Զաղաքական իշխանության ծագումն ու առանձնահատկությունները.....	155
4. Զաղաքական իշխանության տեսակները: Իշխանության լեգիտիմությունը.....	160
5. Իշխանությունների բաժանման սկզբունքները.....	164
6. Իշխանության հարցը Հայաստանի Հանրապետության մեջ.....	171
ՂԼՈՒՑ ՈՒԹԵՐՈՐԴ	
Քաղաքական գարգացումների բնույթը անցումային հասարակությունում	
1. Անցումային հասարակության բնորոշումը.....	177
2. Անցումային հասարակության հիմնախնդիրները.....	182
3. Ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման առանձնահատկությունները անցումային հասարակությունում.....	188
4. Հայաստանի Հանրապետությունը անցումային փուլում.....	196
ՂԼՈՒՑ ԻՆՆԵՐՈՐԴ	
Ժողովրդավարությունը և հասարակության առաջընթացը	
1. Ժողովրդավարության գարգացման պատմական էտապները.....	207
2. Ժողովրդավարության էությունն ու բնույթը.....	212
3. Ժողովրդավարական քաղաքական համակարգի հիմնական սկզբունքներն ու նորմերը.....	216
4. Ժողովրդավարական ինստիտուտները և նրանց գործառույթների առանձնահատկությունները.....	222
5. Ժողովրդավարության դրսևորման հիմնական ձևերը և Ժողովրդավարության և լիբերալիզմի փոխհարաբերությունը.....	224
6. Ժողովրդավարության հաստատման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում.....	231

ՉԼՈՒՆ ՏԱՍԵՐՈՐԴ	
Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր	
1. Քաղաքական կուսակցության ըմբռնումն ու ելույթները.....	238
2. Քաղաքական կուսակցությունների հիմնական ֆունկցիաները.....	243
3. Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը և դասակարգումը.....	247
4. Կուսակցական համակարգեր.....	252
5. Քաղաքական կուսակցությունների առաջացումը հայ իրականության մեջ.....	258
6. Կուսակցական համակարգերի առաջացման առանձնահատկությունները Հայաստանում.....	265
ՉԼՈՒՆ ՏԱՍԵՆԵԿԵՐՈՐԴ	
1. Քաղաքականության իրականացման հիմնական ոլորտները.....	272
ՉԼՈՒՆ ՏԱՍԵՐԿՈՒԵՐՈՐԴ	
Քաղաքական գործընթացները և հասարակության առաջընթացը	
1. Քաղաքական գործընթացների ելույթներն ու բովանդակությունը.....	285
2. Քաղաքական կոնֆլիկտների և սոցիալական համաձայնության դերն ու տեղը քաղաքական գործընթացներում.....	291
3. Քաղաքական գործընթացների դասակարգումը.....	298
4. Քաղաքական գործընթացների մասնակցության հիմնական ձևերը.....	305
5. Քաղաքական գործընթացների իրականացման փուլերը: Քաղաքական տեխնոլոգիաների կիրառումը.....	313
ՉԼՈՒՆ ՏԱՍԵՐԵԶԵՐՈՐԴ	
Ազգեր և ազգային քաղաքականություն	
1. Ազգերի ծագումն ու ըմբռնումը.....	321
2. Ազգային ինքնորոշման իրավունքը: Դրսևորման ձևերն ու իրականացման հնարավորությունները.....	328
3. Ազգային պետականության և ազգային ինքնավար կազմավորումների հիմնական ձևերը.....	335
4. Ազգային քաղաքականություն և գաղափարախոսություն.....	340
5. Ազգային ազատագրական պայքարի հիմնական խնդիրներն ու առանձնահատկությունները արդի աշխարհում.....	347
6. Արցախի ազատագրական պայքարը որպես Հայ դատի քաղաքացուցիչ մաս.....	351
7. Ազգամիջյան հակասությունների առաջացման պատճառները և լուծման միջազգային սկզբունքները.....	353
ՉԼՈՒՆ ՏԱՍԵՉՈՐՍԵՐՈՐԴ	
Անհատը և քաղաքականությունը: Քաղաքական լիդերություն և քաղաքական վերնախավ (էլիտա)	
1. Անհատը որպես քաղաքականության սուբյեկտ և օբյեկտ.....	359
2. Անհատի քաղաքական սոցիալականացումը.....	364
3. Քաղաքական լիդերության ըմբռնումը.....	369
4. Քաղաքական լիդերների տիպերը և ֆունկցիաները.....	375
5. Քաղաքական էլիտայի (ոնտրախավի) բնորոշումը, ֆունկցիանե-	

րը, ժամանակակից տեսությունները.....		381
ՉԼՈՒՆ ՏԱՍԵՐՆԵԿԵՐՈՐԴ		
Քաղաքական կուլտուրա (մշակույթ)		
1. Քաղաքական կուլտուրայի ըմբռնումը, բնորոշումը և բովանդակությունը: Կառուցվածքի տարրերը: Դրսևորման մակարդակները.....		390
2. Քաղաքական կուլտուրայի տեսակները և դասակարգման սկզբունքները.....		400
3. Քաղաքական կուլտուրայի ֆունկցիաները.....		407
ՉԼՈՒՆ ՏԱՍԵՎԵՑԵՐՈՐԴ		
Արդի քաղաքական գաղափարախոսությունների հիմնական դրսևորումները		
1. Քաղաքական գաղափարախոսության բնույթն ու նշանակությունը.....		412
2. Լիբերալիզմի գաղափարախոսության առանձնահատկությունները.....		415
3. Պահպանողական գաղափարախոսություն.....		419
4. Սոցիալիզմի գաղափարախոսությունը.....		424
5. Կոմունիստական գաղափարախոսությունը.....		429
6. Ազգայնամոլական գաղափարախոսություններ.....		431
ՉԼՈՒՆ ՏԱՍԵՅՈՒԹԵՐՈՐԴ		
Արդի Համաշխարհային քաղաքականությունը		
1. Արդի միջազգային հարաբերությունների բնույթը.....		436
2. Համաշխարհային քաղաքական գործընթացների բնույթը.....		442
3. Համաշխարհային քաղաքականության համընդգրկուն (գլոբալ) խնդիրները.....		445
4. Արդի ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական պատկերը.....		450
5. Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը և քաղաքական գարգացումների բնույթը անցումային շրջանում.....		453

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

Ռուբեն Հայկի Պետրոսյան

ԲԱՂԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

դասագիրք բուհերի համար

Հաստատված է կրթության և
գիտության նախարարության կողմից

Խմբագիր՝ պրոֆ. Է. Ա. Զարուբյունյան

Рубен Айкович Петросян

ПОЛИТОЛОГИЯ

учебник для ВУЗ-ов

Утвержден министерством
образования и науки Республики Армения

ред. проф. Э. А. Зарубян

Երևան 2004

Նոյան Տապան տպագրատուն
Թուրք՝ օժիտ N1 60 x 84 1/16, ծավալը՝ 29 տպ մասով,
տպագրված է տպագրորդին 06/02/2004, տպարանակ՝ 500:
Երևան 9, Իսահանկյան 28, հեռ./ֆաքս (3741) 524279, 565965
E-mail: contact@noyan-tapan.am, URL: <http://www.nt.am>